



This is a digital copy of a book that was preserved for generations on library shelves before it was carefully scanned by Google as part of a project to make the world's books discoverable online.

It has survived long enough for the copyright to expire and the book to enter the public domain. A public domain book is one that was never subject to copyright or whose legal copyright term has expired. Whether a book is in the public domain may vary country to country. Public domain books are our gateways to the past, representing a wealth of history, culture and knowledge that's often difficult to discover.

Marks, notations and other marginalia present in the original volume will appear in this file - a reminder of this book's long journey from the publisher to a library and finally to you.

Usage guidelines

Google is proud to partner with libraries to digitize public domain materials and make them widely accessible. Public domain books belong to the public and we are merely their custodians. Nevertheless, this work is expensive, so in order to keep providing this resource, we have taken steps to prevent abuse by commercial parties, including placing technical restrictions on automated querying.

We also ask that you:

- + *Make non-commercial use of the files* We designed Google Book Search for use by individuals, and we request that you use these files for personal, non-commercial purposes.
- + *Refrain from automated querying* Do not send automated queries of any sort to Google's system: If you are conducting research on machine translation, optical character recognition or other areas where access to a large amount of text is helpful, please contact us. We encourage the use of public domain materials for these purposes and may be able to help.
- + *Maintain attribution* The Google "watermark" you see on each file is essential for informing people about this project and helping them find additional materials through Google Book Search. Please do not remove it.
- + *Keep it legal* Whatever your use, remember that you are responsible for ensuring that what you are doing is legal. Do not assume that just because we believe a book is in the public domain for users in the United States, that the work is also in the public domain for users in other countries. Whether a book is still in copyright varies from country to country, and we can't offer guidance on whether any specific use of any specific book is allowed. Please do not assume that a book's appearance in Google Book Search means it can be used in any manner anywhere in the world. Copyright infringement liability can be quite severe.

About Google Book Search

Google's mission is to organize the world's information and to make it universally accessible and useful. Google Book Search helps readers discover the world's books while helping authors and publishers reach new audiences. You can search through the full text of this book on the web at <http://books.google.com/>

WIDENER LIBRARY



HX 7U9G Q

OL 45778.110.5

Harvard College
Library



FROM THE BEQUEST OF
JOHN HARVEY TREAT
OF LAWRENCE, MASS.
CLASS OF 1862

ՀԱՅ-ՎԵՆԵՏ

ԿՈՄ

ՅԱՐԵՆՉՈՒԹԻՒՆՔ

ՀԱՅՈՑ ԵՒ ՎԵՆԵՏՈՑ

Ի ԺԴ-Դ ԵՆ Ի ԺԵ-Զ ԴԱՐՍ



ՎԵՆԵՏԻԿ — Ա. ՂԱԶԱՐ

1896

ՀԱՅ-ՎԵՆԵՏԾ

o

ՀԱՅ-ՎԵՆԵՏԾ

ԿԱՄ

ՑԱՐԸՆՉՈՒԹԻՒՆՔ

ՀԱՅՈՑ ԵՒՎԵՆԵՏԱՑ

Ի ԺԳ-Դ ԵՒ Ի ԺԵ-Զ ԴԱՐՍ



ՎԵՆԵՏԻԿ — Ս. ՂԱԶԱՐ

1896

OL 45778. 110. ✓

~~OL 44908. 8~~

✓ Harvard College Library

July 6, 1923

Treat fund

Hay-Venéed.

[Armenian - Venetian...]

relations]

Venice

1896



ՅԱՌԱԶԱԲԱՆ

Ի սկզբան գրոց բացատրուած է և գրուելուն բարոյական ասիրեան, զարմանալին ի համաշխարհական պատկերի պատմութեան՝ Յարդիչութիւն այդ երկու հետաշոր ազգաց երկրի, Հայոց և Վենետիաց. որոյ տպատրութիւնն կամ ազդեցուքիւն ի միտս գրողին՝ այնքան զօրաշոր է, որքան որ այս երկու ազգը և երկիրք՝ մեկ մեկ կերպով իրեն կրկին հայրենիք են եղած. մեկն՝ արեամբ և ժննդեամբ, միւսն՝ երկար և գրեթե բոլոր կենացը բնակութեամբ: Ասոր վրայ հարկ է առելցընել և այս բնակութեան քաղաքին (Վենետիոյ), հարուստ՝ բայց դեռ ոչ բոլորովին բննուած և քաղուած Դիցանքն. ոչի՝ քան զամենայն դիցանց աշխարհի՝ բազմաբիւ և բազմադեմ հաշաստչեայք (documents) և գրուածք պահուին՝ Հայոց ընդ օտար ազգի մի յարդիչութեանց. կամ, պարզաբար ըսելով ազգային հայկական յիշատակաց՝ ի Վենետիկ, և ընդ ժողովրդեան Վենետիոյ Հասարակապետութեան, 7-800 տարիներու անընդհատ տեղողութեամբ. որ և շարունակուի հիմայ այլ, գրիսիաշորապէս Միսիրարեան միաբանութեան մայրավանքով եւ տպագրատամբ, և Մուրատ-Ծափայէլեան վարժարանօք:

Ու լոկ հետաքրքրութեան՝ այլ և մարդավա-
րութեան պարտք մ' էր մեզ՝ գիտնալ և յայտ-
նել այս երկուց ազգաց յարքնուրիւնքը, մե-
կունքն Դիւաններէն և միւսոյն ազգային պար-
մուրիւններէն և աշանդուրիւններէն հանեղով
և հիշուելով։ Թէ ոչ հաւասար՝ այլ և ոչ սա-
կաւ պարտք մի էր և վեճետաց՝ գիտնալ ի-
րեց փառառոր և բազմադարեան ինքնիշ-
խանութեան ատեն՝ մեր ազգին հետ ունեցած
որ և է կերպով գործակցուրիւնք։ այս՝ որքան
յայտնի է եղեր իրենց երթեմն, Հասարակապե-
տուրթեան վերջանալին ետեւ դար մ' անցնելով,
մնացուեր է, և սակառոց միայն և սակաւ
ժանցուեր է։ Մեր երկար ամիսներով և տա-
րիներով քննուրիւնք և ընդօրինակուրիւնք ի
մեծի արքունի Դիւանատան, այլ և ի Նոտա-
րականն (որ քանի մի տարի առաջ յարեցաց
միացաց ընդ առաջնոյն), և որոյ պաշտօնեայք
առնենայն օգնուրիւն և մեծարանք ցուցին մեզ,
բայ բնածին ընտել և կակուդ վեճետկեան
բարուց, միանգամայն և իրենց հետաքրքրու-
րիւնը շարժեցին գիտնալո՞ ինչ է մեր գոտածը
և հաւաքածը։ մանաւանդ երբ (թէ և շատ քիչ)՝
հայերէն գրուած մի ըլլար հանդիպածն, կամ
չբացուած կտակ մի։ Պատշաճ էր և մեզ, ոչ
միայն այս իրենց ներկայ մարդասիրութեանն
համար, այլ և իրենց նախնեաց և Հասարա-
կապետուրթեանն, (զոր այնքան դարեր ցուցած
են մեր ազգին պանդրիստելոց և երթեւեկ վա-
ձառականաց, և իբր 200 տարիներէ ի վեր
նոյն մերազգի Հօր Միսիրարայ և իր միարա-

Առաքեան), իրենց ընծայել մեր աշխատանաց և գիտից երախայրիքը: Եւ այսպէս ըրինք, երեք տարի առաջ (1893), իրենց լեզուաց հրատարակելով՝ հիմակուան հայերէն հրատարակուածին առաջին մասն, կամ Ա. Յեղանակն, նոյն անուամբ՝ ինչպէս ի հայունն՝ Հայ-Վենետ կոչելով, իտալերէն. *L'Armeno-Veneto. Compendio storico e Documenti delle Relazioni degli Armeni coi Veneziani. Primo Periodo, Secoli XIII-IV.* Այս մասն՝ Ա. Յեղանակն՝ գործ առելի քան մեզ՝ կերպով մի իրենց (Վենետաց) հետաքննական էր, ի մէջ այնքան ազգաց՝ նա և արեւելեան քրիստոնեայ ինքնիշխան տէրութեանց, մէկ հատիկ այնպիսի տէրութեան մի հետ դաշնակցելն: Այդ տէրութիւնն կոչուեր և էր մեր Հայոց Ուրինեան հաջակեալ հարտութիւնն, որ դար և կէս բրակից և դաշնակից եղած է ընդ Հասարակապետութեան Վենետկոյ. ընդարձակելով ասոր թեշաւոր ասիւծուն բալանքը, և տալով ազատութիւն՝ Ախուանայ մէջ տուն, դատարան, եկեղեցի և փնդուկ հաստատելու, և անոր անդադար ծովակրկիտ և վաճառախնդիր, անկուչտ նաւերուն՝ ապահով և ոսկեցից նաշահանգիստ մի, Այս. հայկականն Վենետիկ: — Ըստէս և ի վաղոց յայունի է, որ այս Յեղանակիս՝ երկուց ազգապետաց, բազաւորին Ախուանայ և դքսին Վենետկոյ՝ բրակցութիւննին՝ գլխաւորապէս և հիմնապէս ասոնց վաճառաշահութեան նկատմամբ էր, որ և Հայոց եւս ոչ սակաւ առիր էր շահու:

Յայտ է եւս, որ ասոնց դրած և գրած դաշինքն՝ այս մեր դարուն բարական ժանուցաց եւրոպական գիտնոց, մանաւանդ վաճառականութեան վրայ գրողաց, նա և մեծաւ մասաւը հրատարակուած են յայլեայլ անձանց, և աշխի շատ վիկտոր Լանկուայի ձեռօք՝ ի վանս մեր: Բայց, այդ Հայոց և Վենետիաց վերաբերեալ ժանօր արքունի գրուածքն՝ հազիշ 10 կտոր բան կրթեան ըլլալ, դժբաղդարար շատ անոնց նմանեկերն այրած կորած ըլլալով: Բաց ի մեկ երկու այդպիսի նմանեկերն, զոր առաջին անքամ հրատարակեցինք՝ մեր վերոյիշեալ իտալերեն գրուածին մէջ, նոյնպէս առաջին անգամ հրատարակմամբ՝ այդ պատմական գրուածին յարեցինք 350էն առելի հաշասունայր եւս, թէ կարձ թէ երկայն, յայլեայլ դիշանական գրոց գաղափարելով, որք պատմական մասէն մէկ ոչ կէս անգամ առելի են բանակար: — Այդ պատմական մասն արդէն բիշ բիշ հայերեն այլ հրատարակուած էր ի բազմավիապ օրագրի՝ յիտարականէն բարգմանելով, և հիմայ բովանդակն այս զրոցս մէջ: Բայց զի հաշասունայրն գրեթէ բոլոր, բաց ի սակառոց, լատինարեն գրուած են, սակարեն իտալերեն և փանեկերեն, և մեր հասարակաց հասկանալի չեն, բարգմանելն այլ շատոց համար այնքան պիտանի պիտի չըլլար, մանաւանդ որ անոնց ժողովն անցած է ի պատմական մասին իսկ փափագողք կրթեան իտալերեն գրուածին մէջ գտնել:

Առյն պատմառաց Բ Յեղանակին (որ միայն

հայերէն ահա հրատարակուի) հաւաստչեայքն այլ՝ որ մեծագոյն մասամբ իտաղերէն են, զեմք առեցընէր, արդէն պատմական մասը չափառոր և բաշական համարելով։ Գորցէ այս մասն (Բ Յեղանակ, ԺԵ-Զ դար) Վենետոց այնքան հետաքրրական ըլլար. իսկ Հայոց՝ թերեւու աշելի քան զատացինն. մեկ մ'որ՝ մերոնք արդէն գիտեն իրենց ազգին պատմորիւնը, և երկրորդ, որ այդ (Ա Յեղանակ) մասին մէջ կարձ և չոր յիշուած են անուանք Վենետո պայլից կամ որ և է անձանց և իրաց, որք ոչ մերայոց՝ այլ նոցա են հետաքրրականք։ Այսպէս Հայոց, ինչպէս կրթեան դատել ընթերցողք, այս Բ Յեղանակս այլ կ'ընժայէ Վենետոց այնպիսի Հայոց, որ եթէ մերազգեացս պարծանք են, իրենց այլ կրթեան ըլլալ զարմանք, այլ և երախտառորք. Անտոնեանքն և Գեորգեանք, ծռվայոյզք, նաշագէտք, մեքենագործք, բարգմանք, բդրատարք, կարաշանապետք, գրատիպք, և այլն, անկողմնասէր և աննախանձ Վենետի մի՛ և ո՛ր և է օտարի՛ պէտք էր արժանի ըլլային յիշատակարանաց, ոչ միայն մտաշորօք և գրաւորօք, այլ և այնպիսի ցորցակործեամբք, որովք հիմայ ջանան եւրոպացիք իրենց սեփական ազգի և տէրուքեան երախտառիներն ակն յանդիման երեցընել, և որպէս կ'ըսուի, անևահացընել։

Ասոնցու վերջը Գ Յեղանակի Հայ-Վենետոց (ԺԵ-Ը դարուց) նկատմամբ՝ քանի մ'ան զամ գրոցս մէջ ըսուած է մեր մտածորիշնեն, և առելի երկայն ի վերջաբանին (երես 496

-516), առելորդ համարիմ կրկնել։ Այն ըստ - ներեւ կ' իմացուի, որ երեւ ոչ փառաշոր և նշանաւոր անձինք պիտի ընծայէ յետին թեղանակն, այլ և ոչ անփառունակ, և բռով անհամեմատ առելի, (*) նոյնպէս և զանագան դէպք : Վասն զի այս երկու դարուց մէջ առելի ճերացեալ և կազմեալ կ' երեւի հայութիւննեն ի վենետիկ . և իրեն վերաբերեալ հաշասուշեայքն այլ անհամեմատ շատ . յորոց մեծ մաս մի ընդօրինակուած է, այլ կայ դեռ և

(*) Ինչպէս կը բնան հաւասար ընել յիշեալ անուանքն (յերեսս 503-14) . որոց մէջ եթէ լուսած էր մոռացմամբ կամ զգուշութեամբ՝ անուն մ' այլ, անակնկալ հարկ մի՝ որ դեռ նոր վերոյգրեալ տողերը գրելուէն վերջը յայտնուեցաւ, կու ստիպէ հիմայ (նաև առանց անձին գիտութեան) հոչակել։ կենդանի Հայ-Վիենետ հեղինակ մի է նա, բանաստեղծ՝ ոչ միայն նրազգաց այլ և խորազգած, և քերդող, այսինքն հմուտ խտալական լեզուի տաղաչափութեան, որով գրած է և գրէ . և ի նորումն, վարժանակ վկայեալ տաղ մի հրատարակեց խտալիոյ նշանաւոր La Rassegna Nazionale բանասիրական օրագրին մեջ, Լուսնիւան կոչմամբ . զոր՝ զիշերոյ սիրական նկատէ . բայց չկան (թերեւս յոմանց կարծեցեալ) սիրաբանութիւնք, այլ բնութեան և մարդկային կենաց վերացեալ գաղափարք՝ զուգաւորութեամբ գիշերոյ և լուսութեան զգացման։ Արգարեւ բարձր և ոչ դիւրահաս իմաստ մ' է, որպէս և շարադրութիւնն . որով իր բնական չափէն և վիճակէն այլ վեր կ' երեւի հեղինակն . որ է ազնուական և չափահաս օրիորդ մի, մեր հանրածանօթ հայազգի Ասմուել Մուրատայ՝ գստեր և փեսային թոռն (գուստը իդուարդայ) Վիտորիա Աղանոոր, Vittoria Aganoor։ Այսպիսի գրութեանցն համար պատուեցաւ նա այս տարի, Վենետիկոյ հոչակեալ գիտնական Անդասէն ժողովոյ (Ateneo Veneto) ընկեր ընդունուելու :

ոչ ասկաւ ընդօրինակելի . յոշացուի թէ դեռ Բ
Յեղանակին վերաբերեալ գրուածք այլ գտուին ,
մանաշանութ ի Նօտարական դիրանի , զոր դիր-
րին չե գտնել . վասն զի , ոչ ամեն նօտարք ի-
րենց գրուածոց ցանկն ըրեր են , կամ ըրածնին
կորած է : Ապագայն միշտ յոշալի է . գործէ
և քննութեան հնարքն դիրանան , և հմտագոյն
հետաքննողը ձոխագոյն և լաւագոյն հրատա-
րակեն : Այսու յոշով և մաղրանօք՝ կնքեմք
այս գիրքս . որ՝ թէ և փոքր , այլ (հանդերձ
մնացեալ ընդօրինակութեամբ) ոչ փոքր և ոչ
կարձ աշխատանք և ժամանակ գողցած է ի
գրչես և ի կենաց : Խցէ՛ թէ իմ գտածս և կո-
րուսածս՝ այլոց պիտանի և անկորուստ ըլլար :

5 Յունիս , 1896 .

Հ . Պ . Մ . Ա .

ՅԱՆԿ ՆԻՒԹՈՒՑ

Ա. ՅԵՂԱՆԱԿ · ՈՌԻԲԻՆԵԱՆՑ ԺԱՍՏԱՆԱԿ ·	
Ա. Առաջին ժամութեանք և դուգադիպու-	
թեանք Հայոց և Վենետաց	1
Բ. Յարաբերութիւնք Ռուբինեան Հայոց ընդ	
Հասարակապետութեան Վենետկոյ · — Լեռն Մե-	
ծագործն և Դուքսն Ենրիկ Տանտոլոյ	20
Գ. Պայլք Վենետաց ի Հայո (Կիլիկիա)	56
Դ. Վենետք ի Սիսուան	30
Ե. Վենետք ի Հայո	67
Զ. Յարընչութիւնք Արքունեաց Սայ ընդ Հա-	
սարակապետութեան Վենետկոյ	80
Է. Նոր Յարընչութիւնք Հայ-Վենետաց	97
Ը. Վերջին Յիշատակք Հայ-Վենետաց յԱռա- ջին Յեղանակին	140
Ի. ՅԵՂԱՆԱԿ · ՀԱՅՔ և ՎԵՆԵՏԻԿԻ ի ԺԵ-ԺԶ ԴԱՐՄ ·	
Ա. Գիրք Յիշատակքարանաց Վենետկոյ Տէրու-	
թեան . — Բ. Նաւարկող և Նաւատէր Հայք .	
Հայք Ղրիմու . — Գ. Խանքիր Գաղթականութեան Հայոց ի Կրետէ	167
Բ. Ա. Պարոն Գորդ և Պր. Յակոբ Հայք ի Վե- նետիկ (1454) . — Բ. Օսմանեանց և Գոյունլու	
թուրքաց զօրանալն և հակառակելն . — Գ. Մի- րատ կամ Միրաք Հայ դեսպան ի Վենետիկ . —	
Դ. Կիպրացի Հայք	180
Գ. Ա. Մարտիրոս եպիսկոպոս Եղընկայ . —	

Բ. Հայոց Տուն և Տեղահարք . — Գ. Շահ իսմայիլ Նոր տիրապետ Պարսից և Հայոց : — Դ. Տե- ղեկատուք՝ Մուրատ Անկիւրացի, Գաւիթ Եպիս- կոպոս Կիլլըռոսի	193
Դ. Ա. Սկիզբն հայերէն Տպագրութեան ի Վե- նետիկ: Յակովը Տպագրող Արդար Թոփխաթցի . Տէր Յովհաննէս Տէրզընցի : — Բ. Հայ Թարգմանիք. Գէորգ Դամասկացի, և որդին Մարկոս	207
Ե. Ա. Խաչատուր Դաւիթիցի, և իր թարգմա- նած Վեհպասանութիւնն . — Բ. Խաչատուր Եթով- պացի, և իր Պատմութիւնն Վենետիկոյ	222
Զ. Հնարագէտ Հայն, Անտոն Սուրեան	234
Է. Հայ Անտոնի Որդիքն և Թոռն	263
Ը. Գէորգ Կարաւանապետ, Թողթատար և թարգ- ման Վենետիաց	278
Թ. Գէորգ Որդի Թէոդորի Կեսարացւոյ	291
Ժ. Յանցաւոր Հայք	508
ԺԱ. Ա. Ստեփանոս Ե Կաթողիկոս . — Բ. Թօդէոս Կթղ. և այլ եպիսկոպոսք և քահանայք .	524
ԺԲ. Տէր Յակոբ Մարգարեան Ամիեցի, Նուի- րակ Կաթողիկոսի և դեսպան	550
ԺԳ. Զուշայեցի Վաճառականը ի Վենետիկ .	568
ԺԴ. Հայոց բազմանալն և Բնակարանիքն ի Վե- նետիկ	581
ԺԵ. Հայ Սանսէրք ի Վենետիկ	592
ԺԶ. Յիշատակը ԺԶ. Դարրու Հայ-Վենետիաց .	427
ԺԷ. Ա. Քանի մի Ուզզութիւնք . — Բ. Լրմունք Կենսագրութեանց . — Գ. Տունն Հայոց . — Դ. Ազգատոնմք Հայոց ի Վենետիկ . — Ե. Ցետա- հայեաց ակնարկ մի ի Հայ-Վենետիա Գ. Յեղա- նակի	477

ՀԱՅ-ՎԵՆԵՏԾ



Ա. ՑԵՂԱՆԱԿ

Ժ Գ Ե Ւ Ժ Դ Ր Ք



ԵՐ. ՀԵՊՈՒՄ Բ. = ԵՂ. ՅՈՎԱՆՆԻՍ
մ. 1266. † 1307, տո. 17.

ՀԱՅ-ՎԵՆԵՏ

~~~~~

Ա. ՑԵՂԱՆԱԿ

ԴՈՒՐԻՆԵԱՆՑ ԺԱՄԱՆԱԿ

Ա.

ԱԴԱԲԻ ՆԱԽՕԹՈՒԹԻՒՆՔ

ԵՒ ԶՈՒԳԱԴԻԳՈՒԹԻՒՆՔ ՀԱՑՈՑ ԵՒ ՎԵՆԵՑԱՑ

~~~~~



ՆԴՀԱՆՈՒՐ ազգաց պատմութեան մէջ
ողէսք մի՝ որ զարմանախառն ան-
դրադարձութիւն մի կ'ազդէ հետաքըն-
նաց վրայ, այլալեզու և այլատարազ
ազգաց՝ իրարու հետ ունեցած անա-
կընկալ յարաբերութիւնն է. և այս իրաւացի
զարմանքն այնչափ աւելի մեծագոյն կու լինի՝
որչափ այդ ազգաց հայրենիքն հեռու ըլլան
իրարմէ, ոչ միայն ծովերով ու ցամաքներով
անջատեալ, այլ և ընդմիջեալ ազգերով և

ժողովրդովք, որոց հետ թերեւս այնշափ սերտ
յարաբերութիւն չեն ունեցած՝ որքան իրա-
րու հետ՝ այդ հեռաւոր և բաժանեալ ազգերն։
Ասկայն տեղեաց հեռաւորութեան հետ ժա-
մանակի հեռաւորութիւնն այլ յայտնի կ'ընէ,
որ ի սկզբան՝ աղօտ, նուրբ, և կերպով մի
անշօշափելի պէտք է եղած ըլլան անոնց
յարաբերութիւններն. մինչ մերձաւոր ժա-
մանակ և ներկայութիւն գրաւոր հաւաս-
տեաց կամ յիշատակարանք են՝ որ պատմու-
թիւնը և անոր ստուգութիւնը յիրաւի կը
հաստատեն։ Այլ և զայն չէ կարելի ժխտել՝
որ զրեթէ ամեն ազգաց պատմութեան ըս-
կիզրն՝ անօսր և զրեթէ առասպելական է, և
թէ պէտք և արժան չէ յառիլ ի նոսա՝ իբրեւ
իրական բաներու։ Բայց դարձեալ, այն խու-
սափուկ և ստուերական երեւութից մէջ այլ
կայ գաղտնի զուարճութիւն և հաճոյք մի.
և թէպէտ անաշառ միտք մերժէ զանոնք, սա-
կայն երեւուկայութիւնն միշտ հաշտ աշխով կու-
նայի այդ առասպելաց վրոյ, և կարծես թէ
կու փնտոէ իսկ զանոնք։ Բայց երեւակայու-
թիւն ըսելով՝ կու հասկնամ ոչ զսանձարձակն
և զցնորական, այլ որ յեցեալ ըլլայ յաւան-
դութիւն ինչ և ի հաւանականութիւն, կամ ի
յարմարաւոր և հնարաւոր կարելիութիւն։
Մեր աշաց առջեւ պարզելով ազգասփիւռ

աշխարհացոյցը, և ուշադրութիւննիս Հայաստանի վրայ դարձընելով, հետեւեալ երեքինչ աներկրայ հաւաստութեամբ ընդունելի կը թուի մեզ : — Ա. Հայ ազգին և աշխարհին հնութիւնն, ստոյգ պատմութեան սկիզբէն ի վեր, որ ջրհեղեղով կու սկսի, և անմիջապէս անկէ վերջ աշխարհադրական անուամբ Հայաստան կամ Արարատեան երկիր կու կոչուի : — Բ. Այս երկրին բնիկ ժողովուրդն՝ Հայք, որ ցեղապետէն եւս յառաջ եկած լինին (միշտ ի Յարեթեանց), հնագոյն ազգաց հետ ի միասին կու յիշուին . և անոնց մեծ կերպարանափոխութեան՝ այսինքն ազգաց բաժանման և ցըման օրերէն սկսեալ, կամ քիչ վերջը, մինչեւ այս օրս՝ անպակաս բնակեր են հօն, թէ և ոմանք յայժմու բանասիրաց Եւրոպիոյ՝ եկամուտ համարին զՀայն, և տիրող՝ իրմէ առաջ բնակող ժողովուրդ մի : — Գ. Զի այդ յամառ և անքակ բնակութեամբն իսկ ի վերայ հայրենի հողոյն, ոչ փոքր՝ այլ մեծ մասն մի հայ ժողովրդեան՝ ընդաբոյս իմն բարուք ստէպ գաղթեր է և կու գաղթէ, ոչ միայն ի մերձաւոր աշխարհներ, այլ պէտք համարած ատենին՝ նա և ի ծագս երկրի, — եթէ կու վայլէ այսպէս ըսել, — այլ և այլ պատճառներով : Մեր այս ըսածին յայտնի վկայութիւն կու տան ամենայն

ծանօթքներկայ քաղաքավարութեան աշխարհի և մերձաւոր դիպուածոց, և նոյն իսկ ընթերցողք լրագրաց։ Ուրեմն զարմանալու չէ՝ եթէ ըստ բաղդի՛ աշխարհաքաղաքացի համարուին Հայք, և ընդ գերագոյնս ի նոսին, որով և ի հարկէ այլ և այլ օրինակաւ և չափով ի յարաբերութեան ըլլան ընդ օտարալեզու և օտարաբարոյ հեռաւոր ազգս և նշանաւոր կենդրոնս, մանաւանդի շահաստանս և ի մայրաքազաքս։

Հիմկուհիմայ թոյլ տրուի մեզ վերցընել նախնի և կէս պատմական դարուց քողը, և թողլով ուրիշ ամեն երկիրներու և ազգաց վիճակը քննել Հայոց ստոյգ կամ անստոյգ կցորդութիւնները կամ ծանօթութիւնը՝ մի վին դարուց և նոր պատմութեան ամենէն աւելի նկատելի ու զարմանալի ազգի ու նահանգի մը հետ այն է հռչակաւորն և գեղագանձն Վէնետիկ։ Ստոյգ պատմութեան կարելի չէ այս երկու ազգերը հաւասարել ընդ միմեանս. այնչափ երկար է խորի ժամանակի՝ եթէ ոչ ըստ ծագմանն, – վասն զի կրեթէ հարկ է ամեն ազգաց զուգաժամանակ ըլլալ, – այլ ըստ ծանօթութեան։ և կը նամք ըսել՝ թէ այն օրն յորտւմ յալեաց կու ծնանէր կոյսն Վենետիկ, կու նուաղէր հինն Այրարատ, իր հաղարամեայ էութեան շրջա-

Նաք կարի՝ իսկ ծանրացեալ, որոնցմով կատարեց իր զօրութեան և մեծութեան երկայն շրջանը, երկարատեւ քան զշրջան հասարակապետութեան վենետիկոյ. ապրելով հին աշխարհի հնագոյն ազգաց հետ, ընդ որս երկրիս թատեր վրայ խաղաց իր խաղը: Ասկայն, քաւ, ոչ մեռաւ, այլ նուաղեցաւ միայն. և ըստ ինքնակեցութեան օրինաց՝ ի խոնարհագոյն կեանս յեղափոխեցաւ. և եթէ մեռած ալ ուզուի համարել զինքը, այնպիսի մահ է՝ որպէս և վենետիկոյ, յետ կորստեան հասարակապետութեան: Եւ ո՞վ պիտի համարձակի ըսել կամ հանդուրժել լսել այսպիսի ինչ՝ Ադրիական ծովուց այս չքնաղ դշխոյիս համար, յետ գրեթէ դարու միոյ իր բաղդին յեղափոխութեան: Նոյնը պէտք է իմանալ և վասն Այրարատայ՝ նախածնելոյն յալեաց համաշխարհական ովկիանու ջրհեղեղին. բայց ոչ ի սպառ յանշքութեան և նուազութեան հաղար տարիներու մէջ, այլ և ի նորահրաշ կենդանութեան և զօրութեան վերերեւեալ. որով սերտագոյն կցորդութիւն մ'այլ ունեցաւ ընդ վենետիկոյ, ինչպէս պիտի տեսնենք քիչ մետքը, և որ նպատակ է մեր այս գրուածին:

Չեռք առնունք ուրեմն պարզել զքող կիսապատում ժամանակաց. և որովհետեւ տեսանք զհայս՝ հնագոյն դարուց մէջ ստուգապէս

հանդիսացած, արժան է փնտռել նա և վե-
նետկոյ խանձարութքը, կամ անօր էութեան
առաջին վիճակը, քանի որ դեռ ստացած
չէր այն շքեղ կերպարանքը՝ որով ի հին-
գերորդ դարէ ցվերջ ութեւտասներորդին տե-
սարան եղաւ Եւրոպիոյ և Ասիոյ։ Եթէ այս
վերածնութենէն նոյնչափ ժամանակ և դար
վեր ելնենք, գրեթէ Տրոյական պատերազ-
մաց դիւցազնական պարագային կու հասնինք.
յորում հին՝ այլ ոչ երբէք հնանալի քերդողն,
մանաւանդ թէ ամենայն մտաց և դարուց
մանկացուցիչն, Հոմերոս, իր մոգական մա-
տամբք կու սքողէ մեզ զուրուական Վենետ-
կոյ, տառի մը նուազութեամբ կամ այլա-
փոխութեամբ, Հեներու կամ Եներու կոչելով՝
Պափլագոնաց ցեղ մի, քաջաձի և քաջաջո-
րի¹. որոց համար կու վկայէ և Սոփոկլ, թէ
յօգնութիւն եկած ըլլան տարաբաղդ ծերուն-
ոյն Պրիամու. առ որ՝ կանխեր հասեր էին
յօժանդակութիւն՝ այրարատեան գնդաց քա-
ջաձի սերունդք, իրենց Զարմայր նահապե-
տին առաջնորդութեամբ, որ Հեկտորի հետ
ընկաւ ի յաւերժայիշատակ դաշտին. բայց ոչ

4. Հոմեր, իւիական Բ. 85. Ե. 577: — Ֆիլիազի
կարծէ, թէ ըստ Երովոս. (Ա. ՃՂԶ) Վենետք գաղթած
ըլլան ի Մարտաց. ուր յոյն պատմչին խօսքն Սիդենաց
մըայ է և ոչ Վենետաց։

յայլմէ զարնուած, ինչպէս կու փափաքի և
կ'ազդէ պատմիչն մեր (Ա. Խորենացի), այլ
միայն ի դիւցազանց դիւցազնէն՝ յԱքիլեայ:
Զեմ գիտեր թէ այդպիսի փառաւոր արկած
մի հանդիպեցմօւ արդեօք և Պիլեմոնի՝ ա-
ռաջնորդին Վենետաց կամ Հենետաց, երբ
Տրովադայ պարըսպաց տակ ընկաւ և նա:
Բայց ինձ հաճոյ է նկատել այդ երկու աղ-
գերն, մեր քիչ յառաջ յիշած դաշին համե-
մատ, պատմական ժամանակաց և արշա-
լըրշոց մէջ, իբր համերաշխ, նիղակակից
և գործակից, և զրեթէ իւկիք նա և համա-
նման: Վասն զի, Պափլագոնացիք նաև սահ-
մանօք իսկ մերձաւորք էին Փռուն Հայոց և
գաւառաց Հայախաղտեաց, Ալիւս գետով մի
բաժնուելով. զգեստուք այլ համաձեւք, ինչ-
պէս կու հաւատարմացընեն հինք, կրելով
գտարագ փոխգական. և զարմանալի իմ
հանդիպմամբ՝ նոյն էր մեր երկու ազգաց
այլ գլխաւոր նշանակն և այլաբանական ցոյցն:
Ծանօթ է հնագիտաց, թէ ինչպէս խրոխո-
Հռովմայեցիք իրենց արձանաց և դրամնե-
րու վրայ սովոր էին կերպարանել զՀայաս-
տան ի մանուկ փոխգագտակ. Վենետիկե-
ցիք այլ նոյն փոխգացի գտակը կը դնէին ի-
րենց դքսից գլուխը, և նիւթապէս անդրեաց
վրայ:

Վենետիկեան յիշատակաց հետամտից թող-
լով քննել և յայտնել, թէ ո՞րքան հաւանակա-
նութիւն կրնայ ունենալ իրենց չքնաղակերտ
քաղաքին և ազգութեան սկզբնաւորութիւնն
կամ թէ ըսենք մկրտութիւնն, Փրիստոսի
421 թուականին և ի 25 մարտի, ըսենք, թէ
մեր հայկական պատմշաց յիշատակք այլ՝ նոյն
տարուան թուականին դնեն կարնոյ քաղաքի
բերդին՝ ի Բարձր Հայո՝ հիմնարկութիւնը
կամ ընդարձակուիլը, որպէս զի ըլլայ ամուր
ապաւինի կամ նիստ արեւմտեան (յունական)՝
Հայոց կուսակալաց, որ Հայաստանի արեւե-
լեան մասին գերիշանք էին (suzerain), և
քիչ ետքը նա և տեալք։ Այն քաղաքն և
բերդն որ հիմայ Երգիրում, կամ Երկիր և
Արգն Յունաց կը կոչուի, այդ ժամանակէն
և ինչուան ետքը՝ նոյն վիճակին և պաշտա-
ման մէջ մնաց, որոյ համար շինուեցաւ . մա-
նաւանդ թէ այլ աւելի։ Վասն զի Հայոց
հին մայրաքաղաքաց աղօտանալէն և աւրուե-
լէն ետքը, երբ յետին մայրաքաղաքն այլ՝
Դուին՝ սասանութեամբ քանդեցաւ, կարնոյ
քաղաքն հազար տարիէ ի վեր՝ Հայոց քա-
ղաքաց առաջին և գլխաւորն համարուած է,
ինչպէս և այսօր, օսմանեան Հայաստանի
մասին մէջ, և Թուրքաց պետութեան գլխա-
ւոր նահանգական և զօրանիստ քաղաքաց մին,

և հզօր մարտկոց ընդդէմ ռուսական տէրութեան : Ալրդ, ըստ այսմ տեսութեան և ժամանակի ծննդոց, գուգածինն Վենետիկոյ կորին՝ իւր սեպհական տեւողութեամբ յերկարատեւ եղաւ քան զայս զծովապարփակ քոյրն : Ո՞րչափ աննմանք իրարու՝ ոչ միայն ըստ քաղաքական հանգամանաց, այլ նաև բնական դրիւք . զի մինչ բարեհամբոյրս Վենետիկ՝ հեզօրէն մինչև յերեսս ծովուն՝ (որ կեանք և զարդ եղաւ իրեն), հարթ հաւասար զետեղուած է, ընդ հակառակն կարին՝ կարծես թէ ըստ անուան իր հին նահանգին (Բարձր Հայոց՝ յորում հիմնարկուած է), իր աշտարակաց համար օդական իմն ալիք կը փնտուէ, 6000 ոտնաշափ բարձրանալով Պոնտոսի ծովուն երեսէն, որոյ մերձաւորագոյն է քան այլ ծովուց . և է հին և համբաւաւոր կենդրոն մի վաճառուց արեւելեան աշխարհաց՝ որ ի Հնդկաց և ի Պարսից . ինչպէս վկայէ նաև աշխարհագիրն Մարկոս Պողոս (Marco Polo), և իրմէ աւելի հնագոյն արարացի և այլ օտարազգի պատմիչք :

Վենետիկոյ ծննդեան թուականին երկրայողք, հաւանականագոյն կու համարին անոր հառարակապետութեան կազմակերպութեան թուականը՝ դնել 451-2 տարւոյն . երբ հիւսիսայնոյն Ատտիկայ ձեռքէն փախչե-

լով, Աղրիական ծոցոյն ճախճախուաները՝
ծովէն ու ցամաքէն աւելի հզօրագոյն համա-
րեցան ի պաշտպանութիւն անձանց : Այդ
տարուան մէջ զուգադէպ կը հանդիպէր նա և
ի Հայաստան, աւաղ, ոչ եթէ ծնունդ՝ այլ
մեծ մահ մի . Հայոց համազգային կամ համ-
իշխան միութեան մահն : Վասն զի կենաց
ու մահուան մեծ վտանգի ու տագնապին մէջ՝
յերեսաց հրապաշտից Պարսից, վերջին ան-
գամ կը գումարէր կը ժողովէր իր հաւատա-
րիմ որդիքը, ու մահուան պատերազմը կու-
տար, առաջնորդութեամբ քաջագունին ի զօ-
րավարս ժամանակին, Սրբոյն և մեծին Վար-
դանայ, որ առաքինաբար նահատակեցաւ այն
անմոռանալի օրուան մէջ (2 յուլիս, 451),
և առաքինակրօն ընկերօքն դիւցազնօրէն
ընկաւ հայրենեաց վրայ, այդպիսի քաջու-
թեամբ ընկած բանակն այլ՝ վերացոյց բար-
ձրացոյց քան զաստեղս ի վեր : Զկարծէ ոք
թէ ընդ Հայկին և Վահագնի՝ իր նախնեաց՝
դասեցաւ համաստեղութեանց կարգի մէջ, այլ
աւելի գերագոյն տեղ մի, ի խորանս Յիսու-
սի, և ստուգութեամբ. զի այն օրուընէն ի
վեր՝ եկեղեցի և աշխարհ Հայաստանեայց՝
տարուէ տարի կը կատարեն Սրբոց Վար-
դանանց՝ հազար երեսուն և վեց նահատա-
կաց՝ տօնախումբ հանդէսը, և դադրելով յա-

մենայն զբաղմանց և ի տուրեւառիկ գործոց՝ գերագոյն յաղթութեան յիշատակ մը կատարեն յեկեղեցւով, և վարժարանաց և խնջոյից մէջ, փոխանակ մէկ քաղաքի ջրածնութեան բովանդակ ազգի մի արեամբ վերակենդանութիւն . որոյ տեւողութեան չափն է՝ կրօնք, երկրաւոր անմահութիւն, շաղկապ երկնաւորին և անանց յաւիտենականի :

Եթէ այդ երկատեսիլ թուականին վրայ գար մ'այլ աւելցընենք (451-551), յիշատակարանք ուրիշ նոր հայկա-վենետկեան գուգադիպութիւն մի կու ցուցընեն, ներկայացընելով մեզ նոյն ժամանակին հոռվմէական բանակաց արհագոյն զօրավարը, զՆերսէն Պատրիչ. որոյ առ օտարս համաշխարհական անունն և համբաւ, աւելի կերպով մը սեփականագոյն է առ Վենետկեցիս և առ Հայու առ մեզ. զի մեր ազգին արիւնէն ընծայեցաւ, թէպէտ և ի ծառայութեան բիւզանդական կայսերաց . իսկ առ Վենետկեցիս՝ յորոց հիւրասէր մեծարանք ընդունեցաւ, մինչ հազիւ խրճիթաց մէջ գլուխնին ծովէն վեր վերցուցած կը թուէին, ասոնց ձկնորսակ նաւակներէն օգտըւելով, իր զօրքերը կրելու, և այն ծովափանց աւերողքը վանելու համար . և իրենցմէ տեսած և ընդունած ծառայութեան փոխարէն՝ միջնորդ հաշտութեան

լինելով ընդ Պատաւիոնացիս և Վենետիկեցիս .
և այն ժամու դեռ եւս անկերպարան Վենե-
տիկ քաղաքին մէջ կառուցանելով առաջին ե-
կեղեցիքը և գրատուն մի եւս : — Մեր ժա-
մանակաց ստուգախնդիր քննութեանն հա-
մար՝ աւանդականն, որով և զիճելի համա-
րուած են այս դէպք . նոր քննիչք և նորա-
յայտ յիշատակարանք՝ կ'աւանդեն, թէ ոչ ի
կէս վեցերորդ դարու, այլ ի սկիզբն իննե-
րորդին շինուած ըլլան Ա . Թէոդորոս Վենետ-
կոյ մայր եկեղեցեաց առաջինն՝ զուգակցաւն
նուիրելով Ա . Գեմինիանոսի, ուրիշ Ներսիսէ
մի, որոյ եղբայրն այլ նոյն եկեղեցւոյն եպիս-
կոպոսն եղած ըլլայ : Այդ երկու համանուն
անձանց գործերն որչափ այլ իրարմէ առաւել
կամ նուազ ստուգութիւն ունենան, թէ յա-
ռաջնոյն և թէ յերկրորդէն հաւոսատի բան
մի մեայ, և որ մեզ համար կարեւորագոյն
է ի ժամուս, և է հայկական և վենետիկեան
ձեռաց մտերմաբար և օժանդակօրէն առ մի-
մեանս կարկառիլն :

Անտարակութելի է որ Զ - Ը դարսուց մէջ ի
Հոաւեննա հաստատուած կայսերական փոխ-
արքայից աթոռն՝ օգնական և զօրաւիզն էր
Վենետաց : Ոմանք այդ փոխարքայից ոչ
միայն հայ էին ազգաւ, որպէս Ներսիսէ,
Գրիգոր և Խոահակ, (որոյ հոյակապ դամբա-

բանին արձանագիրք ի Ա . Վիտուլ եկեղեցւոյ
 Հռաււեննայ կու վկայեն ցայսօր), այլ և ամ-
 բողջ հայկական գունդ մի, Numerus Arme-
 niorum, կու նստէր հօն՝ ի պահպանութիւն
 թատարիոյ . և քաղաքին ծովափնեայ թաղերէն
 մին ի պատճառս նստոցի և ազգի զօրակա-
 նին՝ կը կոչուէր Classis, և Armenia. թա-
 ղին անուանի տաճարն նուիրեալ էր Սիրոյն
 Ապողինարի, և այդ անունը կրէր մինչեւ
 Ի ԺԱ դար, իրբեւ զատ քաղաքիկ մը հա-
 մարուելով : Փոխարքայք Հռաւեննայ ոչ միայն
 իրենց մերձաւորաց, այլ և հեռաւոր նո-
 րակիրթ վաճառականաց՝ Վենետուաց՝ պակա-
 չէին ըներ իրենց թեւարկութիւնը . ինչպէս
 որ յիշուի յանուանէ՝ յաջորդն Ներսիսի՝ Լոն-
 գինոս, որ այդ օգնութիւնը կու տարածէր
 մինչեւ ի սահմանս Անտիոքայ յԱսորիս բնակո-
 ղաց . այն սահմաններն՝ որ յետոյ գլխաւոր կէտ
 կամ թատր եղան Հայոց ընդ Վենետիկիս
 վաճառակատնութեան և յարաբերութեանց,
 ինչպէս վերջը պիտի տեսնենք : Իսկ թէ ընդ
 ցամաք այլ աւելի յառաջ կ' երթային շահա-
 խընդիր Վենետուք, մինչեւ ի խոր Հայս և ա-
 նոր արեւելեան մեծ մայրաքաղաքը Դուին,
 (զոր մի ի մեծագոյն շահաստանաց Ասիոյ կու
 դրուատեն գրիշք Յունաց և Արաբացւոց Ե-
 – լ դարուց մէջ, ինչպէս քաջ հետաքննու-

թեամբք պարզեց արդէն հմուտ գերմանացին Հայո). կամ թէ և Հայք՝ անոնցմէ ոչինչ նուտզը բազմաշրջիկք, շահախնդիրք և ճարտարք՝ կը հանդիպէի՞ն մինչեւ յաղտաղտուկ ափունս Վենետիկեան ծոցոյն. — ստոյգ և որոշակի բան մը չենք կրնար ըսել, այլ մեծապէս հաւանական կու թուի. վասն զի եթէ ուրիշ ազգաց երթեւեկք էին ի Դուին և ի վաճառաշահ քաղաքս Խտալիոյ, եւս առաւել Հայոց, որոց համար վաճառականութեան ոգին բնածին իմն էր և կրնայ համարուիլ. մանաւանդ զի՝ ինչպէս տեսանք, այդ դարուց և ժամանակաց մէջ խմբովին կու գային Հայ զօրականք և զօրավարք, և կու բնակէին յափունս Աղրիականի, և անշուշտ իրենց ազգականք և ազգակիցք այլ՝ կըրնային գալ ոչ կուռոյ՝ այլ շահու պատճառաւ:

Կու թողունք յիշատակել նա և դեսպանաց երթեւեկը, ինչպէս և Հայազգեաց ոմանց ի դրանէ կայսեր, և ի Վենետիկոյ աւագաց և դքսերու որդւոց ի կոստանդնուպօլիս, մանաւանդ ի սկիզբն իններորդ դարու. ինչպէս ծովապետ նախարարն կեփալենեայ Պօղոս, — որոյ մականուն Cespheroно այլ և այլ այլագրութեամբ՝ գուցէ հայերէն է, — եկաւ ի դիմաց Պեպինոսի ի պաշտպանութիւն Վենետիկաց (809-10). և անոր մերձանուն՝ Աքսո-

Քիս (Arsaphius) Նիկեփոր կայսեր կողմանէ զնաց գեսպանութեամբ յԱկուխսգրանա (810), զոր ոմանք նոյն իր բուն հայկական անունովը Արշակ կը կոչեն, իսկ Տանտոլոյ պատմիչն՝ խանգարելով Հեթերսաբիոս կամ Եպերսապիոս (Hebersabius. — թերեւս աղօտ հնչմունք Արշաւիր, Վարագչապուհ անուանց. երկրորդն եկեր էր Վենետիկ՝ Յպելերիոյ դուքսը դատելու համար :

Ուրիշ զուգաղիպութիւն մ'այլ յիշենք՝ հայազգի կայսերաց գործակցութեան ընդ Վենետաց, որ այս միջոցին հանդիպած է (818). Բարգեշիբացիոյ տոժին ձիւսդինիանոյ որդւոյն առաքումն առ Լեւոն կայսր, որոյ յատուկ մականունն է Հայկազն. սա ինքն եղաւ առաջին՝ որ առ ինքն զրկուած Վենետիկոյ դքսորդին Հեղապատ անուանեց, և պարզեւեց անոր և անոր քաղաքին՝ այնպիսի ընծաներ, որ ոչ միայն մինչեւ Հիմայ՝ հազար տարիէ վերջ մնայուն են, այլ պիտի մնան միշտ. — զի են Սրբոց նուիրական նշխարներ, կենարար Խաչի Փբկչին մերոյ և Տիրամօր պատմուանի, և աւելի աշքի զարնող՝ Սրբոյն Զաքարիայ ամբողջ մարմինն, այլ և գանձեր՝ իշխութիւն ասոր հոյակապ եկեղեցւոյն, որ թէ և նորոգութեանց ատեն փոփխութիւններ կրեր է, այլ՝ դեռ կայ և պիտի մնայ յիշատակ մեծագործութեան տուողին և ընդունողաց .

և որոյ հովանոյն տակ՝ ի թիւս սրբասուն
և աստուածանուէր կուսանաց՝ ընծայած են
զանձինս և ոմանք ի հայագգի օրիորդաց։
Գտնուին թերեւս և այլ թանկագին անօթք
սրբազանք՝ հայկական նշմարօք, եթէ յուզուի
Ա. Մարկոսի պատուական գանձատունն։

Առաջ Մարկոսի Անկարելի է Հայ-Վենետիկուաց յիշատակութիւն ըրած ատեն՝ չխոնարհիլ անգամ մ'այլ առաջի հրաշակերտ և հրաշանուն տաճարիս, որոյ համար կրնանք ըսել, թէ ճարտարութիւն, ճոխութիւն, բարեպաշտութիւն (շքաշուինք ըսել թէ նա և գողութիւն), իրարու ձեռնտու ըլլալով՝ մասն առ մասն փոխադրեցին ի հարստագոյն քաղաքաց արեւելից, և կառուցին յանդիման Հանդրին հայելոյն, ի հազարամեայ զարմանս դարուց։ Կամ իբր անդամ անդամ յօշելով ի գեղեցկակազմ մարմնոց՝ յօդեցին և հաստատեցին մի այլ գեղեցկագոյն մարմին, — զպանչելի Տաճար Սէբոյն Մարկոսի, թերեւս յետ Սրբոյն Պետրոսի՝ աշխարհամուտ տաճար բովանդակ քրիստոնեայ ազգաց երկրի։ Սուրբ Մարկոս. (որովհետեւ հարկ է ակամայ իսկ թողուլ բազմապատիկ դիտելիք և ըսելիք,) որոյ կարգ կարգ ազնուանիւթ և մեծամեծ սիւնք փարելով գրկաբաց ճակատին շուրջ՝ քանդակուած կուկրեն վրանին բազմաթիւ անուանս հայազ-

զին ուժատաւորաց, թէպէտ և յետին ծԶ -
ծԸ դարսւց, այլ յիշաաակը են հետեւղաց ի-
րենց նախնեաց, որ յետ նախնագունիցն՝
դէթ ստուգիւ երկոտասաներորդ դարէն ի
վեր՝ կը մտնէին և կ'ելնէին ընդ պանծալի
դրսւնան։ Առւրբ Մարկոս, որոյ անթիւ բազ-
մակերպ և հրաշակերտ կազմուածոց մէջ՝
դրսանց աշքի գարնող առաջինն է իր դրիւք
և ձեռագործ արուեստագիտութեան մէջ նա-
խապատիւ համարուած, մեծ և ճոխ քառեակ
մը պղնձաձոյլ ոսկէզօծ Երիվարաց, որոց
վրայ հայկական յիշատակ կը սաւառնի։ Այս
Երիվարաց ճարտար արուեստագէտն՝ հա-
մարեալ է յոմանց՝ Լիւսիպպոս, և յայլոց
ուրիշ անձինք. այլ հաւանական կարծուի
թէ աշխարհակալ թագաւորք Արշակունեաց
Հայոց՝ որ Փրիստոսէ հարիւր տարի առաջ
տիրեցին հեղ մի Ելլադայ, այն դրախտա-
կերպ դաւառէն կորզելով յափշտակելով այդ
Երիվարները՝ փոխադրեցին ի Հայաստան.
ուստի՝ ըստ աւանդութեան՝ Հայոց Տիրիթ
թագաւորէն ընծայեցան Հռովմայ Ներոն կայ-
սեր. Բայց այլք հաւանականագոյն եւս կար-
ծեաք կ'ենթադրեն, թէ մեծն և Առւրբն
Տրդատ՝ Կոստանդիանոսի ընծայ դրկած ըլ-
լայ այդ չորս Երիվարները, և սա՛ իր Վոս-
փորի ափանց վրայ կառուցած նոր դաստա-

կերտին՝ թիւզամոդիսնի. անտի ի վենետիկ փոխադրուելուն դէպք և ժամանակ՝ ամենուն յայտնի է։ Մինչեւ որ անժխտելի քննադատութիւն իր վերջին և համոզիչ խօսքը շըսէ, պիտի չդադրինք ղարմանքով նայելէն այդ նորագանչ օդաշու երիվարաց վրայ. իբրեւ ի գանձս՝ որ դարձերով պահուեցան ի հայ երկրի, և իբրեւ ի կողոպուտս՝ հզօր ձեռաց Հայոյն ի տկարացեալ Հոռոմէ, և յառատ տուրա հայ ձեռաց առ հզօրագոյնն, ապա նախախնամութեան տնօրինելովը՝ դադրած հօն ուր հիմայ կեցեր են, ի պանծալի գլուխ վենետիկոյ. զի այսպէս պատշաճական և արժանաւոր է մեզ կոչել գեկեղեցի Սրբոյն Մարկոսի, ի հոյլս իր հարիւրաւոր սուրբ և քաղաքական շինուածոց։

Որքան հին և հզօր եղած է Հայոց յարաբերութիւնն և Վենետաց հետ առուտուրն, ասոնց առատ և ընտիր ասկոյն միջնորդութեամբ, միանգամայն և ինչ կարծիք ունեցեր է ուամիկ Հայն՝ իր մեծահանճար և մեծահնար և ոչ ըստ արժանւոյն իրենց ժամանակի նախանձորդներէն պատուած անձանց վրայ, (ինչպէս Խորենացի մի, Դաւիթ մի, Ղազար մի), ցուցընէ իր այս հետեւեալ աւանդութիւնն, որ իր ծիծաղելի և աղուական՝ կնգուղի և վենետիկան գդակին շփոթմամբն հանդերձ,

կըրնայ վերի ըստածներուս հաստատութիւն
տալ, ինքնին անհաստատ ըլլալով. « Անանիա
» Շիրակեցին տաղտկացեալ ի Հայոց, և
» գնացեալ ի Վենետիկ, և ուսուցեալ է
» նոցա թագաւորին՝ քիմեյով զերկաթն առա
» նել զոսկին (ոսկի). և նոքա յետ ուսանել
» լոյն ի նմանէ՝ մտածեր են սպանանել
» զնա: Եւ ինքն խնդրեալ է, թէ ոսկոյ մի
» կողմն իւր պատկերն նկարել. և նոքա յանձն
» առեալ են այնպէս առնել. և ի նմանէ թու
» զութիւն առնելով՝ զգլուխն կտրեր են:
» Եւ ես ասեմ (ով ես դու), ինչ է պատճառն,
» եթէ ոչ մեր Հայոց ազգին կարգաւորաց
» նախանձն, որ ի տգիտութենէ յառաջանայ,
» եւս առաւել ապերախտքն...⁴: որ այն-
» պիսի անհատնելի գանձն կորուսեր են:
» Որ և եալտըզ ոսկոյն մէկ երեսն կնկուղով
» պատկերն՝ Անանիայ Շիրակացուի պատ-
» կերն է » ! - Վենետն՝ թող երկու ծիծաղի.
Հայն՝ մէկ ծիծաղի, մէկ խրատուի:

4. Այս անդ անոբազ բան մի կոյ ու՞ն Զ ?

Բ.

ՏԱՐԱՔԵՐՈՒԹԻՒՆՔ ՌՈՒԲԻԽԵԱՆ ՀԱՅՈՑ ԸՆԴ ՀԱ-
ՍԱՐԱԿԱԳԵՑՈՒԹԵԱՆ ՎԵՆԵՑԿՈՑ. — ԼԵՒՈՆ ՄԵԽԱ-
ԳՈՐԾՆ ԵՒ ԴՈՒԳԾՆ ԵՆՐԻԿ ՑԱՆՑՈԼՈՑ:

Եթէ լոկ աւանդութիւնն այսշափ հեռու
կարող է տանիլ զՀայն, որչափ ևս առաւել
կրնայ յափշտակել զվենետն՝ իր հոյակապ
գործոց, արձանաց և շինուածոց յիշատակաւ,
աջին առջեւ բերելով զաւարառուն յաղթող,
զպանծալին. ի շարս իր հարիւր և քսան
տոմերու, զմեծն Ենրիկ Տանտոլոյ : . . . Բայց
անշուշտ թոյլ պիտի տայ և Հայոյն՝ մասնա-
կից ըլլալ իրեն. ի մեծարանս այս անձին.
վասն զի իրմով կու սկսի այն սերտ և ստոյգ
կապակցութիւնն երկուց ազգաց և պետու-
թեանց, հայկականին և վենետիկեան. և եթէ
ներելի է ըսել, Տանտոլոյ և Լեւոն Ռու-
բինեան՝ երկու դարուց միջոցին մէջ կրկին
գլուխաք կրնան համարւիլ իրենց կցորդութեան
կամըրջին, ուղղակի. անուղղակի կերպով
մ'եւս՝ իրենց ժամանակէն մինչեւ հիմայ :

Ինչպէս տեսանք, այս երկու ազգաց փո-

իսադարձ ծանօթութիւնն հին ժամանակաց
ի վեր սկսած էր, և հետզհետէ պայծառա-
ցաւ երկոտասասաներորդ դարու մէջ, վլենե-
տացի վաճառականաց յարեւլս յաճախելուն
պատճառաւ, և ի կիլիկիա՝ հայկական իշխա-
նութեան մը հաստատուելով, քիչ յառաջ
քան գդղրդել Խաչակրաց յԱսորիս, որ Կի-
լիկիոյ դրացի աշխարհ մը կրնայ գրուիւ.
և դար մի ամբողջ տատանելով մերթ հզօր
ու յաջող, և մերթ տկար ու անյաջող բաղ-
դիւ, երկոտասասաներորդ դարու վերջերը հան-
դիսական կերպով հաստատուեցաւ ու զօրա-
ցաւ մեծագործն և քաջին Լեւոնի թագաւո-
րութեամբ. որ ոչ միայն Ենրիկոսի՝ այլ նա և
ընդ ամենայն նշանաւոր իշխողս և զօրավարս
ժամանակին՝ կրնայ մրցիւ, առանց մէկէ մը
յետնելու: Նոյն դարու մէջ, և իր հօրը ժա-
մանակէն, յառաջադէմքն վլենետք՝ որոց չէր
պակսեր ոչ քաջութիւն և ոչ աշխարհաշինու-
թիւն, իտալիոյ ուրիշ վաճառական հասարա-
կապետութեանց հետ մտեր ու հետազօտեր
էին զՆորն Հայաստան, զկիլիկիա, (որոյ
պետք՝ իշխող լերանց կամ լեռնականներ կոչուէին,
և ի շնորհս օժանդակութեանն զոր մատու-
ցին Խաչակրաց, ասոնցմէ՝ կոմպ, պարոնք և
մարգիղք կոչուեցան). և վաճառականական
գանձարեր արուեստին բանալին քաջութեամբ

Ճեռք ճգեցին, Տիւրոսի երրորդ մասին տիրապետելով, որ Լատինաց և բովանդակիաշակը կրութեան ամուր ու ապահով ապաւէն մը եղաւ։ Եւ ո գիտէ թէ նախ անոր պարըսպաց տակ (յամի 1124) ճանչցած, հաճած ու զարմացած շըլլան Վենետիք՝ ընդ Հայս. երբ տեսան անոնց մէկ երէցը, զԱւերէտ (Ventura), որ իրենց մերձաւորներէն աւելի ճարտարագոյն՝ պարտպամարտ մեքենայ հնարելով դիւրացոյց քաղաքին առումը, ու երկրորդ Տրոյա մը ըրաւ զՏիւրոս, Հայոց և Վենետաց իրարու հանդիպման ստուգագոյն տեղի մը։

Վենետաց վաճառական տոհմից մէջ նոյն դարուն կիսէն մինչև ցկէս յաջորդին, նշանաւոր երեցաւ Ծիանի տոհմը, յորմէ և ճարտարք ոմանք և խոհականք՝ վերացան. և բարձրացան մինչև ի գահն դքսական։ Ծանօթ է բազմաց թէ ինչպէս այն հոչականուն ցեղէն Սեբաստիանոս՝ դեսպանութեամբ գնաց առկայսրն Յունաց յարեւելս. ինչպէս ծանօթ է նաև իր մեծանձն առատաձեռնութիւնն և ճոխութիւնն։ Կ'աւանդեն, թէ ոսկի հորթ մը գտած ըլլայ յԱլդինոյ, ու բաղդին յաջողութեանը փափաքելով հաղորդ ընել և զկարութեալս, մեր ազգէն Վենետիկ եկող աղքատաց ու պանդիստելոց համար՝ ի բնակութիւն

շնարհեր է զտարեկան հասա իր կալուածոց
և տանց, որ ի վաճառափողոցն (merceria)
Սրբոյն Յուլիանոսի և ի կամուրջն Պարատ-
տէրի. յետոյ իր թռռն՝ Մարկոս՝ նմանաբար
իր տուներէն մէկը պարգևեր է սեպհական
Հայոց ազգին. որ այն ժամանակէն (1253)
զայսօր՝ վեցուկէս դարերէ ի վեր՝ Հայոց դառն
կը կոչուի և իրենց ձեռքն է. յանուն Հայոց
կը կոչուի և փողոցն և մերձաւոր կամուրջն,
որ յետոյ նաև Ponte dei Ferali անունը
կրած է, ինչպէս նաև հիմայ։ Թերևս Երիա-
նիի կտակին հաստատագոյն և աւելի ծանօթ
մասն է սա, և որոյ արդիւնքն ու արգա-
սիքը՝ քիչ մը յետոյ պիտի տեսնեն ընթեր-
ցողք :

Գրեթէ նոյն ժամանակաց մէջ առաջին ան-
դամ կը յիշատակուի աղտաղտուկ գետին մի-
եւս՝ վենետիկեան լճաց մէկ անկիւնը, տոմե
կամ տոմե կոչուած՝ շատ քիչ ջրի երեսէն
բարձր, անբնակ կալուած մը Բենեդիկտեան
միանձանց . որք կը բնակէին ի մերձաւոր
Ս. Սերվիլիոյ կղզւով. ասոնցմէ գնեց զհողն
Երանքովս անունով բարեպաշտ անձ մի յամի
1182, և շինեց անկելանոց ու եկեղեցի մը,
որ յետոյ յանուն Սըբոյն Ղաղաքու կոչուեցաւ,
և վրան հինգ հարիւր տասրի անցնելէն ետքը՝
բնակութիւն և կայան արուեցաւ այլալեզու

Բենեդիկտեան միանձանց գաղթելոց ի տար աշխարհէ, ի Հայոց և ցայսօր յաջորդաբար կը պահեն զտեղին, որ յանուն իրենց Հիմադրին և ազգին՝ Սուրբ Ղուշտ Հայոց, S. Lazzaro degli Armeni, կամ Սիմեոնեանց էն+ կոչուի յիտալցւոց, և մերթ եւս սոսկապէս կողի Հայոց Isola degli Armeni, կամ սոսկ՝ Հայտ, Gli Armeni:

Բայց մեք վութանք դառնալ առ Ենրիկ և Լեւոն, և հոչակել Հայոց և Լատինաց գըրովք և դեսպանութեամբք՝ դաշնակցութեան վաւերական սկզբնաւորութիւնը:

Ոմանք ի ծերունի հարց մերոց՝ որ Սըրբոյն Մարկոսի հաստրակապետութեան ատեն ապրեցան, հարցընելով քաղաքին գլխաւոր պաշտօնէից ոսմանց, լսեր են անոնցմէ, թէ Հայոց առաջին գալուստն ի Վենետիկ եղած ըլլայ ի սկիզբն մետասաներորդ դարու, և երկրորդն՝ ի վեշտասաներորդին։ Այս վերջնոյս կրնամք վկայել մենք՝ վասն զի թէպէտ երեքտասասաներորդ դարէն ի վեր պակաս եղած չըլլայ Հայոց երթեւեկն, այլ ի կէս վեշտասաներորդին կը յաճախէ, և ի դիւանա եկեղեցեաց քաղաքին կը նշանակուին՝ ոչ միայն անոնց հաստատուն բնակութիւնք, այլ նաև ծնունդք և մահք Հայոց ։ իսկ առաջին եկաւորութիւն նոցա ի մետասաներորդ դա-

բռւ՝ դեռ եւս մութ է. բայց գուցէ ի վերջ ԺԲ գարու, առ իշխանութեամբ երկոցուն յիշեալ վեհիցն և յառաջ քան զթագաւորել Լեւոնի՝ երր դեռ եւս Պարոն կ'անուանուէր, և արքունական թագին թիկնածու էր. որով հարկ կ'ըլլայ ենթադրել թէ քանի որ Ենրիկ արեսելք եկած չէր, իր մէկ դեսպանին կամ նուիրակի ձեռքով սկզբնաւորած ըլլայ ծագումն հայ-վենետկեան յարաբերութեանց. ինչպէս կ'աւանդէ Նաւաճերոյ ասոնց մէկ գըրողն, իբր թէ 1196ին ղրկուած ըլլայ ի Հայս (Կիլիկիա) իրենց առաջին գունցն¹: Ինձ կ'երեւի թէ պատմիչն կը կանխի. որովհետեւ Պայլից հաստատուիլն ի Հայս աւելի ուշ է. ու իրենց հաստատութենէն ետքն ալ առջի բերան Պայլք Աքքեայ՝ ի Հայաստան նստող Պայլին թոշակը կը հատուցանէին: Կարելի է որ յառաջ քան զայն՝ Պայլք Վենետաց ունեցած ըլլան իրենց մէկ երեսփոխանը Ռուբինեանց երկրին մէջ, ուր ի սկզբան սակաւաթիւ էին իրենց քաղաքացիք քան զԳենուացիս, ինչպէս կը գուշակուի Լեւոնի պար-

(1). 1196. La signoria di Venezia acciocchè i suoi cittadini potessero mercantare per tutto, mandò Messer Giacomo Badoer ambasciatore al re di Trebisonda, un bailo in Trebisonda e così nell'Armenia, e alla Tana un consolo.

գեւազիրներէն առ երկոսին աղջոն. յորոց
Ճենտվացիք քայլ մը կանխեցին քան զբնակիչն
Ադրիականին, բայց վերջը մացին յետ.
Այդ երկու ժողովուրդք, ինչպէս նաև ուրիշ
պետութիւնք եւրոպականք, կարծես թէ զար-
մանքով մը կը նկատէին զՀայս՝ հին ասիա-
կան այլադեն աղջոց և եկամուտ արևմտեան
իշխանութեանց մէջ. և կը ապասէին հաստա-
տուն ձեռք մը կերպաւորուած տեսնել անոնց
իշխանութիւնը՝ Կիլիկիոյ յարմարաւոր ու զի-
պան երկրին վրայ, որ լայնօրէն կը աարածէ
զգիրկ ի Միջերկրականին, և կ'ամրացընէ
թիկունքը յանմատոյց պատուարս Տաւրոսի.
Եւ ահա արիասիրտն, անխոնջ և խորագէտն
Լեւոն՝ տասն տարի աշխատելով, ու զէնքով
և նուրբ քաղաքականութեամբ ամէն հնարք
ու յանք գործածելով, կ'ընդարձակէ հայրենի
իշխանութեան սահմանը, կ'ամրացընէ անընկ-
ճելի բերդերով, ու զինուց զօրութեամբ, Խա-
չակրաց նիղակակցութեամբ և արևմտեայց
հետ խնամութեամբ՝ ահ ու սարսափ ձգերով
թշնամեաց, Ասորւոց ու Փոքուն Ասիոյ հին
ու նոր բնակչաց աչքին առջև կու բարձրա-
ցընէ իր թագապսակ զլուխը ի սկիզբն՝ 1199
տարւոյն, մի և նոյն ժամանակի մէջ ընդու-
նելով թագ ու պըսակ ի կայսերաց արևելից
և արևմտից և յամիրապետէն, և ի քահա-

նայապետէն Հռովմայ՝ դրօշ և օրհնութիւն։ Զայս տեսնելով՝ ամենքն զարմացմամբ, կամ առ շահի կամ առ ահի, իրարմէ առաջ կու փութան մեծարել զնա, և բարեկարգ ազգաց և պետութեանց օրինաց և սովորութեանց համեմատ դաշինք դնել հետը։

Լեւոնի թագաւոր պատկուելէն առաջ սկսած են թղթակցութիւնք քահանայապետականք. բայց իր թագանիշ և ոսկէկնիք թուղթք՝ որ կը պահուին ցարդ ի դիւանս Վատիկանի, երկոտասաններորդ դարու վերջին ամին թուանիշը կը կրեն. յետ որոյ են աշխարհական պետութեանց ու հասարակապետութեանց հետ դրուած դաշինքն. այնպէս որ երեքտասաններորդ դարու առաջին տարին՝ առաջին է և այս դաշնադրութեանց. և մի և նոյն 1201 թուականին տրուած և հաստատուած են դաշինք և շնորհմունք Լեւոնի առ Գենուացիս յամսեանն մարտի և առ Վենետու ի դեկտեմբերի։ Առ առաջինս տրուածներուն մէջ կը նշմարուի, ինչպէս քիչ յառաջ ըսինք, իրենց ազգակցաց այլ աւելի ձեւոր հաստատութիւնը, և կը շնորհուի իրենց դատարան (curia) և բնակութիւն, եկեղեցի, և փնդուկ ի մայրաքաղաքն Սիս, ի Տարսոն և ի Մամեստիա։ Իսկ Վենետիկեցւոց՝ միայն Մամեստիոյ մէջ կը տրուի բնակութիւն, եկեղեցի,

և փնդուկ. սակայն դաշնագիրն աւելի երկար և մանրամասն է քան զշնորհեալն առ Գյենուացիս։ Եւ որովհետեւ հիմն կամ նախադաղափար կրնայ համարուիլ մեզի ծանօթ և ժամանակաւ կրտսեր ուրիշ ամեն դաշնագրոց և պարզեագրաց, աւելորդ չենք համարիր համառօտիւ նշանակել այն ամէն պայմաններն ու շնորհըն, զոր Լեւոն ոչ միայն իւր' այլ և յանուն յաջորդացն կուտայ Ենրիկի Տանտոլոյ դքսին Վենետիկոյ, (և Դալմատիոյ, Խոռուադաց, և քառորդ մասին կայսերութեան Յունաց, դեռ եւս Բիւզանդիոնի տիրած շըլքալով), և ամենայն Վենետաց. ըստ խնդրոյ Յակովբայ. Պատոէրի՝ դեսպանին Ենրիկի. և շնորհէ,

Ա. Վենետաց ազատ երթեւեկ, իրենց ամեն ընշիւք՝ իր տէրութեան ամեն սահմաններուն և անցից մէջ։

Բ. Անդրածովու (oltremare, արևելք) բնակիչք՝ միայն ընդ պահնակ դրունս (Portella,) անցած ատեննին մաքս վճարեն, հաւասար ուրիշ ամէն քրիստոնէից։ Այդ նշանակուած տեղ՝ հիմայ Ալեքսանդրեակ կոչուած քաղաքին արևելեան եզերաց մօտ. լերանց նեղ կապանի դուռ մ'էր, և Ասորէոց երկրի ի կիլիկիա անցից գլխաւոր տեղն. այն պատճառաւ հօն հաստատուած էր պե-

տական մեծ մաքսատունն և նոխ գանձարան, և նոյն դանէն կ'ըլլային ի ցամաքէ բերուած անբաւ վաճառաց մուտք և ելք:

Գ. Դրամահատութեան համար բերուած արծաթն և ոսկի, ինչպէս յԱքքեա, ասանկ նա եւ հօս՝ տրոց ենթակայ էին. իսկ դրամ շըլլալու ոսկին ազատ էր ի տրոց: Հայոց և Վենետաց վերջին ժամանակաց յարաբերութեանց մէջ ալ (1333, մայիս) կը յիշուի Հասարակապետութեան վճիռ մը, թէ այն նաևն որ կ'երթայ ի Հայս, և արծաթոյն կէսը պիտի դնէ ի դրամատուն (ՅԵССԱ) թագաւորին Հայոց, անոր դեսպանէն երդումն պիտի առնու: Այս վճուէն տարի մը յառաջ ի Հայս և ի Կիպրոս արծաթ շփոխադրելու վճիռ մը տըրւած էր (1332). Նոյն վճիռը կը կրկնուի նա և յաջորդ 1334 տարւոյն մէջ (օգոստոս 13):

Դ. Ամենեին վնասու մը տակ չի ձգուին ոչ անձինք և ոչ ինչք Վենետաց:

Ե. Նոյնպէս և ի նաւաբեկութեան.. բայց թէ անոնց նաւուց մեջ օտարականք գտնուին, միջին դարուց անհեթեթ օրէնքի մը համեմատ, այս վերջնոցս ինչը գրաւին յարգունիս:

Զ. Եթէ անոնց առ օտարս ըրած երթևեկի ատեն՝ իր երկրին մէջ վնաս մը հասնի, հատուցումն ըլլայ յարգունուստ:

Է. Վախճանեալ Վենետկեցւոյ մը կտակն

հաստատում ըլլայ. իսկ եթէ անկտակ մեռնի և հօն իրեն համաքաղաքացի մը գտնուի, ստացուածքն անոր տրուի. իսկ եթէ չդրտնուի ռք, մեռնողին քով եղած ինչք կնքուին, ու արքունի քարտուղարին (cancelliere) քով որ էր արքեպիսկոպոսն Ասոյ, պահուին. մինչեւ դքսէն կնքուած վաւերական գիր հասնի:

Ը. Իրարմէ դատուին Վենետիք՝ երր մէջերնին խնդիր մի ըլլայ. իսկ ի շհամաձայնիլն՝ արքեպիսկոպոսն Ասոյ վճռէ անոնց դատաստանը:

Թ. Անոնցմէ գործուած սպանութեան յանցանք մը՝ թէ առ ազգայինս և թէ առ օտարս, արժանապէս դատուի:

Ժ. Նոյնպէս եթէ այլ և այլ վէճք կամ կոփոք ըլլան Վենետաց ընդ օտարս:

ԺԱ. Շնորհուի բնակութիւն քահանայի Վենետաց, եկեղեցի և փնդուկ ի Մամետիա:

ԺԲ. Կարենան բնակիլ ուր որ ուզենան, թագաւորութեան երկրին մէջ:

Այս յետին երկու պայմաններուն առաջնովը կը յայտնուի՝ թէ թագաւորն ինքն ձրիաբար կը շնորհէր անոնց բնակութեան տեղի ի Մամետիա. իսկ եթէ անկէ դուրս ուրիշ տեղուանք ուզենան բնակիլ՝ ազատ էին անձամբ և իրենց դրամով հայթհայթել. որով

և գուշակուի թէ առաջ Գենուացւոց նման զանազան քաղաքաց մէջ ցրուած չէին Վենետիկ, այլ միայն ի Մամեստիա. ուր թուի թէ պղտի նաւերով կու գային վաճառականք ընդ Զահան գետ, և անտի ցամաքի վրայէն կարաւանօք կ'երթային յարմելակողմն կամ ի հիւտիս, վաճառականութեան գործածական ու վարուն ճանապարհօք, ի մեծամեծ շահաստանս ժամանակին. և առ այս՝ յարմարագոյն էր Մամեստիոյ դիրքն քան դժարանի, որ ինչպէս ի հնում՝ նոյն ատենն ալ Կիլիկոյ գլխաւոր նաւահանգիստն էր՝ ծովու քով, բայց հեռու մնացեալ վաճառականութեան ցամաքային ճամբաներէն։ Քիչ ատենէն թէ Տարսոն և թէ Մամեստիա իրենց նախկին փայլն ու կարմորութիւնը կորուսին, երբ Այաս կերպով մը իր մէջ կենդրոնացուց, ոչ միայն Կիլիկիոյ վաճառականութիւնը, այլ նաև բովանդակ անոր կամ վաճառականութեան մեծ մաս մի, ինչպէս պիտի տեսնենք։

Տանուհինդ տարի ետքը (1215) նորոգեց Լեռն, առ Գենուացիս տուած Պարգևագիրը. բայց Վենետիացը կ'երեւի թէ անփոփոխ մնացեր է քառասունեհինդ տարուան միջոց։ 1245ին դուքսն Յակոբ Թիեֆոլոյ՝ իր Պետրոս Տանաղոլոյ դեսպանին ձեռքով ուղեց Լեռնի պարգևագիրը վերահաստատել, գրելով

առ Հեթում Ա. որ քսան տարիներէ ի վեր
կը թագաւորէր (1226), իր հօր Կոստանդին
մեծ իշխանին՝ ճարտարութեամբ, ամուսնա-
նալով ընդ Զապելի՝ միակ գստեր և օրինաւոր
ժառանգի մեծին Լեւոնի. անոր հետ տէր
ըլլալով նաև արքունական գահուն, որոյ
պաշտպան էր խորագէտ և ահարկու ծերունի
թագաւորահայրն՝ քառասուն տարի։ Հեթում
իր և թագուհոյն անուամբը շնորհեց կամ
կրկին հաստատեց Վենետաց տրուած եր-
կրորդ ծանօթ Պարգևագիրը յամսեանն մար-
տի. որոյ մէջ քանի մը նոր պայմանք կամ
շնորհեք աւելցած են. ինչպէս, Վենետաց մէջ
վէճ մը ծագած ատեն՝ իրաւարարքն յար-
քունուստ սահմանուին. ու երբ իրաւախոհու-
թիւնն անկարելի ըլլայ, այն ատեն Սոոյ
արքեպիսկոպոսն իրենց դատաստանը տեսնէ
և վճռէ. նոյնպէս, անժառանգ վախճանեալ
Վենետաց համար բաւական ըլլայ թագաւո-
րական վճիռն, առանց դքսին կամ Աքքեայի
պայլին թղթոց սպասելու։

Տասնուվեց տարիէ ետքը Ռանիերոյ Ծե-
նոյ դքսին խնդրանօք ու իր Յովհաննէս Ծե-
նոյ դեսպանին ձեռօք՝ Հեթում նորոգեց պար-
գևագիրը, յամի 1261, յամսեանն նոյեմ-
բերի, Թորոս վարդապետի ձեռքով, ու վա-
ւերացնելով Յովհաննէս անուն քահանայի

մը ստորագրութեամբ, որ վենետաց նօտար
էր յԱքքես։ Պայմաններն առաջնոյն մէջ
նշանակուածին նման ու համաձայն են. միայն
ասոր մէջ փոխանակ Մամեստիոյ՝ թոյլ կու
տայ անոնց և իշխանութիւն ի Սիս մայրա-
քաղաքի հաստատել իրենց բնակութիւնը և
փնդուկ ունենալ հօն. և որ աւելի արժա-
նաւորն է նշանակութեան, նաև յԱյաս քա-
ղաքի, et apud Iaciam dabimus eis locum
ad faciendum domum։ Նաւահանգիստ և
շահաստան քաղաքիս այս առաջին յիշատա-
կութիւնն լսուի ի մերոցս, որ գրեթէ ամբողջ
դարու մը միջօց կիլիկիոյ առաջին անունն
եղաւ, և առաջին ծանօթագոյն և ստէպ զը-
րուցուած թէ յարեւելս և թէ մանաւանդ յա-
րեմուտս՝ այլ և այլ անուանակոչութեամբ։
ինչպէս Ayacio, Layazzo, Giazzo, Iacia. և
եթէ ոչ առաջին վաճառաշահ քաղաք ի վե-
րայ երկրի, բայց և ոչ մէկու մը երկրորդ։
որոյ վերայ մարթ էր յերկարագոյն գրել,
ինչպէս զրուած է յայլոց և մեզմէ։ Գուշա-
կուի թէ Եգէա (Egea) քաղաքին՝ ինչպէս
կը կոչուեր ի հնումն՝ աւերակաց վրայ կա-
ռուցուած և նոր քաղաք մը բարձրացած
ըլլոյ, և ի կէս երեքտասաներորդ դարու՝
Հեթմոյ տուած երկու Պարգեւագրաց մի-
ջոց ժամանակին՝ անքոյթ և յաջողակ նաւա-

հանգիստ մը գարձած : — Հեթմոյ այս պարզեւագիրն առ Վենետոս՝ կտրծեմ որ մինչեւ հիմայ քննուած ու հրատարակուած չէր . ոչ այլ այսպան հին թուական ունեցող Այասայ անունն : Հեթմոյ հրովարտակին լատին թարգմանութեան մէջ , ոսկէկնիք հայ բնագերը՝ Հայոց թագաւորական քարտուղար Թորոս եպիսկոպոսի թարգմանութեանն հետ , տեսաեր էր Վենետկեցի նօտարն . բայց Վենետկոյ դքսական դիւանաց ուրիշ արքունի բնագրաց հետ հրոյ ճարակ եղած է անշուշտ . բարերազդաբար հին օրինակք և կրկնագրութիւնք պահուած են և կը պահուին ցարդի դիւանատան քաղաքին :

Երբ այսպէս հայկական նաւահանգիստն Այասայ բացուեցաւ համաշխարհական վաճառականութեան , հարկ էր այնուհետեւ հաստատել յայնմ քաղաքի և Պայլի դիմաց Վենետկոյ , ուր Հասարակապետութեան հպատակք խուռն կը դիմէին իրենց նաւերով (*galea*) , և յարեւելից կարաւանք կու դային ընդ ցամաք : Նոր պարգեւագիր մի տուած է յամին 1271՝ Լեւոն Բ որդի Հեթմոյ . որ և ի փռանկ լեզու թարգմանուած է ի Ժոֆրուա (Jeoffroy) արքունի թարգմանէ , և ի խնդրոյ Լորենցոյ թիէփոլոյ դքսի յանձնուած առ գեսպանն Պանկրացիոյ Մալիրիէրոյ : Այս

Պարգևագրի մէջ նախ և ստէպ կը յիշուի
 Պայլն ի Հայս. իսկ Վենետիկոյ դիւանաց
 մէջ ինձ ծանօթ եղածն՝ երեք տարի յետոյ
 շնորհուած է (1274, օգոստոս 14, ի վճռաս
 Քառասնից ժողովոյն), և առաջին կ'երևնայ
 ի շարս նման Պարգևագրաց. որովհետեւ այս-
 պիսի սկզբնաւորութիւն մը ունի. Incipiunt
 consilia Baiulo Armenie pertinentia. որով
 կ'օրինադրէ Պայլին՝ իր խորհրդականաց ե-
 րեքին երկու մասին խորհրդոյ համաձայնու-
 թեամբ՝ Հայաստանէն բամբակի գնման օ-
 րէնքը սահմանել. Քանի մը տարի յետոյ՝
 (1279, յունիս 15) կը պատուիրէ նոյն ա-
 տեանն Քառասնից՝ իր պաշտօնակցաց հետ
 կրկին ընտրութեամբ վերահաստատել ի պաշ-
 տամանն զՊայլն Հայոց. իսկ 1282ին յ' 30
 յուլիսի կը վճռէ Ատեանն Մեծ՝ որ Հայոց
 Պայլին թոշակը հաւասար ըլլայ Աքքեայի
 Պայլին տրուածին, և չափն ալ կը սահմանէ
 քանի մը օր եաքը ուրիշ վճռով մը (8 օգոս-
 տոս), 400 բիզանդ դրամ. զոր քանի մը
 տարի ետքը կը յաւելու մինչեւ ի 600 բի-
 զանդ¹.

(1) • Նոյն առենին յաճախուած և ընդհանրապէս ի
 գործածութեան դրամն՝ եր “Բիզանդ ո կոչաւածն, որոց
 անունէն կը յայտնուի ժագում. բայց քանակը կը
 զանազանէր ըստ ոյլ և ոյլ տեղեաց՝ որոց անուամբը

գ.

ՊԱՏԵՐ ՎԵՆԵՏԱՑ Ի ՀԱՅՈ (ԿԻԼԻԿԻԱ) .

Առաջին Պայլի յիշատակութեան կը հանդիպինք - ինչպէս ըստինք - յամի 1271. իսկ յանուանէ առաջին Պայլ՝ վենետիկոյ դիւանաց մէջ կը գտնենք ի 1282 (յուլիս 22) զՄարինոյ Պատոէր։ Բայց որովհետեւ զանազան գործք և վճիռք Հայ - Վենետիկեան իրաց խառն են Պայլից անուամբ, ժամանակի կարգաւ այդ գործերը յիշատակելնէս յառաջ, դնենք նա և նոյնպէս ժամանակագրապէս Պայլերը, որշափ ծանօթք են մեզ, ի սուղ միջոցի իրրու վաթսուն և հինգ տարիներու. յորմէ ետքը Այասայ գերութիւնն կամ աւերածն, և Հայոց իշխանութեան գեղեւիլն ու տկարանալն՝ դադրեցոյց նա և

կը կոչուէր. ինչպէս Բիզանդ սառակինեան, եղիպատական, Աբքայոց, Հայոց, Կիպրոսի, և այլն։ Հոս յիշտւածն հաւանաբար կիպրոսեանն էր։ - Տես ի Սբուան, 378 :

Պայլից առաքումը յԱդրիական ծովուց իշխողէն :

- | | |
|---------|--|
| 1282-3. | Մարին Պատոէր
Marino Badoero. |
| 1285. | Լեռնա՛րտոյ Ճիզի
Leonardo Gizi. |
| 1286. | Մարկոս Սինիոլոյ
Marco Siniolo. |
| 128 .. | Յովհան աէ Գանալի
Giovanni de Canali. |
| 1290. | Բագրատ Յուստինոս
Pancrazio Giustino. |
| 1293. | Ենրիկ Տէլֆին
Enrico Delfino. |
| 1296-9. | Մարինոյ Սինիոլոյ
Marino Siniolo. |
| 1300. | Պալսս Գուիրինոյ
Paolo Quirino. |
| 1302-3. | Անդրէաս Սանուդոյ
Andrea Sanudo. |
| 1304. | Յովհ Բրեմարինոյ
Giovanni Premarino. |
| 1306-9. | Նիկոլոս Մորոզինոյ
Nicolò Morosino. |
| 1310-2. | Գրիգոր Տոլֆին
Gregorio Dolfin. |
| 1313-6. | Յուստին Յուստինեան
Giustino Giustiniani. |

- 1317-8. **Փիլիպպոս Պարբարիկոյ**
Filippo Barbarigo.
- 1318-9. **Պէլտ Տանալոյ**
Beletto Dandolo.
- 1320-2. **Յավաննէս Պարզոյ**
Giovanni Caroso.
1326. **Վլու Մալիպիերոյ**
Biagio Malipiero.
- 1328-30. **Պետրոս Պրագադին**
Pietro Bragadin.
1333. **Նոյն Պետրոս**
Pietro Bragadin.
- 1333-4. **Մարինոյ Կրիմանի**
Marino Grimani.

ԵՐՐ Աքքեա քաղաք՝ քրիստոնեայ աղջոց
հրօր մարտկոցն՝ առնուեցաւ յայլաղդեաց,
այն աեղի Պայլն այլ վերցուեցաւ. Հայտ-
ստանի մէջ նստաղին պէտքը հոդալն ոլ՝ վէ-
նեակոյ ծերակոյան ուղղակի իր վրայ տառւ,
ու 1289 ապրայն օդաստասի 15 թատկանեաւ
արուած վճռով մը՝ սահմանեց անոր թոշակը
մերձ ընդ մերձ հաստուցանել. և ի 1301
սեպտեմբեր 14 հրամանադրով՝ սրոշեց ամէն
ամիս ընել այն հաստուցամը. և նոյն ապր-
այն օդաստասի 13ին կը վճռէր. ի գիւրու-
թիւն իւր դանձուն՝ որ նոյն հրապարակին վրայ
դանուազ վէնետացի վաճառականք պարտը-

կան ըլլան տուրք տալ մի առ հարիւր բիզանդ . և որովհետեւ տրոց հաւաքման պաշտօնեայք (Vicedomini Ternarie) վաճառաբերից վրայ խստութեամբ կը հսկէին, նոյն ինքն Պայլին խնդրանգք՝ Քառասնից մեծ ժողովն կը վճռէր (1292, յուլիս 1), որ այդ տուրքը հատուցողաց թոյլ և դիւրութիւն ըլլայ՝ իրենց բեռինքը ցամաք հանել : Ժամանակաց համեմատ՝ սահմանեալ սակն ալ փոխութիւններ կրեց, մերթ հատուցանելով երկու առ հարիւր, և մերթ ալ Հասարակապետութենէն բոլորովին ազատութիւն ընդունելով՝ առանց տրոց ներս մտցընելու իրենց ապրանքը :

Յիշենք համաօտիւ առ Հայս խաւրուած Պայլից վերաբերեալքն, որ և մասամբ երբեմն մերազգեաց վերաբերին, և են անոնց ընտրութիւնքն կամ փոփոխութիւնք, Այսայ մէջ կենալնուն կամ անկէ հեռանալու համար տրուած հրամաններն, իրենց ոռնկին ու ի վաճառականաց պահանջած սակին և տրոց չափն . բնակութեան համար սահմանուած տանց շինութիւնք կամ նորոգութիւնք, և այն պատճառաւ և նպատակաւ եղած դրամական փոխառութիւնք, և այլն . նմանապէս՝ Պայլից հրամայուած կամ յանձնուած առանձին և մասնաւոր պաշտամունք և գործք, ինչպէս,

Երթալ ու Բագրատին Հայոց . և վենետիկյան գլուխէն արաւած կամ առնաւած ծանօթու . թիւնք և աեղեկութիւնք : Եւ որպէս զի այս այլ և այլ ահառթեանց համեմատ . հարկ շըլլայ կրկին և կրկին դառնալ . կամ ժամանակաց երեւէջ ընել , ժամանակադրական կարգու զննենք՝ ինչ որ նախայիշտապէտէալ-ներէն զառ և որիշ՝ դառն ենք ի Հայուսան նառազ Պայիլց վերաբերեալ :

Յանաւանէ առաջին յիշառակառած Պայլին (Մարին Պատուէր) յամի 1283 . Բայլ-առաւթիւն կ'ըլլայ իր ընկերակցաց հետ խոր-հըրդակցելով փախառթեամբ զրամ հայթ-հայթէլ , և այնպէս ձեռք զարնել ի նարոգու-թիւն բնակարանին :

1285 , յուլիս 5 . Նոյն հրամանը կը արաւի նաև լեռնարայ ձեզի Պայլի :

1287 , յուլիս 31 . Պայլին պատուէր կը արաւի որ իր աեղէն չհեռանայ :

1288 , օգոստոս 6 . Թայրառութիւն փախա-ռաւթեան , որպէս զի կարող ըլլայ նարոգել և պահպանել իր բնակառթեան աեղուանքը :

1289 , յուլիս 26 . Մարկոս Արքիալոց Պայլին յաջորդ կը նշանակուի Յավհաննէս Պանալ : Անոր հրաժարելովն ի յանձնառութենէ պաշ-առմանն՝ քիչ օրէն (օգոստոս 18) Բագրատ Յուստինեանի կը յանձնուի պայլաթիւնը .

որ 2740 հայկական նոր դրամոյ փոխառութիւն մը կ'ընէ։ Այս դրամոց վրայ պիտի խօսինք ի կարգին։ Տարին չլրացած՝ Յուստինեանն ալ կ'արձըկուի ի պաշտամանէն։ և ինչպէս Սինիորոյ իր նախորդն, ինքն ալ կը պահանջէ ռռնկին մնացորդը։

1293, մայիս 16. Մասնաւոր վճռով մը կ'որոշուի փոխառութեամբ վճարել Ենրիկ Տոլֆինոյ Պայլին թոշակը։

1300, հոկտեմբեր 10. Արձակուրդ կը շնորհուի Պողոս Գուփրինոյ Պայլին։ Նոյն տարւոյն ապրիլ 2 հրամանագրով մը վճիռ տրուած էր որ առ Մատթէոս կանտինոյ պարտքն հատուցուի։

1302, յունիս 5. Հրաման առ Պայլն Անգրէաս Սանուտոյ, 1500 դրամ փոխառութեան։ Յաջորդ տարին (մարտ 21) թոյլ կը տրուի նմա երեք ամիս կենալ ուր որ ուզէ, ի Հայս կամ ի Կիպրոս։ Սանուտոյի ժամանակ նոր օրինագրութիւն մը կ'ըլլայ առաքման Պայլից ի Հայսաստան (1303, օգոստոս 26)։ Քանի մը օրէն ետքը (սեպտեմբեր 1) կ'արձըկուի նա ի պաշտօնէն։

1304, յունիս 10. Յովհաննէս Բրեմարինոյ Պայլ կը դրուի։ Իրմէ ետքը կը յիշուի Նիկողայոս Մորոգինոյ։ և հաւանական կը թուի որ իր ընտրութեան ժամանակ (1307) կը

ապահով, որ Անտոնյութ որպես թղթակի
լրեն ող պարփ նոյն շնորհը. և եթէ չուց
թագավորին և Հայոց իշխանութեամ մէջ
եղած քանի մը ինդիւր եղբակ շնորհին.
Գոյզի թղթակին վրայ յանձնած մող ըլլոյ
(քանի միջի կողմէց): Խրիստ Եպիկոս Գոյզ
պահանջում Գր. - St. Տէրի, (առաջ 21, մէջ
13), որ այս և գիտակ իշխան Յանձնած.
Յանձնած իշխանութեամ 1310. Խնդաստ իր
առանձ զետ վայրած աշխարհուն. առանձ կը
քանի որ Բայրութ Գոյզին մերժով ի Հայ
կամ ասկէն հասպատակ. զոր անդամ
կը շնորհ նայութեամ առանձ և նոր առանձ մող
զննեամ. և երեք հայրինք պահանջ ծախք մող
առեր թագավորութիւն հայութանութիւն ու առա-
ճակ համար. որպէս չէ անդամութիւն կողմէն
առաջ կողմէն և ընդունածութիւն կողմէն:
Ինչ Գր. - St. Տէրին այս Գոյզին ող կը շնոր-
հին 1310. յային 3). Ա հային հայութ-
կապահութեամ իր անձանձ մասնաւութիւն
միջ ծախքուն: ուստի առաջ առաջ և վայրին
պահանջուց: — Այս այս Տէրին կը պահ-
անձան (1310. յային 28). անձանական
թիւնութիւն պահանձանաթիւնը: — Յանձն
այս 1311. յային 17. հայութ պահանջ
իրեն որ Գեղմեց կարքի վաստակութիւն նա-
և կազմու ըլլոյ դաշնու և պահանջի:

Բայց յաջորդ տարւոյն մէջ դեռ եւս կը գըտ-
նուէր նա յԱյաս, և վաճառականական խըն-
դրոց և նիւթոց վրայ կը գրէր, և կը ծանու-
ցանէր դրքսին. սակայն նոյն տարւոյն կէ-
սէն արձկուած էր ի պայլութենէ, ինչպէս կը
տեսնուի Հասարակապետութեան մէկ վճռէն,
(1312, օգոստոս 10), որով կը հաւանի որ
նա 1500 կամ 1700 դրամով տուն մը գնէ ի
Հայս : — Ասոր յաջորդն եղաւ Թոմ .
Սորանցոյ, որում պետական գործ մը յանձ-
նուեցաւ առ թագաւորն Կիպրոսի. և երկու
տարուընէ ետքը ինքն ալ արձակուեցաւ ի
պաշտամանէն (1314, մարտ 16) : — Յա-
ջորդեց զնա Յուստին . Յուստինիան . առ որ
մասնաւոր վճռով հաւանութիւն տուին (1314,
օգոստոս 12), որ կարենայ մինչեւ սոան
վենետիկան լիպրէ ծախսել ի նորոգութիւն
եկեղեցւոյ Սրբոյն Մարկոսի. և որովհետեւ
քանի մի խնդիրք կային ի ժամանակին
Հասարակապետութեան կողմանէ կարգադրե-
լիք՝ բայց ոչ այնչափ որոշ և բացայայտք,
յանձնեցաւ դքսին (1314, օգոստոս 20), որ
կարկաւոր տեղեկութիւնները տրուին Պայլին
այդ խնդրոց նկատմամբ : Նոյն օրուան վճռով
թոյլ տրուեցաւ Յուստինիանու որ կարենայ
կրետէն խար կամ անասնոց բուտ բերել
տալ : Յիշ իրր երկու ամաց (1316, ապրիլ

22) Հրաման ըրին որ 100 սառակինեան բիզանդի փախառութիւն մը ընէ։ Նոյն տարւոյն օգոստոսի առաջին օրը ինքն ալ ազատ եղաւ ի պայլութենէ. և յ'31 ամսօյն կը սահմանուին յանձնարարութիւնքն առ յաջորդ նորա Փիլիպպոս Պարպարիկոյ, և ընծայք առ թագաւորն Հայոց։ Ի սկիզբն յաջորդ ամին հրաման կը տրուի իրեն, (1317, յունուար 23), հարիւր բիզանդ դրամոց գումար մը ծախսել ի նորոգութիւն տանն. և այս նպատակաւ. հինգ լիրայ կրոս կը յանձնուի ի դրամաց պետութեան։ Վրան տարի ու կէս անցնելէն ետք, (1318, սեպտեմբեր 8), կը ծանուցուի արձակուրդն ի պաշտամանէն, և թէ արգէն օգոստոս 24 թուականաւ տրուած հրամանագրով մը՝ յաջորդ որոշուած էր Տանտոլոյ Պէլլէդդի։ Սմա յաջորդեց Յովհ. Գարմաց, 1320, բայց 0շին թագաւորին մահուան լուրն հասնելով խափանեցաւ (1320, սեպտ. 20), երթն յԱյաս, մինչև յետ միոյ տարւոյ կրկին հաստատուեցաւ և ելթալու հրաման տրուեցաւ (1322, փետր. 25), ինչպէս նաև երկոտասան լիրայ կրոսից գումար մը ծախսելի ի նորոգութիւն տանն։ Ոյդ վախճանաւ յետ երից ամաց 1325 զրկուեցաւ փայտ ի Վենետիոյ. բայց չեմ գիտեր ո՛էր Պայլ ի ժամանակին, Գարմաց թէ այլ

ոք։ Յետ վերջնոյս՝ յանուանէ Պայլ կը յիշա-
տակուի Վլաս կամ Պիանիոյ Մալիրիերոյ,
որ յամի 1326 (յ'ինն յուլիսի) առաքեցաւ
պատճենիւ նոր պարզեւազրի մը կամ դա-
շանց Լեւոն Դ Ռուբինեան թագաւորի։ —
Վլասայ յաջորդն եղաւ Պետրոս Պրակատին,
(1328), որում կը յանձնուի այլ և այլ խընդ-
րոց վրայ խօսիլ ընդ թագաւորին Հայոց պա-
տուէր կ'ընդունի օտար տուն չընակելու.
կը յիշուի նաև արձակուրդն յամի 1331 ի 26
յունուարի։ Ի նմին ամի՞ զճիռ մի կը յիշէ
նախորդն Վլաս վախճանեալ, և կը պատուի-
րէ Պայլին (Պրակատինի կամ ուրիշի մը)
մեռնողին ժառանգաց շնորհել երկու առ
հարիւր ի տակէն։ Նոյն հրաման կը կրկնուի
և ի 1332 յ'եօթն յուլիսի տրուած վճռով։

Պրակատինի գործոց մէջ նշանաւոր և հե-
տաքննական է տեղեկութիւնը՝ զոր տայ նոյն
ժամանակի (1330) Հայոց վաճառականու-
թեան հանգամանաց վրայ, ինչպէս քիչ ետքը
պիտի տեսնենք վաճառականական յարաբե-
րութեանց յիշատակաց մէջ։ Երեւի նա իբրեւ
Պայլ նա և 1332 թուականին։ Բայց յաջորդ
տարւոյն մէջ կը յիշուի վերջին Պայլն՝ Մա-
րինոյ կրիմանի (1333, մայիս 13), որում
կը շնորհուի նոր տուն մ'ալ գնել. և որ կը
կրկնուի յետ միոյ տարւոյ (1334, օգոստոս

13). և նոյն օրը դարձեալ արիշ պատառէր մի, ծանացաներու համազդի վաճառականաց որ լեռն Դ թագաւարի նոր դարձեսղբին վերահաստատին պայմանաց համեմատ, (1333, նոյեմբեր 10), իրենց արծ-թոյն կէոր դարբարին են դնել յարգունի փողանցն, ինչպէս կանխաւ և նախընթաց դաշնագրով մը սահմանաւած էր:

Այս թագավանէն ետքը չկայ վկենեաց զայլի անամ կամ զորժ ի Հայո և յԱլա քաղաքի. վասն զի այս երկու աղբաց շահու աղբիւրն զրաւեցաւ յԵղիպատացաց ի 1337. և թէպէս անդամ մ'ալ յաշողեցան Հայք թափել ազատել զայն ի թշնամոյն, բայց կարճատեւ եղաւ այն նշոյն. նաւաց երթեմկը ալ, ինչպէս քիչ ետքը պիտի տեսնենք, շաւազ դադրեցան. Որութինեանց աղղարսւն յաջորդութեան բեկմամբ, լեռն Դ թագաւարի մեանելովը (1342), որոց վերջին թաղթն ու դաքան վկենեակոյ զրուած է յամի 1341 (մարտ 1), դրէթէ գագրեցան Հասարակապետութեան յարաբերութիւնք՝ ընդ նըւազեալ և շինելափառ պետութեան Հայոց, որ դեռ երեսուն և հինգ տարի ալ դայթ ի դայթ շարունակեց: Այդ միջոցին մէջ գժուար է որ վկենեաք դէթ երեսփախան մը ոնեցած շըհան ի Հայո, ուր կային ասկախին մանր

նաւահանգիստք և վաճառականութեան պատկանաւոր տեղիք . բայց ոչ դիւանաց և ոչ պատմութեան մէջ անոնց յիշատակութեան հանդիպած եմք : Հնար է որ Կիպրոսի Պայլին յանձնուած ըլլայ այնուհետեւ ի Կիլիկիա մնացող վենետացի գաղթականաց խնամքն . վասն զի այս միջոց ժամանակի մէջ ալ Վենետաց նաւարկութեան յիշատակ կ'ըլլայ :

Ասոնք ոռվորութիւն ունէին տարուէ տարի պատրաստել . ու շինել այլ և այլ տորմիզս նաւաց՝ երեք, հինգ, եօթն, ութ, տասն և աւելի եւս թուով . և տարւոյն սահմանեալ եղանակաց մէջ՝ որոշեալ ճամբով ուղղել ի զանազան շահաստանս աշխարհաց և պետութեանց . ի Կ. Պոլիս, ի Կրետէ, ի Կիպրոս, յԱղեքսանդրիա, ի Հոլանտա, և այլն . նմանապէս որոշուած էր առաքել և ի Հայս, յաշխարհամուտն Այաս : Մերակուտին վճռոց մէջ ինչպէս ուրիշ տեղեաց՝ ստէպ կը յիշուին նա և հայագնաց տորմիզք և անոնց թիւն, 1278 թուականէն ցվերջ հայկական պետութեան : Այս բանս կը հաւատարմացընեն բազմաթիւ վճիռք և հրամանագիրք, զորս ըստ ժամանակագրական կարգի և խընամով հաւաքեր ենք ի պետական դիւանաց, բայց ամելորդ համարիմք կարգել : Մեծ փոյթ

ամէին յընարութիւն նաւապեսց կամ դըլ-
խաւրաց տօրմղացն. նաւարիոք և վաճա-
սկանք ոլ օրինաց խաւթեան ենթարկ-
տն էին, չոռլով թոյ կամ հրաման որում
և իցէ՝ ինքնակամ և առանց քննաւթեան
նաւարիել. առանձնական նաւաց ոլ հազիւ
հրաման կ'ըլլ-ր ընկերել նաւասորմղին:

Առհմանաւան էր նաւաց շափն ու ձեն,
ինչողէն նուն նաւասանեաց թիւն, որ քա-
նաւինդէն պակաս պիտի շըլլար: Մանօթա-
դոյն նաւք՝ կոչու կոշու ածքն էին, զոր Հայք
ի գիրս իւրեանց խոչ, Khale, կ'անուանեն:

Յաջող առեն՝ առրոյն մէջ երկու անդամ
կամ կրկին տօրմիղք նաւաց կը զրկուէին.
մին յետ զատկի, և միւն՝ որ յաճախազոյն
կը հանդիպէր քան զառաջինն, օդասասի
կէսէն եաքը կամ ի սեպահմրերի. բոյց
երբեմն ժամանակին դիսոց համեմատ՝ կ'ո-
րոշուէր ժամանակ առաքման տօրմղին:

Ատենական վճիռք ծերակուտին կը սահ-
մանէին և նաւահանդիսաներն՝ ուր նաւք պի-
տի սպասէին կամ ընկերէին այլոյ տօրմղի:

Կը յիշուին երբեմն և նաւուղչէք և բեռանց
առկք, զոր պարտէին առլ առ նաւապետն
կամ ծովապետ ի հաշիւ աէրութեան:

Տօրմղին կենալու և գաղաթելոյ ժամա-
նակն՝ ուր որ սողզուած էր և որոյ անուամբը

կը կոչուէր, սովորաբար սակաւօրեայ էր, ինչպէս տասնուհինդ կամ անկէ ալ պակաս, բաւական՝ բեռներն և վաճառականները ցամաք հանելու և նոր վաճառք և վաճառականները առնելու համար։ Դուն ուրեք կը յիշուին չափք և կազմուածք բեռանց։

Դ.

ՎԵՆԵՑԻՒԹ Ի ՍԻԾՈՒԱՆ

Արժանի են հետաքննութեան հանգամանք վաճառականութեան վենետաց ի Հայս. վասն զի այն պատճառաւ եղած են երկու ժողովը դոց իրարու հետ փոխադարձ յարաբերութիւնք։ Յառաջ քան զմեզ հետամուտք և քննողք՝ գրեցին և հրատարակեցին ինչ որ այս նիւթիս նկատմամբ յաջողեցան գտնել ի դիւանաց վենետկոյ, ի ժամանակագրաց և վաճառականութեան վրայ գրողներէ. որոց մէջ վերջին և ամենէն աւելի կատարելագոյն՝ բազմահմուտն Հայտ, նախ ի համառօտ՝ և ապա յընդարձակ երկհատոր գիրսն, որ զվաճառականութենէ արեւելից ի Միջին դարս։ Մենք դիտաւորութիւն չունինք ասոնց ըսածները կրկնել, և կամ ջանալ յաւելուկ ի նոյնս. այլ միայն նախածանօթ կամ դեռ եւս անծանօթ հաւաստականները (documents) հրատարակել, որչափ գտեր ենք, վաճառականական այլ և այլ խնդրոց վրայ, գրամոց

համեմատութեան, Վենետիկոյ հասարակա-
պետութենէն եղած շնորհմանց՝ առ վաճառա-
բերս կամ առ մաքսանենց ոմանս. յիշե-
լով և զնիւթս վաճառուց բերելոց կամ տա-
րելոց. որոց վրայ զանազան գիտելիք՝ կը
գտնուին մեր թագաւորաց ձեռքով տրուած
պարզեւագրոց մէջ, յորոց զոմանս արդէն յի-
շեցինք ի նախընթաց յօդուածս, և զայլս ի մէջ
պիտի բերենք ըստ ժամանակի յարաբերու-
թեան նոցա ընդ պետութեան Վենետիկոյ.
արդէն վերը գրուած նաւարկութեան յիշա-
տակարանաց մէջ ալ՝ յաճախ յիշատակութիւն
եղաւ վաճառականաց :

Այս վաւերականաց մէջ ամենէն կարեւոր
կրնայ համարուիլ Վենետիկոյ մեծ Ատենին
վճիռն՝ յամի 1283 ի 22 յուլիսի, վաճառա-
կանական ընկերութիւն մը հաստատելու հա-
մար յԱյսա, ընդ տեսչութեամբ Պայլին,
վասն առեւտրոյ Բայբակի, Ցիոյ և Պողուդի.
այդ ընկերութեան մէջ անոնք միայն կարող
էին մտնել՝ որ երկու հարիւր բիզանդէն ա-
ւելի գումարով մասնակցէին։ Օրէն էր վա-
ճառականաց՝ սահմանեալ նաւատորմաւ յո-
րոշեալ ժամանակի նաւել. երբեմն թոյլ կու
տրուէր առանձին նաւով ալ երթալ, յաւէտ
ընկերելով տորմղին. միայն պետութեան ի-
րաւունքն էր ուզած պայմանը դնել հետեր-

նին. ինչպէս ի 1311 (յունիս 22) Պէմպոյ Տարտի նաւապետին վրայ պարտք գրաւ, որ առ թագաւորն Հայոց ղրկուած դեսպանը ձրիաբար տանի և դարձընէ։ Քաղաքական դիպուածոց համեմատ՝ արգելք կու դրուէր վաճառականաց՝ չերթալ ի Հայս կամ յայլ աշխարհս։ ինչպէս յամի 1320, Օշին թագաւորին մահուան և Լեւոն Դի յաջորդութեան առթիւ։ Երբեմն ալ կ'արգելուի այս կամ այն նիւթոց արտահանութիւն։ օրինակ իմն՝ կտաւոյ, յամս 1322—3, Յամի 1328 հրաման կու տրուի՝ որ ի Հայոց կամ ուրիշ աշխարհներէ վերցուած վաճառքը՝ որ ասդիս անդին մնացեր էին, Վենետիկոյ ծոցին ծովապետն վերցընէ ու փոխադրէ ուր որ արժան է։ Աւելորդ է ըսել որ հասարակաց համար օրէնք սահմանած ատեննին, զանց չէին ըներ նա և առանձնականաց ինդիրները։ օրինակի համար, վճիռ մը կը պատուիրէ քննել և խընամել Աէրվատէոյ նաւը, որ ալեկոծութեամբ վնասուած էր յԱյաս և յայլ կողմանս։

Վաճառք. — Արտահանուած նիւթք կրկին են. մին թանկագին բերք մերձաւոր և հեռաւոր արեւելեան աշխարհաց, Հնդկաց, Չինաց, Ասորւոց և Պարսից, զորս յաճախ կարաւանք ցամաքի ճամբով կը բերէին յԱյաս. իսկ միւան՝

բնիկ բերք Սիսուանայ, որոց մէջ գլխաւոր էր Բառիտակ, ինչպէս յիշեցինք. և վաճառականական յարաբերութեանց վերջի տարիներուն (1344) կը հանդիպինք, որ մանտուացի մը (Միքայէլ Լօ - Թաթարոյ) այս նիւթէն 4000 հակ զրկեր է ի Վենետիկ։ Նշանաւոր էր և բամբակեայ հիւսուածն Բուշերամի կամ ըստ Փուանկաց Բուշրան կոչուածն։

Կիլիկիոյ յատուկ բերք կամ ձեռագործ մ'ալ էր Ցէտ, ի ստեւոյ այժից, որոյ յիշատակութեան կու հանդիպինք աւելի հնագոյն դարուց մէջ ալ. ուստի և պարզեւագրոց մէջ մասնաւոր պայմաններ ալ դնել հարկ եղաւ, մանաւանդ երբ Վենետիք ալ սովորեցան արուեստը, և նոյն իսկ Հայոց երկրին մէջ սկսան գործել։ Թագաւորութեան վերցուելէն ետքը, նա և նոյն իսկ նոր դարուց մէջ (ԺԶ - Ե), այս ձեռագործս Հայոց ձեռքով կը բերուէր ի Վենետիկ, որոյ յիշատակն շատ անգամ կ'ըլլայ Հինգ իմաստնոց կամ պետութեան վճռոց մէջ և ի գիրս նօտարաց։ Հայրենեաց իրրեւ սեպհական ու պատուական բերք՝ Հայոց դեսպանին ձեռքով ընծայ կը տարուէր երբեմն առ սրբազան քահանայապետն Հռովմայ. բայց որովհետեւ անգամ մի ծածկեր էր զայն և զոսկեղիպակն,

գաղտուկ բանուեցաւ և արգիլուեցաւ ի մաք-
սաւորաց. այլ ի շնորհս տանողին և որում
կը տանէր՝ ազատութիւն եղաւ դեսպանին։
Ուրիշ նիւթերէ զատ կը յիշատակուի տեղ
տեղ և Հայկական աղ (Sal Armiago), որ հա-
ւանօրէն պիտի ըլլայ Sal ammoniacո.

Հանքային նիւթերէն կամ ի մետաղաց՝
մասնաւոր կերպով կը յիշուին Երկան, Պղնչ,
Պաղլիղ։ Ի կենդանեաց՝ Զէ, Զորէ, Էշ,
Ար-
ջառ, և մասնաւանդ Մասշտակ՝ զոր կը մա-
տակարարէին Մեծ Հայք, և Մորն Էանց։ Իսկ
ի բուսականաց՝ առանձինն, կամ ուրիշներէն
աւելի յաճախագոյն կը յիշուի ի դիւանս
Վենետիկոյ Պղղեղ՝ յԱյաս. զոր անշուշտ ին-
քեանք Հայք կը բերէին ի Հնդկաց կամ ի-
րենց սեպհականած էին զվաճառն։ Ասոնցմէ
զատ Ցորեան, Զամիլ, Խաղող և Գինչ, անորոշ
Փոյտ, Խոր, և այլն։

Իսկ ի Վենետաց ի Հայս փոխադրած վա-
ճառքն էին, նախ, գլխաւոր նիւթք զգես-
տուց, անկազմ հանեալ ի Հայոց և արուես-
տագործուած կրկին հօն մուծանելով, ինչպէս
Ասուեղինե, Կարաւէն և պէսպէս Ուիթիուակ (Sa-
miti)։ Նշանակութեան արժանաւոր է մուր-
հակն պահանջից Միքայէլի Լո Թաթարոյ-
կամ Լոքաթարոյի (1306), Ամրատայ թագա-
ւորի Մանուէլ դեսպանէն կամ զործակալէն,

որ իր ձեռքովը ինն տախտ կամ փերթ ու կեղիպակ գնած էր, ամէն մէկը 800 նորդրամոյ արժէքով, Եզիպառսի սուլտանին ընծայ զրկելու համար։ Ասոնցմէ զատ՝ այլ և այլ Հայեթղին+ (Épiceries), զորս ընդ ծով կը բերէին յԱրարիոյ, ի Հնդկաց և յԵգիպատոսէ. նոյնպէս և վենետական յատուկ ձեռագործ՝ Աղախեղին+ և նմանիք, Կաղնունց+ նատաց և Նուա+, երբեմն և Զէն+: Հայոց համար կարեւոր նիւթերէն մէկն ալ՝ տաշուած և յղկուած Փայտն էր, զոր իրենց երկրին մայրիք կը մատակարարէին օտարագգեաց, և պատրաստածը կ'ընդունէին ի պէտո շինութեանց։ Հետաքննելի վաւերական մը կայ 1326 օգոստոս 21 թուականաւ, յորում և ցուցակ նիւթոց առաքելոց ի Վենետիկոյ ի Հայս, և գլխաւորաբար Փայտեղէնք, մանրամասն նշանակեալ չափաւ, թուով և արմէիւք. ուրիշ անգամներ ալ յԱյաս նստող Պայլին տանը նորոգութեան համար պէտք եղած փայտը՝ զրկուեցաւ ի Վենետիկոյ։

Վաճառականաց շահասիրութիւնն երբեմն չէր խղճեր պետութեան շահը ոտքի տակ առնուլ, կամ անկէ խուսել փախչիլ, մաքսի հարկը չվճարելով։ Իրենց սյս ձեռնարկին մէջ մերթ կը յաջողին, և մերթ կը բռնուին. և պետութիւնն ալ երբեմն կը պատռհամէ.

զնենդողան, երբեմն ալ ներողամիտ երեւնալով՝ իր գիւանաց մէջ կ'արձանադրէ այնպիսեաց համար ըրած շնորհքը:

Դրամք. — Միջին դարուց՝ մանաւանդ ընդ արեւելից վաճառականութեան գիտութեան՝ կարեւարագոյն մաս մ'է դրամոց և անոնց արժէից ծանօթութիւնն, որոնցմավ առեւտուրք կը կատարուէին. և թէպէտ շատք աշխատեր, ու առաւել կամ նուազ յաջողութեամբ կրցեր են ճանշնալ և ստուգել, բայց հարկ է որ ամէնքն երախտապարտ ըլլան փլորենտեան գործակալին Պալտինոյ Բեկորոգդի, որ իւր ժամանակին՝ չորեքտասաներորդ դարուն, դրամոց և կշռաց համեմատութիւնն առ մեզ հասցընելով, Հայոց կիլիկեցւոց դրամոց և կշռաց վրայ ալ տեղեկութիւններ կու տայ. Վենետիկեան գիւանաց մէջ ալ շատ պատուական ծանօթութիւններ կը դանենք, և մեծապէս հաճելիք են՝ ի ծանօթութիւն յարաբերութեանց նոյն ատենուան հայկական տէրութեան ընդ վենետաց:

1289 օգոստոս 18 թուականաւ արուած վճռով մը Հայոց Նոր դբան, որ նոյն ատեն և դրեթէ մինչ ի վերջ կիլիկեան թագաւորութեան վարուն կտմ զործածուած դրամէր, (թէպէտ և հետզհետէ նուազելով յար-

ժէն), այսպէս կը համեմատի. մէկ թիզանդ սառակինեան = 10 Նոր դրամ Հայոց = 35 սովորութիւնն կենետկեան. որ է ըսել՝ մէկ նոր դրամ = երեքուկէս սովորութիւնն կենետեան։ Գառասուն և շորս տարի ետքը (13 մայիս 1333) պետութիւնն կը վճռէ ուրիշ համեմատութիւն մի՛ ընդ Թագուրին (Tacolini) կոչուած հայկական դրամոց՝ որ Reale կը թարգմանուի, և ի ժամանակին՝ ու անկէ ետքն ալ՝ Հայոց սովորական դրամն էր, և հազիւ Նոր դրամն ու Թագուրին կոչուածն մէկտեղ կը յիշուին։ Վճիռն կու պատուիրէ վենետկեան տասուերկու Կրոսը զուգել Հայոց տասուերեք Թագուրին դրամոյ հետ. նոյն վճռոյն մէջ կան նա և ուրիշ կարեւոր համեմատութիւնք վենետկոյ կրոսից ուրիշ տեղեաց դրամոց հետ. ինչպէս, Տրապիզոնի, Դանայ, Կիպրոսի, և այլն։ Եթէ ուզենայ մէկն մեր դրամքը համեմատել հիմկու վարուն դրամոց՝ Գաղղիոյ Փրանքին կամ իտալական արծաթ լիբայի հետ, ըստ մեր քննութեան՝ Նոր դրամն առջի բերան կ'արժէր ըստ նիւթականին իբր 0,90. յետոյ նուազելով իջաւ 0,85. 0,75 և մինչեւ 0,57. այսպէս և Թագուրին դրամն յառաջագոյն կ'արժէր 0,66 և ապա 0,49 կամ զրեթէ կէս Փրանք։ Աւելորդ կու համարիմ յուզել մեծ խնդիր մի՛ դրամոց կամ անոնց

Հաւասար նիւթոց վարկածան արժեկից համեմատութիւնն այն ատենուան և ներկայիս հետ։ Հայք ունէին նա և արծաթի բիզանդ դրամ, որ կ'արժեկը ֆրանք 2.50. և ուկի՛ այլեւայլ կշռով, ըստ զանազան ժամանակաց. յորոց ումանց արժեքն էր 21 ֆրանք, այլոց 15 և 12։ Սակաւագիւտ են հիմայ Հայոց գործածած ոսկեղէն դրամք. իսկ արծաթի Նոր կամ հին դրամք, ինչպէս նա և պղնձիք՝ համեմատութեամբ շատ աւելի կը գտնուին, և յաճախագոյն յանուն Լեւոնի և Հեթմոյ։

Ի լրումն ծանօթութեան կարեւոր խնդրոյս՝ անհրաժեշտ կը համարիմ մէջ բերել քիչ յառաջ յիշատակուած Բեկոլոդեայ համեմատութիւնները՝ Զափուց, Կշուց և Դրամոց Հայոց ընդ վենետիկեանցն, և ուրիշ տեղեաց հետ, ուր որ կարելի չէ որոշել ի վենետականաց։

Ruotoli 1 di Spezierie d'Erminia torna in Vinegia libbre 20, e once 3 e $\frac{1}{4}$ sottili. — Ruotoli 49 di Cotone d' Erminia tornano in Vinegia libbre 9 sottili. — Occhia 1 di Seta, e di Spezierie sottile d'Erminia torna in Vinegia libbre 1 e once 4 sottili. — Il migliajo grosso di Vinegia torna in Erminia ruotoli 76 in

78 o vuogli Catars 20 $\frac{1}{2}$, d'Erminia. — Mars al cento dars al peso di Vinegia fa in Erminia mars 106 $\frac{1}{2}$. — Braccia 315 di tele line alla misura di Vinegia, torna in Erminia Canne 100. — Libbre 11 sottile di Vinegia tornano all'Ajazzo d'Erminia libbre 10. — Costano le mercatanzie a conducere da Vinegia in Erminia, e d'Armenia a Vinegia per nolo di comune ordinato per lo comune di Vinegia in Galee armate, come dirà qui a piede, e diviserà innanzi a una carta. — Tele grosse e Canovacci per soldi 6 di grossi dars di Vinegia alla balla, a peso 350 al peso grosso di Vinegia. — Rame, e Stagno e Ferro soldi 6 di grossi dars la balla di peso libbre 260 al peso grosso di Vinegia. Argenti in pezzi 1 per cento. — Oro filato, Argento filato, e altre simile cose dee avere di casse 3 per cento. — Tutte Spezierie soldi 13 di grossi dars del migliajo sottile. — Ciambellotti 2 per cento in Galee armate, in legno disarmato 1 $\frac{1}{2}$ per cento. — Zucchero soldi 10 di grossi dars del migliajo sottile.

Առ լաւ եւս խելամտութիւն որպիսութեան

առեւտրի վենետաց՝ զորս յայլեւայլ ժամանակս և ի դէպս ունեցեր են ընդ Հայոց, և այն պատճառաւ մերթ ընդ մերթ յառաջ եկած դժուարութեանց, պիտանի են յոյժ երկու հաւաստագիրք (documents), յորոց մին գրուած է ի 1312 յԱյաս քաղաքէ՝ ի ձեռն Գրիգոր Տոլֆին պայլի՝ առ դուքսն Մարինոյ Ծործի. իսկ միւսն՝ ի 1330 գրէ Պետրոս Պրակատին։ Առաջնովն Տոլֆին կու ծանուցանէ դքսին, թէ տարի ու կէս կամ երկամեայ ժամանակ վարած պայլութեան պաշտամանը միջոց՝ ներս մտած վաճառուց՝ կէս առ հարիւր իրեն ընկած բաժինն ընդունելով, գումարն եղած էր իրրու վաթսուն լիրա կրոսից. այս կրոսը համարելով հարիւր քսան ֆրանք, վաթսուն կրոսին գումարն կ'ըլլայ 7200 ֆրանք. և այս համեմատութեամբ $(200 \times 7200) = 1,440,000$ ֆրանք կ'ըլլան առ նուազն՝ վենետաց վաճառուց արժէքն, իսկ հիմակուան արժէքով գէթ երեք միլիոնի կը գումարին։ Այս պզտի նշմարաւ կրնանք գուշակել և մերձաւրապէս համեմատել թէ քանի հարիւր միլիոններու առեւտուր ըրած են վենետաք յութսուն ամս բարգաւաճութեան Այասոյ. և քանի միլիարք անցած են քաղաքին հրապարակաց վրայ, ոչ միայն իրենց՝ այլ նա և ուրիշ վաճառական

ազգաց ապրանքէն , Գենուացւոց , Պիդացւոց ,
 Փլորենտացւոց , և այլն , և ուրիշներուն , զորս
 կը յիշէ կամ չի յիշեր Բեկոլոդդի , և յա-
 մենայն աղխամաղխէ արեւելից և արեւմը-
 տից՝ որ ընդ ծով և ընդ ցամաք կը թափուէին
 յառաջնակարգ շահաստանն և նաւահան-
 գիստն այն՝ ԺԳ-Դ դարուց վերջին և առաջին
 կիսուն , որ ի ժամանակին ճառագայթաւէտ
 կը ցոլանայր ընդ ամենայն աշխարհ . իսկ
 հիմայ՝ իբրև զկէտ մի աղօտացեալ և անե-
 րեւութացեալ , մանաւանդ թէ անհետացած ,
 մեռեալ և մոռցուած յամենայն վաճառակա-
 նաց և ընշախիրաց աշխարհի : Կու ծանուցանէ
 դարձեալ Տոլֆին թէ ղրկած է առ դուքսն
 տասն լիրա կրոսից , ինչպէս նա և քսան
 կրոս առ նախորդն , մնացածը ծախեր է ի
 պէտս հայրենակցացն և անոց հօն ունեցած
 տանց վրայ : Կու յաւելու , թէ դժուարին
 կ'ըլլայ տեղւոյն վրայ գանձել հարիւրին կէս
 սահմանեալ տուրքը , և թէ լաւագոյն է առ-
 նուլ զայն ի Վենետիկ . վասն զի , կ'ըսէ ,
 Ռուպինի և Գոնդարինի երկու վաճառական-
 ներէն որ 1400 պարկէն աւելի վաճառք փո-
 խադրեր էին իրենց նաւերով՝ հազիւ կրցեր
 էր տասն կամ տասնումէկ կրոս բաժ առնուլ :

Իսկ Պրակատինի գրուածն՝ յամի 1330
 կամ ի յաջորդին՝ ողբական եղանակ մ'ունի .

գանգատելով այն զրկանաց համար՝ զորս
վաճառականք Վենետիկոյ կրէին ի Հայս,
յիշելով յանուանէ նա և զոմանո ի զրկելոցն.
յորս՝ բանտուողք, սպաննուողք և կողոպ-
տուողք ալ կան, և իրենց իրաւունք չըլլար:
Կ'իմացընէ, թէ ստըկին կշիռքն վեց առ հա-
րիւր նուազած է. թէ, նաւուց հասած կամ
մեկնած ատեն՝ կ'ուշացընեն կամ անկարգ-
օրէն կու քննեն և կշիռքը կու խարդախեն.
— թէ, հակառակ պարգեւագրին տուելոյ ի
թագաւորէ՝ վեց կամ չորս առ հարիւր բաժ-
կու պահանջեն քաղաքէն դուրս, և մէկ առ
հարիւր ի քաղաքին: — ի վենետացի ցփսիա-
գործաց աւելորդ չափողչէք կը պահանջուին.
— յԱտանա՝ անկտակ մեռնողի մը ինչքը՝
չթողուցին որ պայլն գրաւէ, և իրեն թոյլ
չեն տար Վենետաց դատաստանը տեսնել,
ինչպէս յառաջագոյն շնորհուած էր ու սահ-
մանուած, այլ կու ձգեն յատեան թագաւորին:
Այս գանգատանաց վրայ կու յաւելու, թէ ի
վաճառականաց շատ ծախք պահանջուելուն
պատճառաւ, պատշաճ կու համարէր տուները
նորոգել ու վարձել, և այն հասոյթէն ռոճիկ
ու թոշակ տալով՝ երկու հրապարակառնունց
(plazeri) պահել՝ որպէս յառաջն:

Յայտնի է որ այսչափ ու այսպիսի բողո-
քանաց վրայ չէր կրնար դուքսն լուռ կենալ.

ուստի գրեց առ թագաւորն Հայոց Լեւոն Դ. և նոր Պարգեւագիր մ'ալ ընդունեցաւ (1333), ինչպէս պիտի տեսնենք քիչ ետքը՝ ի կարգի յարաբերութեանց երկոցուն արքունեացն, ընդ որում և մեր թագաւորին վերջին թուղթըն առ դուքս ժամանակին».

Վենետաց Կիլիկիոյ Հայոց հետ վաճառականական յարաբերութեանց վրայ համառուտ և հարեւանցի տեսութիւննիս կնքելով, հարկ կու համարիմ յաւելով՝ ինծի ծանօթքանի մը առեւտրոց յիշատակքն այն աշխարհէն դուրս, ի բուն և ի Մեծ Հայս. որպիսի է հետաքննական անձն և գործ Աւագ կոշուած մէկու մը, որ յանուանէն հայ կը ճանաշի, մեծ Հայոց մէջ ի ժամանակին շատ գործածական անուն մը. և ի դիւանական գրուածս՝ թուրք և թաթար բառով Քալամազ կը կոշուի, և համարիմ թէ թարգման, դեսպան կամ կարաւանապետ կը նշանակէ. և յիրաւի՝ այսպիսի պաշտօն մ'էր ունեցածը, Հայոց ու Պարսից սահմաններէն ընկերելով կամ առաջնորդելով կարաւանաց ի Տրապիզոն։ Այս անգամ մի հանդիպելով և ի Վենետիկ՝ խնդրեց որ ի վարձ իր բազմամեայ ծառայութեանց՝ յօգուտ և ի շահ հասարակապետութեան երկրին՝ երթալով և գալով ի Դավրիթոյ ի Տրապիզոն, առ մէն մի գրա-

ստարեան՝ դրամական շնորհք և պարգեւ մը ըլլուի իրեն. բայց խնդիրն ընդունելի չեղաւ (16 յունիս, 1332). Նոյն օրերը (յունիս 20) ի վենետիկ գտնուեցաւ մահմէտական մի՛ Հաճի Սիւլէյման Թայիրի անունով, որ նոյն Աւագայ թարգմանութեամբ յանձն առաւ որ իրեն տրուած 4000 բիզանդ դրամէն՝ ի փոխարէն վնասուն յԵրզիոում, մասն հանուի նոյնպէս վնաս կրող երկու անձանց՝ Աւ նո՛ւտոյի և Նիկողայոսի Ճիւթինիանի, երեք փող առ բեռն։ Այս պայմանս՝ ինքն Սիւլէյ-ման գրեց ի պարսիկ լեզու, և Աւագ թարգ-մանեց յիտալական. և վկայեցին՝ Մահմէտ-որդի Շէյխ Գութպէտտինի և Հաճի Ալի։

Նշանաւոր և ոչ անծանօթ է ոմանց գիտ-նոց՝ Ղրիմու Թաթարաց հետ եղած վաճա-ռականական դէպք մ'ալ. եւս և խնդիրք Հայոց՝ որ ի թերակղզւոյն կու բնակէին բազ-մութեամբ, և որոց վէճք և գործք՝ յաճա-խագոյն եւս կու գտնուին ի դիւանս Ճենո-վացւոց։ Ղրիմու Սուլղաթ գլխաւոր քաղա-քին կուսակալն Ուամագան, 1356 թուին (2 մարտ) Աքսէրայ քաղաքին մէջ պայման դրաւ Վենետաց հետ, որ իրենց վաճառուց ար-ժէից համեմատ երեք առ հարիւր հարկ վճա-րեն. նոյնպէս ուրիշ քանի մը պայմաններ ալ։ Դաշնագրով մ'ալ շնորհեց իրենց որ

կարող ըլլան գալ ի նաւահանգիստ Բրովա՛-
թոյ (Provato) կամ Նոր քաղաքի թերակըզ-
դւոյն, պահանջելով որ իր հպատակաց եղած
ֆլասը հատուցանեն. որոց մէջ էին և Հայք՝
Դերեալք ի Վենետաց այն գենուացի նաւուն
հետ՝ որով եկեր էին ի Պոլիս, իրենց 4000
բեռ կարառեաւ. կուսակալն կը խոստանար
որ ինքն ալ ետ դարձընէ իր գրաւած Վենե-
տաց ինչքը։ Այս վաւերագիրս՝ արգէն իսկ
շատ տարի յառաջ հրատարակուած . է ի
Մասլադրի կոմիէ։ Ուամազանի յաջորդն՝ միոյն
տեղ երեք նաւահանգիստ շնորհեց, և էին,
Provato, Calitra, Soldadisi. Առ սա գրեց
Ղրիմու Թաթարաց Պէրտի ղան՝ որ Ուա-
մազան կուսակալին պէս պահանջէ ի Վե-
նետաց իրենց կողոպուտը, որոց մէջ կը գըտ-
նուէր գումար մը 1300 արծաթոյ և 500 բեռն
վաճառք Պասուար անունով անձի մը՝ որ կու
գար ի Կիպրոսէ։ Բայց ղանին բարեսիրտ
կինն Վենետաց շնորհք մ'ուզելով ընել, իւր
անձնական գանձէն հատոյց զրկելոց՝ 11,000
բիզանդ դրամ, որոց 5000ն Հայոց բաժին
էր, քսան բիզանդ ալ անոնց թոշակ. դքսին
ալ գրեց որ Հայոց պահանջից համեմատ
(pro precepto Arminium) կը հատուցանէ
զգումարն (10,998 բիզանդ). 550 դրամոց
զգումար մ'ալ ի փոխարէն 2,830 դրամոց,

որոյ պարտական Ըլլալնին՝ ինքեանք Վենետիք
ալ կը վկայէին :

Բազմաթիւ յիշատակք ալ կը գտնուին ի
դիւանս՝ վաճառականական յարաբերութեանց
Վենետաց ընդ Դավրիժու՝ մայրաքաղաքի
Պարսկահայոց, և որոց քննութիւնն կը հե-
ռացընէ զմեզ մեր նպատակէն . այսշափ միայն
յիշեցընենք որ Շէյխ Իւվէիզ դան կամ թա-
գաւոր Դավրիժու՝ յամի իբր 1369 Պարգեւա-
գիր մը տալով առ դուքսն, կը հաստատէր
իր նախնոյն Պուսայիդ դանի չնորհմունքը,
և կը հրաւիրէր զվաճառականս՝ ապահով և
անվտանգ ցուցընելով Տրապիզոնէ մինչեւ ի
Դավրէժ ճանապարհը : Պուքսն ալ կը ծա-
նուցանէր նմա՝ թէ շատ վաճառականք կը
սպասեն ի Տրապիզոն՝ ճամբաներուն ապա-
հովութեանը կասկածանօք. վասն զի աւա-
զակք կողոպտեր էին զվաճառականս մերձ
յԱւնիկ, որ հին և անուանի տեղ ու բերդ
մ'է ի մեծ Հայս, ոչ շատ հեռի յԵրզիու-
մայ և ի Բասենոյ: Իւվէիզ դան գրեց յայն-
ժամ առ պայլն Տրապիզոնի (իբր ի 1373),
թէ Ապարամ (Իպրահիմ) անունով մէկը
զրկելով բռնեց ու պատժեց զաւազակսն ու
գողօնը ետ դարձուց, ուստի աներկիւղ ու
համարձակ կրնան վաճառականք դալ ու
երթալ:

Մեր ինչուան հիմա առաջ բերած վաւերական յիշատակագիրներէն յայտնի եղաւ, թէ Վենետիկոյ Հասարակապետութիւնն Հայոց աշխարհին, մէջ իրեն յարակայ ներկայացուցիչ ունէր զՊայլն, ոչ այնքան իրուքաղաքական գործող մը ընդ հայկական պետութեան, — որովհետեւ այս վախճանաւ սովորէր յատուկ դեսպաններ զրկել, — որքան իր հպատակացը վաճառականական գործոց համար. ուստի և Պայլն կու նստէր յԱյա, որ մեծ կեդրոն և նաւահանգիստ մ'էր համաշխարհական վաճառականութեան: Ըսինք թէ Պայլն իր խորհրդականներն ունէր, և թէ ամէն կարեւոր գործ՝ անոնցմէ երեքին երկու մասին հաւանութեամբ կու սահմանուէր: Ասոնց հետ կային նա և ուրիշ պաշտօնեայք, ինչպէս Բարտարան (placiarii), Վաճառարիստաց (merciarii), և պահապանք կալուածոց, որպիսիք էին՝ հասարակապետու-

թեան Յունն, Փնդուկք, վարձաբեր շինուածք, եկեղեցի, և այլն։ Այլ վաճառականաց բազմապատիկ և բազմազգի կարեւոր գործոց համար՝ յառեւտուրս, ի դաշնադրութիւնս, ի փոխառութիւնս, ի կտակս, անհրաժեշտ պէտք կար նա և ուրիշ պաշտօնէի մ'ալ. և էր Նօտաբն, անանջրպետանձ մի ամէն գլխաւոր պաշտօնակալի քով, որպիսի ոք էր Պայլն. և ինչպէս ի բուն հայրենիսն՝ նա և յայլ աշխարհս, նոյն ժամանակաց սովորութեանց և օրինաց համեմատ՝ եկեղեցականք էին նօտարքն, իրրու հաւատարմագոյն անձինք, և յաճախ նա և թաղպետք իսկ եկեղեցեաց։ Վենետք ալ Սրբոյն Մարկոսի նուիրուած եկեղեցի մը ունէին յԱյաս. բայց հաւաստիք մը չկայ թէ անոր ժողովրդապետն նօտար այլ եղած ըլլայ. և հաւանելի այլ չերեւիր. այն քիչ թուով յիշուած նօտարքն ալ յԱյաս՝ Վենետկոյ եկեղեցեաց անուամբ կը կոչուին. ինչպէս Ս. Պափայէլ եկեղեցւոյ քահանայն Փրանկիսկոս Ուրսոյ (1303), Պետրոս (1314-5) թաղպետ Ս. Եսփիմեայ. յիշուի և Յովհաննէս Բէլէկրինի քահանայ՝ նօտար, առաջին գրող կտակի յԱյաս մեռնող անձի մը, բայց որոշ չէ թէ արդեօք հօն գրուած է կտակն թէ ի Վենետիկ։ Իրբեւ վկայ նօտարի՝ կը յիշուի

Մարկոս Գիոյ՝ քահանայ Ա. Երմագորայ ե-
կեղեցւոյ (1316), Պողոս քահանայ եկեղեց-
ւոյ Ա. Քակովբայ Տէլլուփրիոյ (de l'Orio,
1327): — Ուրեք կը յիշուի և Պայլին մա-
տրանապետ՝ Նիկողայոս քահանայ Ա. Եւ-
տաթեայ (1331): Այս յիշատակուածներէն՝
միայն Պետրոս քահանայի ձեռքով յօրի-
նուած ու կնքուած հինգ կտակք ծանօթ են՝
գրեաք յԱյաս, յամս 1314—5. ուրիշ նօ-
տարի մայլ, որոյ անուն չի յիշուիր ի գործսն,
այլ Վենետիկոյ դիւանաց մէջ գտնուի ընդ
գրուածս Յովհաննու Գամբիոյ նօտարի, և
են երեսունեւշորս թուով, յօրինեալք ի մի-
ջոցի ութ ամսոց, ի կիսոյ օգոստոսի (1316)
յմարտն հետեւեալ տարւոյն. դոյզն՝ մանաւանդ
թէ ամենադոյզն նշխար մը յոգնաթիւ ու
անհամար գործոց արձանագրելոց՝ գէթ յութ-
առւն ամս բարգաւաճանաց Այասոյ և յա-
ճախելոյ Վենետիաց ի Հայս. յորոց ոմանք
ոչ միայն ի շահաստան քաղաքի անդ բնա-
կէին, այլ նաև յայլ քաղաքս աշխարհին,
որպէս ի մայրաքաղաքն Սիս, յԱտանա, և
այլն. որոց և քաղաքացի (borghesi) ալ
գրուած կամ եղած են, ինչպէս կ'իմանամք ի
նօտարական յիշեալ գրուածոց, և յորոց
դիւրին է գուշակել թէ որպիսի անակնու-
նելի լոյս պիտի ծագեն Այասոյ նօտարա-

գրութիւնք՝ Վենետաց ընտանեկան պատմութեան, թող վաճառականական գիտելիքն։ Ճենովացի ազնուական ասպետն Տէ - Ախմոնի՛ հմուտ հետամուտ հայրենական և արեւելեան յիշատակաց՝ հրատարակեց ի պատուական գիրս Արեւելքան Լատին գիւղաց (Archives de l'Orient-Latin) իրր 180 գործս արձանագրեալս յԱյաս ճենովացի նօտարաց ձեռքով, գրեթէ միայն երկու տարուան (1274, 1279) միջոցին մէջ, և որ իրենց ազգայնոց կը վերաբերէին. և որովհետեւ Վենետք՝ անոնցմէ աւելի երկար ատեն և բազմաթիւ բնակեցան և երթեւեկէին ի Հայս, հազարաւոր թուով պէտք էր որ եղած ըլլային նա և նօտարական գործք, որոց եթէ ոչ բովանդակն՝ այլ մեծ մասն մի յուսալի է Վենետիոյ անսպառ դիւաններէն։ Ասոնցմէ առաջ բերենք միայն ինչուան հիմայ հրատարակուածներէն կամ մեր առանձին քըննութեամբ ի դիւանս ծանօթ եղածները, նկատմամբ այն ժամանակին՝ որոյ վերայ է մեր խօսքն. վասն զի վերջին ԺԶ-ԺԸ դարուց նօտարական և պաշտօնական հայկական գրուածք ի Վենետիկ՝ հազարաւորք են ծանօթքն, որ դեռ հրատարակուած չեն։

Այաս քաղաքին մէջ վախճանելոց կտակաց մին, է՝ Յովհաննու Ռուչժինի (Ruzzini) (1

հոկտ. 1315) մականուանելոյ թաթարոյ (Տատարո): Այս անուամբ ծանօթ է Միքայէլ ոմն որ ի վերջ երեքտասաներորդ դարու՝ Հայոց Սմբատ թագաւորին դիպակ վաճառած էր, ինչպէս նա և ուրիշ շահավաճառի գործերով: Որուծծինի իր ստացուածքը կտակէ որդւոյն, և կտակակատար սահմանէ Վլաս Մալիբիէրի և Բենեդիկտոս Ճիրարտի ազնուատոհմ անձինքը. փափաքի թաղուիլ Այասոյ Ա. Մարկոս եկեղեցւոյն մէջ, և կը յանձնէ՝ նոյն քաղաքին նաւահանգստին մէջ գտնուած իր նաւը և ինչքը ժողվել, անոնց տիրութիւն ընելով: — Գտնուին դարձեալ ի դիւանս Վենետիկոյ՝ վաւերագրեալ կտակը Անդրէի Նանի († 1 նոյեմբ. 1315), որ նոյնպէս թաղուեցաւ ի Ա. Մարկոս Այասոյ. — Եասոմինայ (Iasomina) այրւոյ Դանիելի Միքայէլի (25 յուլիս, 1316), որ բաց յայլեւայլ բարերարական հրիտակաց՝ կու թողու քսան դրամ (deremi) Ա. Փրկիչ եկեղեցւոյ յԱյաս, ուր կը բնակի, կ'ըսէ, հայ քահանայն Միքայէլ, (ubi habitat presbyter Michael Armenus). — Կտակը Միքայէլի Սիենացւոյ և Սիմոնի Հռամացւոյ (25 նոյեմբ. 1315). յետինն թերեւս ասորի էր ազգաւ, իսկ բնակութեամբ հաստատուած յԱյաս:

Ասոնցմէ զատ՝ բազմաթիւ և հետաքըն-

Նականք են մանաւանդ վենետաց համար՝ նօտարական գործք այլ և այլ խնդրոց, վճռոց, դաշնազրոց, զորս աւելորդ կը համարիմք առ այժմ մէջ բերել, չունենալով մեր նիւթին հետ անմիջական վերաբերութիւն մի։ Յիշենք միայն 1327 նոյեմբեր 15 թուականաւ գրուած դաշնագիր մը, որով հայանունն Հեթում (Aytonus de Oris) նաւապետ գենուացի՝ վեց խալէից (նաւուց)՝ խոստանայ շվեյցարական գութ նաւուց, և Պալտոյ Սրբնութայ Գենուաց գունցն՝ երաշխաւոր կ'ըլլայ Երիցցոյ պայլի վենետաց։

Այս վերջին յիշատակ, կամաւ թէ ակամայ՝ կ'արթընցընէ ի յուշ իտալաց, մանաւանդ վենետաց և Գենուացւոց, այն նախանձընդդէմ մրցանքն և արիւնահեղ պատերազմներն՝ որ ի ջուրս ծովուց գրգռեցան այս երկու ժողովրդոց մէջ, և յորոց՝ յայլ և այլ ժամանակս և ի դէպս՝ բոլորովին անմասն չեղաւ նա և Այասոյ գոգն։ որով կարասեաց և ազգերու շահուց այն շտեմարանն՝ լայն և թոյլ գերեզման այլ եղաւ շահախընդիր զինելոց։ որք երբեմն իրենց ասպնջական բարեկամաց և բարերարաց Հայոց դէմ այլ՝ հինարար վերուցին իրենց ձեռքն ու զէնքը, թէպէտ և փութալով զղջալ և ջանալով միւս-

անգամ անոնց շնորհաց արժանաւոր ըլլալ։ Այսպէս 1267 թըսին՝ Գենուաց նաւատորմիղն առաջնորդութեամբ Լուգեղդոյ կրիմալտոյի՝ աւարելով կողոպտեց ի կոռիկոս, (որ Հայոց ամրագոյն նաւահանգիստն էր և յետ Այասոյ երկրորդ շահաստան), վաճառաբարձ նաւ մը, որոյ վրայ շատ վաճառականք՝ նա և ի Հայոց, բեացուցեր էին իրենց ապրանքը, և յետոյ ստիպուեցան (1271) անոնց եղած վնասը դարմանել, հատուցանելով իր 22,800 բիզանդ սառակին - հայ, ինչպէս կու ցուցընէ Գենուայի դիւանաց մէջ գտնուած նօտարական մուրհակ մը։ Բայց ամենէն աւելի հոչակաւոր և Վենետաց համար աղիտագոյնն եղաւ։ Այասոյ ջուրց մէջ տրուած նաւամարտն, յամի 1293, զոր այսպէս կը համառօտէ տարէգիրն Հեթում պատմիչ. «Խալէքն Ճնվիզացն կովեցան յԱ» յաս, ընդ երեսունուերկու խալէ և ընդ «դարեթի Վենետիանացն, և շահեցան Ճըն» վէզքն քաննեւչորս խալէ», առաջնորդութեամբ Սրբինոլայ ՚Նիկողայոսի։ Ինչպէս ծանօթ է, ՚Նիկուրիացւոց այս յաղթանակն, նոյնպէս և Վենետաց վրիժական պատերազմունքն յայլ և այլ ծովս, և նոյն իսկ յԱյասիրենց ձախողութենէն զրեթէ անմիջապէս ետքը. վասն զի սկսան մէկէն յարձակիլ

Հինարար վաճառաբարձ նաւուց վրայ, ու
վերը յիշուած կոռիկոսի դիմաց կողոպտե-
ցին հարուստ նաւ մը մարտիլիացի վաճառա-
կանաց. ուրիշ նաւու մը վրայ այլ յարձա-
կեցան խալէք՝ Պածիլի Մարկոսի առաջնոր-
դութեամբ։ Այս անիրաւութեան դէմ բողժ-
քեցին զրկուող մարտիլիացի վաճառականք,
և ամենէն աւելի Պետրոս Քաղըլէնկ ոմն
(1295 մայիս), որ նաւով յԱյասոյ պիաի
երթար ի Ռումանիա։ և Կ'ըսեր թէ 700
տուրովնեան ոսկոյ վնաս կրած ըլլայ. խօս-
քին ստուգութեանը վկայեցին նա և բիզացի
վաճառականք յատենի իրենց Յովհաննէս
Պորտի գունցին (conus) (1296, սեպտ. 2):
Այս դիպաց կ'ակնարկէ անշուշտ Վենետիկոյ
հասարակապետութեան վճիռ մը, տուեալ ի
22 ապրիլի, 1295։ Ասոնց և Մարտիլիացւոց
մէջ յուզուած խնդիրն և վէճ երկար տարի-
ներ քշեց (1302). վասն զի Վենետիկ ալ ի-
րենց պահանջն ունէին ի Մարտիլիացւոց,
ինչպէս գրէր (1303, նոյեմբ. 18) Մարկոս
ոմն Սիպոդ՝ առ դուքսն իւրեանց՝ այս խըն-
դրոց և պահանջից համար։ Դուքսն արդէն
երկու տարի յառաջ (1300) կանխեր գրեր
էր խոստանալով զլխաւոր զրկելոյն՝ Թովմայի
Ռիգարտոյ կրած վնասը հատուցանել։ Երբ
այս խնդիրք յուզուէին, Վենետիկ և Գե-

Նուացիք՝ երկու ժողովուրդք ծովատեարք՝ չէին
դադրեր ի խռովելոյ զալիս, և անոնցմէ ա-
ւելի՝ խաղաղասէր վաճառականները. Վե-
նեաք ջրէն ի ցամաք յարձըկելով՝ կարծեցին
յաջողագոյն հարուածով տկարացընել իրենց
հակառակորդը, քանդելով ցրուելով անոնց
սեղանաւորաց ու վաճառականաց յԱյա-
քաղաքի ունեցած տրապիզքը (1297), ա-
ռաջնորդութեամբ Մորոզինոյ Թէոփիլեայ:
Նոյն ատեն և Գենուացիք ինչ որ չէին կա-
րող գործել յԱյաս, ի սահմանս կիպրացւոց՝
անոնց դաշնակցաց՝ գործէին յելուզակաբար.
այն պատճառաւ Միքայէլ Թաթարոյ կը բո-
ղոքէր առ թագաւոր նոցա (1298): Քանի
մը տարի ետք կը յաջողէին բէրսիվալ զօ-
րավար առաջնորդին ձեռքով Այասայ մօտ,
ի կաւոյ կարբասոյ, (Cavò de Carpasso),
գերել վենետիկեան խալէ մը. և որովհետեւ
այն միջոցին իրարու հետ հաշտուած կը հա-
մարուէին երկու հասարակապետութիւնք,
Վենետաց ի կիպրոս նստող Պայլն բողոքեց
առ երեսփոխան Գենուաց որ ի կղզւո՞ն. և
տեսնելով որ փոյթը չէ և արժէք մը չուզեր
տալ իր բողոքին, գրեց առ դուքսն, ծանու-
ցանելով եղածը (1303, մարտ):

Նոյն ժամանակներն այլ աւելի կարեւո-
րագոյն խնդիր մը ծագեցաւ ոչ լոկ օտարաց՝

այլ և Հայոց ընդ Վենետիս։ Ատուգիւ շենք
կրնար ըաել թէ ինչ պատճառաւ՝ Վենետաց
երկու խալէք՝ նաւապետելով Անդրէի Սա-
նօւտոյ և Պաւղոսի Մորոզինոյ, յարձակեցան
Այսայ ցամաքային բերդին վրայ, ու ար-
քունականաց հետ կողոպտեցին նա և ա-
ռանձնականաց Հայոց և օտարաց ինչքը.
ընդ որս և զգունցին Բիզացւոց։ Առոր բո-
ղոքանաց վրայ առ Թագաւորն Հայոց, Բէր-
մարինոյ Յովհաննէս Պայլն փութաց ի ստի-
պելոյ արքային և Լիկոս և Կալոժեն նաւա-
պետաց Այսայ՝ հատուցանել առ Թորոս
դուքս (փոխանորդ) Գունդստապլին, ի փո-
խարէն վնասուց գունցին՝ 1214 նոր դրամ
հայկական։ Բնականաբար այս հատուցմամբ
քաջալերուած ուրիշ զրկեալք այլ՝ իրենց բո-
ղոքոյ ձայնը բարձրացուցին, իւրաքանչիւր
ոք նշանակելով իր վնասը, և արքունի ատե-
նին ձեռքով արդարութիւն և իրաւունք պա-
հանջելով։ Ատեանն այլ աւելցուց արքունա-
նական վնասը՝ զինուց և կազմածոց ի բեր-
դին, և ներկայացընելով (1309) առ Պայլն
և առ խորհրդականս նորա, ընդունեցաւ
հատուցումը, ինչպէս մանրամասն կը նշանա-
կուի ¹, երեսուն հազարէն աւելի գումար մը

1. Cartulaire, յ'էլ 170.

նոր դրամոց . ուստի և Աւագ Պարոնն , որ
թուի թէ ինքն Հեթում թագաւորահայրն
էր , (որովհետեւ ստորագրութիւն չկայ , այլ
միայն ի փռանկ լեզու Nous le Gran Sei-
gnor) , իր և թագաւորին կողմէն անդորրա-
գիր տուաւ :

Երբ աստ Վենետոաց պարտքերը կը վճա-
րուէին , յարեւմուտս իրենց մայրաքաղաքին
մէջ Պետրոս Քաթրըլէնկ զրկուած մարսի-
լիացին՝ վաճառականաց պահանջից հատուց-
ման խնդիրը կը յարուցանէր . և ուզած ու
ենթադրած իրաւանց չհանդիպելով , շատ
տարի անցնելէն ետքը (1332 , մայիս 12)՝
նորէն խնդիրը ներկայացուց , ուզելով առանց
դատի՝ յատենի դքսին աւարտել գործը , զոր
պետութեան յանձնարարութեամբ ի քննու-
թիւն առած էր յառաջագոյն անդիկոսն Պեն-
գա ու անընդունելի և մերժելի ցուցած էր
զիանդիրն , մանաւանդ այն պատճառաւ՝ որ
յառաջնում նուագին Մարսիլիացւոց իրա-
ւունքը պահանջած ատեն , իրենին խօսքը չէր
ըրած : Սակայն ասով այլ բողոքողը չդադրե-
ցաւ . ու գրեթէ վրան տամն տարի անցնե-
լէն ետքը կրկին յուզուած է այս յամառեալ
խնդիրս , և վերջապէս աւարտած , անդոր-
րագիր տալով Թոմայինոյ Ֆոնդանոյ Պիա-
չենցացւոյ և իրեն հետ նա և Քաթրըլէնկի ,

յետ գրեթէ քառասուն տարւոյ. ի ծագմանէ խնդրոյն։ Այն ժամանակաց մէջ ալ երբեմն այսպէս կը յերկարաձգէին դատք և իրաւունք. և բարեբաղդք համարուելու են որք Պետրոսի նման յերկարակեացք՝ յաջողին հասանել իրենց խնդրոյն, և արդարութիւնը կատարուած տեսնել։

Սոյն 1332 տարւոյն մէջ հանդիպած է դարձեալ յամառ հակառակութեան դէպք մը Գենուաց ընդ Վենետաց ի ջուրս Այասայ, յարձակմամբ առաջնոցն նաւու մը վրայ՝ որ այն նաւահանգստէն կ'երթար ի Կիպրոս։

Զարմանալի և հակառակընդդէմ զուգադիպութեամբ՝ այն միջոցին ու օրերուն՝ յատեանս Վենետաց ալ խնդիր կ'ըլլար իրենց պահանջանաց համար և հարստահարութեանց, զոր ի Հայոց կը կրէին կամ կրել կարծէին, և զոր ըատ ժամանակին և կարգի պիտի ջանանք հետազօտել։ Դառնանք հիմայ այս երկու ազգաց իրարու հետ ունեցած յարաբերութեանց, ուր թողուցինք ի սկզբան բանիցս, մէջ բերելով մեր թագաւորաց առաջին դաշնագիրերը՝ զոր կնքեցին Վենետկոյ դքսերուն հետ, անոնց՝ ազատ կամ գրեթէ ազատ՝ վաճառականութեան յամենայն սահմանս երկրին Հայոց. ուր՝ ինչպէս քիչ յառաջ յիշատակուած նօտարական գրուածնեւ-

թէն այլ տեսանկք, ոչ սակաւ վենեաք՝ չէ թէ
միայն վաճառականութեան, այլ նա և բնա-
կութեան տուներ հաստատած էին, և շա-
տերն նա և քաղաքացի գրուած Ասոյ և Ա-
յասոյ, և հօն մեռած և թաղուած ի Ա.
Մարկոս Այասոյ, կամ յայլ քաղաքս, և ի-
րենց ժառանգները թողած. կային ուրիշներ
այլ որ կու պարապէին յարուեստս, ի հիւ-
սուած և յոստայնանկութիւն ցփսեաց և դի-
պակաց, ի հիւսնութիւն, ի դարբնութիւն,
ի վաճառ զինոյ և այլոց պարենից, և այլն:

Զ.

ՅԱՐԵՆՉՈՒԹԻՒՆՔ ԱՐՔՈՒՆԵԱՑ ՍՍՈՑ ԸՆԴ ՀԱ-
ՍԱՐԱԿՎԳԵՑՈՒԹԵԱՑ ՎԵՆԵՑԿՈՑ

~~~~~

Նախընթաց գրածովս նշանակեցի՝ երկո-  
ցուն պետութեանցս յարաբերութեանց ակըզ-  
բնաւորութիւնը, յառաջին ժամանակաց թա-  
գաւորութեան մերոցս ի Կիլիկիա, մեծին  
Լեռնի արդեամբք, և 1201 թուականին իրմէ  
տրուած Պարգեւագրով, որ առաջնորդ ենա-  
խատիպ եղաւ ամենայն առընչութեանց Հայոց  
և Վենետաց, և կը կրկնուէր ու կը նորո-  
գուէր, երբ մեծ հարկ մը կը պահանջէր,  
ինչպէս Հայոց նոր թագաւորաց յաջորդելու  
ժամանակ։ Եւ հարկ էր որ այսպէս ըլլար՝ Լե-  
ռնի մահուընէն և քանի մը տարի անհաս-  
տատ վարչութենէ ետքը, երբ յամի 1226  
թագաւորական իշխանութեան մէջ հաստա-  
տուեցաւ Հեթում Ա, իր հզօր և խորագէտ  
հօրն՝ կոստանդնի՛ պայլութեան և իմաստուն  
ազդեցութեան տակ։ Աակայն Հեթմոյ մեզի  
ծանօթ առաջին Պարգեւագրին կը հանդիպինք

Թագաւորելէն քսան տարի ետքը , ինչպէս  
յառաջագոյն յիշեցինք , ի 1245 , և միւս մ'ալ  
ի 1261 , տեսանք նա և անոր յաջորդին և  
որդւոյն՝ Բ Լեռնի՝ իր թագաւոր օծութեան  
տարւոյն մէջ (1271) հայրենի շնորհքը կըր-  
կին հաստատելը , նոր Պարգեւագրաւ մը .  
ցվերջ թագաւորութեանն՝ նորոգութիւն մը  
կամ ասոր կրկնութիւնը չենք գտներ , թէպէտ  
և կարելի էր ենթադրել , որ ինչպէս քիչ  
յառաջագոյն (28 դեկտ. 1288) գենուացւոց  
նոր Պարգեւագիր մը տուած էր , մի առ մի  
և մանրամասն նշանակելով տեսակ տեսակ  
վաճառուց բաժը կամ տուրքը , նմանօրինակ  
բան մ'ալ Վենետաց համար տուած ըլլայ :  
Կը գտնուին միայն մանր ինչ յիշատակք  
յարաբերութեանց Հասարակապետութեանն  
ընդ արքանեաց Հայոց . ինչպէս , յամի 1284  
Պայլն Աքքեայ կու վաճառէ Լեռնի դարեթ  
(նաւ) մի ի գին վեց հարիւր բիզանդ դրա-  
մաց , և Վենետաց մեծ Ատեանն կու հաւանի  
ընդ վաճառն : Քանի մը տարի ետքը (10  
օգոստ. 1287) Ծերակայտն հրաման կու դրկէ  
Հայոց Պայլին՝ որ երթայ առ թագաւորն՝  
վասն կարեւոր ինչ խնդրոյ կամ գործոյ Յով-  
հաննու ուրումն Գարդոլի , որուն ինչ ըլլալն  
կամ որպիսի եղք ունենալն յայտնի չէ :

Լեռն Բ կու մեռնի ի 6 փերք . 1289

ամին. և հարկ էր նորոգել կամ կրկին հաստատել զդաշինսն ընդ Հեթմոյ Բ յաջորդի նորա : Այս նորօրինակ իմա քաղաքավարեցաւ յաշխարհի, թագաւորական իշխանութեանն հետ զուգելով նա և զմիանձնական կեանս : Իր հայրն չէր ուզեր արքունի թագ կրել ի գլուխը՝ ցորչափ կենդանի էր Հեթում Ա հրաժարեալն, և թագադրութեան հանդէսն ալ ուշացուց մինչեւ ցաւարտել սպոյն . իսկ սա չուզեց բնաւ և չդրաւ թագ՝ նա և յարքայարար իշխելն յառաջին ամս յաջորդութեանն . և երբեմն երբեմն կենացը վերջի տարիներուն՝ Փրանկիսկեանց մենաստանէն ելնելով, (որոց խոնարհ և աղքատին պեմն առեր և անունն ալ փոխելով Եղիշայր Յովհաննէս կը կոչուէր), այն թաւարծի կապայիւռ ձեւով կենար ի տան արքունեաց, ու ի ստիպել հարկին՝ կ'երթար ի պատերազմ ուր որ պէտք կ'ըլլար, վառեալ ու առաւելեալ ամենայն ոգւով և ձեւով խաչակրութեանց . որպէս և նկարուած կու տեսնուէր նոյն միանձանց յիտալիա ունեցած վանորէից և եկեղեցեաց մէջ, որք և իրենց Յայսմաւուրաց մէջ ի կարգս Երանելեաց դասելով զնա՝ տարուէտարի անմոռաց կու նորոդեն իր յիշատակն ալ, ի 16 կամ յ'17 նոյեմբերի : Վենետկոյ ազգային այցելուաց մէջ գտնուին թերեւս ա-

կանատեսք յեկեղեցւո՞ն նուիրելոյ Ս. Յովրայ (S. Giobbe), ուր երբեմն մեծ մենաստան մը կար Փրանկիսկեանց , որք սովոր են արտաքուստ իրենց սենեկաց դրանց վրայ Արբոյ մը պատկեր նկարել կամ դնել , յաճախ իրենց կարգէն և կրօնէն . այդ վանքին սենեկաց միոյն վրայ նկարուած էր և Երանելւոյս պատկերն . վեշտասաներորդ կամ հնդետասան դարու գործ , կրօնաւորական պքիմաւ , այլ արգումի սամուրիւ , և թագն ալ դրուած ի ստորեւ , այսու մակագրութեամբ .

B. Joannes Rex Armeniae Seraphicon Habitum suscepit anno 1294

Կրօնաւորական միաբանութեանց բարձման վճռովը՝ այս մենաստանս այլ ուրիշ պիտոյից գործածուելով , և ընդարձակ պարտէզը փոխուելով ի բուսաբանական , ջնջուեցան և սենեկաց պատկերք . զարմանալի իմն դիպուածով անեղծ մնացեր է միայն մեր թագաւոր-միանձին Հեթմոյ պատկերն . որ գրաւելով տեղւոյն պահապանին աչքը , և յատուկ ջերմեռանդութիւն մը զգալով առ այն , կ'աղաչէ և խնայել կու տայ այն ստուգապէս եռանդնաշարժ պատկերին , որոյ և գաղափար օրինակը առնել տուած ենք և մեք . և կու պահնք իբրեւ նուիրական և սիրելի յիշատակ

մը . ախորժելի է մեզ անջինչ թողուլ նա և պահապանին աւանդութիւնը , թէպէտ և ոչ այնշափ հաւանական , թէ ինքն Երանելին եկած ու բնակած ալ ըլլայ յայնմ սենեկի : Ներեն ընթերցողք մեր այս գարտուղութեան , եթէ զարտուղութիւն ալ համարուի այսպիսի խնդրոյ մը հետազօտութիւն , մինչ մեր գըլխաւոր նպատակն էր քննել՝ թէ այս նորահրաշ անձն , որ յիրաւի նշանաւոր եղաւ իր համացեղից մէջ , քաջութենէն զատ՝ որով իր ամէն յաջորդները գերազանցեց , ու ամենէն աւելի վեր՝ վարուց անարատութեամբ և զիտութեամբ , — որովհետեւ գրաւոր վաստակ մ' ալ ունի , — դրա՞ծ է ինքն ալ դաշինք ընդ վւնետաց : Թէպէտ ի դիւանս դեռ գտնուած չէ , այլ վճիռ մը նշոյլ կրնայ համարուիլ՝ թէ դաշն մը դրած ու պարզեւագիր ալ տուած ըլլայ , համանմտն արդեօք՝ թէ նորաձեւ ի հայրենականացն : Գոյութիւնը կու յայտնէ Ատեանէն տրուած վճիռ մը ( 1310 , ապրիլ 21) , յորում կու հրամայուի հատուցանել զպահանջս ազնուազարմ Բագրատոյ Պայլի , որ զայս պաշտօն վարած է ի Հայս ի 1289—90 . և վճռոյն մէջ կը յիշուի անոր 300 դրամի ըրած ծախքը՝ ի թագաւորէն Հայոց նոր Պարզեւադիր մը ընդունելու համար . որով յայտնի կ' ըլլայ թէ այս Պարզեւագիրս տը-

րուած է ի Հեթմոյ՝ յառաջնում ամի անթադ թագաւորութեանն (1289). կու յիշուի այլուր, թէ յամսեան օգոստասի նոյն տարւոյն դեւեւա ի Հայաստան էր Պայլն այն, և ի յաջորդ ամի ի 25 յուլիսի արձակեցաւ ի պաշտամանէ պայլութեանն :

Կու հաստատէ զայս և պատմութիւն Գենուացոց, որ նոյն 1298 տարւոյն մէջ ընդունեցան նոր Պարգեւագիր մը ի ձեռն Բենեդ Զաքարիայ իրենց դեսպանին, և կամ ի նախընթաց ամի՛ ի Լեռն թագաւորէ շնորհուածին հաստատութիւնը, և հիմայ անհետեղած է Հեթմոյ այդ տուրքը, որպէս և շնորհեալն առ կադալանս Ապանիոյ յամի 1293:

Հեթմոյ թագաւորութեան երրորդ տարին (1291) թէ կիպրոսի թագաւորին և թէ իրեն՝ նոր դեսպան մը ղրկուեցաւ, չեմ զիտեր ի՞նչ պատճառաւ. այլ հաւանական կու համարիմ թէ անշուշտ այն մեծ դիպուածին համար, որ հասաւ ի վերայ ամենայն քրիստոնէից և մանաւանդ արեւմտեայց հաստատելոց յարեւելս, իրենց ամուր ապաւինին՝ Աքքեայի գրաւմամբ ի թշնամեաց, որով և վերցաւ անկէ երեսփոխանն և մեծ Պայլն Վենետիկոյ, և Եգիպտոսի սուլդանն սկսաւ այնուհետեւ սպառնալեաք խօսիլ և վարուիլ Հայոց և կիպրացւոց հետ. ուստի փութաց Հեթում գրել

առ թագաւորս արեւմտեայց և առ Սրբա-  
զանն Հռովմայ, որ և նա կու գրէր առ թա-  
գաւորս Անգղիոյ և Փաանկաց, որ օգնու-  
թեան հասնին. և այն վախճանաւ կու պա-  
տուիրէր և իր կողմանէ պատրաստել կու  
տար քսան նաւ : Մինչեւ որ անոնք շար-  
ժեցան, ստիպուեցաւ Հայոց թագաւորն՝ իր  
երկրին քանի մը հեռաւոր ու եգիպտական  
իշխանութեան գրացի սահմանները՝ թողուլ  
սուլտանին, որ արդէն հասեր գրաւեր էր  
Հայոց կաթողիկոսութեան ամուր աթոռը՝  
ողջումկլայ, և ըստ կարի յարդարելով ու  
կարգի դնելով իր աշխարհին և տանը գոր-  
ծերը, և թագաւորութիւնը թողլով թորոսի,  
իրմէ ետքը աւագագունին յեղբարսն, ինքն  
Հեթում միանձնական ձեւ ըզգենլով՝ կ'ա-  
ռանձնանայր ի վանս (1293) : Նոյն տա-  
րւոյն մէջ հանդիպեցաւ Գենուաց ու Վենե-  
տաց նաւամարտն, և վերջնոցս վտանգիլն  
յԱյաս, ու ի յաջորդին (1294) վրէժիւն-  
գրութիւնը՝ գերելով իրենց հակառակորդաց  
նաւ մը ի կոռիկոս. և յերրորդում ամի՝  
(1295) մարտիլիացի նաւուն դէպքը, զոր  
յառաջ յիշատակեցինք: Այս ամէն դիպուած-  
ներով խանգարեցան խաղաղական յարա-  
բերութիւնք և տուրեւառք Վենետաց ընդ  
Հայս. ուստի և ստէպ խորհուրդք կու գու-

մարուէին և վճիռք կու արուէին յատենի  
վենետկոյ . ինչպէս յամին 1294 (նոյեմբ .  
24) կու սահմանէր , որ յետ արկածից պար-  
տութեան նաւամարտին ի Հայս , ազատած  
վաճառականք կարող ըլլան դառնալ ի Վե-  
նետիկ՝ որ և իցէ նաւով . ու յաջարդ տար-  
ւոյն ապրիլի 25 վճռով երեք քննիչք կու  
դրուէին՝ այն ազատուածներուն գործը տես-  
նելու , խիստ պատուիրանաւ և սպառնալեօք  
քաանուհինդ լիպրա տուգանաց , որպէս զի ի  
դքսէն և ի խորհրդականաց հրամայուած-  
ներուն անփոյթ չըլլան : Դոյն կամ նման  
ու ընդարձակագոյն վճիռ մ' ալ կու կրկնուի  
միւս տարւոյն (1296) փերրուարի 15 թուա-  
կանաւ՝ ի ժողովոյ Քառասնից խորհրդակա-  
նաց՝ երեք քննիչ ընտրելու : ի սակաւատեւ  
իշխանութեանն՝ Թորոս՝ որ Տեր կամ Պա-  
տոն Հայոց կ' անուանուէր և ոչ թագաւոր ,  
կ' երեւնայ թէ արտօնագիր մը տուած է Վե-  
նետաց՝ ազատութեան ի Մսիս և ի Տարսոն ,  
որպէս գուշակուի ի բանից որդւոյ նորա Լե-  
ւոնի Դ՝ որ իրեն յաջորդեց <sup>1</sup> :

1296 թուականին՝ միանձն – թագաւորն  
Հեթում՝ որ վասն անձին զերկինս միայն կու  
ինդրէր , այլ հայրենեաց և իր արքունեաց

1. Cartulaire յ'էլ 177 :

Համար գամենայն՝ որ անոնց պատշաճական  
էր և փափաքելի, իր փոխանորդին Թորոսի  
հետ կ'երթար ի նկ. Պոլիս ի տես քեռն  
Ռիթա կայսրուհուոյ, որ Միքայէլ կայսեր ա-  
մուսինն էր, և հօն պատշաճ կու համարէր  
իբրու բարեկամ միջնորդ ըլլալ՝ երկու գըժ-  
տելոց մէջ, Վենետուաց և Գենուացոց՝ իրարու  
հետ հաշտութեան : Այս մէկ անգամ չէր  
որ Հայոց ազգապետն Հասարակապետսւ-  
թեան այսպիսի պէտք մը կու դարմանէր .  
այլ կարեւորագոյն ու շատ ամելի բարձր ա-  
տեանի մ' ալ կու դիմէր, տաճնուհինգ տարի  
ետքը (1310) սոյն այս Հեթմոյ եղբայր՝ Ոշին  
թագաւորն Հայոց, աղերսելով առ քահա-  
նայապետն Հռովմայ՝ ներողամիտ լինել առ  
Վենետու և արձըկել ի բանադրանաց . զոր  
կու հաւաստէ մեզ պատասխանի հայրապետին  
առ թագաւորն մեր (1314, մարտ 4) :

Այս միջոցին, երեքտասաներորդ դարուն  
վերջին տարիները, շփոթք և ժխորք կու  
հանդիպէին յարքունիս Հայոց : Լեռն թ-  
թագաւորի եօթն որդւոց աւագագոյնք՝ Հե-  
թում և Թորոս՝ յամելով յօտարութեան, ե-  
ռանդուն եղբարց մէջ եռանդնագոյնն Սմբատ՝  
ճարտարութեամբ համոզեց զաշխարհիկս և  
զեկեղեցականս, նա և Թաթարաց զանն ալ՝  
որոյ գերագոյն իշխանութիւնը կու ճանչնային

յայնժամ ամենայն տրիւելք, ու հանդիսապէս թագաւոր օծուեցաւ. և երբ եղբարքն ետ դարձան, զԹորոս անգթութեամբ սպաննել հրամայեց, և աւագագունին Հեթոյ աշքերը կուրացընել տուաւ, թէպէտ նա պանչելեաք կրկին ստացաւ զլոյտ աշացն : Այս միջոցին հանդիպած է (1297-8), ինչպէս ուրիշ տեղ յիշեցինք, Սմբատայ ընդ Միքայելի Լոթաթարոյի ըրած առուտուրն սակեթել դիպակաց, զոր ընծայ զրկեց առ սուլտանն Եղիպտոսի :

Բայց արդարախոհն Հեթում՝ աշացը նախախնամական լուսաւորութեամբ քաջալերուած, բռնաւոր եղբայրը կու վուրնտէր յարքունի գահէն, ու թաթարաց հետ դաշնակցելով, երեք տարի անընդհատ (1299-301) սուրը՝ աղօթամատենէն վեր ու բարձր բընելով, զհետ Եգիպտացւոց կու պնդէր, կու վուրնտէր մինչեւ ի հեռաւոր և յանծանօթ սահմանս, և դիւցազնաբար թուրը մխելով, նշան յաղթանակի կու թողուր զայն՝ իրենց բերդին երկաթի դրանց վրայ . ու կ' երթար յԵրուսաղէմ գոհաննալ զամենայաղթ Փրկչէն, և արքունական գաւազանը նուէր կու թողուր տեղւոյն մեծ վանքին, ուր և ցայսօր կու պահուի առաջնորդ Պատրիարքին գանձատան մէջ : Հեթում իր արքունեաց ընտանի աղ-

մուկը դադրեցընելու համար, թագաւորեցուց տարաբազդիկ սպանելոյն Թորոսի մետասանամեայ մանկիկը՝ Լեւոն Գ. որոյ հարսըն կը խօսէր զԱկնէս՝ դատրիկ քեռն իւրոյ Զապլունի և Ամաւրեայ հռչականուն իշխանին Տիւրոսի, որ բռնացած էր իր Ենրիկ եղբօրը և Կիպրոսի թագաւորութեան վրայ. և ապա միւսանգամ մէկդի դնելով զէնքերը, կրկին կ' առանձնանար ի վան :

Նոյն տարւոյն մէջ խնդիր մ'ալ յուզուեցաւ, թէպէտ չենք զիտեր որպիսի, Վենետաց հահասարակապետութեան և պարոն Օշին մէջ, որ հաւանօրէն Հեթմոյ եղբայրն էր, և Լեւոն երրորդէն ետքը թագաւորեց. հասարակապետութիւնն (1301 հոկտեմբ. 1) հրամանագրով կը պատուիրէր Սինիոնյ Պայլին՝ հատուցանել ինչ որ պարտըկան էր առ Օշին, և պատշաճական ոճով գրել և ծանուցանել առ նա. որով կ' ենթադրուի թէ կարեւոր էր խընդիրն և խիթալի Վենետաց :

Անշուշտ ասկէ աւելի կարեւորագոյն խընդիր մ' էր, շահու կամ վաճառականութեան, որոյ համար Վենետկոյ պետութիւնն կու յանձնէր Թէոփիլ Մոչենիկոյի, Գենուաց տրապէզքը կամ դրամասեղանները քանդողին յԱյաս, որ ի Հայաստան երթալով՝ թագաւորէն կամ Այասայ գլխաւոր վարչէն (ret-

տօրէ) խնդրէ նորութիւններ չընել : Բայց  
քիչ ատենէն իրենք Վենետիկ մեծ և շարաջար  
նորութիւն մ' ըրբն, Այասայ ցամաքարեր-  
դին վրայ յարձակելով ու կողոպտելով, ինչ-  
պէս քիչ յառաջ յիշեցինք . և որոյ շփոթա-  
կան արգասիք և հետեւանք տեւեցին երեք  
տարի, մինչեւ ցնոր դաշնադրութիւն և պար-  
գեւագիր Լեւոնի Գ(1307, մարտ 20) : Այն  
յուզման եւ շփոթից երեքամեայ միջոցին՝ այլ  
և այլ խորհուրդք և հոգք յաճախեցին ի  
Վենետիկ . և շատ անգամ որոշուեցաւ. դես-  
պաններ զրկել՝ գործերը կարգի գնելու հա-  
մար, սահմանելով նա և ուղեկիցքն և անոնց  
ծախքը, որ հաւասարաշափ պիտի ըլլային  
իրմէ յառաջ դեսպան գնացող Ուկոլինոյի  
Յուստինեան . և ընտրուեցաւ ի նոյն պաշտօն  
և ի գործ Յակ . Կուիրինոյ : Բայց որովհետեւ  
սա հրաժարեցաւ և անով քսան փող կրոսից  
տուգանաց տակ ինկաւ, վնասն իրեն շնոր-  
հեցին : Դեսպանութեան ծախուց համար ալ  
կրկին սահմանեցին (1307, մարտ 29) փոխ-  
առութիւն մ' ընել հինգ փողոյ առ հարիւր  
շահով, եթէ կարելի չըլլայ լեցընել զայն  
յերկու և կէս առ հարիւր սակէ վաճառա-  
կանաց ի Հայս, և ուր դեսպան զրկեցին  
զԾոլֆինոյ Տոլֆին . իսկ ի Վենետիկ՝ նոյն  
հայկական խնդրոց քննութեան համար ա-

առնձին վճռով (1307, մարտ 18), հինգ սընդիւկով դրուեցան :

Դեսպանին յանձնուած էր որ Վենետաց վնասը քննէ ու ձեռք ձգէ, ու հարկ տեսած ատեն կարող ըլլայ զիջանել (ի 20,000 դրամոց Ամարին Սինիոլոյի և ի 4,500 դրամ պահանջից Վոլտէրոն տէլլա Սրլակայի և այլոց). Նոյնպէս չորս առ հարիսր բաժէն ազատութիւն ուզել, և ջանալ կրկին հաստատել առաջին պարգեւագրութեանց պայմանները. և որովհետեւ Վենետք ալ պարարկան էին առ թագաւորն Հայոց, նոր փոխառութիւն մ' ալ ընել կամ տուրք մ' ալ դնել հարկ համարուեցաւ, ու քանի որ այսպիսի անստոյգ և անորոշ վիճակի մը մէջ էին, արգելք դրուեցաւ Վենետաց, ու ամէն կողմ հրատարակուեցաւ, որ չկարենան երթալ ի Կիլիկիա :

Դեսպանն Տոլֆին՝ արքունի պահանջից ու յԱյաս կողոպտելոց վնասը հատուցանելէն ետքը, յաջողեցաւ ձեռք ձգել ի պատանի թագաւորէն Լեւոնէ Գ., ցանկացեալ նոր Պարգեւագիրը (1307, մայիս 20), որ փռանկ լեզուովը և բովանդակութեամբն՝ մեծաւ մասամբ նման է իր հաւուն՝ Լեւոնի թ ձեռքով տրուածին յամի 1276. միայն թէ քիչ մը ամփոփել կը թուի Վենետաց համարձակու-

թիւնը, պարտաւորելով որ երկրէն հեռացած ատեննին ինքզինքնին ծանօթացընեն. հասարակապետութենէն ալ կու պահանջէ դհատուցումն միասուց, եթէ Հայ ոք կամ օտարազգի՝ իրենց հպատակներէն զըրկանք մը կրէ : Կու պահանջուի որ Պայլն հաւատարմատթեան վկայութիւն տայ իրեններուն համար անոնց՝ որ ուզենան փոխառութիւն ընել, և Այսայ ծովապետն (capitano) գրով վաւերացընէ . և եթէ Այս քաղքէն դուրս ուզենայ ոք զայս ընել, տեղւոյն տեսուչն յԱյս զրկէ զնա առ Պայլն և կամ առ ծովապետն :

Մեծագոյն թերեւս կարեւորութիւն ունեցող պարզեւագիր մ'ալ կը գտնուի ի դիւնս, և որ արդէն հրատարակուած է, և կու թուի այս ժամանակին վերաբերիլ . բայց որովհետեւ կու պակսի ի նմա թուականն, անուն տուողին և վերին, իտալական լեզուն ալ՝ որով գրուած է՝ անհարթ և դժուարիմաց ըլլալով, կարելի չէ հաստատել զժամանակն, ինչուան որ չզիտցուի՝ թէ ով էր Թոմաս Պոնտումիէր, որ հրեշտակութեամբ եկած էր այլեւայլ խնդրոց համար . որով հաւանական կ'երեւի մեզ թէ հնագոյն պէտք է ըլլայ խընդիրն և շնորհն, և ոչ յաւուրս Լեւոնի Գր, այլ երկրորդին . զասն զի նուիրակին կողմանէ եղած խնդիրներէն մէկն ալ է եկեղեցի մը ու-

մը. ախորժելի է մեզ անջինջ թողուլ նա և պահապանին աւանդութիւնը, թէպէտ և ոչ այնշափ հաւանական, թէ ինքն Երանելին եկած ու բնակած ալ ըլլայ յայնմ սենեկի : Ներեն ընթերցողք մեր այս զարտուղաւթեան, եթէ զարտուղաւթիւն ալ համարուի այսպիսի խնդրոյ մը հետազօտութիւն, մինչ մեր գըլխաւոր նպատակն էր քննել՝ թէ այս նորահրաշ անձն, որ յիրաւի նշանաւոր եղաւ իր համացեղից մէջ, քաջութենէն զատ՝ որով իր ամէն յաջորդները գերազանցեց, ու ամենէն աւելի վեր՝ վարուց անարատութեամբ և զիտութեամբ, — որովհետեւ գրաւոր վաստակ մ' ալ ունի, — դրած է ինքն ալ դաշինք ընդ Վենետաց : Թէպէտ ի դիւանս դեռ գտնուած չէ, այլ վճիռ մը նշոյլ կրնայ համարուիլ՝ թէ դաշն մը դրած ու պարգեւագիր ալ տուած ըլլայ, համանման արդեօք՝ թէ նորաձեւ ի հայրենականացն : Գոյութիւնը կու յայտնէ Ասեանէն տրուած վճիռ մը (1310, ապրիլ 21), յորում կու հրամայուի հատուցանել զպահանջս ազնուազարմ թագրատայ Պայլի, որ զայս պաշտօն վարած է ի Հայս ի 1289—90. և վճռոյն մէջ կը յիշուի անոր 300 դրամի ըրած ծախքը՝ ի թագաւորէն Հայոց նոր Պարգեւագիր մը ընդունելու համար. որով յայտնի կ'ըլլայ թէ այս Պարգեւագիրս տը-

րուած է ի Հեթմոյ՝ յառաջնում ամի անթագ թագաւորութեանն (1289). կու յիշուի այլուր, թէ յամսեան օգոստափ նոյն տարւոյն գեւեւու ի Հայաստան էր Պայլն այն, և ի յաջորդ ամի ի 25 յուլիսի արձակեցաւ ի պաշտամանէ պայլութեանն :

Կու հաստատէ զայս և պատմութիւն գենուացոց, որ նոյն 1298 տարւոյն մէջ ընդունեցան նոր Պարգեւագիր մը ի ձեռն Բենեդ Զաքարիայ իրենց դեսպանին, և կամ ի նախընթաց ամի՛ ի Լեռն թագաւորէ շնորհուածին հաստատութիւնը, և հիմայ անհետեղած է Հեթմոյ այդ տուրքը, որպէս և շնորհեալն առ Կադալանս Սպանիոյ յամի 1293:

Հեթմոյ թագաւորութեան երրորդ տարին (1291) թէ կիպրոսի թագաւորին և թէ իրեն՝ նոր դեսպան մը զրկուեցաւ, չեմ գիտեր ի՞նչ պատճառաւ. այլ հաւանական կու համարիմ թէ անշուշտ այն մեծ դիպուածին համար, որ հասաւ ի վերայ ամենայն քրիստոնէից և մանաւանդ արեւմտեայց հաստատելոց յարեւելս, իրենց ամուր ապաւինին՝ Աքքեայի զրաւմամբ ի թշնամեաց, որով և վերցաւ անկէ երեսփոխանն և մեծ Պայլն Վենետիկոյ, և Եգիպտոսի սուլդանն սկսաւ այնուհեաեւ սպառնալեօք խօսիլ և վարուիլ Հայոց և Կիպրացւոց հետ. ուստի փութաց Հեթում գրել

առ թագաւորս արեւմտեայց և առ Սրբա-  
զանն Հռովմայ, որ և նա կու գրէր առ թա-  
գաւորս Անդղիոյ և Փռանկաց, որ օգնու-  
թեան հասնին. և այն վախճանաւ կու պա-  
տուիրէր և իր կողմանէ պատրաստել կու  
տար քսան նաւ : Մինչեւ որ անոնք շար-  
ժեցան, ստիպուեցաւ Հայոց թագաւորն՝ իր  
երկրին քանի մը հեռաւոր ու եգիպտական  
իշխանութեան դրացի սահմանները՝ թողուլ  
սուլտանին, որ արդէն հասեր դրաւեր էր  
Հայոց կաթողիկոսութեան ամուր աթոռը՝  
զՀռոմկլայ, և ըստ կարի յարդարելով ու  
կարգի դնելով իր աշխարհին և տանը գոր-  
ծերը, և թագաւորութիւնը թողլով թորոսի,  
իրմէ ետքը աւագագունին յեղբարսն, ինքն  
Հեթում միանձնական ձեւ ըզգենլով՝ կ'ա-  
ռանձնանայր ի վանս (1293) : Նոյն տա-  
րւոյն մէջ հանդիպեցաւ Գենուաց ու Վենե-  
տաց նաւամարտն, և վերջնոցս վտանգիլն  
յԱյս, ու ի յաջորդին (1294) վրէժխըն-  
դրութիւնը՝ գերելով իրենց հակառակորդաց  
նաւ մը ի կոռիկոս. և յերրորդում ամի՛  
(1295) մարսիլիացի նաւուն դէպքը, զոր  
յառաջ յիշատակեցինք: Այս ամէն դիպուած-  
ներով խանգարեցան խաղաղական յարա-  
բերութիւնք և տուրեւառք Վենետաց ընդ  
Հայս. ուստի և ստէպ խորհուրդք կու գու-

մարուէին և վճիռք կու արուէին յատենի  
վենետկոյ . ինչպէս յամին 1294 (նոյեմբ .  
24) կու սահմանէր , որ յետ արկածից պար-  
տութեան նաւամարտին ի Հայս , ազատած  
վաճառականք կարող ըլլան դառնալ ի Վե-  
նետիկ՝ որ և իցէ նաւով . ու յաջորդ տար-  
ւոյն ապրիլի 25 վճռով երեք քննիչք կու  
դրուէին՝ այն ազատուածներուն գործը տես-  
նելու , խիստ պատուիրանաւ և սպառնալեօք  
քսանուհինգ լիպրա տուզանաց , որպէս զի ի  
դքսէն և ի խորհրդականաց հրամայուած-  
ներուն անփոյթ չըլլան : Նոյն կամ նման  
ու ընդարձակագոյն վճիռ մ' ալ կու կրկնուի  
միւս տարւոյն (1296) փերրուարի 15 թուա-  
կանաւ՝ ի ժողովոյ Քառասնից խորհրդակա-  
նաց՝ երեք քննիչ ընտրելու : Ի սակաւատեւ  
իշխանութեանն՝ թորոս՝ որ Տէր կամ Պա-  
րոն Հայոց կ' անուանուէր և ոչ թագաւոր ,  
կ' երեւնայ թէ արտօնագիր մը տուած է Վե-  
նետաց՝ ազատութեան ի Մսիս և ի Տարսոն ,  
որպէս գուշակուի ի բանից որդւոյ նորա Լե-  
ւոնի Դ՝ որ իրեն յաջորդեց <sup>1</sup> :

1296 թուականին՝ միանձն – թագաւորն  
Հեթում՝ որ վասն անձին զերկինս միայն կու  
խնդրէր , այլ հայրենեաց և իր արքունեաց

1. Cartulaire յ՛ւլ 177 :

Համար գամենայն՝ որ անոնց պատշաճական  
էր և փափաքելի, իր փոխանորդին Թորոսի  
հետ կ'երթար ի Կ. Պոլիս ի տես քեռն  
Ռիթա կայսրուհուոյ, որ Միքայէլ կայսեր ա-  
մուբինն էր, և հօն պատշաճ կու համարէր  
իբրու բարեկամ միջնորդ ըլլալ՝ երկու գըժ-  
տելոց մէջ, Վենետիկ և Գենուացոց՝ իրարու  
հետ հաշտութեան : Այս մէկ անգամ չէր  
որ Հայոց ազգապետն Հասարակապետու-  
թեան այտպիսի պէտք մը կու դարմանէր .  
այլ կարեւորագոյն ու շատ աւելի բարձր ա-  
տեանի մ' ալ կու դիմէր, տասնուհինգ տարի  
ետքը (1310) սոյն այս Հեթմոյ եղբայր՝ Ոշին  
թագաւորն Հայոց, աղերսելով առ քահա-  
նայապետն Հոռվմայ՝ ներողամիտ լինել առ  
Վենետիկ և արձըկել ի բանադրանաց . զոր  
կու հաւաստէ մեզ պատասխանի հայրապետին  
առ թագաւորն մեր (1314, մարտ 4) :

Այս միջոցին, երեքտասաներորդ դարուն  
վերջին տարիները, շփոթք և ժխորք կու  
հանդիպէին յարգունիս Հայոց : Լեւոն Բ  
թագաւորի եօթն որդւոց աւագագոյնք՝ Հե-  
թում և Թորոս՝ յամելով յօտարութեան, ե-  
ռանդուն եղբարց մէջ եռանդնագոյնն Ամբատ՝  
ճարտարութեամբ համոզեց զաշխարհիկս և  
զեկեղեցականս, նա և Թաթարաց դանն ալ  
որոյ զերագոյն իշխանութիւնը կու ճանչնային

յայնժամ ամենայն տրեւելք, ու հանդիսապէս թագաւոր օծուեցաւ. և երբ Եղբարքն ետ դարձան, զթորոս անգթութեամբ սպաննել հրամայեց, և աւագագունին Հեթմոյ աշքերը կուրացընել տուաւ, թէպէտ նա պանչելեօք կրկին ստացաւ զլոյտ աշացն : Այս միջոցին հանդիպած է (1297-8), ինչպէս ուրիշ տեղ յիշեցինք, Սմբատայ ընդ Միքայելի Լոթաթարոյի ըրած առուտուրն սսկեթել դիպակաց, զոր ընծայ զրկեց առ սուլտանն Եգիպտոսի :

Բայց արդարախոհն Հեթում՝ աշացը նախախնամական լուսաւորութեամբ քաջալերուած, բռնաւոր Եղբայրը կու վուրնտէր յարքունի գահէն, ու Թաթարաց հետ դաշնակցելով, երեք տարի անընդհատ (1299-301) սուրը՝ աղօթամատենէն վեր ու բարձր բըռնելով, զհետ Եգիպտացւոց կու պնդէր, կու վուրնտէր մինչեւ ի հեռաւոր և յանծանօթ սահմանս, և դիւցազնաբար թուրը մխելով, նշան յազթանակի կու թողուր զայն՝ իրենց բերդին երկաթի դրանց վրայ . ու կ' երթար յԵրուսաղէմ գոհանալ զամենայաղթ Փրկչէն, և արքունական գաւազանը նուէր կու թողուր տեղւոյն մեծ վանքին, ուր և ցայսօր կու պահուի առաջնորդ Պատրիարքին գանձատան մէջ : Հեթում իր արքունեաց ընտանի աղ-

մուկը դադրեցընելու համար, թագաւորեցուց տարաբազգիկ սպանելոյն թորոսի մետասանամեայ մանկիկը՝ Լեւոն Գ. որոյ հարսն կը խօսէր զԱկնէս՝ դատրիկ քեռն իւրոյ Զապլունի և Ամաւրեայ հռչականուն իշխանին Տիւրոսի, որ բռնացած էր իր Ենթիկ եղրօրը և Կիպրոսի թագաւորութեան վրայ. և ապա միւսանգամ մէկդի դնելով զէնքերը, կրկին կ' տռանձնանար ի վանս :

Նոյն տարւոյն մէջ խնդիր մ'ալ յուզուեցաւ, թէպէտ չենք գիտեր որպիսի, Վենետաց հահասարակապետութեան և պարոն Օշնի մէջ, որ հաւանօրէն Հեթմոյ եղբայրն էր, և Լեւոն երրորդէն ետքը թագաւորեց. հասարակապետութիւնն (1301 հոկտեմբ. 1) հրամանագրով կը պատուիրէր Աինիոլյ Պայլին՝ հատուցանել ինչ որ պարտըկան էր առ Օշին, և պատշաճական ոճով գրել և ծանուցանել առ նառով կ' ենթադրուի թէ կարեւոր էր խընդիրն և խիթալի Վենետաց :

Անշուշտ ասկէ աւելի կարեւորագոյն խընդիր մ' էր, շահու կամ վաճառականութեան, որոյ համար Վենետկոյ պետութիւնն կույանձնէր թէոփիլ Մոչենիկոյի, Գենուաց տրապիզոքը կամ գրամասեղանները քանդողին յԱյաս, որ ի Հայաստան երթալով՝ թագաւորէն կամ Այասայ գլխաւոր վարչէն (ret-

տօրէ) ինդրէ նորութիւններ չընել : Բայց  
քիչ ատենէն իրենք Վենետիք մեծ և չարաշար  
նորութիւն մ' ըրին, Այասայ ցամաքաբեր-  
գին վրայ յարձակելով ու կողապտելով, ինչ-  
պէս քիչ յառաջ յիշեցինք . և որոյ շփոթա-  
կան արգասիք և հետեւանք տեւեցին երեք  
տարի, մինչեւ ցնոր դաշնադրութիւն և պար-  
գեւագիր Լեւոնի Գ(1307, մարտ 20) : Այն  
յուզման եւ շփոթից երեքամեայ միջոցին՝ այլ  
և այլ խորհուրդներ և հոգք յաճախեցին ի  
Վենետիկ . և շատ անզամ որոշուեցաւ. դես-  
պաններ զրկել՝ գործերը կարգի դնելու հա-  
մար, սահմանելով նա և ուղեկիցքն և անոնց  
ծախքը, որ հաւասարաշափ պիտի ըլլային  
իրմէ յառաջ դեսպան գնացող Ուկոլինոյի  
Յուստինեան . և ընարուեցաւ ի նոյն պաշտօն  
և ի գործ Յակ . կուիրինոյ : Բայց որովհետեւ  
սա հրաժարեցաւ և անով քսան փող կրոսից  
տուգանաց տակ ինկաւ, վնասն իրեն շնոր-  
հեցին : Դեսպանութեան ծախուց համար ալ  
կրկին սահմանեցին (1307, մարտ 29) փոխ-  
առութիւն մ' ընել հինգ փողոյ առ հարիւր  
շահով, եթէ կարելի չըլլայ լեցընել զայն  
յերկու և կէս առ հարիւր սակէ վաճառա-  
կանաց ի Հայս, և ուր դեսպան զրկեցին  
զՃոլֆինոյ Տոլֆին . իսկ ի Վենետիկ՝ նոյն  
հայկական խնդրոց քննութեան համար ա-

ռանձին վճռով (1307, մարտ 18), հինգ սըն-  
դիկուք դրուեցան :

Դեսպանին յանձնուած էր որ Վենետաց  
ֆլամ քննէ ու ձեռք ձգէ, ու հարկ տեսած  
ատեն կարող ըլլայ զիջանել (ի 20,000 դրա-  
մոց Մարին Սինիոլոյի և ի 4,500 դրամ  
պահանջից Վոլդէրոն տէլլա Սրլակայի և  
այլոց). Նոյնպէս չորս առ հարիսր բաժէն  
ազատութիւն ուզել, և ջանալ կրկին հաս-  
տատել առաջին պարգեւագրութեանց պայ-  
մանները. և որովհետեւ Վենետք ալ պար-  
տըկան էին առ թագաւորն Հայոց, նոր փոխա-  
ռութիւն մ' ալ ընել կամ տուրք մ' ալ դնել  
հարկ համարուեցաւ, ու քանի որ այսպիսի ան-  
ստոյգ և անորոշ վիճակի մը մէջ էին, ար-  
գելք դրուեցաւ Վենետաց, ու ամէն կողմ  
հրատարակուեցաւ, որ չկարենան երթալ ի  
Կիլիկիա :

Դեսպանն Տոլֆին՝ արքունի պահանջից ու  
յԱյաս կողոպտելոց ֆլամ հատուցանելէն  
ետքը, յաջողեցաւ ձեռք ձգել ի պատանի  
թագաւորէն Լեւոնէ Գ., ցանկացեալ նոր  
Պարգեւագիրը (1307, մայիս 20), որ փռանկ  
լեզուովը և բովանդակութեամբն՝ մեծաւ մա-  
սամբ նման է իր հաւուն՝ Լեւոնի Բ ձեռքով  
տրուածին յամի 1276. միայն թէ քիչ մը  
ամփոփել կը թուի Վենետաց համարձակու-

թիւնը, պարտաւործլով որ երկրէն հեռացած ատեննին ինքզինքնին ծանօթացընեն. հասարակապետութենէն ալ կու պահանջէ դհատուցում վնասուց, եթէ Հայ ոք կամ օտարազգի՝ իրենց հպատակներէն զըրկանք մը կրէ : Կու պահանջուի որ Պայլն հաւատարմութեան վկայութիւն տայ իրեններուն համար անոնց՝ որ ուզենան փոխառութիւն ընել, և Այասայ ծովապետն (capitano) գրով վաւերացընէ . և եթէ Այա քաղքէն դուրս ուղենայ ոք զայս ընել, տեղւոյն տեսուչն յԱյա զրկէ զնա առ Պայլն և կամ առ ծովապետն :

Մնծագոյն թերեւս կարեւորութիւն ունեցող պարզեւագիր մ'ալ կը գտնուի ի դիւնս, և որ արդէն հրատարակուած է, և կու թուի այս ժամանակին վերաբերիլ . բայց որովհետեւ կու պակսի ի նմա թուականն, անուան տուողին և վերջն, իտալական լեզուն ալ որով գրուած է՝ անհարթ և գժուարիմաց ըլլալով, կարելի չէ հաստատել զժամանակն, ինչուան որ չգիտցուի՝ թէ ով էր Թոմաս Պոնտումիէր, որ հրեշտակութեամբ եկած էր այլեւայլ խնդրոց համար. որով հաւանական կ'երեւի մեզ թէ հնագոյն պէտք է ըլլայ խընդիրն և շնորհն, և ոչ յաւուրս Լեւոնի Գ, այլ երկրորդին . վասն զի նուիրակին կողմանէ եղած խնդիրներէն մէկն ալ է եկեղեցի մը ու-

Նենալ յԱյաս. և պարզեւագրողն կու խռատանայ որ երբ Պայլն դայ և հօն հառտատուի բնակութեամբ՝ եկեղեցւոյ մը շինութեան պատշաճական տեղը ցոյց կու տրուի : Ասոր նման խնդիրն և խոստումն փոխագրութեան տանն ի Ասոյ յԱյաս, և միւս խնդիր մ'ալ, որ Անտիռքայ վիքարը կամ Ասսայ արքեպիսկոպոսն՝ կատարել տայ Վենետաց հոգեւոր պէտքերը յԱյաս, ինչպէս, զմկրտութիւն, զհարսանիս, և այլն, ասոնք յայտնի նշանակներ են թէ այն ժամանակ չկար հօն ոչ եկեղեցի և ոչ քահանայ Վենետկեցի . վասն զի առաջին թագաւորքն Լեւոն Ա. և Հեթում տուեր էին անոնց եկեղեցի ի Մտիս և ի Աիս. և 1261 շնորհուած Հեթմոյ երկրորդ պարզեւագրին մէջ (յորում նախ առաջին կու յիշուի Այաս), եկեղեցւոյ խօսք չկայ . իսկ տասն տարի ետքը իր որդին Լեւոն Բ (1271) յայտնապէս կու յիշատակէ Վենետաց եկեղեցւոյ ու քահանայի շնորհումը յԱյաս : Ուստի այս մասնաւոր Պարզեւագիրս՝ որոյ վրայ է խօսքերնիս, և յորում տուողն կու յիշէ իր հայրը, թէպէտ առանց անուան, Լեւոն Երկրորդէն տրուած է՝ ոչ ի թագաւորութեանն, այլ յիշխանութեան, այսինքն է ի միջոցի 28 հոկտ. 1270 ամին և յանուարի 6էն յաջորդ 1271 տարւոյն :

Նուիրակն կամ գեսպանն ուրիշ կարեւոր խիդիրք մ' ալ ունէր, այսինքն՝ տրոց և բաժից ազատութիւն, ինչպէս, յԱյս՝ նոյնպէս ի հնգեսին քաղաքսն, ի Սիս, Մսիս, Ատանա, Տարսոն և Կապեսդրա՝ (որ հաւանականարար կոպիտառ է), և զրով ալ հրամայել զայս ի քաղաքսն. որում և հաւանութիւն տրուեցաւ ի Հայոց : Բայց երբ գեսպանն առաջարկեց որ նոյնպիսի ազատութիւն չնորհուի նա և յաւանս (Casali), Պարգեւագիրն կու զանազանէ, թէ կան այնպիսի աւանք՝ որոց կարելի է այդ չնորհքը ստանալ, բայց կան նա և սեպհականութիւնք պարոնայց և ասպետաց՝ որոց թագաւորն անգամ չէ կարող զայդ հրամայել : Ուրիշ մանր խնդիրներ ալ կային . օրինակ իմն, որ Հայք պատշաճական պատուով վարուին Վենետաց հետ՝ երբ յարգուածոց քննութիւն չըլլուի . որք յայտնի է թէ հաւանելի համարուեցան . բայց երբ կու պահանջեն որ իրենց արկեղք քննութեան չենթարկուին, Պարգեւագիրն՝ խոհեմութեամբ կ'ըսէ՛ թէ զանոնք վայելչապէս քննելն ձեզի վնաս չէ, այլ մեզի օգուտ : Նոյնպէս ի խնդրելն՝ որ երբ Պայլն մէկու մը համար վկայէ թէ Վենետ է, այնպէս ընդունելի ըլլայ, կու հաւանի . բայց եթէ հակառակն

հաւաստուի, կամ թէ սուտ ամբաստանուի, սառղք իրենց պատուհասն ընդունին : Ուրիշ աննշան խնդիրք ալ կան, զորս զանց կ'ընեմք յիշել . փափաքողք և հետամուտք կրնան գտնել և քննել ի բնագրին, որ արդէն հրատարակուած է<sup>1</sup> :

Cartulaire, յ'էլ 176.



Դրամ Եգիաս (Հին Այաս) քաղաքի .

~~~~~

Է.

ՆՈՐ ՅԱՐԾՆՉՈՒԹԻՒՆՔ ՀԱՅ - ՎԵՆԵՑԱՑ



Երբ Լեւոն Գ. նոր Պարգեւագրաւ՝ Հայոց
ու Վենետաց մէջ հաշտութիւնն և մտերմու-
թիւնը վերահաստատեց, իսկոյն Հասարա-
կապետութիւնն որոշեց ընծաներ դրկել առ-
թագաւորն և առ պարոն Օշին, որ յետ Հեթմոյ՝
նախապատիւ համարուած էր արքային հօրեղ-
բարց մէջ, մինչ Հեթում միանձնական կեան-
քով հրաժարած էր ի փառաց և յընծայից.
վճիռն կու սահմանէր, որ եթէ ընծայից ծախ-
քըն ձրիատուր չըլլայ, կէս առ հարիւր սա-
կէն հայթհայթի. գէթ այսպէս կու հասկընամ
վճոռյն խօսքը : Սակայն շուտով լուր հասաւ՝
Հայոց մատաղահասակ թագաւորին աղիտալի
սպանման, իր մենտորին՝ աւագ հօրեղբօր
Հեթմոյ Բե հետ, որոյ խոհական առաջնոր-
դութեամբ և պաշտպանութեամբ կու յուսայր
Սիսուան՝ զգօն և երջանիկ թագաւոր մ'ու-
նենալ. այլ այն պայծառ ծաղիկն իր բող-
բոջին մէջ կտրուեցաւ, մանաւանդ թէ անաս-

նարար ոտնակոխ եղաւ, Պիլարկու թաթար զօրավարէն դաւաճանելով ի մահ (1307, նոյեմբ. 27). զոր՝ կարելի շըլլալով առանց արտասուաց յիշել, հարկ է լռել, և կամ ազնուական միսիթարութիւն համարիլ՝ սպան. չին արժանաւոր պատուհասը՝ սպանմամբ, թաթարաց մեծ դանին հրամանաւ, ու լեւոն Գ. թագաւորին մնացած երկու հօրեղբարց, Հեթմոյ խեղեփ եղբարց, Օշնի և Ալինախայ, իրաւացի պահանջմամբ։ Ասոնք՝ ըստ բնութեան արգանդակիցք՝ առաւել քան զբնութիւն մեծ յարգ և սէր ունէին իրարու վրայ, մինչեւ իրարու առաջարկել արքունական թագը, որուն՝ թերեւս վայրկեանք ինչ ժամու միայն՝ ժառանգութեան իրաւանց վրայ խտիր ու զանազանութիւն կու դնէին. բայց կայտառ երիտասարդն Ալինախ՝ որ քանի մը վայրկեան յետնածին էր, ազնուապէս յարգելով եղբօրը իրաւունքը, թողուց Օշնի զթագն. ուստի մեծաշուք հանդիսիւ պսակեցին զնա, երբ Ալինախ՝ թաթարաց մեծ դանին հաւանութիւնն առնըլով դարձաւ ի Հայաստան (1308)։ Վենետիկոյ հասարակապետութիւնն ալ իր կողմանէ փութաց ի մեծարանս նորապսակ արքային, հարազատին և իշխանացն Հայոց. և Օշնի թագաւորելէն քանի մը ամիս ետքը՝ սահմանեց

(1308, սեպտ. 5) Յովհանն Ֆլուգարինի նոր դեազանին ձեռքով ընծաներ զրկել, տառնումէկ լիպրա կրոսից արժէիւք. դեազանին պիտոյից համար ալ՝ իննեւտասն կրոս օրոշեց : Եւ որովհետեւ Ֆլուգարինի, ինչպէս թուի, ի կորոն էր այն միջոցին, Պետրոս կրատենիկոյ դուքսն զրեց առ նա (1308, սեպտ. 22) իր խորհրդակցացն ու հասարակագետութեան հաւանութեամբ, երթալ դեպանութեան պաշտամամբ առ թագաւորն Հայոց, իշխանութիւն ալ տալով փոխառութիւն ընելու՝ յորոց և իցէ, ի վենետաց և յօտարաց, խոտանալով անոնց ի վենետիկ գալէն կամ պահանջելէն երկու ամիս ետքը հատուցանել : Նոյն օրը կու գրէր դուքսն և առ Օշին թագաւոր՝ յանձնելովնմա զնոր դեպանն . զրեց և առ Ալինախ, աղաչելով որ իր խնամքն անպակաս ընէ Ֆլուգարինեայ վրայ : Նոյն ոճով, միայն անուանց ու պաշտամանց փոփոխութեան զանազանութեամբ, զրեց և առ Հեթում տէր կոռիկոսի, որ հետաքննական երկասիրութեամբն Պատմութեան Արեւելյա (Historia Orientalis) իրու հայ Մարկոս-Պողոս մը՝ ծանօթ է արեւմըտեայց, և իր համանուն հօրեղբօրորդւոյն նման (Հեթմոյ Բ.) յետոյ առանձնանալով ի վանս Պրեմոնստրատեանց, վերադասեց ըզ-

վարս կրօնաւորութեան քան զփառս արքունեաց : Գրեց և առ Հեթում տէր Նղբոյ , որ և հազարապետ էր տէրութեան Հայոց (Capitano) . և որ առաւել զարմանալի է , նա և առ Հեթում թ , չգիտնալով թէ արդէն մեռած էր նա՝ իր եղբօրորդուոյն Լեռն Գի հետ . եթէ գրուածն՝ օրինակողաց անմտադրութեամբ կրկնագիր պատճէն մը չէ առաջին նամակաց , ինչպէս հաւանական կ'երեւնայ :

Զոսգարինիի դեսպանութեան երթալն ուշացաւ , կարծեմ նախ հիւանդանալուն պատճառաւ , և ապա պատրաստութեանն ի չու , և մտհուամբն բոլորովին խափանեցաւ . թերեւս կերպով մը պատճառեցաւ Հայոց ընդ կիպրացիս գժտուելին , որոց երկուքին ալ բարեկամ էր Հասարակապետութիւնն , և որ երկու ազգաց նոյն ժամանակաց պատմութեան մէջ մեծ և նշանաւոր դէպք մը կու համարուի , և այն պատճառաւ երկար գրութիմք եղած են առ միմեանս , առ Պապն Հռովմայ , առ օտարս , և առ նոյն իսկ Հասարակապետութիւն Վենետիկոյ . առ որս յետոյ կու գրէր և կ'աղերսէր նա և կիպրոսի թագաւորին կին՝ դշխոյն Խպապէլ , ազատել իր ամուսինը (Ենրիկ թագաւորը) արգելուածն յաշխարհին Հայոց (1310, օգոստ . 20) : Օտար

ըլլալով մեր նպատակէն այս գիպուածոց և գրութեանց վրայ յերկարել, զհետաքնողն կու դրկեմք առ Մասլադրի (Histoire de Chypre, II. 116). Տարի ու կէս վրան անցնելէն ետքը՝ փոխանակ Թուգարինիի վախճանելոյ՝ պայլ և դեսպան ընտրուեցաւ Գրիգոր Տոլֆին, (որ երբեմն Գէորգ ալ կոչուած է), ի վերջ կոյս ապրիլի կամ ի սկիզբն մայիսի, սահմանելով նմա թոշակ իրրու դեսպանի եւեթ։ Եւ որովհետեւ առ թագաւորն Հայոց զրկուելիք ընծաներն մնացեր էին ի Կորսն, կու գրէր գուքսն (1310, մայիս 12) առ բերդապահն (Castellan) կորոնի և Մոթոնի, որ նոր դեսպանին յանձնէ զանոնք, յորս կ'երեւնայ թէ կայր նա և վրան (tenda) մի. իսկ իր վախճանելոյն մնացած ինչը պահէլ, մինչեւ իմացընեն ինչ ընելիքը։ Երկրորդ օրը կու գրէր առ թագաւորն Օշին (1310 մայիս 13), յանձնելով նմա զՏոլֆին իրրու Պայլ. իսկ իրբեւ դեսպան՝ առանձինն կու գրէ աղաչելով մտիկ ընել քանի մը խնդրըւածոց՝ զոր բերանացի կամ գաղտ յանձնած էր նմա։ Ինչպէս յառաջնումն, այս անգամ ալ կու գրէ և առ այլ իշխանազունաերկրին, և մի և նոյն օրուան մէջ՝ նախ քան զամենեսին՝ առ Հեթում գունդստապլ, ոչ միայն յանձնելով նմա զՊայլն, այլ և ա-

առնձինն շնորհակալ ըլլալով որ մեծապէս
խնամարկութիւն կ'ընէ Վենետաց, ինչպէս
պատմեր էին ազնուատոհմն Նիկողայոս Առ-
բողինի և այլք։ Այսպէս ողոքով կու գրէր և
առ միւս Հեթում տէրն Նորի, վասն զի
կրկուքն այլ հզօրք էին և մեծահարկիք ի
պետութեան Հայոց։

Այս առթով և ի նմին աւուր կու գրէր
գուքսն նա և առ Պայլն Նեկրոբանդի, այն
խնդրոց համար՝ որ պիտի գիւրացընէին Հա-
սարակապետութեան բարեկամութիւնն ընդ
Հայս. և էր՝ սախապել զՅովակիմ Սանուտոյ.
որ երկու խալէիք կողոպտեր էր զՀայս և
զկիպրացիս, և որք իրենց վրէմն առնելու
համար բանտեր էին զՎենետոս, որպէս զի
իրեք ամոռու միջոցի մէջ գայ առ գուքսն, հա-
շիւ տալու իր ըրած գործոյն, ապա թէ ոչ՝
յանցաւոր պիտի համարուի։ Թերեւս այս և
արիշ խնդրոց համար Օշին թագաւորն ալ
զեռպան զրկեր էր ի Վենետիկ զզօրականն
Գերարդ և զՆիկ. Մորոզինի, յորոց գուքսն
լսեց զամենայն, և յանձնեց անոնց (1310,
մայիս 14) բերանացի պատասխանել թագա-
ւորին. և որովհետեւ Օշին միջնորդութիւն
ալ ըրեր էր առ Քահանայտպետն ի նպաստ
Վենետաց, քիչ յառաջ (1310, ապրիլ 7)
շնորհակալու մտօք վճռեր էր Ատեանն, որ ի

ժողովոյ Հնդետասանից քննուած Հայոց թաւ-
գաւարին խնդիրքն՝ ընդունելի ըլլան, իբրու
վճռուած ի Մեծ Ատեանէն։ Ուրիշ վճիռ
մ'ալ տրուած է նոյն օրերում (1310, ապրիլ
14), որպէս զի ի Կիլիկիա գացող դեսպանն
վարձէ դարիթ մի տասնուհինգ կամ քառան
նաւաստեզք և ոչ աւելի, առ ի տանել առ
թագաւորն զահմանեալ ընծայս. բայց որով-
հետեւ նա արդէն վարձած էր մեծ խալէ
մը իբր երեսունուերեք կամ երեսունեւհինգ
նաւաստեզք, ատեանն կու զիջանի (1310,
մայիս 30) թոյլ տալ նմա՝ եթէ հաւանին
գունցք նաւազին (Consules marinariis): Քիշ
օրէն (3 յունիս) կը շնորհուի նմա կէս առ
հարիւր շահէն՝ առնուլ որշափ ինչ կարեւոր
է ի կառուցումն մթերանոցաց, և վենետաց
հասարակապետութեան ի Հայս ունեցած
ուրիշ կալուածոց, և եղած ծախքը ծանու-
ցանել ի Վենետիկ։ Երկրայութիւն չկայ որ
դեսպանին առաջին խնդիրն պիտի ըլլար
Պարգեւագրին նորոգութիւնը, զոր և կա-
տարեց Օշին, ինչպէս կու վկայէ իւր որդին
(Լեւոնի) իր տուած Պարգեւագրին մէջ. բայց
որովհետեւ կորսուած է Օշնի պարգեւածին
պատճէնն, ուստի և անյայտ մնայ գրու-
թեան թուականն։

Թագաւորին և իշխանազանց, առ որս

գրուեցան վերոյիշեալ թուղթք, անուանկը ու պատուոյ կոչումն նշանակուած են ի գիրսն Դաշնադրութեանց (Patti) յէջո 79—81, ու րիշ ազգաց համապատիւ և համանման իշխանաց և կարդինալաց անուանց հետ, իրու յատկապէս սահմանուած երեսագիրք կամ հասցէք, և են հետեւեալքն:

Օչին թագաւորին, HOISSINUS de Altitonanti genere Ruppinorum:

ALINAC filius quondam Regis Armenie, Dominus Lambri, Montis Livonis, Gogolaqui *, Tarssō. Կրկին գրուած կայ իր հասցէն հետեւեալ կերպով. Alinach Regis frater et quondam Serenissimi Regis (Leoni II) filius.

FRATER JOHANNES Ordinis Fratrum Minorum, Primogenitus quondam Serenissimi Regis Armenorum. ուր դրիշն կը յաւլու, nunc mortuus (այժմ վախճանեալ). բայց ուրիշ մը կ'ընթեռնու տօնակ (այժմ կրօնաւորեալ), որ է Հեթում թ.

Օչին թագաւորին մահուընէն ետքը՝ յետագայ երեսագիրք կու գտնուին՝ ինչուան առ մեզ հասած.

* Այսինքն, Լամբրուն, Մոնլեոն, Կուկլակ և Տարսոն. յետանոյս ուրիշ օրինակի մէջ գրուած է Caissi.

Leo (IV) Rex Armenie.

AYTONUS Seneschalcus Regis Armeniae.

AYTONUS de Negrino Camberlanus et Gubernator Regni Armenie.

Կրկին գրուած կան ասոնց անուանքն De Harmenia խորագրաւ:

AYTONUS Dominus Nigrini, Capitanus Curie Regis Herminorum.

AYTONUS Conestabilis Hermenie.

Ի զիրս և ի յիշատակարանս գտնուած այդ անուներէն յայտնապէս կ'երեւի, թէ 0շնի թագաւորութեան ատեն (1307-1320) յաճախ և սերտ էին փոփոխակի վերաբերութիւնք Հայոց ընդ Վենետուաց, ինչպէս նաև յետոյ իր որդւոյն Դ. Լեւոնի ժամանակ։ Վերը յիշուած Գրիգոր Տոլֆին դեսպանին ի Հայաստան երթալէն քանի մը տարի եագը, նոր դեսպանի պատրաստութիւն կու տեսնուի։ և թերեւս նոր եկոզի մը ի Հայոց վասն զի նոյն տարւոյն (1310) սեպտեմբեր 24 ու հոկտեմբեր 10 թուականներով տրուած ու րոշմանց մէջ՝ Ատեանն կու վճռէ Հայոց թագաւորէն եկած ընծայ մետաքսեայն ու ոսկէդիպակը (drapis setae, drapis ad aurum) վաճառել, որ հաւանօրէն Դամասկոսի կամ ուրիշ արեւելեան քաղաքի մը հիւսուածք էին, ու անոնց գնով նոր դեսպանին

յանձնել իրեն զրկուելիք ընծաները. և որովհետեւ շվաճառուեցան, և կ'ենթադրէին թէ անոնց արժէքն ըլլայ իբր քսան լիպրա կրոսից, սահմանուեցաւ որ նոյնչափ արժէիւք ընծայք գնուին ու զրկուին առ թագաւորն։ Որոշակի եւս կու յիշատակուի գեսպան Հայոց ի Վենետիկ 1311 թուականին, յուլիս ամսոյն տասնին. և որում կը շնորհուի անմաքս ի ցամաք հանել 560 թիակ ընդ մեծ և ընդ փոքր՝ ի կազմած երկու խալէից և միոյ նաւու։ Գրիգոր Տոլֆինի ալ՝ նոյն օրեր (յուլիս 17) հրաման եղաւ դառնալ Պեմպոյ Տարտիի խալէիւ, (որ ի Հայոց և ի Կիպրոսէ վաճառք վերցընելու հրամանն ընդունած էր, պայմանաւ՝ որ ձրի տանի Վենետիկցի գեսպանն ի Հայս և ի Կիպրոս). սահմանեցաւ գեսպան Նիկողայոս Մորոզինի, որոյ անունն կը յիշուի 1311 նոյեմբեր 10 թուականաւ տրուած վճռոյն մէջ, ուր խօսք կ'ըլլայ նա և Ախոնա նաւուն կահից և կազմածոց վրայ։

1314 տարւոյն սկիզբը (27 փերբ.) կու յիշուի առ թագաւորն Հայոց զրկուած նոր գեսպան և ընծայ, որոց համար հարկաւոր ծախքն պիտի լեցուէր կէս առ հարիւր բաժէն. և որովհետեւ շրաւեց այն, յօտարաց փոխ առնուելով սահմանեցաւ ի մտից Պաշ-

առնելոյ ծովո (Officiales maris) հատուցանել պարտատեարց . իսկ սոյն պաշտօնէից ալ յետոյ նոյն կէս առ հարիւր բաժիւ հատուցանել իրենց պահանջքը : Ասկէ քանի մը ամիս ետքը (1314, յուլիս 21) դարձեալ կու հրամայուի ընծայ պատրաստել Հայոց թագաւորին համար քսանուերկու լիպ . կրոսից արժէքով : Իսկ երկու տարիէն ետեւ (1316, սեպտ . 5 և 9) ճռխագոյն ընծայք պատրաստաւեցան Հայոց թագաւորին հարսանեաց համար , որ այրիացեալ՝ կ'անցնէր յերկրորդ ամուսնութիւն ընդ Յովհաննայ Եռինէի՝ դըստեր Փիլիպպոսի իշխանին Տարենտայ . և սահմանեցաւ գին ընծայիցն՝ երեսուն լիպրա կրոսից . և թէ զայդ դրամ հայթհայթելու համար՝ դուքսն և խորհրդականք կարենան փոխառութիւն մ'ընել , ուստի և յաջողին , նա և տոկոսեզք , ի հատուցումն այս և ուրիշ կանխաւ եղած փոխառութեանց :

Կորուսեալ գործոց (actes) համառօտ գլխակարգութեան մը մէջ կու նշանակուի վճիռ մ'ալ 1317 կամ յաջորդ տարւոյն մէջ՝ նոր դեսպան մը զրկելու , որ առ ժամն կու խափանուի : Կու յիշուի դարձեալ ի՛ դիմաց դքսին թղթոյ մը առաքումն առ թագաւորն Հայոց , ոչ ի ձեռն դեսպանի՝ ինչպէս թուի , որովհետեւ Փր . Տանտոլոյ Նէկրոբոնդի Պայլն

զրկեց զայն, ինչպէս կու ծանուցանէ սա առ
դուքսն՝ նամակաւն գրեալ ի 1318, յուն. 28,
յորում նշանակէ և զգերիլ վաճառակիր խա-
լէի կրիմանեանց յԱյս՝ ի Սրինոլայ դե-
նուացւոյ:

Երկու տարի վրան անցնելէն ետքը՝ մեռաւ
բարեկամն Վենետաց Օշին թագաւոր, (20
յուլիս, 1320), ժառանգ թողլով իր երկոտա-
սանամեայ գեռահասակ որդին, Լեւոն Դ,
և խնամակալ կարգելով նմա՝ վերը յիշուած
երկու Հեթմեանկը, դքսին հետ թղթակցե-
լու համար, և զՊաղտին մարաջախտ : Նոյն
ժամանակին հանդիպած արշաւանք Եղիպ-
տացւոց ի Հայս, թագաւորին անչափոհա-
սութիւնն, կոռիկոսոյ տեառն Օշին Պայլի
ձեռներիցութիւնք, առ վայր մի վրդովեցին
զկիլիկիա, և որոյ տատանումն հասաւ մինչեւ
ի Վենետիկ. վասն զի Օշնի մահուընէն ամիս
ու կէս ետքը (8 սեպտ. 1320) ատեանն կու
վճաէր որ ի կիլիկիա երթալու պատրաստուած
Պայլն Յովհաննէս Գարողոյ՝ մնայ ի մայրա-
քաղաքին, և իրեն փոխանակ՝ արդէն սահմա-
նուած գեսպանն ուղեւորի, որոշելով նա և
իրեն թոշակին ու ծախուց չափը : Այս դես-
պանն էր Միքայէլ Յուստինեան, որուն մեծ
խնամքով յանձնեցաւ, (թերեւս յառաջ քան
զմահ Օշնի), դիւրացընել վենետացի վաճա-

ռականաց առեւտուրը , Հայոց թագաւորէն խնդրելով որ վերցընէ արդէն սպրդած զեղծ-մունքը , ու կրկին հաստատէ նախկին բարե-կարգութիւնը : Մտադրութեան արժանաւոր վկայականներէն մէկն է՝ իր ձեռքն տրուած հրահանդը , որոյ պատճէնը պահուած է ի դի-ւանս . յորում նախ , կու խնդրէ նորոգել հնա-ւանդ արտօնութիւնը . (Թագաւորն փութաց կատարել զայն՝ ի փանկ լեզու գրուած վճռով մը , 1 մարտ , 1321) , և յետոյ ուրիշ այլեւայլ առաջարկութիւններ կ'ընէ . յորս գլխաւորքն են , որ Վենետիք առանց արգելից և դժուա-րութեան՝ կարող ըլլան իրենցմէ ի Հայս բերուած ոսկին ու արժաթը վաճառել : Թա-գաւորն թոյլտուութիւն ըրաւ ոսկւոյն , բայց արծաթոյն կէսը կ'ուզէր իր փողանոցին մէջ դնել , որպէս զի կարող ըլլայ Եգիպ-տոսի սուլտանին հարկի դրամը հայթհայթել : Կու պահանջէին դարձեալ Վենետիք՝ որ Հայք իրենց փողանոցին կշիռքը փոխեն՝ իրր ան-ճիշտ . որոյ պատախան տրուեցաւ ի մերոց , թէ կշիռք ճիշտ են , և խարդախութիւնն թերեւս կշռողին կողմանէ է : — Խնդրեցին դարձեալ և չնորհուեցաւ Վենետաց , որ կարե-նան գնել առանց մէկէնիմէկ փոխարէն վր-ճարքն ընելու , միայն հատուցանելով դաշ-նագրին մէջ նշանակուած տուրքը : — Տրուե-

ցաւ նոցա աղատութիւն գետանցից, թոյլ-
տուռութիւն կապելոյ զնաւս յերկարթի անուրս
ծովարերդին Այսաոյ, և ապահարկութիւն ի
սովորական սակէ գնման մետաքսեայց և մոր-
թեայց ի Սիռ և այլուր: — Եւ որովհետեւ
նեղ էր նաւահանգիստն՝ շատ բեռ թափելու
անյարմար, իրենց խնդրանաց համաձայնելով
հրաման չնորհուեցաւ, որ կարող ըլլան թա-
փել և ի ծովափն, բաց յարծաթոյ՝ զոր հարկ
էր հանել ի նաւահանգիստն: — Բաց յառանձ-
նաշնորհութեանցո՞ թագաւորին Հայոց մաս-
նաւոր խնամոց կու յանձնուի տէր Նիկո-
լայոս ոմն՝ սարկաւագապետ Տարսոնի. կու
չնորհուի մթերանոց մը (masen) գերեզմա-
նատան մօտ: — Մնացածն կրնան գտնել փա-
փաքողք և հետամուտք՝ մեր իտալերէն գրա-
ծին մէջ¹.

Այս ամէն խնդրուածոց գլուխները կըն-
քուելով արքունական փոքր կնքով, կու
յանձնուի հայցողին, և որ թուի թէ փութով
զրկեր կամ անձամբ բերեր է ի վենետիկ,
և թերեւս յառաջ քան զՊարգեւագիրն Լե-
տոնի որ ի 1 մարտի, փռանկ լեզուաւ, հա-
մաձայն շնորհելումն ի հօրեղբօրդորդւոյն իւրմէ
ի Լեւոնէ Գ., հայ բնագրին հետ և լատին

թարգմանութեամբ և ոսկեղէն կնքօք. որոց համար հին նօտարաց դիւանն կ'ըսէ, թէ Պայլն Գարոզոյ բերեր էր ի Վենետիկ, և հրամանաւ դքսին դրեր էր ի տան Գործակալութեան դքսական ապարանից (Procuratia). և յետոյ միւսանգամ ղրկուեցաւ նա ի Հայս ի սկիզբն 1322 տարւոյն, ընդունելով տասնուշորս լիրայ կրոսից ի նորոգութիւն տանն յԱյաս, և հետը տանելով նա և զպատճէն խնդրոց և շնորհաց առ դեպանն Միքայէլ Յուստինեան, իրրու վաւերական և ապահովութիւն իր հայրենակցաց իրաւանցը, որ յետոյ տրուեցաւ նա և իր յաջորդին Պիանիոյ Մալիրիէրիի, յամի 1326 յինն յուշիսի : Եւ որովհետեւ դեռ մանուկ կամ անչափահաս էր թագաւորն, ինչպէս ըսինք, հաւանական է կարծել՝ թէ ոչ միայն քարտուղարն՝ Կոստանդին արքեպիսկոպոսն Պրազարկի, (յետոյ կաթողիկոս) այլ և պայմաներկին Հեթմեանք դրին իրենց ստորագրութիւնը . ինչպէս կու տեսնուի ի համառօտ վաւերական Պարգեւագրէն, որ հրամանաւ և հաւանութեամբ թագաւորին տրուեցաւ նոյն օրերում (16 մարտ, 1321) Մոնթելուզեցի (Մոնթելիէ) վաճառականաց, որուն կու ստորագրեն երկուքն ալ սոսկ իրենց անուամբն, Հենուա . Հենուա . յորոց մին էր Զամբալյան և միւսն սենեակալ պետութեանն :

թէպէտ և անտարակուսելի , այլ չյաջո-
զեցաւ ինձ գիւտ գումարին . յիշեալ ըն-
ծայից զար այս անգամ Հասարակապետու-
թիւնն ղրկեց առ Լեւոն , և որ անշուշտ
հարկ էր թէ մեծագին և մեծափառ ըլլար ,
թէ ի պատճառս շնորհացն զոր ընդունեցան
ի ձեռն Մալիրիէրի դեսպանի , և թէ վասն
հարսանեաց թագաւորին , որ ի նոյն ամս
կատարեցաւ . վասն զի այն ժամանեակաց առ-
վորութեանն համեմատ կու փութային տր-
քայազուն մանկունքը կանուխ պատկել , ա-
նոնց ապագայն ապահովելու , կամ յուսա-
ցողաց և հետամտից հնարքը կարճելու վախ-
ճանաւ : Իսկ այս անգամ մեծագոյն եւս էր
փոյթ՝ խորագէտ և փառասէր իշխանին կո-
ռիկոսի՝ Օշնի , որդույ ծանօթ պատմըշին
Նեթմոյ , արքունական Պայլի պաշտման
բարձրանալ : Աս հարսնացոյց թագաւորին
իր դստրիկը՝ Ալիծ , և ինքն կին առաւ
զմօրու նորա՝ զերկրորդ կին Օշնի , զՅով-
հաննա , և ոտն առ ոտն յառաջ երթալով ,
և ինչուան մահու շափ հարստահարելով ըղ-
պարոնայս , արքունեաց պատկանաղ զանա-
զան կալուածներ ալ նուաճեց : Թագաւորն
զարգացեալ և սթափեալ , հաւանաբար նա և
դրդեալ յայլոց , իբրեւ արքունի իրաց պար-
տաւոր (lése majesté) սպաննել տուաւ զՕշին

և զեղբայրն (1329). մանաւանդ զի յանդը-
գներ էր նա դատապարտել և սպաննել՝ իւր
իսկ թագաւորին հօրաքոյրը, զգոռողն Զապ-
լուն, զկին հռչակելոյն Ամաւրեայ իշխանին
Տիւրոսի, եղբօր Կիպրոսի Ենրիկ թագա-
ւորին, որ Բ Լեւոնի վեշտասան որդւոց և
դատերաց անդրանիկն էր, և միակ կեն-
դանի մնացած :

Բայց Զորբորդս այս Լեւոն՝ իր բազմա-
ծուի թագաւորութեան քսանուերկու տա-
րիներուն մէջ, — որ աղիտալի եղան Այա-
սոյ կորստեամբ, այլ ուրիշ կողմանէ ոչ նուազ
բարգաւաճ, յորոց այլեւայլ յիշատակք կան
մնան ցայսօր, ինչպէս նա և մատեանք ընտիր
գրչութեամբ, — ջանաց սերտ պահել Վե-
նետիկոյ հետ ունեցած յարաբերութիւնը, թէ-
պէտ և ի հարկէ դիպաց և արկածից իր
երկրին՝ բռնադատուելով երրեմն ամփոփել
զայն, ըստ ոչ յօժարութեան և շահու Վե-
նետաց : Այս վերջիններս ոչ միայն դիւա-
նագիտական (diplomaticus) և վաճառակա-
նական յարաբերութիւններ պահեցին հետը,
այլ և ուրիշ կերպով մ' ալ. այսինքն առանձ-
նականի մը գրուածներով և ջանիւք, ի պահ-
պանութիւն թագաւորութեան Հայոց : Գրողն
էր գերահռչակն Մարինոյ Սանուտոյ Դոր-
չելլոյ, ծանօթն և համախոհ մերոյս Հեթմոյ-

Անտոնի Կոռիկոսեցւոյ, որ սիրով ազատութեան Սրբոյ Երկրին՝ ոգւով շափ վառուած, (առ որ օժանդակ մեծ կու համարէր զթագաւորութիւն Հայոց), կու Թղթակցէր ընդ թագաւորին, ինչպէս քաջայայտ կ'երեւնայ իր մէկ ծանօթ թղթէն՝ զոր գրած է իրը յամի 1326, յորում կարեւոր ծանօթութիւնք կան. և նախ, թէ Լեւոն գրեր էր յառաջադոյն առ Սանուտոյ. և երկրորդ, զի պատգամաւորութեամբ զրկեր էր առ քահանայապետն Հռովմայ՝ զԵղ. Թաղէոս արքեպիսկոպոս Կաֆայի, հանդերձ ընկերակցօք. և երրորդ, թէ և ինքն Սանուտոյ անձամբ և գրովք կու յորդորէր զՊապն և զծիրանաւորս, ինչպէս նա և զթագաւորս Փաանկաց և զԱնգղիոյ, անոնց պարոնայքը, զկոմմն Հան նովիքի և զայլս յօդնութիւն Հայոց. — շորորդ, թէ զայս ամենայն պիտի ծանուցանէ թագաւորին՝ Եղ. Հուգոյ ի կարգէ Քարոզզաց : Սանուտոյի ոչ միայն թուղթք՝ ամփոփեալք ի հաւաքմունս (Gesta Dei per Francos), այլ և իր հոչակաւոր ժամանակադրութիւնն լի են ծանօթութեամբք այն ժամանակին Հայոց թագաւորութեան վիճակին վրայ, և թելագրութեամբք ի նպաստ ասոնց : Նոյն վախճանաւ մեծ ջանք ցուցին քահանայապետքն Յովհաննէս իբ և յա-

շորդքն . բայց Փռանկաց և Անդղիոյ թաւ-
գաւորաց իրարու հետ հակտուակութիւնք ,
արեւմտականաց գանգաղութիւնք , անվախ-
ճան վէճք և քննութիւնք զհաւատոց Հայոց ;
անօգուտ ըրին Անուսոյի և Հեթմոյ Ջանքն՝
ի պահպանութիւն կիլիկեան իշխանութեան
Հայոց , որ նախամարտիկ էր քրիստոնէու-
թեան , ինչպէս նա և օգուտ և պարծանք
քրիստոնէից :

Դառնանք հիմայ յուղզակի յարաբերու-
թիւնս Հասարակապետութեանն , որ ի ժա-
մանակին կարեւոր խնդիր մալ ունէր , զոր
առանց մեզ յայտնելոյ՝ 1326-7 ամաց վճրոք
կ'իմացընեն . և զոր քննելու վախճանաւ ըն-
տրեցան պետական գիտնականքն կամ ի-
մաստունք (Savij) : Ծոյն ատեններն ստէպ
գեսպանութիւնք կ'ըլլային Հայոց ընդ քա-
հանայապետական արքունեաց , և որք շատ
անգամ Վենետիկին կ'անցնէին . երբ նոյն
պաշտամամբ՝ յամի 1327 Յակոբ թարգման
եկաւ ընդ Ռեմունդի , սա մնաց ի Վենետիկ ,
ուր այլք ուղեւորեցան ի Հռովմ , թերեւա
կարեւոր խնդրոյ մը համար , որպէս կարելի
է կարծել՝ հաշտութեանն Հայոց ընդ կի-
պրացիս , թէպէտ և արդէն հաստատուած էր
այն , և քահանայապետն Յովհաննէս . իբ
խնդակցութեան նամակ գրած առ թագա-

ւորս երկուց աղջաց, բայց դեռ քանի մի պայմանք ի կախ մնացած էին, և առանձին խնդիրք կային. ուստի և Հասարակապետութիւնն կու յանձնէր Պայլին Հայոց՝ երթալ խօսիլ կիպրացւոց հետ (1328). իսկ յերկրորդ ամին կու սահմանէր ընտրել գիտունս, և անոնց ձեռագք քննել զդէպս Հայոց և կիպրացւոց։ Նոյն ժամանակին դեսպան մ'ալ զրկուած էր ի Հայս, և իրեն ծախուցն համար երկու առ հարիւր փող. և ինչպէս կ'երեւնայ, միւս այլ դեսպան կու պատրաստուէր, որ թուի թէ ըլլայ հին ծանօթ դեսպանն Գր. Տոլֆին, և քիչ ետքը կ'որոշուէր պատգամաւորութիւնն և առ թագաւորն Հայոց ըսելիքն։ Նոյն ատեններն ի Վենետիկ էր նա և Հայոց դեսպանն, և որոշուեցաւ (19–21 յուլիս, 1329) ի հասից պետութեան ընծայ տալ նմա 4 լիպրա կրստից. և մինչ ստէպ յանձնարարութիւնք կ'ըլլային ի Հայտատան երթալու խալէ և նաւեր շինելու, ամենայն խնամքով պատուէր կու տրուէր հօն պատահած անցից քննութեան, և ութ օր կու յերկարէր իմաստնոց ժողովոյն քննութեան համար ժամանակն։ Եւ որովհետեւ դարձեալ եկած հասած էին դեսպանք ի Հայոց (1331), կու հրամայուէր

ժողովականաց՝ խօսիլ անոնց հետ, և խնդրել
որ յարմարցընեն ընդ թագաւորին, որ վեր-
ցընէ իր և հօրը ատեն վաճառականաց վրայ
դրուած հարկաց և բաժից ծանրութիւնը՝
Այս պահանջից վրայ, ինչպէս կու յիշէ ըն-
թերցողն, մանրամասն ծանօթութիւն տուեր
էր Հասարակապետութեան՝ Պետրոս Պրա-
կատին, և թէ պատճառք եղած էին Հայոց
ընդ Եղիպտացիս պատերազմունքն, և վերջ-
նոցս չարաշար զարնուելով Այասոյ քով
(1330), վրէժխնդիր յարձակմամբ տիրելն
քաղաքին (1331). որով վաճառականաց վը-
նաս հետեւելով և բաժից ծանրութիւն, կա-
մայ ակամայ պիտի նեղուէին ի Հայոց. և
հարկ կ'ըլլար դարձեալ կարգել քննիչս յիւ-
մաստնոց (20 յուլիս, 1332), ութ օր պայմա-
նելով. միանգամայն փութոյ պնդութեամբ՝ ի
վերանորոգութիւն դաշանց՝ գեսպան ղրկել առ
թագաւորն՝ զոմի ի վաճառականաց. ուստի
կու յանձնուէր պաշտօնէից Աղի (Officiales
Salis maris) ճանապարհի ծախքը հայթհայք
թել, որպէս զի ուղեւորի առաջին ճամբայ
ելլող նաւով։ Մինչ այս պատրաստութեան
վրայ էին, ստիպողական նամակք կու համ-
նէին ի Հայոց, յորոց ի քննութիւն։ կու
վճռէր ծերակոյտն (28 դեկտ. 1332), որ
դուքսն և խորհրդականք ընտրեն երեք իւ-

մաստունս, որ պարտաւորին տռան փողոյ առւգանաք մինչեւ ցկէս յանուարի ծանուցանել զրով ինչ որ իրենց պատշտճական երեւնայ։ Ղրկուած դեսպանն էր Յակոբ Դրէվիզան, որ իմացուց գործոյն յարմարութեան գժուարութիւնը. որովհետեւ զրգըւած էին Հայք՝ Վենետաց կողմանէ ցոյց տրուած քանի մի հակառակութեանց համար. և Պետրոսի Բիծալոյ՝ զրանաարկեալն Գրնդարինի ազատելուն, որով բռնագատեցան պատռհասել զնա՝ ձեռուըները կտրել տալով։ Այս ամէն բանին համար ծերակոյտն զումարելով ի խորհուրդ (17 յուլիս, 1333) սահմանեց որ դուքսն իր խորհրդականներովն և ժողովով Վաթունից՝ դեսպան կարգեն վաճառականներէն մէկը. որ ի Սիսուան երթալով՝ բերանացի խօսի ընդ թագաւորին, պահանջելով իրմէ տրուած Պարգեւագրին դաշինքը պահպանել, յայտնելով նա և Յակոբայ Դրեվիզանի զրով բերած գանգատանաց գլուխները, և Պայլին թուղթը՝ զոր թագաւորին դիմացը դնէ, եթէ սա չգիտնալ ձեւացընէ։ Ասկէ զատ, խնդրել որ այն կողմանց արծաթոյ նուազութեան համար՝ ի Վենետաց բերուած արծաթոյն գինը բարձրացընէ, և մէկ ոսկի տռակատը՝ քսանուշորս թագւորին դրամոց արժէք սնենենայ.

և յառեւտուրս՝ առ պակասութեան արծա-
թոյ՝ վարուն համարուի նա և ուկին։ — Ե-
թէ թագաւորն՝ ժամանակին պիտոյից հա-
մար, (ինչպէս կու պնդէր նա և իր դեսպանն
ի Վենետիկ) պահանջելու ըլլայ տուրս մէկ
առ հարիւր, ըսէ իրեն՝ թէ մերքն կամաւո-
րապէս ի շնորհս նորա և ոչ ի պարտուց՝ կու
վճարէին զայս, և թերեւս նորէն վճարեն։
— Թէ որ պահանջէ զբաժ վաճառուց, ջա-
նայ ազատ ընել. իսկ թէ այդ անհնարին է,
գէթ յարքունի տրոց ազատութեան շնորհըը
ձեռք ձգէ։ — Եթէ ուզենայ յուզել զար-
կեղս՝ որպէս զի ըլլայ թէ գաղտուկ ար-
ծաթ ներս մտցընեն, խնդրէ խափանել զայն-
պիսի հետազօտութիւն. բայց ի ստիպելն՝
գէթ գոհ ըլլայ Պայլին դիմաց եղած երդ-
մամբ։ — Եթէ ուրիշ դժուարութիւն կամ
փոփոխութիւն ուզենայ ընել թագաւորն,
դեսպանն խոհեմութեամբ ընդդիմանայ։ Եթէ
որ այս եղած առաջարկութեանց թագաւորն
չհաւանի, դեսպանն ծանուցանէ թէ Վենետի-
կիր տէրութեան սահմաններէն դուրս պիտի
ելլեն, և հրատարակէ զժամանակ ելիցն մին-
չեւ յառաջիկայ ապրիլ ամիս, և չմեկնողն՝
եթէ վաճառական է, հինգ հարիւր լիպրա
կրոսից տուգանաց տակ ինկնայ. իսկ եթէ ոչ
յիսուն լիպրա. Որոնք երեք տարիէն աւելի

բնակած են ի Հայո և կ'ուզեն հօն մալ՝
աղատ ըլլան . իսկ ուրիշ առւգանելոց ինչը
կամ ձեռագործք չընդաւնուին , բայց եթէ
յիսուն առ հարիւր տուգանօք . նոյն տուգա-
նաց տակ ինկնան ապրիլ ամսէն ետքը վա-
նառք տանողըն ի Հայս : Վենետիկոյ մէջ
ալ ծանուցուի , թէ որոնք տարւոյս դեկտեմ-
բեր ամսէն ետքը նաւելու ըլլան , նախ կի-
պրոս երթալով տեղեկանան թէ թագաւորն՝
Վենետաց հետ իրաւախոհ եղած է . ապա
թէ ոչ չերթան ի Հայաստան . առանց ի Կի-
պրոս հանդիպելու հօն գնացողք՝ ետ դառ-
նան . իսկ թէ ոչ՝ նոյն տուգանաց տակ ինկ-
նան . և այս կարգաւորութիւնք և սահմանք
ծանուցուին Վենետիկոյ Ռեզիդենտ (Rector)
պաշտօնակալաց , Կիպրոսի Պայլէն տեղե-
կանալով , և յանձնուին հանդիսաւոր դես-
պանի , որոյ թոշակն ըլլայ որպէս Յակոբայ
Դրէվիզանադոյի : Առ այս պաշտօն ընտրե-
ցաւ Պետրոս Պրակատին վաճառական . և
իրեն տրուելիք թոշակը՝ պիտի հայթհայթէին
Աղի և Ծովու պաշտօնեալք , շարունակելով
հինգ առ հարիւր հարկը , զոր կ'առնուին
Դրեվիզանադոյի համար . և դեսպանն հայա-
գնաց խալէիւք պիտի ընէր ուղեւորութիւնը :
Ճողովոյն վճռոյն համեմատ՝ Իմաստունք
պարապելով ի քննութիւն այսր ամենայնի ,

ծանուցին դքսին (28 յուլիս, 1333), թէ, որովհետեւ դեռ հասած չեն ժողովոյն կողմանէ առ թագաւորն գրուած ծանր թուղթք, ինչպէս նա և իր դեսպանէն ի Վենետիկոյ առ նա ուղղեաքն, և Լեռն բարեկամութեամբ էր ընդ Հասարակապետութեամն, պատշաճ կու թուի սպասել Պայլին գալըստեան խալէիքն ի Հայոց, հասկընալով թագաւորին միտքը. և ժամանմանէն տասնուհինգ օր եաքը՝ կոչել զնա ի ժողով ծերակուտին, լսել և այնպէս առնել զարժանն։

Ինչպէս յուսալի էր՝ աղմուկն զիջաւ, ու գէթ առ ժամն խաղաղութիւն եղաւ. Լեռն Պթագաւորն՝ նոյեմբեր ամսոյն տասնին նոր Պարգեւագիր մը տուաւ Յակոբայ Դրեվիզանադոյի ձեռքով, որ դեսպանութեան պաշտամամբ վերադարձեր էր ի Հայս : Այս Պարգեւագրին մէջ բաց ի կրկին հաստատութենէ առաջնոց առանձնաշնորհութեանց, կու շնորհուի, նախ. ցփսւոյ և ասուեղինաց արուեստագործաց ազատութիւն ի սահմանեալ սակէ. — Երկրորդ. գինեվաճառք մէկ թագաւորին գրամոյ տուրքէն ազատ ըլլան յեօթնեկի. իսկ եթէ խարդախեն ի կշիռս, տուգանաց տակ ինկնան. — Երրորդ. քաղաքին մէջ գինւոյ կամ քաղցուոյ վաճառականք՝ առ մէն մի չափ (vegete) տուրք կու վճարէին մէկ

նոր դրամ, իսկ քաղաքէն գուրս՝ երկու. կու շնորհօւի իրենց՝ ասկէ ետքը ազատ ըլլալ. — չորրորդ. մորթեաց, մուշաակաց և փայտից վաճառողք՝ ապրանքնին ազատաբար մտցընեն ու հանեն Տարսոնի նաւահանդստէն. — հինգերորդ. գնողք ասուի, ստեւոյ այծեայց և նմանեաց՝ նախատուեալ Պարգեւագրին համեմատ վարուին. — վեցերորդ. ազատ ըլլան նա և առուեղինաց չափողութեան առւրգէն. — եօթներորդ. բռնադառութիւն չըլլայ Վենետաց՝ ցորեան և աղ գնելու. — ութերորդ. Վենետացի գողք պատժուին յարգունեաց. — իններորդ. Վենետաց պարտականք բանտուին՝ մինչեւ ի հատուցումն. — և տասներորդ. ամենայն Վենետք չանարգուին և չի նեղուին :

Այս թուղթս՝ չէ յետինն զոր գրեց Լեւոն թագաւոր առ դուքսն, այլ վերջին ծանօթ Պարգեւագիր, զոր ընդունելով Դրեվիզան դեսպան՝ պանծանօք և ուրախութեամբ կու բերէր. բայց ի ծովաչու ճանապարհորդութեանն՝ կողոպտեցաւ ի Գենուաց, ինչպէս յառաջ ալ յիշատակեցինք. սակայն Պարգեւագիրն անվեաս հասաւ առ դուքսն, և զօրեց քանի մը տարի եւս՝ ցորչափ կու տեւէր Հայոց իշխանութիւնն ի վերայ ցանկալւոյն Այսաոյ. իսկ անկէ ետքը (1337) ալ կարօ-

տութիւն չկայր նոր Պարդեւագրի մը , երբ
շահաստանն այն կուրացաւ կամ խափա-
նեցաւ ի վերահաս բռնութենէ թշնամեաց .
և թէպէտ առ վայր մի զերծաւ , այլ ոչ բա-
մելով դառնալ կրկին ի օգութիւն , ի սպառ
աւերեցաւ անշքացաւ , և իւր ամէն փտռքն
և մեծութիւն՝ սուզան ի խորս ծովածոցին
և ի ներքոյ դերբկացն :

Եղած հաշտութեան և դրուած դաշանց
պահպանութեանն համար , ետեւէ եղաւ Հա-
սարակապետութիւնն իր կողմանէ ապահովու-
թիւն տալ թագաւորին պայմանաց ամենէն
աւելի ծանրագունին համար , պատուիրելով
Պայլին (1334 , օգոստ . 13) որ ի Հայաստան
արծաթ բերողաց ծանուցանէ՝ արծաթոյն
կէսը դնել յարքունի փողանոցի . որուն եթէ
դրժեն՝ պատժուին . Այս կերպով խաղաղու-
թեամբ անցան առեւտրոյ և շահուց վերջին
տարիներն յԱյաս և ի Հայս . ափառս , որ
խիստ կարճատեւ եղաւ այն ժամանակն , և
յոր չկըրցան դաշնադիրքն վայելել ընդ եր-
կար , Լեւոն թագաւոր և Տանտոլոյ գուքս .
վասն զի նոյն ատեն արդէն սկսած էին խը-
լլրտմունք և աղիտաբեր ասպատակք թշնամի
այլազգեաց՝ յերից կողմանց . ի հարաւոյ՝
Եգիպտոսի սուլտանն , յարեւելից՝ Հալպայ
սուլտանն , և ի հիւսիսոյ՝ Գարամանք : Թա-

գաւորն մէկմէկու ետեւէ դեսպաններ կու զրկէր առ քահանայապետն Հռովմայ, առ թագաւորու Անդղիոյ և Փաանկաց. Պապին յօրդորանգը կու միաբանէին Փաանկաց, Նաւարրայ, Արագոնի և Պուէմիոյ թագաւորք՝ յօգնութիւն Հայոց բայց ինչպէս յաճախ հանդիպած է՝ թէ յառաջ և թէ ետքը, ոչ մէկն շարժեցաւ. գոհ եղան միայն դրամական նպառու մը զրկելով, մինչ ասպատակըն՝ Կիլիկիոյ հարստութիւնը կու գերփէին. և թէպէտ Հայք զայրացած՝ վերջին ճգամբք և ատելութեամբ յԱյաս գտնուող բոլոր այլաղդէքը կոտորեցին (1336), բայց վրան տարի մը անցնելէն ետքը՝ ստիպուեցան թոգուզ զայն ի կամս և ի ղոհ իրենց հզօր հակառակորդին, սուլտանին Եգիպտոսի : Այլազգեաց այն կոտորածին ատեն՝ կային և շատք պարտատեարք Վենետիա . ուստի փութաց ծերակոյտն զրել առ Պայլն Կիպրոսի (1337, սեպտ. 3), որպէս զի ամէն մէկ պարտաւորաց ծանուցանէ՝ նշանակել թէ ո՛րշափ ինչ կու պարտին Սառակինոսաց, և պարտուց հատուցման գրաւ տալ, որ զրկելով ի Վենետիկ՝ պահեստի զրուին ի պաշտօնարանն Յորենոյ (Ufficio de' Frumenti), մինչեւ ստուգուին իրաւացի պահանջողք, և իրենց արդար և պատշաճական հատուցումն ընդունին : Ասկէ

առաջ ալ (20 օգոստ.) գրեր էր դարձեար ծերակյտն առ նոյն Պայլ, որ նաւատորմիղը ի Կիպրոս հասած ատեն՝ խորհրդակցի տորմը զապետին հետ, և որոշեն թէ արժան է երթալ ի Հայս՝ թէ ոչ. եթէ երթն պատշաճ դատուի, նաւապետն կարող ըլլայ քսանուերկու օր՝ մնալ հօն, իսկ եթէ ոչ՝ տասնեւութ օր ի Կիպրոս :

Քանի մը տարիէն ետքը՝ ասոր նման պարտք մ'ունեցան Վենետիկ առ Սառակինոսս, որոյ նկատմամբ կու ծանուցանէ թագաւորն Լեւոն 1341 մարտ 1 թուականաւ նամակովը. որ իր վերջին գիրն է, ինչպէս նա և վերջին թուղթ մինչեւ առ մեզ հասած Սիսուանայ թագաւորաց առ Հասարակապետութիւնն Վենետիկոյ : Երկրին խաղաղութեանն ու անդորրութեան համար՝ Լեւոն հեռացուցեր էր անտի զամենայն Սառակինոսս. և որովհետեւ անոնցմէ ոմանք պահանջ ունէին ի բնակչացն, Եգիպտոսէ դեսպան գալով սպառնալեաք կ'ուզէր որ հատուցուին : Այդպիսի անհամբոյր պատգամաւորութիւն մը արգիլելու համար, փութաց Լեւոն իր կողմանէ հատուցանել Վենետաց պարտքերն ալ, ու անդորրագիր առնելով՝ պահանջողը ետ դարձընել . և ծանոյց առ դուքսն թարթ . Կրատենիկոյ, որ մնացորդ

պարտքն ալ վճարէ, որպէս զի շի սախպուի
բանագատութեամբ առնուլ ի Վենետաց.
և մի առ մի կու նշանակէր հայկական կշռք՝
դշափ բամբակին, զոր վաճառականք Վենետք
գներ էին յայլաղգեաց. և որոյ գումարն՝
ըստ նշանագրութեան ի հաշուեմատեանս
բաժտանն Այասոյ՝ կու հառնէր ի 24,107
դրամ թագւորին. բայց Սառակինուք 2,890
թագւորին գումար մ' ալ կու պահանջէին,
որով հարկ եղաւ վճարել ամէնը մէկտեղ
27,000 թագւորին : Պարտական եղողներէն
երեքն՝ որովհետեւ աեարք էին ընչից ի Հայո,
11,000 թագւորին անոնցմէ առին, և 16,000
մեաց Վենետաց կամ Հասարակապետու-
թեան պարտքն : Վաճառականական իրաց
հետամտից, նիւթոց արժէից ըստ սրոշեալ
կշռոյ, և անոնց բաժի յարքունիս՝ մեծապէս
հետաքննական է Հայոց և Վենետաց առւրեւա-
ռական յարաբերութեանց այս վերջին վաւե-
րականն : ¹

Դիւանաց մէջ ասկէ երեք տարի յառաջ յի-
շատակ մ'ալ կայ Լեւոնի (1338, 29 յուն.),
յորմէ կու գուշակուի թէ կամ գրով և կամ
գեսպանի ձեռքով խնդիր ըրած էր, և Հա-
սարակապետութիւնն կու պատուիրէր յղել

1. Տե՛ս բ L'Armeno - Veneto, II p. 240.

առ նա՝ քսանտախտեայ հին նաւ մի, ըստ
գնոյն զոր պատշաճ համարին պաշտօնեայք
նաւարանին :

Երիտասարդական երեսունուիրեք կամ ե-
րեսունեւչորս տարուան հասակին՝ մեռաւ
Լեւոն (1342, օգոստ. 28), և դժբաղդաբար՝
ինչպէս կ'երեւնայ, ոչ բնական և անդորր մա-
հուամբ, այլ զոհ մ'ըլլալով իր սերտ մտեր-
մութեանն ընդ Լատինաց և մանաւանդ ընդ
քահանայապետական Դրան : Կրնանք ըսել
թէ իրեն հետ վերջացաւ և թագաւորական
տոհմ և պանծալի զարմն Ռուբինեանց, և
Հեթմեանց . վասն զի անտարակոյս է, թէ
իրմէ յառաջ վախճաներ էր Հեթում՝ իր
դեռարոյս որդեակն, որով սպառեցաւ յա-
ռաջնոյն Հեթմոյ սերեալ զարմն, տեւելով
տասուերկու ազգ, երեք հարիւր տարի . և
հարկ եղաւ փնտոել խնդրել մերձաւոր ժա-
ռանդ մի ի սերընդոց իգական սեռի . որոց
չէր ինկնար ըստ սալեան օրինաց՝ թագաւորա-
կան աթոռ և իշխանութիւն ի վերայ Հայոց .
ուստի և թագաւոր ընտրեցաւ մերձաւոր ազ-
գականն (cousin) Լեւոնի Դի ի մօրէ . այսինքն
որդին իր Զապլուն հօրաքեռ և շատ անգամ
յիշուած Ամաւրեայ՝ եղբօր թագաւորին կի-
պրոսի, կի կամ Գուրիտոն . որով փոխանակ
Ռուբինեանց՝ Հայոց թագաւորութեան ցեղն

եղաւ լիւզինեան , որ բաղգաւոր առհմ մը չեղաւ . վասն զի երկու տարի վրան անցնելէն եպքը (1344) սպաննուեցան Գուփտոն և իր Պեմունդ եղբայրն , և թագն յանձնուեցաւ այս վերջնոյս փեսային , կոստանդնիք , որդւոյ քաջին Պաղտին մարածախատի : Աա իրր քան տարի թագաւորեց , յորս կամաց կամաց կու նուազէր նշոյլ փառաց , զօրութիւն և հարսաւութիւն Սիսուանայ երկրին և թագաւորութեան Ռուբինեանց . զի այս անուամբ կու կոչուէր մինչեւ ի վերջ տէրութիւնն Հայոց ի Կիլիկիա :

Ուրիշ տեղ յիշեցինք կոստանդին թագաւորի դեսպանն ի Վենետիկ (1346 , սեպտ . 3) , ընծայիւք ցփսեաց և ոսկեդիպակաց՝ երթալով առ քահանայապետն , որոց բաժն ազատ շնորհեցաւ : Երկրորդ տարին (1347) զրկեց դեսպանս առ Ռուքսն և առ Պապն , զկորուսեալն Այաս վերստին ձեռք ձգելու համար՝ անոնցմէ օգնութիւն խնդրելով . կղեմէս Զ քահանայապետ զրեց (25 սեպտ .) յորդոր առ դուքսն , որուն առաւել քան այլոց՝ հարկ էր որ ցանկալի ըլլար՝ Հայոց ծռվաւն դշխոյին վերստին կանգնումն՝ դաշնակցի դըշխոյին Աղրիականի : Յաջողեցան Հայք անգամ մի եւս օգնութեամբ Ասպետաց նորէն ազատել զԱյաս յեգիպտական բռնութենէ .

որ կարծես թէ բաղդին բերմամբ՝ ջրասոյզ
լինելու դատապարտուած՝ միւսանգամ կու
վերցընէր յալեաց իր բրգապսակ գլուխը, ա-
պա ի սպառ խորասոյզ ըլլալով. այնուհետեւ
ոչ ոք յիշեց Ախուանայ ճոխութեան բանալին,
և զհամաշխարհական հրապարակն այն վա-
ճառականութեան։ Շարժեցաւ արդեօք գոռող
դշխոյն աղրիական՝ ձեռք կարկառել իր կըրտ-
սեր քրոջ՝ յայնպիսի կարեւորագոյն պահու,
թէ՝ ըստ ցուրտ հաշուոց քաղաքագիտութեան
կամ շահասիրութեան՝ անփոյթ եղաւ. — Թեր-
եւս լաւագոյն ըլլայ իր լոռութիւնն կամ մեր
տգիտութիւնն՝ յայսմ մասին։ Զկայ, կամ
ինձ ծանօթ չէ, ուրիշ յարաբերութիւն մի
կոստանդին թագաւորիս ընդ Վենետաց.
բայց իր ժամանակ կու յիշուին, օրինակ
իմ, Հայք կաֆայի, որոց համար կու գրէր
Պէրտի պէյ (1358, սեպտ. 26) առ Գութիու
թիմուր կուսակալ Սուլղաթի, պահանջել
ի Վենետաց՝ ինչ որ իրենց նաւատորմն կո-
ղոպտեր էր իր հպատակ Հայոց վաճառա-
կաններէն :

Տարուէ տարի կու մօտենար վախճան սերտ
հաղորդակցութեան Ռուբինեան թագաւորու-
թեան և արեւելեան քրիստոնէից՝ ընդ արեւ-
մըտեայս. տկար ներկայացուցիչն կոստանդ՝
իր ամէն ջանփովն և ստէպ դեսպանութեամբ

առ թագաւորս քրիստոնեայս և առ գլուխ
նոցա քահանայապետն Հառվմայ, կու տագ-
նապէր, շկարենալով պահպանել և պնդել ի ձե-
ռին՝ երբեմն բաւական ընդարձակ երկիրն և
բարգաւաճ քաղաքները, որ մի առ մի նուա-
ճեցան յԵզիպատացւոց, յիշխողաց Հալպայ
և ի Գարամանաց, մանաւանդ ծռվայիններն,
որ դիւրագոյն ճանապարհք էին հաղորդակցու-
թեան ընդ արեւմուտս, սկսեալ յԱյասոյ, ի
գեղեցիկ ափանց Միջերկրականի և Փաքուն
Ասիոյ, մինչեւ ի Տարսոն, ի ծռվային մայրա-
քաղաք Կիլիկիոյ, և ընկան ի ձեռա թշնամեաց
(1360) : Կու մնայր միայն կոռիկոս' ամուրն
և զարմանալին, որ լաւագոյն խորհրդավ կամ
յուսահատութեամբ՝ հետեւեալ տարին (1361)
անձնատուր եղաւ ի Պետրոս Ա՛ թագաւոր կի-
պրօսի : Քաղաքաց հետ՝ հարկաւ և անպատրս-
պար գաշտակողմն Սիսուանայ ոտնակոխ կ'ըլ-
լար յայլագգեաց, Հայոց թագաւորին ապաս-
տան մնալով միայն լեռնակողմն և հօն գտնուած
բերգերն, որոց գլուխ էր մայրաքաղաքն
և ամրագոյնն, մանաւանդ թէ թագաւորն
բերգից՝ Սիս, գեղեցիկ և հզօր ծնունդ հան-
ձարեղին և հզօրի Լեւանի Առաջնոյ, հիմնա-
գրի թագաւորութեանն Հայոց : Իշխանու-
թեան սահմանաց ամփոփուելով՝ կ'ամփոփուէր
և սիրտ կոստանդնի, ու կու մեռնէր 1363

թուականին՝ շթողլով ժառանգ արու. վասն զի իր երկու որդեակքն , 0չին և լեւոն, ապագայ մատաղ յոյսք Հայոց , հօրերնուն աշքին առջեւ մեռած էին :

Հարկ էր դառնալի լիւզինեան պայազատս , յորս աւագագոյն էր Պեմունդ՝ որդի ձիւանի եղբօր կի թագաւորի : Աա իր իրաւունքն ու իշխանութիւնը զօրացընելու դիտմամբ՝ փութաց դիմել անձամբ առ քահանայապետն Հռովմայ , և անոր նախաձեռնութեամբ ընդունել զթագն առաջարկեալ : Անհանճարխորհուրդ մի շէր այս , թէպէտ և ոչ ամենայն Հայոց երկրին հաճոյ : Երիտասարդ էր Պեմունդ , ու ի Հռովմ երթալու ատեն՝ ըստ պատահման կամ մասնաւոր դիտմամբ Վենետիկն անցաւ , կամելով թերեւս աթոռոյն հաստատութեան առաջին կապերը կցորդել : Այլ բաղդ՝ կամ գերագոյն կամք՝ այլազգ տնօրինեցին . վասն զի ի նոյն 1363 տարին՝ մեռաւ ի Վենետիկ , ինչպէս կ' աւանդէ նորագիւտ ժամանակագիրն փուանկ՝ Տարտել : Թէ ինչպէս և ուր թաղուեցաւ , — գուցէ յայտնէ մեզ դեռ եւս անծանօթ դիւան մի կամ Վենետիկոյ Տարեգիրք մի , և որոց քննութիւնը կու յանձնենք հետամտից :

Երկու տարուան ծփանքէ ու բռնաբարութիւններէ ետքը՝ (1365) թագաւորեց ուրիշ

(Գ) Կոստանդին մի, որդի Հեթմայ ջամ-
բըռլայի, որ մի էր ի պայլից Լեւոնի Դ,
մինչ Ուրբանոս Ե քահանայապետ կ'առաջ-
արկէր, - ինչպէս պատշաճագոյն էր, - թա-
գաւորեցուցանել զեզրայր տարաժամ վախ-
ճանելոյն Պեմունդի՝ զԼեւոն Ե. աստի ծա-
գեցաւ երկպառակութիւն, որ չարագոյն հա-
րուածն է ազգաց, մանաւանդ ի տկարու-
թեան իւրեանց. Խաւարաբորք թատեր վրայ՝
խորհրդապէս իմն վեր երեւեցաւ սգաւոր կին
մը այրի, ու երբեմն թագումի. և ուղեց
փորձել զյետին յարաբերութիւն տիրական
հայութեան ընդ Վենետիկոյ: Այդ կինն էր
Մարիամ դշխոյ, ամուսնացեալն Կոստանդին
Բե և դուստր Օշին Պայլի և Յովհաննայ՝ եր-
բեմն դշխոյի Օշին թագաւորի, դստեր Փի-
լիպպոսի իշխանին Տարենտայ: Փութաց սա-
գեպան զրկել՝ առ հին դաշնակից և շա-
հակից Հայոց, Հասարակապետութիւնն Վե-
նետիկոյ. բայց թէ զ՞ զրկեց, բնչ գրեց կամ
խօսել տուաւ, յանուանէ ու ի վաւերական
գրութեանց բան մի ձեռուընիս հասած չէ:
Սակայն դքսին կողմանէ տրուած պատաս-
խանն, որ բարեբաղդաբար կու պահուի ի
դիւանս ծերակուտին, 1368 հոկտեմբեր 11
թուականաւ, կու ծանուցանէ մեզ, թէ Հա-
պարակապետութիւնն անմոռաց պահելով ըզ-

Նախնի մտերմութիւնն և զհաճութիւն օգտի
 Հայոց տէրութեան, կարեկից կ'ըլլայ վտան-
 գին, և ինչպէս յառաջագոյն՝ ասանկ ալ հիշ-
 մայ ձեռքէն ամէն եկածը պիտի ընէ (զսօ
 commodo possimus). թէ, արդէն դաշնաւ-
 կցած է դուքսն իր եղբօր՝ Գենուացոց դքսին
 հետ, որ նաւատորմ կազմեն պատրաստեն։
 և եթէ Եգիպտոսի սուլտանն գրժէ խաղաղու-
 թեան դաշնաց և իրենց պատուոյն, պիտի զի-
 նուորին ի վնաս նորա . և պատուէր ղրկած են
 առ տորմղապեան՝ Գենուացւոց հետ դաշնաւ-
 կցութիւնը պնդել, և սուլտանին հետ հաշ-
 տութեան պայմաններուն մէջ մտցընել նա և
 զՀայս : Եւ որովհետեւ դեսպանք Հայոց
 կ'ըսէին թէ Հռովմայ քահանայապետն խա-
 շակրութիւն հրատարակեր է, պատասխա-
 նեցին, թէ կարելի չէր գործադրել ի ժամա-
 նակին, արեւմտեայց իրարու հետ ունեցած
 պատերազմաց պատճառաւ . իսկ երբ յաջու-
 ղելու ըլլայ անցքն (passaggio) յարեւելս՝
 իրենք ալ իբրեւ դաշնակիցք՝ պիտի ընեն
 գարժանն և զհաճոյն Աստուծոյ : Գենուայի
 դուքսն ալ գրած ըլլալով առ տոժն՝ հաշտու-
 թեան պայմաններու մէջ փակել և զՀայա-
 ստան, շնորհակալութիւն գրուի իրեն և ծա-
 նուցուի դեսպանաց թէ հաճոյ է և մեզ այս :
 Յիրաւի գրուած և կնքուած էին դաշինք

ի մէջ երկոցուն հասարակապետութեանց, որ
երբեմն իրարու հակառակորդ վիճաղք էին
ի վերայ ծովու, ինչպէս յայտնի է՝ ի յեր-
կար գրուածոց որ կա պահուին ի դիւանս
Անեստկոյ . ուր կան և պատճէնք թղթոց
քահանայապետին առ նոսա , առ Յովկաննէս
անուանեալն Բրինձ Անտիգայ , առ Ա-
պետս , և այլն . և անոնց յայտնի խորհուրդն՝
արշաւելու յԱղեքսանդրիա , ի 1370 . բայց
այն զրութեանց մէջ Հայաստանի անուան
յիշատակութիւն չկայ , այլ միայն Կիպրոսի .
որով յայտնի կ'ըլլայ , թէ ըստ գրութեան
ծերակուտին՝ այն ամենայն սահմանուած
էր յառաջ քան զդիմել դեսպանաց թագուհ-
ւոյս Հայոց՝ առ թագուհին ծովու :

Նոյն ժամանակին և Խաչակրաց պատ-
մութիւնք կ'իմացընեն թէ ինչպէս անօգուտ
եղան այն ամենայն պատրաստութիւնք , թեր-
ուղիղ յօժարութիւնք և խոստմունք , Փասն-
կաց և Անդղիոյ իրարու հետ ունեցած ան-
ողոք և ընդդիմամարտ հակառակութեանց
պատճառաւ , ինչպէս նա և այլ փոքրագոյն
պետութեանց յողդողդութեան և տկարու-
թեան . և որոց խիղճ եղաւ այն առթով ան-
օգնական ձգելնին Հայոց տէրութիւնը , և պատ-
ճառ անոր կորստեան , որ քրիստոնէութեան
մերձագոյն ամուր ապաւէն մ'էր ընդդէմ

այլադենից . ասպետական արիութեամբ չփութացին ի սպաս և յօգնականութիւն յետին թագուհայն Հայոց , որ տակաւին ոչ յուսահատ՝ երեք տարիէն ետքը (1371) կու զրկէր զարքեպիսկոպոսն Տարառնի և զՄանուէլ ասպետ՝ հայ ազգաւ , բայց ծնած ի Գենուա և բնակութեամբն հաստատուած ի Նէապոլիս , յորդորելով իր մօրը Յովկաննա թագուհայն ազգականները , որ փութան յօգնութիւն տատանեալ տանն Հայոց , որ մերձ էր ի Կործանում և յաւերք : Վասն զի յետին թագաւորն Կոստանդին (1363-72) բռնաւոր մը համարուած էր և ոչ օրինաւոր թագաւոր , ուստի և բռնաւորի և կողոպտողի մահուամբ մեռաւ . և քանի որ ուրիշ ժառանգ երեւցած չէր՝ նոյն Մարիամ դշխոյ միւսանգամ ներկայանալով , թագապահ կու դրուէր յողջախոհից . և Գրիգոր քահանայապետ կու զրէր (1372 , յանուար 22) առ մայրենի ազգական նորա Փիլիպպոս իշխան Տարենտայ , որ պսակել տալով զնա ընդ Ոթոնի դքսին Պրունզուիքայ՝ թագաւորեցընէ ի վերայ Հայոց , մինչ տակաւին կենդանի էր , ինչպէս թուի , Կոստանդին բռնաւորն , և որոյ բռնական մահուան կերպն քաջայայտ չէ : Բայց Լիւզինեան ցեղէն կար ժառանգն թագաւորութեան Հայոց . ի Վենետիկ մեռնող Պեմունդի

եղբայրն, որդին ձիւանի և թռռն Զապլունի և Ամաւրեայ, Լեւոն Ե, կամ Լեւոն վերջին՝ ի թագաւորս Սիստւանայ և Ռուրինեանց. որ տասն տարի առաջ ետեւէ էր նոյն թագին, և հիմայ՝ Հայոց պետութեան մահամերձ ճգնաժամուն՝ անոնց հաւատարմաց փափաքանօք, և ի նոյն իսկ ի Մարիամայ դշխոյէ՝ հրաւիրուեցաւ :

Սա ի սակաւատեւ ժամանակի իր թագաւորութեանն՝ գիտցաւ գէթ արժանապէս ու փառօք պաշտպանել զյետին ապաստան և զգահ տէրութեանն՝ զԱխ, և սակաւաձեռն հաւատարմօք դիւցազնաբար կռուիլ ընդ բիւրաւորաց Եգիպտացւոց և Բերիացւոց. իմաստութեամբ անձնապահ ըլլալ յուրացողաց և ի մատնչաց. արիաբար կրել սով և վէրք. և վերջապէս խոհականութեամբ և վսեմութեամբ անձնատուր ըլլալ. թագաւորական սրտով և բարձրագլուխ կրել զշղթայս, երթալ ի բանտ յԵգիպտոս, հաճոյանալ յաշս գոռոզ սուլդանին, կալ արձակօրէն ի գիպահոջ, և արեւմտեան թագաւորաց մտադրութիւնը շարժել իր վրայ, գլխաւորաւն Քահանայապետիւս Յետոյ կաստիլիոյ թագաւորին բարեխօսութեամբ՝ եօթնամեայ գերութենէն ազատեցաւ (1382). և համարձակ թագաւորի անուամբ նաւարկելով, ողջունեց ի Հռոդոս զԶապել

քեռդուստր իւր , զհարսն կիր ԳԵ , ուստի
անցաւ ի Վենետիկ , իրբեւ յօրինաւոր հրա-
ժեշտ ազգի և թագաւորութեան Հայոց՝ յերկ-
դարեան դաշնակցէն՝ ի հասարակապետու-
թենէն Վենետիկոյ : Որպիսի՞ օրինակաւ ար-
դեօք տուաւ և սա Կիլիկեցւոց ժառան-
գին , յորոց այնչափ պարգեւագրեր ընդու-
ներ էր , և մանաւանդ այնքան շահ և այնչափ
ոսկի՝ ի փոխարէն արծաթոյն , զոր կու բռնա-
դատուէր դնել ի փողանոցն արքունի . - զայս
պէտք է ուսանիլ իր դիւաններէն ու դեռ չյայտ-
նուած պատմագրաց յիշատակարաններէն :

Բայց ի մեկնել Լեւոնի երթալ առ քա-
հանայապետն Հռովմայ և ապա առ թա-
գաւորս Փռանկաց և Անգղիոյ , ոչ միայն
մեծարանք և եղբայրաբար գահակցութիւն
ընդունեցաւ անոնցմէ , այլ և գանձս՝ աւելի
քան ի կարճատեւ թագաւորութեանն , որոյ
ծանրագնի ոսկեղէն թագերը յաւուրս գերու-
թեանն ստիպուեր էր յանձնել գերողին :

Ի՞նչ եղաւ նախայիշեալ թագուհին այն ,
մանաւանդ թէ երկու թագուհիք , որ Լեւոնի
հետ գերեցան . մին՝ Լեւոնի կինն Մարգարիտ ,
ի Սուասոնեան տոհմէ , միւսն՝ վերը յիշուած
Մարիամն : Առաջինն՝ էրկանը գերութեան
ժամանակ վախճանեցաւ , Եգիպտոսի սուլ-
տանաց մայրաքաղաքին մէջ ի Գահիրէ . և

այս տողերը գրած ատեննիս, հինդ հարիւր
և աւելի տարիներէ վերջը՝ փնտռուեցան իր
սկզբքն ի յատակս տաճարին ուր կու կար-
ծուէր թէ թաղուած ըլլայ, և չգտնուեցան:
իսկ նախորդ թագուհին, կոռիկոսեան պա-
րոնայց արիւն՝ խառնեալ ընդ իշխանացն
Տարենտեայ, Վենետիկոյ յետին թղթակիցն,
թէպէտ և առաջնոյն հետ գնաց ի գերութիւն,
բայց յետոյ ազատութիւն տրուեցաւ իրեն՝ ու-
ղած տեղն երթալու: Սակայն մեծահոգին այն
կին՝ որ զիտցաւ պատուվ պահպանել զթագն
ու հրաժարել՝ յօգուտ մերձաւոր ժառանգին,
իր երկրին ու ժամանակին պարոնայց շատէն
աւելի՝ հայրենասիրի պարտքը հատուցանե-
լով, այնուհետեւ չուզեց նայիլ՝ ոչ թէ ի ճա-
ճանչս թագի, այլ և ոչ յորպիսի և է չուք և
փառս աշխարհի. և թէպէտ կըրնար Լեռնի
նման մեծամեծար պատիւ և ընդունելութիւն
դտնել ի մայրենիս իւր՝ ի Տարենտոն, և
ըստ փափուկ սեռին՝ առաւել եւս խանդա-
ղատանօք և գգուանօք մեծարիլ. այլսիրեց կո-
փրետեան թագը, մանաւանդ թէ զՔրիստոսին.
հետեւելով վեհագունի թագաւորաց թագա-
ւորի, երթալ յԵրուսաղէմ. ուր հաւատաւորի
պեմաւ պքողելով զանձն յաշխարհէ և զաշխարհ
յինքենէ, քիչ ատենէն փոխադրեցաւ յանմահ
թագաւորութիւնն (1377), մինչ Լեռն՝ Հայոց

տէրութեան թագը միւսանգամ ձեռք ձգելու յուսով, — որոյ փոխարէն Մատրիտի թագաւոր կ'անուանէր, — ատլանդական ծովու վրայ կու յածէր ստէպ, Անգղիոյ և Փռանկաց թագաւորները իրարու հետ հաշտեցընելու նպատակաւ, յորում յաջողելովը կու կարծէր փափաքին հասնիլ. և գուցէ նոյն յուսով հանգեաւ ի գերեզմանս թագաւորաց Փռանկաց, ի Ա. Դիոնեսիոս Բարիզու (1393, նոյեմբ. 29):

Այսպիսի եղաւ կատարած դիւանագիտական և վաճառականական յարաբերութեանց Հայոց ընդ Վենետաց, յառաջնում յեղանակի ծանօթութեան իւրեանց, յերեքտասան և չորեքտասան դարս բազմադիմակ ժամանակի միջին դարուց :

Բ.

ՎԵՐՋԻՆ ՅԱՇԽԱԿԱՔ ՀԱՅ — ՎԵՆԵՏՈՑ ՅԱՄԱԴԻՆ
ՅԵՂԱԽԱԿԱԽ

Հայոց թագաւորութեան տեւելուն մինչեւ
վերջի տարիները՝ դեռ եւս կու գտնուին
Ծերակուտի վճիռք՝ նաւուց երթի կամ չեր-
թալուն ի Հայս. ինչպէս յամս 1363, նոյեմբ.
22.-1373, յուլիս 1.-1374, մայիս 25 և դեկտ.
8. որ է նախընթաց տարի բարձման թագա-
ւորութեանն և գերութեան Լեռնի Ե, և
յորում կու դադարին երթեւեկք: Այսով յայ-
տնի կ'ըլլայ, թէ Վենետաց Միջերկրական,
ծովային վաճառականութիւնն այլ խզուեր,
կուրացեր և դադրած էր այնուհետեւ. թէպէտ
կարելի է կարծել թէ վաճառականք տակաւին
շարունակած ըլլան ի խնդիրշահարերնիւթոց.
զոր երկու հարիւր տարիներէ ի վեր կու
հանէին ի բարերեր դաշտաց Կիլիկիոյ. ուր՝
երբեմ թագաւորանիստ և յետոյ երկրին
գլխաւոր քաղաքին Սոյ Եգիպտոսի կուսա-
կալն, ի 1415 ամի, կու հրաւիրէր զՎենետա

գալ յառեւտուր : Յայտնի է ի պատմական աւանդից, որ կէս դար ետքը (1473 - 4) Վենետիկ ետք ետեւէ եղան տիրել Կիլիկիոյ քանի մի ծովափանց՝ դաշնակցութեամբ ընդ Գարամանս և ընդ Պարսից Ուզուն Հասանայ, ընդդէմ նոր և հզօրացեալ օսմանեան տէրութեան . բայց թէ ի ժամանակին ունեցա՞ն թէ ոչ գործակցութիւն ընդ Հայոց, մեզի նպատակ դըած յարաբերութեանց յեղանակէն դուրս կու մնայ պատմութեան այս մասն : Բայց այդ արգելք մը չէր Վենետիկաց, մանաւանդ թէ պատկառելի ու նուիրական հրապոյր մը պէտք էր ըլլալ, յամայացեալն Սիսուան փնտուել գտնել, եթէ ոչ այն հրապարակներն ուր սփոռեցին և ժողվեցին մթերս ոսկոյ և արծաթոյ, այլ գէթ անոնց խորքը՝ ուր կու հանգչին ոսկերք՝ ո՛ գիտէ քանի հարիւրաւոր իրենց հայրենակցաց . և բրելով թերեւս քիչ մը գհող՝ այնքան բազմակոխ գետնոյն ի հարց իւրեանց, յերեւան հանել Ատանայի Սուրբ Մարկոս եկեղեցւոյն և ժողովատեղւոյն (loggia) աւերակաց տակ՝ արձանագրեալ քարեր, կրելով վրանին այնպիսի ընտանեաց անուններ՝ որ հիմայ սպառեր անցեր են . և թէ ցայսօր կու լսուին դեռ ի Վենետիկեան հրապարակի, ոչ անկորուստ ի նախկին տեղւոյն, այլ այն ատենուան ճոխու-

թենէն կապտեալ . վասն զի բաղդին սայրա-
սուր թեւերն գծեցին և Ադրիոյ պատկառելի
դշխոյին դէմքը : Թողլով զհետս Վենետաց
ի Հայոց յայնմ յեղանակի , դառնանք ի Վե-
նետիկ յուզել զհետս Հայոց յայն վերջին
միջոց ժամանակի :

Արդէն յաճախ յիշատակեցինք Հայոց
դեսպանաց երթեւեկը յիշխանանիստս այս
շահաստան , բայց ոչ զհատատուն բնա-
կութիւն Հայոց այս տեղ կամ զգործ : Սա-
կայն և լոռութիւնն բաւական չէ կարծեցընել՝
թէ Հայք եղած կամ թողած շըլլան ի-
րենց յիշատակներն ի Վենետիկ , մինչ նոյն
ժդ և ժդ դարուց միջոցին՝ աւելի քան յե-
րեսուն քաղաքս իտալիոյ թողեր են եկե-
ղեցեաց կամ ուրիշ իրաց հետք , ուրնուազ քան
ի Վենետիկ էր իրենց շահն և առընչութիւնն .
յայսմ մասին՝ Վենետիկ իրենց համար ա-
ռաջին քաղաքն էր յիտալիա , ինչպէս Հռովմ՝
ուրիշ տեսակէտով . և եթէ այդ պատճառաւ
կանխած ալ ըլլայ Հայոց երթեւեկն ի Հռովմ ,
հաւանական է որ հօն երթալու ատեննին՝
յաճախ Վենետիկէն կ' ըլլար իրենց անցքն ,
նա և յառաջ քան զսկզբնաւորութիւն երեք-
տասաներորդ դարու և զՄեծն Լեւոն . և թէ-
պէտ դեռ յայտնուած շըլլան՝ բայց անտա-
րակուսելի է որ ասոր տասնեւինն տարուան

Թագաւորութեան ատեն և անկէ առաջ և
ետքը՝ եղած են երթեւեկք զեսպանաց, եւս
առաւել վաճառականաց ու նա և սոսկական
մարդկան, որ և իցէ պատճառաւ :

Ի սկզբան մեր այս գրութեան՝ մէջ բերինք
Հասարակապետութեան պաշտօնէից բերնէն
լսուած աւանդութիւն մի, թէ երկոտասանե-
րորդ դարէն ի վեր եղած էր Հայոց մուտքն
և այցելութիւն ի Վենետիկ, և թէ յաջորդ
երեքտասաններորդին առաջին կիսուն, այն է
յաւուրս Լեւոնի Ա և Հեթմոյ Ա, անոնց ի
քաղաքս յաճախելուն պատճառաւ՝ Մարկոս
Ծիանի կտակաւ թողուց իրենց՝ Սրբոյն Յու-
լիանոսի կոչուած թաղին մէջ՝ ունեցած տու-
ներէն մէկը. և որ յայնմ հետէ՝ վեց հարիւր
յիսուն տարիներէ ի վեր՝ Հայոց տուն (Casa
degli Armeni) կու կոչուի, ինչպէս նա և
փողոցն իրենց անուամբ՝ Calle degli Arme-
ni, և մերձաւոր կամուրջն՝ Հիմայ Dei Ferali
լսուածն՝ գրոց մէջ կամարջ Հայոց (Pons Ar-
meniorum seu Feralium) կոչուած կու գը-
տնուի : Վենետիկ վաճառականութեան վրայ
խօսող գրեթէ ամենայն մատենագիրք, և մա-
նաւանդ հմտագոյնքն՝ կու յիշեն Հայոց գալլս-
տեան սկզբնաւորութիւնը և Ծիանիի կտակը.
մենք անոնցմէ մէկուն միայն՝ Սանտիի՝ խօսքը
առաջ բերենք . «Վենետիկոյ վաճառականու-

թեան մէջ համբաւաւոր է, ինչպէս նաև անցեալ դարուց մէջ Հայոց ազգն, որ արժանի համարուեցաւ ընդունելութեան, բնակութեան և պաշտպանութեան ի վենետիկ։ Ամենահին են իրենց յարաքերութիւնք ընդ վենետիկեցիս, որով և իրենց բնակութեան վայրն ի մայրաքաղաքին։ 1253 թուականէն ի վեր՝ և հետեւեալ տարւոյն մէջ՝ հաստատուած կտակաւ մը Մ. Շիանիի՝ եղբօրորդւոյ հանգուցեալ Սեբաստիան դքսին, որ վենետիամանակագրաց վկայութեան համեմատ՝ մեծահարուստ ճոխութեամբ համբաւեալ ընտանիք մ'էր, և գութ ունենալով այդ ազգին վրայ, ու վաճառականութեան պատճառաւ երկար ատեն բնակած ըլլալով ի Հայաստան, վենետիկոյ Ներքին գործակալաց կտակեց տուն մի»¹։ Հին ժամանակագիրն

1. Conta in aspetto di commercio veneziano e contò ne' decorsi secoli, la *nazione degli Armeni*, che meritò accoglimento, abitazione e protezione in Venezia. *Antichissima* è la corrispondenza loro con li Veneziani, e quindi il loro alloggio nella Capitale. Sin dall' anno 1253 per testamento riconfermato nell'anno susseguente, M. Ziani nipote del fu Doge Sebastiano, famiglia che per li Veneti cronisti si afferma splendidissima in ricchezza, reso *ben affetto* a quella Nazione, *dalla lunga sua dimora*, per oggetto

Մուացցոյ՝ որոյ խօսքն ի մէջ բերէ Ֆիլիաղի, շփոթելով թերեւս զՄարկոս ընդ հօրեղբօրն, և կ' ըսէ. « Սերաստիանոս Ծիանի որ յետոյ դուքս ընտրեցաւ . շատ ատեն բնակեցաւ ի Հայաստան, և յետոյ թողուց տուն մի ի Ս. Յուլիանոս թաղի, ի Վենետիկ եկող Հայոց համար. և զայս ըրաւ՝ անոնց կողմերում գտած լաւ ընկերութեանն համար »¹:

Մեր ազգայինք որ յայլ և այլ դարս պէտք ունեցան խնդրոց ի Ծերակուտէն, կու յիշատակեն միշտ իրենց ազգակցաց ի նպաստ եղած այս շնորհքը. և եթէ չեն սխալիր, կու ծանուցանեն կանխելով զթուական թողլոյ Մարկոսի գտունն, իբրեւ յառաջազոյն գըրուած կտակաւ մի յամի 1235, ի մայիսի 25. յորում կու նշանակուէր յիշեալ թաղին մէջ տալ տուն մի ի բնակութիւն Հայոց ոչ ճոխից, իբրու հիւրանոց (ospizio). որով տուշութեան թուականն կու կանխէ քան զամենայն ծանօթ բնակութիւնս Հայոց յայլ

mercantile nell' Armenia... legò alla Procuratia veneta di Citra, una casa.

1. Sebastiano Ziani che fù poi Doge, *dimorò assai* in Armenia, e lasciò poi una casa in contrada di S. Giuliano per gli Armeni che venissero a Venezia. E ciò fece per *la buona compagnia* avuta in quelle parti.

քաղաքու իտալիոյ, նաև և ի Հռովմ. ուր՝ ինձ
ծանօթ թուական հաստատուն բնակութեան
կամ եկեղեցւոյ՝ (որ և նշանակ է բնակու-
թեան) է 1239 տարին. թէպէտ հաւանա-
բար այլ աւելի առաջուց պէտք է ըլլայ :
Իսկ ի վերջին և ի ծանօթագոյն կտա-
կին՝ որ ի 5 յունիսի, 1253, այսպէս գրուած
կու գտնենք . «Տունն՝ ուր կենան Հայք,
(ըսել է թէ արդէն բնակած էին այն տեղ),
կ'ուզենք որ մշտնջենաւորաբար իրենց բը-
նակատեղի ըլլայ . և ինչ որ հարկաւոր
համարուի տեղւոյն նորոգութեան, ի մեր
ատացուածոց ըլլայ այդ ծախքն... Մեր այս
կամքին յանձնակատար կու սահմանենք՝ կեն-
դանի մնացող ժառանգաց հետ, գտեարս գոր-
ծակալս եկեղեցւոյ Սրբոյն Մարկոսի»¹ :

Մարկոս Ծիսանի առաջնորդ և կամ մա-
նաւանդ հետեւող եղաւ Հայոց ասպնջական
բարերարութեան գործոյն. վասն զի նոյն
պատմիչք որ կու յիշեն զայդ, կու ծանու-

1. Domum in qua manent Armenii, volumus,
ut in perpetuo ipsi in ea stare debeant: et
quādācumque fuerit opportunum eamdem con-
ciare, de nostris benis debeat conciare... Con-
stituimus nostros Commissarios una cum reli-
quias superventibus Dominos Procuratores O-
peris Ecclesiae S. Marci.

ցանեն միանգամայն թէ ծերունի և հարուստ հայազգի մի՝ բնակեալ և վախճանեալ ի վենետիկ, այս կարգաւորութիւնն ըրած էր, ըստ Անտեայ, Մ. Ծիանիէ քիչ յառաջ կամ ետքը (o poco prima o dappoi di M. Ziani): Բայց հնագոյն դրիչ մի կ'ըսէ. « Զերմեռանդն ու ծերունի հայ մի իր կտակաւ գումար մի դրամոց թողած էր, յառաջագոյն իսկ քան զՄ. Ծիանի, որպէս զի տուն մի գնուի ու եկեղեցեակ մի շինուի ի փողոցին Լապտերաց... ի դիւրութիւն՝ և նպաստ ազգակցացն, որ Պարսկաստանի հեռաւոր կողմերէն կու զան »⁴: Այս խօսքերէն կու գուշակուի, թէ հայ ծերունին չէր ի Կիլիկիոյ, այլ ի Մեծ Հայոց, որ ի ժամանակին՝ Սէլչուքեան Թուրքաց իշխանութեան կու հպատակէր, և քիչ յետոյ Մողոլ Թաթարաց: Աւելորդ կու համարիմ քննել թէ ինչպէս սոցա երկոցուն, ծերոյս և Մ. Ծիանեայ ի միում վայրի նշանակեալքն Calle delle Lan-

1. Un *vecchio Armeno* lasciasse con suo testamento certa somma di denari, *prima ancora* di M. Ziani, acciocchè fosse comperata *una Casa*, e fabbricata *una Chiesetta* nella calle delle Lanterne... per comodo ed utilità de' suoi nazionali provenienti da quelle lontane parti della Persia.

terne կամ Ferali, կրնան պատշաճիլ, և իրենց սուրբն կու միանան. բայց հաւանական կ' երենայ որ ծերունին դրամոյ գումար մի թռղած էր, իսկ Ծիանի ձրի բնակութեան տուն. բնակողաց կամ ազքատաց ծախքն կու հայթհայթուէին ի արոց ծերունւոյն : Փափակելի է գիւտ այս վերջնոյս կտակին, որ մեզմէ չորս դար առաջ՝ ի 1496՝ ծանօթ էր Հայոց, և ցուցեր էին ուր որ հարկ և պատշաճ էր, ինչպէս կ' ակնարկեն նոյն գրչին հետեւեալ խօսքերն . «Ծերունի Հայոցն ըրած կտակին զօրութեամբ, յաւուրու առաջնոյ Ծիանի տոժի, (ուրեմն անդատին ի 1171—9 թուականէ, որ է ժամանակամիջոց իշխանութեան Աերաստիան (Ծիանիի), նոյն Գոլծակալք ի հանգուցելոյն թողուած դրամովք զնեցին տուն մի ու եկեղեցեակ մի ի փողոցն Լապտերաց, ի գիւրութիւն Հայոց՝ որ գային բնակելու ի Վենետիկ»¹:

1. Il testamento fatto dal vecchio Armeno al tempo del primo Doge Ziani, in forza di cui essi Procuratori aveano co' denari del defonto, compereata una Casa e fabbricata una Chiesetta nella calle delle Lanterne a comodo degli Armeni che venissero ad abitare in Venezia. Կույտ զայս և Կուլեչիուկ, (Բ, 275). Mentre il Zen (Caterino) era nella sua ambasciata (յուդ 1473) edificossi una piccola Chiesa loro.

Շատ անգամ խնդիր եղած է յատենի ծերակուտին վենետիկոյ՝ Հայոց եկեղեցւոյն շինութեան սկզբնաւորութեան համար, և չին կրցած ստոյգ թուականը գտնելու զի յայտնի վկայութիւն մը չկայ առ այն, ինչպէս հիւրանոցին՝ զոր տեսանք. բայց տունէն աւելի կարեւոր էր մեզ գիւտ եկեղեցւոյն, վասն զի կեդրոն կամ միութեան կէտ մ'է այն ազգին՝ որոյ համար կու կանգնուի. և ի միւս կողմանէ՝ հաւաստեաւ գիտեմք, որ Հայք չէին հանդուրժեր, թէպէտ և սակաւաւորք թուով, տեղ մը բնակութիւն հաստատել առանց ազգային եկեղեցւոյ. և այս պատճառաւ իրենց համար մասնաւոր եկեղեցիք կառուցած են մինչեւ ի Սիկիլիա կղզւոջ. և որովհետեւ ի Վենետիկ յաճախագոյն էին թուով, հաւանական է թէ վաղագոյն ձեռք զարկած ըլլան եկեղեցւոյ մը կամ գէթ մատրան հաստատութեան: Կու տեսնեմք դարձեալ, որ ի Հռովմ, ի Փլորենտիա, յԱնգոնա, ի Որիմինի, և այլն, երեքտասաներորդ դարու կիսուն, կամ անկէ այլ յառաջ, և ի սկիզբն հետեւեալ չորեքտասաներորդին ի Պոլոնիա, Ֆերրարա, Ճենովա, Պատուա, ոչ միայն եկեղեցի՝ այլ և վանք կ'անուանին հոգետունք Հայոց, որ կու նշանակէ զբազմութիւն կամ զմիաբան բնակութիւն եկեղեցականաց, կամ՝

գէթ եղբայրաբար միաբանակեցից . որով
հարկ կ'ըլլայ ենթադրել , թէ առաւելագոյն
կերպով նոյնպէս եղած ըլլայ և ի վենե-
տիկ :

Ասով հանդերձ՝ զարմանալի է , որ մինչ
այդ քաղաքաց պատմագիրք և յիշատակա-
գիրք ճիշգ՝ կամ մերձաւրապէս կու յիշեն
Հայոց եկեղեցեաց շինութեան , կամ անոնց
Բարսեղեան միանձանց գալրտեան ժամա-
նակը . Վենետիկոյ տարեգիրք այդպիսի յի-
շատակութիւն մը չեն ըներ , բաց ի յառաջ
մեզմէ յիշուած Ծիանիի բարերարական կտա-
կէն , որ չէ նման այլոց , այլ աւելի հիւրանոց
կամ բնակարան մի : Խօսքերնիս շերկարելու
համար՝ փութանք ըսել , թէ հարկ էր որ ի
Ս . Յուլիան թաղի գտնուած Հայոց տանը
մէջ ըլլար գոնէ ձեւացեալ մատուա մի , ինչ-
պէս շատեր կարծեն , և կամ ուրիշ տեղ
Հայոց վանատուն մի կար : Եթէ նոյն թա-
ղին մէջ կայր այգպիսի մատուան , ինչպէս
ինձ ալ հաւանական թուի , այլ հաւանակտ-
նագոյն եւս՝ թէ փոքր ու անշուք շինութիւն
մ'էր , որ երկիցս և երիցս ընդարձակուելով
(ի 1494, 1510–20, 1689) , տակաւին և այժմ
փոքրիկ եկեղեցեակ մ'է , թէպէտ և չքնաղ
գոհար մի . ուստի , ինչպէս յայլ քաղաք
խտալիոյ կու գտնենք , պէտք է երգմնեցու-

ցանելով ամէն դիւտն և յիշատակարան՝
փնտռել և ի Վենետիկ մեծագոյն եկեղեցի մի
և Հայ միաբանք։ Մի կամ երկու նշոյլք միայն
կու ծագեն ինձ՝ առհաւատչեայ այլոց։ որոց
փափաքելի գիւտին յաջողութիւնն մնայ քան
զիս բաղդաւոր և քննասէր հետամտից։ Մի
ի նշուլիցս է՝ քանի մը խօսք Ծաննինի տի
Սգալա անունով մէկու մը կտակին, ի 1348,
յունիս 26, ՈՒիալդոյի Ս. Յովհաննէս եկե-
ղեցւոյ Յնեիպէն թաղերիցու գործոց (ՃԱՏԻ)
մէջ, որ ուրիշ բարերարական տուրքերէ զատ
կու պատուիրէ տալ Հայ Եղբարց Սրբոյն Յով-
հաննու Մկրտչ՝ հինգ տուկատ, իրենց ապ-
րուստի համար¹։ Կային ուրեմն Հայ Եղ-
բարք միաբանակեացք ի Վենետիկ ԺԴ դարու
կիսէն ալ յառաջ. բայց ուր էր այդ Ս. Յով-
հաննու Մկրտչի անուան ու պաշտաման
նուիրուած եկեղեցին. արդեօք իրենց համար
յատոնկ եկեղեցի մ' էր, ինչպէս կարծեմ,
(որովհետեւ շատ սիրող են Հայք այն Սրբոյն),
թէ լատին եկեղեցեաց մէկն, յորում թաղի
գտնուէր և հոգետունն և եկեղեցի Հայոց.
զայս ամենայն պիտի ցուցընեն անշուշտ ա-
պագայ դիւանական գիւտք և յայտնութիւնք։

1. Ai Frati Armeni di S. Giov. Battista, Dti
cinque per so viver.

— Ա. Յուլիանոսի թաղին մէջ եղող Հայոց Եկեղեցւոյն վրայ, որ գէթ յառաջ քան ըզ-կէս ԺԵ դարու, յամի 1434, կու յիշուի պաշտեալ և պատարագաք, և միշտ Ա. Խաչ կու կոչի և պաշտի մինչեւ ցայժմ, քիչ ետքը նորէն պիտի դառնանք խօսելու :

Ցիշենք այս տեղ թէ յեկեղեցւոյ անանջատ է և հաւատացելոց յետին հանգստարանն . շենք ըսեր շինուածքի կցորդութեամբ, թէպէտ և յաճախ այնպէս ալ է, — այլ սեպհական հոգեւոր առընչութեամբ . վասն զի առանձին ազգային եկեղեցի մի ունենալ փաքաքողք՝ առանձին գերեզմանատուն ալ կ' ուզեն : Բազումք ի Հայոց՝ Սուրբ Խաչ եկեղեցւոյ վերջին շինութենէն ետքը՝ հօն ալ թաղուած են, և կու վկայեն իրենց մահարձանք . շատք ալ Փի - Փի դարուց միջոց թաղուած են յայլեւայլ եկեղեցիս քաղաքին . ինչպէս յայտնի է թաղպետական եկեղեցեաց մահարանութեանց գրքերէն, տեղ տեղ ալ յարձանագրութեանց՝ որ դրուած են իրենց գերեզմանաց վրայ : Բայց աւելի առաջին դարուց մէջ, երբ Հայք աւելի պնդութեամբ կու պահէին իրենց ազգային ծէսերը, հարկ էր որ առանձին գերեզմանատուն մ' ալ ունենային . և էր ի Սուրբ Գէորգ կղզւոյ, քաղաքին մօտ : Մեծ վիճի մը առթով՝ զոր ունեցեր

են Հայք՝ Արքոյն Գէորգեայ թենեղիկտեան մենաստանին կրօնաւորաց հետ, յամի իրը 1675, կու պնդէին մերքն՝ թէ չորս հարիւր տարուընէ ի վեր շնորհուած էր իրենց հօն ազգային հանգստարան մը ունենալու իրաւունք. և անժխտելի գրաւոր յիշատակ մի, որոյ վրայ քիչ ետքը պիտի խօսինք, կու վկայէ 1343 թուականին՝ որ ի հնուց հօն էր Հայոց գերեզմանատունը :

Ուր են ապա քարինքն և արձանք՝ որ իրապէս վկայեն այս կարծեաց ստուգութեան : – Հարկ է խնդրել զանոնք կամ ի հիմունս գեղեցիկ Զանգակատան Ա. Գէորգայ, զորով կու շրջապատէին գերեզմանքն ու բակն ու ջրհորն՝ որ Հայոց անուամբ կու կոչուէին, և որ անցեալ (Ժ.Ը) դարուն կործանելով, ջարդեց խորտակեց քարինքը, ու նոր զանգակատան հիմնարկութեան ծառայեցուց, միայն քանի մը քարինք գերծան, ոչ շատ հինք, այլ Ժ-Ժ. Դարուց, որոց վրայի արձանագրերը ընդօրինակեցին Հարք Ուխտիս. երբ սովոր էին Հայք՝ Վենետիկոյ զանազան եկեղեցեաց մէջ թաղուիլ. և այն սակաւաթիւ մնացած մահարձանք եւս՝ առաջնոց բաղդը կամ կորուստը ժառանգեցին, Արքոյն Գէորգայ եկեղեցւոյն սալայատակին նորոգմանը ատեն : Ասանկով Հայոց կենդանու-

թեան կամ մեռելութեան հետքն ալ չմաց
ի կղզւին, բաց ի վերը յիշատակուած քանի
մի արձանագրութիւններէն : Մաղթելով վայ-
րիկ մի հանգիստ՝ հանգուցելոցն ի վաղուց,
դառնանք միւսանգամ առ կենդանիս :

* * *

Վենետիկ եկող յանուանէ ծանօթ Հայոց
մէջ, բաց ի յոյժ հնագունից՝ որոց վրայ խօ-
սեցանք ի սկիզբն այս մեր գրուածոյս, ա-
ռաջին կու յիշուի Մանուել դեսպան Սմբա-
տայ թագաւորի ի վերջ կոյս երեքտասանե-
րորդ դարու (1297-8), որ բաց յայլոց իրաց
եկեր էր և ի խնդիր դիպակաց, ինչպէս
յառաջագոյն ալ ըսինք : Իրմէ յառաջ, ինչ-
պէս ետքն ալ եկողաց շատերուն անուանք
չեն յիշատակուիր . և զորս զանց կ'ընենք
մէջ բերել, ինչպէս ի դիմաց դքսին անոնց
շնորհուած պարգեւներն այլ զոր դեսպանաց
ձեռքով կու զրկէին առ թագաւորս Հայոց :

Ի սկիզբն չորեքտասաներորդ դարու (1302,
սեպտեմբեր. 23) թոյլ կու տոսյ ծերակոյտն՝
վենետիկեան նաւերով քանի մի վաճառակա-
նաց՝ գալ այսր . ասոնց մէջ կու յիշուին
Լիւռն, Ալիսն և Գեորգ հայ : — 1331 թուա-
կանին կու յիշուի Հենրուս անունով յանցաւոր

մի ի Վենետիկ, որոյ չնորհուեցաւ ազատութիւն ի դատէ. այլ թէ բնչ յանցանքի համար, պարտաւորուած էր, յայտնի չէ : Նոյն միջոցներուն տեսանք, ինչպէս ի վեր անդր, զԱւագ Գուամաչ թարգման և կարաւանապետ մի ի Վենետիկ : Անկէ ետքն է թագաւորազանց և թագաւորականաց ոմանց գալուստն ի Վենետիկ . ինչպէս Լիւզինեան Պիեռանդի, որ և մեռած (1364) կ'ըսուի հօս . — քսան տարի անցնելէն ետքը՝ իր եղբօրն՝ Լեւոնի՝ թագէն զրկուած և ի խնդիր թագի՝ ստուերակերպ անցքն ընդ Վենետիկ (1383) :

Այս վերջին Լեւոնի Վենետիկ եկած տարին՝ հօն կու բնակէր Եղբայր Օհոադինս ոմն Երզիրումցի հայ դոմինիկեան կրօնաւոր, յառաջն Աւետիք կոչուած . ուր և կ'ընդօրինակէր զՆախագրութիւնս հայերէն Ս. Գրոց, աւելցընելով յիւրմէ պէսպէս կրօնական բանս արձակ և ոտանաւոր, և որոյ զրշագիրն ի ձեռուընիս է : Աս գրուածքին մէջ նշանակութեան արժանաւոր կէտ մի և կարեւոր մեր առաջարկութեան այն է, որ կ'ըսէ թէ գրած կամ աւարտած է զայն ի 29 փետր. նահանջ ամի է Վընեժոյ եկեղեցին : Ո՞ր եկեղեցի է՝ զոր կ'ուզէ ակնարկել զրիչն . եթէ զմի ի լատին եկեղեցեաց, առանց տարակու-

սելու՝ նուիրական տաճար Սրբոյն Մարկոսին
 է. սակայն Հայոց մէջ այնքան հռչակուած էր
 անոր անունն (San Marco), որ եթէ զրիշն
 զայն ակնարկել ուղէր՝ յանուանէ այլ կու
 գրէր. ուստի պատշաճ թուի կարծել՝ թէ
 կամ ի վեր անդր՝ (1348ին) յիշուած եկեղեց
 ցին կ'իմանար, ուր Հայ Եղբարդ կու բնա-
 կէին, — մանաւանդ զի ինքն ալ կրօնաւոր էր
 և դոմինիկեան, և կիսով դարու յառաջ հաս-
 տատուած էր Սրբոյն Դոմինիկոսի կանոն-
 ներով Հայոց Ունիթորաց միաբանութիւն մի,
 և տարադէպ չէ կարծել թէ անոնցմէ ոմանք
 կանխած եկած ըլլան նա և ի քաղաքս, ինչ-
 պէս այլք ալ արդէն անցէլ էին ի կաֆա.
 և կամ պէտք է համարել զեկեղեցի Ա. Խաչի,
 եթէ այս անուամբ ալ կոչուած և թէ ոչ,
 այն որ մերձ է Հոգետան և փողոցի Հայոց,
 ի թաղերիցութեան Ա. Յուլիանոսի, առ
 որ միւսանգամ դառնանք և կնքենք խօս-
 քերնիս :

* * *

Սրբոյն Յովհաննու Հայ Եղբարց յիշա-
 տակութենէն քանի մի տարի յառաջ (1344,
 Հոկտ. 2) Ա. Յուլիանոս եկեղեցւոյ Յակոբ
 Մարքէզինի քահանայի ձեռքով գրուած կտակ

մի կայ Հայ տան (Ca' Armena) մէջ բնակող
կնոջ մի, Armenia կոչուած, և Մարիամ անու-
նով. և որ ինքզինքը կու կոչէ ի կտակին
Massaria domus Armenorum, որ ոչ թուի
ինձ սոսկ աղախին, որպիսի նշանակութիւն
ունի արդի գաւառական լեզուի մէջ այդ տաء-
սերա բառն, այլ իրրեւ տանտեսուչ (massaja
կամ այս) տանն Հայոց. և այս առաջին ան-
գամն է, գէթ ինձ ծանօթ յիշատակագրաց
մէջ, Հայոց տան յիշատակութիւնն Ծիանիի
կտակէն ետքը Վասնզի հայ ազգայնոց դեռ
առաջին և միակ հին կտակն է՝ զոր յաջողեր
ենք գտնել ի դիւանս Նօտարաց. բայց բա-
ւական նշան մ' է թէ անկէ յառաջ ու ետքն
այլ գրուած պէտք էին ըլլալ այդպիսի վաւե-
րականք, և որոց գիւտն փափաքելի է. զի
թէպէտ կտակը են և մահու յիշատակաւ առ-
թեալ, այլ կըրնան ընծայել մեզ շատ կա-
րեւոր և անտխուր տեղեկութիւն. և այս՝ որոյ
խօսքը կ' ընենք, լստ բազում զլիոց պա-
տուականն է և հմտացուցիչ : Կտակողն Մա-
րիամ՝ ազգէն զատ չի յիշեր ոչ զծնողս և ոչ
զազգականս. և ըրած մանրմունը մէկուն կամ
մէկալին թողած դրամք կու գումարուին հա-
րիւր տուկատ և երկու ֆիորին, անշուշտ ոսկի
դրամով, որով կրնայ ենթադրուիլ՝ թէ հասա-
րակ աղախնէ մի բարձր վիճակ ունէր, և աւե-

Մի բարեկեցիկ։ Կու զրադի եղեր ի դարման
տեսակ տեսակ հաւաքց, և այն միջոցով կու
հայթհայթէր անշուշտ իրեն պարէնը և կե-
նաց դիւրութիւն։ Իր կտակին առթիւ թո-
ղած կարեւոր գիտելին՝ Հայոց աան մէջ և
թերեւս անկէ դուրս բնակողաց ութ կամ
տասն ազգայնոց անուանք են. արք, կանայք
և Եղբարք և յորոց իրեն կտակակատար
կու սահմանէ, և են. Եղբայր Անտայել Հայ. —
Տէվին Բարթոլոմէյսէ հայազդի (Domina Bar-
tholomia Armina), և որոյ Փլորին մի յի-
շատակ կու թողու. իսկ առաջնոյն՝ երկու
Փլորին և սեսու պատմուճան մի. — Յակոբ կտա-
կակատարին՝ չորս տուկատ և արդէն իր քով
եղած զրաւականը. — Նօտարին՝ Փլորին մի։
Կու յիշէ ուրիշ հայ Եղբարք, Գուլիելմ (Viel-
mō) և Եղիշէւ, չի նշանակելով անոնց բնա-
կութիւնն ի տան Հայոց, և կու թողու ա-
ռաջնոյն չորս Փլ., իսկ միւսոյն երկու։ Ի կա-
նանց՝ բաց ի Բարթուղիմէէ, զոր յիշեցինք,
կ' անուանէ զջապիւ, որ Հայոց Ախտանեայց
մէջ յաճախեալ անուն մ' էր ի ժամանակին,
մանաւանդ առ ազնուականս. և բնակութիւն
սորա էր ի Հայ տան. որուն կու կտակէ իր
կրկնոցը և սպիտակ պատմուճանը (mantello,
tunica alba) և տուկատ մի դրամ։ Նոյն-
պէս ի Հայտան բնակող Գուլի կնոջ մի կու

Թողու իր զգեստները (is suoi panni) և տառնուլիք փոքր դրամ (soldi): Յիշենք անցողաբար, որ այս ատեններու կտակաց մէջ յաճախ կու տեսնուի բառդ Գալչ, և կարծեմ թէ սորուկ-իանոյց կու նշանակէ: Ֆրանչիսկա (Francisca) հայ կնոջ մ'ալ կու թողու Փլորին մի. սա չէր ի բնակչաց Հայտան, այլ ի Ս. Վլաս (Sancti Blasii), ոչ զիտեմ յաշխարհական տան թէ ի մենաստանի:

Ամէն բանէ առաջ իրը բարի քրիստոնեայ՝ իր ընչից տասանորդը կու տայ (In primis omniuum rectam dimitto decimam). և վերայզրեալ քահանայից և Հայ Եղբարց թողածէն զատ, կու կտակէ Ս. Յուլիանոս եկեղեցւոյ քահանային՝ երկու տուկատ վասն մատուցման պատարագաց, նոյնպէս Արքոյն Մարկոսի քահանային երկու տուկատ. տուկատ մ'ալ կուսանաց Արքոյն Զաքարիայ, որ Բիւզանդիոնի հայ կայսեր մի գանձով կառւցոււած եկեղեցի է, ու վերջին դարուց մէջ զեռ եւս կային հօն և հայազգի կուսանք, և թերեւս կտակող Մարիամայ ժամանակն ալ: Հայոց տանն այլ՝ ուր կու բնակէր, կու թողուութ Փլորին, որպէս զի պէտք եղած նորոգութիւնն ընեն, որով կ'երեւնայ կարօտ ըլլալն, և անշուշտ Ծիանեայ տուրքն չէր բաւեր ծախքը գոցելու: Զի մոռնար Մարիամ և այլ

աղջային տուներն, եկեղեցիք և վանորայք որ յայլեւայլ քաղաքս իտալիոյ, բարեպաշտութեան հետ անշէջ պահելով նա և զոգին աղջային. և կու կտակէ Հայոց տանց որ ի Պոլոնիա, Բերումիա, Արենա և Գենուա՝ երկու երկու տուկատ կամ ֆլ., իսկ հոգետանն որ ի Զիվիդավեդզիա (Urbe veteris) մէկ տուկատ :

Իրմէ բարերարելոց մէջ նշանաւոր է Արենիսկոսն Հայոց, ճոխամասն կտակաւ. ասոր կու թողու արդէն փոխ տուած երեսուն տուկատը, ու իրմէ առած դրաւականն, աւելացնելով ասոնց վրայ տասն ֆլորին եւս : Ափսո՞ս որ յանուանէ չի յիշատակեր զնա . բայց լոկ Հայոց արքեպիսկոպոս կոչումն ալ նշանական է. և իրաւամբ ենթագրել կու տայ, թէ Վենետիկոյ՝ կամ յաւէտ իտալիոյ Հայք՝ եպիսկոպոս կամ արքեպիսկոպոս մի ունէին, և որոյ աթոռն էր այն քաղաքաց մէկուն մէջ յորս Հայոց հոգետունք կամ վանորայք կու գտնուէին : Ուրիշ թէ աղջային և թէ օտար յիշատակարաններէ գիտեմք, թէ այն ատեններն թովմաս անունով հայ եպիսկոպոս մի կայր, որ Եպիսկոպոս իդալոյ կու գրէ և կու կոչէ զանձն. կոչումն պանծալի, որով հաւանաբար կրնայ կարծուիլ թէ յիշեալ քաղաքաց մէջ, նա և ի

Հռովմ գտնուող գաղթական Հայոց վերադիտող մ'էր . իր ի Վենետիկ ըլլալուն վկայութիւն մի կայ . զի ասկէ մագաղաթ (գրուած կամ անգիր), կու զրկէր առ կոստանդին կաթողիկոս (1374-81) : Վախճանած և թաղուած է Թովմաս ի Բերումիա (1385), ինչպէս կու տեսնաւի ի տապանագրէն ի Սուրբ Մատթէոս եկեղեցւոյ քաղաքին . Եւ որովհետեւ քառասունեւհինգ տարուան միջոց կայ ընդ մահ Թովմայի և Մարեմայ, մարթ է կարծել թէ ուրիշ մ'ըլլայ ասոր յիշած եպիսկոպոսն, թերեւս նախորդն Թովմայի . մանաւանդ զի յայնմ գարու յաճախ կու հանդիպէին այցելութիւնք եպիսկոպոսաց Հայոց ի Հռովմ, ի Պոլոնիա, ի Փլորենտիա և ի Վենետիկ . և կտակիս զրուելուն ժամանակ եպիսկոպոսին ի Վենետիկ գտնուելուն նշանակ մ'այլ՝ ոչ միայն փոխառութիւնն և գրաւական տալն է, այլ և կտակողին կողմանէ ձգուած ուրիշ պարգեւ մի եւս, երեք սիրամարդ . ինչպէս և մէկմէկ սիրամարդ . Յակոբ Քահանայի, և Սրբոյն Մարկոսի եկեղեցւոյ պահապան Փրանկիսկոս Քահանայի . ուրիշ մ'այլ իր հոգւոյն . որպէս զի մնացած հաւեղէններով զոր կու թողուր, հոգեհաց ուրախութիւն մի՛ ընեն . (de omnibus meis galinis fiat unam charitas) իր մահուան օրը :

Տասն տուկատ ալ կու սահմանէ , որպէս զի
այն գումարով ոզորմաւթիւն ընեն ի նպաստ
հոգւոյն , (volo fiet unam charitatem) , կտա-
կակատարաց որոշմանն համեմատ , որոց և
կու յանձնէն իր ամէն շարժուն և անշարժ
ընչից մնացածը բաշխել վասն իր հոգւոյն .
ասով կ' իմացուի թէ ըստ մարմնոյ ժառանգ
չունենալուն՝ կու ժառանգեցընէր իր հոգին :

Աւկայն հարկ էր մարմնոյն համար այլ
հանգստարան մի ցուցընել . զոր և կու նշա-
նակէ ի կտակին , և անով կու հաստատէր
մեր յառաջադոյն ըստածը , թէ երեքտասա-
ներորդ դարէն ի վեր Սրբոյն Գէորգայ
կղզւոյն մէջ էր Հայոց հանգստարանն , ուր
և ինքն Մարիամ ուզեց թաղուիլ . ու տեղ-
ոյն վանականաց երկու տուկատ պատարա-
գիք թողլէն զատ , կու կտակէր մեծ կրկնա-
ջահ մի (doppiere) ի պատիւ Սրբութեան
որոց մոմեղէն վառելու , և ուրիշ մ' այլ
Սրբոյն Յուղիանու եկեղեցւոյն : Ճրագա-
րանաց այս եռքի յիշատակք , ի Ա . Գէ-
որդ թաղումն , լատին այլեւայլ եկեղեցեաց
պատարագիք , երկրայելի կ' ընեն Հայոց տան
մէջ մատուռն կտմ պատարագատեղի մի ըլ-
լալը . բայց հաւանական յոյժ՝ մանաւանդ
թէ անժխտելի՝ որ կային հայ եղիսկոպոս
մի և հայազգի Եղբարք Ա . Յովհաննու :

Գուցէ քահանայք էին և յիշեալքն ի կտա-
կին՝ Գուլիելմ և Եղեկիէլ Եղբարք, ուր էր
և իրենց բնակութիւնն : Եւ թէպէտ յայտնի
է յաղղային յիշատակարանաց որ, այս կտա-
կին դրեթէ հարիւր տարի եռքը (1434) պա-
տարագ կու մատչէր ի տան Հայոց, բայց
չենք կրնար որոշ բան մի զրուցել թէ պա-
տարագի մատուցման տեղին արդեօք ի յա-
տակի տանն էր, թէ ուրիշ սենեկի մի մէջ ի
ստորին յարկի . և տեղւոյն անձկութեան
պատճառաւ կարելի չէր թաղել հօն զմե-
ռեալս, որպէս սովոր էին ընելի ժամանակին՝
յայլ եկեղեցիս քաղաքին, ինչպէս նա և ի
Ա. Խաչ՝ յետ նորաշինութեանն : Թող որ յա-
ռաջ քան զհաստատութիւն տանն Հայոց ի
Շիանեայ, յաւուրս ծերունի Հայոյն և յա-
ռաջ իսկ քան զնա՝ եղեր են ազգայինք մեր
ի Վենետիկ . և փափաքելի է զիւտ վճռոյ
ծերակուտին կամ եպիսկոպոսին Վենետիոյ,
որով կու չնորհուէր Հայոց գերեզմանատեղի
ի Ա. Գէորգ. ուր ընդ համազգեացն ցան-
կացաւ ննջել զանհրաժարելի քունն՝ և ա-
ղուաբարոյ Մարիամս այս, ընդ կանխեալսն
անյայտս և ընդ հետեւեալսն՝ յասպնջական
և ի հիւրամեծար յայսմ քաղաքի, որ ի
զիրկս աղուտ հողոյն ամփոփեալ շտեմարանէ
ոչ սակաւ նշխարս հայութեան . յորոց հա-

զարքն աւելի անուանց հանդիպեր եմք եկմ-
ղեցեաց մտհացուցակ օրագրաւթեանց մէջ, թէ
ի բաւն քաղաքին, և թէ ի կղզիս և ի մեր-
ձակայ ափունս . որոց ամենեցուն մտղթեմք
հանդիստ, ի խաղաղաւէտ ժողովարանն հաւ-
սարակաց, յաշխարհն իրական և յանփո-
փոխելի :



ՀԱՅ – ՎԵՆԵՏ

Բ. ՅԵՂԱՆԱԿ

ՀԱՅԻ Ի ՎԵՆԵՏԻԿ Ի ԺԵ ԵՒ ԺԶ ԴԱՐՄ

ՀԱՅ – ՎԵՆԵՏ

Բ. ՑԵՂԱԽԱԿ

ՀԱՅԻ Ի ՎԵՆԵՏԻԿԻ Ի ՃԵ ԵՒ ՃԶ ԴԱՐՍ

Ա.

Ա. ԳԻՐՔ ՑԻԾԱՑԱԿԱՐԱՆԱՑ ՎԵՆԵՏԿՈՑ ՑԵՐՊԻ-
ԹԵԱՆ. — Բ. ՆԱԽԱՐԿՈՂ ԵՒ ՆԱԽԱՑԵՐ ՀԱՅԻ. —
ՀԱՅԻ ՂՐԻՄԹԻ. — Գ. ԽՆԴԻՐ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ՀԱՅՈՑ Ի ԿՐԵՑԵ :



ԵՆԵՏԿՈՑ անցեալ Հասարակա-
պետութեան անսպառ Դիւանաց
գլխաւոր և փառաւոր հաւաք-
մանց մէկն են 30 մեծ հատոր Յէշ-
տակարանն (Memoriali), այլեւայլ ազ-
գաց և պետութեանց հետ յարաբերութեանց,
դաշնակցութեանց, և պէսպէս խնդրոց և կար-
դաւորութեանց՝ անոնց և իրեն նկատմամբ :
Հատ ցանկալի և խնդալի է այն ազգայնոց՝
որոց նախնիքն ունեցեր են այդպիսի հաղոր-
դակցութիւններ՝ փնտուել անոնց մէջ և գըտ-

նել իրենց հայրենեաց յիշատակները ժի՞
դարէն սկսեալ . Այսպիսի բաղդի և խնդու-
թեան հաղորդ են և մեր ազգայինք . և
արդէն տեսանք ժԳ և ժԴ դարուց մէջ
Հայոց և Վենետիաց յարընչութիւնները , զոր
և Ա. Ցեղանակ անուանեցինք՝ ըստ կարգի
ժամանակին : Շատ աւելի ծանօթութիւններ
պիտի ունենայինք , եթէ դժբաղդաբար այդ
պատուական հատորոց հնագոյնքն՝ 12 կամ
13՝ կրակի ճարակ եղած չըլլային , մանաւանդ
որ անոնց մէջ պիտի գտուէին յիշատակք մեր
Ռուբինեանց Հարստութեան , որոց ոմանց՝
պարզ ցանկի կամ վերնագրի պէս՝ տողաշափ
ակնարկութիւն մի մնայ . որ և կերպով մի
կորսուածին յայտարար ըլլալով՝ միշտ պա-
տուական է և գիւտ մի համարելի : Մեծագոյն
դժբաղդութիւնն այն է՝ երբ յիշատակաց
նշան մ' այլ չերեւիր : Այդ հատորներուն ե-
րեսաց վերնագիրք՝ զանազան պետութեանց
անունները կու կրեն , որոց վերաբերեալն
այլ նշանակուած են նոյն երեսաց մէջ . այդ
վերնագրաց մէկն ալ է Armenia :

Ի՞նչ եռանդեամբ և յօժարութեամբ կու
դարձընէ Հայ բանասէրն՝ այն մագաղաթները
և թուղթերը , և կու հետազօտէ իր նախ-
նեաց (գոնէ մէկ ցեղին կամ իշխանութեան)
յիշատակները , աւելորդ է բացատրել . բայց

շեմ գիտեր՝ ուրախալի՞ն աւելի է՝ եթէ
տխրալին, երբ հետզհետէ շրջելով թուղ-
թերը, կու աւեսնես դեռ քու ազգանունդ ի
վերնագրին, բայց ներքեւը տեղեկութիւնք
կու նուազին, իրր հատ ու կտոր կու նշմա-
րուին... կարծես թէ յիշատակն ժամանա-
կին ալեաց վրայ շուտ սահող նաւու մէջ ծած-
կուած՝ երթալով կու հեռանան։ Քանի մի
թուղթ ալ շրջէ, վերը՝ միայն քու հայրենեացդ
անունն կայ, բայց թղթին երեսն անգիր
անգիծ դատարկ մնայ : Շրջէ քանի մի թուղթ
այլ, և ոչ վերնագիր կ' երեւի. աւազ, Արու-
ուանն իւափանուեր է... նաւն բոլորովին
հեռացեր ծածկուեր է հորիզոնէն անդին : ...
Դադրեր են այն Ադրիական ծովածոցէն և
Փոքր Ասիոյ հարաւային արեւելեան քեզի ծա-
նօթ ծովածոցէն՝ իրարու դիմող ողջունարեր
և արգասարեր նաւերն. մանաւանդ թէ գեռ
այն կողմէն երբեմն կու գան քանի մի նաւք,
բայց անոնց դիմաւարող չկայ. ոչ եւս ձեռն
ի ձեռն Հայք և Վենետիք :

Պատմութիւն կամ դէպք ազգաց՝ շատ
զարմանալի և խրատելի օրինակներ կամ տե-
սարաններ ցուցած են և կու ցուցընեն, ինչ-
պէս յիշեցինք ի սկզբան. այն ցուցմաց մէջ
զարմանալի երեւոյթ մ'ալ էր՝ ԺԳ-ԺԴ-Դ-Դարուց
միջոց յիշեալ Փոքր Ասիոյ ծովեզերքը կենդա-

նացընող և արեւմտեան ազգաց հետ՝ մանաւանդ իտալացւոց և աւելի եւս վենետաց հետ՝ հազորդակից ազգն և պետութիւնն, որ իրբեւ համազդային քերդողական վիպասանութեան մէջ առանձնակ կամ մասնական դրուագ մի է միջինդարեան պատմութեան. իսկ բուն վիպասանութիւն՝ երկարատեւ (զի շըոենք մըշտատեւ) պետութիւնքն են. որոց մէջ իրբեւ զարմանալի երկար դրուագ մ'այլ էր վենետիկան հազարամեայ հաստրակապետութիւնն. — Բայց ո՞ւր է հիմայ և նա : — Զորս գար յետոյ քան զդիպուած իր հայ վաճառակցին՝ ինքն ալ դագրեցաւ. քաղաքականօրէն ինքն ալ թաղուած է իր մշտաշարժ ռակէկոհակ ծովածոցին մէջ.... Ս. Մարկոսի գոռոզաձայն առիւծու մոնշիւնն եւս այլ չի լսուիր :

Ակայն միայն իշխանութեամբ և հրամանատուութեամբ չի վերջանար ազգի մի անուն և փառք. Վենետիկ փառաւոր կեանք մի ունեցաւ, թողուց և փառաւոր յիշատակ. Թող իր հին դաշնակցին կեանքն և յիշատակն այլ չի մնայ անփառունակ : — Եթէ այն միջինդարեան Հայ-Վենետաց յիշատակաց նաւն ծածկուած է, եթէ և խորտակուած, դեռ խորտակեալ նաւու թափառական բեկորներ կ'երեւին ալեաց վրայ և ի յետին դարս. դարձեալ ըստ ընթացից

ժամանակի՝ կը ընայ շարունակ ըստիլ, թէ ոչ
վենետաց երեւոյթն ի Հայս, այլ Հայոց ե-
րեւոյթն և բնակութիւնն ի Վենետիկ։ Այս
երեւոյթս արդարեւ նուազ է իրրեւ երկու
դար (ԺԵ, ԺԶ), յորում օտարոտի և անհա-
աատ տիրապետութեանց բռնարարութեամբ
կու տատանէր մեր և մեր դրացի ազգաց
վիճակն. իսկ երբ աւելի կանոնաւոր և զօ-
րաւոր տէրութիւնք հաստատուեցան յարեւմը-
տեան Ասիա, մերազգիք այլ սկսան դարձեալ
յաճախել ի Վենետիկ, և նոր օրինակ վա-
ճառակցութիւն մի հաստատել. և ասով նոր
Յեղանակ մ' այլ սկսաւ Հայ-Վենետաց, զոր
Գ. կ' անուանեմք. իսկ ասոր և առաջնոյն մի-
ջոցն՝ Բ., որ է այն կցկառուր յարաբերու-
թեանց կամ երեւութից Հայոց ընդ Վե-
նետս, ի վերջոյ ԺԴ դարու մինչեւ ի վերջ-
կոյս ԺԶ դարու։ Ահա այս Բ. Յեղանակիս
միջոց հանդիպած քանի մի երեւոյթները
կ' ուզեմ յայտնել յառաջիկայս, որոց արժեքը
կը ընան դատել ընթերցողք, թերեւս և յար-
գել մէկ քանին։

Ա. Արդէն յիշեցինք մէկ երկու դէպք կամ
Հայ անձինք ի Վենետիկ, յետ դադրելու
Ռուբինեանց դաշնակցութեան, ԺԴ դարուն
վերջերը. նոյն դարուն ետքի տարիներում
(1395) յայտնուած է ոմն Անդոն որդի Բարով։

(de Baseo կամ Baseis), որ կարճ կտակ մի ըրած է 6 փերբ. 1394–5), յորում կ'իմացուի Հայ ըլլալն. De Armenia), այլ գաւառն կամ քաղաքն՝ ոչ. արուեստիւ ալ՝ Նաւաստի (Marinarius). ի Վենետիկ բնակութեան տեղն է Ս. Մարտիալէս թաղն, որոյ քահանայից մէկն է կտակը գրող նօտարն (Joh. Campio). իսկ կինն Մարտիս դուստր Թէոդորէ Ճննդեամբ ի Դուրացցոյ (Durazzo) Ռումելիոյ. ասոր կու թողու Անտոն անոր բերած օժիտը, երեք Լիռոյ կրոսէց, որոց արժէքը յիշած եմք (տ. երես 60):

Զարմանք չէ, մանաւանդ թէ բնական իմն է, որ ի Վենետիկ՝ այն դարուց նաւարկութեան առաջին քաղաքում բնակող Հայ մի հետեւի անոր ամենէն նշանաւոր արուեստին. մեծ կամ փոքր նաւարկութեան: Նոյն դարու առջի կիսուն մէջ այլ յիշուին Հայ Նաւապետք, թէ ի Սեւ ծովու և թէ իտալիոյ կողմերու ջրոց մէջ. բայց աւելի կուծանօթանան Գ. Յեղանակին մէջ, թէ նաւապետ և թէ նաւատէր Հայք, և թէ գործաւորք Վենետիկոյ հոչակաւոր Նաւարանին: Այս տեղւոյս թաղական եկեղեցւոյն (Ս. Պետրոս) դիւանաց մէջ՝ Ժ. դարուն վերջեր և Ժիկին սկիզբները կու յիշուին Եղիշ Հայում մի որդիք, գրեթէ ամէնքն ալ (Գեորգ, Յով-

հան, Մարանգոն, Նիկուլաս) բանւորք կամ հիւսունք (Marangon) ի Նաւարանին. իսկ մէկն այլ (Պետրոս) Նաւապետ (Capitan), որ ի Ռազկուզա առեր է կին Ֆրանչեսկիինա անուամբ։ Ասոնցմէ առաջ և ժամանակակից է՝ յատուկ մականուամբ Հայ, կոչուած Անդրոն, և իր որդին և թոռն, որ դար մի կու յիշուին նաւարանի կամ նաւական գործոց մէջ, և մեծ ճարտարութեան յիշատակներ թողած է, զոր թողումք ի կարգի ժամանակին ծանուցանել, որպէս և ուրիշ նաւապետներ ԺՈ դարուն կիսուն, Capitan կոչուածք. (Մարանգոն † յամի 1753, Պետրոս Բալասան, Յակով Ալեքսան), եւ այլն. ետքինս կ'անուանի երբեմն Կալիբրա նաւու գլխաւոր, Capo di Galera, երբեմն Ռմբաձիգ նաւու գլխաւոր, Capitano Bombardier :

Այս մեր հիմայ քննելի Բ Յեղանակի մէջ Հայոց նաւարկութեան կամ ծովային երթեւեկութեան գլխաւոր տեղ մ'այլ պէտք էր ըլլալ Սեւ ծովու նշանաւոր թերակղզւոյն քաջանշան քաղաքն Կաֆա, որոյ Հայ գաղթականութեան պատմութիւնն արդէն հրատարակուեցաւ (1), որք և աւելի Ճենովայի

1. Պատմութիւն գաղթականութեան Ղրիմու Հայոց, գրեաց Հ. Քերովբէ Վ. Գուշներեւն. Վենետիկ, Ս. Ղազար, 1895:

Հետ յարաբերութիւն ունեցեր են՝ քան վենետիկոյ : Բայց մեր նախայիշեալ Բարողի որդի Անտոնի կտակագրած տարին, կաֆացի Յովհաննէս Հայ մ' ալ ի Վենետիկ՝ նօտարական գրուածով (6 յունիսի, 1395) իր Մորդուածու անուամբ կինը իրեն փոխանորդ կամ գործակալ հաստատած է, որ կարող ըլլայ պահանջելու իր առնելիքները՝ որ և է անձէ կամ տեղէ, և զլխաւորապէս զինավառութեան պաշտօնարանէն կամ Սենեկէն, (Camerata Armamentis : Յովհաննէս՝ ի Ս. Առաքելոց եկեղեցւոյն թաղը բնակէր է . որոյ աւագերէցն և քահանայք և կղերիկոս մ' այլ իրրեւ վկայք ձեռք դրած են այս գրուածիս . որոյ իմաստէն գուշակուի որ Յովհաննէս պիտի մեկնէր ի Վենետիկոյ, հաւանօրէն վաճառականութեան համար, գուցէ և ինքն իսկ նաւու վրայ իշխանութիւն կամ պաշտօն մ' ունէր՝ որովհետեւ իրեն պարտական Սենեկն՝ կրնայ նշանակել և նաւեր զինելու և պատրաստելու տեղ : Յայտ է որ Յովհանն սոսկ եկող գացող վաճառական մի չէր, այլ հաստատ բնակող ի Վենետիկ, ինչպէս կ'ըսէ (habitator Venetiis), որոյ յայտնագոյն եւս նշանն է (ինչպէս և նախագրեալ Անտոնին) կին ունինալն . և զայն իրեն գործակալ կամ փոխանորդ դնելն կու ցուցընէ՝ որ նա այլ ծանօթ էր ի քաղաքին :

Այս երկու անձանց այլ (Յովհան և Անտոն) կանամբի ըլլալն՝ աւելի կարեւոր յայտնութիւն մի է, ժԴ դարու մէջ ի վենետիկ Հայ ընտանեաց կամ տանուտիրաց գտնըւելուն, թէ և ասոնց կանայքն հայազգի շըլլան. սակայն եթէ անոնք ոչ՝ անհաւանական չէ որ կային և Հայ կանայք արամբիք կամ ամուրէք, ինչպէս այն Հայոց տան հոգացող և կտակող Մարիամն՝ նոյն դարուն կիսէն այլ առաջ, (Եր. 157): Այս բանս ոչ միայն աւելի յայտնի կ'ըլլար, այլ թերեւս շատ ազգայինք մեր՝ և անոնց զաւակքն և վիճակն կու յայտնուէին, եթէ այն ժամանակներ այլ սովորութիւն ըլլար եկեղեցական և քաղաքական դիւանաց մէջ՝ հանդիպած օրին նշանակել պատկները, ծնունդները և մահերը, կամ թէ կորսուած շըլլային (եթէ եղած են) դիւանքն, ինչպէս որ հիմայ թէ քաղքիս (Վենետիկոյ) ամենայն թաղական եկեղեցեաց մէջկան և կու պահուին այսպիսի դիւանք. Վենետիկոյ մէջ ժԶ դարէն հին կամ առաջ չեն գտուիր. իսկ այս դարսւս կիսէն ետեւ շատ եկեղեցեաց դիւանաց մէջ նշանակուած են, որչափ որ ինձ ծանօթ են, և առաւելապէս մահք Հայոց (իբրեւ 1200), Ծնունդք (800), Պաակք (250). այս ետքի վիճակէս գտած եմ նշանակուած 120 Հայ մարդ ընդ Վենետուիս կամ իտալացի

կանայս, հարիւրիւ չափ Հայ կանայս ընդ
իտալացի արանց, 40 դոյգ այր և կին Հայ
ամուսինք : Առաջին պատկ և ծնունդ Հայու
(գտածս) է ԺԶ դարու Կիսում (1569), այլ
անտարակոյս է անկէ առաջ այլ ըլլան :

Բ. ԺԵ դարուն սկիզբները (1414) նոր և
կարեւոր խնդիր մի, թերեւս և դէպք, եղած
է Հայոց ընդ Վենետիկ յարակցութեան, թէ
և յայտնի չէ խնդրոյն կամ գործոյն ինչպէս
վճարիլն : Շատոնց Վենետիկոյ քաղաքացի Հա-
մարուած Հայ մի, որ կամ ազնուականու-
թեամբ կամ հարստութեամբ նշանաւոր եղած
պիտի ըլլայ, հաւանօքէն Աբրահամ Անդրեան
կոչուած (Abraynus Anteron գրուած լա-
տինարէն), որ երբեմն ի Տրապիզոն Վենե-
տիկ ամրոցի մէջ է բնակեր, (in castro no-
stro Trapesunde), տէրութեան Ծերակուաին
խնդիր կու մատուցանէ (յայտ է թէ գրով,
բայց առաջուց խօսուած և հաւանութիւն առած
ըլլալով), որ Հայոց գաղթականութիւն մի
հաստատէ՝ այն ատեն Վենետիկ իշխանու-
թեան տակ եղած կրետէ և Նեկրօպանա
(Նյրիպօզ) կղղեաց մէջ աւելի քան 80 Հայ
ընտանիք Տրապիզոնի և Սերաստիոյ կողմե-
րէն յօժարեր են գալու այս ծովային կողմերը
և իրենց առաջնորդին (Անտէրունի) բերնով
կու խնդրեն պաշտպանութիւն, գիւրութիւն և

մաքսի թերեւութիւն : - Ծերակոյտն վերոյիշեալ տարւոյն փերրուարի 10 ին, կու քննէ խնդիրը, և միաբան կամք 93 ժողովելոց և քուէից՝ հաւանութեան վճիռ կու տայ, խոստանալով ամեն դիւրութիւն ինչ որ տէրութեան ուրիշ հպատակաց կու տրուէր. և կու հրամայէ զրել այն կղզեաց կառավարչին, որ ըստ այսմ վճռի գործէ և կատարէ : Վճռոյն օրինակն կու պահուի ծերակուտին Դիւանաց մէջ. խնդրողին աղերսագիրն չկայ, կամ չէ յայտնուած. անյայտ է ինձ և կարեւորագոյն գիտելին. այսինքն, թէ կատարուած է գաղթականութիւնն. այնքան Հայընտանիք, ոմանք Պոնտոսի եղերքէն, ոմանք Փոքր Ասիոյ գրեթէ կենդրոնէն, թողլով իրենց տունը տեղը՝ եկե՞ր են ինչուան Եգէական ծովածոցի մէջ բոյն դնելու, և նոր կերպով վաճառականութեան պարապելու : Զէ անհաւանելի : Նկատելով որ այն ատեն Տրապիզոն առանձին Յունաց կայսրութեան մի մայրաքաղաք էր, ուր կու յաճախէին վենետիք և Գենուացիք՝ հին դաշնակիցք Հայոց . Օսմանեանց տէրութիւնն այլ դեռ հաստատուած չէր Փոքր Ասիոյ ամեն կողմերում, և դեռ ծովու վրայ զօրութիւն չունէր . ընդ հակառակն, Վենետաց նաւային զօրութեան ամենէն յաջող ժամանակն էր :

ասոնց պաշտպանութեան ներքեւ կը ընային
 Հայք գալ, բնակել և վաճառակցել յիշեալ
 կղզեաց մէջ : Արդէն Հայք կիլիկիոյ իրենց
 տէրութեան վերջի տարիներում սկսեր էին
 սփոխ ինչուան ի Յունաստան և ի կղզիս ծո-
 վամիջոցի Փոքր Ասիոյ, և ոմանք ի Մետի-
 լինէ գալով՝ կու խնդրէին Հոռոսի ասպետ-
 ներէն և կ'ընդունէին կով (Լանկոյ) կղզւոյ
 մէջ երկիր, եկեղեցի և մշակութեան եզներ,
 և այլն, յամի 1366 : Բայց արդեօք կու
 յիշէին, մանաւանդ յԵւրիա (Նեկրոպոլտ)
 եկողք կամ գալ փափազողքն՝ իրենց 1500
 տարի առաջ աշխարհակալ Արտաշէս թա-
 գաւորին այն կողմերը նուաճելը, և իրեն
 ալ հօն մահուամբ կամ սպանմամբ նուա-
 ճուիլը : - Եթէ այս ցամաքի դրացի երկայ-
 նաձեւ կղզւոյ մէջ Հայոց բնակութիւնն այն-
 քան ծանօթ չէ, անտարակոյս է կրետէի մէջ,
 որոյ ՃԳ գարուն սկիզբէն (1204) Վենետիք տի-
 րէին : Ապրոյեանց ազնուական ազգաբանու-
 թենէն՝ որ բաւական ծանօթ է ազգայնոց՝
 յայտնի է, որ այն հռչակաւոր Ապրոյ Զէլէ-
 պին կարեւոր գործ մ' ունեցած է Օսմա-
 նեանց բանակին մէջ՝ կրետէի երկար պաշար-
 ման և առման ատեն՝ ի ձեռաց Վենետաց
 (1669), և նոյն բանակին մէջ և դուրս գը-
 տուող Հայերէն՝ հարիւրաւորներ բնակեցու-

ցեր է ի Գանտիա, եկեղեցի մ' այլ նորուգելով զարդարեր և Ա. Կարապետ անուանել տուած է։ Բայց անկէց առաջ այլ այն տեղ Հայոց գտուելուն մեծ հաւաստիք է Գ. Ոքրահամ կաթողիկոսին հօն ծնանիլն և այն ատեն երախայ ըլլալն։ Այն պաշարման կամ պատերազմի տարիներուն մէջ էր, որ (յամի 1657), Խաչատուր կաթողիկոս Սսոյ՝ ըստ ժամանակագրի միոյ, «Առաջի Ֆրանչեսկոյ Մորոզինի՝ որ եղեւ գուքս Վենետիկոյ, և Մարքէզին Վիլլայ՝ պատարագեց ի Կրետէ հանդիսապէս, և պարգեւեց Մարքէզի Վիլլային՝ զաջ Արրոյն Նիկողայոսի ի Քառասնիցն» (Մանկանց Աեբաստիոյ), և այլն։

Բ.

Ա. ՊԱՐՈՆ ԳՈՐԴ ԵՒ ՊՐ. ՅԱԿՈԲ ՀԱՅՔ Ի ՎԵՆԵ-
ՏԻԿ (1434). — Բ. ՕՍՄԱՆԵԱՆՑ ԵՒ ԴԵՍԹԻՆԼՈՒ
ԹՈՒՐՔԱՑ ԶՈՐԱՆԱԼՆ ԵՒ ՀԱԿԱՌԱԿՆԵԼՆ. — Գ. ՄԻ-
ՐԱՑ ԿԱՄ ՄԻՒՐԱՔ ՀԱՑ ԴԵՍՎԱՆ Ի ՎԵՆԵՏԻԿ. — Դ.
ԿԻՊՐՈՍԻ ՀԱՅՔ :

Ա. Անտէրռենի կամ Կրետեայ Հայ գաղ-
թականութեան յիշատակէն 20 տարի վերջ,
առաջին անգամ յիշատակ կ'ըլլայ ի Վենե-
տիկ ճադրան՝ Հայոց քան մէջ, կամ որպիսի և
է պատարագելու տեղւոյ : Այս բանս նշա-
նակուած է լատինէ թարգմանուած հայե-
րէն պատարագամատուցի մի մէջ և գրուած
(յամի 1381) ի Բոլոնիա քաղաքի իտալիոյ,
այն տեղի Հայոց վանատան կամ հոգետան
մէջ. գիրքն հիմայ Բարիզու մեծ գրատան
մէջ կու պահուի . բայց ատեն մի կ'երեւի
բերուած ի Վենետիկ . վասն զի վերջի թղթին
վրայ գրեր է Գորդ կամ Գէորգ անուն մէկն՝
յամի 1434, անվարժ ձեռքով՝ բայց տիրա-
րար, իբրեւ այն ատեն ծանօթ և նշանաւոր
անձ մի, ուրիշ պատուաւոր Հայազգի մ'այլ
յիշելով . « ՈՒՆԻԴ և ՊԶԴ Հայոց (1434).
« Ես Գորդս կու տամ Պարոն Յակոբին և

« իր որդւոյն՝ ղայս Միսալս, որ է Պատարա-
« գատետը. ով որ գայ ի Վենէժս, որ կա-
« մի պատարագ առնել, նա առնու և պա-
տարագ առնէ ի Հայ տուն » . . . Երկու
տող ալ կ'աւելցընէ կիսաս բառերով, որով
կ'երեւի պահանջել որ զիրքն ապահօվ պահեն
Պարոն Յակորն ու իր որդին : — Ինչպէս
Գորդի՝ այսպէս Յակոբայ այլ ո՛վ և ուստի
գալն՝ յայտնի չէ (⁴). Կըրնայ կարծուիլ թէ
Ղրիմու կողմէն ըլլայ, գոնէ ժամանակ մի
ի Վենետիկ բնակելու կամք ունենալով. ուր,
խօսքէն կ'երեւի, որ արդէն կու բնակէր
Գորդ ի Տան Հայոց, և ուր երրիմն հանդիւ-
պէին և պատարագէին Հայ կարգաւորք :
Իսկ պատարագատեղին կ'երեւի թէ սենեկի
մէջ խորան կամ սեղան մի էր. և դեռ հաս-
տատուն պատարագիշ կամ մատրանապետ
քահանայ չկար. թողունք ուրեմն որ ժամա-
նակն առաջ երթալով՝ նորէն յերեւան հանէ
Հայոց եկեղեցւոյ խնդիրն ի Վենետիկ :

4. Թերեւս գիպուտած ըլլաս, բայց ստոյդ է որ ԺԶ
դարու մէջ նա և ցկէս ԺԵՒն, Հայոց տան գլխաւոր
բնակչաց և պահապանաց շատերն Գէորդ և Յակոբ կո-
չուին, և շատ հեղ յիշուին այլեւայլ գործերով՝ Գէորդ
որդի Յակովայ, Յակովը որդի Գէորդայ, և թուի թէ
ոմանք նոյն ցեղէ են որդիէ որդի. ասոնցմէ երեք չորսն՝
հարիւր տարեկան մեռած նշանակուած են :

Բ. Հիմայ աշք մի տանք յարեւելս , ուր շատ մեծ քաղաքական փոփոխութիւններ կ'ըլլան , որոյ նմանք հազիւ երբէք հանդիպած են ի պատմութեան . և թէպէտ մեր նպատակէն դուրս է զանոնք քննել կամ յիշել , այլ որովհետեւ Վենետաց հետ այլ յարաբերութիւն ունին , ասոնցմով Հայոց հետ այլ եղած է . հարկ է գոնէ մէկ խօսքով միայն ներկայացընել Ասիոյ և Եւրոպիոյ կցորդաւթեան գեղեցիկ , զարմանալի և բաղդասահման կայուն ու անկայուն կապն ու միջոցը , Վոսփորի Շովագետն . որոյ արեւելքէն՝ յարեւմուտս անցնելով Օսմանեանք , ոչ միայն կոստանդնեան հազարամեայ կայսրութիւնը վերուցին , այլ և նոր տեսարան բացին պատմութեան և աշխարհավարութեան , ընդարձակելով զարեւելականութիւն և ամփոփելով զարեւմտականն : Այն ամենամեծ յեղափոխութեան ժամանակ , ամեն ազգէ և ամեն աշխարհէ մարդիկ գտնուէին հօն (ի կ. Պօլիս) , ոչ այնքան քաղաքական գործոց և գաշնակցութեանց համար , որքան վաճառականութեան : Այս նկատմամբ՝ յայտ է որ ամենէն գործունեալք և չահավաստակք յԵւրոպացւոց՝ էին Ճենովացիք և Վենետք . (Երկուքն ալ երբեմն զլխաւորք արեւմտեան վաճառակցաց Հայոց) . առաջինքն՝ Յունաց

օգնական ըլլալով՝ անոնց ճգնաժամ պատերազմին և կայսերական քաղքին նուանման տատեն, չէին կը ընար համարձակիլ յաղթող սուլտանին առջեւ. իսկ երկրորդքն (Վենետիք) իրենց խորագէտ քաղաքավարութեամբ, միանգամայն և հակառակութեամբ ընդ ձենովացիս, աւելի համարձակ էին. որով՝ այն մեծ և բազմազգի քաղքին մէջ արեւելեան ժողովրդոց պաշտպան կեցան. ասոնք էին զատ ի Յունաց՝ Հայք և Հրեայք. յաղթող նոր տէրութիւնն ալ հաւանեցաւ. և այսպէս հեռու և օտար՝ այլ մեծ կենդրոնի մի վրայ՝ նոր կապ մի եղաւ Հայ-Վենետաց :

Ոչ ոք կարծեմ տարակուսի՝ որ արդէն բաւական բազմութիւն մի Հայոց կար ի Կ. Պօլիս, և թէպէտ նոր գաղթականներով աւելի բազմացուց զանոնք սուլտանն, այլ առաջնոց շատութեան վկայ է իրենց յատուկ եպիսկոպոս ունենալն, որ կու յիշուի ԺԻ դարուն սկիզբէն իսկ (1307)։ Քանի որ Վենետիք շարունակեցին իրենց պայլերը (¹), նաւարկութիւնը և վաճառականութիւնը ի նորափոխեալ հին քաղաքին, աներկբայ է և Հայոց ոչ միայն իրենց հետ գործ տեսնելն,

1. Ասոնց ապարանքն՝ ինչուան հիմայ Պալեօն կոչմամբ յիշուի և լսուի ի Կ. Պօլիս :

այլ և անոնց նաւերով երթալ գալն ի վե-
նետիկ :

Այս մեծ յեղափոխութեան ատեն՝ թէ և
ոչ շատ նշանաւոր՝ այլ և ոչ աննշան կ'ըլլար
Հայոց ազգին համար իրենց բուն երկիրն,
և այն այլ նոր յարաբերութեանց և ծանօ-
թութեանց առիթ Հայ-Վենետաց : Մինչդեռ
Օսմաննեանք ի ԺԴ և ԺԵ դարս Փոքր Ասիս
մէջ դէպ յարեւմուտս և ի հարաւ յառաջ
ի' անցնէին՝ մինչեւ ուր որ տեսանք, Հայաս-
տան և իր դրակից Ասորոց երկիրն՝ անոնց
ոչ հեռաւոր տօհմակից երկու թուրք ցեղերու
տիրապետաց կամ բռնաւորաց բարբարական
իշխանութեան տակ ընկած էր . ծանօթ են
Սեւ և Ճերմակ Խոյ կոչուած տոհմքն (Գո-
բակչյունլու, Աճիշյունլու), որք երբեմն իրարու
հետ հաշտ և երբեմն անհաշտ՝ անկանոն տէ-
րութեամբ կու նեղէին թէ զիրար և թէ
զժողովուրդն : Խոկ այն ժամանակ որ Օս-
մաննեանք զօրանալով՝ հաստատեցան կ . Պոլ-
սի գահու վրայ, այս ասիական կողմերս ալ
զօրացան Ապիտակախոյք և նուաճեցին զԱեւա-
խոյս . և ոչ միայն զօրացան՝ այլ և քաղա-
քականութեան ճաշակ առին և արեւմտեայց
հետ ծանօթութիւն և յարաբերութիւն հաս-
տատեցին . այս բանիս մէջ ալ Վենետաց և
Հայոց քիչ շատ գործ կայ : Այն Ապիտակ

տռհմին (թէ և սեւանուն՝ Գրբա Օսման կամ
Գրբա Եօլոսի) նահապետն՝ արդէն Տրապիզոնի
կոմմենեան Յունաց կայսերութեան հետ ըն-
տանեցեր էր, Ալեքս կայսեր դուստրը կին
առնըլով. հիմայ իր թուան՝ անուանին Ուղար-
չասան կամ Հասան Բիկ՝ առաւ Յովհաննէս
կայսեր դուստրը (գործամանակակից գրիչք
մեր՝ Դիեսբին Խանուն կոչեն, փոխանակ ըսելու
Դիսպատինա): Այս ոչինչ նուազ քան ըզ-
սուլտանն (Մէհմեմէտ) յաղթող ինքնագլուխ
թէկն, որ Հայոց, Պարսից և Ասորւոց տի-
րոզ երեք գլուխներն ալ վերցընելով միա-
պետէր այնքան ընդարձակ աշխարհաց, բնա-
կանապէս սահմանակից կ'ունենար զՍմա-
նեանս: Երկու մեծ և հզօր անկախ տէրու-
թիւնք ձեւացան, աշխարհակալելով. և հարկ
էր որ այդ ոճով իրարու բարեկամ չըլլային,
և քիչ ուշ կամ շուտ իրարու զարնուէին: Ասոնց խորհուրդն և զործն՝ մեր նպատակէն
դուրս է. միայն հարկաւոր ըսելիքն այս է,
որ Ուզուն Հասան՝ ոչ միայն հզօր այլ եւ
հեռատես քան իր նախորդքը, կշռելով իր
ոյժը իրեն հակառակորդ ըլլալու Օսմանեան
տէրութեան հետ, և անոր զինուց և հրա-
զինուց առաւելութիւնը, կարեւոր համարեց
աւելի կիրթ և վարժ օգնական մ'ունենալ.
և աշքը դարձուց դէպ ի Վենետիկ, որոյ

վահառակոնք և Պայլք վաղուց ի վեր՝ կ'երթ-
եւեկէին և նստէին ի Դաւրէժ։ Մեր աւելի
հեռատես և խորագէտ ծովաքաղաքացիք այլ՝
որչափ որ Օսմանեանց հետ դաշնակցութեամբ
և հաշտութեամբ վարուէին կ. Պօլսոյ տիրա-
փոխութեան ատեն, լաւ կու զգային որ չէր
կըրնար երկար ատեն տեւել բռնի բարեկամու-
թիւն։ Օսմանեանք ուշ կամ շուտ ընդ ծով և
ընդ ցամաք պիտի շարունակէին իրենց յառա-
ջադիմութիւնը։ և եթէ ոչ ի ցամաքի՝ այլ ի
ծովու մեծ վտանգ կար Վենետաց, իրենց
ծովերու մէջ սփռուած հարուստ կղզեաց կո-
րըստեան, և իրենց ծովային զօրութեան՝
ահարկու հակառակորդի։ Ապա իրենք ալ
աշուընին դարձուցին առ Հասան Բէկ, ճանչ-
նալով անոր ոյժը, արթնութիւնը, և իրեն
նախնեաց աննման քաղաքավարութիւնը։ և
յառաջ քան իրօք և գրօք՝ ծածուկ կամ հա-
մակրական ընտանութիւն մի ըրին, որ քիչ
քիչ փոխեցաւ և ի դաշնակցութիւն։ Վենե-
տաց դքսին Պայլքն՝ ի դեսպանս փոխեցան,
որոց եօթն կամ ութ մէկմէկու ետեւէ եկած
են առ Բէկն՝ նոյնքան քիչ տարիներու մի-
ջոց (1470-78)։ եռքի թուականիս (1478)՝
մեռած է Հասան։

Սա գրգռուած իր նոր դաշնակիցներէն՝
որք սկսան վախցընել, թէ Օսմանեանք կու

պատրաստուին իր երկիրները կոխելու, ուզեց
կանոնաւոր և հաստատ բարեկամութիւն և
օգնականութիւն հաստատել, և սկսաւ իր
կողմէն ալ դեսպան խաւրել ի Վենետիկ
(1464-8), նախ մէկ երկու Պարսիկ, յետոյ
աւելի յաջողելու համար ուզեց Հռովմայ Ա.
Քահանայապետին այլ խաւրել. և այս բանիս
յարմարագոյն համարեց քրիստոնեայ մի,
Հայ մի :

Գ. Այս երկու դեսպանութեանց միան-
գամայն կատարող Հայն՝ կոչուէր Միքայ,
(ըստ իտալական թարգմանութեան թղթոյ
Բէկին ի պարսկերէնէ), իր հաւատարիմ
սպասաւոր կամ պաշտօնեայն. Mando alla
presenza vostra questo Nontio e fedel
servidor nostro, il qual si chiama *Mirat,*
de nazion Armeno. Dateli piena fede di
quello che a bocca vi riferirà in nome
nostro. Θωηρίν գրուած է ի Սուլտանիա,
ուր էր այն ատեն արքայական աթոռ Բէկին,
յ' 2 օգոստ., 1469 տարւոյ : Միրատայ անունն
կըրնար Մուրադ ըլլալ, բայց հաւանագոյն է
որ ըլլայ Միքայ, ինչպէս պիտի յիշեմք յետոյ:
Սա՛ թէ յառաջ կամ վերջը գացե՞ր է և ի
Հռովմ առ Պապն Պողոս Բ. շեմ գիտեր.
այլ ի Վենետիկ հասաւ փերրուար ամսու
մէջ, 1470ին, և մարտի եօթին ներկայացուց

իր տիրոջ թուղթը հանդերձ խտալերէն թարգմանութեամբ. յորում կու յիշեցընէր Բէկն իր յաղթութիւնները, և երեք տիրապետները վերցընելը. կու մար չօրրորդը՝ զոր կ' անուանէր Օսմանի որդի Մէհմէմէտ Բէկ (սուլտանն), զոր և յուսար Վէնետիաց նաւազօրուն օգնութեամբ, և իր ցամաքային բանակաւ՝ քշել հանել թէ յԵւրոպիոյ և թէ յԱսիոյ. (բայց պատերազմի բաղդն այլ ինչուան վերջ օգնական չեղաւ իրեն)։ Խորագէտ և երբեմն խորամանկ ծերակոյտն չորս ամիս ուշացուց պատասխան տալ Միրաքայ, զոր պատով պահէր ի Վէնետիկ. վասն զի այն ատեն Սուլտանին հետ ալ դաշնադրութիւն ունէր, և կու սպասէր իր պատգամաւորաց լուրերուն. և երբ Դրան հետ խօսակցութիւնն յերկարեցաւ, Միրաքայ իմացուց՝ որ իրեն փոխարէն Դուքսն ալ դեապան կու խաւրէ (զկատերինոյ Ծենոյ), և անոր բերնով ամեն բան կու ծանուցանէ. բայց վախնալով ալ որ ճամբան փորձանաց չհանդիպի, պարսկերէն պատասխան մ' այլ գրել տուաւ և յանձնեց առ Միրաք՝ որ տանի տիրոջը։ Գրուածն՝ շնորհակալութիւն մ'էր բարեկամական, միանգամայն և յորդոր աղէկ պատրաստութեան ընդդէմ Օսմանեանց, որոց դէմ թէ և Հասան իր որդւոյն առաջնոր-

դութեամբ խաւրած էր 40,000 զօրք ի Գա-
րամանիա (Կիլիկիոյ կողմերը), բայց բա-
ւական չէր համարուեր : Երկու դեսպանքն
իրենց սպասաւորներով և ընկերներով միա-
աեղ պիտի ճամբռուէին, յայտ է թէ, ըստ սովո-
րութեան՝ ընծաներ այլ տանելով . բայց դար-
ձեալ դէպք ստիպեցին որ կատերինոյ ուշանայ
ի Վենետիկ մինչեւ ի սեպտեմբեր ամիս . իսկ
Միրաք ալ սպասեց արդեօք եթէ մինակ գնաց,
և ի՞նչ ընդունելութիւն ունեցաւ ի Հասա-
նայ, յայտնի չէ . որովհետեւ Ծենոյի յա-
տուեկ գրած դեսպանութեան պատմութիւնն
կորած է : Բայց յետոյ կ'երեւի թէ Միրաք
անակնկալ վախճան մ'ունեցեր է, (Համարե-
լով միշտ որ նոյն են Միրաքն և Միրատն) : —
Հասանայ մահուանէն տան տարի վերջ (1488)
կու գրէ ժամանակակից ազգային մի, թէ
Դաւրիժու « ղատին թաթար էր, և հալածէր
» զքրիստոնեայս : . (և) Տաճիկ ոմն Մէհրի
» սպան զխօճայ Միրաքն, վասն ի Քրիստոս
» հաւատոց . որ և յիշատակն օրհնութեամբ
» եղիցի » : Այս յիշատակը Յայսմաւուրք կ'ա-
ւանդեն երկարօքէն, ի 21 Մարտի, որ օր (ա-
ւագ ուրբաթուն) նահատակեցաւ . Վենետիկեցի
ականատեսք ալ պատմեցին իրենց Յովսափատ
Պարպարոյ դեսպանին, (որ յետ կատերինոյ
եկած էր), ինքն ալ կու յիշէ իր գրած տե-
ղեկութեանց մէջ :

Դ. Միբագրայ դեսպանութենէն քանի մի տարի վերջ՝ երկու հեռաւոր դաշնակիցքն վենետիք և Պարպէ՝ իրենց կողմը ձգելով զԳարամանն (Կիլիկիոյ մասին իշխողն), քանի մի ծավեղերեայ բերդեր գրաւեցին, կռուիկոս, Սելեւկիա, Սիկոյ բերդ, և այլն). իսկ ցամագի վրայ՝ Հասան առաջ յաջողելով՝ վերջը ձախողելով ի Դերջան մեծ պատերազմի մէջ, յետ քաշուեցաւ, վենետիք ալ կարճ ժամանակ մի ողջունելով իրենց հարց ծանօթ հին դաշնակցաց (Հայոց) ծովափունքը՝ նաւերնին և զէնքերնին յետ դարձուցին, ոչ անցաւ աշօք դիտելով իրենց այլ անոնց այլ անբաւ հարստութիւն բղխող Այասոյ կիսաւեր բերդերն ու ամայացեալ նաւահանգիստը՝ Անկէ հեռանալու ատեն կու հանդիպէին ի Կիպրոս, ուր՝ ճիշդ դար մի յառաջ Հայոց իշխանութեան դադրած տարին, մասն մի ժողովը բանակ անցեր էր յայս գրացի կղզին, իրենց Լիւզինեան թագաւորաց ազգականաց քով, և ոմանք անոնց արքունեաց մէջ պատոնեայ եղած էին, ոմանք ալ գետիններ գնած տեղացի դարձեր. որոց սերունդէն դեռ գտուին մինչեւ այսօր : Բայց այս յիշեալ ժամանակս (1475) Կիպրոսի Լիւզինեան թագաւորաց ցեղն այլ նուազիր էր, և թագաւորութիւնն ընկած վերջի թագաւորին կնոջ,



Գունարոյ կատարինէ բագռհի.

զեղեցկութեամբ և պէսպէս բաղդով հաշակեալ Վենետիկեցի Կառարինե Գուռնարոյ դըշխոյի, որ վերջինն եղաւ Կիպրոսի և Երուսաղեմի հետ՝ Հայոց նախանձի անուանուելու, և զնոյն դրաշմելու իր շիրմին վրայ՝ ի Վենետիկ։ ուր՝ ճարտարութեամբ կամ խարէութեամբ փոխադրեցին զինքը՝ իր հայրենակիցը Վենետիկն, և մինչեւ ի մահն օրինաւոր թագուհւոյ պատուով և անուամբ մեծարեցին։ որոց փոխարէն՝ այն մեծ և պաղարեր գիներեր Կիպրոս կղզին՝ իրենց հասարակապետութեան ժառանգութիւն ըրին, յամին 1489։ Բայց չմոռցան և զՀայս։ և երբ կղզւոյն առաջին կուսակալ հոգցող կարգեցին (զ0գոտինոս Պարպարիկոյ), յատկապէս պատուիրեց ծերակոյտն (ի 27 օգոստ., 1489), որ Հայոց այլ սահմանեալ թոշակները տայ իւրաքանչիւր արդեանց համեմատ։ բայց երբ անոնք հեռանան կամ մեռնին՝ անոնց տեղուրիշ անձ չի դնէ, առանց ծերակուտին հարցընելու (¹)։

Յայտ է ասով՝ որ Ռուբինեանց պայազա-

1. Armeniis dari facies pro eorum merito statuto stipendium suum consuetum. Loco autem eorum qui pro tempore deficiunt, non surrogabis aliquem, absque expressa licentia et ordine nostro.

տաց՝ վերջին գլ կոստանդեանց և Լեռնեանց
ազնուական Հայ պաշտօնէից սերտմղքն՝ դեռ
աւելի քան զդար մի և մինչեւ ի վերջ ԺԵ
դարու՝ կերպով մի կու յաջորդէին իրենց
նախնեաց՝ ի կիպրոս, նա և ընդ իշխանու-
թեամբ Վենետաց. որոց ոչ սակաւ օգտակար
ծանօթութիւն և ծառայութիւն ալ ըրին՝ թէ
այս թէ յաջորդ դարուն մէջ, քանի որ ա-
նոնք կու ջանային Պարսից ձեռք իրենք զի-
րենք ապահովել յՍամանեանց, ինչպէս պիտի
տեսնեմք այս ետքի դարուս (ԺԶ) սկիզբները,
յետ յիշելու քանի մի Հայոց երեւոյթ կամ
յիշատակ ի բուն Վենետիկ, նախորդ (ԺԵ)
յետին տասնամեկին միջոց :

Գ.

Ա. ՄԱՐՑԻՐՅՈՍ ԵԳԻՍԿՈՊՈՍ ԵԶԸՆԿԱՅՅ. - Բ. ՀԱՅԱՏ
ՏԱԽՆ ԵՒ ՏԵՎԱՀՔ. - Գ. ՇԱՀ ԻՍՄԱՅԻԼ ՆՈՐ ՑԻՐԱԳԵՑ
ԳԱՐՍԻՑ ԵՒ ՀԱՅՈՑ. ՏԵՂԵԿԱՏՈՒՔ՝ ՄՈՒՐՈՑ ԱՆԿԻՒ-
ՐԱՑԻ, ԴԱՒԻԹ ԵԳԻՍԿՈՊՈՍ ԿԻԳՐՈՍԻ:



Ա. Հայոց երթեւեկն թէ ի վենետիկ և թէ
խոալիոյ ուրիշ քաղաքներ՝ ի միջին և վեր-
ջին եւս դարս, գլխաւոր երկու բանի համար
էր. վաճառականութեան և կրօնից: Այս ետ
քինիս վկայ են իրենց շատ անգամ յիշեալ
Հոգեգոռներ, կամ վանք և Եկեղեցիք՝ յայլեւ-
այլ քաղաքս, որ և է պատճառաւ եկած և
բնակած ալ ըլլան: Ոմանց զիտումն պար-
զապէս բարեպաշտական եղած է, ուխտաւո-
րութեամբ, այսինքն սրբազան և ուխտի տե-
ղեաց գալ տեսնել, աղօթել: Գլխաւոր տե-
ղին՝ յայտ է թէ ի Հռովմ էր, Ա. Առաքե-
լապետաց եկեղեցիքն: Ուխտից հետ՝ զգօն
կամ հետաքնին անձինք միացընէին աշխար-
հատեսութեան փափագն. այս այլ յատուկ
բնաւորութիւն մ'է և պէտք էր ըլլալ՝ մեր
ազգայնոց, որ ի մէջ ազգաց՝ թէ ոչ առաջին
աշխարհաշրջիկ կամ աշխարհաքաղաքացի

կրնան ըսուիլ, այլ ոչ և երկրորդ : Այս երկու դիտմունքն յորդորեր է Բարձր Հայոց արդէն ուխտաշատ Եզրնկայ գաւառին մէկ ուխտատեղւոյ առաջնորդ եպիսկոպոսն, Մարտիրոս, երկար ժամանակ և երկար ճամբորդութիւն ընել յԵւրոպա, 1491-7 տարիներու միջոց :

Ա. — Այս թուականներէն շատ տարիներ առաջ (թերեւս 25 կամ 30), կու յիշուի նա՝ նոյնպէս եպիսկոպոս կոչմամբ և « Սպասաւոր Ա . Լուսաւորչին Ա . Գերեզմանին » . երբ այն կողմերուն կ' ասպատակէր Ճիհան – շահ՝ Սեւախոյ Թուրքմանաց իշխաղն, (զոր յետոյ սպաննեց Ուզուն Հասան և միապետեց), կողոպտելով ու գերելով զԴիերջան . և զատ յայլոց՝ Ա՞նեներ անուամբ մէկու մ'այլ երկու դստերքը գերի ըրաւ իր հեծելոց : Այս խեղճ հօր՝ գթալով Եզրնկայ վանորէից առաջնորդք և եպիսկոպոսք, վկայական գիր տուին, որ շրջի ողորմութիւն ժողովելու և փրկանք տալու դաւակացը . վկայագրողաց մէկն այլ էր Մարտիրոս, որ գուցէ այն ատենէն կու փափագէր յաջողագոյն դիտմամբ՝ ճամբորդելու . և կատարեց փափագը՝ վայելշապէս : Ըսել կ'ու զեմ՝ լաւ և ստոյգ դիտողութեամբք, և ոչ շափաղանցօրէն կամ ի հարեւանցի, ինչպէս ոմանք ըրած են, և ի մասնաւորի Վենետիկը

տեսողք և գրողք . որոյ և կամրջաց և եկեղեցեաց կանթեղաց և սպասուց բազմութեան վրայ զարմացած՝ քանի մի հազար կ'ըսեն , փոխանակ հարիւրոց :

Լսենք սա ինչ կ'ըսէ կամ գրէ . « Ես Մար » տիրոս , միայն անուամբ եպիսկոպոս Երզըն . « կայի , ի Ա . Կիրակոսու յանապատէն , ի » Նորդիւղա գեղէն (¹) , ի վաղուց հետէ » փափագէի ի Ա . գլխաւոր Առաքելոցն գերեամանին տեսանելոյ . և յորժամ հասեալ » ինձ անարժանս արժանաւորել տեղեան » նոցա , և հանապազ սիրտս փափագէի , բայց » ումեք ոչ կարէի յայտնել զխորհուրդ սրտի » իմում : ԹՃԼԸ (1490) հոկտ . իթ , յելայ » ես իմ վանացն , և եկայ մեղ(մ)աբար ? » հասի ի յՍտամպօլ . և Աստուծոյ յաշողութեամբ գտեալ նաւ մի և մտի անդ , Վլրանէս սարկաւագովն : ԹՎ . ԶԼԹ (1491) , » յուլիսի ԺԱ ի յՍտամպօլու ելաք , մտաք » ի նաւ մի ֆրանգի . և հոկտ . Ա ելաք ի » Վենէժ քաղաքն , որ է Վենետիկ . մեծ և » փառաւոր քաղաք . և ինքն է ի մէջ ծովու » շինած . ՀԴԻ (74,000) տուն է . և խիստ » փառաւոր և հարուստ քաղաք է . և մեծ

4. Նորդիւղիրր ժամ և կէս հեռու է ի քաղաքէն , յարեւելակովն . իսկ Ա . Կիրակոս Անապատն՝ աւելի քան երկու ժամ , յարեւմուստ հարաւակողման :

» Եկեղեցի կայ ի մէջ քաղաքին, որ ԺՄ
 » (10,000) մարդ կու մտնէ ի մէջն. խիստ
 » զարդարած է ոսկով։ Ա. Մարկոս յաւե-
 » տարանչին եկեղեցին է. և երկու երգեհան
 » կայ ի մէջն. և երկու թեւաւոր առիւծ է շինած
 » ի մէջն. և այլ շատ եկեղեցիք կայ ի քաղաքն,
 » շատ վանորայք կայ ի բալոր քաղաքին. ա-
 » մէն՝ մէջ ծով է շինած։ Եւ մեծ հաշուան (մէյ-
 » տան, հրապարակ) մի կայ առաջեւ եկե-
 » ղեցին Ա. Մարկոսի. ի դրանն շատ ի վեր
 » չորս դեղին պղնձէ ձի մի շինած և կանգ-
 » նեցուցած մեծ մեծ, և դմէկ ոտքին ի վեր
 » են կալեալ⁽¹⁾։ Եւ ի հարաւային կողմ
 » ծովու դեհն՝ հանց ծախողներն է (փոքր
 » հրապարակին մէջ)։ և երկու մեծ սիւն է
 » կանգնեցուցած։ մէկին վրայ թեւաւոր ա-
 » ռիւծ մի, մէկալին Ա. Գէորգ է կանգնել
 » (ըստ այլոց Թէոդորոս)։ Եւ թագաւո-
 » րին դարպասին պարիսպն ամէնն յոտկ-
 » ւով զարդարած։ Եւ այլ ազգի ազգի շատ
 » բաներ. ովկ կարէ պատմել գքաղաքին զա-
 » զէկութիւն։ Եւ կեցաք իթ (29) օր։ Եւ
 » մտաք ի նաւն, և գնացաք ի ԺԳ (13) օրն
 » յԱնգոնիայ. և անտի հասաք ի Ը (8) օրն

1. Բառ ուտենգութեան՝ Տիրիթ կամ Տրդառ թագա-
 ւոր Հայոց բերած էր այս ձիանքն ի Հոռվի՛ Տես Բաղմ-
 իլ, երես 312։

» աստուածապահ մեծն ի Հռոմ » , և այն :
 Չորս տարի թէ ծովազ թէ ցամաքով Եւրոպիոյ
 ամէն կողմերը և Ափրիկէի եզերքն այլ պըտը-
 տելով՝ նորէն կու դառնայ Մարտիրոս ի
 Հռովմ , և դարձեալ ի նաւ մտնելով՝ կ' ա-
 ւարտէ գրուածը , յայտ է թէ ոչ և իր բազ-
 մաշրջիկ և հետաքննական ընթացքը :

Բ . Նշանելի է որ Մարտիրոս չի յիշեր ի
 Վենետիկ՝ Հայոց տունը և եկեղեցին . ա-
 ռաջինն աւելի պանդխտաց և ազքատաց
 համար ըլլալով՝ հաւանօրէն ինքն հօն չէր
 իշեւանած . իսկ երկրորդն՝ ինչպէս առաջ յիշե-
 ցինք , հազիւ թէ մատրան նմանութիւն մ'ու-
 նէր այն ատեն , և յիշուելու արժեք չունէր :
 Բայց զրեթէ Մարտիրոսի եկած տարին կամ
 աւելի առաջ , Հայոց տան մէջ բնակող ազ-
 գային քահանայ մի կար Գրիգոր անուամբ ,
 որու՝ իր հայրենիքը դառնալու առթիւ , Հայոց
 տան վերատեսուշ տէրութեան Հոգաբարձուք՝
 չորս կըսա թոշակ տուէր են (1) իրեւ ողոր-
 մութիւն (21 օգոստ . 1490) : Եղինակս այլ
 ըրած են անշուշտ ուրիշներու . ինչպէս եր-

I. Dedimus Presbitero Gregorio Armeno ituro
 domum suam, pro sua subventione, amore Dei,
 Grossos 4. Եթէ չեմ սխալիր, այս կրոշն այն ատեն
 ոսկի դուկտատի կէսն էր, որով ըստ նիւթոյն կ' արժէր
 իր 6 Գրանդ, ըստ յարգի՝ շատ աւելի :

Կրորդ տարին (1491), Ռոմեր (այլայլած ա-նուամբ Romerio) աղքատի մի 6 կրոս տուեց են. քանի մի տարի վերջը (1498, օգոստ. 9) Յալռեկ անուամբ Հայու մ' այլ իր երկիրը դառնալու ատեն՝ 2 կրոս : — Ոչ միայն այս անձանց յիշատակք կու յայտնեն՝ Հայոց եր-բեմն աւելի երբեմն պակաս թուով, բայց զրեթէ միշտ գտնուիլն իրենց կտակուած տան մէջ, այլ և այդ տան քիչ շատ նորոգութիւն, կամ մանր չէնք ու կարկատանք. որք՝ 50 տարիներուն միջոց (1443-94) !5 կամ 20 անգամ նշանակուած են առանձին հաշուէ-գրոց մէջ, ամէն անգամ եղած ծախուց թիւերով. հարկ է որ անկէ առաջ երկու դարուց միջոց այլ նոյնպիսի ծախքեր և չէն-քեր եղած ըլլան. բայց հաշուէգիրքն կորած են : — Ծախուց ստակն կամ դրամագլուխն՝ Ծիանեայ թողած գումար մ' էր, որ կէսն Հայոց համար, կէսն այլ Փրանկիսկեան կրօ-նաւորաց, Վենետիկոյ Այգի կոչուած թաղին մէջ (alla Vigna). երկուքին այլ մատակա-րարք կամ կտակակատարք էին քաղքին ներ-քին երեք Հոգցողքն (Procuratori de Citra), որ և պետութեան ամենէն մեծ պաշտօնէից կարգէն են. որք և ամենայն հաւատարմու-թեամբ կատարած են Ծիանեայ իրենց յանձ-նած հոգը Հայոց տան համար : Զսա եր-

բեմ Տուն կ'անուանեն և կու գրեն, երբեմն
 Հիւրապոսն կամ Հոփեդոսն, իրենց լեզուով
 (Hospizio, Hospital, կամ Domus Armenorum
 կամ De Armenis, Ospidal di Armienj.) տան մօտ եղած կամուրջն այլ՝ կամուրջ
 Հայոց (Pons Armenorum, որ և Pons Fer-
 ralis կամ Ponte dei Ferali).

Աւելի խղճմութեամբ միանգամայն և ա-
 պահովութեամբ հոգալու համար՝ իրենց կող-
 մէն գործակալ և պահապան մի կարգէին ի
 Տանն, զոր առվորաբար Տնպահ կոչեն Ca-
 staldus, Castaldionus, բայց երբեմն այլ
 Prior կամ Proto, իրբեւ գլխաւոր կամ ա-
 ռաջնորդ. յետոյ երբեմն Պահապան, Cu-
 stode, Guardiano, Vardian. ինչուան ԺԶ
 գարուն կէս՝ միշտ իտալացիք՝ այսինքն բնիկ
 Վենետիք եղած են Տնպահն. անկէ ետեւ,
 ինչպէս որ կու վայլէր, երբեմն Հայ՝ երբեմն
 իտալացի, մինչեւ մօտ ի վերջ Ժէ դարու և ի
 նոր շինութիւն Ա. Խաչ եկեղեցւոյ. ուսկից
 վերջը բոլորովին Հայոց անցաւ թէ տան
 թէ եկեղեցւոյ հոգը և շէնքը. պետութեան ե-
 րեք հոգցողքն միայն ծանր ինդրոց կամ վիճից
 մէջ իրենց հեղինակութիւնը կու բանեցընէին:
 Երբեմն իրենց և Հայոց մէջ այլ վէճ եղած
 է, որ մերոց կողմանէ մեծ յանդգնութեան
 գործ է. 1476 թուականէն մինչեւ ի կէս

ԺԵ դարու, 25 Տնպահից անուանք յայտնուած են, զոր յիշել աւելորդ համարիմ, բայց եթէ դէպք պահանջեն, միայն զՀայս յիշեմ, որչափ որ ծանօթ են՝ իրենց ժամանակովն :

Աղեքսանդր	1508
Սիմոն	1555–1577
Գէորգ որդի Յովհաննու	1577–588
Մկրտիչ Պարսկահայ	1595–1608
Ղազար Պարսկահայ	1617
Գէորգ Գոքիլիոյ	1643–50
Պետրոս Ոսկան	1650–58

Իրաց ժամանակագրական կարգն զասոնք կու ներկայացնէ ի հարկին : — Իսկ հիմայ ԺԵ դարուն վերջի տարիներուն (1493–6) նոր շարժմունք մի կ'երեւի Հայոց ի Վենետիկ . եկող գացողներն կ'աւելնան . որոց համար հարկ կ'ըլլայ Հոգաբարձուաց՝ այն մանր նորոգութիւններու տեղ բոլորովին նորոգել կամ վերաշինել Հայոց տունը (¹), որոյ համար բաւական ծախք ըրին, իրենց գործակալ Գասպար Ամադի (Gasparo Amadi) Տնպահին ձեռոք : Վենետիաց հռչակաւոր և ծիրանաւոր (կարտինալ) Պետրոյ պատմշին գե-

1. Pro fabrica fienda in Domo de nova fabricando, կու գրեն ի հաշուեգիրս, ի 23 սեպտեմբեմ . 1494 :

զեցիկ գրուածէն այլ կ' երեւի , որ այն օրեր քանի մի նշանաւոր և խօսքի տէր Հայք եկած էին , և գտնելով կամ գիտնալով ԺԳ դարու մէջ իրենց ծեր ազգակցին թողած կտակը և ստակը՝ Հայոց տան և եկեղեցւոյ մի շինութեան համար , ստիպեցին զՀոգաբարձուս՝ որ տունը՝ բնակութեան , և Հայոց բնակութեան՝ պատշաճ վիճակի մէջ դնեն . անոնք այլ կատարեցին խնդիրը : Բայց կ' երեւի թէ Հայք իրենց քմաց համեմատ այս կամ այն կերպով շինուածք կ'ուզէին . որոց համար սւելի եղած ծախքն այլ խոստացան և քիչ քիչ վճարեցին . և երբ ամեն բան յարմարեցաւ , մտան Հայք իրենց սեփականեալ տունը , յամի 1497 : Որոց համար այսպէս կ'ըսէ պատմիչ և քերդող հեղինակն այն (Պեմպոյ) . « Հայք , » այդ հեռաւոր ժողովուրդն , քաղաքավա» րութեամբ ընդունուած (ի վենետաց) , բա» րեկամական տեսարան մ' ընծայեցին քաղ» քին » (¹) : — Փափագելի էր այս Հայոց

1. Alcuni Armeni venuti a Venezia mostraronno a Procuratori di S. Marco il Testamento fatto da un Armeno ; per lo quale astretti erano di comperare una casa nella città co' denari del morto ; la qual casa abitasser quelli Armeni che a Venezia venissero. E quella casa di poi era stata comperata insieme con una chie-

տան բնակութեան նորոգողաց կամ նոր եկողաց անուանց և որպիսութեան վրայ աւելի ծանօթութիւն ունենալ, և մեծ պատմչին վկայութիւնն աւելի բացատրել. բայց գտած տեղեկութիւննիս այսչափ է :

Այն ատեն եկող գացող Հայոց միայն մէկու մի յիշատակ կայ 1495-96 տարւոյ հոկտեմբեր ամսու 5ին. որոյ անունն կամ սխալ կամ իտալացեալ գրուած է, (Uno Donado Armeno sudito del Signor Turco). Դոնադոյ, թուի թէ ռուր բարդութեամբ անուն մ'էր (Տիրատուր, Խաչատուր, Աստուածատուր, ևն): Ադրիական ծովու մէջ նաւելու ատեն, Ալպանիայի Դուլչինիոյ քաղքին վենետիկեցի ծովապետն՝ կեցուց նաւը և քննեց. և այս թուրքաց հպատակ Հայուն ապրանքը, (որ կամ դիպակ, կամ չուխայ էին, Panni), փախըստեայ համարելով, նաւովը հանդերձ խաւրեց ի Վենետիկ. այս

setta a S. Giuliano, nel Calle delle Lanterne, e i Procuratori tuttavia la locavano. Essi dunque che detta casa fosse loro restituita, dimandarono. La qual richiesta intesa fu da' Procuratori, la Casa agli Armeni renduta, e ad abitare incominciata: ed essi cortesemente e liberalmente ricevuti, amichevole spettacolo alla Città diedero. — ВЕМБО LIB. IV.

տեղ Հայն արդարացուց զինքը, ապրանաց մէկ մասը սոյն այս քաղքիս մէջ գնած ըլլալով, մէկ մասն ալ Բեզարոյ քաղաքին տօնավաճառէն գներ էր : Շահասէր և ճարպիկ Հայու աշխէն ոչ միայն մեծ շահաստանն Վենետիկ, այլ Խոտալիոյ որ և է շահու և առեւտրի բանուկ նաւահանգիստ կամ հրապարակ՝ չէր ծածկուեր :

Գ. - Ի սկիզբն ԺԶ դարուն նոր շարժում մ'եղաւ քաղաքական կամ վարչական, մեր և դրացի աշխարհաց մէջ, որ նորէն դրդեց Վենետիկոյ հասարակապետութիւնը՝ դիտելու և ստուգելու եղածը կամ ըլլալիքը. ինչ որ ըրաւ Ուզուն՝ Հասանի տիրապետութեան ատեն, նոյնը և Շահ Խսմայէլի երեւալուն, որ գրէթէ իր (մօր կողմանէ) պապուն պէս, և գուցէ աւելի քաղաքագիտութեամբ և զինուորական կրթութեամբ՝ բարեկարգ և տեսող տէրութիւն մի հաստատեց, որ կոշեցաւ Շահ-Աթեանց Պարսից թագաւորութիւն, իրեւ երկու դար նոյն ցեղի յաջորդութեամբ : Խսմայէլ ի մանկութեան մեծ վտանգի մէջ ընկած և գրեթէ Հայոց ձեռքով կամ անոնց ամուր ապաստանով մի (Աղթամար կղզւոյ) ապրած է. և ինչպէս կ'աւանդէ խոտալացի ժամանակակից ճամբորդ մի, հօն երեք Հայ վարդապետաց խնա-

մաք դաստիարակուած, թէ երախտապարտ և թէ ծանօթ էր Հայոց. ուստի, երբ յաջողեցաւ Հասանայ որդոց և թոռանց բաժանեալ տէրութիւնը ձեռք ձգել (1499), և միացընելով զօրանալ, և ընդդէմ Օսմանեանց շարժիլ, վենետիք սրեցին աշուշնին և ականնին. իրենց պաշտօնէին և վաճառականաց միջոցով լուր առնուլ բաւական չեղաւ, հարցուցին և Հայոց, թէ ի Վենետիկ եկողաց և թէ ուրիշ կողմեր գտնուողաց, մանաւանդ ի Կիպրոս, ուր կու յաճախէին Հայք, ինչպէս վերը յիշեցինք : Ասոնց մէկն Մոռքար Անկիւրացի՝ Դաւրիժէն գալով հօն (ի 26 օգոստ. 1503), պատմեց այն քաղքին քով Հասանայ Մուրատիան թոռան և իսմայելի մեծ պատերազմը, ուր երկու կողմէն 60 կամ 70,000 մարդ ջարդուեցան. նախ յաղթեց Մուրատիան՝ Վրացի գնդի մ'օգնութեամբ. բայց յետոյ բաղդն յաջողեց իսմայելի : Իսկ մեր Անկիւրացի Մուրատն յԱմիդ հանդիպեցաւ Ուզուն Հասանայ մէկ աղջկան, որ քրիստոնեայ էր և յԵրուսաղէմ յութու կ' երթար 500 ընկերօք, և մէկտեղ եկան ինչուան ի Հալէպ : (1)

1. Վենետիաց և գրեթէ ամենայն իւրողիոյ դերահընչակ ժամանակագիրն կամ Օրագրով՝ Մարինոս Սանուդոյ, նշանակէ զայս իր յիսնահատոր գրոց Ե ին մէջ, ի

Յաջորդ տարին (1504) յունիս ամսոյ մէջ քանի մի Հայք ի Վենետիկ դալով հարցուեցան և պատմեցին, թէ եօթն ամիս է ար Շահ Իսմայէլ յաղթեց և Մուրատիսանի աիրած երկիրները նուաճեց, անուանէ յիշելով Դաւրէժ, Սուլտանիա, Շրուան, Խորասան, և այլն. և վերջերը կու պաշտրէր կամ մօտեցեր էր Resugella? կոչուած բերդին. որ՝ եթէ արգելք չըլլար իր արշաւանացը՝ ինչուան հիմայ ի Հայաստան այլ մտած կ'ըլլար : -- Տասն տարի վերջը Դատէն Եպիսկոպոս Կիպրոսի կու գրէ (23 մարտի, 1515), երբեմն ի Կիպրոս խորհրդական եղող Դոնատոյ Լեծէ (Donato Leze կամ Lege) ազնուականի՝ ի Վենետիկ, (ուր, իր (Դաւթի) եղբայրն այլ գոռուէր), Շահ Իսմայելի և Սուլդան Սէլիմի պատերազմը, Խոյ քաղքին մօտերը, կամ ի Զալտըրան, ուր առաջինն յաղթուեցաւ, հրազէնք չունենալուն համար : Երկրորդ երկար թղթով մի (23 կամ 25 ապրիլի) Դաւիթ կ'իմացընէ նոյն բարեկամին, որ Իսմայելի իշխանութեան երկրէն Chinchagia ? (Չմշկածա՞գ), տեղէ կամ քաղ-

22 Հոկտ. 1505 տարւոյ, վերնապրելով. Depositione de Morati Anguriato de Tauris, in Cypro, a di 26 de Agosto, 1503, dei progressi del Signor Sophis; dicente ut in frà. etc.

ՔԵՇ Հայ եպիսկոպոս մ' եկաւ իրեն քով երկու ամիս կեցաւ (ի կիպրոս), (¹) և շատ տեղեւ կութիւններ տուաւ Առւլտան Աէլիմի արշաւանաց վրայօք . որ թէ և հետաքրքրական են, այլ մեր նպատակէն դուրս են . և այն արիւնահեղ պատերազմներէն աւելի (որ քանի մի հարիւր հաղար մարդ ծածկեցին մեր հայրենի հողոց մէջ), անտարակոյս փափագելի են խաղաղական յիշատակներն անկէ պանդխտածներուն՝ յայս ապահով ծոց Աղրիականի :

4. ՎԵՐՊՄԻՉԵԱԼ ՕՐԱԿՐՈՆ ԱՌԵՎԱԿՍ ԻՐ Ի (Քառեւբրոդ) հատորին ՃԵՂ (ԲՂ. 144 և 161) ոյս Դաւթի համակներն այլ իտալիրէն բառ առ բառ օրինակած է, վերագրելով, Ա. «Copia ad litteram de una Lettera di Cypro scrita per il vescovo di Armenia nominato Davit, a Ser Donado da Leze,.. arrivata qui a di 31 marzo, 1515.

Բ. Copia d'una lettera de Cypro scripta per lo Episcopo de Armenia, data a di 23 Aprile, 1515, drizata a Ser Donado da Leze, lo Consier in Cypro, et recevuta qui a di 4 Zugno. Nara de Sophi e Turco. — Այս Բ ԲՂԲոց սառագրած է (Դաւիթ) առանց անուան . Խօ է ամիսսի Առաջարարական կերպով Եպիսկոպոս Հայոց . որով կարծեցնել տայ թէ ըլլայ Թաղեռսն կամ Դաւիթ, որ կաթողիկոս Հայոց նշանակուի 1499-1503 տարիներու միջնց :

Դ.

Ա. ՍԿԻԶԲԻ ՀԱՅԵՐԵՆ ՑՊԱԴՐՈՒԹԵԱՆ Ի ՎԵՆԵՑԻԿ :
ՅԱԿՈՎՔ ՑՊԱԴՐՈՂ. ԱԲԴԱՐ ԹՈՒԱԲԾԻ. ՑԵՐ ՅՈՎՀԱՆ-
ՆԵՍ ՑԵՐՋԵՅԻ : — Բ. ՀԱՅ ԹԱՐԴՄԱԳԻ . ԳԵՈՐԳ ԴԱ-
ՄԱՍԿԱՅԻ , ԵՒ ԱՐԴԻԽ ՄԱՐԿՈՍ :



Ա. - Այս յիշատակաց մէջ առաջին և պան-
ծալի գրելու է Հայերէն Տպագրութեան
սկզբնաւորութիւնն ի Վենետիկ, որոյ վրայօք
շատ անգամ գրուած է, և դեռ նոր և ստու-
գագոյն ծանօթութեամբք՝ Բազմավէալ օրա-
գրին (1890) տարուան սկիզբներում՝ (երես
99-104): Որչափ որ հաւանական և գրեթէ

անտարակոյս կ' երեւէր Պատարագատետրի, Աղթարաց, Հէքիմարանի, և այլ գրոց, շատ տարի յառաջ տպագրուիլն քան զԱրգարու տպագրեալ Սաղմոսը՝ ի Վենետիկ, բայց յայտնի վկայութիւն մի չկար. մինչեւ յայտնեց մեզ զայս մեծայարդ և բանասէր անձ մի, Սահակ Եպիսկոպոս Գաւայեան միաբան Երուսաղէմի Ա. Յակոբեան վանաց, որու Երախտապարտ և շնորհակալ կ'ըլլամք. գտած գրքոյն է Պատարագատետր մի, այս համառօտ յիշատակարանաւ. « Տպագրեցաւ » սուրբ տառս ի Զկի (1513-4) ի աստոռւա « ծապահ քաղաքս ի Վէնէժ, որ է Վենետիկ, » Ֆուանկաստեան. ձեռամբ մեղապարտ Յան Էտին. որք կարդայք՝ մեղաց թողութիւն » խնդրեցէք Աստուծոյ »: Յակովը՝ առաջի տարին այլ ԶկԱ. (1512-3) տպագրած է վերոյիշեալ Աղթարքը : Քաղաքն յայտնուեցաւ, բայց տպագրատունն դեռ ոչ. կրնար կարծուիլ որ նոյն իսկ Հայոց տան մէջ ըլլայ, ինչպէս ուրիշ տպագրեալ հին գիրք մի կ'ըսէ : Այս՝ Հայ տպագրութեան կարեւոր խնդրոյն ծանօթութեան՝ միծ լոյս մ'է, բայց դեռ ոչ բաւական. կու մնայ փափագելի գտնել այս մեղապարտ Յակոբէն առաջ բարեպաշտ և բարեբաղդ Հայ տպագրող մի. կամ, եթէ նոյն իսկ Յակոբն է առաջին տպա-

գրողն, ինչ կերպով հնարեր է հայերէն տառերը։ Նոյնպէս, ոչ միայն մեզ այլ և օտարազգի գիտնոց շատ հետաքրքրական է ճանշնալ գրոց բուն Վենետիկեան տպագրատունն այլ, որոյ նշանն (տես յէջ 207) դրուած է այդ յակորատիպ գրոց վերջի երեսը։ բայց գեռ չէ ստուգուած տպագրատան տէրն, այլ հաւանօրէն է Zuan Andreæ հռչակաւոր տպագրողն և փորագրող։ Յակորէն 40 և աւելի տարի վերջ (1566), երբեմն առաջին տպագիր կարծուող Արգարն Թօխաթեցի՝ իր ըրաժը կուպատմէ, միանգամայն և յայտնելով կամ կոչելով 'Նոր' իր տպագրութիւնը, ուսկից հարկ էր գուշակել որ իրմէ առաջ կամ աւելի հին հայ տպագրութիւն եղած էր։ Այս բանիս վկայութիւն մ' ալ ըլլայ (որ չէ յիշուած ի Բագմավիպի կամ ուրիշ տեղ), Լորենցոյ տ' Անանիա հեղինակի մի Տիեզերագրութեան (Cosmografia) գրոց մէջ յիշածը, թէ ինքն աչօք տեսեր է յամին 1562 Վենետիկէն բերուած հայերէն տպագիր մի, որ՝ ըսածէն կ' երեւի։ Թէ ըլլայ կամ այբբենարան կամ քերական (1)։ Դիտելի է նա և ըսածն՝ թէ

1. Il cui alfabeto costa, siccome io ho veduto, con una breve *metodo* del loro idioma, di 29 lettere, di che già ne hanno la *stampa*, havendola riportata da Venetia l' anno del *ses-santadue*.

Հայոց այրութենք 29 են, անշուշտ միայն բարձագայնները համրելով և ոչ զձայնաւորու, և ոչ 0 և 3 տառերը :

Արդարու տպագրութենէն 20 կամ 22 տարի վերջը (1587) նոր տպագրութեան ձեռք զարկեր է ի Վենետիկ, և նոր տառերով, աշխարհիկ երեց մի, Տերժաշի Տեր Յովաննես, և տպագրեր է Սաղմոս մի ի տպագրատան Յովհ. Ալբերտի (Alberti). իր և իր գործակից Խաչարուր որդւոյն պատկերքն այլ փորագրել տալով և վրան գրելով. « Տէր Յովհ » հաննէս Տէրզնցի եւ Խաչատուրն ծառայք « Աստուծոյ եւ յիշողացս : ՈՒԶ. » : Իրեն օգնական և ձեռնտու եղեր են իր հոգեւոր որդին Սոբէժանսո, և այլ Զարդարեցի վաճառականք, որոց զլխաւորը կ'անուանէ Շահսեֆ. այլ աւելի երախտաւոր՝ « գեղարապետ Բա. » ղիշեցին (կ'ըսէ) յիշեցէք ի Քրիստոս, որ « բազում օգնութիւն հասոյց մեզ » : Անոն և կիսատ (թուի զրոց օրինակին պակասութեամբ) ոտանաւոր մ'այլ՝ կ'իմացընէ զլխուն եկած փորձակները, և ամբաստանուելով (ինչ բանի համար) ի բանտ ձգուիլը, միանգամայն և ի Հռոմ գնացած ըլլալը, ինչպէս յետոյ և ի Մարսիլիա : Այս քիչ շատ յիշատակարաններէն կ'իմացուի իր բաւական

բանբարակ այլ և բանագոտակ և լեզուագէտ
ըլլալն : Ահա գրածն .

« Այս է տաղ և յիշատակարան ի վերայ
անուան .

« ամ ես զերես՝ ձեր ոտաց կոխան , ունկն
դնել այսուիկ բանին ,

Որ ես պատմեմ փոքր մի զանցս իմ գե-
ղեալս իմ ի գոյն տաղի :

« Րբ որ եղէ այրի գերիս՝ ի Համիթ մայ-
րաքաղաքին ,

Մնաց երկու աղջկունս և տղայ մի եօթն
ամի .

« ախճան—են ատեցեալն (?) տարակուսիլ ետ
իմ անձին .

Եհան զիս յիմ որբերացն , ած ի Հռոմ
յերկիրն Լատին :

« որժամ կամեցայ յետ դառնալ , զի վերջ
արի զիմ առաջին (?) ,

Քսան աւուր ճանապարհք չոքա միամիտ
յիմ ճանապարհին .

« Ծոյ վկայ է Տէր Աստուած՝ որ ծածկատես
ամէն զաղտնին .

Զի վնաս ինչ ոչ գործեցի՝ զի արժանի լինի
բանտին .

Քասն իմ մեղացն որ յառաջ կայր՝ որ ինչ
գործեալ յիմ երկրին ,

Փութանակի աստի հասան մի ըստ միով
կա....

« բդ երբոր այն պատահեցաւ լեցին (?) ,
ի Հռոմայ թուղտ առաքեցին ի քաղա-
քին ... ասեն ... »

Նոյն տպագրութեան տարին (1587-8) ի
Վենետիկ գալէն առաջ կամ (հաւանօրէն)
վերջը, Տերզնցին իր որդւոք ի Մարսիլիա
գնացեր է, և հօն Փռանկաց անուանի հին
վիպասանութիւնը Գեղցին Փարիզու, (Le Che-
valier Paris et la belle Vienne) թարգ-
մաներ է հայերէն ոտանաւոր շափով . որ եթէ
ուրիշ լեզուագիտի օգնութեամբ այլ եղած
ըլլայ, դարձեալ արդիւնաւոր է Յովհաննէս,
մանաւանդ եթէ նկատուի այն վիպասանու-
թեան դժուարին հին փռանկ լեզուն և ոճը :
Թարգմանութեան վերջը նոյնպէս ոտանաւոր
յիշատակ մ' այլ գրած է, որոյ տողից առա-
ջին տառերն կազմեն այս բանս . « Զտէր
Յովհաննեսի Տերզնցոյ ասաց յօա » ? , փոխա-
նակ ասացեալ կապելու : Գրածն՝ թէպէտ
զմեզ ի Վենետիկոյ դուրս կու հանէ , բայց իր
այս տեղ ըրած գլխաւոր գործն (տպագրու-
թիւնն) ներելի ընէ , զնոյն օրինակել և կար-
գալ , որովհետեւ շատ սակաւագիւտ է գիրքն .

« Յիշատակ թարգմանչի տառիս .

Գարիւք պինտ լի երես որ կայ՝
Տըորեալ մածիմ ոտացդ վերայ .

Յիշազմէզ տր յոր ժամ զաս արքայն
և թէամբ քո և ողորմէամէզ .



Յիշատակարանէա սւիկ
առ քամէնասր երյսէթէ հօրեւ

Եղբայր, լեզուով մի յիս գըթայ,
Բամեալ հոգուս ողորմի տայ .
Յորդ արտասուաք գոչեմ ահա ,

Ողորմեցէք որպէս Յավրայ .
 Վկայն իմ Տէրն է , կրկին վկայ .
 Աղաղակեմ , ձայնըս կու գայ .
 Նա որ ասէ մի Տէր ողորմեա՝
 Եղկելոյն այն որ կու կենայ ,
 ի յա(ն)դենին առնու և խնդայ :
 Տրամադրեալ սա ի Ֆրանցայ
 Էր ի քաղաքն Մառչիլիայ .
 Բամել թուիս մերոյս Հայկայ
 Զերդ և հազար և երեսուն կայ ,
 Նայ աւելի եւս վեցամեայ ,
 Ցվերջ ամսուն յամաց սոցայ .
 Որ և երկրիս այս մեծ արքայ
 Ցինրիքոս (Ենրիկոս Զ) կոչեն ըզնա :
 Այլ ես յորդովք քաղաքս ուղղայ .
 Սիրտս իմ կամի որ միշտ երթայ .
 Այլ ճանապարհս երկրի սորայ՝
 Ցամաքն և ծովն կապեալ մնայ ,
 Ցաւտարութիւնըս մաշեցայ ,
 Որ ի երկիրըն Ֆռանցայ .
 Այս ինչ ցաւ է , կայ և մնայ :
 Կատարեցաւ բանս » :

Անցողաբար . յիշեմք որ Տէրզնցին ի Հռովմ
 եղած ատեն (1583) . Հայոց վրակացոս կամ
 իշխան անուանեալ Սուլդանշահի (Արգար տը-
 պագրի որդւոյն) և ուրիշ գլխաւորաց կող-

մանէ՝ երկայն նամակ մի գրած է, արձակ և ոտանաւոր (իր ոնով) առ Իաւեփթ պատրիարք Երուսաղեմի, հրաւիրելով որ զայ ընծաներով ի Հռովմ, և տեսնէ Գրիգոր ԺԴ Պապուն ըրածները, մանաւանդ Նոր տօմարի հաստատութիւնը, զոր և յաջորդ տարին (1584) թարգմանեց ինքն Տէրզնցին և տպագրեց ի Հռովմ:

Բ. Տպագրութիւնն ի հարկէ պահանջէր նախընթացաբար՝ որ և է գրագիտութիւն մի կամ գրաւոր ճաշակ. այս ճաշակին գործին՝ որ է լեզուն, կրնայ յատուկ ըսուիլ կամ դիւրագիւտ Հայոց. ամէն ատեն ծանուցուած է մերայոց յաջողութիւնն օտար լեզուներ սովորելու, խօսելու և թարգմանելու, նախ բանիւ՝ ապա և գրով : Որութիւննեանց տէրութեան ատեն վայելչապէս ծաղկած էր թէ լեզուագիտութիւնն թէ թարգմանութիւնն : Թողլով զընդհանրութիւնն և գալով ի մասնաւորն՝ յիտալականն, և առանձինն ի վերաբերեալն ընդ Վենետիաց, տեսանք արդէն ԺԴ գարուն կիսէն առաջ Աւագ կարաւանապետին թարգմանի գործ կատարելն երբեմն ի Վենետիկ եկած ատեն, և իր ծառայութեան վարձը խնդրելն : — Գրեթէ 200 տարի վերջը (1519) Դամասկացի մ' ալ նոյնպէս կու գայ ի Վենետիկ իր թարգմանօրէն

ծառայութեան զարձը հաստատել տալու : Գիտնալու է՝ որ Վենետք մեծ առօւտուր ունէին յԱսորիս, ուր իրենց գլխաւոր գործատեղին և պաշտօնեայն, դոր՝ Քառնց (console) կ' անուանէին, կու նստէր ի հին մեծ և բար զաւաճ քաղաքն Դամասկոս, ուստի յետոյ փոխադրեցաւ ի Բերիա (Հալէպ)։ Յայտնի է որ այդ քաղաքաց բնակչաց հասարակ լեզուն արաբերէնն էր, տեղացի Հայք այլ իրենց բնիկ լեզուէն զատ խօսէին զայս և զթուրքարէն. ուստի թէ Վենետաց և թէ ուրիշ արեւմտեայց կը ընային ըլլալ և կ' ըլլային թարգմանք. Ասորւց երկրին և Վենետկոյ փոխադարձ վաճառաց տարուրերի համար՝ բանուկ մաքսատուն կամ բաժտուն մի հաստատուած էր այդ մեծ քաղքին մէջ. առնուած բաժը՝ Վենետք՝ կոդրին (Cottimo) կ' անուանէին, և ժողովածն ու հաշիւն անվրէպ կու խաւրէին ի Վենետիկ։ Այս բաժտան թարգման էր Գեորգ տեղացի Հայն. ԺԵ դարուն վերջի տարիներէն սկսեալ, կ' ընդունէր տարեկան վարձք 216 դուկատ, որ ըստ նիւթական արժէից 500 ֆրանգէն աւելի է, ըստ իրականին՝ այժմեան արժէից՝ թերեւս եռապատիկ աւելի։ Ինչպէս վաճառականութիւնն՝ այսպէս անոր վերաբերեալ ամենայն հաշիւք ալ փոփոխական են, աւելի

կամ նուազ. 1518ին առեւտուրն շատ յաջող չըլլալով՝ Դամասկեան բաժից մեծ պաշտօնեայքն ի Վենետիկ՝ ուզեցին իրենց բաժտան ծառայողներն և անոնց վարձն այլ նուազեցընել, և գլխաւոր թարգմանին տալ՝ 150 դուկատ միայն։ Գէորգ լաւ գիտնալով իր արժէքն՝ վստահութեամբ եկաւ ի Վենետիկ, և խնդրեց ի տէրութենէ՝ որ քննեն իր 20 տարի ըրած հաւատարիմ ծառայութիւնը և չի զրկեն զինքն իր թոշակէն։ Վենետիկ կամ տէրութիւնն շատ խիստ էր այսպիսի խնդրոց և վարձատուութեանց մէջ. քննել տուաւ Գէորգայ ըրածը. Դամասկոսէ ելած եկած գունքը միաբերան վկայեցին, որ ոչ միայն թարգմանութեամբ՝ այլ և շատ ուրիշ գործերով օգտակար եղեր էր Գէորգ իրենց և տէրութեանն. Ծերակոյտն ալ հաւանութեամբ վճռեց (31 մայիսի, 1519) որ կենք չափ տրուի Գէորգայ 200 դուկատ տարեկան, և դարձեալ ուրախութեամբ ծառայէ Հասարակապետութեան։

Այնպէս ալ կ'ընէ Գէորգ գեռ շատ տարիներ. և երբ կու վախճանի 1536-7 թուին, Դամասկոսի գունցն և խորհրդականք թարգման կ'ընտրեն իր որդին Մարկոս, որ մականուամբ Ֆարալլան կոչուէր. թոշակ տալով 50 դուկատ, 50 դուկատ այլ հօրը առնելիք-

Ներուն համար. Վենետիկոյ պաշտօնեայք այլ
կու հաստատեն զայս (ի 4 մարտի, 1541) ի
շնորհս իր հօր «Հաւատարմութեան, ժրու-
թեան, լաւութեան և յաջողակութեան». (attenta la fede, solertia, bontà et suffi-
cientia del quondam Turzimano del no-
stro Cottimo, et li meriti suoi, և այլն):
Երկու աարի վերջը (17 օգոս. 1543) ոչ միայն
հօրը գովեստը կու կրկնեն պաշտօնեայք հա-
սարակապետութեան՝ այլ և Մարկոսի թէ՛
լեզուագիտութեան համար (արաբ, թուրք,
փռանկ), և թէ մանաւանդ իր գործօնութեան,
ոչ միայն ի Դամասկոս այլ և ի Դալմատիա,
ուր զրկած էին, կու վճռեն որ տրուի իրեն
ինչ որ հօրը կու տրուէր, այսինքն 200 դաւ-
կատ տարեկան, (¹) այս պայմանաւ՝ որ միայն

1. Sono stati si laudabili et virtuose le ope-
razioni del q.m fidelissimo del stato nostro
Zorzi fù terzimano deli Consuli et natione no-
stra in Damasco, molto ben note a cadauno, et
meritamente se die abbrazzar la posterita sua
et il suo figliuolo *Marco*, chiamato in lingua a-
raba *Fadella*; del quale se ne a savuto gene-
ralmente dali Consuli et mercadanti nostri de
Soria, optimo attestatum della fede et suffi-
cientia sua, dimostrata in Damasco et dove a
bisognato in li servitij nostri, ed a benefitio de
nostri subditi, etc. — *Cottimo di Lanusco*, Libro
I, c. 56:

Մարկոս ըլլայ թարգման ի Դամասկոս, և
ուրիշի բան չի տրուի : — **Մարկոսի լեզուա-**
գիտական յաջողութեան պանծալի յիշատակ
մ' այլ կայ ի Վենետիկ, այլ և ի բժշկական
գրագիտութեան, վերայիշեալ թուականին մօտ:
Երբ այս քաղաքիս մէջ՝ մեծանուն Նիկողոս
Մատոս բժիշկն, թէ վարպետութեամբ և թէ
հեղինակութեամբ, ուզեց տպագրել արդէն
ի լատին լեզու թարգմանուած արաբացի գե-
րահոչակ Էպու Սինայի գործերը, (զոր Եւ-
րապացիք Աւելինա կ' անուանեն, մեր հին ազ-
գային բժշկապետն Մխիթար Հերացի և այլք՝
Սինայէ որդէ), ուզեց սա և աւելցընել անոր
վարքն այլ, զոր գրած էր անոր աշակերտն
(Զօրզան ? Էլ Կիւզկանի). և ահա այս ետքի
գրուածին թարգման գտաւ մեր Մարկոսը,
որուն բառ առ բառ իտալերէն թարգմանել
տալով՝ ինքն դարձուց ի լատին. (¹) և յետոյ
տպագրել տալով յամի 1544, ընծայեց առ
Սուրբն Կարոլոս հաշակաւոր արքեպիսկոպոսն
Միլանու : Մասսա՝ իր գրոց յառաջարանին

1. Cum invenissem Marcum Fadellam damascenum, Venetorum mercatorum Interpretem, atque operam dedisse, ut is verba Sorsani vulgari Sermone exponeret, latinis ea mandare decrevi.

մէջ կու վկայէ զայս։ Վիւսդէնֆէլտ գերմանացին՝ որ Արաբացի բժշկաց պատմութիւն գրած է՝ նա և անոնց գրոց թարգմանութեանց, և չէր կը բնար Վենետիկոյ Դիւանաց ծանօթութիւն ունենալ, կարծեաք կ'ըսէ, թէ գուցէ Ֆատլ-ալլահ բուն արաբացի եղած ըլլայ և յետոյ քրիստոնեայ ըլլալով՝ Մարկոս անունն առած։

Վենետիք այնքան ընդարձակ և զանազան տեղեր յարեւելս առուտուր ունենալով՝ ի հարկէ և թարգմանաց կարօտ էին, թերեւս ոչ այնքան այն օտար երկիրներու և կղզիներու մէջ, որքան բուն իրենց մայրաքաղաքին, որ կենդրոն կամ ժողովարան էր ամենայն ազգէ վաճառականաց. ի դիւանս՝ յիշեալ կամ հանդիպեալ թարգմանաց հնագոյնք՝ մեր վերոյիշեալ Դամասկոսիքն են. անոնցմէ վերջնոյն (ԺԶ) դարու մէջ կու յիշուին քանի մի Յոյնք կղզեցիք և Կիպրացիք, որպիսի էր Նորէս Յակոբ (1587–1620) հմուտ արաբ, թուրք և պարսիկ լեզուաց. անկէ առաջ Միքայէլ Մամբէրէ, և այլք. յաջորդ դարուն (ԺԷ) մէջ կու յիշուին և հայագէտ իտալացիք. ինչպէս Ֆրանչիսկոս Սկարամելլի (Scaramelli, 1630), Ֆորտէս և Պոլիս ի կէս դարուն. այլ և Հայք, Գեորգ որդի Յոհաննայ, որ

և սէնսար էր (1631), Մոբակը լորենցոյ որդի
Պետրով (1630-40), Պողոս (1652). Նոյն ժա-
մանակ և մէկ Մէրտիւ Ռէնչը, որ Հայ է թէ
իտալացի՝ երկբայելի է, բայց կը բնայ ըլլալ
Մկրտիչ մի Վարդանայ որդի:

Փութանակի աստի հասան մի ըստ միով
կա....

« Րդ երբոր այն պատահեցաւ լեցին (?) ,
ի Հռոմայ թուղտ առաքեցին ի քաղա-
քին ... ասեն ... »

Նոյն տպագրութեան տարին (1587-8) ի
Վենետիկ գալէն առաջ կամ (հաւանօրէն)
վերջը, Տերզնցին իր որդւոք ի Մարսիլիա
գնացեր է, և հօն Փոանկաց անուանի հին
վիպասանութիւնը Գեղցին Փարէլլու, (Le Che-
valier Paris et la belle Vienne) թարգ-
մաներ է հայերէն ոտանաւոր շափով . որ եթէ
ուրիշ լեզուագիտի օգնութեամբ այլ եղած
ըլլայ, դարձեալ արդիւնաւոր է Յովհաննէս,
մանաւանդ եթէ նկատուի այն վիպասանու-
թեան դժուարին հին փուանկ լեզուն և ոճը :
Թարգմանութեան վերջը նոյնպէս ոտանաւոր
յիշատակ մ' այլ գրած է, որոյ տողից առա-
ջին տառերն կազմեն այս բանս . « Զտէր
Յովհաննեսի Տէրզնցոյ ասաց յօա » ?, փոխա-
նակ ասացեալ կապելու : Գրածն՝ թէպէտ
զմեզ ի Վենետիկոյ դուրս կու հանէ, բայց իր
այս տեղ ըրած գլխաւոր գործն (տպագրու-
թիւնն) ներելի ընէ, զնոյն օրինակել և կար-
գալ, որովհետեւ շատ սակաւագիւտ է գիրքն :

« Յիշատակ թարգմանչի տառիս .

Զարիւք պինտ լի երես որ կայ՝
Տրորեալ մածիմ ոտացդ վերայ .

Յիշազմ էղ տր յոր ժամ զաս արքայն
և թամարքու և ողորմեամ էզ .



Յիշատակարանէ ասւիկ
առ բամէնասր երյակ թե հօրեւ .

Եղբայր, լեզուով մի յիս գըթայ,
Բամեալ հոգուս ողորմի տայ .
Յորդ արտասուզք գոչեմ ահա ,

Ողորմեցէք որպէս Յովբայ .
 Վկայն իմ Տէրն է , կրկին վկայ .
 Ազաղակեմ , ձայնըս կու գայ .
 Նա որ ասէ մի Տէր ողորմեա՝
 Եղկելոյն այն որ կու կենայ ,
 Ի յա(ն)դենին առնու և խնդայ :
 Տրամադրեալ սա ի Ֆրանցայ
 Էր ի քաղաքն Մառչիլիայ .
 Բամել թուիս մերոյս Հայկայ
 Զերդ և հազար և երեսուն կայ ,
 Նայ աւելի եւս վեցամեայ ,
 Ցվերջ ամսուն յամաց սոցայ .
 Որ և երկրիս այս մեծ արքայ
 Յինրիքոս (Յնրիկոս Զ) կոշեն ըզնա .
 Այլ ես յորդովք քաղաքս ուղղայ .
 Սիրտս իմ կամի որ միշտ երթայ .
 Այլ ճանապարհս երկրի սորայ՝
 Ցամաքն և ծովն կապեալ մնայ .
 Յաւտարութիւնըս մաշեցայ ,
 Որ ի երկիրըն Ֆռանցայ .
 Այս ինչ ցաւ է , կայ և մնայ :
 Կատարեցաւ բանս » :

Անցողաբար յիշեմք որ Տէրզնցին ի Հռովմ
 եղած ատեն (1583) , Հայոց վերակացու կամ
 էլիան անուանեալ Սուլդանշահի (Աբգար տը-
 պագրի որդւոյն) և ուրիշ գլխաւորաց կող-

մանէ՝ երկայն նամակ մի գրած է, արձակ և ոտանաւոր (իր ոճով) առ Դաւիթ պատրիարք Երուսաղեմի, հրաւիրելով որ գայ ընծաներով ի Հռովմ, և տեսնէ Գրիգոր ԺԳ Պապուն ըրածները, մանաւանդ Նոր տօմարի հաստատութիւնը, զօր և յաջորդ տարին (1584) թարգմանեց ինքն Տէրզնցին և տպագրեց ի Հռովմ:

Բ. Տպագրութիւնն ի հարկէ պահանջէր նախընթացաբար՝ որ և է գրագիտութիւն մի կամ գրաւոր ճաշակ. այս ճաշակին գործին՝ որ է լեզուն, կրնայ յատուկ ըսուիլ կամ դիւրագիւտ Հայոց. ամէն ատեն ծանուցուած է մերայոց յաջողութիւնն օտար լեզուներ սովորելու, խօսելու և թարգմանելու, նախ բանիւ՝ ապա և գրով : Ոտուքինեանց տէրութեան ատեն վայելչապէս ծաղկած էր թէ լեզուագիտութիւնն թէ թարգմանութիւնն : Թողլով զընդհանրութիւնն և գալով ի մասնաւորն՝ յիտալականն, և առանձինն ի վերաբերեալն ընդ Վենետիաց, տեսանք արդէն ԺԴ գարուն կիսէն առաջ Աւագ կարաւանապետին թարգմանի գործ կատարելն երբեմն ի Վենետիկ եկած ատեն, և իր ծառայութեան վարձը խնդրելն : — Գրեթէ 200 տարի վերջը (1519) Դամասկացի մ' ալ նոյնպէս կու գայ ի Վենետիկ իր թարգմանօրէն

ծառայութեան վարձը հաստատել տալու :
 Գիտնալու է՝ որ Վենետիք մեծ առուտուր ու-
 նէին յԱսորիս, ուր իրենց գլխաւոր գործա-
 տեղին և պաշտօնեայն, զոր՝ էռոնց (console)
 կ' անուանէին, կու նստէր ի հին մեծ և բար-
 դաւաճ քաղաքն Դամասկոս, ուստի յետոյ
 փոխադրեցաւ ի Բերիա (Հալէպ): Յայտնի
 է որ այդ քաղաքաց բնակչաց հասարակ լե-
 զուն արարերէնն էր, տեղացի Հայք այլ ի-
 րենց բնիկ լեզուէն զատ խօսէին զայս և
 զթուրքարէն. ուստի թէ Վենետաց և թէ
 ուրիշ արեւմտեայց կըրնային ըլլալ և կ' ը-
 լային թարգմանք. Ասորւոց երկրին և Վե-
 նետկոյ փոխադարձ վաճառաց տարութերի
 համար՝ բանուկ մաքսատուն կամ բաժտուն մի
 հաստատուած էր այդ մեծ քաղքին մէջ. առ-
 նուած բաժը՝ Վենետիք՝ կոտդիմո (Cottimo)
 կ' անուանէին, և ժողովածն ու հաշիւն ան-
 վրէպ կու խաւրէին ի Վենետիկ : Այս բաժ-
 տան թարգմանն էր Գեորգ տեղացի Հայն. ԺԵ
 դարուն վերջի տարիներէն սկսեալ, կ' ընդ-
 ունէր տարեկան վարձը 216 դուկատ, որ
 ըստ նիւթական արժէից 500 ֆրանգէն ա-
 մելի է, ըստ իրականին՝ այժմեան արժէից՝
 թերեւս եռապատիկ աւելի : Ինչպէս վաճա-
 ռականութիւնն՝ այսպէս անոր վերարերեալ
 ամենայն հաշիւք ալ փոփոխական են, աւելի

կամ նուազ. 1518ին առեւտուրն շատ յաջող չըլլալով՝ Դամասկեան բաժից մեծ պաշտօնեայքն ի Վենետիկ՝ ուզեցին իրենց բաժտան ծառայողներն և անոնց վարձն այլ նուազեցընել, և գլխաւոր թարգմանին տալ՝ 150 դուկատ միայն։ Գէորգ լաւ գիտնալով իր արժէքն՝ վստահութեամբ եկաւ ի Վենետիկ, և խնդրեց ի տէրութենէ՝ որ քննեն իր 20 տարի ըրած հաւատարիմ ծառայութիւնը և չի գրկեն զինքն իր թոշակէն։ Վենետիկ կամ տէրութիւնն շատ խիստ էր այսպիսի խնդրոց և վարձատութեանց մէջ. քննել տուաւ Գէորգայ ըրածը. Դամասկոսէ ելած եկած գունդք միաբերան վկայեցին, որ ոչ միայն թարգմանութեամբ՝ այլ և շատ ուրիշ գործերով օգտակար եղեր էր Գէորգ իրենց և տէրութեանն. Ծերակոյտն ալ հաւանութեամբ վճռեց (31 մայիսի, 1519) որ կենօք չափ տրուի Գէորգայ 200 դուկատ տարեկան, և դարձեալ ուրախութեամբ ծառայէ Հասարակապետութեան։

Այնպէս ալ կ'ընէ Գէորգ գեռ շատ տարիներ. և երբ կու վախճանի 1536-7 թուին, Դամասկոսի գունցն և խորհրդականք թարգման կ'ընտրեն իր որդին Մարկոս, որ մականուամբ Ֆարալուան կոչուէր. թոշակ տալով 50 դուկատ, 50 դուկատ այլ հօրը առնելիք-

ներուն համար. Վենետիկոյ պաշտօնեալք այլ
կու հաստատեն զայս (ի 4 մարտի, 1541) ի
շնորհս իր հօր « հաւատարմութեան, ժրու-
» թեան, լաւութեան և յախաղակութեան ».
(attenta la fede, solertia, bontà et suffi-
cientia del quondam Turzimano del no-
stro Cottimo, et li meriti suoi, և այլն):
Երկու աարի վերջը (17 օգոստ. 1543) ոչ միայն
հօրը գովեստը կու կրկնեն պաշտօնեալք հա-
սարակապետութեան՝ այլ և Մարկոսի թէ
լեզուագիտութեան համար (արաբ, թուրք,
փռանկ), և թէ մանաւանդ իր գործօնութեան,
ոչ միայն ի Դամասկոս այլ և ի Դալմատիա,
ուր դրկած էին, կու վճռեն որ տրուի իրեն
ինչ որ հօրը կու տրուէր, այսինքն 200 դռւ-
կատ տարեկան, (1) այս պայմանաւ՝ որ միայն

1. Sono stati si laudabili et virtuose le ope-
razioni del q.m fidelissimo del stato nostro
Zorzi fù terzimano del Consuli et natione no-
stra in Damasco, molto ben note a cadauno, et
meritamente se die abbrazzar la posterita sua
et il suo figliuolo *Marco*, chiamato in lingua a-
raba *Fadella*; del quale se ne a sayuto gene-
ralmente dali Consuli et mercadanti nostri de
Soria, optimo attestatum della fede et suffi-
cientia sua, dimostrata in Damasco et dove a
bisognato in li servitij nostri, ed a beneficio de
nostri subditi, etc. — *Cottimo di Lanusco*, Libro
I, c. 56:

Մարկոս ըլլայ թարգման ի Դամասկոս, և
ուրիշի բան չի տրուի : — Մարկոսի լեզուա-
գիտական յաջողութեան պանծալի յիշատակ
մ' այլ կայ ի Վենետիկ, այլ և ի բժշկական
գրագիտութեան, վերոյիշեալ թուականին մօտ:
Երբ այս քաղաքիս մէջ մեծանուն Նիկողոս
Մատոս բժիշկն, թէ վարպետութեամբ և թէ
հեղինակութեամբ, ուզեց տպագրել արդէն
ի լատին լեզու թարգմանուած արաբացի գե-
րահռչակ Էպու Սինայի գործերը, (զոր Եւ-
րոպացիք Աւելինա կ' անուանեն, մեր հին ազ-
գային բժշկապետն Մխիթար Հերացի և այլք՝
Սինայի որդի), ուզեց սա և աւելցընել անոր
վարքն այլ, զոր գրած էր անոր աշակերտն
(Զօրգան ? Էլ Կիւզկանի). և ահա այս ետքի
գրուածին թարգման գտաւ մեր Մարկոսը,
որուն բառ առ բառ իտալերէն թարգմանել
տալով՝ ինքն դարձուց ի լատին. (¹) և յետոյ
տպագրել տալով յամի 1544, ընծայեց առ
Սուրբն Կարոլոս հաշակաւոր արքեպիսկոպոսն
Միլանու : Մասսա՝ իր գրոց յառաջարանին

1. Cum invenissem Marcum Fadellam da-mascenum, Venetorum mercatorum Interpretem, atque operam dedissem, ut is verba Sorsani vulgari Sermone exponeret, latinis ea mandare decrevi.

մէջ կու վկայէ զայս : Վիւտղէնֆէլտ գերմանացին՝ որ Արաբացի բժշկաց պատմութիւն գրած է՝ նա և անոնց գըոց թարգմանութեանց, և չէր կըրնար Վենետիկոյ Դիւանաց ծանօթութիւն ունենալ, կարծեաք կ'ըսէ, թէ գուցէ Ֆատլ-ալլահ բուն արաբացի եղած ըլլայ և յետոյ քրիստոնեայ ըլլալով՝ Մարկոս անումն առած :

Վենետիք այնքան ընդարձակ և զանազան տեղեր յարեւելս առուտուր ունենալով՝ ի հարկէ և թարգմանաց կարօտ էին, թերեւս ոչ այնքան այն օտար երկիրներու և կղզիներու մէջ, որքան բուն իրենց մայրաքաղաքին, որ կենդրոն կամ ժողովարան էր ամենայն ազգէ վաճառականաց . ի դիւանս՝ յիշեալ կամ հանդիպեալ թարգմանաց հնագոյնք՝ մեր վերոյիշեալ Դամասկոսկացիքն են. անոնցմէ վերջնոյն (ԺԶ) դարու մէջ կու յիշուին քանի մի Յոյնք կղզեցիք և կիպրացիք, որպիսի էր Նորէս Յակոբ (1587-1620) հմուտ արար, թուրք և պարսիկ լեզուաց . անկէ առաջ Միքայէլ Մամբէրէ, և այլք . յաջորդ դարուն (ԺԷ) մէջ կու յիշուին և հայագէտ իտալացիք . ինչպէս Ֆրանչիսկոս Սկարամելլի (Scaramelli, 1630), Ֆորդէս և Պոլիս ի կէս դարուն . այլ և Հայք, Գեորգ որդի Յոկոսյ, որ

և սէնսար էր (1631), Մարտիրոս Լորենցոյ որդի
Պիետրոսի (1630-40), Պօղոս (1652). Նոյն ժա-
մանակ և մէկ Միքայէլ Ոհովզ, որ Հայ է թէ
խոալացի՝ երկրայելի է, բայց կըրնայ ըլլալ
Մկրտիչ մի Վարդանայ որդի:

Ե.

Ա. ԽԱԶԱՑՈՒՐ ԴԱՒՐԻԺԵՑԻ, ԵՒ ԻՐ ԹԱՐԳՄԱՆԱՄ
ՎԻՊԱՍԱՆՈՒԹԻՒՆՆ. — Բ. ԽԱԶԱՑՈՒՐ ԵԹԹՎՃԱՑԻ,
ԵՒ ԻՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆ ՎԵՆԵՑԱՌՈՑ :



Ա. Այս ատեն և վերջը Հայք աւելի բազ-
մացեալ և հաստատ բնակելով ի Վենետիկ՝
այնքան կարօտութիւն չկար թարգմանչաց,
ոչ իրենց համար և ոչ պետութեանն, և ոչ
այլ մեծ յարդ մի լեզուաւ թարգմանութեան՝
որպէս զրով։ Այս ետքի մասամբ՝ Մարկոսի
պէս և աւելի այլ նշանաւոր եղած է մերազ-
գին Խուլառուր Դաստիժեցի, պարսիկ լեզուէ
լաւ իտալերէն թարգմանելով հետաքրքրա-
կան գրքոյկ մի . որ է վիպասանութիւն մի
Պանդըխատութեան կամ ուղեւորութեան Սե-
րենդիպպոյ (¹) կղզւոյն թագաւորին երեք
որդւոց. վերնազիրն է, Peregrinaggio di
tre giovani figliuoli del Re di Serendippo:
Per opera di M. Christoforo Armeno, dalla
persiana nell'italiana lingua rapportato.

4. Ըստ ոմանց է Սումառը կզզին, կամ ուրիշ մեծ
կողի մի յՈՎԿիանոս Հնդկաց :

Նախ տպագրուած է յամի 1557, յետոյ այլ և այլ անգամ. մեր ձեռքը գտուածն է 1584ի տպագրութիւնն, ի վենետիկ, փոքրիկ, ութածալ, 83 թուղթ։ Ինչ պատճառաւ թարգմանուած և տպագրուած ըլլալը՝ լսենք Խաչատրոյ արեւելեան ոճով յառաջարանէն, իր իտալերէնէն թարգմանելով ի հայ. «Միշտ գովու» թիւն Տեառն Աստուծոյ, ստեղծողին եօթն «Երկնից և չորս տարերաց, և այլ ամեն » իրաց՝ որ կ'երեւին ի վերայ երկրի, և ա «րարշին մարդոյ՝ որ գերազանց է քան զա » մենայն կենդանիս. որուն՝ ոչ միայն միտք «ընծայեց՝ իր աստուածութիւնը ճանշնալու » համար, այլ և լեզու՝ իրմէ ընդունած բա «րեաց շնորհակալ ըլլալու։ Ես խեղճ մե » ղաւորս Խուչառուր (Christoforo) Հայ, իմ «Երկիրս՝ Դաւրէժ քաղքին մէջ գտուած ա » տեն, շատ անգամ և շատերէն կու լսէի » որ Ֆուանկաց կողմերը շատ ազնուական և » մեծահանճար մարդիկ կան, զոր և գիւրին » էր հասկընալ անոնց քով գտուած գեղեցիկ » և զարմանալի բաներէն։ Ասկէ մեծ փա «փագ մտաւ ի սիրտս՝ այդ երկիրը տես » նելու, մանաւանդ որ քրիստոնէից իշխա «նութեան ներքեւ էր, ուր Քրիստոսի կրօնից » ծէսերն և իշխանաց սովորութիւնները կըը «նայի ճանշնալ, ես ալ քրիստոնեայ ըլլա-

» լովս՝ այլ աւելի կու փափագէի : Այդ օգ-
 » նութեամբ ջեառն Աստուծոյ՝ ճամբայ ել-
 » նելով ի Փռանկաստան երթալու, իմ առա-
 » ջին հանգիպած տեղն եզաւ Վենետիկ . որ
 » որսվհետեւ բոլոր աշխարհիս մէջ իր նմանը
 » շունի, կըրնայ ըսուիլ թէ Աստուծոյ և ոչ
 » ուրիշի ձեռքը նախ շինուած ըլլայ : Մովսէ
 » մէջ զետեզուած է, և թէ ջրով թէ ցամաքով՝
 » մարդ ամէն կողմը կըրնայ երթալ գալ.
 » վասն զի միշտ կու գտուին տեսակ մի ծած-
 » կուած նաւակք, կանդոլ ըսուած, որ՝ ուր
 » որ մարդ ուզէ՝ կու տանին : Պալատաց և
 » տանց մեծ մասն երկու դուռ ունի, մէկն
 » ջըրի վրայ, ուր ինչ որ պէտք է ընտա-
 » նեաց՝ նաւակներով կու բերուի, մէկայլն
 » փողոցի վրայ է, ուսկից ամէն մարդ ու-
 » ղածին պէս կ'ելնէ կու մանէ : Այս քաղ-
 » քիս մէջ ուրիշ կենդանի չերեւնար, բայց
 » միայն մարդիկ և գեղեցիկ ու վայելչահա-
 » սակ կանայք. մինչդեռ մեր քաղաքաց մէջ՝
 » էշերն և ուղտերն անդադար անցնելով՝
 » անտանելի նեղութիւն կու տան մեզի :
 » Ճամբաներն ամենամաքուր և աղիւսայա-
 » տակ են. շատ և մեծաշէն պալատք և ե-
 » կեղեցիք կ'երեւան. կան և շատ հոգե-
 » տունք (կամ հիւանդանոցք, hospitali), ուր
 » արք և կանայք առանձին կու բնակին, և

» շատ լաւ ծառայողներ ունին . ճերմակեղէն
 » հագուստնին շատ մաքուրութշկնին միշտ կու
 » հոգան զանոնք , և անոնց ամէն պէտքն կու
 » տրուի : Այս տեղ ճիշտ արդարութիւն կ'ը-
 » լայ . ամենեւին չի թողուիր որ մէկն ուրիշի
 » անիրաւութիւն ընէ . ամէն մարդ կու ջա-
 » նայ կրցածին շափ Աստուծոյ պատուիրանք .
 » ները պահել . օրինօք կ'ապրին . և պաշ-
 » տօնեայք արդարութեան ամենքն այլ շատ
 » գիտուն և շատ բարեսէր անձինք են : Ա-
 » սոնցմէ զատ կան նա և շատ սենեակներ ,
 » ուր աղքատ օտարականք՝ առանց վարձք
 » տալու կու բնակին : Այս բանիս կըրնամ
 » ես համարձակ վկայել . որ երեք տարի է
 » իմ վիճակիս պատշաճ սենեկի մի մէջ բնա-
 » կած եմ առանց բան մի վճարելու . չեմ
 » յիշեր թէ հանդիպած ըլլամ ուրիշ քաղքի
 » մի՝ որ ասկէ աւելի ողորմած և աղքատաց
 » կարեկից ըլլայ : — Արդ ես այսպիսի գե-
 » ղեցիկ բարուց և սովորութեանց սիրահա-
 » րուած , իմ հայրենիքս քոլորովին մոռնա-
 » լով , եթէ և երբեմն ի միտքս ընկնայ նորէն
 » դառնալ , կարծես թէ բաղձանքս մոռցընել
 » կու տայ զայն : Այս տեղ ամէն արուեստի
 » պարապող մարդիկ շատ մտադիր տեսնե-
 » լով իրենց բանին գործին , այս քաղքիս մէջ
 » իրենց ինծի ըրած շատ և շատ մարդավարու-

» թեանց փոխարէն, իրենց զուարճութեան
 » համար ուզեցի իմ մէկ սիրելի բարեկամիս
 » «զնութեամբ՝ իմ լեզուէս յիտալական լեզու
 » թարգմանել Պանդխտութիւն մի՝ Երեք ե-
 » րիտասարդ որդւոց Անդրեանդիպոյի թագա-
 » ւորին. որ ըստ իմ կարծեացս՝ իր գեղեց-
 » կութեանն համար ընթերցողաց շատ հաճոյ
 » պիտի ըլլայ, որով կու յուսամ՝ իրենց չնոր-
 » հակալութեան արժանի ըլլալ » :

Խաչատուր այս յառաջարանէն զատ նամակ
 մ' այլ գրած է առ ազնուականն Ամարկոս –
 Անտոն Ճիւտինիանոյ, անոր ընծայելով
 գիրքը. մէկ մի՝ անոր իրեն ըրած շատ բա-
 րերարութեանց համար, մէկ մ' այլ՝ ուզելով
 անոր մեծ և պատկառելի անուամբ՝ բամբասո-
 ղաց կամ չհաւանողաց բերանը գոցել, ինչպէս
 որ միր ազգին մէջ ալ կու գտուին, կ' ըսէ.
 ասկէ զատ, ամառուան տուք օրերուն մէջ զբա-
 զելու յարմար առիթ մի համարեր է այս
 գրաւոր աշխատութիւնը. նամակն այլ գրած
 է օգոստոսի առաջին օրը (1557). — Որչափ
 որ աւելորդ համարիմ այդ վիպասանութեան
 (եօթն պատմութեանց) վրայ խօսիլ, ի գո-
 վեստ հիղինակին և Խաչատրոյ, (թերեւս եր-
 կուքն ալ մի են), պէտք է ըսել՝ որ նախ
 իտալական լիզուին յստակութիւնն գովուած
 է, և 7 կամ 8 անգամ տպագրուած. (աղէկ

բարեկամ գտած և ընտրած է Խաչատուր): Երկրորդ, գրուածն այլ՝ կամ արեւելեան ճաշակին համար, կամ վայելուշ ոճոյն համար՝ թարգմանուեր է ի փռանկերէն, անգլիերէն, գերմաներէն, հոլանդերէն և դանիերէն. Հիմայ բաւական հազուագիւտ և թանկագին են ասոնք: Այս ամենուն արդիւնքն վերաբերի առ իւղճուկ մեղասոր Հայ Խաչատուրն այն. որոյ նման Հայ մ'այլ գտնելու համար, որոյ գրաւոր գործն այսքան լեզուներ թարգմանուած և տպագրուած ըլլայ, թերեւս հարկ է մեր ԺԴ դարու՝ կոռիկոսի տէր՝ Հեթում Պատմչին մօտ երթալ:

Դ. Միայն Դաւրիժեցի Խաչատուրն չէ որ Վենետիոյ վրայ զմայլած և զրած ըլլայ. ուրիշ Խաչատոր Երեց մ'այլ կայ, աւելի հեռու տեղւոյ մի մականուամբ, Ենովոցի. ծնընդեամբ, թէ ուրիշ պատճառաւ այսպէս կոչւած, շեմ գիտեր: Սա աւելի երկար և մանր և սուր դիտողութիւն ըրած և ոտանաւոր բանիւ գրած է իր « Յարմաքեալ Պատմութիւն » Վանատիկոյ, փոքր ի շատէ... ականատես և « ոչ. ականջալուր լեալ »: Զայս արդէն իբր կէս դար առաջ հրատարակած եմք ի Բագմավէպ օրագրի (Ե, 172-77). և կրկնել այն իբր 280 երկայն տողերը՝ ծանր է, թէ և ոչ անարժան գրուած, մանաւանդ անծանօթի

մի, նա և բնիկ Վենետ բանասիրի. ինչպէս որ փափագած են այսպիսիք այլ թարգմանել։ Մեր առջի անգամ հրատարակած ատեն, ինչպէս որ յայտնած եմք, օրինակին մէջ 20 տողի շափ պակաս կար. յետոյ ուրիշ օրինակ մի ունեցանք անպակաս, քիչ մ' աւելի նոր գրուած, 1656ին. բայց ոչ առկէ և ոչ առջինէն՝ որոշ շիմացուիր հեղինակին ժամանակը, որ իր գրութեան ամսուն օրը նշանակելով՝ տարին մոռցեր է։ Կ' երեւի թէ Դաւրիժեցիէն քիչ ետք ըլլայ. և քան զնա աւելի անաշառ դիտող և գրող. ստորագրած բաներն ճիշդ են, բաց ի Վենետկոյ 10,000 կամուրջներէն, և անոր ծագման կամ շինութեան սկզբնաւորութեան աւանդութենէ. իբր թէ Հնդկաստանէ եկողէ մի, կամ այն աշխարհին թագաւորաց փախստեայ գանձերով շինուած ըլլայ։ Քաղքին նեղուածք ըլլալն՝ ջրի մէջ ամփոփուելով, և ընդարձակելու համար՝ կամ ծանծաղ տեղուանք ցիցեր տնկելով և անոնց վրայ չէնք շինելն, կամ տուներու վրայէ վրայ յարկեր բարձրացընելը՝ լաւ կու ստորագրէ Խաչատուր, ըսելով.

« Պաղ և պաղչայ յաւել շունին, և զոր ունին՝ տան մէջն է նայ. »

Հանց գեղեցիկ են զարդարեր, նման դրախտին ծաղկեր է նայ:

Մէջ քաղաքին կովկիթ չունին, և զոր ունին՝ գիւղօրէքն է.

Գրաստու զերեսըն շեն տեսնուր. տեսողացըն մեծ զարմանք է:

Նեղուց քաղաք և մարդըն շատ. տունն ի վերայ տան շինեալ է.

Հինգ և վեց դաթ տուն են շիներ, ներքինըն զվերինըն չի գիտէ.

Տասն հազար կարմունճ ունի, ի քաղաքին մէջ երթեւեկն է.

Լանուց մէկ տեղ մի հէջ չըկայ. ներքեւն խանութ՝ վըրան տուն է:

Ծովէն բացուած ցածուն տեղուանք, քարով խիճով բարձրացընեն,

Փսան երսուն տարի դատին, հազիւ տեղ մի ցամքեցընեն:

Սան Մարքոյին մալըն շատ է, խարճեն և սարայներ շինեն.

Կամ կու ծախեն, կամ վարձու տան, հըսապով դդրամն աւելցընեն:

Քանի մի մեծ տօլապ շինած՝ ծովուն զատակըն կու քերեն,

Տանին ի յայն տեղըն լընուն՝ յոր տեղ որ սարայ կու շինեն»:

Խաչատուր՝ թէ այս լեզուով գրուածէն,
թուրք բառեր խառնելով, և թէ հետեւեալ
տողերովս,

« Զերկրին հողըն հլուն շինեն, մարգարտի
պէս ծախեն զնայ,

Զթուրտաց երեւ շարտըն խարեն, մէկ մ'ալ
ես որ խիստ խարեցայ »

կու յայտնէ՝ իր Թուրքիոյ կամ արեւմտեան
Հայոց կողմերէն գալը. ամենեւին չի յիշեր
ազգայնոց ի Վենետիկ գտնուիլը կամ անոնց
տունն և եկեղեցին. միայն ի յիշելն Ա. Մար-
կոս մայր եկեղեցւոյ հարստութիւնը՝ կ'ըսէ.
« Այլասեռից վաճառականք ի տեսութիւն
մտնեն ի նայ,

Զգըլիսնին շարժեն նոքա, շատ ոք զաւան-
դըն մոռանայ » .

այդ պատճեա վաճառականաց մէջ անշուշտ
կ'իմացընէ և զհայս. իսկ զաւանդը մոռանալը
թուի թէ անոնց ապշած նայելու ատեն՝ քո-
վերնին ունեցածին մոռնալը, և թերեւս
գողցընելը կու յայտնէ : Այս յանցանքը յայտ-
նի չըսէր Խաչատուր. բայց յետ արժա-
նապէս գովելու զքաղաքն և զքաղաքացիս,
արդարութիւն համարի նա և ասոնց անիրաւ
կամ անվայել քանի մի գործն այլ յիշել. և
թերեւս ոչ ոք ի մերազգի տեսողաց այս զար-
մանալի քաղաքը՝ ասոր նման արդարադատ

չէ եղած . համարձակ կ' ըսէ յետ գովասաւնութեանը .

« Այս հերիք է զոր գովեցի . պահ մի բամբաս առնեմ զնոսա

Զվայելշութիւնն աղէկ ունին , բայց այս քանի բանս անարդ է » :

Այս անարդ բաններուն գլխաւոր համարի զգեստուց շուայլութիւնն և անպատշաճ բացուածքը , կանանց նազանքով քայլուածքը , արանց փաղաքշութիւնը . մանր թոշուններ , ծովային և ցամաքային ժժմունքներ ու միջատներ ուտելնին . շուները գրկել և գգուել և ինչուան մէկտեղ յեկեղեցի մտցընելը . կերակրոյ ատեն՝ իրենց բերնի պատառը շանց տալը , և այլն : — Խաչատուր կ' երեւի թէ ինչպէս սուր աչք՝ այսպէս այլ սուր յիշողութիւն ունի եղեր , կամ տեսածը իր յիշատակաց գրքուկին մէջ կունշանէ եղեր . վասն զի վենետիկէ ելնելէն վերջը և դէպ ի Փորփու կղզի նաւելու ատեն՝ շոտարով գրեր է , « ի մէջ նեղութեան ծովուն , (երբ և) ջուր մեր պակասիալ էր » . այսպէս կու սկսի . իսկ վերջն ալ կրկնէ .

« Այս հերիք է զոր գրեցի . աճըգեցայ . ձեզ ինչ գաղտնի .

Մովուն թասան զիս առեր , ամենեւին աչք շերեւի .

ի բազում լիմանլըխէ և ի կամու որ շատ լինի՝
Զի ժամաներ տակմա քամի. յոյս մեր այն
է (որ) Փորֆէզ հասնի » :

Կ' երեւի թէ զրութեան վերջերը յիրաւի
յօգնած, և ծովուն թասան՝ այսինքն հոգն՝
մէկ մի առանց յաջող հովու մնալն, մէկ մ'այլ
սաստիկ հովով ալէկոծիլն, իր գլուխն այլ ժա-
ժեցրեր է. վասն զի հակառակ ի սկզբան
ըսածներուն Վենետիկոյ համար՝ թէ նմանը
նկայ, և թէ « տեսնողն ամէն ապուշ մնայ » ,
վերջը վերջը կ'ըսէ.

« Յորժամ զբաները գրէի, և առ ընկերըս
չխօսէի,

Ծիծաղէի ես իմ վրայ՝ թէ Վանատիկ անք
երեւի :

Արի՛, գնա Ըսպանիոյ քաղաք՝ որ գեղորայքն
է իրբեւ զվանատիկ » .

և կարգաւ յիշելով Անապօլի (Նարոլի), Ա-
լիկուռնա, Ֆլորենցա, Մեսսենա, Բալերմոյ,
Մարչիլիա, Ճինիվիզ, դարձեալ կրկնէ. « գեղն
է նման Վանատիկոյ » ! Թերեւս յիշելով Վե-
նետիկոյ նեղուց ըլլալը. իսկ միւս յիշեալ քա-
ղաքաց միջի և դրսի ընդարձակութիւնը, իրեն
այլ սրտնեղութեան ատեն՝ այսպէս ըսել
տուեր է : Բայց լաւ է որ գոհութեամբ կ'ա-
ւարտէ գրուածը .

« Փառք շինողին (յօրինողին, պակաս
չըներ գնաֆաղանին .

**Ամենեքեան բարով վայելեն, օրհնեն ըզ-
տուողլըն պարգեւաց » .**

**Եւ կրկին փառատրութեամբ կու կնքէ . «Փառք
Աստուծոյ, յամենսոյն ժամ» :**

**Կըրնանք և մենք փառարանակից ըլլալ առ
Տուողն պարգեւաց, որ այնպիսի մութ և
խուզ դարու մէջ (ԺԶ), ասանկ սուր՝ թէ և
անհարթ կամ անօգնական՝ հանճարներ պար-
գեւեր է մեր Խաչատուրներուն . որ է ըսել,
թէ մեր անծանօթ հանճարեղ ազգայնոց մէկ
քանին յայտներ է, իրենց հայրենի երկրէն
շատ հեռու և անկարծելի կողմեր : Կարծեմ
այս վերոյիշեալներէն և անոնց ժամանակակից
շատ աւելի հանճարեղ և հնարագէտ քան զվե-
նետն, մեծագոյն քաղաք շինող և ծովուն յա-
տակը քերող Հայ մ' այլ պիտի ճանչցուի, որ
երեւի թէ նոյն իսկ իրեն բազմահնար յաջողու-
թեան համար՝ հանրածանօթ ըլլալով այն
ժամանակ, ի վենետիկ յատկաբար Հայն կո-
չուեր է, L' Armeno, ինչպէս յաճախ կու
գրուի քաղքին Գիւանաց մէջ :**

Զ.

ՀԱՐԱԴՐԱԿԱՆ ԱՆՑՈՒ ՍՈՒՐԵԱՆ

ԺԶ դարուն կիսուն կամ քիչ մի վերջ, ի
վենետիկ գտնուած դեռ ոչ բազմաթիւ Հայոց
մէջ՝ ամենէն նշանաւորն եղած է սա, և ե-
րեսուն տարիէ աւելի զանազան դիպուածոց
և պիտոյից մէջ ցուցեր է մեծ հանճարը, մեծ
գործօնէութեամբ և յաջողութեամբ։ Իր յա-
տուկ կամ մկրտութեան անունն է Անդոն,
մականունն Սուրբիան, որ կամ նոյնպէս յա-
տուկ անուն է, և կամ թերեւս հայրենեաք՝
Միջագետաց և Ասորոց կողմէն ըլլալով՝ այս-
պէս կոչուած ըլլայ յիտալացոց, որք Սի-
րիա կամ Սուրիա կ'անուանեն այն կող-
մերը. արդ դիւանաց մէջ կու գրուի սա Աս-
տոնիո Suriano detto l'Armeno (Անտոն
Սուրիան՝ կոչեցեալն Հայ)։ Իր Հօր անունն
ալ ծանօթ է, Յովսէփ (¹)։ Երբ կամ ո՞ր


1. Այսպէս կոչուի հայրն նօտարական գրուածի մի
մէջ, որոց և մականուն այլ կ'աւելցուի՝ Բժիշտոն, de
Medici. Իսկ պաշտօնական գրուածի մէջ (յամի 1609)
Մէտոյել կոչուի հայրն, որ գուցէ պապն ըլլայ։

տարի ի Վենետիկ եկած ըլլալն՝ յայտնի չէ, այլ երիտասարդ կամ մանկահասակ եկած պիտի ըլլայ, իր բոլոր կենաց տարիքէն շափելով, որ է 58 տարի. իսկ իր անունն և գործքն 32 տարիներու մէջ կու յիշուին (1559–1591): Բայց իր առաջին գործէն կամ գործոյ առաջարկութենէն գուշակուի՝ որ 1559 թուականէն այլ առաջ ծանօթ եղած է. կու վկայէ իր որդին՝ որ հայրն 40 տարի ծառայած է տէրութեան. ըսել է 18 տարեկան սկսած. ուստի և յայտ կ' ըլլայ որ ի Վենետաց առած է իրեն ամուսին, և իրեն գլխաւոր գործոյ կամ արուեստին՝ յաջորդ թողած է զաւակն Յովսէտ անուամբ, ծնած իրը ի 1576. (վասն զի՞ ՞ է 54 տարուան ի 1630). մէկ որդին այլ յիշուի հօրմէն քանի մ' օր առաջ մեռած՝ 11 տարուան, Մարկոս-Անդրո (Marc' Antonio) անուամբ, որ Վենետաց սիրելի (երբեմն ալ ծաղրելի) անուն մ' է, և անով յայտնուի իր կնոշն այլ վենետկեցի ըլլալն, բայց այդ կնոշ անունն և ընտանիքը չեմ գտած :

Առաջին անգամ Հայ Անտոնի անունը՝ կու գտնեմք իրմէ յիշուած իր մէկ աղերսագրին մէջ՝ առ Դուքսն Վենետկոյ և առ ծերակոյտն, (ի 24 յունիսի, 1561), երկու տարի առաջ ըրած գործոյն համար : Յամսեան հռկտեմ-

բերի, 1559 տարւոյն, առաջին աղերսագիր մի տուեր է մեծ և դժուարին ձեռնարկութեան մի, որ որքան իրեն պատիւ կըբնար բերել, զուցէ ոչ շատ պակաս՝ ամօթ վենետաց, որք այնքան ճարտարք էին ի նաւաշխնութեան, ի նաւարկութեան և ի նաւամարտի. բայց՝ կամ երբեմն զգաստութիւննին կու պակսէր, կամ ծովն անոր ալ կու յաղթէր. և կամ չէր բաւեր իրենց հնարքն՝ նաւահանգիստը ապահովցընելու յամենայն վըտանգաց : Իրն այս է, որ իրենց մէկ մեծ և զինեալ նաւ մի՝ կալենէ, որ հասարակ կալեա, ըստ հայոց խոյք՝ ըսուած նաւերէն մեծ է, զէնքերով, հրետներով (թօփ), և ուրիշ ամէն կազմածով և բեռամբք ընկղմեր խորասուզեր էր նաւահանգստին մէջ, և հանելու ճար կամ ճարող մի չէր գտուած, թէ և փորձեր և քննութիւններ եղած էին. այլ յուսահատեալ թողեր էին : Հաւանական է որ մեր Հայն ալ Վենետիկոյ հռչակեալ նաւարանին մէջ արտւեստաւոր մ' ըլլալով, տեսեր էր ոչ միայն անոնց փորձերը և աչօք քններ էր նաւուն ընկղմած տեղը և դիրքը, այլ և անոնց փորձերուն կամ գործեաց պակասութիւնը : Ինքն այն ատեն 26 տարուան երիտասարդ մ' էր. մտածեց, վստահացաւ մտածութեանը, և աւելի ծածուկ քան յայտ-

կամք (Բերդանսու) Մարկոս-Պողոսի վկանացուն :



նի՛ նաւը հանելու գործիքի կամ չէնքի մի գաղափար մի կամ փոքրիկը շինեց, և վերոյիշեալ թուականին (1559, Հոկտ.) աղերսագրով ներկայացուց տէրութեան գերագոյն ատենին : Ատեանն կամ դուքսն՝ թէ և անյարմար շտեսաւ գործիքը, բայց առջի փորձողներուն անյաջողութենէն չվատահանալով, խնդիրը չմերժեց, բայց շուզեց այլ օգնել անոր՝ դրամով կամ ուրիշ նիւթերով, այլ թողուց որ նա իր ծախքովը գործը տեսնէ . իսկ Անտոն որ այնքան մեծ գործոյ դրամական կարողութիւն չունէր, հարկաւ կու ստիպուէր յետ կենալ : Երեւի թէ իր առաջարկութիւնն նորէն արթընցուց ուրիշները . Բարդուղիմէ անուն նաւապետ մի յանձն առաւ իր ծախուք գործել և հանել նաւը կամ նաւուն մէջի եղածները . մեծ արկղածեւ (Casson) գործիք մի շինեց և սկսաւ փորձել . այլ գործիքն ալ ընկղմեցաւ . նորէն մէկ մ' այլ շինեց . այն ալ առջինին պէս ընկղմած կալէռնին ընկեր եղաւ . Բարդուղիմէ անճըրկած' սկսաւ իր կորուստը հոգալ . բայց ոչ ինքն և ոչ ուրիշ անձինք իր շինածներն ալ կըրցան հանել : — Այն ատեն Անտոն նորէն ոտքելաւ, առաջարկեց տէրութեան պաշտօնէից, որ հրաման տան իրեն իր ծախքով հանել այն երկու արկղածեւներուն մէկը, (որով-

Հետեւ մէկայլն ծովուն ծփանքէն քայլայուած փնացած էր): Հաւանեցան պաշտօնեայք, բայց պարտաւորեցին զնա (Դ մայիսի, 1561) որ ութ օր չանցած՝ ձեռք զարնէ գործոյն. և քանի մի շաբաթ վերջը իրենց պաշտօնարանին զիսաւոր գործատեսներէն մէկը (Capitano dell' Officio) խաւրեցին՝ որ տեսնէթէ ինչ է ըրած Հայն: Գնաց քննեց նա, և (յունիսի 11ին) լուր բերաւ, թէ Անտոն ոչ միայն հաներ է զարկղակերտն, այլ և քշեր տարեր է ինչուան Ս. Գէորգ կղզւոյն քով, քանի մ՞այլ խոշոր նաւակներ (burchelle) բերեր է հօն, որ արկղին մէջ լցուած տիղմն ու աւազը հանեն մաքրեն: Այս գործոյ և գործեաց համար Անտոն 1000 դուկատէն աւելի ծախք ըրած էր:

Հիմայ պարզ երեսով համարձակ գնաց յատեան Դքսին (24 յունիսի, 1561), և նորէն գրով հրաման խնդրեց կալէոնն այլ հանելու, իր ծախփով. և իրաւացի պարծանօք կ'ըսէր. « Տեսնելով՝ որ ուրիշներն ոչ միայն » դժար՝ այլ և անկարելի համարէին այն » արկղակերտները հանելու, մտածեցի որ ա» նով ո՛րշափ վեաս պիտի ըլլայ ձեր նաւա» մուտքին, միանգամայն և իմ առ Զեր » Պայծառութիւնն (Sua Serenità) ունեցած » սէր ու գորովս, և Աստուծոյ ինձ տուած

» Հանճարեն, յորդորեցին որ ջանամ հնարք
 » գտնել և հանել ընկղմածներուն մէկը...
 » գտայ և առաջարկեցի. հաւնեցաք, և յանձ-
 » նեցիք ինձ հանելու. և ես օգնութեամբ Աս-
 » տուծոյ հանեցի, իմ ծախքովս, և շատ դիւ-
 » րութեամբ. որուն վրայ ամենքն այլ զարմա-
 » ցան: Արդ հիմայ որ իմ կարողութեանս
 » ցոյց մի տուի Զեր Պայծառութեան, կար-
 » ծեմ թէ քիչ մի համարմունք գտայ ձեր
 » առջեւ, և թէ պիտի կարենամ յաջողել
 » ուրիշ աւելի դիւրին ձեռնարկութեան մի
 » եւս՝ ինչպէս կարծեմ. որ է, (եթէ չնորհէք
 » ինձ չորս ամիս ժամանակ), հանել՝ իմ
 » ծախքովս՝ կալէոնին մէջ եղած հրազէնքը
 » (artelleria), փայտերը և այլ ինչ որ կայ.
 » բայց այս պայմանով՝ որ հանածներս՝ իմն
 » ըլլան, և ես ծախեմ Նաւարանին՝ ինչ
 » պատշաճ գնով որ ուզեն: Ասկէ զատ
 » խնդրեմ, որ տրուի ինձ առանձնաշնոր-
 » հութիւն, որ մինչեւ 30 տարի ոչ ոք ինձմէ
 » զատ կարենայ այս իմ ըրած գործոցս ձեռք
 » զարնել, ոչ մեծ և ոչ փոքր մեքենայ շինել՝
 » առանց իմ հաւանութեանս, բոլոր տէրու-
 » թեանդ մէջ՝ ուր ալ որ ըլլայ. և եթէ մէկն
 » հակառակ գործէ՝ պարտական ըլլայ թէ
 » շինածը կորուսանելու և թէ տուժելու
 » 300 դուկատ, զոր երեքի բաժնելով՝ մէկ

» մասն առնու այս բանիս գործադիր պաշ-
» տօնարանն, մէկ մասը՝ Նաւարանն, եր-
» բորդն ալ ես աղերազողս, որ խոնարհարար
» Զեր Պայծառութեան կու նուիրեմ և կու
» յանձնեմ զիս » :

Նոյն օր (24 յունիս) շորա աւագ ատենա-
կակը՝ Դիքսին կողմանէ պատուիրեցին Նաւա-
րանի հոգցողաց, որ քննեն այս խնդիրը և
իմացընեն իրենց կարծիքը։ Երեք օր վերջը
(27 յուն.) հոգցողքն գրով ծանուցին Դիքսին,
որ հաւանելի է Հայոյն առաջարկութիւնն,
վասն զի արկղակերտը հանելով՝ յայտնի
ըրաւ իր հանճարեղ մարդ ըլլալը, (ha dimo-
strato di esser persona d' ingegno). Կու
վայլէ որ հրաման տրուի իրեն՝ գործը կա-
տարելու իր մեքենաներով. իսկ 30 տարուան
առանձնաշնորհութիւնը՝ կու թողունք Դիքսին
կամքին։ Երկրորդ օրը (28 յունիս) և դար-
ձեալ յուլիս 7ին՝ Ծերակուտին առջեւ կրկին
կարդացուեցան հոգցողաց գրուածքն, և քանի
մ' օր վերջ (17 յուլ.), Ծերակոյտն՝ (ուր 147
անձինք էին) 145 քուէիւք վճռեցին՝ որ կա-
տարուին Անտոնի խնդրածներն, ինքն իր ծա-
խուք և գործեօք հանէ հանելիքը, և պատշաճ
գնով ծախէ Նաւարանին։ Դարձեալ իր խըն-
դրոյն համեմատ՝ 30 տարի միայն ինքն շինէ
այնպիսի մեքենաներ, և առանց իր հաւանու-

թեան շինողն՝ պատժուի և տուժէ։ Այս վճիռը հետեւեալ օրը (18 յուլ.) երեք վաւերական թղթովք տուին Անտոնի։

Անտոնի խնդրած պայմանաժամն՝ այս վըճուին օրէն սկսած՝ կու վերջանար նոյեմբերի կիսուն։ բայց այն միջոցին այլեւայլ դէպք արգելք եղան իրեն, որ յայտնի էին ուրիշներու այլ։ ուստի նոյն ամսոյն 10ին նորէն աղերսեց Ծերակուտին՝ որ իրեն տարի մ' այլ ժամանակ շնորհեն, որ ձմեռն անցնի, և կարենայ նորոգել իր խնդրած և ընդունած նաւակը (Vargca), զոր իր պէտքին յարմարցուցեր էր։ Նոյն օր հաւանեցաւ Ծերակոյտն (122 քուէով, ընդդեմ 2 միայն մերժողի)։ Նոյն վճիռն զարձեալ տարի մի վերջը (6 հոկտ. 1562) կրկնեցաւ, նորէն տարի մ' այլ ժամանակ շնորհուեցաւ իրեն։ Պիւանական գրուածոց մէջ որ և է խնդրոց ամէն դիպուածքն չեն պատմուիր, որով չեմք կը ընար գիտնալ կամ գուշակել, թէ Բնչ պատճառաւ ուշացաւ Անտոնի գործողութիւնն։ Կ'երեւի թէ դժարութիւնն ոչ այնքան իրմէ էր՝ որ քան հակառակորդներէ կամ նախանձողներէ, որք թերեւա իր կենաց ալ կու սպառնային։ և զայս գուշակեմ Տասանց Ատենի (որ տէրութեան ամենէն ահաւոր ատեանն էր) տուած վճռէն, յ'13 մարտի, 1562, ըստ

ինդրոյ Անտոնի, որ կարենայ ի Վենետիկ
 թէ ինքն վրան զէնք կրել և թէ իր երկու
 մորդիկն՝ որոց անուանքը կ'ուզէին իմանալ:
 Նոյն վճռին մէջ կու վկայեն այլ՝ որ այն ատեն
 Անտոն կ'աշխատէր կալենը հանելու, (il qual
 attende eavar il Galeon): Եթէ ամբողջ
 հանեց կալէոնը և երր, որոշ չըսուիր, այլ
 անհաւան չերեւիր. որովհետեւ անկէ ետեւ
 ուրիշ շատ ընկղմած նաւեր ալ հանած է:
 Իսկ այն կալէոնը կամ մէջի եղածները հա-
 նելու համար՝ մեծ գործիաւոր նաւակ մի
 շիներ էր, կամ մեծ գործիք մի նաւածեւ, որ
 իր յատուկ Հայ անուան պէս՝ յատկապէս
 Կոչեցաւ, Վարդա կամ Պարտա, (գոր
 և իր ազգակից Խաչատուրի լեզուով կըր-
 նայինք Տօլոռ (⁽¹⁾ անուանել), 3,500 դուկատէն
 աւելի ծախքով: Թէ վերոյիշեալ Տասանց
 հրամանագրէն և թէ Յովսեփայ (Անտոնի
 որդւոյն) ըսածէն՝ յայտ է որ 1562-8 տարի-
 ներուն միջոց՝ հանած էր այն մեծ նաւէն շատ
 հրագէնք, խարիսխներ, փայտեր, առագաս-
 տակալներ և ուրիշ նիւթեր, որոյ վրայ դար-
 ձեալ ամենքն զարմացան:

Անտոնի գլխաւոր ճարտարութիւնն և գործն
 եղաւ ընկղմեալ նաւուց կամ անոնց մէջի

Նիւթոց հանումն ի ծովէ : Միանգամայն և Վենետիկոյ հռչակաւոր Նաւարանին (Arsenale) մէջ պաշտօնեայ մի ճանշուեցաւ, Ճարտարապետ (Ingeniere) կոչմամբ : Ինչուան 1580 թուականն կու յիշուին իր խնդիրքն այլեւայլ նաւահանութեանց, բայց աւելի շատն առանց թուականի յիշուած են . Հաւանօրէն կան եւս որ յիշուած չեն կամ մեզ անծանօթ . իսկ իր գործունէութիւնն և խնամքն իր հնարած և սիրելի Վարժային համար՝ մինչեւ ի 1588-9 տարին, որ է իբր երկու կամ երեք տարի միայն յառաջ քան զմահն : Այն Վարքայն ոչ միայն իր ճարտարութեան պարծանք էր, այլ և անհրաժեշտ գործիք արուեստին և ապրուստին : Վերոյիշեալ աղերսագրէն և վճիռներէն կ'երեւի, որ տէրութիւնն թէ և կու հաւնէր, զարմանար, կ'օգնէր Անտոնի, բայց թերեւս ոչ առատապէս և ոչ ըստ արժանեաց նորա . և Անտոն ստիպուելով իր ծախուք շինել այնպիսի մեծ միքենաւոր Վարքայ մի, և դարձեալ իր ծախուք ուրիշ գործիներ, և վարձել իրեն աշխատակիցներ, ոչ միայն ծախքն կու ծանրանար՝ այլ և կու ճնշէր զնա, այսինքն պարտուց տակ կու մնար (¹) : Շատ հեղ Նաւա-

1. Իր Վարքային համար ծախսած գումարն 3,500 դրակատ, ստակին նիւթական արժեքով 40,700 դրանգ

րանէն փոխ կ'առնուր այլ եւ այլ նիւթեր. բայց երբ ատենին չէր կրնար վճարել անոնց գինը կամ պարտքը, Նաւարանին գլխաւորք իր Վարքայն ի գրաւ կ'առնուին. մասնաւանդ թէ իրբեւ գերի բռնէին, և կերպով մի ճարտարին ձեռքը կապէին. որով հասարակաց կամ ընկղմելոց այլ վեաս կ'ըլլար: Այսպէս կ'երեւի թէ նոյն այն տարին, 1568, որ երեւելի նաւապետի կամ ծովապետի մի, ազնուական Հերոնիմոսի (Magnifico Girolamo Contarini) ընկղմած խալէին (galea) միջէն երեք հատ մեծ հրանօթներն հաներ էր, (Վենետիկոյ մասն համարուած երկայնաձեւ Երեստած ըսուած կղզւոյն դիմաց), որք 800 դուկատ կ'արժէին, և Նաւարանին ընծայեր էր ձրի. Վարքայն գրաւեցաւ ի նոյն Նաւարանէն, ուսկից առած էր ճոպաններ (հաստ չուաններ) այսպիսի գործոց համար, և պարտքն էր 882 դուկատ :

Ի գարնան յաջորդ տարւոյն՝ երբ աշխատութեան յաջող եղանակն եկաւ, Անտոն երկար աղերսագիր մի տուաւ Դքսին (22 ապրիլ, 1569) իր Վարքայն ազատելու, մի առ մի յիշելով թէ ըրած աշխատանքը, այն-

Կ'ընէ. բայց այն առենուան յարդով գուցէ կրկին՝ կամ գոնէ կէս մ'այլ աւելի կ'արժէր, այսինքն 20 կամ 15,000 Քր.:

քան նաւուց կտորները և հրանօթները հանելը, և իր գործաւորաց վարձքը և պարտքերնին ձրի վճարելը ձմեռ ատեն, երբ աշխատանք դադրած էին. մինչ անոնցմէ ումանք պարտքերնէն ազատելով՝ քովէն փախան. իսկ ինքն իր պարտուց փոխան՝ իր ծախուք նաւահանգըուտին բերանը մաքրեր էր՝ այնքան քարանց, խարըսխաց և նաւուց կտորներէն, որ 500 դարձիւ վրը խրուած մնացեր և նաւարկութեան արգելք էին. իսկ այն փոխառած կամ զնած ճոպանները՝ որովք իր գործը կու կատարէր, շատ հեղ ընկղմած նիւթերը վեր քաշելու ատեն, շարաճճիկ գործաւորք ի թշնամեաց դրդեալ՝ կու կտրէին ջըրին մէջ, և կրկին վնաս կ'ընէին, թէ աշխատանքն ալ կրկնել տալով և թէ ճոպանաց գինն ի զուր տուժել տալով։ Նաւահանգիստը մաքրելէն զատ, անոր մէջ նաւապետաց չի սխալելու համար դրուած նշաններն ալ (signali) հինցած և փուած ըլլալով, ինքն հաներ և նոր դրեր էր, ամէն մէկուն համար (որ 18 էին) քսանական դուկատ ծախս ընելով։ Կու յիշեցընէ նա և նոյն ատեններ վտանգուած խալէ մի, որ ջուր առնուլով ընկղմելու վրայ էր, և ուրիշներն աշխատելով չէին կըրնար յաջողիլ, իսկ ինքն իր ճարտարութեամբ ազատեց։ — Դուքսն՝

ըստ սովորութեան՝ պատուիրեց Նաւարանին
գլխաւորաց, որ Անտոնի աղերսին պատաս-
խան տան. ասոնք քանի մամիս վերջ (19
օգոստ. 1569) խոտովանեցան, որ իրաւ Ան-
տոն պարտական էր իրենց վերոյիշեալ գու-
մարը (882 դուկատ, 500ն իրենցմէ առած
նաւակի և գործեաց համար, 382 ալ իր
Վարքային համար). սակայն շատ այլ ար-
դիւնք ունէր, թէ ընկղմած բաները հանելուն
համար, և թէ իր քսակէն աշխատաւորաց
վարձքը վճարելուն համար, որով ինքն աղ-
քատացաւ. արդ « այսպիսի հանճարեղ և ար-
դիւնաւոր մարդ » (Person d' ingegno e di
valore) արժանի է չնորհաց, և յետ դարձը-
նելու իրեն իր Վարքայն։ Մերակոյտն վճռեց
(ի 12 նոյեմբ.) , որ Վարքայն և գործիները
դարձընեն տան առ Անտոն . և սա իր պարտքը
վճարէ՝ թէ կալէոնէն և թէ ուրիշ նաւերէ հա-
նած բաներով. բայց նախ իր ծախքը հանէ,
յետոյ այն հանած նիւթերուն երրորդ մասովը
վճարէ (1) :

1. Վեհա Մերակուտին. 12 նոյեմբ. 1569. Che a
supplicatione del fedel e benemerito nostro An-
tonio Suriano Armeno sia commesso alli Prove-
ditori et Patroni all' Arsenal, che debbano farli
restituire la sua Barca, che hanno fatto met-
tere nella casa; restituendoli appresso tutte le

Այս վճռով ստացաւ Անտոն իր գործիքն և գործունէութիւնը։ Նորէն հանած նաւերէն կու յիշուին՝ մէկ մի Տելլա Վեդդիա Անտոն կոչուած նաւապետինը (Antonio della Vecchia). մէկ Շիլանցի կամ Շիլանչա ըսուած նաւ մի. մէկ մ' այլ Մարչելլան մի (Marchiana, այսպէս կոչուէին Ագրիական ծովու մէջ բանող նաւք), որ մարմարիոն քարերով ծանրաբեռնեալ էր. մէկ մեծ նաւակ մ' այլ (burchio) կապարով լցուած և ընկղմած էր ի Կար բերդ (Castel-novo) կոչուած ծովեղերքին։ Ասոնց երբ և ինչ կերպով կամ խնդրով հանուելուն վրայ յատուկ տեղեկութիւն ծանօթ չէ, ինչպէս ուրիշ երկու նաւուց։ Ասոնց մէկն էր Կիպրացի նաւ մի, ի սկիզբն 1573 տարւոյ, որոյ մէկ մասին տէր էր Պետրոս Մինա անուամբ մէկն, և կու խօստանար իր պարտքը վճարելու երբ նաւն

robbe pertinenti alla ditta Barca, che siano di ragion del predetto Antonio; secondo che consigliano detti Proveditori et Patroni; dovendo detto Antonio satisfar il debito de D.ti ottocento ottanta doi, che l'ha in detta Casa, con un terzo della utilità, che l'caverà, così nel recuperar alcuna cosa del Galione, come altre robbe de navilij de particolari; detratte per prima le spese che l'farà per ditta recuperatione.

հանուի, իսկ թէ ոչ՝ խնդրէր պարտքէն ա-
զատ մնալ : Անտոն՝ ըստ սովորութեանն
խնդրեց ի Ծերակուտէն, որ Նաւարանն շը-
նորհէ իրեն հարկաւոր նիւթեր և ինքն հանէ
զնաւն, և յետ դարձընէ առած նիւթերը :
Հաւանեցաւ ատեանն և պատուիրեց Նաւա-
րանի գլխաւորաց՝ որ հաշուեն Անտոնի հար-
կաւոր եղած հին և նոր նիւթոց գինը . ա-
նոնք հաշուեցին մէկիկ մէկիկ նշանակելով և
գումարեցին 1280 դուկատ . որոց 400 զուտ
ստակ էր . զոր և վճռեց Ծերակոյտն (17
յունիս) տալ Հայ կոչուած հաւատաբիլմ Սու-
րեան Անտոնի⁽¹⁾ : Բայց խնդիր մ' եղաւ, թէ
արդեօք պէտք է տալ զասոնք՝ առանց զրաւ
մի առնելու ուզողէն . յետ երկար վիճման՝
որոշուեցաւ վճիռը հաստատ պահել, որով
հետեւ օրէնքն որոշ բան մի չէր սահմանած :
Կ' երեւի թէ Նաւարանի պաշտօնեայք կու
դժուարէին այս գումարը տալու . անոր հա-
մար Ծերակոյտն փերրուարի 10ին հրամայեց
որ նիւթերը տան, իսկ 400 դուկատն տրուի
տէրութեան գանձէն, փոխարէն Անտոնի ին-
չուան հիմայ ըրած և ասկէ ետեւ ընելու
ծախուց և աշխատութեանց՝ նաւը հանելու
համար : Բաւական ժամանակ պէտք եղած

1. Al fedel Suriano Antonio detto Armeno.

է այս գործս կատարելու . և դեռ չէր վեր-
ջացած , երբ նոյն տարուան հոկտեմբեր ամ-
սոյն (3ին) վճռեց ատեանն՝ որ ընդօւնուի
Պետրոս Ամենայի պայմանական խնդիրը :

Երկրորդ նաւն Կիրանդա (Ghiranda) կամ
Կիրանդա կոչուէր , և 1579ին մայիս ամսոյ
կամ յունիսի սկիզբը՝ խրուած էր նաւա-
հանգստին մէջ . թէպէտ և ապահովագրուած
էր , բայց ապահովագրողք չուզեցին հանե-
լը յանձն առնուլ : Այս գործս ալ կու վայլէր
արթուն և պատրաստ Անտոնի , որ ի 5 յու-
նիսի աղերս և ցանկ մ'այլ տուաւ իրեն
հարկաւոր նիւթոց և 400 ալ դուկատի , զայն
հանելու համար 15 օրուան մէջ , եթէ ալէ-
կոծութիւն շըլլայ : Մերակոյտն նաւահանգըս-
տին արգելքը վերցընելու համար՝ վճռեց որ
շտատով տրուի Անտոնի ուզածը . և երբ հանէ
նաւը , միջի եղածն ապրանքներով գնահատուի ,
և գինն յանձնուի տէրութեան , որպէս զի ա-
պահովագրողք և ընչից տեալք մաս մ'առնուն ,
մաս մ'այլ գործողութեան ծախուց համար
ըլլայ , բաժին մ'այլ Անտոնի տրուի . իսկ
նաւապետն և գործակիցքն քննուին , և ով
որ յանցաւոր է պատժուի : Անտոն այս նաւու
միծամեծ կտորներէն զատ՝ միջէն հինգ խա-
րիսխ և շատ նիւթեր հանեց :

Դեռ շատ տարիներ այլ աշխատեր է Հայն

թէ նաւահանգիստը մաքրելու՝ յօդուտ աէ-
րութեան, և թէ առանձնականաց նաւերը և
ապրանքը հանելու ի ծավէ. բայց թուականով
և մի առ մի չեն յիշուիր գործերն. այլ այս
յայտնի է՝ որ աշխատանքն և ջանքն իր կա-
րողութենէ և հասարակաց երախտազիտու-
թենէն վեր էր. անոր համար յետ այնքան
աշխատանաց և յաջողութեանց՝ կու ստիպուէր
շահածէն աւելի ծախսել և պարտքի տակ
մալ: Այսպէս Կիրանտա նաւուն հանելէն
գրեթէ տասն տարի վերջը, նոր աղերսա-
գրով մի (22 յունիսի, 1588) կ'իմացընէ, որ
իր Վարքայն ոչ միայն դարձեալ գրաւուած
էր ի Նաւարանին, այլ և պաշտօնեալքն չա-
րաշար գործածեր էին, ինչուան « ծովակին
» յատակը փորելու և տիղմ հանելու հա-
» մար, որով գրեթէ փճացուցեր էին զայն »:
Այս բանս զիս կու տանջէ, կ'ըսէր. վասն
զի ես անով տէրութեան նաւահանգիստը
մաքուր կամ ազատ կու պահէի (Io teneva
netto il Porto di V. Serenità, ինչպէս որ
շատ վկայագրերով կրնամ ցուցընել: Արդ:
կու խնդրէ՝ որ Վարքայն տեսող բանիրուն
մարդիկ՝ գնահատեն զայն, նոյնպէս այն նիւ-
թերն որ ինքն հաներ և Նաւարանին մէջ
թողեր էր, վրանին և գիրը նշանելով, իր
Armeno (Հայ) կոչման առաջին տառը. և

անոնց գնոյն երրորդ մասով վճարուի իր պարտքն, և մնացածովն խեղճն կարենայ քիչ մի « հանգիստ շունչ առնուլ (¹), յետ այն» քան աշխատանաց, հոգոց և վշտաց, և « նորէն տէրութեան օֆտակարակոյն բան մի ճարել » :

Ծերակոյտն ինչպէս որ կու վայլէր՝ պատուիրեց Նաւարանի հոգցողաց և գլխաւորաց, որ արդարապէս քննեն Անտոնի աղերսը, և իրենց ստորագրութեամբ և երդմամբ ծանօթութիւն տան։ Այսպէս ըրին, և (յուլիսի 9ին) զրով ծանուցին որ Նաւարանի գրոց մէջ նշանակուած են Անտոնի պարտքն, այլ ամեն պահանջքն որոշ չեն իմացուիր. վասն զի վերջերս Նաւարանն իրեն տուեր էր երկու արծիլ (որ է խալէի միջուկը, առանց կազմածի,) և իրեն հարկաւոր եղած նիւթեր. Անտոն զասոնք տարաւ ի նաւահանգիստ, հօն հիւանդացաւ և դարձաւ իր տունը, հոգցողք ալ արսիլները ի նաւարան դարձուցին, որոց մէջ զատ այլ նիւթերէ՝ կային Անտոնի յատուկ ինչք այլ.

1. Affinchè io infelice dopo tante fatiche, affanni et calamità possi respirar, et haver commodità di far alcuna provisione utilissima a V. Serenità.

բայց ասոնցմէ իրեն տրուածն և պահուածն որոշ նշանակուած չեն. այսպէս ալ Լիբոյն (ծովեղերքի երկայն կղզիաձեւ աւազատեղի), բերուած հրետներ և այլ նիւթեր, որոց մաս մի՛ նա իր տունը տարեր էր. կան նիւթեր այլ որոց վրայ Ա տառն նշանակուած է, բայց ուրիշ վկայութիւն չկայ թէ իր հանածներն են. որով՝ այս նիւթերէն ոմանց ստոյգ իրեն ըլլալն յայտնի են, ոմանք այլ քիչ մի կարծեաք: Վարքայն՝ իրաւ որ այլեւայլ բանի գործածուելով՝ փճացած է, և իրաւոնք ունի Անտոն որ վճարուի իրեն՝ երբ ծախու հանուի: Միով բանիւ, խնդիրս բոլորովին պարզ չէ. որովհետեւ այս մարդս (Անտոն) « որ շատ բան ըրած է յօգուտ հասարակաց » , լեզուի և առեւտրի անվարժութեամբ և հիւանդութեան պատճառաւ՝ չէ կրցած հարկաւոր եղած խնամքով գործել. որով երկու կողմնայլ իրաւացի կ'երեւի, թէ իր պարտքը պահանջելն և թէ իրեն շնորհք ընելն: Իրրեւ կարեւոր խնդիր՝ Դուքսն յանձնեց զայս քըննելու Գիտունք կոչուած բարձրագոյն ատենից, և յետ երկու ամսոյ (17 սեպտեմբ.) վճռեց որ Նաւարանի վեց գլխաւորքն արդարութեամբ և 4 քուէով (ի վեցէն) Անտոնի պահանջքը վճարին. բայց և ծախուած կամ գնահատուած իրաց հաշիւը ցուցընեն

Ծերակուտին, որ վերջնական վճիռը տայս Այս վերջին վճիռը և գործոյն ինչպէս աւարտիլը՝ շեմ գտած ի դիւանս . այլ թէ հոգցողաց գրածէն և թէ Ծերակուտին դիտմունքէն՝ անտարակոյս է որ շափաւորապէս գոհացուցած են զԱնտոն : — Ասկէ ետեւ, որ իր կենաց վերջի տարիներն է , նաւահանութեան խնդիր կամ ժանօթութիւն չկայ :

Ասկայն մեր Հայն ոչ միայն ճարտար էր նաւահանութեան կամ ծովուն յափշտակածը իր խոր ծոցէն դուրս հանելու, և անոր յատակը փորելու, (որոյ համար գործիքներ ալ շիներ էր), այլ ուրիշ և աննման բաներու մէջ այլ ցուցած է իր հարուստ հանճարը . թէ և կենաց և գործոց մեծագոյն մասն՝ նաւու և ծովու վրայ և ծովու խորը եղած է . այլ և ի վերայ օտար ծովու, և շատ մեծ ու նշանաւոր և ահաւոր տեղւոյ և գործոյ մէջ հեռու ի Վենետիկոյ : Գործ՝ որ այն դարուն (ԺԶ) այլ և ընդհանուր պատմութեան մէջ ամենէն երեւելի դիպուածոց մէկն է . և որոյ վրայ երկարել մեզի չի վայլեր . այլ պատմագէտն և պատմասէրն կըրնայ յիշել և երեւակայել յամին 1571 հոկտեմբերի 7ին հանդիպածն ի ծովածոցին կորընթոսի . ուր եթէ անծանօթ բան մի կայ՝ այս է , որ այն օր (որ իրաց մեծութեանն համար Վենետիկոյ դի-

անաց և գրուածոց մէջ, նա և ուրիշ ազգաց մէջ, յատկապէս այն Որն կամ մէծ օրն կ'ըսուի, առանց ուրիշ թուականի), այն օր և այն ահեղ իրարանցման և հրաձգութեանց մէջ գտուեր է մեր Անտոն Հայն այլ . թէ ոչ իբրեւ նաւապետ կամ զօրապետ, այլ իբրեւ զինուց յարմարցընող և նաւուց հոգացող, ինչ հոգ և պէտք որ կըրնայ ըլլալ այն առթին . Նախ Վենետաց մեծամեծ խալէից կողերուն վրայ՝ այնպէս պատշաճ և ճարտարութեամբ կու շարէ հրետները՝ որ ամէնքն կու զարմանան . և երբ նաւամարտին սաստիկ ընդհարման ատեն՝ խալէից մէկն մեծ պատառուածք մի կ'առնու և ընկըզմելու վտանգի մէջ կ'ընկնի . Անտոն կու կարկատէ, կ'ապրեցընէ նաւն այլ՝ նաւաստիքն այլ : Եթէ միայն մեր Հայն էր՝ այն կենաց և մահու ճգնաժամին՝ այսպիսի գործեր ընող, իբրեւ Վենետաց յաջողութեան մասնակից՝ կրնային իրմով պարծիլ ուրիշ Հայք այլ . իսկ եթէ ուրիշներ այլ կային (հաւանօրէն) Անտոնի գործակից, անով իր արդիւնքն և ճարտարութիւնն չի նուազիր . մանաւանդ որ յայտնի չէ, գոնէ մեզի, ուրիշներու ըրածն . իսկ Անտոնին այս ըրածն՝ իբր 40 տարի վերջը՝ իր որդին համարձակ գրով հրատարակած է Պիսին և Շերակուտին առջեւ, ուր անստոյգ և անծանօթ բան

մի չէր կը բնար հոշակուիլ։ Եթէ Անտոն Հայ շըլլար՝ գուցէ վենետիք իրենց հայրենակցի մի այսպիսի գործն այլ կու հոշակէին։ իսկ եթէ շեն հոշակած վենետիկեցւոյ մ' այնպիսի գործ, իրենց լռութիւնն իսկ վկայութիւն մի է հայրասէր որդույն վկայութեան, որ կու համարձակի ըսելու Հասարակապետութեան առջեւ, թէ Անտոնի այն ինչուան այն ատեն չորեսնուած գործն՝ բերաւ զարմանալի օֆուաբը, որ յայտնի եղաւ այն հրաշալի դիմամարտութեան մէջ (¹)։

1. Nella Giornata felicissima mostrò l'accodar l' arteglierie alle bande delle Galere grosse, non più vedute, che apportò il *mirabil beneficio* ch' è stato palese in quel miracoloso conflitto. Et nel medesimo tempo della Giornata espeditamente stagnò una falla d' una delle *grosse galere*, che senz' altro s' affondava.

Արեւմտեայց և մանաւանդ խառացւոց մէջ այնքան պանթալի է այն օրն, որ և յետ երկք դարուց՝ ինչուան այս եռքի տարիներուս, այլեւայլ քաղաքաց հայրենասէրք իրենց դիւանաց մէջ որոնելով՝ կու հրատարակեն այն աւուր նաւամարտին մէջ գտուող իրենց հասարակ քաղաքակցաց անունները։ Բայց անոնցմէ ո՞վ կարծէր՝ թէ ծովով և ցամաքով հեռաւոր և բազում իրաք անժանօթ Հայ ազգն այլ՝ ուներ իր այն Օրուան յիշելիք Հայը։

Այս գործոյս կարեւորութիւնը քիչ մ'աւելի բացարեկու համար, պէտք է ճանչցնել յիշեալ նաւուց

Բայց Անտոնի ճարտարութիւնն միայն հրետները յարմարապէս շարելու մէջ չէր, այլ վստահ էր նա և յարմարագոյն կամ հզօ-

որպիսութիւնն, և հրանօթոց շարուածքի վկայութիւն մ'այլ։ Քրիստոնէից տորմիդն 210 նաև էր, գրեթէ ամենքն այլ խոլի, galta. որբ երեք թեւ կամ եղջիւր (corno) բաժնուեցան կոռուին առեն. աջ ու ձախ 50-կան խալէ, մէջն 60, վերջապահ խոռոք 26։ Ասոնցետ զատ կային միայն վեց Գրե խոլի, Galere grosse կոչուածք, զորս մեր նախնեաց բառիւ յարմարապէս կոչնէր Բերդանս։ Նոյն նաւամարտին իսկ տարին ազադող նշանաւոր ծովագէտ հեղինակ մի (Թուի թէ և կանանես), վկայէ, որ այս վեց Բերդանսաւերին երկու երկու իւրաքանչիւր նաւախընթից առաջապահ կարգեցան, և ըսլոր տորմիին և թեւերուն պատապարան և ոյժ առնեց էին։ A ciascuna delle schiere furono mandate innanzi due Galere grosse; in tal maniera disposte, che queste sei sole abbracciavano in difesa tutta l' armata christiana. Կ'աւելցընէ անմիջապէս հրանօթոց շարուածքին յաշողութիւն այլ, Perciochè queste erano in *tal maniera fornite d' artiglierie* di bronzo, et di numero di combattenti, che facilmente erano riputate un saldo bastione a tutta l' armata christiana. Միով բանիւ նաւամարտին զինական կամ գործիական ոյժն և յաշողութիւնն այդ վեց բերգանաւոցն էին, որոց մին ազատեցաւ կամ ապրեցաւ և ապրեցոյց՝ մեր աշալուրջ և արագահաս Անտոնի ճարտարութեամբ։ — Թող հիմայ հանճարապատումք գիեցն և իր գործն այլ դասաւորեն՝ ուր արժան և իրաւացի է։

րագոյն հրետներ շինել։ և ճիշդ տարի մի
յառաջ քան զմեծ 0ըն, երբ հաւանօրէն ա-
նոր համար պատրաստութիւնք կ'ըլլային,
ինքն առաջարկեց, վենետաց և թերեւա ու-
ղիչներուն ունեցած հրետներէն՝ կիսով չափ
աւելի հեռաձիգ հրետներ շինել։ Տասանց
գաղտնապահ բարձրագոյն ատեանն շատ յօ-
ժարութեամբ և իրր յարմար առիթ՝ ընդու-
նեցաւ առաջարկը, և պատուիրեց (6 սեպտ.
1570) Նաւարանի հոգցողաց և գլխաւորաց,
որ տան Անտոնի մետաղ և ուրիշ պէտք ե-
ղածը, որպէս զի շուտով փորձի համար հատ
մի շինէ, և ըստ այնմ վճիռ տայ ատեանն (¹):
Բայց ամիս մի վերջը (13 հոկտեմբ.) նոր

1 . Վճիռ Տասանց Ատենին ի 6 սեպտ. 1570 . Havendo offerto il fedel Antonio Armeno nel Collegio nostro di far una sorte de Artegliaria, che tirerà la metà più lontano di quella che si fà et usa al presente; non si deve mancare di vederne l'esperienza quanto prima. Pero, L'anderà Parte che sia commesso ai Proveditori sopra l'Artegliaria et Patroni all'Arsenal, che dar debbano il metallo, et il modo dell'altre cose nell'Arsenal nostro ad esso Antonio Armeno; acciochè possa quanto prima far gitтар esso pezzo: del qual subito se ne habbi a veder la riuscita; acciochè poi si possa deliberare a questo Consiglio. — *Consiglio de X, Comune.* Lib. XXIX c. 170. t.^o

հրամանով պատուիրեց՝ որ ի կախ թաղուն
առջի հրամանը, ծանօթ պատճառաց համար,
որ մեզ անծանօթ են, մինչեւ առ նոր հրա-
ման. ըսել է՝ որ չէին արգելած Անտոնի
դործը, այլ առ ժամն յետ թողեր էին (¹).
Իսկ յետոյ բնչ եղաւ, յայտնի չէ. հաւանօրէն
տէրութիւնն մեծ հոգով և վախով պատ-
րաստուելով ի նաւազինութիւն իր գաշնա-
կից պետութեանց հետ, նոր փորձի ժամա-
նակ չունէր. և երբ յաջողութեամբ վճարե-
ցաւ Օրուան գործն, այլ եւս փոյթ չըրաւ իր
հրետները մեծցընելու, և ասկէ 300 տարի
առաջ կանխելով հայ Քրուպ մի ընծայելու,
արիսեան և պիսիդոնեան անհաշտ դաշ-
տաց վրայ :

Յիշենք այս տեղ անցողաբար, որ այս
հրետաշինութեան արուեստին մէջ Անտոնէն
40 տարի յառաջ (1510ին), Հայ երիտա-
սարդ մի՛ իր ազգին բարեկամ, և մեր ար-
դէն յիշեալ (էջ 205) Շահ Խամայէլի պատե-
րազմաց ժամանակ ընդդէմ խոյանշան թուրք-
մանաց, Հըսնկէյֆի պաշարման և ռմբակո-
ծութեան ատեն, միաձոյլ մեծ հրետ մի շի-
ներ էր, բերանն հինգ թիզ լայնութեամբ.
ինչպէս վկայէ նոյն դարուն վենետիկեցի
ճամբորդ պատմիչ մի :

1. Sia sospesa ... sin ad altro ordine.

Անտոն՝ որ այսպէս երբեմ (ծովուն) ջրոց
մէջկու ցուցընէր իր հնարագիտութիւնը, եր-
բեմն հրոյ գործեաց և գործոց մէջ, երբեմ
այլ այս երկու տարերաց իրարու հետ կռաւոյ
մէջ մտաւ, և մէկով մէկալին յաղթեց։ Միայն
յարեւելս չէ որ հրդեհք պատահին, այլ շատ
հեղ և յարեւմուտս։ Անտոնի ժամանակ ի
վենետիկ քանի մանգամ պատահեցաւ.
մէկ մի ի Նաւարանին, 1569ին (սեպտ. 13),
որոյ ատեն ինքն եղաւ առաջիններէն մէկն՝
վտանգաւ անձին՝ կրակը մարելու գործոց
ձեռք զարնելու. նոյնպէս ըրաւ քանի մի
տարի վերջը՝ Դքսին պալատան մէջ հանդի-
պած կրակին, հաւանօրէն ի 11 մարտի,
1574ի, կամ գուցէ անկէ առաջ (1572. փերր.
24), և անկէ վերջ (1577), և ուրիշ անգամ-
ներ այլ։ Ասոնք իրբեւ նշանաւոր դէպք կամ
հրդեհք նշանակուած են ի վենետիկեան տա-
րէգիրս։

Ջրոյ և հրոյ հասուցած վնասներէն աւելի
մեծ և ահաւոր վտանգ և հարուած մի կայ
մարդկան. որ, ինչպէս աւելի ուղղակի կըբ-
նանք ըսել թագաւոր մարդարէին (Դաւթի)
հետ, թէ Աստուծմէ կու գայ, այսպէս ճարն
ալ յԱստուծմէ է. բայց մարդկան հնարա-
գիտութիւնն այլ կ'օգնէ, և շատ կամ քիչ
կ'ազատէ. այն հարուածն է Սրածութիւնն,

այսինքն ժանտախտն . որ քանի մ' անգամ՝ ինչպէս Եւրոպայի ուրիշ կողմերում՝ ի վենետիկ այլ հանդիպած է , և մինչեւ քաղաքին բնակչաց երրորդ մասը ջարդած է . (հիմայ այս քաղաք 140,000ի չափ բնակիչ ունի , Հասարակապետութեան ժամանակ՝ 200,000 այլ եղած է). Անտոնի ատեն այլ ահաւոր սրածութիւն մ' եղաւ , սկսեալ ի 21 յուլիսի 1575 տարւոյ , և իբրեւ հրաշքով դադարեալ համարուի ի 21 յուլիս 1577ին . այն օր ուխտիք և թափօրով բոլոր քաղաքն և պետութիւնն առ Աստուած դիմեց , խոստանալով , և յետոյ կանգնելով Ս . Ազատիշ (Redentore) կոչուած մեծ և աննման եկեղեցին , գերահռչակ Պալլադիոնի ճարտարապետութեամբ , որ և յանձնուեցաւ և մինչեւ հիմայ կայ ի խնամս Վեղարաւոր (Գաբուշին) միանձանց , որք այն հոյակապ տաճարին մօտ գձուձ վանաց մէջ բնակին : Այս ահաւոր մարդածախ ժանտախտի ատեն ցուցուց Անտոն՝ թերեւս իր ամենէն օգտակար ճարտարութիւնը . ոչ մեծամեծ մեքենաներով ծովուալեաց և անդնդոց դէմ կոռւելով , այլ փոքրիկ և անծանօթ նիւթով մի ընդդէմ սրածութեան . հնարեց դեղ մի , որոյ գաղտնիքն իրեն պահեց , այլ անով « շատ վիրաւորեալներ բժշկեց և շատ ազնուական ընտանիք ապրե-

ցուց » . (Liberò tanti feriti, et risanò tante famiglie di Nobili). Տէրութիւնն յանձնեց իրեն յատկապէս քաղքին մէկ թաղին (d' Osso duro, կարծր ոսկը) հիւանդները հոգալու, որոնց համար՝ Անտոն իր դեղի հետ ուրիշ դեղոց ծախքն այլ վճարեց, և աղքատաց կարօտութիւնը լրցուց իր ստակով ձրիապէս, աւելի քան զճարտար՝ ըլլալով Բարերար :

Տէրութիւնն թէ և շատ անգամ համարմունք ցուցած էր Անտոնի և հաւանած անոր խնդրոց, բայց՝ ինչպէս առաջ ալ յիշեցինք, ոչ առատապէս վարձատրած, կամ ինչպէս պաշտօնեալք ցուցին (1588), Անտոն որքան որ սրամտութիւն ունէր հասարակաց օգտի գործոց համար, իրեն ապրուստին ապագայն չէր ապահովցընէր, և յուսով կամ բարեմտութեամբ՝ նոյն հասարակաց համար իր քովէն շատ ծախքեր ընելով (¹), և փոխարէն չգտնելով՝ ի նեղ ընկաւ ի տնտեսութեանն, մանաւանդ վերջերը հիւանդութեանց այլ պատճառաւ։ Իր կենաց վերջի յիշատակն ի դիւանս՝ նօտարական գրուած մ'է (1591,

1. Fece infinite spese del suo particolare, senza havere alcuna reintegrazione. Այսպէս գրեր իր որդին առ Դուքսն, աղերսելով։

ապրիլի 5ին)։ ուսկից կ' իմանամք որ այն ա-
տեն կու բնակէր քաղքին Ա. Մտրախնոս
կոչուած թաղի մէջ, (որ Նաւարանէն հեռու
չէ), Խռտոր կոչուած կամըրջին քով (Pon-
te Storto), ազնուականի մի (Բեռնարդ Տրե-
վիզան, Trevisan) տան մաս մի վարձած,
60 դուկատի. ուսկից 36 դուկատ պարտք
ունէր տանտիրով, որ՝ անոր ուրիշ տեղ գրաւ
դրած 20 դուկատը՝ իրեն գրաւ առաւ. իսկ
յիշեալ թուականին (5 ապրիլ, Ֆիկոլին ա-
նուն) նօտարի առջեւ պարտատէր և պար-
տական՝ իրաւախոհ եղան, որ Անտոն ին-
չուան ամսոյն 21 իր պարտքը վճարէ, Բեռ-
նարդ այլ գրաւը յետ դարձընէ, և թողու
որ իր վարձուորը դարձեալ բնակի իր տան
մէջ, մինչեւ տարւոյն վերջը՝ 34 դուկատ
վճարելով։

Բայց տարւոյն վերջին շհասաւ մեր Հայ։
այլ այդ դաշնադրութենէ քանի մ' ամիս
ետքը, ի 22 օգոստոսի, վախճանեցաւ նոյն
տան մէջ, տասն օր թանշախտով հիւան-
դացած, 58 տարուան, ինչպէս կ' իմացընէ
մեռելագիրքն (¹). Թողլով այրի կնկան հետ՝
վեց զաւակ։ ուսկից կ' իմացուի որ աղքա-

1. Messer Antonio Armeno d' anni 58, amato da Fluxo, già giorni 10. Sta zò del Ponte Storto, nelle Case di Cha Trevisan. Licentiatto.

տապէս թաղուած է նոյն թաղի եկեղեցւոյն մէջ կամ քով։ Եթէ Անտոն իր ժամանակակից կամ աւելի վերջ եկող ազգային վաճառականաց շահասիրութիւնն ունենար, անտարակոյս շատ հարուստ կըրնար ըլլալ, այնքան ճարտար և մեծամեծ գործերովը. սակայն ինքն աւելի ուրիշի օգուտ քան առանձին շահը մտածելով քիչով շատացեր է, 40 տարի գրեթէ անդադար աշխատելով, և միշտ գովելի, արդար և ճարպիկ վկայուեր է. վկայութիւն՝ որ շատ աւելի փառաւոր է՝ քան մեր վաճառականաց ի Վենետիկ մեծապէս շահածն և կորուսածն։ Ինքն իսկ Անտոն այսպէս մտածէր ըստ վկայութեան իր որդւոյն՝ վերջին աղերսագրին մէջ. թէ, փառաւոր մահ կու համարէր իր աշխատութեանն ժառանգ և երախտաւոր թողուլ իր դաւակները. (Si riputò di morir glorioso con lasciarme con cinque altri miei fratelli, heredi et benemeriti delle sue fatiche. Միայն թէ կու վայլէր որ այսպիսի Հայ մի, որուն արդիւնքը կըրնան. դատել ընթերցողք, ինչպէս իր կենդանութեան ատեն, անկէ վերջ այլ ծանօթ և զարմանալի ըլլար այն քաղաքացեաց, որոց՝ նախ օտարական՝ յետոյ քաղաքակից ըլլալով՝ այնչափ երախտաւոր և բարերար եղաւ։ Բայց եթէ Վենետիկ՝ միայն իրենց մո-

ռացեալ Դիւանաց մէջ կու պահեն Անտոնի
յիշատակը, ասոր ազգայինք 300 տարի վեր-
ջը՝ իրեւ յարութիւն տալով և եռադարեան
յոթելեան համարելով իր մահուան թուա-
կանին (1591-1891), վայել է որ աւանդեն
զայն իրենց հայրենեաց, իրեւ յանկարծա-
գիւտ և անմոռանալի յիշատակ մի եւս, ի միջի
իրենց ծանօթ և անծանօթ յիշատակաց :

Է.

ՀԱՅ ԱՆՑՈՒԻ ՈՐԴԻՒԹՅՈՒՆ ԵՒ ԹՈՌՈՒ

Անտոնի մտաւորական կամ բարոյական յիշատակներէն վերջը՝ արժան է յիշել և բնական կամ կենդանական թողած յիշատակն, որ է Յովսէտ որդին, իր հօրն մականուամբ կոչուած, և հաւանօրէն անդրանիկն։ Սա եւս հօրը մահուանէն վերջը 40 տարի յիշուի. և նոյն արուեստանոցին մէջ, այսինքն Նյաւարանին, գործաւոր եղած է, իբրեւ հիւսն (marangon), և յետոյ գլխաւոր կամ գործապետ հիւսանց (Capo-Opera de' marangoni). և եթէ հօրը բոլոր ճարտարութիւնը չէ ունեցեր, սակայն բաւական այլ ունեցեր է, հանդերձ անոր գովելի բարքով և պատուով. ինչպէս յայտնուի նոյն Նյաւարանին և այլոց պաշտօնէից վկայութեամբ և Դիքսին տուած շնորհքներով։ Իսկ մեզի համար աւելի գովելի և երախտաւոր է՝ իր աղերսագրաց մէջ հօրն ըրած արդիւնաւոր գործերը համարձակ յիշեցընել

տալովն, նախ Վենետիկոյ տէրութեան գլուխ-
ներուն, և ապա մեզի: Իր տարիքը յիշե-
ցինք ի սկզբան. հօրը վախճանած ատեն
իբրեւ 15 տարուան պատանի մ' էր. և հա-
ւանօրէն անոր ձեռաց տակ մտած է ի Նա-
ւարան և սկսած վարժիլ հիւմութեան. թէ
տարիքի անկատարութեան, թէ հօրը կեր-
պով մի տարաժամ մեռնելուն (քիչ օրուան
հիւանդութեամբ) չէ կըրցած ժառանգել ա-
նոր հնարագիտութիւնը և գաղանիքները:
Դիւանաց մէջ առաջին անգամ 1607ին կռւ
գտնեմ Յովսեփայ յիշատակը, իր 30ամեայ
հասակին, ուսկից կ' իմացուի, որ Տիմոյ
կանցոյ անուամբ կորկիւրացւոյ մի (Գորֆու)
աղջիկը՝ Գիտք կամ Գիտքեդրու (Պայծառ,
Պայծառիկ) կին առեր է, գուցէ ազգաւ յոյն
կամ վենետայոյն. և բաւական տարի առաջ
կարգուած պիտի ըլլան, որովհետեւ 1609ին
շորս զաւակ ունէին: Հարսն իբրեւ օժիտ տը-
ւած է Յովսեփայ 50 դուկատ արժէիկ տան
կահ կարասիք. անկէ զատ իր հայրենական
և մայրենական ժառանգութեամբ երկիր և
ստացուածք ի կղզին (Գորֆու), և բոլորն այլ
յանձնէր է իր փեսային, որ ինչպէս ուզէ՝
անտեսէ կամ ծախէ, և բոլորն իր օժիտն
համարուի. բայց ըստ օրինաց Վենետիկոյ՝
պարտական ըլլայ Յովսեփ՝ ի հարկին՝ դար-

ձընել անոնց գինը առ կինն : Այս բանս նօտարի առջեւ երկուքն ալ հաստատեր են (13 փերր . 1607), և վկայ եղած են երկու կորկիւրացիք . Տարի մի վերջը (4 յունիսի , 1608) Յովսէփ նորէն նօտարին առջեւ վկայէ որ իր կնոջմէ առած է 150 դուկատ արժէից ինչք և զարդք՝ և անոր Գործուի ստացուածքներէն եկամուտ . և կու խոստանայ այդ երկու գումարին (200 դուկ .) փոխարէն դնել իր յատուկ ստացուածքը , և հատուցանել՝ Եթէ պէտք ըլլայ :

Եթէ Յովսէփ հօրը աղքատութեան ժամանակ որր մնաց , կ' երեւի թէ բաւական ունեւոր կենակից մի գտաւ . սակայն իր ընտանեաց համար ոչ անկէց առած օժիտն և ոչ իր հիւսնական աշխատութեան վարձքը բաւական համարէր չափաւոր բարեկեցութեան . ուստի , այս իր վերջին խոստմանէն տարի մի ետքը (1609 , օգոստ . 19) աղերս տուաւ առ Դուքսն , մի առ մի յիշեցընելով իր հօրը արդիւնքը և ճարտարութիւնը , 40 տարի տէրութեամն ծառայութեան մէջ . և խնդրելով որ թոշակն՝ որ էր օրական 42 փող (soldi) աւելցուի , և տրուի 3 լիրա : Ըստ պատուիրանի Ծերակուտին՝ հոգցողք և գլխաւորք Նաւարանի՝ քննելով վկայեցին (ի 18 յանուարի , 1610) որ Յովսէփ իր ա-

բուեստին մէջ շատ յաջող է (molto sufficiente nella sua professione), և տէրութեան բազմերախտ անձի մի զաւակ ըլլալով՝ արժանի է շնորհաց։ Զեմ գիտեր ինչ պատճառի համար այս խնդիրս և վկայութիւնն ութ անգամ կրկնուած է երեք տարուան միջոց, բայց վերջի անգամ (12 դեկտ. 1613) Ծերակոյտն Յովսեփայ 42 փող օրավարձի վրայ աւելցընելով 8 փող այլ, այնպիսի փառաւոր վկայութիւն կու տայ իր գերագոյն վճռով՝ անոր հօր արժանաւորութեան. որ անգին կը ընայ ըսուիլ. « Հայ կո» չուած Սուրեան Անտոնի՝ մեր տէրութեան » երկար և պտղաբեր ծառայութեան համար՝ » ի տան Նաւարանի, և իբրեւ Ճարտարա» պետ, բաց ուրիշ իրեն լաւ գործերէն՝ » 1563ին հնարած ըլլալով ընկղմած կալէոնը » հանելու համար շինած արկղաձեւերը, որով » նաւահանիստին անբառ օգուտ եղաւ, և այն » ալ իր յատուկ ծախքով, և վերջի Նաւա» մարտին մէջ հրետները մեծամեծ խալէից » կողերուն յարմարցընելով, ի շաբանս ամէնե» ցուն, և ամէն հասարակաց օգտի գործոց » մէջ միշտ եղական պատրաստականութիւն » ցուցընէր... և իր որդոյ Յովսեփայ փու» թաջան և հաւատարիմ ծառայութեան հա» մար՝ իբրեւ հիւմ ի Նաւարանի, իր աշ-

» Խատութեան օրերու թոշակն ըլլայ 50
» փող » , և այլն (¹) :

Յովսեֆայ կարօտութիւնն բաւական չե-
ղաւ այս յաւելուած ի թոշակն . երկու տարի
վերջը (18 մայիս, 1615) նոր աղերսագրով
մի խնդրեց որ իրեն ամսական 5 դուկատ
(աւելի) տրուի բոլոր կենաց մէջ, ի շնորհս
երախտեաց հօրը , նա և իր յատուկ աշխա-
տութեանց . որոց մէջ կու յիշէ , որ հիմայ
կարող էր նաւեր և խալէներ շինել . այս
բանիս վկայեն Նաւարանի գլխաւորքն այլ .

1. Per la *lunga et fruttuosa* servitù prestato
alla Sig. V. da Antonio Suriano detto *Armeno*,
nella Casa d' Arsenale, et Ingegnere ; havendo
fra le altre buone operationi sue, l' anno 1563,
cavati li cassoni che furono fondati per cavar
il Galeone ; con servitio infinito del Porto, et
con sua spese particolare ; et nella ultima bat-
taglia navale accomodata l' artiglieria alla ban-
da delle galee grosse, *con meraviglia d'ogn'uno*,
essendo sempre *con singolar prontezza l' opera*
sua in tutte le occasioni di pubblico servitio,
come dalla Scrittura hora letta hà questo Con-
siglio inteso ; Et per la diligente et fedel ser-
vitù che Iseppo Suriano figliolo che fu del su-
detto Antonio, presta nella Casa dell' Arsenale,
come Marangon di detta Casa; Siano... acre-
sciuti al detto Iseppo Soldi otto al giorno la-
vorante, alli 42 che ha al presente....

(nel fabricar in questa Casa (dell'Arsenale) Galee con molta sufficienza.) և գովաթեամբ արժանի համարին իր խնդրածին (Եյտնիս): Նոյնպէս և հոգցողք Հրազինուց (Proveditori d'Artellierie ի 16 օգոստոսի, 1612), թէ ոչ միայն հայրն՝ այլ և ինքն Յովսէփ կարող և յաջող անձն է, իր յատուկ գիւտով խալէներ շինելու (1), և կու յուսացուի իրմէ միշտ լաւ ծառայութիւն (2). անոր համար արժանի է շնորհաց: Ի վերայ այս վկայութեանց՝ Մերակոյտն վճաեց ի 6 յունիսի, 1620 (հաւանօրէն և առաջ) որ Յովսէփայ թոշակին վրայ աւելցուի ամսական 3 դուկատ ալ բոլոր կենաց մէջ (3):

Տասն տարի վերջը Յովսէփ նոր և վեցին աղերսագիր մ' ալ տուած է (7 մայիս, 1629), որոյ մէջ կ'իմացընէ՝ որ իր հօրը պէս 40 տարի

1. È ancor lui persona sufficiente et di valore, fabricando Galee di suo proprio sesto.

2. Et si può da lui promettere in ogni tempo di ricever buon servitio

3. Եթէ (հաւանօրէն) սոկի գուկատ չէ, որ ըստ նիւթականին արժէր իբր 17 ֆրանդ, արժաթի 3 գուկատք հազիւ 10 ֆր. արժեն՝ ըստ նիւթոյն, մէկ լիրայն այլ կէս ֆրանդ: Ըսել է որ ըստ վարկի ժամանակին՝ բազմապատիկ աւելի արժէք ունէին. այսպէս այլ գումարելու է Անտոնի ըրած և յուցած ծախուց հաշւները:

տէրութեան ծառայութեան մէջ է, նախ նա-
մբու մէջ, յետոյ Նաւարանին մէջ իբրեւ
հիւան, և 25 տարիէ վեր հիւանց գլխաւոր
կամ գործավար, որոց վրայ շատ հոգով և
տառապանօք կու հսկէ՝ որ տէրութեան վնաս
շըլլայ անխնայութեամբ. շատ նաւերու և
խալէից շինութեան մատնակից էր, զոմա-
նըս ալ իր յատուկ ոճով. Նաւարանի տես-
չաց հրամանաւ գացեր և հինգ տարի կեցեր
էր ի կորկիւրա (ուսկից հիմայ վեց ամիս է
որ գարձեր էր), անկից նաւաց շինութեան
համար խոտորնակ փայտեր բերելու (Stortam-
pi), և այն աստիճանի շատ բերեր էր՝ որ-
շափ ոչ ոք իրմէ առաջ. որ և ոչ միայն 20
խալէից շինութեան բաւեց, այլ և դեռ շատ
աւելցաւ։ Այն կղզում եղած ատեն՝ բերդին
համար շատ կարեւոր գործեր տեսաւ (¹).
ուրիշ գործերէ զատ՝ նաւահանգստին ծոցում
(mandracchio) ընկղմած արսէլ մի հանեց։
Այս ամէն աշխատալի գործոց համար վկա-
յականներ ունէր. որով համարձակ խնդրէր
որ դարձեալ թոշակին վրայ աւելցուի օրա-
կան լիրա մի, և իր աստիճանակից արուես-
տակցաց նման՝ իրեն այլ տրուի հասարակ

1. Sendomi adoperato in molti altri importantissimi convenienti a quella fortezza.

աշխատաւոր կամ ծառայ մի , (il Fante grosso), ինչպէս ուրիշ գործավարք ունէին, առանց իրեն չափ արդիւնք ունենալու։ Այս ամեն բանին երդմամբ վկայեցին Նաւարանին գլխաւորքն (19 յուլ.)։ ոչ միայն իր հաւատարմութիւնը և 40 տարուան փութաջան աշխատութիւնը գովելով , այլ և սովորականէ վր բարականութիւնը՝ (sua non ordinaria sufficienza), մասնաւորապէս ի Կորկիւրա ըրած գործը , շատ հեղ վտանգաւ կենաց՝ յայլագգեաց հակառակութենէ . շատ մեծ ծառայութիւն՝ զոր երրէք անկէ առաջ մէկն չէր կըրցած ընել (¹)։ Կու յիշեն նա և ոչ միայն արսիլը հանելը , այլ և իր ծախուք հանելը . նոյնպէս ուրիշ նաւ մ' այլ (Berton Foscolo) որ ալէկոծութեամբ ի ցամաք ընկեր էր . և այս ամեն բանի մեծ և կարգէ դարձութեամբ վկայականներ ունենալն ի պաշտօնէից (²)։ Յայտնի է այս վկայութեանց վերջարանն , որ արժանի շնորհաց համարին զՅովսէփ . իսկ տէրութիւնն որ ոչ երրէք

1. Servizio veramente di somma rilevanza, d'altri ne' tempi passati non saputosi eseguire di gran lunga.

2. Da pubblici Rappresentanti ha ottenuto Attestati che sommamente decantano il suo merito, con estraordinaria *commentatione* sue.

կու զլանար շնորհքը, այլ կու չափաւորէր. այս անգամ այլ փոխանակ աղերսողին խընդրած օրական լիրայի մի՛ աւելցուց անոր 48 փող թոշակին վրայ՝ 6 փող այլ, որպէս զի կ'ըսէ (ի 22 մարտի, 1630), հանգիստ և մխիթարուած սրտով՝ այսուհետեւ ալ նոյն եռանդեամբ շարունակէ իր փութաջան և օգտաւէտ ծառայութիւնը :

Հազիւ վեց ամիս կըրցեր է Յովսէփ վայելել իր աւելցած թոշակը. նոյն տարին այլ (1630) ի Վենետիկ ահաւոր սրածութիւն մ'եղաւ, ինչպէս իր ծընած տարին. կ'երեւի թէ ինքն այլ բռնուելով այս ժանտախտէն՝ տէրութեան կարգադրած զգուշութեան հրամանին համեմատ՝ ի զգուշարանն (lazareto) խաւուեր է, ուր վիցօրեայ զլխացաւով վախճաներ է, 54 տարուան (¹), ի 29 հոկտեմբերի. իսկ իր բնակութեան տեղն է եղեր ի մեծ թաղին Ա. Պետրոսի, որ և Բերդի թաղ կ'ըսուի (Castello), Սիւներու անուանեալ փոքր հրապարակածեւ տեղւոյ մէջ (Calle delle Colonne):

Յովսէփայ կենաց և գործոց վերոյգրեալ յիշատակներէն զատ՝ մէկ մ'այլ ծանօթ է ի

1. 29 Ottobre, 1630. Ser Iseppo da Antonio Armenio, anni 54. Doglia di testa già sei giorni: In Calle delle Colonne. Lazareto.

Նօտարական Դիւանս (Leonello Geronimo Նօտարի), յամի 1622-3. Նաւարանի հիւ-սանց գործավարի երկրորդ մի, (Vice Capo d'Opera de' Marangoni) պարտական ըլլա-լով Յովսեփայ, նախ և ի 22 դեկտ. 1622, յետոյ և ի 27 մայիսի, 1623, նօտարի առ-ջեւ խոստանայ և գրել կու տայ, որ իր պար-տատէրն (Յովսեփ) ըլլայ իր գործակալն կամ երեսփոխան, և ընդունի ինչուան տարի մի և 2 ամիս՝ իր առնելիքները, որ էին 2 դու-կատ ի նաւարանէն, դուկատ մի և 18 փող ուրիշ պաշտօնարանէ, և չափ մի ալիւր ամ-սակսն, և ասոնցմով վճարի պարտքն :

Այս երկու ազգայնոց՝ իրարու արժանաւոր հօր և որդւոյ (Անտոնի և Յովսեփայ) գո-վելի և յիշատակելի գործունէութիւնն, վերոյ նշանակեալ թուականներէն յայտ է՝ որ ան-ընդհատ 80 տարի տեւած է, Վենետիկոյ պե-տութեան և քաղաքին ամենէն կարեւոր, զօ-րաւոր և շահարեր գործանոցին մէջ, որ է Նաւարանն. որոյ հետ անբաժան իմանալու է և Զինարանն, ինչպէս որ Arsenale կո-չումն կ'իմացընէ։ Յայտ այլ եղաւ, կար-ծեմ, որ բաւական պարծանկք և յիշելիք մի կրնար ըլլալ իր ազգայնոց, ներկայից և ապագայից։ յուսալի էր որ աւելի երկարա-տեւ յայտնուէր այնպիսի գործունէութիւնն

իրենց ցեղին յաջորդութեամբ . թէ և հայութիւնին ըստ լեզուի և կրօնի՝ յիտալութիւն փոխուած ըլլայ :

Անտոն 6 որդի թողած էր, մէկ մ' այլ իրմէ քիչ առաջ մեռած : Յովսէփ յիշեց իր 4 զաւակներն՝ յամին 1609 . բայց անկէ ետեւ ալ որդի ունենալն յայտնի է . շատ հաւանական է թէ իր եղբարց և որդւոց ոմանք՝ իրենց նման Նաւարանի գործատրք եղած ըլլան . և թերեւս քանի մի ազգ , այսինքն որդւոց որդի յառաջ եկած ըլլան , և ժամանակաւ եթէ ցեղն ալ շնջուած չէ , այլ իրենց նախահօր Սուրբիան մականունն շնջուած ըլլայ . թէ և Սուրբիան մականուամբ եղած են Վինետկեցիք և ազնուականք , բայց ուրիշ ծագմամբ : Միայն մէկ մի ծանօթ է մեր Հայոյն ցեղէն , և իր յատուկ թոռն , Յովսեփայ որդին , որ և իրենց առուեստը բաներ է ի Նաւարանի , և քաւրդ դար մ' այլ շարունակեր է անոնց գործը . բայց ո՞րքան յաջորդութեամբ և ի՞նչ տեսակ . անծանօթ է : իր մահուան թուականէն (1655) յայտ է , որ Յովսեփայ առջինեկ որդիքներէն չէ սա (¹) , այլ 1622ին (ա-

1. Բաւական հաւանական կ' երեւի որ այս առջինեկներէն մէկն էր Նաւարանի հրան Գիորդ , որ կ' ըսուի որդի Հայոյն Յովսեփայ , (de Iseppo dell' Ar-

պրիլի 14ին՝ մկրտուած) և անուանած Ֆրան-
չաֆոյ-Մարցիլուս-Անդրան. կնքահայրն ալ եղած
է Նաւարանի հիւսանց համարակալի պէս
գլխաւոր մի (Proto), Պետրոս անուամբ⁽¹⁾:
Ոյս է մեր Հայուն թոռան բոլոր մեզի ծա-
նօթ յիշատակն, ծննդեան և մահուան, որ
իր կենաց 33 տարին հանդիպած է, սեպտ.
14ին (1655): Բայց մեռելագրոց նշանա-
կածէն⁽²⁾ կ' իմացուի ոչ միայն մինչեւ վերջը

meno). բայց դիմելի է, որ սա 1618ին զաւակ ուներ
յօրինաւոր կնոջէ (Եղիսաբեթէ) և կնքէր (20 յունիսի)
Յովհան-Պողոս-Անելոյ անուամբ. ըսել է, իր Ֆրանչես-
կոյի (եթէ իր եղբայրն է) ծնանելէն չորս տարի ա-
ռաջ. և ճարկ է որ թէ ինքն (Գեորգ) և թէ Յովհանէ (եթէ իր հայրն է) իբրեւ 20 տարեկան կամ այլ ա-
ւելի նորահասակ կարգուած ըլլան: Եթէ այսպէս է՝
մեր Հայուն (Անտոնի) ցեղն կամ հիւզն աստիճան մ'այլ
կ' երկըննայ:

1. Մկրտագիրն կու գրէ. 4 Aprile, 1622. Francesco e Matteo Antonio, fio di Ser Iseppo, q.m Antonio Armeni, Marangon, et di Chiara, jugali. Stà in Calle delle Colonne. Compare il Ser Pietro q.m Domenico, Proto de' Marangoni. P. Massi Curato.

2. 14 Settem. 1653. Messer Francesco q.m Iseppo Armeno, Marangon d' Arsenal, d' anni 33 in circa: da febre continua già giorno 8. Li medici Leonardi et Bartoldi. Fà sepelir Madonna Andreana sua consorte. Stà in Casa Sabinelli, in S. Iseppo.

Նաւարանի մէջ հիւսն ըլլալն, այլ և ամուսնացեալ ըլլալն, և բաւական ազնուական կին մ' ունենալն՝ Անդրէանա անուամբ, որ կոչուի Madonna Andreana, և իր ծախուք թաղել տուեր է այրիկը. և անոր ութօրեայ անընդհատ շերմի հիւսնդութեան ատեն՝ երկու բժիշկք եկած են զինքը հոգալու։ Նոյն ինքն Ֆրանչեսգոյ այլ՝ պատուով Messer կոշուած է և ոչ Ser (որ ստորին կարգի մարդկան մակդիր է)։ Բնակութեան տեղն՝ թէպէտ նոյն հօրը բնակած թագին մէջ էր, բայց ուրիշ կողմն։ Այս ամեն նշաններէն գուշակուի, որ Հայոյն թոռն՝ անկէ և իր Յովսէփ որդիէն աւելի բարեկեցիկ եղած ըլլայ, գոնէ կենաց վերջերը։ Հաճելի է թէ իր աշխատութեամբ և ճարտարութեամբ վաստըկած ըլլայ բարեկեցութիւնը՝ քան ժառանգութեամբ։ Պանծալի եւս է՝ որ Ակենետկոյ ամենապանծ Նաւարանին մէջ՝ ամբողջ դարէ մ'աւելի (1549–1655), հօր, որդւոյ և թոռան Հայ անունն և արդիւնաւոր գործն շարունակ յիշուած են գովութեամբ։

Ը.

ԴԵՐԴԻ ԿԱՐԱՒԱՆԱԳԵՑ . Ի ԴԹՍՑԱՌ

ԵՒ ԹԱՐԴՄԱՆ ՎԵՆԵՑՈՑ



Սուրեան ճարտար Հայոց և անոնցմէ առաջ յիշուած լեզուագէտ և գործունեայ Գէորգայ և իր որդւոյն Մարկոսի նման, լեզուագէտ և ճարպիկ Գէորգէ մ'այլ որդէ Յովհաննոս, գրեթէ անոնց ժամանակակից, աւելի ծանր ծառայօւթիւն կամ գործեր ըրած է Վենետիկոյ տէրութեան, արդարեւ դժուար ժամանակ մի. Երբ Օսմանեանց դէմ պատրաստութիւն կար պատերազմի և մեծ նաւամարտին (1570): Ինքն իսկ Գէորգ իրեն հանդիպածը կու գրէ իտալերէն, յորդորմամբ Մարկոս Անտոն (Marc' Antonio) Պարպարոյ ազնուականի, որ ատեն մի Վենետիաց Պայլ այլ եղած է ի կ. Պոլիս (1568-71): Կ'իմացընէ ասոր, որ մինչ ինքն ի Ռակուզա էր՝ իր ապրանքները ծախելու համար, Յոյն մի զինքը գտաւ և հարցուց, թէ ինքն է Գէորգն. և ստուգելով՝ հանեց թուղթ մի, զոր յիշեալ Մարկանտոնիոսն (ի Վենետիկ ըլլալով այն

ատեն) կու յանձնէր Գէորգայ, որ տանի ի Պօլիս առ Պայլն կամ անոր փոխանորդն։ Գէորգ քիչ շատ դժարեցաւ այս վտանգաւոր գործոյ, բայց քաջալերուելով թուղթը բերողէն՝ յանձն առաւ։ Յայտ է որ իր ճարտարութիւնն արդէն ծանօթէր Վենետիկոյ տէրութեան։ Յետ զատկի տօնին՝ ցամաքով ճամբայ ելաւ. երբ հասաւ ի Սգորիս քաղաք Պոսնիոյ, ետեւէն հասան Գոսովայի Վոյվոտայէն խաւրուած երկու թուրքք, և հարցուցին կարաւանին թէ մէջերնին Հայ կա՞։ Գէորգ՝ որ ընկերաց հետ այն ժամուն նախաճաշ կ'ընէր, իմացաւ՝ որ զինքը կու վնտուեն. նա մակը զրեր էր ի ծոցը, որ երբ վտանգ հասնի՝ ծածուկ դուրս ձգէ. բայց հիմայ լրտեսաց աշքի տակ՝ չէր կըրնար այս բանս ընել. ուրիշ ճար շգտաւ, բայց եթէ ձեռքի հացին հետ թուղթն ալ պատառ պատառ կըլնել։ Բոնեցին տարան զինքը Վոյվոտային, որ հարցուց թէ թուղթ կա՞յ քովը. երբ ժխտեց, մերկացընել տուին. և ինչուան կօշիկներուն յատակը քննելով՝ բան չի գտան. յետոյ խաւրեցին՝ իր ապրանքն ալ քննելու. հօն ալ բան. չգրտնելով՝ կապել և ծեծել տուին, որ խոստովանի թուղթերը ուր պահած ըլլալը. նա միշտ կ'ուրանար. և իբրեւ կիսամահ թողուած դարձաւ ի կարաւանն,

և նորէն ի ճամբայ ընկաւ, հասաւ ի կ. Պօլիս, Համբարձման տօնէն վերջը. քանի մի ամիս կեցաւ հօն, դիմեց, տեսաւ և լսեց Օսմաննեանց մեծ ու անդադար պատրաստութիւնը՝ մեծամեծ նաւեր շինելու և զինելու, 200էն աւելի, և ամէն կողմէ նաւաստի ժողվելու. իմացուց Պայլին իր ով ըլլալը, և երկու թուղթ առաւ անկէ ի Վենետիկ բերելու: Օգոստոս ամսուն ելաւ ի Պօլսոյ գրեթէ նոյն ճամբով դառնալու. ամեն տեղ կուտեսնէր Թուրքաց պատերազմի մեծ պատրաստութիւնն և պաշարը՝ զոր կու տանէին յԵէնի գալէ: Երբ հասաւ ի Ռակուզա և իմացուց քաղաքապետին՝ ինչ բանի համար գալն և երթալը, նա թող չտուաւ որ երթայ ի Վենետիկ, այն ատեն հօն հիւանդութիւն ըլլալուն համար, այլ թուղթերն առաւ և զրկեց: Իսկ Գէորգայ նորէն հրաման եկաւ երթալու ի Պօլիս. բայց ինքն իր տանը կենալու պէտք ունենալով՝ իր մէկ ազգականին յանձնեց զործը, որուն խոստացուեցաւ՝ որ երբ դառնայ՝ 40 դալէր վարձք տան: Իսկ ինքն քիչ ատենէ նաւով ելաւ երթալու ի Վենետիկ. բայց օդոց և ծովու խառնակութեան պատճառաւ՝ 50 օր քշեց նաւարկութիւնն: Հօս վերոյիշեալ ազնուականին խընդորով՝ գրեց այս ամեն յիշուածը. զրուած-

Քին թուական չկայ (օրինակին մէջ), բայց 1571ին պիտի ըլլայ. որովհետեւ Պայլն ի Պօլսոյ գրած է առ Դուքսն ի 11 օգոստ. 1570, թէ ի Ռակուզա գացողն դեռ ճամբայ ելած չէ. յաջորդ տարին (1571) ապրիլի 22ին ալ կու գրէ, որ ի Ռակուզա գացող Հայուն թուղթեր տուած է. և տարակուսելով որ ուշ պիտի հասնի, թղթերուն օրինակ մ'այլ կու խաւրէ ուրիշ ճամբով :

Թէորգայ ըսածէն և ըրածէն (ի Վենետիկ գալու փութալէն) կ'իմացուի, որ ընտանիք ունէր այս քաղքիս մէջ. բայց երկար ատեն չկեցաւ անոնց քով. որովհետեւ այն ատեններ իր ճամբորդութեան մէջ տեսած թուրքաց պատրաստութեանց, և թերեւս իր տարած ու բերած թղթոց՝ հետեւանքն կատարուած էր, Լեպանդեան մեծ նաւամարտով։ Վենետք՝ թէ և յաղթողք կամ դաշնակիցք յաղթողաց, ասոնց իրարմէ զատուելէն վերջը՝ նորէն սկսան վախնալ իրենց հակառակորդներէն, և շուտով խօսեցան հաշտութիւն. որոյ պայմանները հաստատելու և կնքելու համար՝ դեսպան ընտրեցին (5 ապրիլ, 1572) զԱնդրէաս Պատոէր, և Պայլ՝ զԱնտոն Թէորգոյ. ասոնց իրրեւ թարգման ընկեր դրուցաւ Գէորգ։ Չորս խալէիւք ճամբայ ելան ի 22 յունիսի. երկու ամիսէ վերջը (28 օգոստ.)

Հասան ելան ի թերա : Հաշտութեան պայմաններն կնքեցան ի 18 փերբ. 1573 : Առանց ուշանալու դեսպանն ճամբայ ելաւ (27 փերբ.) դառնալու ի Վենետիկ . անտարակոյս Գէորգ այլ մէկտեղ , որուն դարձն մեծ բազդ ալ եղաւ իրեն . վասն զի՝ ինչպէս իր պատմածէն կը բնայ գուշակուիլ՝ կրնար կառկածելի անձ մի համարուիլ Դրան առջեւ . և Երբ այս ետքի ձմեռ (1572) դեսպանին ընկերներն ձանձրացած ի Պօլիս կենալէն՝ դաշնագրութեան պայմանաց ուշանալուն պատճառաւ , կ'ուզէին թողուլ դառնալ իրենց տեղը , մեծ վզրուկն (Մէհէմմէտ) արգիլեց , սպառնալով երկաթի անուրներ անցընել անոնց վիզը և այնպէս դարձընել . իսկ անոնց հետ եկող թարգմանը (օր էր Գէորգ) ի ցից հանել (¹) : Իրաւունք ունէր ուրեմն Գէորգ գրել , որ վտանգաւ կենաց կամ մահու կ'ընէր իր այսպիսի ճամբորդութիւները՝ յօգուտ Հասարակապետութեան , Երբ ոչ ոք կու համարձակէր այնպիսի բան մի յանձն առնուլ : Իսկ ինքն քանի մի անգամ ըրաւ այն վտանգալի ճամբորդութիւնը և թղթատարութիւնը , թուղթերն ալ ուրիշ երկու

1. E avrebbe fatto impalare il Dragomano che fosse venuto con noi.

Հայոց ձեռք կու հասցընէր առ Պայլն, որ
վախէն շատ հեղ և ոչ դուռը կու բանար,
այլ պատուհանէն կ'ընդունէր կամ կու տար
տալիքը՝ ապահով ատեն մի։ Այս ըրած ծա-
ռայութեանց համար՝ իրաւ Գէորգ Պայլէն
և դեսպաններէն բարի վկայագիրներ ընդու-
ներ էր, բայց ոչ և արժանաւոր վարձք.
սակայն ինքն հաւատարմութեամբ դարձեալ
յանձն առաւ երթալու ի կ. Պօլիս, Յակոբ
Սորանցոյ դեսպանին հետ, երբ սա ընտրուե-
ցաւ (25 յանու. 1575) երթալ շնորհաւորելու
Մուրատ Գի թագաւորելը։ Դարձաւ դեսպանն
յաջորդ տարին (1576, նոյեմբերի 8ին,) և Ծե-
րակուտին առջեւ ճառօրէն պատմեց իր դես-
պանութեան գործը, ըրածը, ըսածը. և տե-
սածը :

Իրեւ փոխարէն ծառայութեանցն Դուքսն
կամ Ծերակոյտն շնորհեց Գէորգայ (1575ին)
վաճառականաց միջնորդ (սէնսար) ըլլալ, որ
բաւական շահաբեր գործ էր. բայց նա խա-
փանուեցաւ գործողութենէն, նախ՝ Սորան-
ցոյ դեսպանին հետ ի Պօլիս երթալովը,
վերջն ի դարձին (1576) Վենետիկոյ մէջ պա-
տահած մեծ ժանտախտին համար, որ ամեն
առուտուր դադրեցուցեր էր. բայց երբ քիչ
մի թեթեւցաւ մարդամահն՝ Գէորգ աղեր-
սագրով խնդրեց Ծերակուտէն (24 մարտ,

1577), որ ի վարձ իր այնքան վտանգաւոր ճամբորդութեանց՝ շնորհուի իրեն փոխանակ հասարակ սէնուարութեան, քաղքին Ս. Մարկոս մեծ հրապարակի և քաղաքը երկու բաժնող անուանի և աննման ՈՒալդոյ կամուրջի կողմանց սէնուար ըլլալ. որ շատ աւելի շահաբեր էր, և կըրնար անով քիչ մի հանգիստ իր ընտանիքը պահել (¹): Ծերակոյտն պատուիրեց այլ և այլ պաշտօնէից տէրութեան (վաճառականաց գունցերու, Consoli de Mercadanti, Ζասարակաց փաստաբանից, Avogadori di Comun, և վաճառեղինաց վերակացուաց, Officiali alla Masettaria), որ քննեն Գէորգայ խնդիրը, ստուգեն և ինչ որ կու վայլէ ըսեն: Այս երեք պաշտօնարանաց գրուածքն չգտուեցաւ Դիւանաց մէջ, ուր այն տարիներուն այսպիսի գրուածք կու պակսին. որով չէինք կըրնար

1. Hora mò che mi pensava di guadagnarmi un pezo di pan per sustentar et mi et casa mia, hano fatto Sansarij Ordinarij; siche il merito et la gratia che mi aveva concesso Sua Serenità, è andato zoso. Però di novo La supplico a farmi un altro merito, a fine che possa sustentar casa mia. Offrendomi sempre servir Sua Serenità in ogni occasione che da S. Serenità sarò ricercato.

ստուգիւ ըսել, այլ շատ հաւանականութեամբ՝ թէ կատարուած ըլլայ Գէորգայ խնդիրն, ինչպէս գրեթէ ամեն անգամ կատարուած է նոյն ատենները միւս ծանօթ Հայոց (Սուրեան Անտոնի): Բարեբաղդաբար հինգ տարի վերջը վաճառականութեան Հինգ Գիտուն կոչուած պաշտօննեայք, իրենց մէկ պատասխանին մէջ առ Դուքսն կու վկայեն՝ որ շնորհուեր էր Գէորգայ խնդրածն : Աակայն շատ ատեն չանցած՝ Փառասնից մեծ պաշտօննեայք այն տեսակ (ՈՒիալդոյի) սէնսարութիւնը դադրեցուցին : Այս ատեն Գէորգ, որ իր ազգայնոց սիրելի էր, թէ անոնց կողմէն և թէ իր նոր աղերսագրով խնդրեց՝ (1582) որ ինքն անուանի թարգման Հայոց, և անոնց առեւտըրի միջնորդութեան շահուն երրորդ մասն ընդունի . ինչպէս որ Թուրքաց առեւտըրին համար կ'ընդունէր Միքայէլ Մամբրէ կոչուած Հրեայ թարգմանն : Այս խնդրոյս կու հակառակէին ուրիշ միջնորդք, իրենց յայտնի զրկանք ըլլալով . ուստի տէրութիւնն յանձնեց Հինգ Գիտունոց՝ որ քննեն . անոնք երկու կողմէն այլ լսելով, և զերկուքն այլ գոհ ընել ուզելով՝ պատասխանեցին առ Դուքսն (18 օգոստ. 1582), որ իրաւ զրկանք կ'ըլլար առ հասարակ միջնորդաց՝ եթէ Գէորգայ խնդիրն կատարուէր . բայց որովհետեւ շատ արդիւնք

ունէր նա և շատ բարի վկայութիւններ, թէ
իրբեւ Թագիման, թէ իրբեւ Կորաւանապէտ, և
երբեմն իրբեւ ձեռնտու ներկայացուցչաց տէ-
րութեան (որ է ըսել դեսպանի կամ նուի-
րակի), արժանի էր որ այդ միջնորդութիւնն
ընէ իրբեւ հասարակ միջնորդ, ինչպէս յի-
շեալ Մամբրէն այլ կ'ընէր : Հաւանօրէն Ծե-
րակոյտն այլ այսպէս վճռած է (¹) :

Այս վաստակով աշխատեր է Գէորգ քանի
մի տարի այլ, և 1588ին դադրեր է կամ դա-
դրեցուցեր են զինքն այս գործէս. հարկ ե-
ղած է իրեն այլ նորէն դիմելու տէրութեան,
որ անոր փոխարէն թոշակ մի սահմաննեն ի-
րեն . նոյնպէս այլ եղած են սովորական քըն-
նութիւննք Հինգ Գիտնոց վաճառականութեան
(28 յունիս, 1588), նման վեց տարի առաջ
ըսածներնուն, որոյ մէջ յիշեն կ. Պօլիս
գացող Պայլերուն բարի վկայագիրները, ա-
նոնց առաջնորդ և թարգման ըլլալն ի ճամ-

1. Egli si è adoperato fedelmente in diverse occasioni importanti a Costantinopoli in esser Dragomano, et in esser Capo di Caravan, et in altre occasioni a servitio de rappresentanti la Serenità V. Per le quali sue buon' operationi fù medesimamente concesso a lui per l'Ecc. Collegio di potersi esercitar in Rialto per Sansero.

բան, իր թղթատարութիւններն և ուրիշ գործերը. որոց համար վայլէր որ տէրութիւնն նոր շնորհք մի ընէր, որպէս զի կարենայ թէ զինքը և թէ իր ընտանիքն ալ պահել (¹): Անտարակոյս է որ տէրութիւնն վարձատրեց զԳէորգ, այլ ինչ և ո՞րչափ տալը՝ նշանակուած չի գտայ:

Բայց Գէորգ ուրիշ վաստակ կամ գործ մ' այլ ունէր նոյն իսկ միշնորդութիւն ըրած տարիներում. Հայոց Տան վերակացու ըլլալն, յաջորդելով զՄիմոն, որ 1555ին ընտրուած էր և 1577ին վախճանած: Այս տան գերագոյն պաշտպանք՝ ըստ անոր կտակողին՝ մեծ Թաղական պաշտօնեայք տէրութեան, ժողովեցան (2 մարտի, 1577), և առաւելութեամբ քուէից ընտրեցին զԳէորգ, իրեւ յարմարագոյն: շտկելու Աիմոնի խառնակ և անկատար թողած գործերը: Հաւանօրէն մինչեւ իր մահն կեցեր է Գէորգ ի վերակացութեան Տանն Հայոց, որոյ երբեմն Պահապան կոչուի ի դիւանս (Custos, Custode), երբեմն Տէր

1. Avendo noi veduto diversi Fedi fatte da suoi Ecc. rappresentanti, che sono stati Baili in Costantinopoli, per le quali appare egli esser Capo di Caravane nell'andar ed ritorno di essi Bailj, et esser stato adoperato in Dragomano, et in far capitare lettere, et altre operationi, etc.

կամ Պաշտպան (Patronus), երբեմ Առաջնորդ (Prior): Մահն երբ եղած է՝ յայտնի չէ, այլ կ'երեւի 1594 և 1595ի միջոց որով հետեւ առջի տարին մայիսի մէջ կու յիշուի ինքն, իսկ երկրորդ տարին (1595) օգոստոսի 28, նոր տնպահ կամ տնտես կարգեցին Պաշտօնեալք զՄկրտիչ Պարսկահայն:

Առաջին ինձ ծանօթ յիշատակ Գէորգայի Վենետիկ՝ է 1569ին (23 յուլիսի), երբ վկայ և թարգման եղած է քանի մի ազգայնոց, որք իրենցմէ մէկը գործակալ կարգեցին, պահանջելու ի Մաքսապետաց փոխարէն մի՝ իրենց ապրանքը զուր կասկածանօք պահենուն համար: Շատ ուրիշ դատերու կամ վաճառականաց գործողութեանց մէջ այլ կու գտուի իր ստորագրութիւն՝ իրբեւ վկայ և թարգման, Նօտարաց զրութեանց մէջ, (լատինարէն Interpres, և Fidem faciens կոշուի), ի միջոցի 1584-9 տարիներու, որշափ ինձ ծանօթ է:

Վերջին և նշանաւոր յիշատակ մ' այլ կը րնայ ըլլալ Գէորգայ, եթէ ինքն է և ոչ ուրիշ նոյնանուն հօր որդի (Գէորգ որդի Յովհաննու), վասն զի այսպէս կու յիշուի առանց ուրիշ նշանի կամ գործոց մեր Գէորգայ (թարգմանութեան, տնպահութեան, և այլն): Բիշատակն այս է, որ 1594 տարւոյն սկիզբը

(10 յանուարի) Գէորգ՝ երկու Միլանցի իրեն գործակալ կ'անուանէ նօտարի առջեւ, որ երբ երթան ի Միլան, այն քաղքին մէջ Սպանիոյ թագաւորին գանձապետէն ուզեն և առնուն՝ նոյն թագաւորէն իրեն համար սահմանուած թոշակը, թէ չհատուցուածը և թէ անկէ վերջը հատուցանելիքը (1): Յովհան Օլան կամ Օլոն՝ քարտուղար Սպանիոյ դեսպանին ի Վենետիկ՝ վկայած է ստորագրութեամբ, Գէորգայ ծանօթ անձն ըլլալը և այդ գործակալութիւնը յանձննելն առ երկու Միլանցիս (Պետր. Ֆլոն և Մկրտիչ Ռախմոնտ) (2): Որ և է Գէորգայ կամ Հայու մի համար՝ պատուաւոր յիշատակ մի է այս, և մնայ փափագելի իր արդիւնքը գիտնալ, կամ որ և է ըրած ծառայութիւնն, ըլլայ Սպա-

1. Ad accipendum a Thesauraria sive a Magistrato III. Thesaurario ejusdem... provisiare decursam et decurrentiam predicto Georgio Joannis Armeno concessam et assignatam per Reg. Majest. Chattol. super ipsam Thesaurariam Mediolani.

2. Այս առեն Գէորգ կու բնակէր ի Բերդ (Castello) կամ Ս. Պետրոս անուանուած մէծ թաղի. երկու ասրի վերջը (1571, հոկտ.) յիշուի Գէորգ որդի Յովհաննու բնակած ուրիշ թաղի (Ս. Մարգարիտ) մէջ, և կու յարմարի երկրորդ անդամ կ. Պօլսէ դարձած ժամանակին :

Նիական աէրութեան, թէ ըլլայ Միլան քաղաքի. մեր Գէորգայ այլ և այլ վկայեալ ճարտարութիւններն հաւանութիւն կ'ընծայեն՝ որ ինքն ըլլայ այս արդիւնաւորն։ — Թէ իր աղերսից մէջ ըսածէն և թէ պաշտօնէից վկայութենէն իմացուեցաւ իրեն ընտանեաց տէր ըլլալն. սակայն մեզ անծանօթ մնան թէ կինն և թէ զաւակն, և թէ իր մահուան ժամանակն և տեղին։ Բայց մեր գտած այսչափ յիշատակնէրն այլ բաւական և շատ են դինքը թէ ճարտար, սրտոտ, կարող մարդ մի ճանչցընելու, և թէ Վենետիկոյ Հասարակապետութեան երախտաւոր անձ մի, այնպիսի վտանգաւոր ժամանակ ըրած հաւատարիմ և դժուարին ծառայութեանց համար, որոց չէին համարձակեր բնիկն Վենետիկ, որով միանկամայն պարծելի է մեզ ազգայնոց։

Համանուն Գևորգ ։ Յովհաննու՝ մեր ծանօթ Գէորգայ մահուան հաւանական թուականէն (1594) 20 տարի վերջ այլ յիշուի, և շատ հեղ վաճառական կ'անուանի, բնակութեամբ ի Ս. Մարիամամ Խորոտիկ (S. Maria Formosa) թաղի. այլ և այլ անգամ Նոտարաց առջեւ վկայ եղած է իր աղգայնոց դաշնակցութեանց. անգամ մ' այլ (1614, մայիս 12) վկայէ Նախիջեւանցի Պետրոսի ։ Յովհաննու համար, թէ ինչուան այն ատեն ամուրի էր։

թ.

ԴԵՐԴ ՈՐԴԻ ԹԵՇԴՈՐԻ ԿԵՍԱՐԱՏԻՆԸ.

Այս երկու Գէորգաց ժամանակակից երրորդ մ' այլ կայ շատ անգամ յիշուած, և ազգակցաց մէջ նշանաւոր՝ հարըստութեամբ, կամ երկրատէր ըլլալով. իր վաստակի աղբիւրն այլ եղած է միջնորդութիւնն, ոչնառք ըլլալն. այլ և լիզուագիտութիւնն, որով շատ հեղ թարգման եղած է թուրքաց. բայց թերեւս յաջողութեանն գլխաւոր պատճառն եղած է իր հայրենիքն կամ հայրն, որ կոչուի թէոդօք կեսարցի, որ մի անգամ սխալմամբ նօտարի գրչին կամ ականջին՝ իոնդոք գրուած է : Ասոր ի Վենետիկ գալն յայտնի չէ, որով և Գէորգայ այս քաղքին թէ ի կեսարիա ծնանիլն, (որ աւելի հաւանական է). մահուան թուականն յայտնի է Ժէդարուն սկիզբները, 96 տարուան նշանակուած, որ իր որդւոց ծննդեան թուականաց համեմատելով՝ չափազանց կ'երեւի. վասն զի ըստ մահուան թուականին՝ ինքն ծնած կ'ըլլայ 1512ին, իսկ իր պայազատ որդին (Պտեփան) ծնանի իր 75 կամ 76 տարուան ե-

ՅԵԿԱՂՆՈՐ ԿԵՆԱՐՄԱՑԻ		ԳԵՐՄԱՆԻԿԱՆԻ ԲԱռքինա գ. Սկսմակ		Ա. Ա. ՊՐԵՏՆԵՎԻ աշխատվածի	
		† 1608	† 1628	† 1634	† 1637
Եղիշուարքելլ ժ. 1577	Պառլամ Պառլամենտիկան	Առեկպան Պետրովան ժ. 1581	Սկսմակ Յակովով ժ. 1584		
Ա(յըն) Եղիշուարք	(1607)	կ. Պառլամ Պառլամենտիկան ժ. 1581	Զելիկոս Լուչիկան ժ. 1584		
Պետրովան ժ. 1580		† 1634	Ա. Յուկ. Ֆելիքսովա		
† Նախ քան 1595					
		Պառլամենտ			
		Ա. Պետրով (1600)			
			Պառլամենտ		
				Պառլամենտ	
					Պառլամենտ

* ՅԵԿԱՂՆԻ ՃԱՄԱԿ 1607.

դաժ ատեն։ Եւ որովհետեւ հարկ եղաւ յիշել սերունդը կամ ազգաբանութիւնը, ներկայացընենք նախ ինչ որ յայտնի է մեզ ի մկրտագրոց, մահագրոց, պսակագրոց և ի նօտարաց, նա և ի կտակէն Գէորգայ. այս ամեն գրուածներէն ձեւանայ այս ազգաթիւս. (տ. եր. 292). Գէորգ՝ մահուանէն տարի մ'առաջ 7 զաւակ ունէր կենդանի, երկուքն մանչ և հինգ աղջիկ։

Եղիսաբեթ կամ Իզապել, մկրտուած ի 20 հոկտ. 1577

Պաւլա Դոմինիկա, մկ. 3 մարտի, 1580

Սիմոն Բակովը, մկ. 31 հոկտ. 1581

Զեշիլիա Լուչինա, մկ. 29 հոկտ. 1584

Ստեփան Պետրոս, մկ. 14 ապրիլ. 1587

Գիարա, որոյ ծննդեան թուականը շեմ գտած։

ԱԱ. աղջիկ մ' այլ՝ անծանօթ անուսմբ, բայց ամուսնացեալ։

Ասոնց մայրն՝ կինն Գէորգայ՝ էր դուստր մեզի արդէն ծանօթ Հայոց տնպահին՝ Ախնէ, (տ. եր. 148), Ռուբինա անուամբ (Rubina)։

Գէորգայ ծանօթ յիշատակք իբր 40 տարիներու միջոց են (1571-1608). բնակութեան թաղն եղած է ի Ս. Յուլիան, ի տանն Հայոց. ասով կու պարզուի անդր պահապանի (Սիմոնի) հետ խնամենալն՝ նախ

քան զ^ւ 1577: Առաջին յիշատակն է՝ Ochataus թերեւս Յովանաթան անուամբ ազգայնոյ մի գործակալ ըլլալն (3 հոկտ. 1571), անոր 289 դուկատ առնելիքը պահանջելու. Տողֆինոյ կոչուած դրամասեղանէն (banko). այս բանիս վկայ եղած է մեր նախածանօթ Գէորգն Յովկաննիսեան: – Երեք տարի վերջը (1574, մարտ 3) կարհաւեցէ Այսնչ հետ՝ որ նոյնպէս ի Հայոց տան բնակէր, կու վկայէ Շառալուն անուամբ Զուղայեցւոյ համար, որ ութ ամիս առաջ եկած էր. ինչպէս որ գրուած է անունն ծովային մաքսատան մէջ. ուրիշ (Հաւեպցի) Շառալաթի որդի մ'այլ (Արեւանդը) այս վկայից վկայ կ'ըլլայ: Իրեւ թարգման թուրք (թերեւս և պարսիկ լեզուի) յիշուի (1575, մարտի 18) ուրիշ Զուղայեցւոյ (Բասսայ, .. Մարտարէկ) խնդրոյ մէջ: Երկու տարի վերջը (1577, մայիս 14) Պալլի Ահմէտ անուամբ Ամասիացի թուրքի մի փոխ կու տայ 120 դուկատ, և գրաւական կ'առնու անկէ երեք ծրար երկու տեսակ մետաքսի, որ դեռ ի մաքսատան էր, իր քով պահելու պայմանաւ: Ուրիշ Ահմէտ մ'այլ (Պէկապազարցի Հաճի Հիւսէինի որդի) 1589 տարւոյն սկիզբը (2 յանուարի) մահուան վտանգի մէջ ըլլալով, նօտարի հետ կու կանչէ զԳէորգ և զՄարկոս որդի Յակովայ, թարգ-

մանելու իր ըսելիքը, որ էր իր ստացուածոց, դրամոց և լաթեղինաց ժառանգ կարգել իր հօրեղբօրորդին (Եռամութ)։ Երեք հայրենակից Պէկպազարցի Թուրքք այլ վկայ կ'ըլլան կտակին :

Եատ տարիներ այս թուականէս ետքը՝ Գէորգայ զաւակաց ծննդեան յիշատակէն զատ՝ ուրիշ բան չեմ գտած իր նկատմամբ։ այլ կ'երեւի թէ այն միջոցին (իբր 13 տարի) բաւական յաջողած ըլլայ իր միջնորդութեան արուեստով։ վասն զի անկէ ետեւ զետիններ կամ արտեր գնելու զբաղած կուտեսնութ։ և նախ 1592ին վերջերը (գեկտ. 27) Վենետիկոյ սահմանէն շատ հեռու Պերկամոյ գաւառուին մէջ, Պրեմպանա կամ Պրեմպոյ վիճակին Պիանգոյ կամ Պիանգիվալէ գեղին, (որ հիմայ կոչուի S. Giovanni Bianco) Գարիդելի մասին մէջ 12 արտաշափ (campro) մշակուած գետին կու գնէ՝ 600 դուկատի, Ալգայինոյ Սալվատոր անուամբ մէկէ մի, և նորէն անոր վարձու կու տայ գնածը, պայմանաւ վեց ամսէ վեց ամիս շահն կամ վարձքը առնուլ $5^{\circ} 7_0$, այսինքն 30 դուկատ տարեկան։ Բայց գրեթէ տարի մի վերջը (11 հոկտ. 1593) առուտուրը կու փոխէ։ գետինը կու դարձընէ իր հին տիրոջը, ետ կ'առնու տուած 600 դուկատը։ Յայտ է որ անոր տեղ

առևլի մօս և շահութեր երկեր մի զնել կ'ա-
դէր, միանգամայն շատ առևլի ընդուրձակ,
և արդէն առանք քններ որոշեր էր. գուն
զի քէշ որ վերծ (26 հոկտ.) կու Շոխ այ-
նոր առաջարքը, բայց վենետիկյա գուստին
Նորի վիճակին Ալլոցնոյ զիւղի Վիլլահի-
կաշուած մասին մէջ⁽¹⁾: Այս գետին 38 ար-
աշափ էր, կէտ Ալլոց Տոլչէ անուամբ
մէկուն, որ գոշնադրեցաւ վաճառել ամէն
մէկ որոշ 129 դակասի, միւս կէտ ոլ Լու-
կրեցիս Կորդեցի (Lucrezia Cortesi) ա-
նուամբ ազնուական ախնաջ մի, որ զրեթէ
նոյն զնով կու առյ իր մասը. բավանդակ
զինն կամ ծախքն կ'ըլլոյ 5160 դակաս. որոյ
համար նույն 1000 դակաս առան Գէորգ,
Ջացածն այլ քէշ քէշ յետոյ վճարեց (2): Այս
գետին մօս նոյն Ալլոցնոյ զիւղի մասն
համարաւած Ուսվիեկոյ աեղայ մէջ այլ 1¹շ.
կամ երկու արտաշափ աեղ զնելով բավ-
դակն 40 արտավար հաշուացաւ. զոր թէ-
պէս իրր 10 ասրի վերծ (1602, յուլ. 8)

1. Villa Villatica sotto la piove di Salzano.
podesteria di Noale, territorio Trevisano. այս-
պէս զբուխ է նուուրոց :

2. Խնձուես կու նշանակուի յոյնորդ առքին (1394.
յանուարի 27ին), 500 դակաս վճարելն առ Լուկրե-
ցիս, մարտի 10ին 200 դակաս, և այլն:

Գէորգ 2000 դուկատի վաճառեց Ալվիզէ Կրիմանեայ ազնուականի, ազգականի նոյնացեղ դըքսի ժամանակին, որոյ Մարիամ աղջկան օժտէն առնուեցաւ դինն և գրաւի դրուեցաւ ի դրամանոցն (չօչօչա): Առաջուան գնածին նման՝ ինքն (Գէորգ) նորէն վարձեց իր ծախածը 120 դուկատի վարձքով: սակայն յետոյ դարձեալ իր և իր որդւոց ձեռքը մնաց երկիրն, որ և այնպէս յիշուի 40 և աւելի տարի ետքն այլ. նա և անոր վրայ արտավար մի աւելցընելն, զոր յամի 1597 (յանու. 24) կու գնէ նոյն Վիլլադիկայի մէջ իր մէկ փեսային ձեռքով, 131 դուկատի, Պրեցցադոյ (Prezzato) Մկրտիչ անուանեալ տեղացիէ մի :

Մինչեւ այս ժամանակներս Գէորգ միջնորդութեան գործն այլ չէր թողած, ընկերակըցութեամբ ուրիշ նշանաւոր միջնորդի և վաճառականի մի, որ էր Մարիոս Մարտառ որդի Յակոբայ. հիմայ՝ արդէն տարիքն առած ըլլալով՝ ուզեց ետ քաշուիլ ի գործոց: Երկու ընկերակիցք և շահակիցքն ներկայացան նօտարի (ի 28 մայիսի, 1596), յայտնեցին և վաւերացուցին իրենց բաժնուիլը, ամեն հաշիւ մաքրած, և իրարմէ բնաւ առնելիք տալիք շունենալով, որպէս զի իրենց ժառանգք այլ շկարենան մէկմէկէ բան մի պահանջել: Աւկէ

վերջը Գէորգ 12 տարի ալ ապրած է հանչ զըստեամբ, իր գնած 40 արտավար երկրին բերքը կամ վարձքը վայլելով, իր զաւակաց և թոռանց խնամքով և սիրով։ 1607ին (օս դոստ. 8) կու կանչէ իր տունը (որ այն ատեն Ս. Փելիքս Թաղին մէջ էր), Տրեվիզան, Andrea կամ Giov. Trevisan նօտարը, և գրել կու տայ համառօտ կտակը. Թէ և գեռ մտօք և մարմնով առողջ եմ, կ' ըսէ, բայց ծերացեր, անոր համար կ' ուզեմ գործերս կարգաւորեալ թողուլ. և յետ յանձնելոյ զհոգին առ Աստուած և առ Ս. Աստուածածին, առանց մի առ մի յիշելոյ ստացուածքը՝ գամենքն այլ կու թողու հաւասար իր երկու որդոց, Սուեդիանի և Սիմոնի. իսկ իր հինգ դստերաց՝ բան մ'այլ չեմ թողուր, կ' ըսէ, որովհետեւ զանոնք կարգեցի և ամենուն ալ տուի ինչ որ պատշաճ համարեցայ, իսկ բարերարութեան տեղեաց համար՝ ինչ որ պատշաճ համարին որդիքա՝ թող տան իրենք։

Դստերաց տուածէն կու յիշուի միայն Զապելի կամ Եղիսաբեթի տուածը, որ էր 800 դուկատ, զոր անոր այրիկն (Յուլիան Պիոնտոյ Ֆիորենտին կամ Ֆիորենցացի), ընդեղինաց և ալեր ամբարապետաց քով շահու դրեր էր. և հիմայ (Բերեւս կասկածելով

հօրը մահուանէն ետեւ վտանգուելու) Զապել աղաշեց զհայրը, և սա յանձն առաւ ներւ կայանալ նօտարի, իր կտակն ընելէն ամիս մի վերջը (25 մարտ, 1607), և այդ գումարի (800 դուկատ) դարձընել տալու իր Սալցանոյ գիւղի երկիրներէն տասն արտավարի վրայ, տարին 48 դուկատ չահ տալով Զապելի. և այս բանիս հոգը յանձնեց իր Սիմոն որդւոյն : Շատ տարիներ վերջը (1635, մարտ 21), միւս որդին Ստեփան այս գումարը կամ օժիտը՝ ամբողջ դարձուց իր քրծը՝ Զապելին, որ այն ատեն այրի էր Թևացեր, և երկուքն այլ մէկմէկու անդորրապիր տուին :

Դստերը օժիտը կամ ժառանգութիւնը ապահովցընելն՝ Գէորգայ վերջին յիշուած գործն է . անոր վրայ տարի մի և ամիս մի այլ ապրեր է, և ի 20 ապրիլի 1608ին, վախճաներ է, ըստ վերոյգրածիս՝ 96 տարուան, ջերմով և վէրքով մի հիւանդացեալ, Ս. Փելիքս եկեղեցւոյ թաղին մէջ, ուր և թաղուած է հաւանօրէն :

Գէորգայ դստերաց առջինեկին՝ Զապելի՝ ամուսինն էր Յուլիան Պիոնորոյ. Չեշիլիայի՝ Յովհան Ֆէլիպպին. Գիարայ՝ Մեծով մականուանեալ կ. Պօլսեցի. իսկ միւս երկուց, անանուանն և Պաւլայ Գոմինիկայ, ամուսնաց՝ մին կոչուի Յովհ-Անորոն Ալեաննի (Aleanni

Zuan Antonio), միւսոյն Առեքան Կածորոյ (Gazaro) գրուած, որ թերեւս Ղազար Հայ ըլլայ. բայց ասոնց որն որուն ընկեր էր՝ չեմ գտած :

Յիշուեցաւ ի սկզբան Գէորգի մէկ եղայրն՝ Յովենի. սա իրմէ քսան տարի վերջը (1627) վախճաներ է յԱնդոնա. յաջորդ տարին (1628, յան. 17) Գէորգի Գուիլիոյ սէնսարն և չորս ազգային վաճառականք՝ նօտարի առջեւ երդմամբ կու վկայեն, որ Յովսեփայ գործակալն և խաչեղբայրն (compare) Գալուստ Ուղարլու (Ventura Ugerlu գըրուած), ըսեր է, թէ Յովսէփ պատուիրած է որ իր ստացուածքը Անդոնայի Հայոց տան վերակացու՝ Բարդոյի քովն է (Bardo Cester, թերեւս կողովագործ), պէտք է առնուլ և տալ Զաքարիայի որդի Մարիոս սարկաւագին, որ իր ազգականն է, և իր թաղման ծախքը հոգացեր էր :

Գալով հիմայ Գէորգայ որդւոց, Սիմոնի յիշատակ չեմ գտած հօրը մահուանէն վերջը. իսկ Ստեփան շատ հեղ յիշուի, և գրեթէ միշտ իր հօրմէն ժառանգած երկիրներուն համար, ամբողջ 40 արտաշավիին. ուսկից կ'երեւի որ Սիմոն շուտ վախճանած ըլլայ, 1620էն առաջ. վասն զի այս թուականէս կու սկսի յիշուիլ Ստեփանի գետին-

Ները ծախելն կամ վարձելն . նախ (սեպտեմբ. 26ին) իր հօրը՝ զատ տեղ մի (Վերին Ռովիեկոյ կամ Sabrosi) գնած արտաշափ գետինը կու ծախէ 150 դուկատի (Աղեքսանդր Պոծայ վենետիկեցի վաճառականի մի). Երկրորդ տարին (15 յանու. 1621), կու դաշնադրի նոյն Աղեքսանդրի ծախել մէկ ու կէս արտաշափ գետին այլ ի Վիլլատիկայ , արտաշափին 130 դուկատի , բայց Աղեքսանդր բաւական ապահովուած չհամարելով՝ դաշինքը կ'աւրեն նօտարի առջեւ :

Ստեփանի Զեշիլիա Լուչինա քոյրն կ'ապրէր երկանը հետ Վենետիկոյ Բորդոյ Կրուարոյ վիճակին Տիզանա (Tisana) գիւղի Ս. Միքայէլ (S. Michiel del Quarto) ըսուած կողմը , ուր տուն և տեղ ունէր , բայց այրիկն (Ֆիլիպպին Յովհան) ծախեր էր զանոնք տեղւոյն քահանային , և գինն աւանդեր էր Տիզանայի դիւանատան . 1626ին սկիզբը (21 յանու.) Ստեփան իր քրոջ խնդրելովը՝ գործակալ մի դրաւ (Մարտին Ալպերդինի) որ այն գումարէն 188 դուկատ հանէ , որպէս զի Զեշիլիա նորէն իր տունը և տեղը գնէ . և անշուշտ այնպէս եղած է : Վերը յիշեցինք Ստեփանի՝ միւս քրոջ Զապելի) այլ ըրած տիրութիւնը կամ օգնութիւնը . այն առթին՝ 800 դուկատը ճարելու համար 10

արտաշափ գետին ծախեր էր (21 մարտի, 1635). Նիկոլ-Պալտոյի (Nicolo q. Rompèo Baldo), այս պայմանաւոր ինքն իր ծախաւ ծին վարձուոր ըլլայ 5 ¼ առ. հարիւր շահ վճարելով, և եթէ հինգ տարուան մէջ վճարէ՛ նորէն երկիրն իրեն դառնայ. և այնպէս այլ կ' ընէ ու կու տիրանայ իր տեղւոյն : - Նախընթաց տարին (1634) վախճանած է Ստեփանի կինն Պաւլա Պաւլինի, որուն հետ պաակուած էր 1613ին. սա օժիտ բերած էր 2000 դուկատ, 500 դուկատի ալ հազուստ, և այլն. որ չափաւոր հարըստութեան նշան է, այն ատենուան ստակի արժեքին համեմատ. և որովհետեւ անկտակ մեռաւ, ըստ օրինաց Վենետիկոյ՝ ընչից երրորդ մասն կ'ինկնար էրկանը, մնացեալն՝ որդւոցը : Անտեփան երկու զաւակ ունէր, մանչ մի և աղջիկ մի. զսա՝ որ իր մօր անուամբ Ուուբինս կոչեր էր, արդէն կարգէր և օրինաւոր օժիտը տուեր էր. ուստի իր կնկան 2500 օժտէն առաւ իրեն ընկած երրորդ մասն 833 դուկատը. իսկ իր (հօրն անուամբ) Գեորգ որդւոյն՝ մնաց երկու բաժինն, այսինքն 1666 դուկատ. այս գումարին տեղ հայրն տուաւ Գէորգայ 100 դուկատի ինչը, մնացեալ մեծ գումարին համար այլ Սալցանոյ գեղին երկրէն տուն մի և 15 արտաշափ, որ կտորն որ ուզէ. այս բանս

նօտարի առջեւ Տիրամօր եկեղեցւոյն (Տ. Maria Mater Domini) աւագերիցուն տանը մէջ գրուեցաւ, և Գէորգ իր հօրը անդորրագիր տուաւ, (19 մայիս, 1635): — Նոյն օր նոյն տան մէջ Գէորգ իրրեւ արդէն չափահաս խնդրեց որ ինքնագլուխ ըլլայ՝ հայրական իշխանութենէն ազատուած։ ըսել է թէ 20 տարեկանի մօտ էր. հաւանեցաւ հայրն, և նօտարական գրով հաստատել տուաւ, « և ի նշան ազատագրութեան, կ' ըսէ նօտարն, իր Աստուծմէ խնդրած հայրական օրհնութիւնը տուաւ որդւոյն, և երկուքն այլ փոփոխակի խոստացան և պարտաւորեցան հաստատ պահել այս դաշինքը » :

Գէորգ Գէորգեան արդեօք իր մօր օժտէն ժառանգած գետինը զատե՞ց ու առանձին բանեցուց, եթէ նորէն հօրը դարձուց՝ անոր գինը առնըլով։ — յետինս հաւանական կ'երեւի. որովհետեւ իր ազատագրութենէն չորս տարի վերջը (1639, փերբ. 22) հայրն Վիլատիկայի մէջ ունեցած ամբողջ 40 արտաշափը վարձու տուաւ Յուլ. Պորտոլուձոյ (Giuliano Portoluzzo) Սալցանացի մէկու մի, իրեք տարուան համար. այսպիսի դաշամբ, որ սա ստակի տեղ տարուէ տարի տայ իրեն 55 քոռ (staro) լաւ, մաքուր, չոր ցորեն, 45 տակառ զուտ դինչ (vin collado mastelli 45

ա mosto), տեսակ տեսակ փայտեղէն կէս կէս շափի, քոռ մի կորենի, քոռ մի կորդը ու- ելք հունտ, և իրրեւ ընծայ՝ Ամենայն Սրբոց տօնին (Նոյեմբ. 1) զոյգ մի սագ. Ծննդեան տօնին՝ 3 զոյգ որձատ, խոզ մի 100 լտրա- նոց. Բարեկենդանին՝ 3 զոյգ հու. Զատկին՝ 20 հաւկիթ. Ա. Պետրոսի տօնին՝ 3 զոյգ վառեակ. և զայս ամենն ալ վարձուորն պար- տական էր բերելու ինչուան ի Մեստրէ, որ Վենետիոյ ցամաքին մօտիկ և գլխաւոր նա- ւակայ աւան մ'է. ինչպէս որ կ'ընէր և կու վճարէր առջի վարձուորն։ Ընդեղինաց և զինւոյ շափերն Տրեվիս քաղաքին շափերովն են, որոյ գաւառին սահմանուած էին վար- ձեալ արտերն։

Այս յիշատակէս վերջը չգտնելով ուրիշ բան Գէորգայ որդի և Գէորգայ հայր Ատե- ֆանոսին, հարկ է բարով վայլէ ըսենք իր վարձուորին ընծայքը, և թողումք որ ժամա- նակն յայտնէ իր վախճանը և այն գետին- ներուն ժառանգները։ — Որդւոյն Գէորգայ այլ մասնաւոր յիշատակ մի ծանօթ չէ. բայց եթէ 1650ին (օգոստ. 19) իրրեւ 50 ազգային վաճառականաց հետ (որոց ամենուն ա- նուանքն այլ գրուած են) միաբանելով կու խնդրէ, որ այն ատեն ի Վենետիկ գտուող նշանաւոր (և շատ այլ նշանաւոր) Թուլիա վար-

դապետն որ, երբեմն և պատրիարք (¹) ի-
րենց պաշտպան մի ընտրէ զիրենք խարող-
ներէն. յետոյ ոմանք զնոյն ինքն կ' ընտրեն
պաշտպան՝ իրենց պարտականաց հետ դա-
տաստանին համար: — Թուի թէ նոյն ինքն
Գէորգ Է (Giorgio Punes գրուած, իբր Փա-
նոս, Ատեփան), որ 15 տարի վերջ այլ (1665,
հոկտ. 29) Յոիւ շափ ազգայնոց հետ երես-
փոխան կու կարգեն զԱւրուիան որդի Յա-
կովբայ, որ Քառասնից դատարանին մէջ բո-
ղոքէ կիպրոսի մաքսառուաց դէմ, զիրենք
նեղելնուն համար: — Այլ աւելի շատ տա-
րիներէ վերջը (1689, յունիս 9) վերջին ան-
գամ (իմ ծանօթութեամբս) կ' երեւի Գէորգ՝
իրբեւ կնքահայր Յովհաննէս Զէլէ կոչուած
ազգայնոյ մի որդւոյն մկրտութեան, զոր Գա-
լուստ կամ իտալօրէն Վենդուրա կ' անուա-
նեն. այն ատեն Գէորգ կու բնակէր ի Ա.
Յուլիան թաղի և թերեւս ի նոյն իսկ ի
Հայոց տան: — Ասով կու վերջանայ այս
կեսարացի թէոդորեան տոհմի Գէորգեանց՝
մեր գիտցած 120 տարուան յիշատակն՝ ի
Վենետիկ:

Եւ որովհետեւ զասոնք յիշելնուս գլխաւոր
առիթն էր իրենց երկրատէր ըլլալն, հա-

1. Տես Զամշեան Պատմ. Հայոց, Գ. 665-671 :

մասսաիւ յիշենք հօռ քանի մի ուրիշ ժամանակակից ազգային երկրատէր այլ . Վենետիկ յամաքին այլեւայլ կողմերում : Մէկն է մեր Հոյոց Տնպահից կարգին յիշեալ Պատրիարքականություն . որ յամի 1614 (մայիս 6) իրեն գործակալ կարգէ Պատուայի սահմանին մէջ եղած անուանի Պրալիա (Praglia) Բենեդիկտեանց վանքի մեծաւարը , որպէս զի Ֆրէնչ գեղին մէջ իր ունեցած 16 արտաշափ գետնին վարձքը առնու ի վարձուարէն : — Մէկ այլն է Մելգան .. Բավաննաս , որ 1617ին (սեպտ. 18) կտակը գրել տալով , կու յիշէ Տրեվիզի Ս. Վլաս (S. Biagio) գեղին մէջ ունեցած գետինը , զոր կու թողաւ իր Լուկրետիայ կնոջ , մինչեւ որ գայ կարտպետ՝ իր եղբօր կամ քրոջ որդին . իսկ ինքն քանի մի տարի վերջը մեռած է (13 փեբր. 1625) :

Ժի գարու կիսուն Յովետէ Գրէնորէ որդի մէկ մի՛ նախ արտաշափ գետին մի գնած է ի Մելչոյ , Պորտոկրուարոյ վիճակին մէջ , որ վերը յիշուեցաւ , 1649ին (հոկտ. 28) . յետոյ (1651 . յուլիս 1) արտաշափ մի և քառորդ մ' այլ՝ վերոյիշեալ Մեստրէի մօտ տեղ մի . վերջը ուրիշ գետին եւս . տասն տարի ետեւ կու ծախէ 10 արտաշափ , այլեւայլ գնով : — Ասոնցմէ վերջը ծանօթ է Յովետէ .. Յովաննաս . որու զոքանչն և անոր եղբայրն՝ օժտի հա-

մար խոստանալով 1000 դուկատ, կիսուն տեղ կու տան (1673, նոյ. 26) ընչեղէն, կիսուն տեղ այլ 6 արտաշափ, Պատուայի (Campo S. Piero, Ա. Պետրոսի արտ) վիճակին Պարութիւնը կոչուած մասին մէջ. ինքն այլ ընդունելութեան գիր տուած է (1675, դեկտ. 22):

Ասոնցմէ ետքը նորագոյն ժամանակաց մէջ՝ երբ բազմացան Հայք ի Վենետիկ և տնօւորեցան, յայտ է որ կարողութիւն ունեցողք՝ ցամաք երկրի վրայ այլ տուներ և գետիններ ստացեր են:

Ժ.

ՅԱՆՅԱԿՈՐ ՀԱՅԻ

Թերեւս բիւրաւոր ազգայինք եկեր գացեր
են ի Վենետիկ և հազարաւորք ալ բնակեր,
ԺԳ դարէ սկսեալ մինչեւ ի մեր դար, և
ընդհանրապէս հաճոյ եղած են Վենետաց,
և ինչպէս հիմայ կ'ըսուի՝ համակրելիք. միով
բանիւ, լաւ անուն թողած են. և եթէ ա-
մենքն Անտոնի և Գէորգայ նման հանձար
չեն ունեցեր, այլ դեռ շատերն այլ անոնց
պէս յատուկ իրենց ազգային անուամբ կո-
չուեր են. և երբ իրենց հասարակութեան
վրայօք խնդիր եղած է տէրութեան առջեւ,
միշտ գովուած և շնորհաց արժանի վկայուած
են: Այսքան երկար դարուց և իրենց անընդ-
հատ յաջորդութեան մէջ՝ ի հարկէ բարոյա-
պէս անհնար էր գայթակղութեան չպատա-
հել, կամ պարսաւելի գործ և անձն այլ չե-
րեւնալ. սակայն ժամանակին և բազմութեան
համեմատ՝ քիչ հանդիպած են. և բարեբազ-
դաբար այս բանիս նկատմամբ Դիւանք՝ որ
ամէն այնպիսի գէպք այլ կու նշանակեն, քիչ
բան ունին ազգայնոց համար: Երբ Դիւանք

կ' ըսեմք՝ պէտք է յիշել Վենետիկոյ տէրութեան ահաւոր ատեաններն և պաշտօնեալքն, որ բարոյականութեան վրայ խստութեամբ կու հսկէին և մանր քննութիւններ կ' ընէին, նա և երբեմն տանջանօք և նեղ ու մութ բանտերով, երբեմն եւս քաղքին և տէրութեան սահմաններէն դուրս վուրնտելով զյանցաւորս : — Իրրեւ ի վկայութիւն բոլոր այս ըսածներուս, և ի հաւաստիս ճշմարտութեան և ոչ պարզապէս հետաքրքրութեան յիշեմք ի յեղանակիս դիպուածներն այլ :

Ա. ԺԶ դարու սկիզբներում (1508—1513 միջոց) Հայոց տան մէջ յիշուի համառօտիւ վատահամբաւ կին մի, համանուն այնպիսի համբաւով ի հնուց հոչակելոյն, Հեղինե, թէ և չըսուիր հայ, բայց ի բնակութենէն կարծուի. տան վերակացուն կամ գլխաւոր բնակիչն Ալիքտաննոր՝ յատկապէս Հայ կոչուած, դիմելով յատեանս, նօտարաց առջեւ առած իրեք հաւատարմաց վկայութեամբ, ոչ միայն զվատուիին՝ այլ և անոր ըովակը կարասիքը՝ տռւնէն դուրս կու ձգէ . և այս ամեն դործոց, նօտարաց և վկայից և դուրս ձգուած ներուն համար եղած ծախփն կու վճարուի Հայոց տան եկամուտէն (¹) :

1. Pro ejicienda res et bona Elenæ existentis in Domo computatis expensis Notariarum;

Բ. Այս դիպումածէս 60 տարի վերջը, 1571
ամին և մինչ ի 1587, կու յիշուի այլեւայլ
տեղ և ատեն՝ Յակոբ Մերոնցի Հայ վաճառա-
կան մի, որ թէ և (Յովհաննէս) քահանայի
որդի է եղեր, բայց փոխանակ իր հօր տուած
օրհնութեանց և խաղաղութեանց՝ անկարգ
և անզուապ բերնով անվայել և հայհոյական
խօսքեր հաներ է, ինչուան այնպիսի գերա-
գոյն անձի մի դէմ որ առաջին անձն է յետ
Աստուծոյ, յերկինս և յերկրի. ուսկից գայ-
թակղելով՝ զինքը բնակութեան ընդունող
տանտէրն ի Մուրան կղզին՝ քաղքին քով,
ուր ուլունք շինելու փուռեր, գործարաններ
կան, և տանտէրն այլ նոյն արուեստն ունէր,
իմացուց պատուաւոր մարդու մի, նա այլ՝
թէ Պատրիարքին և Պապի Նուիրակին, և
թէ հաւատաքննութեան վերակացուին, նոյն-
պէս նա և Հայհոյութեանց համար սահմա-
նուած մասնաւոր պաշտօնէից։ Ասոնք պա-
տուիրեցին յիշեալ եկեղեցականաց՝ քննել
նախ Յակոբայ ամբաստանողը կամ տան-
տէրը, յետոյ զամբաստանեալը։ Քննութիւնն
և դատն ինչպէս եղած և աւարտած է, չեմ
գտած. բայց դժբաղդաբար Յակոբայ մեղաւ-

pro examinatione Testium trium super fama et
vita ipsius Elenæ.

պարտ ըլլալն կու ստուգուի յետագայ ամ-
բաստանութեամբք և վճռով հաւանօրէն Մու-
րանցի տանտէրն իր վարձուորը կու հանէ տու-
նէն։ Նոյնպէս հաւանական է որ նոյն Յա-
կոբն է (այս տեղ հօր անունն կամ մակա-
նունն չի յիշուիր) (¹), որ իր նման անկարգ
և անսանձ բերան Աղբասանդր անուամբ ազ-
գայնոյ մի հետ բնակելով ի Հայոց տան, ոչ
միայն զտընեցիս այլ և թաղականներն ան-
հանգիստ կ'ընէին և զայթակեցնէին. տըն-
պահն Սիօն, յետ երկար համբերութեան՝
բողոքեց առ Հոգաբարձուս Ս. Մարկոսի,
որք պաշտպան էին Հայոց տան, վկայու-
թեամբ քանի մի բնակչաց նոյն թաղին (Ս. Յուլիանու), յամսեան մարտի 1573։ Հոգա-
բարձուք մէկ մէկ կանչեցին այս բանիս վկա-
յողները, որոց առաջինն էր Ս. Յուլիան
եկեղեցւոյ լուսարարն կիսասարկաւագ (ի
մայիսի 2), և կարդացին այդ երկուքին վրայ
գրուած ամբաստանութիւնները. սա ոչ միայն
հաստատեց զայնս երդմամբ, այլ և անոնցմէ
աւելի շատ բան կայ, ըսաւ. այսպէս ուրիշ
վկայներն այլ քննուեցան, որք աւելի կու^{մեղագրէին զԱղեքսանդր :} Թէ և հոգաբար-

1. Քանի մի տարի առաջ (1568) յիշուի ուրիշ Յա-
կոբ Մէրտինցի մ'այլ, որդի Առքենիմայ։

ձուաց վճիռն շեմ գտած, բայց անտարակոյս
է իրենց արդար և խիստ դատաստանն, գոնէ
ի Հայոց տունէն դուրս հանելն զերկուքն
այլ :

Նոյն օրեր և նոյն տարին (ապրիլ 22,
հոկտ. 7) Յակոբ ներկայացած է նօտարաց,
բայց ի՞նչ խնդրոյ համար՝ յայտնի չէ : Վատն
այն է, որ երկու տարի վերջը (1575, օգոստ.
22) Յակոբ նորէն կանչուած է յատեան Պաշ-
տօնէից քննութեան հայհոյութեանց, (Ese-
cutori alla Bestemmia), որք քննելով իր
դէմ եղած հայհոյութեան առաջին ամբոս-
տանութիւնը, նոյնպէս իրեն ալ երկու ան-
գամ տուած պաշտպանողական դրուածքները,
թէ և բոլորովին չդատապարտեցին զնա,
բայց յանդիմանութեամբ պատուիրեցին, որ
ինչուան տասն տարի շմտնէ ի տուն Հայոց.
Եթէ յանդզնի մտնել՝ ի Վենետիկ և ի սահ-
մանէն վլնտուի հինգ տարի . և եթէ այս
արգելմանս այլ հակառակ գործէ՝ բռնուի.
բռնողին 100 փոքր լիրայ տրուի վարձք՝ ա-
նոր ստացուածներէն . իսկ ինքն վեց ամիս
այս պաշտօնարանին բանտի մէջ մնայ, անկէ
ետեւ այլ՝ մինչեւ որ վճարէ զինքը բռնողին
վարձը . յետոյ նորէն աքսորուի : — Զօրու-
թեամբ վճռոյս յայտ է, որ Յակովը հեռացած
է ի Հայոց տունէն : 1583-4ին յիշուի բնա-

կած ի Ս. Մարիամ Խորոտիկ (S. Maria Formosa) թաղի, իբրեւ պարտատէր (21 դուկատի) Անկիւրացի Թուրքի մի, որ քրիստոնէութիւնը ընդունելով մկրտուեր և Թովմաս կոչուեր էր, բայց քիչ օրէն փախչելով բռնուեր և բանտուեր էր, և անկէ կու խընդրէր (6 հոկտ.) որ ի Դիրամասեղանի (Banca) դրած ստակն հանուի, վճարուի պարտքն առ Յակովի, աւելցածն այլ պահուի:

Նոյն տարին (1584, մարտ 5), Յակոբ ու ըիշներու հետ կու վկայէ Դասինիոս Արքանա կոչուած Հայու մի արդարութեան, զոր Մեսսենացիք ծովու վրայ բռնելով՝ տանջեր էին իբրեւ այլազգի, և նոս մահուանէ ազատելու համար՝ այնպէս եմ ըսեր էր. իսկ հիմայ Հայք ի Վենետիկ վկայեցին, որ ծանօթ և բարի քրիստոնեայ էր: Դարձեալ նոյն տարին (14 ապրիլ) Յակովի երկու իտալացւոց կու յանձննէ, որ իր մէկ առնելիք ստակը յԱնգոնա քաղաքի, պահանջեն անոնցմէ՝ որոց քով գտուէր, ազգային սափրիչի մի ձեռօք յանձնուած: Քանի մ' օր վերջը (29 ապրիլ), իր ուրիշ առնելիքի մի համար (66 դուկատ) ուլսւնք շինողէ մի, իրաւարար կու դնէ մէկը՝ որ ինչուան իրեք ամիս վճարել տայ, եթէ ոչ՝ ինքն կրցածը պիտի առնու պարտականէն: Իսկ իր որ և է ուրիշ առնելիքները պա-

հանջելու համար՝ գործակալ կու կարգէ զՄէրտէն Պարսկահայ՝ Ախմոնի յաջորդ տընապահը (յուլ. 7): — Երկու տարի վերջը (1586, սեպ. 29) դարձեալ գտուի Յակոբ առաջի նօտարի, ուր Բաղիշեցւոյ մի հետ (Գաբրիէլ որդի Կիբակովի) երաշխաւոր կ'ըլլայ Աշաճանի որդի Գևորգայ պարտուցը (100 դուկատ առ Յաջն. որդի Ճանիքէլի), և կու վճարէ 60 դուկ., Գարբրիէլ այլ 40. և այս երկուքն այլ մէկմէկու հետ կու դաշնադրին՝ այս տուածնին ինչ կերպով իրարմէ առնելու, և այլն: — Յաջորդ տարին (1587, մարտ 10), նօտարի առջեւ Յակովը թարգման կ'ըլլայ Յարութիւն Մէրտճան Բաղիշեցւոյ, որ կու վկայէր, թէ Յոյնք ի Տուրացցոյ՝ նաւուն մէջէն գողցան Հայոց ապրանքը և փախան:

Յակովբայ Մէրտինցոյ վերջի յիշատակն ի վենետիկ՝ է իր կտակն համառօտ, զոր զրել տուեր է (իտալերէն) ի 21 ապրիլի 1587 տարւոյ (Մարկ-Անտոն Ֆիկոլինոյ նօտարի). որով իրեն մէկ հատիկ ժառանգ և կտակակատար իր ամէն ստացուածոց և պահանջից կու հաստատէ՝ իր կինը կադարձնէ անուամբ, դուստր Անդրէի Դոկուլայ (Docula), Ուտինէ քաղաքին Արպա գեղէն, որ 350 դուկատի շափ օժիտ բերեր էր, Յակոբ այլ 50 դուկատ վրան աւելցուցեր էր նօտարի առջեւ

(ի 14 յուլ. 1579): Իր հայրենիքէն ելած
ատեն՝ հօն թողեր է եղեր առաջին կնոջմէն՝
աղջիկ մի. կու պատուիրէ, որ ի նշան սի-
րոյն՝ զըրկէ անոր 5 դուկատ: Նօտարն, ըստ
հրամայեալ օրինաց, կու հարցընէ, թէ բա-
րերարութեան Տեղեաց այլ բան մի կու թու-
ղուս. կու պատասխանէ. Այդ հոգը յանձնեմ
կնոջս, ինչպէս որ ուզէ՝ այնպէս ընէ: — Իրեք
օրէն վերջը (ապրիլ 24) կու վախճանի: Ի՞նչ
հիւանդութեամբ կամ քանի՞ տարուան, և
ուր թաղուիլն յայտնի չէ. որովհետեւ այն
եկեղեցւոյ (Նոր Ս. Յովհան, S. Giovanni
Նուօօ կամ in Olio), որոյ թաղին մէջ կու
բնակէր, այն տարուան մեռելագիրքն կորած
է, նոյնպէս մեծ Դիւանաց մէջ այլ: Բայց
փափագելի և յուսալին այն է՝ որ բարի մա-
հուամբ ջնջած ըլլայ տուած գայթակղութիւն-
ները, և ըստ կտակագրութեանն՝ աւանդած
ըլլայ զհոգին « առ Աստուած և առ Երկ-
նային արքունականս » . (Rendo l'anima a
Dio et alla Corte celestia). — Իսկ իր ամե-
նէն առաջին յիշատակն կ'երեւի որ ըլլայ Վե-
նետկոյ հոչակաւոր մայր եկեղեցւոյ (Ս. Մար-
կոսի) աւագ դրան քովի սեան վրայ փորելով
գրուածն. « Յովաննիսի որդի Յակոբ. Թա-
ղ. Ուլ » . որ է 1559, և այն սեանց և մօտի
որմոց վրայ բազմաթիւ փորագրուած Հայոց

անուանց մէջ սա հնագոյնն է ծանօթ թուականաւ:

Գ. Դրոմինիսս սպանող և սպանեալ: - Ըստ քաղաքական օրինաց՝ ամենէն յանցաւոր և շարագործ, և ըստ գործոյն պատուհասեալ՝ մէկ հատ Հայ. նախայիշեալ Յակովբայ և անկէ առաջ յիշուած գովելի անձանց՝ ժամանակակից եղած է Դրոմինիսս անուամբ մէկն, որդի Յովհաննու. որոյ ո՛ւր տեղացի ըլլալն յայտնի չէ, որովհետեւ իրեն համար եղած քննութեանց զրուածքն այլ չկան կամ զրտուած չեն. իր անունէն կրնայ կարծուիլ, որ ի Զահկեցոց ըլլայ. բայց քիչ մի յառաջ յիշուած Դրոմինիկոս մ՞ այլ տեսանք՝ որ կիւիկեցի էր, և քաղքին անունէն Ատանա կոչուած, ինչպէս իր եղբայրն այլ, և ընկերներն այլ Ասեցի էին. ասկէ զատ երբեմն Վենետիք Հայոց յարմար անուններն իտալերէն կու թարգմանէին, որով կրնայ ըլլալ որ այս Դրոմինիկոս կոչուածն այլ ըլլար Տիրատուր մի, կիրակոս մի, և այլն. Աակայն ինչ ալ ըլլայ անունն, զայն կրողն անարգեցու սեւցուց, և այնքան Հայոց բարի և պայծառ անուանց մէջ ի Վենետիկ՝ բիծ մի ձգեց. բայց գարձեալ այդ բիծն իրմով սկսած և իրմով վճարուած՝ ուրիշի վնաս չըրաւ, և օտարոտի բան մի համարուեցաւ Հայու հա-

մար այդպիսի գործ . որ էր մարդասպանութիւն , ազահութեան կամ ընշասիրութեան պատճառաւ : Գործոյն հանգամանքն անծանօթ են , վերը յիշած դատաքննութեան գըրուածոց անյայտութեան համար . յայտնին այս է , որ 1577ին վերջերը կամ յաջորդ տարւոյն առաջին օրերուն , այդ անարժան Հայն կու բնակի եղեր ի տուն մի (ի Ա . Մարիամ Խորոտիկ թաղի) ուր բնակէր և Խօնա Հասան աղայ Կիլանցի Թուրք մի՝ հպատակ Պարսից և գործակալ Եռուսուփ Ազէմ (կամ Ազէմ) մէկու մի : Ասոր քով եղած մետաքսի ծրաբները և ուրիշ ապրաքներ , հաւանօրէն և ստակ , տեսնելով Դոմինիկ՝ կու սպաննէ զնա , գուցէ ուրիշներու գործակցութեամբ , ինչպէս կարծուեցաւ , այլ չըստուգուեցաւ : Տէրութեան Հասարակաց փաստաբան անուանեալ պաշտօնէից մէկն (Andadori de Comuni) բռնեց զնա , և իմացուց եղեանագործութեանց (al Criminal) Տան դատաւորաց , որք պատուիրեցին (10 յանուարի , 1578) , եղածը լաւ ստուգելու համար , թէ զանիկա և թէ ուրիշ կասկածեալ անձինքը ստիպել , նա և տանջանօք , խոստովանելու ըրածնին կամ չըրածնին : Ասոնցմէ մէկն էր Ծանեդրոյ (Յովհաննուկ , Zaneto fö de Andrea) թիավար կամ թիագործ մի , զոր

փորձելով ի բանա ձգեցին, բայց չկրցան յանցանքը ստուգել, և առ ժամանակ մի բան տէն ազատելու հրաման տուին : Ինչուան ամսոյն 28, դեռ Դոմինիկոսի յանցաւոր ըլլալն այլ անտարակոյս չէր. նոյն օր Եղեռնաքննին ատեանն՝ պաշտօնէիւքն և ընկերակցօք, միանգամայն 28 անձինք, խորհուրդը թէ արդեօք ստուգելու համար տանջել տան զնա . մեծ մասն խորհրդակցաց (17) այսպէս ընելու քուէ տուին : Երկու օր վերջը, այս բանս հոգալու՝ գլխաւոր դրին իրենցմէ մեկը Յիլիպ. Ալբերդ Կոշուած, (Capo nel caso dell' Armeno. Ph. Alberto), որ շուտով կատարեր է ընելիքը, և պարտաւոր յայտներ է զԴոմինիկ : Բանի մ'օրէն (5 փերբ.) նորէն ժողովելով 13 խորհրդականք, 12 քուէիւք վճռեցին մահապարտութեան սոսկալի վճիռ մի, այնպիսի յանցանաց դէմ սաստիկ և քիչ մ'այլ բարբարիկ օրինօք ժամանակին : Այսինքն, յանցաւորը դնելով բեռնակիր նաւակի մէջ անցընել քաղքին անուանի մեծ ծովային ջրանցքէն (Canal Grande), և հանել ի Փոքր Հրապարակն . հօն յանցաւորին աջ ձեռքը կտրել և վզէն կախել, ու զինքն ի ձիու մի ագի կապած՝ քաշտանել մեծ Հրապարակին մէջ . յետոյ տանիլ նոյն Փոքր Հրապարակին ծովեգերքը եղած

երկու մեծ և հաստ սեանց մէջ տեղ (որք ինչուան հիմայ կանգուն են), և բարձրաւանդակի մի վրայ գլուխը կտրել, յետոյ մարմինը չորս կտոր ընելով կախաղանի վրայ թողուլ բոլոր այն օր։ Թէպէտ այս պժգալի վճիռը տուին, բայց կամ ազգայնոց աղաշանօք կամ ուրիշի՝ նորէն միաբան քուէարկութեամբ (14 անձանց) քիչ մի կակղացուցին։ և հրամայեցին երկու օր վերջը առաւտուն (7 փեբր.) միայն տանել զյանցաւորը և կախել յիշեալ երկու սեանց մէջ, և ինչուան իրիկուն կախած թողուլ։ Այնպէս եղաւ. և նոյն իրիկուն այլ թաղուեցաւ մարմինն, ինչ կերպ որ թաղուէին մահապարտք. և այսպէս կու նշանակէ Ա. Մարկոս եկեղեցւոյ մեռելագիրքն⁽¹⁾։

Ութ ամիս վերջը Եռւսուֆ Պարսիկն աղերսագրով խնդրեց ի Ծերակուտէն, որ իր երկու ծրար մետաքսը՝ զոր յանձներ էր սպանեալ Խօճայ Հասանայ, և դատաւորք գրաւեր պահեր էին, տան իրեն. Ծերակոյտն այլ յանձնեց Վաճառականութեան 5 Գիտնոց՝ քննել և ըստ արդարութեան կատարել։

Դ. Պարտքի համար շատեր բանտարկուած

1. 1577 (1578) A di 7 (Feb.) fù appiccato Domenego Armeno, d'ordine dellli Ecc. Capi de X. et fù sepolto.

են, նա և երկար տարիներ, և յետոյ արձակուած. բայց թերեւս բանտողքն աւելի յանցաւոր ըլլան՝ քան փորձանքի եկած բանտեալքն։ Անիրաւութեամբ յանցաւորք յիշուին քանի մի, Հայոց բազմացած ատեն ի Վենիստիկ (ի կէս Ժէ դարու). ինչպէս, Պետրոս Ալեքսանդր (1649) որ Խագենարեց (Աղեքսանդր) անուամբ ազգակից մի ծեծով վիրաւորեր էր (5 յուլ.), ուրիշներու դրդմամբ. անոր համար բանտուած, և երաշխաւոր դնելով արձակուեր էր. իսքէնտէր բողոքեց տէրութեան (28 յուլ.), և իր արեան տոյժը պահանջելով՝ խնդրեց որ նորէն դատուի Պետրոս, ոչ առաջուան քննողներէն, այլ վաճառականութեան հոգցող 5 Գիտուններէն՝ որոց յանձնուած էին Հայոց խնդիրներն։ Ծերակոյտն պատուիրեց առաջին քննող պաշտօնէից՝ որ ստոյգ և երդուեալ տեղեկաւթիւն տան. զոր և անշուշտ ըրած են. բայց խնդիրն ինչպէս վերջացեր է, չեմ գտած։

Ե. Աւելի յանցաւոր Աստուծոյ քան թէ մարդկան՝ Յակոբ Գալուստյան, հայհոյութեանց համար դատապարտեցաւ (1651, յան. 15) երեք տարի թիավարութեան, ի խալէս (բերդանաւ). և թէ անկարող էր՝ վեց տարի մութբանտի մէջ կենալու. նա կարող գտուեցաւ, և փոխանակ երեք տարւոյ վեց տարի աշխա-

տեցաւ Տանտոլա կոչուած խալէի մէջ. որ
երբ դարձաւ ի Վենետիկ (1657ին), Հայք
աղերս տուին տէրութեան (19 նոյեմբ.) ա-
զատելու զԳալուստ, որովհետեւ վճռուածէն
աւելի ատեն պատժուած էր. խոստացան
պարտքերն այլ վճարել: Տէրութիւնն գրեց
Դալմատիոյ և Ալպանիոյ պաշտօնէից (22
նոյեմբ.). որք արդէն վկայեր էին անոր ծա-
ռայութեանը և ազատութեան արժանի ըլ-
լալուն), որ լաւ քննեն, թէ արդեօք նորէն
յանցանք ըրած է, կամ պարտք ունի. և
մինչեւ որ այս բանս ստուգուի՝ նա մնայ ի
մութ բանտի: Ունէր պզտիկ պարտք մի 89
լիրայից, զոր Հայք պիտի վճարէին: Այս
խնդրոյ վերջն այլ չեմ դտած. բայց անտա-
րակոյս ազատուած է Գալուստեանն. վասն
զի Հայք ոչ միայն պարտքը վճարել խոստա-
նային, այլ և երաշխաւոր ըլլալ. տէրութիւնն
այլ իր պատուիրագրին մէջ խնամով կ'ըսէ,
որ Հայոց երախտաւոր ազգը հաճելը՝ իրեն
(տէրութեան) ալ օգուտ է⁽¹⁾:

Զ. Վենետիոյ զգաստ (երբեմն և չափա-
զանց այլ) տէրութիւնն՝ ամէն տեսակ բանի

1. L'istanza si riconosce giusta, et riguarda
anco il publico servitio nel consolar Natione
tanto benemerita.

տեսող, քննող և պաշտօնեայ դրեր էր. բայց
երբեմն երկու տարբեր բանի պաշտօնեայք՝
տարբեր կերպով ալ կու դատէին նոյն մէկ
բանը, ինչպէս այս երկու յիշեալ դիպուած-
ներէն կրնայ գուշակուիլ. երբեմն այլ իրենց
շահուն համար խստութեամբ կու դատէին.
ինչպէս հետեւեալ դիպուածն ալ, որ վերոյի-
շեալներէն առաջ եղած է (1643): Յակոբ որ-
դէ Սահակայ և Պալք՝ որ այն ատեն Հայոց
մէջ գլխաւոր սէնսարք էին, ազգայնոց և
Պարսից համար երկու տուն վարձեր էին.
Նոր արդարութեան կոչուած պաշտօնեայք պար-
տաւորեցին զանոնք՝ իրեւ յանցաւոր. վասն
զի տուն կամ իջեվան վարձքի տուողք (al-
bergatori) պարտական էին, ըստ օրինաց,
հարկ կամ մաքս մի վճարել: Պալի և Յակոբ
բողոքեցին գրով առ Դուքսն (23 սեպտեմբ.),
թէ իրենց ըրածն ոչ էր ստէպ վարձքի տալ
այլ ձրի բնակութիւն տալ, որպէս զի յոր-
դորուին Հայք աւելի գալ և շատ վաճառք
բերել: Տէրութիւնն յանձնեց Ե Գիտնոց
քննել. ասոնք արդարացուցին ամբաստա-
նեալները, վկայելով որ անոնք ոչ թէ վարձք
կ' առնուն ի վաճառականաց, այլ անոնց ծա-
խուած վաճառքէն օրինաւոր սէնսարչէքը. և
պէտք չէ այս բանիս համար նորութիւն կամ
արգելք մ' ընել Հայոց, այլ թողուլ իրենց

աղատութեանը: — Փանի մի տարի վերջը (1650) այսպիսի բան մ”ըրին նոյն պաշտօնեայք ուրիշ երկու Հայ վաճառականաց դէմ (Մարտիրոս և Պետրոս), որք 140 դուկատի տուն մի վարձեր էին իրենց ազգայնոց համար. բողոքեցին Հայք իրենց նեղութիւն տուղղներուն դէմ. տէրութիւնն այլ ըստ սովորութեանն՝ յանձնեց Ե Գիտնոց. ասոնք արդարացուցին զՀայս, մանաւանդ թէ յարչ մար և լաւ համարեցան որ Հայք միատեղ կենան՝ քան թէ ցրուած. և շըլլայ որ այս բանիս համար նեղուելով՝ փոխանակ ի Վենետիկ գալու՛ երթան ի Լիվոռնոյ կամ ի Ճենովա:

ԺԱ.

Ա. ՍՅԵԳԱՆՈՍ Ե ԿԱԹՈՂԻԿԱԾ, Բ. ԹԱԴԵՈՍ ԿՐԴ.

Ա. Հայոց ԺԶ դարու ի Վենետիկ պէս-
պէս նշանաւոր երեւութից մէջ մէկն այլ է
իրենց կաթողիկոսաց գալուստն. և թերեւս
և առաջին անգամն ըլլայ Հայոց եկեղեցւոյ
գլխոյն գալն յարեւմուտս, թէպէտ և ԺԱ.
դարէն կարծուի Գրիգորի Վկայասիրի հան-
դիպիլն ի Հռովմ, և իրմէ վերջը Ռուբի-
նեանց իշխանութեան ատեն՝ այլոց, բայց
ասոնք դեռ երկրայականք են: Իսկ այս ա-
տեն եկողաց առաջինն Սուբինս Ե Սալմա-
տացի (ի կէս դարուն, 1550) իր մէկ կոն-
դակին մէջ ի Հռովմ գրուած, կու վկայէ
հօն կենալը վեց ամսէ աւելի: Կոնդակին
պատճառն այլ է վկայական մի՝ զոր տուեր
է (սեպտեմբերի 6ին) Պետրոս անուամբ Ելու-
ղացի երիցու մի, ձեռնադրելով զնա արք-
եպիսկոպոս իր երկրին, Մահլուզայ գաւառին
(որոյ աթոռն էր ի Ֆարակյ), ի փոխարէն
իրին ըրած ծառայութեանն և առաջնորդու-
թեան առ Սրբազն Պապն և առ մեծա-
մեծս, միանգամայն և մեծ սիրոյն « ի վերայ

մեր ազգին » • որոյ համար և իրեն Երեխոյան և վատիլ կարգէ Հայոց, « Մեծ Հռոմայ » Եկողին և գնացողին . զորն որ սա կամենա՝ » ընդունէ, և զոր չկամենա՝ ճանապարու դնէ . » վասն այս պատճառի, զի բազում անրան » մարդիկ կու գան և նախատինք կու վաս . » տակեն Հայոց ազգիս » : — Թողլով իբրեւ մեր նպատակէն դուրս քննել կաթողիկոսին գործերն ի Հռովմ, մեր յիշելիքն է իր հանդիպիլն ի Վենետիկ, որոյ հաւաստիքն է յանձնարարութեան կամ ընծայական գիր մի, զոր գլխաւորք Հայոց հպատակք Թահմազայ յաջորդին Շահ Իսմայէլի (որոյ համար զիրենք Պարսիկ կ'անուանեն), գրած են առ Դուքսն և առ մեծամեծ պաշտօնեայս Հասարակապետութեան Վենետիկոյ : Գրուածին հայերէն բնագիրն չէ յայտնուած, այլ իտալերէն թարգմանութիւնն կայ, յորում կու պակսին (ցանկալի) անուանք գրողացն, այն ատենի մեծամեծացն Հայոց . գուցէ առանձին ծածուկ նշանակած ըլլան, վասն զի զգուշաւոր գրուածքին քանի մի խօսքէն գուշակուի . որ քաղաքական խնդրոյ համար էր կաթողիկոսը ղրկելնին . Պէսպէս թուականօք գրուած է թուղթն. « Ի 6970 ամի սկզբան աշխարհի, » 1547 ամի Մարդեղութեան Աստուծոյ, 1400 » ամի (նոր) թուականին Հռովմայ, ի ԶԼԶ

» (996) Թուականին Հայոց, յերկիրն Արա-
 գ բադայ, ի կողմանս Եփրատայ և Տիգրիսի
 » մեծամեծ գետոց, ընդ հովանեաւ Մաքիտ-
 » (Marcat, Մասեաց)? լերին, ուր է տուն
 » Նոյի, ի սահմանս Վաղարշապատ քաղա-
 » քին, մերձ յաստուածաշէն եկեղեցին Եջ-
 » միածնի (1) » : Թղթոյն այս վերջաւորու-
 թեան համեմատ է և սկզբնաւորութիւնն;
 որոյ վերնագիր գրած է թարգմանն՝ « Աղեր-
 » սագիր տերանց Հայոց, (Supplica dell'i-
 » Signori Armeni). Ո՛վ աստուածահիմն և
 » քրիստոսաշէն և 'ի Հոգւոյն Սրբոյ պահ-
 » պանեալ քաղաք Վենետիկ, զոր ունին և
 » բնակեն ուղղափառ տեարքն Վենետիք. ով
 » ամենայն քրիստոնէից և ամենայն մոլո-
 » րելոց նաւահանգիստ և ապահով օթեվան.
 » դու ամենայն քաղաքաց քրիստոնէից հարսն
 » ես, և ամենայն աշխարհի հաւատարիմ ո-
 » թարան. Աստուած ներշնչեց ի կուրծս հիմ-

1. Scritto nel principio del mondo 6970 anni,
 et dalla Incarnazione di Dio 1547, e dal n. di
 Roma 1400, et dal principio dei Armeni, 996,
 nella regione di Arrarath, alla parte di Efrate
 et Tigri fiumi grandi; sotto l'ombra del monte
 Marcat, dove è la casa di Noe, per mad. della
 città Vagachabath, nella parte della Iddio-fab-
 bricata Chiesa, che ha il santo Unigenito.

» Նադրաց նորին, որում զարմանայ ամենայն
 » աշխարհ, թէ ի՞նչպէս հիմնեցար ջրոց վրայ,
 » այնպէս լաւ զետեղուած, ինչպէս կ'ըսէ
 » մարգարէն. Գնացք գետոց ուրախ առնեն,
 » և ալիք ծովուց ամրանան. իշխանուհի (Im-
 » peratrice) ծովու և ցամաքի. յիրաւի մար-
 » գարէական հոգւով քեզի համար ըսուած
 » է, և քեզի համար կայ և մնայ ըսուածն.
 » Որոտաց Տէր ի վերայ ջուրց բազմաց : Ո՛վ
 » աստուածապահ քաղաք, որպէս Գիրք ա-
 » սեն, Հրեշտակք նորա շուրջ զնովաւ են:
 » Աստուած դրաւ ի քեզ մշտնջենաւոր թա-
 » գաւորութեան աթոռը. քեզմով շատ ան-
 » գամ քրիստոնէութիւնն պաշտպանեցաւ:
 » Ուրեմն կեցցես ուրախ, որ քեզի նշան և
 » պաշտպան ունիս զմեծ Առիւծն, ամենէն
 » ուժովն և զօրաւորն ի կենդանիս, զՄար-
 » կոս աւետարանիչ, Դպիր Բարձրելոյն, և
 » դրօշ յաղթական թշնամեաց : ... Ո՛վ վեհ
 » քաղաք Վենետիկ, հիմնեալ ի բանն կեն-
 » դանի, և իմաստուն աթենական աթոռ բո-
 » վանդակ աշխարհի. գիտնագոյն ապաստա-
 » նարան և անյաղթ վահան հոյակապ իտա-
 » լիոյ (Invincibil scudo della superba I-
 » talia), մանաւանդ թէ պաշտպան բովան-
 » գակ քրիստոնէութեան, թէ խոհեմութեամբ
 » և թէ զինուք, նուաճելով զյանդուգն թըշ-

» Նամին ճշմարիտ հաւատոց : Քեզ, ով գե-
 » ղեցիկ Վենետիկ, քեզ կու վայլէ ճշմար-
 » տապէս կոչուիլ թագուհի աշխարհի, ամե-
 » նագեղեցիկ դիրքով, ուր առատապէս կու
 » հոսին հարատութիւնք ծովու և բարիք ցա-
 » մաքի : Եւ թէպէտ հեղինակութեամբ Ա-
 » ռաքելոյն Պետրոսի՝ Հռոմ քաղաքն է գե-
 » րիշխան (¹), սակայն դու վեհ քաղաքդ
 » Վենետիկ, դու բանալի և փականք ես բո-
 » վանդակ քրիստոնէութեան » : . Յետ այլ
 եւս այսպիսի գովութեանց՝ կու դառնայ գրիշն
 առ դուքսն, զինքը « չձանձրացընելու համար »,
 կու մաղթէ իրեն անկէ՝ « որ կու վարէ
 » գերկինս և կու պահէ քաղցր ներդաշնա-
 » կութեամբ՝ յանդադար շարժման, միշտ
 » օրհնութեամբ պահպանել, բոլոր քո զա-
 » ւակագդ : Եւ որովհետեւ պարզ ես մտօք,
 » որպէս հաւատամ և սրտիւ, սովորական
 » կերպովդ ընդունէ իմ գրեթէ բարբարոս
 » կերպով խօսուածս, և մեր տգիտութեան
 » պակասութիւնը լեցու քու գերագոյն իմաս-
 » տութեամբ : ...

» Մենք գիտեմք ստոյգ որ մեր Հայ ազգն

1. E benchè per l'autorità di Pietro apostolo la città di Roma tiene il principato, nientemeno tu, alma città di Venezia, sei la chiave e serraglio di tutta la cristianità.

» ի տերանց Վենետուաց շատ սիրուած և
 » գգուած է . որոյ համար՝ նախ ի կողմանէ
 » Առաքելոցն Բարդողիմեայ և Թաղէոսի ող-
 » ջոյն կու ղրկեմք սուրբ նշխարաց Ս . Մար-
 » կոսի՝ առաքելոյ և աւետարանչի . և ի կող-
 » մանէ մեր համօրէն եպիսկոպոսաց , վար-
 » դապետուաց և բովանդակ կղերին , և ամե-
 » նայն ազնուականաց և բովանդակ մեր ազ-
 » գին , խոնարհելով կու պատուեմք և կ'ող-
 » ջունեմք ձեր փառաւոր և յաղթական դրօշը ,
 » համբուրելով գոտս ձեր ամենապայծառ
 » Գլխոյն , Արբազան ժողովոյ կատարեալ
 » թուով Տասանց , ըստ օրինակի տասն Պա-
 » տուիրանաց , կատարեալ խորհրդարանի
 » Քառասնից , ժողովոյ ատենակալ Ծերու-
 » նեաց (Pregadi) , և քու ամենայն իմաս-
 » տուն պաշտօնէից . գերյարգելի Պատրիար-
 » քին , և ամենայն առաջաւորաց (prelati) ,
 » քահանայից , քարողչաց , վարդապետաց ,
 » և քո բովանդակ հաւատարիմ ժողովը-
 » դեանդ : — Եւ մենք խեղճ Հայքս ի մասին
 » Պարսից , ի ներքոյ խիստ տառապանաց
 » այլաղենից , կու սպասեմք ձեր գալուն , ինչ
 » պէս սուրբ նախահարքն սպասէին փրկչին
 » Փրիստոսի : Գիտեմք որ ի զգօնութենէ տե-
 » րանց Վենետուաց պիտի սկսի մեր փրկու-
 » թիւնն և ազատութիւնն : Կ'ուղարկեմք մեր

» պատրիարքը Առեխանոս, շատ պատճառաց
 » համար, առ մեծապայծառ տէրութիւն ձեր,
 » որ յարգութիւն ընծայէ ձեզ, և մեր կող-
 » մանէ յանձնէ զմեզ առ ձեզ, և յետոյ
 » շնորհք ընէք իրեն որ կարենայ երթալ և
 » համբուրել զստս ամենասրբազան Պապին:
 » **Փառք Աստուծոյ:** »

Այս գրուածէն զատ վկայութիւն մի չեմ
 գտած Ստեփանոս կաթողիկոսի գալուն և
 գործոց ի Վենետիկ. բայց շատ հաւանական
 է, որ բաւական ատեն մի կեցած ըլլայ ի քա-
 զաքիս, և հետն այլ մեծաւոր, փոքրաւոր և
 ընկերներ ունեցած ըլլայ, և յառաջ քան ի
 Հռովմ' այս տեղ Դքսին յայտնած՝ իր գա-
 լուն պատճառը, կամ պատճառները՝ ըստ
 բանից աղերսագրին. որ բաւական հմուտ և
 ծանօթ կ' երեւի Վենետիկոյ տէրութեան կա-
 ռավարութեան, պաշտօնէից և օրինաց, միան-
 գամայն և վկայ Հայոց յաճախելուն և ընդ-
 ունելութեանն ի Վենետիկ:

Բ. Քառորդ մի դարու յետ Ստեփանոսի
 եկած է ի Վենետիկ միւս (Զ) Ստեփանոսի
 աթոռակից կաթողիկոսն Թադէոս, և գտուած՝
 նշանաւոր դիպուածի մի ատեն, սոսկալի՝ միան-
 գամայն և սխրալի. այն ահաւոր մարդածախ
 ժանտամահի տարին, յորում Հայն Անտոն
 իր հնարած դեղովն շատեր ազատեց և տէ-

բութեան երախտաւոր ճանչցուեցաւ (տես եր. 260). Դուքսն, պաշտօնեայք և բոլոր քաղաքացիք ուժատեցին Աստուծոյ՝ ժանտախտը դադրեցընելու համար շինել եկեղեցի մի, ինչպէս յիշած եմք. խնդիր եղաւ տեղւոյն վրայօք՝ զանազան կարծեռք, վերջապէս հաւանութիւն և վճիռ եղաւ կանգնել քաղքին դիմացը և անոր մասն համարուած Ծռուեկա կամ Ճէռուեկա ըառւած երկայնաձեւ կղզւոյն (որոյ համար և Երկայն փուշ կ'անուանէր, Spina lunga) վրայ շինել, և յանձնել հօն նոր եկած և հաստատուած Վեղարաւոր (Գարուշին) և աղքատ կրօնաւորաց, որ այն ատեն կու բնակէին մօտ Ս. Մարիամ Հրեշտակաց կոչուած փոքրիկ եկեղեցւոյ մի, և ուրիշ երկու անոր նմանեաց քով, զորոնք շիներ էր տիկինն Ֆիորենցա, քոյր վերջին Հայոց թագուհի անուանեալ Կատարինեայ Գոռնարոյ (տես եր. 191), և սոյն ինքն թագուհին, կ'ըսուի, իր խոստովանահօր խրատով կտակած էր հօն շինել տալ եկեղեցի մի և Անապատ մի առանձնասէր միայնակեցաց համար։ Եկեղեցեաց կամ մատրանց շինութեան տարիներուն (1530-41) այն կողմեր եկած էին յիշեալ Վեղարաւորքն, և խեղճ բնակարան մի հաստատած էին, զոր քանի մի տարի վերջ (1548) սաստիկ փոթորիկ մի կործա-

Նելով, ստիպուեցան Յիորենցայի շինածներուն քով գալ և բնակիլ. հաւանութեամբ Պապին և Վենետիկոյ Դքսին։ Սա հիմայ վճռեց անոնց յանձնել շինուելու ուխտական եկեղեցին. և երբ հրաշալի կերպով գրեթէ մէկէն ի մէկ դազրեցաւ ժանտախտն, բոլոր քաղաքացիք Վենետիկոյ՝ ի դքսէն մինչեւ ի յետին ռամիկն՝ ուզեցին թափօրով և նաւակամրջով երթալ այն նոր շինուելու եկեղեցւոյ տեղը։ Թափօրին գլխաւոր կազմողք էին եկեղեցական ուխտն և բարեպաշտ ընկերութիւնք, դաս դաս, պատիկներէ կամ վարի աստիճանի դասէն մինչեւ ի բարձրագոյնն, որ ամենէն վերջը կու գար, և էր Պատրիարքն Վենետիկոյ. ասոր անմիջապէս առջեւէն կ'երթար՝ մեր Թաղէսս կաթողիկոսն, (21 յուլիսի, 1577), իրմէ այլ առաջ Ա. Մարկոս մեծ եկեղեցւոյն աւագերէցն. որ է ըսել՝ թափօրին մէջ յետ պատրիարքին Վենետիկոյ՝ ամենէն պատուաւոր տեղն ունէր Հայոց պատրիարքն, ինչպէս և կու վայլէր իր աստիճանին. և կերպով մի աղօթակից և օրհնիչ եղաւ թէ իր հօն գտուած ազգայնոց և թէ զազգայինս հիւրընկալող քաղաքացեաց։ Ինչո՞ւ համար եկեր էր կաթողիկոսն ի Վենետիկ, և Երբ, և ո՞ւր գնաց ասկից. չեմ գիտեր. իսկ ո՞րչափ ատեն բնակեցաւ. — քանի

մի ամիս. (vi stette alquanti mesi) կ'ըսէ կետք Վեչելվոյ, եղբայր գերահոչակ պատկերահանին (Տիցիանոյ, որ՝ 100 տարուան ծեր հասակովը վերոյիշեալ ժանտամահին զոհ եղաւ, 1576). կեսար այլ անուանի և պիտանի պատկերհանական գործոյ մի կու գրադէր այն ատեն. զանազան ազգաց և տեղեաց զգեստուց տարազները օրինակելով, որոց մէջ կան և Հայք՝ Փոքր Ասիոյ և Կիլիկիոյ կողմանց, որոց ազնուականաց հագուստը նման կու գտնէ կաթողիկոսին հագածին, քիչ տարբերութեամբ, (con simile habito, con roca differenza), և այնպէս ներկայացընէ:

Թագէոսի այս ատեններ յիտալիա գտնուելուն՝ կարծեօք մէկ պատճառն կըրնայ ըլլալ 1575 տարւոյ Հռովմայ կրօնական յորելեան տարին, յորում՝ պատմիչ մի Յորելինից կու վկայէ՝ որ նա և շատ Հայք եկած էին. զնոյն վկայէ և դեսպանն Վենետուաց որ ի Հռովմ, նոյն կամ նախընթաց տարին Հայոց հանդիպած բանի մի առթիւ: Ասոնք այս Յորելինի հոգեւոր շնորհաց սիրով վենետկեցի նաւով մի կու գային Ասորւոց ծովեզերքէն, ապրանքներ ալ բերելով. երբ Տոսկանայի դքսութեան ջրերու հասան, այն տէրութեան մեծ բերդանաւ մի (կալէոն) բռնեց վենետկեցի նաւը, և մեր Հայոց ստացուածքը գրա-

ւեց, իբրեւ այլազգի հպատակաց։ Հայք ի Վենետիկ դիմեցին առ դուքսն, նոյնպէս և ի Հռովմ առ դեսպան դըքսին։ ասոնց գլուխ կեցաւ իրենց ազգակիցն Առվտանդը, թերեւս նոյն Հայոց տան վերակացուն՝ զոր յիշեցինք ասկէ առաջ (տես եր. 309), և հետն առնելով զանոնք՝ գնաց ի Ֆիորենցա, անոր դըքսին աղաչելու, որ հրամայէ Հայոց ինչքը տալու անոնց. դուքսն մերժեց խնդիրը և խնդրող ները, ըսելով, թէ փոխանակ ուրիշի դիմելու՝ պէտք էր որ Ա. Պապէն գիր բերէիր. նա ինձ պատուիրած է այդպիսեաց ստացուածքը բոնել։ Աղեքսանդր այս բանս գրեց ի Հռովմէ (15 յանու. 1575) առ դուքսն Վենետիկոյ. նոյնպէս՝ գրել տուաւ նոյն օր և անոր դեսպանին. սա՝ գրով կու հարցընէր դըքսին՝ թէ ի՞նչ պէտք է ընել. դուքսն ալ պատասխանեց, որ պաշտօնապէս բան մի չընէ, այլ իմացընէ Հայոց՝ որ եղածին վրայ կու տհաճինք և կու ջանանք օգնել Թուրքաց հպատակաց այլ։ Փանի մ' օր վերջը (29 յանու.) դեսպանն նորէն գրելով իմացուց դըքսին՝ որ Հայք Տոսկանայի դըքսին հարազատ Մէտիշի կարդինալը միջնորդ բոներ են, և Պապն գրեր է ի Ֆիորենցա՝ որ Հայոց խնդրածը տրուի։ Զեմ տարակուաիր որ այնպէս այլ եղած ըլլայ, և Հայք թէ ա-

պրանքնին վաստվկած ըլլան և թէ Յորելեանը:

Գրուածիս այս մասին նպատակ՝ Հայոց կաթողիկոսաց ի Վենետիկ գալուն յիշատակն՝ խառնուելով և Վենետիկոյ ընդ Հռովմայ, անցողաբար ըսենք, թէ կարծելի է որ Սոյ Ազարիս կաթողիկոսն այլ՝ դար մի վերջը ի Վենետիկոյ անցած ըլլայ, յերթալն ի Հռովմ, ուր երկար ատեն ապրելով՝ 92 տարուան վախճաներ է ի սկիզբն անցեալ դարու (1710):

Գ. Եթո կաթողիկոսաց նախապատիւ Պատրիարք մ' այլ կոստանդնուպօլսի Հայոց՝ Թովման, կու յիշուի մօտ ի վերջ ԺԶ դարու, աթոռէն հրաժարելէն ետեւ եկած և բնակած ի Վենետիկ. քաղքէս ելնելու ատեննն այլ իր եղբօր կամ քեռ որդուոյն՝ Անկիւրացի Խոռըտալչի կու թողու իր կահ ու կարասիքը և ի փոխ տուած ստակները, զոր Մարէն Մառքտար Հայ սէնսարն ժողովելով ի պարտականաց՝ կու յանձնէր անոր:

Աւելորդ է այս տեղ յիշելն այլ թէ ասոնցմէ դարերով առաջ և ետքը՝ շատ Հայ եպիսկոպոսներ եկած և աւելի կամ պակաս ժամանակ կեցած են ի Վենետիկ, ինչպէս յիշած այլ եմք զոմանս. Թովման (եր. 160), Այարտիրոս Եզնկացի (եր. 194), և մեր պատմութեան ներկայ յեղանակիս (1543) Հայոց

տան մէջ բնակող եպիսկոպոսն , որու՝ իր հայրենիքը դառնալու ատեն՝ տէրութեան և Հայոց տան Հոգաբարձուք՝ քանի մի դրամ տուին յողորմութիւն . — Յամի 1561 Նէկոլյան եպիսկոպոս Միաբանողաց Նախճաւանի . և մեր պատմածներուն աւելի մօտ տարիներ կու յիշուին ի 1565 , Մետիւեդ եպիսկոպոս , զոր յիշէ Արգար տպագիրն Սաղմոսի՝ « առ ոտս Միքիսեղեկ եպիսկոպոսին , ի մայրաքաղաքն ի Վանատիկ , ընդ հովանեաւ Ա . Մարկոս աւետարանչին , ի Հայոց Հոգետունն , ի Ժամանակ Ալունին : » Ինչպէս յետինս Հայոց տնպահն կամ վերակացուն էր , հաւանական երեւի Արգարու խօսքէն՝ որ Մեգիսեղեկ եպիսկոպոսն այլ անոնց հոգեւոր առաջնորդն ըլլայ , որոյ « առ ոտս » յիշելն՝ հաստատուն կեցող ոտք երեւցընէ և ոչ պարզապէս անցորդ մի . բայց և ոչ միշտ կեցող համարելու է , այլ գոնէ քանի մի տարի , և յետոյ իր երկիրը կամ աթոռը դարձող : 1560 թուականէն մինչեւ ի 1627' Մեգիսեդ կաթողիկոսն ալ համրելով՝ հինգ Մեգիսեդ եպիսկոպոսք յիշուին մեզի ծանօթք ի պատմութեան կամ ի յիշատակարանս գրոց . գուցէ ասոնցմէ մէկն ըլլայ , մանաւանդ Արգարու հայրենեաց մերձաւորն և յիշեալն յետոյ յամի 1600 , ի Մերաստիա :

Դ. Աւելի մերձաւոր ժամանակ, տասն
տարի Մելքիսեդէն ետեւ (1575), յերեւան
կ' ելնէ աներեւութանալու մօտ (այսինքն մա-
հուան), և գուցէ այն տարի նոր սկսած ժանտ-
ախտին ազդեցութեամբ, Զատարէտ որդէ կէ-
րտէսէ եպիսկոպոս մի, «րոյ թեմն այլ յիշուի՝
իր իտալերէն գրել տուած կտակին մէջ, այլ
չեմ կըրնար ստուգել այդ տեղը կամ ա-
նունը, որ գրուած է Rassan կամ Rasson,
Ռասան, Ռասան։ Համառօտիւ կ'ըսէ կտա-
կագիրն. « Ես Զաքարիա եպիսկոպոս Ռա-
» սանայ, որդի հանգուցեալ կիրակոսի Հայոյ...
» հեռու գտուելով իմ տունէս և հայրենիքէս,
» չուզելով ինձմէ վերջ առանց կարգի և
» պատրաստութեան թողուլ իմ բաներս,
» կանչել տուի Պետրոս-Աբրահամ հասա-
» բակաց նօտարը, իմ բնակութեանս տունը,
» ի Ս. Յուլիան թաղի (ուր որ է և Հայոց
» տունն), և ստորագրեալ թարգմանաց բեր-
» նով, քանի որ միտքս առողջ է, թէ և
» մարմնով հիւանդ եմ, ուզեցի գրել տալ իմ
» վերջին կամքս և կարգաւորութիւնս... կու
» թողում իմ Հայ սպասաւորիս Յովհաննու՝
» իր ըրած և գեռ ընելու ծառայութեան և
» զիս հոգալուն համար՝ 15 սկուտ, զգեստ
» ներս և ինչ որ ունիմ այս տանս մէջ։ —
» Այսնէ վերակացուի տանն Հայոց (a mes-

» ser Simon d' Armenia, vardian della ca-
 » sa d' Armenj) սկուտ մի: Ունիմ 14 սկու-
 » տի չափ այլ, և կ' ուզեմ որ իմ սպասա-
 » ւորս զասոնք ծախսէ հոգւոյս և թաղմանս
 » համար, ինչպէս որ իրեն յարմար երեւի.
 » և նոյն սպասաւորս աղօթէ իմ հոգւոյս հա-
 » մար »: — կտակին ներքեւ անմիջապէս
 կու ստորագրէ քաղդէարէն Յովհաննէս +աղ-
 դէացէ մի. յետոյ « Յովհան Առաքան միջնորդ
 » (սանսէր), որ թարգման եղայ կամաց կտա-
 » կողին՝ Սիմոն Հայուն հետ և վերոյգրեալ
 » Քաղդէացի Յովհաննիսի, և ստորագրեցի
 » յանուն Պր. Սիմոնի, որովհետեւ նա գրել
 » չէր գիտեր » (1). Ասկէ վերջ կու ստորա-
 գրեն երկու իտալացիք. թարգմանն որ և
 միջնորդ Առաքան՝ գրեթէ անտարակոյս Հայ-
 էր, նոյնպէս Քաղդէացի Յովհանն այլ՝ չէր
 կտակողին սպասաւորն, զոր որոշակի Հայ կ'ա-
 նուանէ տէրն. այլ ո՞վ է և ինչո՞ւ միջամուտ
 կ'ըլլայ այս բանիս այդ Քաղդէացին. — ի
 հարկէ ծանօթ էր թէ եպիսկոպոսին և թէ
 Սիմէոնի, թերեւս և Հայոց հոգետան մէջ

1. Zuane Sulian Sanser fui interprete della
 volontà del Testador, insieme con Messer Simon
 Armeno et il soprascritto Messer Zuane Caldeo,
 et o sottoscritto per nome di Msr. Simon, per
 non saper scriver lui.

բնակէր։ Կտակն գրուած է յօգոստոսի 27 (1575), երեք օր վերջը (30 օգոստ.) ներկայացուած է պաշտօնէից տէրութեան (¹). Ըսել է թէ այն 3 կամ 4 օրերու մէջ և հաւանօրէն ամսուն 30ին վախճաներ է Զաքարիա։ Այն տարւոյն մահագիրքն կորած են, որով հանգուցելոյն տարիքն և հիւանդութեան տեսակն և թաղման տեղն անյայտ մնան. որ հաւանօրէն էր կամ Ա. Յուլիանու եկեղեցին, կամ Ա. Գեորգ Կղզին, ուր էր օրինաւոր հանգստարանն Հայոց։

Ե. Զաքարիայի ոչ ժամանակին մերձաւորութեամբ, այլ թեմին անծանօթութեամբ նման՝ հետաքննելի մնայ իրմէ իրը 50 տարի վերջը (1623), Վարդան եպիսկոպոս մ' այլ, Մանգին? մականուանեալ (Mangino). և ոչ միայն եպիսկոպոս կոչուի՝ այլ և արքեպիսկոպոս Հյանայ? Մեծ Հայոց քաղաքի կամ գաւառի։ Այսպէս գրած է նօտարն, որոյ առջեւ (ի մայիսի 19) վկայեն քանի մի Հայք, որոց գլխաւորն Գեղրէ Գոտիլոյ, կամ Գոտիլոսանսէր (Cochiglio, Cochiglia) (որ և շատ դիպուածոց մէջ կու յիշուի 40 տարուան մի-

1. Testamentum D. Zacharie Episcopi de Rassan Armenj, de quo fui rogatus ego Petrus Abramo Venet. Notr. sub die 27 augti. 1575. Presentatus ad Canc. eccel. 30 dicti.

լոց, և իր մականունն ստուգութեան կարօսէ). թէ այդ արքեպիսկոպոսն 53 սարուանէ (ուրեմն ծնեալ յամի 1570), երկոյն և թաւ մօրուօք, լեզուին վրայ այլ ողի կամ նշան մի կայ վիրաց. ուղղափառ է հաւատավ հառվածական, բարի վարուք և որբակեաց, հայերէնէ և թուրքարէնէ զատ ուրիշ լեզու չի գիտեր։ Այսշափ է նօտարական գրուածոյն տուած տեղեկութիւնն, յորմէ շիմացուիր ինչ պատճառաւ տրուիլն. որդեօք Վարդան կ'ուզէր բնակիլ ի Հայոց առն, թէ շնորհ մի ինդրէր ի հասարակապեառութենէն, թէ յանձնարարութեան թուղթ մի։ — Մեղի հետաքըննական թեմին անունն՝ զոր ըստ գրուածին Հիփան կու կարդամք, չեմք կրնար որ և է Հայոց եպիսկոպոսական թեմի մի նմանցընել, բայց եթէ վերջի մասամբն՝ Վանայ. հաւանօրէն նօտարն քանի մի անգամ կրկնել տուած է Հայ վկայից այս անունը, բայց դարձեալ անոնց ըստածն և իր լսածն նոյն անունն կամ ձայնն չէ. ինչուան հիմայ այլ շատ հեղ այսպէս կու պատահի արեւելցի լեզուաց ըստածին և եւրոպացի ականջաց լսածին, որ երբ զրուի՛ շատ օտար և այլանդակ ձայն կամ կերպարանք կ'առնու։

Զ. Նոյն տարին վեց ամիս վերջը (1623 նոյեմբ. 10), նոյն Գէորգ վաճառական և

սանսէր, թարգման կ'ըլլայ քանի մի վկայից՝ որոց երկուքն են Եղընկացիք, Խօնոյ Սէֆէր որդի Գէորգայ, և Աբրահամ որդի Յովհաննու Եմիլիո? (Emiliti. ահա տարակուածելի անուն մ'այլ). որք կու ներկայանան նոյն նօտարին՝ ներկայացընելով ուրիշ արքեպիսկոպոս մի Մեծ Հայոց, Ներսէս անուամբ, որոյ թեմն և աթոռն թէ և քիչ մի այլագրած՝ կու ստուգուի Բաղիշու Խնդրակառար Աստուածածինն ըլլալ. քաղքին անունն Buchis գրուած է, զանացն՝ Ս. Աստուածածին Շնորհաց՝ թարգմանուեր է, S. Maria delle Grazie, որ Իտալացւոց հաճոյ անուն մ'է, իրենց շատ եկեղեցեաց այսպէս կոչմամբ։ Ներսէս արքեպիսկոպոսն՝ ըստ վկայութեան Հայոց՝ էր իբր 42 տարուան, միջակ հասակաւ, սեւ և բոլորակ մօրուաք, քիթն քիչ մի տափկած կամ ճզմուած (ha il naso alquanto fracato): Ժամանակին մօտաւորութիւնն և թեմին անունն քիչ մ'այլ կ'աւելցընեն զկարծիս՝ Վարդանայ թեմին այլ մօտ ըլլալն ի կողմն Վահայ. նոյնպէս և անշուշտ կ'աւելցընեն զփափագ գիտնալու, թէ ի՞նչ պատճառաւ այդ երկու արքեպիսկոպոսք ի խոր Հայոց եկերեն ի Վենետիկ, և ուր գնացեր. — Ներսիսի ի Հռովմա գտուիլին յամի 1630 յայտնի է ի յիշատակարանաց. հաւանական է և միւսին. զի

վկայք երդմամբ հաստատեցին անոնց ուղղագառութիւնը . և ոչ միայն անոնց՝ այլ և նոյն օրը՝ որ Վարդանայ համար վկայեցին (19 մայիս, 1623), նա և նոյն այն վկայից մէկուն համար այլ, որ է Արեւելա Փիբուա? (Pirbas) կու վկայեն Գոքիլիոյ և այլք, թէ ի Մեծ Հայոց է, հպատակ Պարսից թագաւորի, 55 տարուան, միջահասակ, կլորակ և ճերմակ մօրուօք, որդին այլ Փիբուա 25 տարուան, բարձրահասակ, գեռաբոյս մօրուօք, բարեպաշտ ուղղափառ հռովմէականք են . և թէ ի Վենետիկ և թէ օտար քաղաքաց մէջ այլեւայլ վաճառուց առուտուր կ'ընեն, և հայերէնէ ու թուրքերէնէ զատ լեզու չեն գիտեր: Կըրնայ այլ կարծուիլ՝ որ այս ժամանակս կրօնական խնդիր կամ դիպուած մի հանդիպած ըլլայ ի Վենետիկ՝ Հայոց մէջ, որոյ համար հարկ ըլլայ այսպիսի տեղեկութիւններ տալ տէրութեան նօտարաց :

Է. Բայց մենք մեր հիմակուան խնդրէն (Հայ եպիսկոպոսաց ի Վենետիկ) և ժամանակէն (ԺԶ դար) չհեռանալու համար, միայն ի հարեւանցի յիշենք յաջորդ դարուն (ԺԷ) յետ Վարդանայ և Ներսիսի քանի մի հանդիպող եպիսկոպոսներ ալ . Առաջին Բառձի, 1661-2, † ի Հռովմ . — Վարդան Յովոնան, 1677, արքեպիսկոպոս Լեհա-Հայոց,

յաջորդ Նիկոլի. — Յուլեկէ արքեպիսկոպոս Զմիւռնիոյ, 1686. Յաջորդ ԺՈ Դարու Մէջ, ինչպէս կրնայ գուշակուիլ, թէ ընդհանուր երթեւեկութեանց աւելի յաճախելուն համար, և թէ Միսիթար Աքրահօր ի Վենետիկ հաստատած վանաց համար, ազգային եպիսկոպոսք աւելի շատ եկած են յայս քաղաքս, աւելի երկար տարիներ բնակած, և ոմանք վախճանած և թաղուած ի յիշեալ վանս մեր: Ծանօթքն մեզ են, ժամանակի կարգաւ.

1702 Յովհաննէս եպիսկոպոս մի.

1716†1738 Յարութիւն կամ Անաստաս
արքեպիսկոպոս Լէոկեսարիոյ.

1726 Սահակ եպիսկոպոս.

1731—5 Յովհանն եպիսկոպոս Աերաստիոյ.

1736—57* Մինաս՝ արքեպիսկոպոս Փէր-
վագեան.

1743 Կարտապետ արքեպիսկոպոս Կեսա-
րիոյ, † ի Դրիեստ.

1747—50 Աթանաս եպիսկոպոս Աքրահա-
մեան.

1750—3 Սարգիս Սառափեան արքեպիսկո-
պոս Անկիւրիոյ.

1760 Ղազար Անմարմին արքեպիսկոպոս
Տրապիզոնի.

* Աստղանիշքն մեռած են ի Վենետիկ, և թա-
ղուած ի Ս. Ղազար վանս մեր:

- 1766 Արման Եպիսկոպոս Գաղատացի .
 17 .. Յարութիւն Բառենցի արքեպիսկո-
 պոս , † ի Դրիեստ , 1796
 1773 * Գրիգոր Եպիսկոպոս .
 1776 - 1791 Գրիգոր Պասմանեան Պատ-
 րիարք կ . Պօլսի , † ի Դրիեստ .
 1790 * Կարապետ Մելքեան Հնձեցի արք-
 Եպիսկոպոս Տփղիսու :

Ը . Վերադառնալով մեր յիշատակաց ժա-
 մանակագրական կարգին , ԺԶ դարու վեր-
 ջերը , աւելի հետաքննելի և անծանօթ Ա-
 նեղիւ անուամբ Եպիսկոպոսի մ' այլ վերջին
 նշոյլ մի կու ծագի և կու ծածկի , մահուանը
 յիշատակաւ . ուր և Երբն անստոյգ . այլ մահն
 կ' երեւի ի սկիզբն 1594 տարւոյ , տեղին այլ
 թերեւս ի Վենետիկ . վասն զի հօս նոյն տա-
 րին (մայիսի 4) , նօտարի առջեւ կարտղետ
 որդի Թովմայի՝ անոր իրեն յանձնածը կու
 յանձնէ առ Տէր Յակով Մարգարեան երես-
 փոխան կաթողիկոսի անուանեալ . և յանձնա-
 ծէն կու յայտնուի՝ որ Եպիսկոպոսն նուիրակ
 էր կաթողիկոսին առ արեւմտեան Հայո : Առ
 կարապետի աւանդածն էր մեծ ճերմակ տուփ
 մի՝ իր կնքով երկու տեղ կնքած , որոյ մէջ
 կային պղնձեայ աման մի 3⁴լ₂ լիտր միւռո-
 նով . Նշխարք Սրբոյ , 10 սոկի վենետիկեան
 (ծեգին) , մէկ կարմիր համրիչ ոսկրէ , 6 սա-
 պոն , 4 թաշկինակ՝ երկուքն մետաքսէ , 1

գտակ մանուշակագոյն չուխայէ, (սու Tachia de panno pavonazo). և աւելի հետաքըրքրական՝ 34 հայերէն տպագրեալ տօմար (Calendari in stampa in lingua armena). հաւանօրէն տասն տարի առաջ (1584) ի Հռովմթարգմանուած և տպագրած Գրիգորեան Նոր տօմարն էր ձեռամբ Յովհ. Տէրզնցւոյ. կըրնայ ըլլալ և անկէ առաջ (1567ին) ի Կ. Պօլիս տպագրեալ Տօնացոյցն։ կաթողիկոսն՝ (կամ նոր ընտրուած Մելքիսեդէն, կամ Դաւիթ Ե) գրեր և պատուիրեր էր առ կարապետ, որ հանգուցեալ Աւետիք եպիսկոպոսի թողածն յանձնէ Տէր Յակովբայ. և սա այնպէս կ'ընէ ներկայութեամբ և վկայութեամբ արդէն մեզի ծանօթ Գէորգ թարգմանի և Տնպահի Հայոց, և Առաքէլի որդի Յակոբի մի. որոց կու ստորագրեն երեք Քաղղէացիք և Ասորիք (Եղիա որդի Դոմինիկոսի, Բենեդիկտոս ու Յակովբայ և Անձելոյ ու Սերովբէի): Ինչու փոխանակ Հայոց՝ այս օտարազգիք կոչուած են ի վկայութիւն. — Թերեւս աւելի ծանօթք ըլլալով † եպիսկոպոսին կամ իր աւանդապահ կարապետին. կամ իրենք աւելի ծանուցուած անձինք ըլլալով ի Վենետիկ։

Թ. Յետ այս բարձրաստիճան եկեղեցականաց (կաթողիկոսաց, պատրիարքաց և եպիս-

կոպոսաց) արժան էր որ նոյն ատեններս ի Վենետիկ հանդիպած՝ հասարակ վարի աստիճանաւորները, (քահանայ, սարկաւագ, ևն.) վերիններէն աւելի շատ եկած ըլլան. բայց առջիններուն պէս փայլուն չըլլալով և ոչ այլ արտաքին գործոց մէջ մտնելով, շատ չեն ճանցուած: Ասոնք հաւանօրէն բնակելով ի Տան Հայոց, հօն այլ պատարագէին աենեկի մի մէջ, երբ որ հանդիպէին, խորան մի պատրաստելով. երբ քահանայ չի գտուեր, սենեակն այլ իր սրբազան շնորհը կորսունցընէր, կամ բնակարան կամ մթերանոց կ'ըլլար. ինչպէս քիչ մի վերջը պիտի վկայուի ի Տնպահէն:

Յիշենք, այս եկեղեցականաց մէկ երկուսն, ԺԶ դարու վերջերում ի Վենետիկ: 1575 թուին Տէր Թովմաս Հըսնքէյֆցի, յածօտ անուանուած, որ անշուշտ Յակոբիկ նշանակէ. արդէն իր երկիրն այլ կարծեցընէ ասորի կամ քաղդէացի ըլլալը. սակայն Հայոց հետ կու յիշուի, իրենց դատի մի մէջ վկայելով զանոնք և անոնց գործը գիտնալը:

1593. Յաղորդ (ԺԲ) զլխոյ մէջ պիտի յիշուին Տէր Յովաննէս ։ Զատարայ, և Հ. Սահակ մի, իրեւ նուիրակք կաթողիկոսի, յորոց հաշիւ կու պահանջէր նոր և մեծագոյն նուիրակ մի (Տէր Յակովը), որու սարկաւագ.

ներն այլ պիտի յիշուին իր հետ։ Նոյն ժամանակ ուրիշ սարկաւագ մ' այլ կար, որ թէ անոնց հետ գործ չտնէր, սակայն հարկ էր ծանօթ ըլլալ այն մեծ նուիրակին. մանաւանդ որ մէկ ձեռագիր (Մաշտոցի) մէջ (հիմայ ի Բարիզ), թէ իր գրուածն կայ և թէ նուիրակին. սա գրէ. « ԶՀամթեցի Յակոբ Երէցն յիշեցէք յաղօթս ձեր, որ զայս տաղս Զրօրհնեաց՝ (Ով զարմանալի խորհուրդս այս) գրեցի » . իսկ միւսն . « Գրեցաւ սակաւ գիրս Թուխնցի Պատրիս սարկաւագին, ի քաղաքն Վանատիկ . թուին ՌիխԱ (1593) յունւար ամսոյ ի ԻԴ, աւրն բշթի . զմեղաւորս յիշեցէք և Աստուած յիշէ զձեզ » , ևն :

1591. Ասոնցմէ աւելի նշանաւոր համարելի է, թէ և անժանօթ, կրօնաւոր մի, Մկրտիչ որդի Մաքրիրոսի, որ կենաց յետին յիշատակաւն յայտնուի, այն է կտակն (ի 17 յունիսի), թէ և կարելի է այն կտակէն վերջ առողջացած և ապրած ըլլայ, (¹) : Կտակն իտալերէն գրուած է որոյ մէջ զինքը

1. Կտակողին մեռած օրը կու բացուէր կտակն, և վրան կու գրուէր թէ այս օր (ամսոյ և տարւոյ) վախճանեցաւ նա . իսկ եթէ ազատէր նա ի հիւանդութենէն և ապրէր՝ կտակն կնքուած մնար, և անվաւեր համարուէր . Եղ . Յովհաննու կտակին վրայ այլ չէր նշանակուած իր մահը . և փակուած պահուած էր . ըսել է թէ

Կ' անուանէ Եղբայր Յովհ. Մկրտիչ Հայ, որդի † Մարտիրոսի, ի կարգէ Ս. Անտոնի. (Fra Gian-Battista Armeno q.m Martiros dell'ordine di S. Antonio), և կ'ըսէ. հիւանդ ըլլալով յանկողնի՝ ի տան Պր. Յակովայ, որոյ տանտէրն էր աղնուականն Պրակատին, քանի որ միտքս առողջ է, կ'ուզեմ սահմանել իմ ստացուածքս, (Յովհ. Ֆիկոլինոյ) նօտարի ձեռքով գրել տալով։

Կտակակատար կարգէ զՄարիս Մատրոս Հայ սանսէր, որմէ առնելիք ունէր 100 դուկատ. այս ստակէն կ'ուզէ որ հանուի իր թաղման ծախքն, ի վանս Ս. Գէորգ կղզւոյ (տես եր. 152), և մնացածն այլ իր հոգւոյն համար տըրուի յողորմութիւն. յանուանէ յիշէ լա-

առողջացեր է, և հաւանօրէն դարձեր է իր երկիրը և իր Ս. Փրկիչ վանքը։ Ասոր նման քանի մի Հայոց կտակ գըտանք ի գիւանս Նօտարաց Վենետիկոյ, որ երկու երեք հարիւր տարիէ ի վեր կնքուած մնացեր էին, և ըստ օրինաց՝ տէրութենէ հրաման խնդրելով՝ բացինք, մեծ հետաքրքրութեամք և զարմացմամք պաշտօնէից և նօտարաց. հնագոյնն այս Եղ. Յովհաննուն էր։ Անկէ հին մեր բացածն էր Հաւի Հիւսէինի որդի Պէկպաղարցի Անմէտ թուրքի մի, (1579, յանուար 2) որ իրեն թարգման ըրեր է մեր ժանօթ թէոդորոսի ո. Գէորգը, և Յակոբայ ո. Մարկոս՝ Հայերը։ Հայերէն գրուած և փակ մնացած կտակաց (մեր գտածներէն) հնագոյնն էր՝ Տեր-Ավելից Եղնաղուէ որդի Հայրապետին, 1694, մայիս 50։

տին սարկաւագ մի (Nicolò Lucadelli) որ
նոյն (Ս. Մարիամ Խորոսիկ) թաղին մէջ
բնակէր։ Ի Հայաստան ունեցած ընչից հա-
մար՝ կ'իմացընէ, որ հայերէն կտակին մէջ
դրեր պատուիրեր էր։ մասնաւոր խնամքով
կու յանձնէ Մարկոսի (զոր իր սիրելի հայր
և եղբայր կոչէ) որ իր Խաչատուփը կամ
Խաչափայտի մասնատուփը խաւրէ իր երկիրը
ի Ս. Փրկչի վանս (⁴), զոր փափագելի է գըտ-
նել, թէ Հայոց ո՛ր գաւառի կամ քաղքի մէջ
էր։ կ'իմացընէ եղբայրներ այլ ունենալն, բայց
պատուիրէ որ ոչ ասոնք, ոչ ոք Հայ, ոչ եղ-
բայր, ոչ քահանայ, ոչ եպիսկոպոս, ոչ կար-
դինալ և ոչ այլ ոք՝ չնեղեն իր խոստակատար
Մարկոս Մուրատը՝ իրմէ բան մի պահանջե-
լով։ Վերոյիշեալ լատին սարկաւագն և
երկու Վենետիկեցիք եղած են վկայք կտակին։

1. Mandi la mia Croce de Reliquie nel mio
paese, al mio monastero Pergix.

ԺԲ.

ՏԵՐ ՏԵԿՈՐ ՄԱՐԴԱՐԵԱՆ ԱՄԴԵՅԻ,
ՆՅԻՒԻՐԵԿ ԿԱՐԱԴԻԿՈՍԻ ԵՒ ԴԵՍԳԱՆ.

Աւելի քան զվերսյիշեալ եպիսկոպոսներն
հետապննութեան արժանի անձ մ'է սա, և
իր յայտնի կամ անյայտ գործովք խորհըր-
դաւոր և գաղտուկ կերպարանք մի կ'երեւ-
ցընէ՝ և կարծեմ թէ իր ատենն այլ այնպէս
երեւած է ոմանց և կասկածելի եղած, ինչ
պէս գուշակուի իր վրայօք մնացեալ քիչ կամ
անկատար յիշատակներէն. որոց եթէ թիւն
աւելնայ, անշուշտ աւելի նշանաւոր պատմա-
կան անձ մի պիտի յայտնուի ի վերջ ԺԶ
դարու և ի սկիզբն ԺԵի, արեւելից և արեւմը-
տից միջնորդ կամ ներգործող: Փասն տա-
րուան ժամանակի միջոց ծանօթ է Յակոբ:
ի դիւանական կամ նօտարական գրուածս
Վենետիկոյ. Հայրենեօք Ամդեցի (Տիարպէ-
քիրցի) վկայեալ, ցեղով Մարտարեան կամ
Մարտրէ որդի, և պաշտօնով կամ վիճակաւ՝
Ամոռակալ կամ Նոռիքակ կաթողիկոսին Էջ-
միածնի: Զայս ամէն բովանդակէ հնագոյնն

Իր յիշողաց (1593, մայիս 26), նօտար մի.
Il Molto Reverendo Jacomo Marcara di
Caramit, Armeno, Vicario Generale del
Reverendissimo Patriarca dell' Armenia
Maggiore. զբեթէ միշտ այսպէս յիշուի յի-
տալական գրուածս, և յայտնուի՝ որ շատ
անգամ եկեր գացեր է, ոչ միայն ի Վենե-
տիկ, այլ և ի Հռովմ և ի Գերմանիա, հա-
ւանօրէն նա և ուրիշ արեւմտեան Եւրոպիոյ
աշխարհներ. ոչ հասարակ նուիրակի մի պէս,
այլ և իրր երեսփոխան և գործակատար.
Նոյնպէս ալ եղած է Վրաց և Պարսից թա-
գաւորաց կողմանէ առ արեւմտեայս, և ա-
սոնցմէ առ նոյնս : Արեւելից նկատմամբ՝ նշա-
նաւոր է ժամանակն Շահ Աքասայ թագա-
ւորութեան, անով և Վրաց, նոյնպէս մեր
կաթողիկոսաց այլ շփոթութեանց, Դաւթի-
Եհ և իր նոր աթոռակից Մելքիսեդեկի :

Առաջին ծանօթ կամ հնագոյն յիշատակին
մէջ Յակովը ի Վենետիկ իր տեղ գործակալ
կու դնէ՝ նօտարի առջեւ՝ իր հայրենակից
(Ամդեցի) մի, Գոտողոր Տերվեշտան, որ պահան-
ջէ Զատարէայէ որդիք Տեր Յովհաննիսէ՝ 100 դու-
կատը, զոր Պայլն Վենետաց (անշուշտ ի Կ.
Պոլիս) տուեր էր անոր՝ որ հասցընէ առ կա-
թողիկոսն : Այս գործակալութեան վկայ կ'ըւ-
լան Գեորգ՝ արդէն մեզի ծանօթ յնպահն

Հայոց, որ և թարգման (Եր. 287), քանի մի
Անկիւրացիք, իշխա որդի իշխափ կամ ի-
ֆէնտի, և իր որդին իշխառէ. Առաջար ու Սէ-
մոնէ և Մելիշան ու Մարտիք: — Գանի մոր
վերջը (29 մայիս, 1593) զնոյն Գէորգ Տնպահը
գործակալ կու կորդէ նոյն նօտարին զրու-
թեամբ, որ պահանջէ ի Հ. Սահակոյ՝ ինչ որ
կաթողիկոսին պատշաճէր: Այս բանիս վկայ
կ'ըլլայ Գարդուզ ու Մարտոյ՝ մականուամբ
կամ հայրենեք՝ մ'Արգիշ գրուած: Այս ա-
նունու ստուգելն այնքան հետաքննելի չէ, որ-
քան գիտնալի թէ ով էին այն Տէր Յովհա-
նէսն Զաքարեան և այն Հ. Սահակն, որոց
քով կային կաթողիկոսական պահանջք, թեր-
եւս նուիրակք էին կամ առանձին գործոց
համար ղրկուածք. և անոնց ու նմանեացն (Եթէ
կային) կաթողիկոսական վերագոյն երեսփո-
խան էր տէր Յակոր: Զաքարիա՝ քահանայի
որդի՝ ինքն այլ կամ նոյնպէս աշխարհիկ
երէց մի էր կամ վարդապետ. իսկ Սահակ՝
կամ Էջմիածնի կամ ուրիշ վանքի մի միա-
բան. վասն զի ուրիշ նօտար մ' այլ տարի
մի վերջ կ' անուանէ զնա կրօնաւոր ի կար-
գէ Ս. Անտոնի (hordinis S. Antonij). ա-
մէն Հայ կրօնաւորք կամ Անտոնեան կամ
Քարսեղեան կոչուին յարեւմտեայց: Այս Սա-
հակայ երկրորդ ծանօթութիւնն եղած է ի

24 ապրիլի 1594, վերոյիշեալ գործոյ նման։ Տէր Յակովը ի Վենետիկոյ դառնալ ուզելով իր երկիրը, դարձեալ զԳէորգ Տնպահ իրեն գործակալ կու կարգէ, պահանջելու և ընդունելու իր առնելիքն՝ ի Հ. Աահակայ։ Այս գործակալութեան միակ Հայ վկայ կ'ըլլայ Հանի Օհան Յարութեանի որդէ, գուցէ Անկիւրացի։ — Ահա այս գործէս տասն օր վերջ (մայիս 4) ։ Աւետիք եպիսկոպոսի քով գըտաւածները կ'ընդունի Յակովը ի Կարապետէ, զոր յիշած եմք (եր. 210)։

Անտարակոյս է Յակովրայ քիչ ատենէն ելնելն ի Վենետիկոյ, իր նուիրակութեան և դեսպանութեան գործոց համար. այլ անկէ ետեւ երեք տարի ուր երթալ գալն և գործելն յայտնի չէ ինձ. յետ երեք տարւոյ (1597) նորէն կ'երեւի ի Վենետիկ, ի Հռովմ երթալու համար, ի կողմանէ Վրաց թագաւորին կամ իշխանաց, առ Ս. Պապն։ — Ի՞նչ բանի համար. — նոյն իսկ Վենետիկոյ դուքսն փափագէր իմանալ, և յանձնեց տէրութեան դպրապետին՝ ճարտարութեամբ հետաքննել։ Օր մի (22-3 յունիսի) երբ Յակովը եկերէր ի պալատն՝ ընդունելու իրեն շնորհուած 50 գուկատը, (յայտ կ'ըլլայ որ Վենետաց տէրութեան համար այլ ծառայութիւն մը ըրած էր), հարցուց ասոր պաշտօնեայն իր

համբորդութեան վրայօք. նա զգուշութեամբ խօսեցաւ (mostrandosi nel parlare molto riservato). Վեց ամիս կայ, ըստաւ, որ ելայ Գրազուինէն, թագաւորէն (ի Շահ Արասայ) ղրկուած. եկայ ի Տէցբի (Թիֆլիդ) առ Աղեքսանդր և Սիմոն իշխանս Վրաց. այս իրենց տեղն՝ Գրազուինէն երկու օրուան ճամբայ է. ասոնք ալ թուղթեր տուին առ Պապն տանելու, նա և առ դեսպան կայսերն ի Հռովմ, բայց ասոր գրուած թուղթն այլ Պապին թըղթոյն մէջ դրին. ասոնց գրուած թուղթեր այլ ունիմ, նա և ի պատրիարքէն Վրաց, զոր պէտք է տամ և սպասեմ պատասխանին: Ուրիշ անգամ այլ ասոնցմէ և Սանդա Սեւերինայի կարդինալէն թուղթեր տարած եմ առ Շահն և առ իշխանս և պատրիարքն Վրաց. բայց որովհետեւ իտալերէն գրուած չէին՝ չկարցան հասկընալ, և աղաչեցին որ Պապն պարսկերէն գրել տայ, և աղօթք ընէ՝ որ կարենան թշնամոյն դէմ երթալ. միանգամայն և կու սպասեն՝ որ արեւմտեալք նախյաղթութիւն մի ընեն, որ իրենք այլ վստահանան: Ի Հռոմ իմ թարգմանս է Յակով անուամբ Հայ մի, իսկ բնակութիւնս վերոյիշեալ կարդինալին քով, ուր ուրիշ անգամ ալ բնակեր եմ: Շահ Արասայ համար ըստաւ, որ 26 տարուան է, մանչ մի և փոքրիկ աղ-

Ջիկ մ' ունի. 80,000 ձիաւոր ունի, բայց ոչ
հրացանաւոր։ Ոիմոն վրացին կտրիճ մարդ
է, 45 տարուան, որդի մ' ունի 25 տարուան,
շատ զօրաւոր, (di gran virtù). 40,000 հե-
տեւակ կըրնան ունենալ, բայց ոչ ձիաւոր.
Հրացանաւոր այլ ունին. այս Վրացիք՝ Պար-
սից պէս ճերմակ գլխապատ ունին, ականջ-
նին այլ օղեր, կուրծքերուն վրայ մեծկակ
խաշ մի։ — Վրաստանէն եկայ ի Վան, ան-
կէ ի Հալէպ. գաղտուկ լրտեսի մի առաջ-
նորդութեամբ ի Հալէպ ներկայացայ Վե-
նետկոյ գունցին, ուսկից ընդունեցայ պաշար
և ստակ, և ցամքով ու ծովով հասայ ի քա-
ղաքս. նոյնպէս այս տեղ մաքսապետն պաշար
տուաւ ինձ. և այս իրիկուն ճամբայ կ' ել-
նեմ երթալու ի Հռովմ։ — Այս քիչ շատ
ըսածներէն կ' իմացուի Յակովբայ գեսպա-
նութեանց կամ նուիրակութեանց պատճառն,
աւելի քաղաքական քան կրօնական։

Ըսածին համեմատ՝ եթէ յունիսի 23ին
(1597) մեկնած է ի Վենետկոյ, բաւական
երկար ատեն այլ բնակեր է ի Հռովմ. վասն
զի ունիմք ժամագիրք մի յետ և առաջ գը-
րուած իր ձեռքք. ուր կու գրէ յաջորդ տա-
րին 1598., և բաւական կու ծանօթացընէ
մեզ Տէր պապա ըլլալը. «Գրեցաւ ժամա-
» գիրս ի թվին Հայոց Ռիխէ, ապրիլ ամսոյ

» Ա. ավարտո (աւարտեցաւ) ի մայրաքաղաքն
 » ի մեծն Հռովմ, ի հայրապետութեան սուրբ
 » Փափին Գլէմէնդ Աւգաւոյ (Ottavo, Աւ-
 » թերորդ) . ի ժամանակն կարտինալ Սանդա
 » Սեվերենին, ձեռամբ անարժան և մեղօռը
 » Համթեցի Յակոր երիցուս, որ միայն զա-
 » նունս ունիմ և ոչ զգործս բարիս . յիշա-
 » տակ ինձ և ծնօղին իմոյ Եղիսին, և հօրն
 » իմոյ Տեր Մարտիրոսն, և որդոյն իմոյ Եղիսայ
 » սարգօազին, և եղբօրն իմոյ Պաղտասա-
 » րին, և կողակցին իմոյ և ամենայն յարեան
 » մերձաւորացն՝ որք փոխեցան ի Քրիստոս:
 » Արդ աղաշեմ զձեզ, սուրբ քահանայք և
 » սարկօագունք, որ շիմեղադրէք սղա(լո)-
 » նաց գրոյս, զի ի բէրանէ 'ի մտաց գրեցի,
 » և ոչ յօրինակօ: Արդ որք ժամ ասէք սովո
 » կամ յօրինակէք, թէ թերի կայ՝ լցէք . և
 » ինձ մի բերան Աստուած ողորմի ասէք, և
 » Աստուած ձեզ և մեզ ողորմեսցի: Հայր
 » մեր » : - Անմիջապէս ասկէ ետեւ կու գրէ.
 « Յիշատակ է Ժամագիրքս Հայոց ժամատան
 » ի մայրաքաղաքն Վանատիկ . ամէն » : Յայտ
 է որ ինքն թողած է իր ձեռագիրքը Հայոց
 եկեղեցատան, բայց ոչ այս անգամ Հռով-
 մէն գարձած ատեն, այլ յետոյ, թէ և ստոյդ
 է վերը յիշեալ թուականէն (ապրիլ, 1598)
 տարի մի վերջը ի Վենետիկ գտուիլն, մայիսի
 7ին, 1599:

Այս մէկ տարուան . միջոցին Յակովը (անշուշտ բերած թղթոց պատասխանները տանելով) դարձեր էր յարեւելք . ինչպէս այս ետքի յիշած օրը՝ ի Վենետիկ նօտարի առջեւ վկայեցին իր երկու հայրենակիցքն . Մերջա որդի Աղանձնի և Գասպար որդի Տէրնչն : Այս ետքինիս Լունֆի որդւոյն հետ՝ Տէր Յակոբ գացած էր ի Վրաստան՝ առ իշխանն Ախմոն , և անկէց թուղթեր կու բերէր առ կայսրն և առ իշխանս իտալիոյ : Այսոնց վկայ և թարգման եղաւ Մկրտիչ Պարսկահայ Տնպահն , յաջորդն Գէորգայ : Երկրորդ օր՝ ուրիշ Հայ վաճառական մի խորիսպան ? (Charispius) որդի Ղազարայ՝ նոյնպէս երդմամբ վկայեց , որ Յակովը հաւատարիմ և բարի մարդ է , և ինքն տեսեր էր զնա Սիմոն իշխանին քով : Ասոր խօսքին ստուգութեանն այլ վկայեց ուրիշ Հայ մի Զուղայեցի՝ Գէորգ Սէրբար կոչուած , և թէ Յակովը իրաւ քանի մ' ամիս առաջ գացեր էր առ Սիմոն , հետն այլ կար ուրիշ Հայ մի , զոր բռնեցին թուրքք ի Գանձակ , և թղթատար կարծելով՝ կ' ուզէին այրել , բայց Զուղայեցի Հայք ստակ տալով ազատեցին : —

Յակովը գործն յիրաւի զգուշալի և իրեն վտանգաւոր կըրնար ըլլալ , զարմանք չէ կասկածելի ըլլալն այլ . բայց առանց զարմանքի չէ Վենետաց կասկածութիւնն այն անձին

վրայ, որմէ քանի մի տարի առաջ տեղեկութիւններ առին և 50 դուկատ վարձք կամ պարզեւ տուին։ Աակայն դարձեալ հարկ է թէ՛ իրաւ կամ սուտ՝ կասկածանաց առիթ մի կար, նոյն իսկ Յակովբայ խորհրդաւոր կերպով մի և ստէպ այլեւայլ արեւելեայ և արեւմտեայ տէրութեանց արքունիքը մտնել ելնելն։ Ի՞նչ առիթ կամ գիպուած էր, չեմ գիտեր, բայց հետեւանքն և գլխուն եկած փորձանկքն՝ յայտնէ իրեն հաւատարիմ ընկեր օրհնեալ Ժամագիրքն։ որոյ մէջ այս կարեւոր համառօտ և հետաքննական ծանօթութիւնն այլ կ' աւելցընէ, ի թուին Հայոց ՈԽԸ, որ է 1599–1600ի հոկտեմբեր ամսոյ միջոց։ ուրեմն, 1599 մայիսի մէջ ի Վենետիկ գտուելէն վերջը։ « Ինձ սնարժանիս մէկ բերան » Աստուած ողորմի ասայ, որ լի եմ մեղաք « տառապեալ անձամբ. ես Ակոր էրէցս Համեմ թեցի՝ զայս ըսպասաւորութիւնս (Պատառացի) ի Ֆջ բանաբն՝ ի Բառակայ Դաշտն գրեցի »։ Խեղճ երէց նախահոգութեամբ հետն առած նօտարական վկայութիւնն այլ բաւական չէ եղած զինքը պաշտպանելու կարծուած յանցանքէ մի, որ հաւանօրէն անիրաւ կասկած մ' էր։ իր օտար լեզու չգիտնալն այլ կու դժուարացընէր ինք դինքը պաշտպանելը։ Ժամանակն էր Աւստրիոյ կայսեր և թուր-

քաց պատերազմի. անշուշտ այս գլխաւոր գործոյ մասնաւոր պարագայ կամ դիտելի բան մի պատճառ եղած է Յակոբայ բանտարկութեան. որ յուսալի է թէ երկարատեւ եղած չըլլայ. թէ և անկէ վերջ քանի մի տարի անյայտ մնայ ինքն՝ ինձի ծանօթ յիշատակաց մէջ:

1605ին վերջերը նորէն յերեւան կ' երնէ երէցն՝ իր յաճախած քաղքին մէջ, ի Վենետիկ. ուր և գրեթէ հաստատ մնայ անկէ ետեւ. վասն զի թէ այն տարւոյն նոյեմբեր ամսոյ 23ին, և թէ յաջորդին սկիզբը (1606, յան. 17, մարտ 6) վենետարնակ Հայք՝ որոց 17 կու յիշուին յանուանէ, որոց 6 Անկիւրացի են, և մէկն այլ սարկաւագ է (Սարգիս). 3 Ամդեցի՝ որոց մէկն Յակոբայ սարկաւագն է Կարտաշեան անուամբ՝ (որ և շատ տարի վերջ (1607) յիշուի Հայոց եկեղեցւոյն մէջ), 2 Բաղիշեցի, այլքն Ուռհայեցի, Հռոմկլայեցի, Սերաստացի, Զուղայեցի, Կաֆացի, Պօլսեցի. ամէնքն միաբան վկայեցին, (ինչպէս շատ տարի առաջ ուրիշներն), որ Յակոբ Մարգարեան իրենց կաթողիկոսին ընդհանրական վկարն է. կ' ընտրեն զինքը այս տեղ իրենց եկեղեցւոյն հոգաբարձու, պատարագիչ և հոգեւոր առաջնորդ, մինչեւ ի մահն, խոստանալով դարմանել զնա. և այս բանիս համար

իրեն բացարձակ իշխանութիւն կու տան, նա և ներկայանալու առ Սրբազն Պապն և առ կարդինալս, և խնդրելու չնորհքներ իրենց եկեղեցւոյ համար և յօգուտ իրենց հոգւոյն⁽¹⁾: Այս բանիս վկայ և թարգման եղաւ Իենեղիտոս ո. Յակոբայ ասորի փերեզակ մի: — Քանի մ' օր վերջը (16 մարտի, 1606) քանի մի հոգի վերոյիշեալ Հայերէն, հանդերձ կարապետ սարկաւագով, և գլխաւոր ունենալով Զուղայեցի փերեզակ մի, Ղաղար ո. Յովհաննաս, նորէն նօտուրին ներկայացուցին իրենց ընտրած հոգեւոր առաջնորդը, իբրեւ իրենց և բոլոր ազգայնոց գործակալ, որ երթայ ի Հռովմ, խնդրէ Սրբազն Պապէն կամ ի կարդինալաց, հայերէն Աստուածաշունչ, Աւետարան և ուրիշ Ս. Գրքեր, և բերէ ի Վենետիկ, որ օրինակեն և ամենայն հաւատարմութեամբ յետ դարձընեն, և այնպէս կարենան իրենց քրիստոնէական պարտքն ու պաշտօնը կատարել⁽²⁾:

1. Quodlibet facultatem et auctoritatem ipsi conferendo, comparendi etiam ad pedes Sancti. D. Papæ, seu cuiuslibet ex Illmis. et Revmis. Romanæ Ecclesiæ Cardinalibus, pro imetrando in beneficium ipsius Ecclesiæ quelibet munera, et pro animabus eorum augmentatione Sanctæ fidei et servitio Divinæ Majestatis.

2. Libros S. Bibliæ et Evangeliorum, seu alterius sortis Sacrae Scripturæ, donec ipsos in

Այս ներկայացման այլ վկայ և թարգման
եղաւ վերոյիշեալ ասորի փերեզակն : — Հայե-
րէն Ա . Գրոց պակասութեան այն ատեն ի
Վենետիկ՝ վկայէ հեռուէն բարեպաշտ ազ-
գային մ'այլ , Խօնա Շէքն Սէբաստոցի , որ Ա-
ւետարան մի գնեց « ի ձեռաց անարժանից ,
» և հդ յիշատակ իւրն և իւր ննջեցելոցն .
» ոչ թէ ի յաշխարհս մեր Անատոլական , այլ
» ի Վենետիկ Ֆրանկաց տան . զի իմացեալ
» աստուածասէր այրս Խօնայ Շիրին , եթէ
» կայ անդ քահանայ՝ ոչ գոյ աւետարան ,
» այլ փութով առեալ զսուրբ աւետարանս և
» ետ 'ի վաճառականքն , որ տանին ի Բերիայ՝
» որ ասի Հալապ , և անտի Երթեալ հասանէ
» ի մեծահոչակ քաղաքն ի Վենետիկ » :

Քաղաքականօրէն իր ընտրութիւնը հաս-
տատելէն վերջը՝ Տէր Յակովիր եկեղեցական
օրինօք այլ հաստատեց . և նախ , Հայոց տան
մէջ ինչուան այն ատեն մտարան տեղ որո-
շուած սենեակը՝ ուր միայն աղօթք կ'ընէին
քահանայ չգտնուելուն , մաքրել տուաւ , խո-
րանը հաստատեց , ժամահրաւէր զանգակ

hac urbe exemplari faciant, postmodum restituendo absque ulla contradictione: ad hoc ut possit Natio ipsa instrui in sancta fide, et exercere ea ad quæ quilibet Christianus tenet et obligatus est.

մ' այլ կախել տուաւ. և Վենետիկոյ պատրիարքին աթոռակալին ձեռք օրհնել տալով, սկսաւ պատարագ ու ժամասացութիւն կատարել, նա և Սրբութիւն այլ դրաւ ի խորանին. և տարուէ տարի կ' աւելցընէր փոքրիկ մատրան հանդէսը, որոյ համար կ' ուզէր զանգակ մ' այլ աւելցընել, որ այնչափ հաճոյչէր երեւէր Տնպահին (Պարսկահայ Մկրտչի): 1608ին Ա. Խաչի տօնն (Երեւման, ի մայիսի) աւելի մեծահանդէս եղաւ. տօնին եկող և աղօթողաց համար՝ Ներողութեան օրհնութիւն բերել տուեր էր. Հանդիսին համբաւն և զանգակին ձայնն՝ արթընցուցին Հայոց տան վերահսկող՝ քաղքին Ներքին երեք մեծ տեսուշները (Procuratori de Citra). կանչեցին Տնպահը և երկար ու մանր հարցմունքներով տեղեկացան, որ իր տնպահութեան մտած ատեն (1595) դադրած էր հօն պատարագ մատուցանելն, իսկ երբ երեք տարի առաջ (1605) եկաւ Տէր Յակովը իր կարապետ սարկաւագով, և վերոյիշեալ բաները կարգաւորեց, սկսաւ ամէն կիրակի պատարագ և ժամասացութիւն կատարել, երբեմն լուր օրեր այլ. իսկ այս Խաչի տօնի պատարագին՝ ոչ միայն Հայք, այլ և բազմութիւն քաղաքացեաց եկած էին: — Պաշտօնեամբն մեղադրեցին Տնպահին՝ որ այս բաներս ա-

ռաջուց իրենց չէր իմացուցած . ինքն այլ ըստ , որ երբ պատրիարքին աթոռակալն եկաւ օրհնեց տեղը , ինքն անտարակոյս կարծէր որ իրենց գիտութեամբ է եղածն . այս այլ աւելցուց ըսել , որ ինքն Պարսիկ ըլլալով (յետոյ մկրտեալ) Հայոց լեզուն չէր հասկընար : Այս քննութեանց պատճառն գուշակուի որ կրօնական կասկած մ' ըլլայ , օտարաց բերնով Պաշտօնէից հաղորդուած . բայց Տէր Յակովբայ նախահոգութիւնն կամ նախատեսութիւնն՝ ամեն բան կարգով և օրինաք ըրեր էր , որով պաշտօնէից ուրիշ բան չէր Ֆեար՝ բայց զանիկայ իրենցմէ ճարտար և զգոյշ գտնել :

Եթէ այս եկեղեցական և կրօնական պիտոյից համար՝ Յակովբ գնացե՞ր է ի Հռովմ , հաւանական է , այլ վկայուած չէ . եթէ և գնացեր այլ է , ոչ անմիջապէս յետ ընտրութեանն (1606 , մարտի 16) . վասն զի ապրիլի 5ին ի Վենետիկ վկայ եղած է նօտարի առջեւ՝ չորս Բաղիշեցի վաճառականաց , որք կու վկայէին թէ անցեալ տարի սեպտեմբերի մէջ ի Հռովմ վախճանած Պէտրոս Լյանն այլ Բաղիշեցի էր , և ունէր հայր՝ Ալիքնան անուամբ , եղբայր մի Սէֆէր , և մանր զաւակներ , որոց կ' ինկնար թողած ստացուածքն : — Եսոյն տարին (1606) յուլիս ամսոյ վերջի օրը՝

ԱՅՀԱՄԷԹԻ ՈՐԴԻ Հասան անուամբ թուրք մի լի . Պօլսի մօտ Փեաֆի ? (Chiaffi) բերդէն , քրիստոսական կրօնք ընդունելով՝ կու մկըրտուի Վենետիկոյ պատրիարքական Ա . Պետրոս կաթողիկէի մէջ . Յակոբ երէցն (որ միշտ յամենայն գիրս նօտարաց և եկեղեցեաց՝ Անծ Հայոց պատրիարքին վետը կոչուի), Հայոց վաճառական Ախմանի որդուոյ Յովհեփայ հետ՝ կնքահայր Կ'ըլլայ . այս ետքինս այլ Հայոց մէջ նշանաւոր տնօւոր հարուստ մէկն էր , և այս թուականէս ինչուան 30 տարի վերջ կու յիշուի : - Վանի մի տարի վերջ նոյնպիսի գործով դարձեալ կու յիշուի մեր երէցն , այսինքն կնքահայր ըլլալով ուրիշ շափահասի մի , որ էր ունկարացի տղայ մի 13 տարուան , զոր թուրքք կերի տարեր էին ի Պելկրատ քաղքէ , և անունը Այուղափական կոչուէր) , և հիմայ (ի 16 մարտի , 1609) մկրտուելով (վասն զի որոյ որդի ըլլալն յայտնի չէր) կոչուեցաւ գէորգ . Յակոբայ ընկեր կնքահայր մ'այլ եղաւ գէորգ Լին ո . կոստանդնի Կարոլիացւոյ :

Այս հոգեւոր հայրութիւններէն զատ ուրիշ բարի գործոյ մ'այլ միջնորդ եղաւ Յակոբ , թէ և խարուեցաւ : Վերոյիշեալ թուականէն երկու տարի վերջ ի Հռովմ էր , (հա-

ւանօրէն յետ 1606ի երթալն առաջին անգամն չէր)։ Հօն էր այն ատեն Յովաստի Փափաշան (Ogasap q.m Papas) Անկիւրացի մի, որ իր հայրենակից Կիւմիշշեան ? Այլառի (Aiyat Chiomis) բերած ցփսիները առեր էր ծախելու, կէս առ կէս շահով, ինչպէս դաշնաղրած էին ի Կ. Պօլիս (1610, սեպտ.), բայց չէր աջողած, և կ' ուզէր իր առանձին ապրանքով վճարել. Տէր Յակոր տեսաւ որ ի նեղն ընկած է նա, և թէ ընչից թէ անձին վրայ ձեռք պիտի դնեն, առաջարկեց որ գայ ի Վենետիկ և ինքն միշնորդ ըլլայ Այլվատին հետ գործը վճարելու։ Յովասափ ուրախութեամբ յանձն առաւ, այլ ապահովութեան գիր ուզեց յԱյլվատայ, և երբ առաւ եկաւ ի Վենետիկ, ուր արդէն դարձեր էր և մեր երէցն։ Երկու վաճառակիցքն դաշնաղրեցան ուրիշ Հայոց առջեւ, որ նախ Յովասափ վճարէ Այլվատայ 100 գուկատ, և 50 դուկատ արժող մուշտակ մ' այլ. մնացած պարտքը 300 կամ 350 դուկատ՝ վճարէ տարուէ աարի 50 դուկատ. այս բանիս երաշխաւոր եղաւ Աիմն ։ Խաչոտրոյ. բայց աւելի տապահովութեան համար խոստացաւ Յովասափ՝ որ իր աղջիկն այլ տայ ի կնութիւն Այլվատի մէկ որդւոյն։ Աակայն քանի մ' օր վերջը (1611, մայիս ամսոյ 14) Այլվատ բռնել

և բանտել տուաւ զթովասափ՝ Օտարականաց
Պաշտօնարանի (Officio de Forestier) բան-
տի. (ի Վենետիկ սովորական էր պարտա-
կանները բանտելն). բայց այսպէս խարդախ
պարտատիրոջ դէմ բողոքեց պարտականն առ
դատաւորս. ցուցընելով որ՝ նախ, ինքն վըս-
տահացեալ Այլվատի գրութեանց, ի ձեռն
Տէր Յակոբայ Խոստովանահօր Հայոց, եկաւ
ի Վենետիկ. Բ. որ 300 դուկատի պարտա-
կան էր, իսկ Այլվատ 350 կու պահանջէր.
Գ. և Դ. որ Այլվատ ոչ միայն հաւաներ էր
վերոյիշեալ պայմանաց իրաւախոհութեան,
այլ և երբ դուրս ելան սենեկէն՝ բարեկա-
մութեամբ ձեռք տուած էր. — Այս դատին
ինչպէս վերջանալն չեմ գիտեր, հաւանիմ
թէ մեր բարեսէր Տէր Յակոբն բարեսրտու-
թեամբ աշխատած և ազատած ըլլայ իր խոր-
հըրդով Հոռմէն ի Վենետիկ եկողը:

Տէր Յակովբայ վերջին ծանօթ յիշատակն
ի Դիւանս՝ է վկայ ըլլալն (ի 28 յունիսի
նոյն 1611 տարւոյն) առաջի նօտարի, որ
Մարկոս ո. Գևորգայ Բաղվշեցի իր գործակալին
(Ախմոն ո. Յովսեփայ) իշխանութիւն կու տայ,
որ երբ իր 200 դուկատ պահանջն ընդունի,
10 դուկատ տայ Հայոց եկեղեցւոյն, 10 դու-
կատ այլ Գևորգայ ո. Յովսեփայ վաճառականի:
Վերջնագոյն յիշատակն այլ շուտով հա-

սած է, հազիւ 17 օր ետեւ, այսինքն յուլիս 15ին. շաբաթ մի ջերմով և արեան վերբերութեամբ հիւանդացեալ՝ վախճաներ է Տէր Յակովը, 55 տարուան։ Մահագիրքն Ա. Յուլիանոս Թաղի, (որոյ մէջ է Հայոց տունն և Եկեղեցին), միայն Պատուելի Հ. Յակոր Հայն կ'ըսէ. առանց մակսնուան և պատուանուան, բայց բնակութեան տեղէն և այնուհետեւ իր անուան լռելէն յայտ է՝ որ ինքն Մարգարեանն է, կաթողիկոսի վիքարն. արժանաւոր լաւագոյն ծանօթութիւնն և պատուոյ, նկատմամբ՝ յօգուտ Հայ - Վենետիաց և օտարաց՝ աշխատալի նուիրակութեանցն։ Իսկ նկատմամբ ազգիս՝ այն քաղքին Հայոց և իրենց Եկեղեցւոյն տարած խնամոց համար. մանաւանդ որ ինքն է եղած անոնց առաջին հաստատուն հօգաբարձու և խոստովանահայր, ինչպէս իրենք ալ վկայեցին։ Եաւ տարի վերջը (1629), բարեզգած մէկ մի՛ մեր Երիցու ձեռագիր ժամագրոց մէջ զրեր է. « Աստուած ողորմի հոգուն Տէր Ակորին. ամէն. Հայր մէր »։ որով կ'իմացուի որ դեռ կային զինքը սիրով յիշողք և յարգողք. որպէս հաւանիմ թէ ըլլան և մեր ընթերցողք. և յուսամ թէ ժամանակն յայտնէ նոր յիշատակներ այսպիսի ժիր և արդիւնաւոր անձին։

ԺԳ.

ՃՈՒՂԱՑԵՑԻ ՎԱԶՄՈՒԱԿԱՆՔ Ի ՎԵՆԵՑԻԿ

Շատ անգամ յիշուած և լսուած են ի
զիրս և յօրագիրս մեր, նա և լնդհանուր
վաճառականութեան պատմութեան մէջ, Հայ
վաճառականք Զուղայի, ԺԶ դարուն կիսէն
վերչ մինչեւ յ' ԺԸ դար. մեր Հայ-Վենետաց
պատմութիւնն այլ կու պահանջէ՝ այս ժա-
մանակիո քննել զանոնք ի Վենետիկ, ուր՝
Մեծ և Փոքր Հայոց ամեն կողմերէ՝ աւելի
բազմութեամբ եկած են, միանգամայն և ա-
ւելի հարըատութեամբ, վաճառքով և վաստա-
կով: Բայց նախ զայս պէտք է գիտնալ, որ
երկու Զուղա կայ, Հին և Նոր. առաջինն
ի Հայաստան, Երասխ գետոյ եզերքը, որոյ
մնակիչքն Շահ Աբաս Պարսից թագաւորին
բռնի հրամանաւ հանուելով՝ քշուեցան ի
Պարսկաստան, ի մայրաքաղաքն Սպահան,
ԺԵ դարուն սկիզբը (1605), և անոր քով կամ
դիմաց շինեցին երկրորդ և Նոր Զուղայն.
ուր՝ յետ շատ նեղութեանց՝ աճեցան, հարը-
տացան, և վաճառականութեամբ սփռեցան

կամ գնացին եկան՝ յայլեւայլ շահաստան։ Ներ Եւրոպիոյ և աւելի ի Վենետիկ։ Ար յիշելիքն հիմայ այս ՚լոր Զուղայեցիներն չեն, այլ Հիներն . որք, մեր ազգի պատմութեան մէջ թէ և կարճ այլ փառաւոր միանգամայն և գթաշարժ յիշատակ մի թողած են, որ և հասարակաց ծանօթ ըլլալով՝ ոչ հարկ և ոչ պատշաճ է մեզ կրկնել զայն. այլ միայն յայտնել զարմանքնիս այդ Զուղայի գրեթէ խորհրդաւոր երեւման վրայ. զարմանալի՝ իր վաճառականական բարգաւաճանգք և հարըստութեամբ, թերեւս մեր երկրի ամէն քաղաքներէ աւելի՝ իր ատենին. խորհըրդաւոր, իր ծագման կամ այդ բարգաւաճանաց սկըզբնաւորութեան անծանօթութեամբ. և իրեւ յանկարծօրէն փայլելով, մանաւանդ թէ փայլատակելով՝ ԺԶ դարու վերջի երրորդ մասին մէջ, այնպիսի գրեթէ անծանօթ ծակէ մի, ինչպէս է իր դիրքն, քարոտ տեղ մի. որ թէ և շատ հին ատեն լսուած է իրեւ գեղ կամ աւան, այլ անկէ վերջի հազիւ թէ յիշուածի պատմութեան, մինչեւ իր դժբաղդ գերութիւնը և աւերումը։

Անկէ 30 կամ 40 տարի առաջ կու յայտնուին Զուղայի ճարտար վաճառականք ի Վենետիկ, և ի պատմութեան Վենետիկոյ։ Առաջին ծանօթ ինձ Զուղայեցին այս քաղքիս

մէջ է յամի 1570 (յուլ. 19), Գոյրէ կամ Խոյրէ? (Sayri) անուամբ մէկն, որ կը վճարէ իր պարտքը, 285 դուկատ, առ Յովհան Ալ-դեղէ ո. Տէօվլէթքեարի (Duulethiar կամ Dohaulattiar). Զուղայի անունն այլ Վենետ կեցի նօտարն զրէ Իուլա, թերեւս մոռնալով է տառը (Iulfa): Նոյն Ամդեցւոյն հետ իր հաշիւը կու կնքէ (մայիս 29) և կոնդուզ ո. Ամրէ Պարսկաստանցի (Gondus de Armenia զ.թ Amir de Azami): Նոյն օր նոյն Ամդեցին նոյնպէս Փանոսէ ո. Գեորգէ հաշիւները կու կնքէ, որոյ հետ թէ ի Հալէպ թէ ի Վենետիկ առեւտուր ըրեր էր:

Մինչդեռ ի Վենետիկ այս առաջին անգամ Զուղայեցիք կ'երեւին մեզ՝ նօտարաց առջեւ, նոյն օրերում (14 օգոս. 1571) Վենետիկոյ տէրութեան դեսպոսն մի՛ Վինչենցոյ Ալեսսանտրի (Alessandri Vincenzo) եկեր էր ի Գագուին, ուր էր այն ատեն Պարսկաց շահն. հօս իրեն եկան քանի մի Հայ վաճառականք հարցընելու իրենց ընկերաց համար, զոր շատ ապրանքով դրկած էին ի Վենետիկ: Ալեսսանտրի իմացուց որ անոնք Դուքսէն լաւ ընդունելութիւն գտած՝ իրմէ շատ առաջ (1570) ճամբայ ելած էին դառնալու իրենց երկիրը: Այդ Հայերն ըսին որ իրենք Զուղայի գլխաւորներէն են (esser si-

gnori della loro terra chiamata Diulfa), և թէ իրենցմէ մէկն իրբեւ իրենց գործակալ կենար ի Գաղուին : Ասոնց միջնորդութեամբ յաջողեցաւ Ալեսսանտրի ներկայանալ առ Միրզա՝ որդի Շահին, և իր դըքսին կողմանէ բերած թուղթերը տալ . ինչպէս որ կու գրէ ինքն իր տէրութեան, ի Գրաքովիոյ (24 յուլ. 1572). և ասով յայտնի կ'ընէ այն Ձուղայեցի Հայոց համարձակութիւնը Պարսից արքունեաց առջեւ :

Նոյն իսկ և Հայք յիշեցուցին զայս՝ Ալեսսանտրեայ, երբ իր դառնալէն վերջ ի Վենետիկ, հարկ եղաւ իրենցմէ երկու հոգի խաւրել այս տեղ, մէկն Տերման (Derman) կոչուած, միւսն Սոնդոս (Sondus), թերեւս վերոյիշեալ կոնտուզն. ասոնք առանց ապրանքի կու գային այս անգամ, որպէս զի արդելք շըլլայ ճամբուն, և շուտով հասնին, ու իրենցմէ առաջ եկողներուն ձեռօք՝ Տոլֆին կոչուած Դրամասեղանոյ (Banco Dolfin) մէջ դրած ստակնին հանեն . իրբեւ ծանօթ բարեկամ կ'անուանեն և կ'աղալեն որ Ալեսսանտրի դիւրացընէ այս գործը, ինչպէս որ մենք ալ կ'ըսեն, քեզի այս տեղ դիւրացուցինք ընելիքդ (¹). և դարձեալ, երբ առիթն

1. Siamo sicuri che vi saranno raccomandati in ogni occasione; essendo anco noi offerto tanto

Հանդիպի՝ կ'օգնենք քեզի կամ քու աղքայ։
Նոցդ։ Այս թուղթս գրուած էր ի Զուղա,
հայերէն, հոկտեմբերի սկիզբը, տարին նշա-
նակած չէ (գոնէ իտալերէն թարգմանութեան
վրայ, վասն զի բնագիր հայերէնն չկայ), այլ
գրեթէ անտարակոյս գրուած է 1572ին։

Գրողքն՝ որ զիրենք սիրելի բարեկամ կ'ա-
նուանեն Ալեսանտրեայ և անշուշտ Զուղայի
զլխաւորներէն էին, կոչուին Թէնէւէսի՞ (Տե-
ռեչեսիս), Մէրէնան և Մարտիս։ Կ'իմացը-
նեն որ իրենց երկու պատգամաւորներն ա-
ռանձին խնդիրքներ այլ ունէին, որոնց ա-
ռանց տարակուսելու կրնար հաւատալ, վասն
զի լաւ և արժանաւոր անձինք են։ – Հասան
ասոնք ի Վենետիկ, և յայտնեցին իրենց
գաղտնի յանձնուածը, որ էր Պարսից շահին
պատրաստութիւնն ի պատերազմ՝ ընդդէմ
Օսմանեանց, նոյնպէս ասոնց այլ թէ պատ-
րաստուիլն և թէ մզկըթաց մէջ աղօթելն, որ
իրենց և Պարսից մէջ եղած հաշտութիւնն շաւ-
րուի, որպէս զի իրենց նաւատորմիզն նոր
փորձանքի մի չհանդիպի ի քրիստոնէից։ Ա-
մելորդ է ըսել թէ որչափ կարեւոր էին Վե-

prontamente quando eravate qui: il che facendo
ne teniremo continua memoria, e ne dimostra-
remo effetti quando se ne appresenterà occa-
sione in servir voi o altri di vostra natione.

նետաց համար այս տեղեկութիւններն . և թէ անշուշտ որչափ խնամքով Ալեսանտրին այլ օգնեց ջուղայեցւոց խնդրոյն :

Այս երկու պատգամաւորներէն վերջը ծառօթ է ի Վենետիկ իոինեաբէր ո . Էմբէ Ջուղայեցի (de Persia loci de Giulfa), որ 1573է (մայիս 8) իրեն գործակալ դնէ նօտարի գրուածքով Ֆր . Կալլոյ Մուրանցի մի , (Մուրան Վենետիկոյ գրեթէ կպուած կըզգեակ մ' է) :

Յաջորդ տարին (1574, մարտ 3), ծանօթ Գէորգ ո . Թէոդորի սանսէրն՝ Կարկառեցի Յարութեան որդի Ալանէ⁽¹⁾ հետ կու վկայեն նօտարի առջեւ , որ Շաւալան Ջուղայեցին ութ ամսէ ի վեր ի Վենետիկ էր , և ստոյգ այս էր անունն (Sciavalat Armeno di Chiulfa) , և այսպէս այլ գրուած էր Մովային մաքսատան դիւանաց մէջ . ըսածնուն վկայ եղաւ ուրիշ Շաւալանէ մի որդի Աղետառնորդ Հալէպցի : Այս վկայութեանց պատճառն էր Շաւալաթայ հիւանդութիւնն , որ և երկրորդ օրը (4 մարտ Նիկ . Տոլիոն , նօտարը կանչելով իրեն) ի Հայոց տունն կամ անոր մօտ ի Ա . Յու-

1. Ակիմոնս պյս վկայ եղած է յամին 1870 Գոյերի և Յովհ . Ամենայ առեւտրին . իսկ վերոյդրեալ տարին (1574) յիշուի իրրեւ հասարակ սանսէր :

Մէհմէտի որդի Հասան անուամբ թուրք մի կ . Պօլսի մօտ Քեաֆի ? (Chiaffi) բերդէն , քրիստոսական կրօնք ընդունելով՝ կու մկըրտուի Վենետիկոյ պատրիարքական Ա . Պետրոս կաթողիկէի մէջ . Յակոբ երէցն (որ միշտ յամենայն գիրս նօտարաց և եկեղեցեաց՝ Անծ Հայոց պատրիարքին վկար կոչուի), Հայոց վաճառական Ախոնէ որդուոյ Յովենէտոյ հետ՝ կնքահայր կ'ըլլայ . այս ետքինս այլ Հայոց մէջ նշանաւոր տնուոր հարուստ մէկն էր , և այս թուականէս ինչուան 30 տարի վերջ կու յիշուի : - Քանի մի տարի վերջ նոյնպիսի գործով դարձեալ կու յիշուի մեր երէցն , այսինքն կնքահայր ըլլալով ուրիշափահասի մի , որ էր ունկարացի տղայ մի 13 տարուան , զոր թուրքք վերի տարեր էին ի Պելկրատ քաղքէ , և անունը Առուդափա գրեր . Վասիլ անուամբ Հայ մի գնեց զնա (իր տէրն Ահմէտ կոչուէր) , և հիմայ (ի 16 մարտի , 1609) մկրտուելով (վասն զի որոյ որդի ըլլալն յայտնի չէր) կոչուեցաւ Գէորգ . Յակոբայ ընկեր կնքահայր մ'այլ եղաւ Դէորդ Լիմն ո . կոստանդնի Նարոլիացւոյ :

Այս հոգեւոր հայրութիւններէն զատ ուրիշ բարի գործոյ մ'այլ միջնորդ եղաւ Յակոբ , թէ և խարուեցաւ : Վերոյիշեալ թուականէն երկու տարի վերջ ի Հռովմ էր , (հա-

ւանօրէն յետ 1606ի երթալն առաջին ան-
գամն չէր)։ Հօն էր այն ատեն Յովաստի Փա-
փաշտան (Ogasap q.m Papas) Անկիւրացի-
մի, որ իր հայրենակից կիւծիւշեան ? Այլա-
ռի (Aiyat Chiomis) բերած ցփսիները առեր
էր ծախելու, կէս առ կէս շահով, ինչպէս
դաշնադրած էին ի Կ. Պօլիս (1610, սեպտ.),
բայց չէր աջողած, և կ'ուզէր իր առանձին
ապրանքով վճարել. Տէր Յակոբ տեսաւ որ
ի նեղն ընկած է նա, և թէ ընչից թէ ան-
ձին վրայ ձեռք պիտի դնեն, առաջարկեց որ
գայ ի Վենետիկ և ինքն միջնորդ ըլլայ Այ-
վատին հետ գործը վճարելու։ Յովասափ ու-
րախութեամբ յանձն առաւ, այլ ապահովու-
թեան գիր ուզեց յԱյվատայ, և երբ առաւ՝
եկաւ ի Վենետիկ, ուր արդէն դարձեր էր
և մեր երէցն։ Երկու վաճառակիցքն դաշ-
նադրեցան ուրիշ Հայոց առջեւ, որ նախ Յո-
վասափ վճարէ Այվատայ 100 գուկատ, և 50
դուկատ արժող մուշտակ մ' այլ. մնացած
պարտքը 300 կամ 350 դուկատ՝ վճարէ տա-
րուէ աարի 50 դուկատ. այս բանիս երաշ-
խաւոր եղաւ Սիհն .. Խաչտրոյ. բայց աւելի
տպահովութեան համար խոստացաւ Յովա-
սափ՝ որ իր աղջիկն այլ տայ ի կնութիւն Այ-
վատի մէկ որդւոյն։ Աակայն քանի մ' օր
վերջը (1611, մայիս ամսոյ 14) Այվատ բռնել

և բանտել տուաւ զթովասափ՝ Օտարականաց
Պաշտօնարանի (Officio de Forestier) բան-
տի. (ի Վենետիկ սովորական էր պարտա-
կանները բանտելն). բայց այսպէս խարդախ
պարտատիրոջ դէմ բողոքեց պարտականն առ
դատաւորս. ցուցընելով որ՝ նախ, ինքն վըս-
տահացեալ Այգատի գրութեանց, ի ձեռն
Տէր Յակոբայ Խոստովանահօր Հայոց, եկաւ
ի Վենետիկ. Բ. որ 300 դուկատի պարտա-
կան էր, իսկ Այգատ 350 կու պահանջէր.
Գ. և Դ. որ Այգատ ոչ միայն հաւաներ էր
վերոյիշեալ պայմանաց իրաւախոհութեան,
այլ և երբ դուրս ելան սենեկէն՝ բարեկա-
մութեամբ ձեռք տուած էր. — Այս դատին
ինչպէս վերջանալն չեմ գիտեր, հաւանիմ
թէ մեր բարեսէր Տէր Յակոբն բարեսրտու-
թեամբ աշխատած և ազատած ըլլայ իր խոր-
հըրդով Հոռմէն ի Վենետիկ եկողը:

Տէր Յակովբայ վերջին ծանօթ յիշատակն
ի Դիւանս՝ է վկայ ըլլալն (ի 28 յունիսի
նոյն 1611 տարւոյն) առաջի նօտարի, որ
Մաքիո ո. Գեորգայ Բաղչշեցի իր գործակալին
(Սիմոն ո. Յովանեֆայ) իշխանութիւն կու տայ,
որ երբ իր 200 դուկատ պահանջն ընդունի,
10 դուկատ տայ Հայոց եկեղեցւոյն, 10 դու-
կատ այլ Գեորգայ ո. Յովանեսոս վաճառականի:
Վերջնագոյն յիշատակն այլ շուտով հա-

սած է, հազիւ 17 օր ետեւ, այսինքն յուլիս
15ին . շաբաթ մի ջերմով և արեան վերբե-
րութեամբ հիւանդացեալ՝ վախճաներ է Տէր
Յակովը, 55 տարուան։ Մահագիրքն Ա . Յու-
լիանսո թաղի, (որոյ մէջ է Հայոց տունն և
Եկեղեցին), միայն Պատուելի Հ . Յակոր Հայն
կ'ըսէ . առանց մականուան և պատուանուան,
բայց բնակութեան տեղէն և այնուհետեւ իր
անուան լոելէն յայտ է՝ որ ինքն Մարգա-
րեանն է, կաթողիկոսի վիքարն . արժանաւոր
լաւագոյն ծանօթութեան և պատուոյ, նկատ-
մամբ՝ յօգուտ Հայ – Վենետաց և օտարաց՝
աշխատալի նուիրակութեանցն։ Իսկ նկատ-
մամբ ազգիո՞ւ այն քաղքին Հայոց և իրենց
Եկեղեցւոյն տարած խնամոց համար . մանա-
ւանդ որ ինքն է եղած անոնց առաջին հաս-
տատուն հոգաբարձու և խոստովանահայր,
ինչպէս իրենք ալ վկայեցին։ Շատ տարի
վերջը (1629), բարեգգած մէկ մի՛ մեր երի-
ցու ձեռագիր ժամագրոց մէջ գրեր է . « Աս-
տուած ողորմի հոգուն Տէր Ակորին . ամէն .
Հայր մէր » . որով կ'իմացուի որ գեռ կային
զինքը սիրով յիշողք և յարգողք . որպէս հա-
շանիմ թէ լլլան և մեր ընթերցողք . և յու-
սամ թէ ժամանակն յայտնէ նոր յիշատակ-
ներ այսպիսի ժիր և արդիւնաւոր անձին։

ԺԳ. •

ՃՈՒՂԱՑԵՑԻ ՎԱԶԱՌԱԿԱՆԻ Ի ՎԱՆԵՑԻԿ

Շատ անգամ յիշուած և լսուած են ի
զիրս և յօրագիրս մեր, նա և լնդհանուր
վաճառականութեան պատմութեան մէջ, Հայ
վաճառականք Զուղայի, ԺԶ դարուն կիսէն
վերը մինչեւ յ' ԺԸ դար. մեր Հայ-Վենետաց
պատմութիւնն այլ կու պահանջէ՝ այս ժա-
մանակիո քննել զանոնք ի Վենետիկ, ուր՝
Մեծ և Փոքր Հայոց ամեն կողմերէ՝ աւելի
բազմութեամբ եկած են, միանգամայն և ա-
ւելի հարըստութեամբ, վաճառքով և վաստա-
կով: Բայց նախ զայս պէտք է գիտնալ, որ
երկու Զուղա կայ, Հին և Նոր. առաջինն
ի Հայաստան, Երասխ գետոյ եզերքը, որոյ
մնակիչքն Շահ Աբաս Պարսից թագաւորին
բռնի հրամանաւ հանուելով՝ քշուեցան ի
Պարսկաստան, ի մայրաքաղաքն Սպահան,
ԺԵ դարուն սկիզբը (1605), և անոր քով կամ
դիմաց շինեցին երկրորդ և Նոր Զուղայն.
ուր՝ յետ շատ նեղութեանց՝ աճեցան, հարըս-
տացան, և վաճառականութեամբ սփուեցան

կամ գնացին եկան՝ յայլեւայլ շահաստան։ Ներ Եւրոպիոյ և աւելի ի Վենետիկ։ Ան յիշելիքն հիմայ այս ՚որ Զուղայեցիներն չեն, այլ Հիներն . որք մեր ազգի պատմութեան մէջ թէ և կարճ՝ այլ փառաւոր միանգամայն և գթաշարժ յիշատակ մի թողած են, որ և հասարակաց ծանօթ ըլլալով՝ ոչ հարկ և ոչ պատշաճ է մեզ կրկնել զայն . այլ միայն յայտնել զարմանքնիւ այդ Զուղայի գրեթէ խորհրդաւոր երեւման վրայ . զարմանալի՝ իր վաճառականական բարգաւաճանօք և հարըստութեամբ, թերեւս մեր երկրի ամէն քաղաքներէ աւելի՝ իր ատենին . խորհրդաւոր, իր ծագման կամ այդ բարգաւաճանաց սկըզբնաւորութեան անծանօթութեամբ . և իրեւ յանկարծօրէն փայլելով, մանաւանդ թէ փայլատակելով՝ ԺԶ դարու վերջի երրորդ մասին մէջ, այնպիսի գրեթէ անծանօթ ծակէ մի, ինչպէս է իր դիրքն, քարոտ տեղ մի . որ թէ և շատ հին ատեն լսուած է իրեւ գեղ կամ աւան, այլ անկէ վերջը հազիւ թէ յիշուածի պատմութեան, մինչեւ իր դժբաղդ գերութիւնը և աւերումը :

Անկէ 30 կամ 40 տարի առաջ կու յայտնուին Զուղայի ճարտար վաճառականք ի Վենետիկ, և ի պատմութեան Վենետիկոյ : Առաջին ծանօթ ինձ Զուղայեցին այս քաղքիս

ԱԵՐԻ է յամի 1570 (յուլ. 19), Գայրէ կամ Խոյրէ? (Cayri) անուամբ մէկն, որ կը վճարէ իր պարտքը, 285 գուկատ, առ Յաջնան ԱՀ- Դէցէ ո. Տէօվլէթքեարի (Duulethiar կամ Dohaulattiar). Զուղայի անունն այլ Վենետ- կեցի նօտարն զրէ Iula, թերեւս մոռնալով ի տառը (Iulfa): Նոյն Ամդեցւոյն հետ իր հաշիւը կու կնքէ (մայիս 29) և կոնդուզ ո. ԱԴՐԻ Պարսկաստանցի (Gondus de Arme- nia զ.մ Amir de Azami): Նոյն օր նոյն Ամ- դեցին նոյնպէս Փանոսի ո. Գեղդէ հաշիւները կու կնքէ, որոյ հետ թէ ի Հալէպ թէ ի Վե- նետիկ առեւտուր ըրեր էր:

Մինչդեռ ի Վենետիկ այս առաջին ան- գամ Զուղայեցիք կ'երեւին մեզ՝ նօտարաց առջեւ, նոյն օրերում (14 օգոս. 1571) Վե- նետիկոյ տէրութեան դեսպան մի՛ Վինչեն- ցոյ Ալեսանտրի (Alessandri Vincenzo) ե- կեր էր ի Գաղուին, ուր էր այն ատեն Պար- սից շահն. հօս իրեն եկան քանի մի Հայ վաճառականք հարցընելու իրենց ընկերաց համար, զոր շատ ապրանքով դրկած էին ի Վենետիկ: Ալեսանտրի իմացուց որ անոնք Դուքսէն լաւ ընդունելութիւն գտած՝ իրմէ շատ առաջ (1570) ճամրայ ելած էին դառ- նալու իրենց երկիրը: Այդ Հայերն ըսին որ իրենք Զուղայի գլխաւորներէն են (esser si-

gnori della loro terra chiamata Diulfa), և թէ իրենցմէ մէկն իրրեւ իրենց գործակալ կենար ի Գագուին : Ասոնց միջնորդութեամբ յաջողեցաւ Ալեսսանտրի ներկայանալ առ Միրզա՝ որդի Շահին, և իր դըքսին կողմանէ բերած թուղթերը տալ . ինչպէս որ կու գրէ ինքն իր տէրութեան, ի Գրագովիոյ (24 յուլ. 1572) . և ասով յայտնի կ'ընէ այն Զուղայեցի Հայոց համարձակութիւնը Պարսից արքունեաց առջեւ :

Նոյն իսկ և Հայք յիշեցուցին զայս՝ Ալեսսանտրեայ, երբ իր դառնալէն վերջ ի Վենետիկ, հարկ եղաւ իրենցմէ երկու հոգի խաւրել այս տեղ, մէկն Տերման (Derman) կոչուած, միւսն Սոնդոս (Sondus), թերեւս վերոյիշեալ կոնտուզն. ասոնք առանց ապրանքի կու գային այս անգամ, որպէս զի արդեւք շըլլայ ճամբուն, և շուտով համնին, ու իրենցմէ առաջ եկողներուն ձեռօք՝ Տոլֆին կոչուած Դրամասեղանոյ (Banco Dolfin) մէջ դրած ստակնին հանեն . իրրեւ ծանօթ բարեկամ կ'անուանեն և կ'աղաչեն որ Ալեսսանտրի դիւրացընէ այս գործը, ինչպէս որ մենք ալ կ'ըսեն, քեզի այս տեղ դիւրացուցինք ընելիքդ (¹). և դարձեալ, երբ առիթն

1. Siamo sicuri che vi saranno raccomandati in ogni occasione; essendo anco noi offerto tanto

Հանդիպի՝ կ'օգնենք քեզի կամ քու ազգայնոցդ։ Այս թուղթս գրուած էր ի Զուղա, հայերէն, հոկտեմբերի սկիզբը, տարին նշանակած չէ (գոնէ իտալերէն թարգմանութեան վրայ, վասն զի բնագիր հայերէնն չկայ), այլ գրեթէ անտարակոյս գրուած է 1572ին։

Գրողքն՝ որ զիրենք սիրելի բարեկամ կ'անուանեն Ալեսսանտրեայ և անշուշտ Զուղայի զլիսաւորներէն էին, կոչուին թէնեւեւի՞ (Tenechesiss), Միջնա և Մարտիս։ Կ'իմացընեն որ իրենց երկու պատգամաւորներն առանձին խնդիրքներ այլ ունեին, որոնց առանց տարակուսելու կրնար հաւատալ, վասն զի լաւ և արժանաւոր անձինք են։ — Հասան ասոնք ի Վենետիկ, և յայտնեցին իրենց գաղտնի յանձնուածը, որ էր Պարսից շահին պատրաստութիւնն ի պատերազմ՝ ընդդէմ Օսմանեանց, նոյնպէս ասոնց այլ թէ պատրաստուիլն և թէ մզկըթաց մէջ աղօթելն, որ իրենց և Պարսից մէջ եղած հաշտութիւնն շաւրուի, որպէս զի իրենց նաւատորմիղն նոր փորձանքի մի չհանդիպի ի քրիստոնէից։ Աւելորդ է ըսել թէ որչափ կարեւոր էին Վե-

prontamente quando eravate qui: il che facendo ne teniremo continua memoria, e ne dimostreremo effetti quando se ne appresenterà occasione in servir voi o altri di vostra natione.

նետաց համար այս տեղեկութիւններն . և թէ
անշուշտ որչափ խնամքով Ալեսսանտրին այլ
օգնեց Զուղայեցւոց խնդրոյն :

Այս երկու պատգամաւորներէն վերջը ծա-
նօթ է ի Վենետիկ Խովեռքէր ո . Էֆրէ Զու-
ղայեցի (de Persia loci de *Giulfa*), որ
1573է (մայիս 8) իրեն գործակալ դնէ նո-
տարի գրուածքով Ֆր . Կալլոյ Մուրանցի մի,
(Մուրան Վենետիկոյ գրեթէ կպուած կըզ-
գեակ մ' է) :

Յաջորդ տարին (1574, մարտ 3), ծանօթ
Գէորգ ո . Թէոդորի սանսէրն՝ Կարկառեցի
Յարութեան որդի Ալանի (¹) հետ կու վկայեն
նօտարի առջեւ, որ Շատալան Զուղայեցին ութ
ամսէ ի վեր ի Վենետիկ էր, և ստոյգ այս
էր անուն (Sciavalat Armeno di Chiulfa),
և այսպէս այլ գրուած էր Ծովային մաքսա-
տան դիւանաց մէջ . ըսածնուն վկայ եղաւ
ուրիշ Շատալանի մի որդի Ալեքոսնոր Հալէպցի :
Այս վկայութեանց պատճառն էր Շաւալա-
թայ հիւանդութիւնն, որ և երկրորդ օրը (4
մարտ Նիկ . Տոլիոն, նօտարը կանչելով իրեն)
ի Հայոց տունն կամ անոր մօտ ի Ա . Յու-

1 . Ախմոնս այս վկայ եղած է յամին 1570 Գայերի
և Յովհ . Ամենեցւոյ առեւտրին . իսկ վերոյգրեալ տա-
րին (1574) յիշուի իբրեւ հասարակ սանսէր :

լիան, կտակը գրել տուած է, ինքն թուրքա-
րէն ըսելով մէկու մի (Պիոնեդդա), նա այլ
պարսկերէն թարգմանելով ուրիշի մի, և առ
իտալերէն գրել տալով նօտարին։ Շաւալաթ կը
յայտնէ իր հօր անունը Գուապան, հօրեղբօրը՝
Յակոբ, որոյ որդին Մարտինը էր ի Վլենետիկ,
և զսա կ'ընէ իբրեւ կտակակատար. իսկ ժա-
ռանգ՝ զանոնք որ հայերէն կտակի մէջ նշա-
նակեր էր, իրեք օր առաջ գրած՝ իր քաղա-
քացի Նասիպէ ձեռքով. անոր կը յանձնէ իր
հոգւոյն համար պատշաճ համարած ողորմու-
թիւնը տալ։ Մահուան և թարգման յիշա-
տակն չկայ, որովհետեւ այն տարուան մե-
ռելագիրքն կորսուած են։

Նոյն օրեր (12 յունիս, 1574) Կարապետի
որդի Յոհաննէս Զուղայեցի այլ՝ իրեն գոր-
ծակալ գրած է Վլենետիկեցի մի, Հերոնիմ
Ֆորեսդի, որոյ վկայ և թարգման եղած է
վերոյիշեալ Հալէպցի Շաւալաթի որդի Աղեք-
սանդր. ասոր հայրն Հալէպի դրամանոցի
վարպետ վերակացու է եղեր, (Sauolet, mi-
istro della Cecha in Aleppo). Յովհաննէս
կարապետի որդին և Նասիպ կամ Նասուպ
Մանուելի որդի Զուղայեցիք կու յիշուին՝ նա
և մէկ թատերական կամ ողբերգութեան
յարմար դիպուածի մէջ այլ, որ է հետե-
ւեալն։

Թուականէս իբր տասն տարի առաջ՝ Զուղայեցի երիտասարդ կամ չափահաս մէկ մի Յովէտ անուամբ կու գայ ի Վենետիկ, ի Ճենովա, և Խտալիոյ ուրիշ քաղաքներ. և ինչպէս կ'երեւի՝ Դուռինի մօտ Ալա գեղէն Դոմինիչիլլա (Dominicilla) անուամբ տարասեռի մի կու սիրահարուի. 1573ին մահն վրայ կու հասնի. ասոր կու կտակէ Յովսէփ իր ստացուածքը: Իր հայրն Պապս կամ Բապս որդի Մաքտաբայ ողջ է եղեր. և լսելով դիպուածը՝ կու գայ ի Վենետիկ, կ'իմանայ եղածը, և կու ջանայ ձեռք բերել իր որդւոյն թողածը. որոյ համար շատ ժամանակ կ'անցնի, և կու ստիպուի ինքն ուրիշներէ փոխ առնուլ՝ դատաստանի ծախքերը վճարելու: Պարտատերանց մէկն է յիշեալ Շաւալաթի որդի Աղեքսանդրն, ուսկի առեր է 310 դուկատ, զօր յամի 1575 (մարտի 18 և 21) նօտարի առջեւ կու խոստանայ վճարելու. վկայ կ'ըլլան Նասուան և Գէորգ ո. Թէոդորի, և Տէր Թանս ո. Գէորգայ՝ Հըսնքէյֆցի Յակոբիկ քահանայ մի: Կարապետի որդի Յովհանն այլ ոչ միայն երաշխաւոր կ'ըլլայ Բասսայի, այլ և գլուխ կու կենայ դատը առաջ տանելու, ընկեր առնըլով իրեն քանի մի Զուղայեցիներ, Աղետուանդր ո. Անդրէի, Միսայա? (Missaria), Մուրաբ և Կիրակոս (Chiragatus):

Ասոնք Բասայի հետ կու պնդեն, թէ Յովսէփ
իր երկրէն դուրս չելած՝ հօն թողեր էր 9
կամ 7 տարուան որդի մի Հայբաղետ անուամբ,
որու կ' ինկնայ ժառանգութիւնն։ Ասոր հա-
կառակ ուրիշներն կ' ըսէին, թէ Յովսէփ 15
տարի է որ իտալիա եկած էր, և այն տա-
րիքով որդի չէր կրնար ունենալ իր հայրե-
նեաց մէջ։ Ասոնց խօսքը հաւանական կամ
քննութեան արժանի համարելով, վերոյիշեալ
թուականին (1575, դեկտ. 23) Հասարակաց
Փաստաբանից անուսնեալ դատարանն կու
կանչէ Յովհաննու կողմնակիցները. միայն սա
և Բասսա եկան, մէկայլ ընկերքն աներեւոյթ
եղան. անոր համար դատաւորք զանոնք խար-
դախ և սուտ վկայ համարելով՝ դատապար-
տեցին (23 յուն. 1576), որ եթէ բռնուին,
հրապարակին երկու սեանց մէջ աջ ձեռքեր-
նին և յեզունին կտրելով ի բանտ դրուին
տարի մի, յետոյ վարնտուին վլենետկոյ սահ-
մանէն. և եթէ նորէն դառնան՝ երկու տարի
բանտի դատապարտուին։ Իսկ Յովհան և
Բասսա իրենց ըսածին վրայ հաստատ կեցան,
թէ և բանտուեցան։ Միւս կողմէ Դոմինիչիլլա՝
իր ո՛ր և է կերպով ժառանգածը չկորուս-
անելու համար՝ կ' իմացընէր, որ այս խըն-
դրոյս վրայօք քննութիւն եղած էր ի ձե-
նովա և իրեն տրուած էր իրաւունքն։ Վե-

Նետկոյ դատաւորք փաստաբան մի խաւրեցին ի Ճենովա . սա քննեց իմացաւ որ սուտ է կնկան ըսածն . այն ատեն (1579, սեպ . 3) դատաւորք արձեկեցին ի բանտէ զթովհանն և զբասսա . և ոչ միայն Յովսեփայ թողածը վճռեցին առնուլ և տալ իր հօրը և որդւոյն , այլ և Դոմիչիլայի օժիտէն առնուլ և տալ Բասայի և Յովհաննու՝ իրենց դատաստանի համար ըրած ծախուց փոխարէն : Վճռողքն էին 36 դատաւորք . որոց միայն երկուքին քուէն անորոշ էր :

Վերոյիշեալներէն զատ եկեր են անշուշտ շատ ջուղայեցիք ալ ի Վենետիկ , որ որոշակի իրենց քաղքին անուամբ յիշուած չեն . մենք ալ չուզելով կարծեօք ընդունիլ , քանի մի անտարակոյսներ այլ յիշենք Ժ. դարուն վերջի և Ժ. դարու առաջին տարիները : Այսպիսիքն , Տիրան մի , Thirano գրուած , յամի 1593 , որ 110 դուկատ պարտական էր նախաւանցի Պօղոսի , որդւոյ Բարեղի , (Baser գրուած) . սա իրեն գործակալ դրաւ (օգոստ . 23) Հայոց ճարպիկ սանսէրներէն մէկը , Մարիս Մարտոր ո . Յակովիայ , առնելիքը պահանջելու համար , կամ ուղղակի կամ Տիրանայ ինչքը գրաւելով . վկայ եղան մեզի ծանօթ Գէորգ տնպահն Հայոց (ո . Թէոդորի) , Մելքոն վաճառական , Մարիս վաճառական ո . Շահնշանյի (Iansa) :

1599, մայիս 7. Գեորգ Զուղայեցի Աեր-
տար մականուանեալ, որ վկայեց Մարգարեան
Տէր Յակոբայ պատգամաւոր երթալն առ իշ-
խանն Վյաց, և ի Պարսս:

Կարապէտ ո. Բարսով (Թերեւս վերոյիշելոյն),
որ առնելիք ունէր 360 դուկատ Համայնշէտ
Յուզեֆայ որդի Խաչատրուքն. սա խոստացաւ
(1601, փերր. 6) որ երբ դառնայ այն քաղ-
քէն ուր պիտի երթար, վճարէ Խաչատրոյ ամ-
բողջ պարտքը. այլ և կու խոստանայ որ պարտ-
քէն դուրս՝ տայ Խաչատրոյ զոյգ մի չուխայէ
զուլպայ կամ տափատ վաթսուննոց? (un pa-
ro di calce di panno de sessanta), իբրեւ
ընծայ մի և ոչ այլ ինչ:

Աւետիտ Զուղայեցի ո. Խոստապաշչ (1602,
մայիսի 21) կ' ընդունի իր առնելիքն ի Աի-
սիանցի Ղաղաբայ ո. Յովհաննու, և անդոր-
րագիր կու տայ անոր. երկու օր վերջը
(մայիս 23), իրեն գործակալ կարգէ նօտա-
րի առջեւ՝ դՔրէստափոր ո. Տօնաբայ Առուրիան
անուանեալ, (Ասորի կամ Հալէպցի կար-
ծուի) Թուրքաց սանսէրը, որ ընդունի իր
ապրանքները, երբ հասնին նաւով, և ուրիշ
որ և է առնելիքը, և այլն.

Գրէտոր ո. Մարտիրոսի և Գեորգ ո. Անդոնի
Զուղայեցիք իրենց գործակալ կարգեն դՄու-
կու Մարտիր սանսէր և անոր որդին Յակոբ,

որ պահանջեն Տոռոպազինչի (Törölpazincsi) անուանեալ Ֆիորենցացիներէ՝ իրենց ծախած մետաքսի գինը. վկայ կ' ըլլան վերոյիշեալ Սեբաստացի Մարկոսն ո. Շահինշայ, և Զուղայեցին Դանիէլ ո. Տելեէլ (1602, հոկտեմբ. 21): Այս Դանիէլ այլ քանի մ'օր վերջը (25 հոկտ.) նոյն Մարկոս Մուրատը և որդին իրեն գործակալ կ' ընէ, ընդունելու 13 հակ Մանաժի գինը, գոր ծախեր էր իտալացի (Պետրոս Յովհան) բամբակագործին:

1603, յանուարի 10, կու վախճանի Յովհաննէս Զուղ. որդի Պապայ, որ յիշուած է յամի 1596, ջերմով հիւանդացած ըլլալով, (ի տան Յովհ. ո. Նիկոլ Վենտրամին ազնուական Վենետի, ի Ս. Մարկոլա կոչուած թաղի): Նախընթաց դեկտ. 16էն կտակը գրել տուեր էր, գործադիր կարգելով իր ճամրուընկեր և հայրենակից Ալենը, որուն կ' ապըսպըրէ իր ապրանքները ծախել, երթալ յԱսորիս, անկէց այլ ի Զուղա. և անոնց գինը յանձնել Սէֆէրի որդի Խաչկայ: Հասարակաց մեռելագրոց մէջ կ' երեւի սխալմամբ 19 տարուան գրուած է վախճանեալն, որ անհաւատալի է. մանաւանդ որ յայտնապէս նօտարական գրուածոց մէջ վկայուած է նա յամին 1596 (մարտ 16) իրը 55 տարուան. յիշուելուն պատճառն այլ նշանաւոր է: Խա-

շատուր ո. Աւետիկի Հայոցի վաթսուն տարուան ծերուկ մի (որ ձախ ձեռացը վրայ վիրաց սպի մի ունի եղեր), Կղեմէս Ը Սրբ. Պապէն վկայագիր առեր է (12 յուլ. 1595) ստակ ժողովելու, իր ընտանիքը Թուրքաց գերութենէն ազատելու համար։ Հիմոյ ի Աւենետիկ գտուելով՝ իրեն գործակալ կարգէ այս Պապայ որդի Յովհաննէսը ողորմութիւն ժողովելու։ Այս բանիս վկայ կ'ըլլան Գետրէ Աւետելէ որդի սանսէր մի Հայոց տան մէջ բնակող, և Ասորի վաճառական մ'այլ (Բենեդիկտոս)։ Ասոնց հետ յիշենք Գ. յեղանակի (Հայ-Վենետոց) սկըզբան, (1607 նոյեմբ. 24) Մարտար Զուղ. ո. Սեֆէրի, որ անդորրացիր կու տայ առ վերոյիշեալ Քրիստափոր ո. Տոնատոյի իր 24 դուկատ առնելիքն ընդունելուն համար։

ԺԴ.

ՀԱՅՈՑ ԲԱԶՄԱՆԱԼՆ ԵՒ ԲՆԱԿԱՐԱՆՔՆ Ի ՎԵՆԵՑԻԿ

Բաւական համարելով առ այժմ՝ այսշափս
Հին Զուղայեցւոց ի Վենետիկ երթեւեկին
նկատմամբ, ցաւիմք որ անոնց վրայօք հայե-
րէն գրուած մի չեմք գտած՝ այս միջոց ժա-
մանակիս, այլ միայն իտալերէն, որ՝ քաղքին
անունն ալ պէսպէս գրէ, ինչպէս տեղ տեղ
յիշեցինք. Iula. Iulfa. Diulfa. Chiulfâ. Giul-
fa, և այլն :

Հետաքրքրական է նա և ասոնց յաճա-
խեալ բնակութեան տեղն ի Վենետիկ. բայց
նախ պէտք է գիտնալ, որ Վենետիկոյ տէ-
րութիւնն յամենայնի զզուշաւոր և կաս-
կածոտ, մանաւանդ այս յեղանակիս (ՃԵ-Զ
դար), առանց քննութեան և հրամանի չէր
թողուր օտարականաց բնակիլ իրենց ուզած
տան մէջ. ինչպէս յիշուի ի դիւանս նոցա,
որ յամի 1530 ի կ. Պօլսոյ կու գան երեք
Հայք, Զաքարիա, Սիմոն և Գէորգ, և կ'ի-
շեվանին ի տան Գասպարայ (անշուշտ և սա
Հայ). տէրութեան հրամանաւ Եօթն Գիտունք
կոչուած պաշտօնեայք քննելով՝ ընդունելի

Համարին զանոնք . բայց պատուիրեն Գաս-
պարայ (16 մարտի) որ առանց հրամանի
շընդունի ուրիշ մի , և ոչ հաց ոչ գինի տայ
ուրիշի՝ իր տան մէջն

Շատ անգամ այս գրուածին մէջ յիշուած
Ս . Մարիամ Խորոտիկ (S. M. Formosa)
եկեղեցւոյ և Ս . Նոր Յովհաննէսի (S. Gio-
vanni Nuovo) թաղից մէջ և անոնց քովերը՝
բնակած են Հայք , զլիսաւորապէս այն փո-
ղոցում՝ որ ինչուան հիմայ կոչուի Ռուկա
Ճիւֆա (Ruga Giuffa) , զոր շատք՝ թէ՛ իտա-
լացիք և թէ մերայինք՝ համարած են նոյն իսկ
Զուղայի անուամբ , որ և յարմար և բնա-
կան կ'երեւի . սակայն չէ ստոյգ . վասն զի
յառաջ քան Զուղայեցւոց գալը՝ այնպէս կո-
չուած է այն փողոցն , և մեր Զուղայ ա-
նուան պէս ծըռմըռկած , (Ruga Iulfa, R.
Giuffa, R. Iuffa, R. Giufa, R. Ziulfa) . Հնա-
գոյն գրուածք կոչեն Gajoffa կամ Gagiuffa.
Քաղքին ուրիշ մէկ կողմն այլ կար այսպէս
կոչուած փողոց մի . երկուքին եւս անունն
կըսո՞ֆա բառէն ծագած է ինչուան ԺԳ դարէ
(1283) , այն տեղ խաբեբայ կամ Գնչու (չին-
կեանէ , zingano) բնակողներէ , որք այնպէս
կոչուէին . ինչպէս հիմայ այլ Դալմատք կըսո՞-
ֆա (Geiupka) կ'անուանեն զԳնչուս . ուսկից
համարի գիտնական մի՝ լատինարէն Gaiu-

իս և Տայս կոչելն զայր և զկին գնչու։
Ոմանք ի գիտնական վենետաց՝ կարծած են,
թէ այդ անօւնն իրենց կայս-ֆէլ կոչուած մէկ
հին ընտանիքէ մի առաջ եկած է։ Դարձեալ,
ուրիշ գիտնական մի կարծէ՝ թէ այն փողո-
ցին մէջ ժանտամահ հանդիպելէն այնպէս կո-
չուած ըլլայ, իբր զի կայս-ֆէլ ժանտախտ կու-
նշանակէ։

Յիշատակ այսշափ Զուղայեցւոց ինքնին
գուշակել կու տան, թէ այս ժամանակ (ՃԶ
գարու կիսէն վերջ) որչափ յաճախութիւն
կար Հայոց ի Վենետիկ, և ոչ միայն ի Զու-
ղայէ կամ ի Պարսկահայոց, այլ և ի Թուր-
քահայոց, մանաւանդ ի Փոքր Ասիոյ, յԱսոր-
ւոց կողմանէ և ի Կիլիկիոյ եւս։ Այս բանս
յայտնապէս ծանուցին Հայք՝ իրենց մէկ
գրուածով, յամին 1579, որոյ դժբաղդաբար
հայերէն բնագիրն չկայ, այլ իտալերէն թարգ-
մանութիւն։ և այնշափ աւելի փափագելի և
պատուական է՝ որչափ որ հին կամ առաջին
անգամն է, որ կ' իմացընէ Հայոց միարան-
օրէն ժողովիլն և իրենց տան համար կարգ
կանոն սահմանելն։ յօրում և եկեղեցական
կամ կրօնական վիճակնին այլ կու յիշեն, և
միով բանիւ Սահմանադրութիւն կ' անուանեն
իրենց որոշածը և գրածը. զոր ահա թարգ-
մանելք յիտալական թարգմանութենէն։

« Այս է ծանուցումն Սահմանադրութեան
 » ազգիս Հայոց. Յամի Տեառն մերոյ 1579,
 » ի քաղաքն ի Վենետիկ. Աստուած լուսա-
 » ւորէ փառօք արքայութեան գհողի ամենա-
 » փառաւոր և ամենազնիւ Մարկոսի Ծիա-
 » նեայ, որ յամի Փրկչին 1253, առատա-
 » ձեռնութեամբ տուաւ մեր Հայոց ազգիս
 » վաճառականաց՝ իր մէկ տունը, որ զետե-
 » ղուած է ի Ս. Յուլիանոս թաղի, որպէս
 » զի մշտնջենաւորապէս մնայ Հայոց ազգին,
 » ինչպէս որ պայմաններն այլ գրուած են
 » իր կտակին մէջ։ Անցեալ ատեններ հօն
 » բնակէին մեր վաճառականք, և երբ շատ-
 » ցան ազգայինքն, իրենց յօժար կամօք թո-
 » ղուցին այն տունը իրենց (հայրենակից)
 » աղքատաց, և իրենք գնացին առանձին տու-
 » ներու մէջ բնակելու։ Այս տան (մէկ մա-
 » սին) մէջ խորան մի շինեցին, միւս մասին
 » մէջ աղքատներն կու բնակէին։ Սահմա-
 » նեցին եւս՝ որ Էջմիածնի կաթողիկոսական
 » աթոռէն քահանայ մի գայ և աստուածային
 » պաշտամունքը կատարէ։ Կարձեալ. ազ-
 » գային վաճառականք իրենց մէջ պայման
 » մայլ հաստատեցին, որ իրենց ողորմու-
 » թեան տուրքով թէ այդ խորանն պահպա-
 » նուի և թէ աղքատներն. և ինչուան այս
 » օրս կու պահուի այս սահմանադրութիւնս,

» որով ամեն տարի վաճառականներէն մէկն
 » կ'ընտրուի Պահպանի (Conservatore), «ր
 » ժողվէ վաճառականներէն իրենց կամաւոր
 » առւրքը, որպէս զի վայելչապէտ պահուին
 » խորանն և աղքատք։ Ով որ այս վերոյի-
 » շեալ Սահմանադրութիւնս պահէ միշտ հաս-
 » տատուն, և բարի մտօք կատարէ միշտ
 » բարեկարգութիւնը, օրհնեալ ըլլայ յամե-
 » նակալէն Աստուծոյ, օրհնեալ ըլլայ յամե-
 » նայն Արքոց, և արժանի սուրբ արքայու-
 » թեան և Աստուծոյ յաւիտենական փառաց.
 » ամէն » :

Այս Սահմանադրութենէս երկու տարի
 առաջ էր (1577), «ր Գէորգ ո. Յովհաննու
 ընտրեցաւ Տնպահ (տ. եր 200). իրեւ 25
 տարի վերջը եկաւ Տէր Յակովը Մարգա-
 րեան, եկեղեցապան և ժամարար։ Սահմա-
 նադրութենէն շատ տարի և գրեթէ դար մի
 առաջ, կու յիշուի Հայոց խնդրելն և նորո-
 գել տալն իրենց տունը (1493-6), և յամին
 1497 օտարները հանելով՝ իրենց մտնել և
 բնակիլն (տ. 201). և կ'երեւի թէ այն ատեն
 սկսած են այն տեղ իրենց մատուռ մի շի-
 նելու մտածութիւնը, և քիչ մի ետքը Լեւոն
 Ժ Պապէն խնդրեր են զայն հաստատել։
 Ոչ իրենց աղերսագիրն և ոչ այլ Պապին
 կոնդակն յայտնուած է. սակայն ոչ միայն այս-

պէս աւանդուած է, կ'ըսէ աստուածաբան քննիչն՝ դքսին հրամանաւ՝ յամի 1740, այլ և Յոյնք՝ երբ նոյն Վենետիկոյ տէրութենէն խնդրեցին եկեղեցւոյ շինութեան հրաման (1511), իրենց աղերսագրին մէջ կու վկայեն, որ արդէն Հայոց տրուած էր այսպիսի շնորհք. իսկ Պապն իրենց (Յունաց) հրաման տուաւ ի 1514 (յունիս 9): Հայոց այն ատեններ շատնալուն ի Վենետիկ՝ բաց յայլոց վկայէ քաղքին ազնուականներէն մէկն այլ, Թովմ. Կոնտարինի (Tomaso Contarini), օտար բազմաթիւ ազգայնոց կարգին դնելով և զՀայս (⁽¹⁾). « Այնշափ Հայք գտուին հօս.. Քրիստոնեայն Հրէին կու հանդիպի.. Յոյնն՝ Հայու, Հայն՝ իտալացւոյ » .

Այսշափ Հայոց բազմանալուն ի Վենետիկ՝ իրենց իսկ յիշեալ գրաւոր վկայութիւնն յայտնէ, թէ բաւական չէր ի բնակութիւն Ծիանի դքսորդւոյն թողած տունն, որ եթէ և միշտ հայաբնակ եղած է ինչուան այս (ՃԹ) դարուս կիսուն մօտ, այլ և միշտ փոքր տուն մ'է, և աւելի փոքրացաւ՝ երբ յատակին վրայ Ա. Խաչ եկեղեցին շինեցին: Հարկ էր որ ոչ

1. Qui si trovano tanti... Armeni. Il Cristiano con l' Ebreo... il Greco con l' Armeno, l' Armeno con l' Italiano.

միայն այն ատեն, այլ և առաջ՝ քաղքին ու րիշ կողմերում այլ բնակէին Հայք. և արդէն ցուցինք իրենց բնակութեան գլխաւոր թաղը (ի Ս. Մարիամ Խորոտիկ). որու մօտ կամ կից է և Նոր Ս. Յոհաննէս կոչուած (S. Giovanne Nuovo) եկեղեցին և թաղն, որ և նոյնպէս հայաբնակ էր. կոր հօն նոյն անուամբ (Ս. Յովհաննէս) վաճառականաց օթեվան. մ'այլ (Case dell'Hospitaletto di S. Zuan Battista deli Mercanti, poste in Ruga Gajuffa) (¹). թուի թէ հօն այլ բնակէին մերազգիք. և գուցէ նոյն իսկ Ս. Յովհաննէս տեղին ըլլայ, ուր ԺԻ դարուն կիսէն առաջ կային Հայ Եղբարքն (տ. 151):

Սակայն ոչ ամեն Հայք այս յիշեալ թաղերու մէջ բնակէին, այլ ըստ հաճութեան ուր որ իրենց յարմար համարէին. և այլեւայլ կողմեր իրենց համար տուներ վարձած էին՝ իրենցմէ առաջ եղած և հսստատ բնակող ազգայինք և իրենց Հայ սանաէրքն, մօտ այս յիշեալ թաղերուս: Նա և յայտնապէս վկայուի, որ յամի 1646, (յան. 31) Հայոց հոգցողք՝ յետոյ վաճառականութեան պաշտօնեայ Հինգ Գիտունք՝ հաւանեցան որ Յովհէ

1. Կոչուի եւս Case dell' Hospital de Mercanti in Ruga Gajuffa.

ո. Գրիգորի՝ տուն մի վարձէ ի Ս. Մար. Խո-
րոտիկ թաղի՝ իր ազգայնոց համար, իրեւ
օթեվան, որ այն տան մէջ կարենան, կ'ըսեն,
իրենց ապրանքը տեղէ տեղ փոխել (¹), ըսել
է սենեակէ սենեակ. այսքան խիստ կամ ճիշտ
էր տէրութեան օրէնքն :

Վենետիկ քաղաքն այն ատեն և ինչուան
հիմայ այլ վեց մեծ մասն կը բաժնուի (se-
stiere), զոր կրնանք վեցերեակ կոչել. ասոնց
երկու գլխաւորքն են Ս. Մարկոս և Դղեակն
(Castello). Երկուքն այլ մօտ ի մեծ հրապա-
րակն և ի ծովեղբն կամ ի նաւակայտ. և
ահա Հայք առաւելապէս այս երկու վեցերեակ
բաժնից մէջ բնակէին : Վերոյիշեալ թաղե-
րէն զատ՝ ի Ս. Մոլոկո. ուր և կու տեսնուի
հիմայ հարուստ վաճառականի մի գերեզման,
արձանագրութեամբ (Մարտիրոսի ո. Վէլիննէ,
† 1686). — Ս. Պետրոս, ի յատուկ Դղեակ
թաղն, ուր որ երբեմն (1569) բնակած տե-
սանք զգէորդ ո. Յովհաննու (տ. 278-
280). — Ս. Մորէննէ, ուր բնակէր ԺԶ դա-
րուն վերջերը (1597) շատ հեղ յիշուած վա-

1. Licenza a Iseppo q^m. Gregorio Armeno,
che possi tuor ad affitto la casa a S. Maria For-
mosa... e tenirla per *Hospitio de Armeni* che ca-
piteranno, e trasportar robbe da luogo in luogo
in detta casa.

ճառականն Արքիո ո. Յովհաննոս Շահնշահ, որ
և Ս. Մարկոսի հրապարակին մէջ առ-
եւտուրի վաճառասեզան (Panco կամ տա-
ղաւար ունէր. — Ս. Լեռն, որ մօտ է վե-
րոյիշելոյն և Ս. Մար. Խորոտիկի և Նոր Ս.
Յովհաննու. այս տեղ բնակէր աւելի առաջ
(1571ին Յովհան ո. Ախնի: — Ս. Յովհաննու Պաղի, ուր
վերջին ժամանակներ, յ' ԺՈ դարու և ինչուան
մեր ԺՈ դարու կիսէն վերջ այլ՝ քանի մի
Հայ պառաւք բնակէին. — նոյնպէս և անոր
մօտ Ս. Մարտին թաղի մէջ, ուր որ և մեր
Հայրն Մխիթար Արքայ՝ յառաջ քան Ս.
Ղազար կղզին ստանալը՝ բնակած է իր ա-
շակերտօքն՝ երկու տարի (1715-7):

Բայց ինչպէս հաճոյից և պիտոյից սահման և
կանոն չկայ, զարմանք չէ որ Հայք՝ մանաւանդ
վերջին ժամանակներ, քաղքին կեդրոնէն
հեռու այլեւայլ կողմեր այլ բնակած ըլլան.
ինչպէս վերոյիշեալ և արդէն ծանօթ Գէորգն
ո. Յովհաննու, զոր 1569ին տեսանք ի Ս.
Պետրոս, երկու տարի վերջ (1571) գտանք
հեռաւոր թաղի մի մէջ բնակած (ի Ս. Մար-
գարիտ): — Աւելորդ կու համարիմ ուրիշ
թաղեր կամ կողմեր այլ յիշել՝ ուր Հայք
ոմանք բնակած ըլլան. մեր դիտելիքն էր
քաղքին այնպիսի մասերը նշանակել, ուր ընդ-

հանրապէս կու բնակէին, և կրնանք հայաբնակ անուանել: -- Վենետիկոյ մօտիկ և իրր իրեն մասն համարուած կղզեկաց մէջ այլ երբեմն բնակած Հայոց նշան կամ վկայ ըլլայ, ԺԶ դարու մէջ մեզի ծանօթացեալ և ոչ բարեհամբաւ Մէրտինցի Յակովբն (տ. 310): -- Այսչափ ո՛ր և է կերպով հայաբնակ կողմերէ կամ տեղերէ, դեռ հիմայ այլ անոնց ամենէն հինն (ԺԴ դարէ ի վեր) Ա. Խաչի մօտ թակողոցն՝ կոչուի յանուն Հայոց (Calle degli Armeni): Տանց մէջ այլ անոնց ամենէն վերջին բնակող և հարուստ ազգայնոց տոհմի անուամբ՝ Շենքմանեանց պալատ (Palazzo Sceriman) կոչուի մինչեւ ցայսօր:

Հայոց՝ այս ժամանակիս ի Վենետիկ յաճախելուն, միանգամայն և ըստ Պեմպոյի ըսածին (եր. 201), քաղաքին « բարեկամական տեսարան » մի ընծայելնուն՝ կըրնայ կերպով մի հաճոյական նշան ըլլալ՝ այս ԺԶ դարուն կիսէն ետեւ Արտենիա անուամբ շատ կանանց և նորածին աղջկանց կոչուիլն. որոց 40 տարուան միջոցում նոյնքան թուով այլ հանդիպած եմ ի քաղաքական և եկեղեցական դիւնս, մեծագոյն մասն՝ նորոգ ծնելոց. նաև դարուն կիսէն առաջ կնքուածք կան ի 1532 և 1534. անշուտ ասոնցմէ այլ առաջ

պիտի ըլլան ոմանք ի չափահաս յիշուածներէն։ Եթէ քան զատոնք այլ առաջ կային՝ հաւանօրէն, (որովհետեւ մեր յիշած հնագոյն թուականէն առաջ մկրտուգիրք և մեռելագիրք գրեթէ չկան), այդ այլ հաստատէ մեր գուշակութիւնը։ Զեմք ուզեր յիշել այս տեղ իտալիոյ ուրիշ կողմերում այլ Armenia կամ Armeni մականուամբ ընտանիքներ։ յետին կոչմամբ շատ գտուին ի Վենետիկ, բայց ասոնց անունն այլ՝ իրենք այլ յունական ծագմամբ են, — Ո՛ր և է ծագմամբ ըլլայ՝ գէթիբր յարմարութիւն յիշենք և նշանաւոր մարդ մի, Armenio Alban. որ յամի 1484 Վենետաց նաւատորմին երրորդ խըմբին առաջնորդ էր, ի նաւամարտին ընդդէմ 0սմանեանց, Առուէայի Ասպիենցա կոչուած կըղցւոյն մօտ, և մեռաւ ի 28 յուլիսի։

ԺԵ.

ՀԱՅ ՍԱՆՍԿՐԻ Ի ՎԵՆԵՏԻԿ.

Յայտնի է ամենուն՝ թէ վաճառականու.
Թեան մէջ որքան կարեւոր է վաճառողի և
գնողի միջնորդ մի ունենալ, երեմն իբրեւ
ճանշցող նիւթոց, երբեմն իբրեւ իրաւարար,
և շատ հեղ այլ իբրեւ թարգման՝ իրարու
լեզու չհասկացող օտարազգեաց . ինչպէս Վե-
նետահայոց այլ զրեթէ միշտ հարկաւոր ե-
ղած է . և իբրեւ ճիւղ մի վաճառականու.
Թեան և վաստակի, նա և հարըստութեան
առիթ եղած է Սանսկրինեանն : Ծանօթ է նշա-
նակութիւն բառիս և ծագումն յԱրաբացւոց,
որք սինար կոչեն, և եւրոպացիք զնոյն բառ
գործածեն կերպ կերպ այլայլելով, Sensale, և
Sanser, և այլն : Մեր լեզուի մէջ այլ մտած է
բառդ՝ շատ վաղուց, և ոչ միայն սոսկ բառն՝
այլ և միջնորդին առած վարձն՝ Սամորչիւ կամ
Սըմարչիւ կոչուած է ի ժամանակս իշխանու-
թեան Ռուբինեանց : Աւելի նշանական և ա-
ղուական է մեր հին բառազրոց բացատրու-
թիւնն , միջնորդաց սովորական յատկու-

թիւնը կամ արուեստը, իրենց շատխօսութիւնը յայտնելով, գրէ իրբեւ զուգանիշ, « Առմասը՝ շաղակթառ » . Կ' աւելցընէ եւս, ժառանքը . զուցէ լաւ եւս ըսէր՝ շահառէր : Թողլով բանասիրականը՝ դառնանք մեր պատմականին :

Վենետիք՝ աշխարհածանօթ վաճառականք միջին դարուց, ինչպէս այդ արուեստի ամեն հնարքն և պէտքը հոգացեր էին, հարկ էր որ միջնորդաց օրինաւոր կարգ և կանոն մ' ունենային . բայց՝ ըստ վերոյգրելոյս՝ աւելի օտարազգեաց առեւտըրին հարկաւոր ըլլալով, կ' երեւի որ ասոնց (և կըրնամք ըսել մերազգեաց) ի Վենետիկ յաճախելուն ատեն՝ սահմանած ըլլան զայն : Եւ յիրաւի, ի սկզբան ԺԶ դարուն՝ երբ կու սկսի Հայոց ստէպ երեւնալն, Պարսից նոր պետութեան (Շահ Իսմայելի) հաստատութենէն վերջը, յամի 1503 (սեպտ. 23) Հասարակապետութեան հանդիսաւոր վճռով կու հաստատուին սանսէրից կարգն և թիւն, 150 անձանց : Յետ ոչ շատ ժամանակի՝ առեւտըրոյ աճելն կու պահանջէ ասոնց թիւն այլ աւելցընել . և յամի 1560 (մայիս 22) նոր վճռով սահմանուի սանսէրից թիւն՝ 190 . և այնպէս այլ մնայ մինչեւ ի վերջ : Բայտ այսմ սահմանի՝ երբ յամին 1593, Յովհաննէս անուամբ Հայ մի կու խըն-

Դրէ ի դըքսէն՝ սանսէր ըլլալ, ասոր հրամանաւ Հինգ Գիտունքն քննելով՝ պատասխանեն առ դուքսն, թէ ըստ օրինաց՝ 190 սանսէրք պիտի ըլլան, և երբ անոնցմէ տասն հոգի պակսի, ուրիշ տասն պիտի ընտրուին. իսկ հիմայ ոչ միայն կան 190 սանսէրք, այլ և յաջորդք այլ ընտրուած են, և ոմանք առանձին շնորհով յաւելուած են. ուստի դըքսին իմաստութեան թողուն խնդիրը։ Ասոր վճիռը գտած չեմ, բայց հաւանական երեւի որ շնորհուած ըլլայ Քովհաննու։

Իրմէ առաջ և մանաւանդ վերջը, երկու դարուց մէջ՝ հարիւրէն աւելի Հայ սանսէրից անուն և յիշատակ գտած եմ յայլեւայլ դիւանս Վենետիկոյ, մանաւանդ ի Նօտարացն և Պաշտօնէից վաճառականութեան և դատից։ Հաւանօրէն շատ աւելի այլ եղած են, և ոմանք միանգամայն վաճառական և միջնորդ, և իրենց ժամանակակցաց մէջ հարուստ և նշանաւոր մարդիկ։ Մի և նոյն ժամանակի մէջ եղած սանսէրից ցանկ մի չեմ գտած, բայց տասնիւ շափ միանգամայն՝ յայտնուած են։ Ասոնք և բազմութիւն սանսէրից կոչուէին Հաստրակ կամ ՈՒիալդոյի սանսէրք, (որ էր կենդրոն վաճառականութեան քաղաքին), յանուն տեղւոյն և հռչակաւոր միակամար կամըրջին։ Թուի թէ յատուկ ինչ նիւ-

թոց և դիպուածոց համար՝ յատուկ սանսէրք այլ կային, որ աւելի պատուաւոր համարուէին, միանգամայն և շահաւոր։ Դարձեալ, երբեմն այլ յիշուին ըստ ազգաց՝ սեփական սանսէրք Հայոց, Թուրքաց, և այլն։ Ըստ երկարութեան ժամանակի և ըստ բազմութեան ազգայնոց՝ յայտ է որ Հայ-Վենետիաց Գ. Յեղանակի մէջ եղած են մերազգի բազմաթիւ սանսէրք. իսկ այս Բ. Յեղանակիս և սանսէրութեան երկրորդ սահմանադրութեան 40 տարիներու միջոց (1560-600) քանի մի մեզի ծանօթները կ'ուզեմք յիշել, թողլով ապագայի և ապագայից՝ Գ. Յեղանակին անձինքը։

Ա. Ժամանակի կարգաւ առաջին յայտնուած սանսէր, սանսէրութեան նոր կարգադրութենէն քիչ տարի վերը՝ է, յամին 1568, Յակով որդի արդէն մեզի ծանօթ Սիմոնի Հայոց տնպահին (տես 200). ասոր առանձին գործ մի չեմ գտած, և թուի թէ իր հօր տնպահութենէն շատ գոհ շըլլալով պաշտօնեալք պետութեան, զինքը յաջորդ չեն ընտրած, այլ զԳեորգ ո. Յովաննու. (տ. 178). Յակոբ կու յիշուի իր բնակած թաղին (Հայոց տան) Ա. Յուլիանու մկրտագրոց մէջ. կինն կոչուի Լաւրա. որդիքն, Մկրտիւ, մկրտեալի 6 փերը. 1569, (որ իմ գտած յիշատակա-

գրոց մէջ սա է առաջին Հայ ծնունդ ի Վենետիկ). ասոր և միւս որդւոցն այլ կնքահայր եղած է Անդրն Զատարեան . – Յաշնանեա, մկրտ. 2 յուլ. 1572. – Անդրն, մկր. 28 դեկ. 1573. – Յաշնան–Դամինի, մկրտ. 30 յունիս, 1575. ասոր կնքահայրն՝ անուամբ Անտոն, բայց մականուամբ իտալացի Մաֆեյ Կոչուի. նոյն մականուամբ Օգոստինոս մ'այլ կնքահայր եղած է Թէոդորոսի ո. Գէորգայ՝ Զեշիլիա դըստեր (1584): Յակոբ (որ իր պապուն անուամբ կոչուած է) կ'երեւի թէ յիշեալ զաւկըներն ունենալէն վերջ՝ ելած է ի Հայոց տանէն. նոյնպէս թուի թէ կամ տղայ հասակաւ հօրն հետ եկած է ի Վենետիկ, կամ այսքաղքիս մէջ ծնած, ինչպէս վարի ըսելիքէս կըրնայ կարծուիլ:

Բ. Ժամանակակից Յակոբայ սանսէր և անոր աներձագն է մեզի ծանօթ և զեռ նոր յիշեալ Գէորգն .. Թէոդորի (տ. 291), որ Սիմոնի Ուստինա դուստրն առեր էր ի կնութիւն:

Գ. Յաշնանէս ո. Խոշտարոյ. Այսպէս համարիմ հօրն անունը, որ միշտ իտալերէն Christoforo գրուած է. զարմանալի է և իր ազգութեան համար գրուածն. նախ յիշուի իրեւ յամի 1572 (օգոստ. 13), իր պսակուի-

լըն ի Նոր Ա · Յովհան Եկեղեցի, Մատթէոս (Matthio) օ · Գէորգայ հացագործի դստեր Բերդոյէ (Ելիսարեթ) հետ, որ բնակէր Հայոց սովորական բնակած Ռուկա կայութքա թաղին մէջ, որով կարելի է զՄատթէոս այլ Հայ կարծել. կնքահարքն և վկայք իտալացի և գերմանացի են: Այս տեղ Խաչատուր կոչուի Քրիստոնեայ Ա · Թովմայի, ինչպէս կոչուէին Հնդկաց Մալապարի քրիստոնեայք. իսկ իր զաւակաց մկրտագրին մէջ գրուի Հայ սանսէր: Առջինեկն (ծնած ի Հոկտ. 1573) կոչուի Քրիստինէ Սանտա (Santa). երկրորդն, մկրտեալ 16 օգոստ. 1575, Լորենցոյ Հատու: — երրորդ մի՛ Իշտանել, մկր. 1576: Յետ այնր յայտնի որ կինն մեռած է. և ինքն նորէն կարգուեր է Մարիա Գիտք անուամբ մէկու հետ, ուսկից ունեցեր է դուստր մի Քրիստինէ Յախննա, մկր. 1 յուլ. 1579: Այս տեղ Յովհաննէս Քաղցէոյէ կոչուի: բայց անտարակոյս է մի և նոյն անձն ըլլալն. որովհետեւ այս վերջի զաւակն՝ իր միւս զաւակաց ծնած տան մէջ ծնոծ է (Cha Lion in Ruga Gajuffa), և կնքահայրն եղած է Հայ մի, Հայոց տան մէջ բնակող Ալիոյէլ ո · Զաւարիայ: — Այսպէս զանազան ազգութեամբ գրուածն յայլեւայլ անձանց, շատ հաւանութեամբ նոյն ինքն է՝ որ նօտարական

գրուածքի մի մէջ յամի 1580, զուտ հայկական անուամբ գրուի Յավհաննէս. Հայ ո. Խաչատրոց. գրողաց անգգաստութեամբ կամ ոչ լաւ քննելով և չորոշելով՝ այսչափ այլայլեալ. մինչեւ յիշեալ վերջի նօտարս իսկ՝ որ նախ (ի սկիզբն մարտի) պարզ Joannes Armenus գրէ, քանի մ'օր վերջը (16 մարտի) աւելի ճշգելով գրէ Յովհաննէս կամ Ոչննէս, Ioannes seu Ovannes. Առջի գրութեան պատճառն է Յովհաննու անդորրագիր տալն առ Նորում ո. Փէրուժի Երզրումցի, որ իրեն պարտական էր և երաշխաւոր դրեր էր զԳեորգ և Յակոբ Հայս. Ասոնք ի Հռովմ գացեր են եղեր, ուր Նուրում գոհար ակունք տարեր է, և Յովհաննէս՝ համանուն ոսկերիչ Յավհաննու քով զանոնք ի գրաւ դրեր է. հիմայ կ'ազատէ, և զնոյն Նուրում իրեն գործակալ դնէ, որ իր ակունքն առնու. Այս բանիս գրով վկայ կ'ըլլան նօտարին առջեւ՝ Յավհաննէս ո. Ճանիպէլի: Մուղարէւշան որդի Գատըշշանէ, Աբդիմէն ո. Հառուսէ և Մատուր ո. Յավհաննու. ամենքն այլ Հայք, և ըստ անուանցն՝ թուին ազնուականք և մեծատունք: — Երկրորդ գրութեամբ կ'իմացընէ նօտարն (Նիկոլ Տոլիոն) որ Յովհաննէս կու վկայէ, թէ Յովհաննիսեան Մատուրէ ընդուներ է 220 դուկատ, Նուրումի պարտքը, Դատուրն այլ նոյնքան ստակ առեր

էր ի Նուրումէ . և այսպէս մէջերնին առնելիք տալիք չի մնար : Այս բանիս այլ վըկայեն վերոյիշեալ Արդլմսեհն, որ այս անգամ կ'ըսուի եւս Խաչատուր կամ Քրիստոֆոր, seu Christophorus, Յովհաննէս ո . Sancti գրուած (գուցէ Սարգիս կամ Ճանիպէկն), որ և թարգման կ'ըլլայ, Գիրեշ կամ Կիրեղ, Girech ո . Աւետիքի, և Ունէս ո . Համազապաղ, Amasach գրուած :

Անտարակոյս իրմէ տարբեր է և Հայ, թէ և չէ գրուած Հայ, Յովհաննէս մ' այլ, սանսէր Թուրքաց, որոյ մահն յիշուի յամի 1578, ի Ս . Մար . Խորոտիկ թաղի, 90 տարուան, ծերութեան հիւանդութեամբ :

Դ . Գեղրէ ո . Յովհաննոս . որ Սիմոնի յաշորդ՝ Հայոց տնպահ եղած է, ինչպէս գրած ենք իր վրայօք երկարօրէն (տ . 178-90), սանսէրութիւն այլ ըրած է :

Ե . Սիմոն ո . Յարութեան, Կարիստեցի : Երկու անդ կայ ի Հայս՝ կարկառ անուամբ, ծայրէ ի ծայր իրարմէ հեռու . մէկն յարեւելս, Արցախոյ կողմ, միւսն յարեւմուտս, Դ . Հայոց և Եփրատայ մօտ . այս թուի հայրենիք Սիմոնի, զոր միայն քանի մի նօտարական գործոց մէջ յիշուած գտած եմ, իրբեւ

ՈՒԽԱԼՂԴՅԻ Հասարակ սանսէր : Նախ , յամի
1570 (յուլիս 17) . մէրտինցի Յակոբայ հետ (տ.
310) վկայէ նօտարին առջեւ , որ Գարանտիքը
(Ամիդ , Տիարպէքիր) Տեղիքնեարէ ո . Յովհան-
նէս ընդունեցաւ ի Կայրէ (Cayri) Զաւզայեց-
ոյ իր պահանջը , 285 դուկատ : Հետեւեալ
տարին (1571 , մարտ 29) , Շահապէն Հալէ-
պի դրամանոցի վարպետի որդի Աղթանդրէ
հետ վկայէ , որ նոյն Յովհաննէս՝ Փանոսի
որդի Գերբէոյ անդորրագիր տուաւ , իրենց
թէ ի Հալէպ և թէ ի Վենետիկ ըրած առ-
եւտըրին համար : — Զորս տարի վերջը
(1574 , մարտի 3) ըրած վկայութիւնը տես
յերես 294.

Քանի մի ամիս վերջը (31 յուլիս , 1574)
Սիմոն վկայ և թարգման կ' ըլլայ Եղբնկացի
Մերտէնշտէն որդի Էժրէտանի . (Emiryassin
q.m Merdenså , citatis Erzengieu) , որ ի-
րեն գործակալ կարգէ ղՆիկոլ Մերենտի ո .
Մարտինի , Cottimi կոչուած մաքսի պաշտօ-
նարանէն ընդունելու իր պահանջը (189 դու-
կատ , 17 կրոս) : Այս մարդը (Nicol de Me-
reundis) քանի մ'օր վերջը (օգոստ . 2) նոյն-
պէս գործակալ կարգեն Յակովը ո . Արտէլէ ,
Պանէրէ ո . Յակովայ , Արտէլ ո . Մեսդէրէ ?
(Mesderi) , որ իրենց ասկէ ընդունած 25
դուկ . և 14 կրոսի փոխարէնն առնու վերսոյիշեալ

պաշտօնարանէն. իրենց վկայ և թարգման
եղած է տնպահն Գէորգ ո. Յովհաննու:

Զ. Յովհաննէս Սուլյան, Sulian. — Այս
սանսէրս այլ՝ թէ և գրուած չէ՝ այլ թուի
Հայ. վասն զի Սիմոն տնպահին և Յովհան
Քաղղէացւոյ հետ (յամին 1575, օգոստ. 27)
իբրեւ թարգման Զաքարիայ Հայ եպիսկո-
պոսին՝ կու ստորագրէ ասոր կտակին տակ,
նօտարի առջեւ:

Ե. Նէկողայոս ո. Գէորգայ, Պետրացի? de
Petra գրուած է իր հայրենիքն. բայց ո՞ւր է
այդ տեղդ. յամի 1590 (14 նոյեմբ.) ստո-
րագրած է սա՝ զինքն սանսէր կոչելով, Գէորգ
տնպահի և Զաքարայ Պարսկահայոյ հետ,
առաջի նօտարի, որ Տէրէլէշ ո. Պայէշիով թուրքն՝
ի Ակոպիա (Քաղաք Պունիոյ) 60 դուկատ
տուեր էր, և այս տեղ (ի Վենետիկ) առաւ
այդ գումարը յԱրտէկիւան Գէորգայ որդւոյ Ան-
դրէի, առ որ պէտք է հատուցանէ իօմէր:

Ը. Այս Գէորգ եւս սանսէր է, և ի Հայոց
տան բնակէր վերոյգրեալ թուականէն վեց
տարի վերջ (1596, մարտ 16). յորում՝ Ա-
սորի Յակոբայ ո. Բենեդիկտոսի հետ վկայած
է նօտարի առջեւ, Հալէպցի Աւետիքի դիւ-

պուտածին համար (տ. 380). շատ տարի առաջ այլ Դիմինիկ Ատանայի համար (1584), ինչպէս յետոյ պիտի յիշեմք. նոյնպէս և Գարապաշի դիպուտածին առթիւ (1590): Եատ տարի վերջ (1608) Ղազարայ Շահնշահի և Պօղոսի կեսարացւոյ՝ Մկրտիչ Պարսկի ընկերութեան խնդրին վերջանալուն ատեն այլ վկայ եղած է:

Թ. Անդայել ո. Եղիշայ. Ասորի կոչուի, և գուցէ այնպէս այլ էր. բայց շատ հեղ Ասորւոց կողմէն եկող Հայք այլ Ասորի կոչուին: Յիշուած է սա յամի 1594 (22 մայիս) իրրեւ թարգման և վկայ Թուրքերու. որոց հետ երեւի թէ առեւտուր ունէր, կամ անոնց գործակալն էր. վասն զի ութ տարի վերջ այլ (1602, յուլիս 19) բարձրագոյն ատենէ յանձնուի Ե Գիտնոց քննել զխնդիր 16 տախտ կամ ծրար ցփսեաց, զոր Գարա Եռւսուֆ ոմն զրկեր էր առ Մկրայէլ՝ ուրիշ թուրքի մի ձեռօք:

Ժ. ԺԱ. Մարիս Մասրուր ո. Յակովբայ, և Յակովը որդի նորա: — Երեսուն տարիէ աւելի միջոց կու յիշուի Մարկոս իրրեւ հասարակ ոսնսէր, և յատկապէս Թուրքաց, այլեւայլ դիւանաց մէջ, և շատ գործոց մէջ

մտնած ելած է, երբեմն այլ ի բանտ : Երկրորդ անունը (Մուրատ) իտալացիք իրենց մէջ սօվհրական ձայնով երբեմն գրած են Մորետո, (Moreto), որ Աեւուկ նշանակէ : Առաջին անգամ ինձ յայտնուած է 1579ին, (երեք յանուարի), երբ թէոդորեան Գէորգայ հետ թարգման եղեր է Պէկպազարցի Ահմէտ Թուրքին, կտաւեղինաց վաճառականի, որ այլեւայլ նիւթերէ զատ՝ դուտ ստակ ունի եղեր 1152 դալէր և 70 դուկատ : — Թուականէս յետոյ մինչեւ տասնումէկ տարի՝ Մ. Մուրատի գործերն աշքէս կամ մտքէս վրիպած են. ապա յամի 1590 (սեպտ. 27) ուրիշ ո. Յակոբայ Մարկոս մի զնա իրեն գործակալ կարգէ նօտարի առջեւ, վաճառական անուանելով, (D. Marcum Moretus q.m Jacobi, mercatorem hic Venetiis). որպէս զի իր ապրանքներն ընդունի ի մաքսատանց նաւուց և լազարէդից . վկայ կ'ըլլան Պարսկահայն Մկրտիչ՝ և Զադու ո. Սահմանի : Յաջորդ տարւոյն կիսուն (1591, յունիս 7) կտակակատար կարգուի Յովհաննէս Անտոնեան կրօնաւորին, ինչպէս յիշած եմք և զայս (եր. 349): 1593ին գործավար եղած է Պօղոսի Նախճաւանցւոյ, զոր յետոյ պիտի յիշեմք : Դարձեալ, ի սկզբան 1595 տարւոյ կու գտուի ի մթան, ի բանտի, ծանր

յանցանաց կամ կասկածանաց համար . վասն զի Քառասունք Գիշերոյ կոչուած պաշտօնեայք (I 40 Signori di Notte al Criminal) բանտեր էին զինքը . Երբ բռնուած և երբ արձակուած , և ինչ պատճառաւ . - շեմ գտած . այս յայտ է որ հետեւեալ տարին ազատ էր . իսկ հիմայ (1595 , մարտի 22ին) նօտարական գրուածով կ' իմացընէ , որ երկու տարի առաջ (1593 , ապրիլ 14) խնդրեր էր ի պետութենէ , ինչպէս և հիմայ , որ կարենայ իր Օրիորդի (Hostaria della Donzella) (1) կոչուած պանդոկը (ի Calle della Torre բակի Ս . Մատթէոս թաղի , in contra di S . Mathio de Rialto) , վարձէ Դոմենինիկոսի Տէղետոյ . Պատուացի կոչուած Մկրտչի (Domenico Teoleti fö de Msr . Battista Padoan) , տարուան մի համար (սկսեալ յ' 19 մարտի 1596) , 132 դուկատի , ամեն երկու ամիս վճարելով մասն մասն , առանց ծախք ընելու իր հաշուին ,

1 . Ինչպէս այս խնդրոյ որպիսութիւնը մեր աչքն վրիպած է , կ' երեւի թէ մեր ժամանակակից վենետ Տասսինի (Giuseppe Tassini) հետաքնին Վենետուական երաց և տեղեաց (Curiosità Veneziane , Origini delle denominazioni stradali , ecc.) գրողին աչքէն այլ՝ վրիպեր է այս պանդոկիս հնութիւնը . վասն զի միայն 1740ին կ' իմացընէ ծանօթ ըլլալ , մինչ գրեթէ գոր և կէս առաջ Հայ մի զայն ուրիշի վարձեր է :

կամ ուրիշի վարձելու։ Այս բանիս երաշխաւոր կ'ըլլան վարձողին եզրայրն Վանճելիսդա (Աւետարանիչ) և այլք։

Յաջորդ տարին (1596) Մարկոսի ընդ թէոդորեան Գէորգայ սանսէրութեան և առեւտըրի հաշիւնին կնքելն՝ արդէն նշանակած եմք (եր. 297). — Տարի մի վերջ (1597, հոկ. 19) յիշուի իրբեւ կնքահայր Ֆրանչիսկոս Սէֆէր հայազգուոյ որդւոյն. հետեւեալ տարին (1598, յանուար 27) Անկիւրացի Խորչողավոյ որդի եղրօր կամ քեռ Թովմայ պատրիարքի (տ. 335) կ'ընդունի ի Մ. Մարկոսէ՛ ասոր թողած ինչքը և 65 դուկատ, քիչ մ'այլ մանր ստակ, և անդորրազիր կուտայ Մարկոսի վկայք Պօղոս ո. Յովհ. Կեսարացւոյ, և Պապու ո. Յովհ. Պարսկի։

Ինչուան մեր սահմանած Հայ Վենետաց Բ. Յեղանակին մնացեալ տարիներում դարձեալ ծածկուի Մարկոս, և յաջորդին առաջին տասնամեկին մէջ աւելի յաճախ յայտնուի. ի դարագլուխն (1601, փեր. 22) նօտարի առջեւ իրեն գործակատար կարգէ զՀաճի Եռւսուփ թուրք, որուն յանձներ էր 20 փերթ Զուխայ, 6 սնտուկ Սապոն, որ տանի ի կ. Պօլիս՝ իր տիրոջ Գարա Միխայիլ թուրքի, քանի մի կտոր չուխայ այլ ուրիշ թուրքի մի. բայց նաև խորտակուեր էր ի Գործու,

տանողն ազատուեր էր. Մարկոս՝ զբէ ա-
սոր՝ որ ինչերն ի ձեռք ձգէ և հասցընէ վե-
րոյդրելոց:

Ի ոկզբան 1602 տարւոյ (փերր. 22) Գու-
շմիջէ ո. Դաւիթ գործակալ կարգէ զնա, պա-
հանջելու ի Ե Գիտնոց չորս տախտ կամ բեռ-
ցփափ, զոր բըռներ էին ի լազարէդին, նոյն-
պէս և այն տեղ վախճանած Անկիւրացի
Մատուորէ ինչերը: Դաւթի և գործոյն վկայ
կ' ըլլան Ճեանի ո. Նիկոլ՝ որ էր ի Մանաս-
տըրէ կ. Պօլսոյ (Manoster գրուած), և Նէ-
կոդոսի ո. Յովհաննէս Հայ: Երկրորդ որ Տէվե-
նէ ո. Մառշատ և Պետրոս ո. Յովհոսի? Հայք
վկայեն, որ Դաւթի ստացուածք էին ցփափն:
Նոյն օր յիշեալ Պետրոսի եղբայրն Մէրին
նոյնպէս գործակալ կարգէ զՄ. Մուրատ,
իր † տիրոջ Մագսուտի 177 կարկեհան (Tur-
chini) ականց տուփը պահանջելու ի Ե Գիտ-
նոց: Այս խնդրոյ համար Հայք դիմեցին բար-
ձրագոյն ատենի, որ պատուիրեց Ե Գիտնոց
(113 քուէիւք ընդդէմ 6ի) տալ անոնց այդ
ինչերը, նախ մաքսն և եղած ծախքերը վճարել
տալով: Նոյն տարւոյն սեպտ. 3ին, Աիվրի-
հիսարցի Կէրտիս ո. Դիոնիսի? (Donis) զՄու-
րատեանս՝ հայր և որդի՝ գործակալ կարգէ
նօտարի առջեւ, որ իր առաջուան գործակա-
լէն՝ Բաղրամարայ՝ ընդունին իր 16 բեռ վա-

ճառքն և անկիւրական Ատեւն և ցփսին, զորս
սա բերէր գարամուսալ (տեսակ մի) նաւով,
պահանջելով զասոնք նաւուն (Գուպաթ) ռայի-
սէն, որ կու զար ի կ . Պօլսոյ. և երբ ծախէ
Մուրատ՝ առնու այն զումարէն իր փոխ
տուածն առ կիրակոս, 44 դուկատ և 25
մաճառ ոսկի: Վկայ կ' ըլլան բանիս, Պօլս
Հայ վաճառական բնակեալ ի Ս . Յովհ . Բրա-
գորա (Bratgora) թաղի, Անթելյ ո . Սերովէէ
ասորի սանսէր: - Դարձեալ քիչ մի վերջը
(հոկտեմբերի 21ին), երկու Զուղայեցիք՝ Գրէ-
էոր ո . Մարտիբոսի և Գէորգ ո . Անդրոնի, գոր-
ծավար կարգեր են զՄ . Մուրատ և զոր-
դին, պահանջելու ի Տոռնա-
գունու (Tornag-
quincö) ֆիորենցացի վաճառականաց բնակո-
ղաց ի Վենետիկ, իրենց քիչ օր առաջ ա-
սոնց ծախած մետաքսին գինը: Այս բանիս
վկայ եղած են Տէրվիշի ո . Դանիէլ Զու-
ղայեցի, և Շահնշահի ո . Մարիս Սերաստացի:
- Քանի մօր վերջ յիշեալ Դանիէլն նոյն-
պէս նօտարի առջեւ գրութեամբ յանձնէ Մու-
րատեանց՝ պահանջել Պետրոս Յովհաննիսեան
վենետ բամբակագործէ (Bombaser) 13 հակ
մանածի գինը. վկայք՝ Ղազար ո . Յովհաննոս,
Յովհան ո . Եղանկացի Ղազարոս:

Քանի մի տարի վերջ յիշուի Մ . Մարկոս
Կնքահայր՝ իր մէկ անուանակցի (Մարկոսի)

դստեր, ի Ս. Մար. Խորասիկ թաղի (1605, մայիս 1), նոյնպէս և յաջորդ տարին (1606, նոյ. 12) Երեխայից անռւաննեալ տան մէջ ծնածի մի: — Վերջի թռւականէս քանի մի ամիս ետեւ, փախանակ նորածիններ կնքելու՝ Մ. Մուրատ իր կեանքը կնքելու մտածութիւնն ունեցեր է. հիւանդ յանկաղնի (1607, փերր. 7ին), կանչելով (Հերոնիմ Բրինիս, Brinis). Նօտարը, գրել առւեր է կտակը. յորում նախ կ'իմացընէ, որ աւելի առաջ այլ կտակ մի գրել տուեր է եղեր, և հիմայ զայն ոչինչ համարելով, այս նորովս ժառանգ սահմանէ իր կտարբնէ. կինը՝ մինչեւ ի մահը, յետոյ իրենց որդին Յակով. կու պատուիրէ, Դոմինիկեան Հարց քով (ի Ս. Յովհ. - Պօղոս վանս քաղաքին) Եղ. Կոորանդէն (որ հաւանօրէն Հայ է), առնուլ իր 70 դուկատ պահանջը, և իր հոգւոյն համար պատարագել տալ: Ուրիշ բարերարութեան տեղեաց՝ բանչի թողուր, որովհետեւ՝ արդէն կարողութեանս շափ տուած եմ, կ'ըսէ. (ho fatto del ben de mia posta), և առանց հանդիսի կ'ուզէ թաղուիլ:

Բայց այս անգամ այլ մահն հեռացեր է իրմէ չորս հինգ տարի այլ, և Մարկոս իր Յակովը որդւոյն օգնութեամբ նորէն կ'աշխատի թուրքաց գործակալութեան և սան-

աէրութեան . որոց կարեւոր ծառայութիւն
մ' այլ կ' ընէ , ըստ գրութեան նօտարի (յ' 8
օգոստ . 1608) . Որոճեր անուամբ անգլիացի
նաւապետ մի' ի ծովութաներ է՝ ատենաք Մէք-
քէի ղատի Եահեա էֆէնտիի դուստրը, Այիշէ
խաթուն , անոր մայրը Մէքեմի Սակէրէ ?
և երկու աղախինները՝ Նազլու և Զալքի ?
(Zalke) , զորս Ապտ' Խոլամ անուամբ թուրք
մի պահեր է ի Լիվունոյ . Ալմէլի Մէհմէմէտ
ոմն կ . Պօլսեցի՝ Ալեքս . Ֆագգա Վենետիկ և
Տոռնակուինչի Ալեքսանդր Միլանցոյ ձեռքով՝
կ' ազատէ զանոնք և խաւրէ ի Վենետիկ առ
Մարկոս . սա իր տան մէջ կու պահէ , յետոյ
կու յանձնէ Խոնա Մէֆէր կոչուած Հայ Յու-
նանու (որդւոյ Յովսեփայ) , որ տանի ի Ուա-
կուզա և տայ Հաճի Մէհմէտի , և իրմէ կ'առ-
նու 1000 գուկատ' ի գին գերեհանութեան ,
զոր Մէֆէր (ի 14 յունիսի) յաւանդ դրեր
էր , և կու խոստանայ՝ զգուշութեամբ խնա-
մելով տանիլ ի կ . Պօլիս առ Հաճի Մէհ-
մէտ : — Նոյն օր Յակովը ո . Մարկոսի կու
ստորագրէ ուրիշ իտալացի և թուրք գերեաց
փոխադարձ ազատութեան համար :

Հետեւեալ տարին (1609 , սեպ . 25) Հա-
սան չէլէպի՝ Աղրիանուազօլսեցի թուրք մի'
գործակալ կարգէ զՄ . Մուրատ , թեսաղոնի-
կեցի Մաննի Հոռմէն պահանջնելու իր 45 ծեզ-

գին առկին և վաճառքը . դոր երեք ամիս ա-
ռաջ յանձներ էր անոր , ի առավաճառքն
Սոնեայ (Sogne) յԱղանիս . — Երկու ա-
միս վերջը (նոյեմ. 9) Մ. Մարկոս՝ Յաշնա-
նու . Մեցոնէ (Marchio) հետ նօտարի կու
յանձնեն՝ համաղզի Մանելյէ կողմէն՝ առոր
ընչից բեռնագիրը (3 ծրար առկայ , 1600
դուկտա , 3 վասիլ (տակտա) և 6 սնտուկ
ուրիշ վաճառեղէն , դոր դրեր էր՝ յԱսորիս
խաւրելու համար՝ վենետիկեցի փաքր նաւու մի
մէջ , որոյ գրագիրն այլ առւեր էր այդ ընդու-
նելութեան գիրը . իսկ նաև Բուլիսյ Ս. Հրեշ-
տակ (S. Angelo) լերին ծավեզերաց մօտ
խորտակուեր էր : — ' Լոյն օրեր (սեպտ . 19)
երեք Հայ Զուղայեցի վաճառականք , Գոլո-
սէի ո . Փատու Յակոյ ? , Ուլուտ Խօնու ո .
Արէբէնէ (Odibech) , միւսն այլ երեց մի՝ Տէր
Գոբրէնէ ո . Անդրէն , ի Կ . Պօլսոյ եկած , Ճի-
րարտի սանսէրի հետ զՄ. Մարկոս այլ գոր-
ծավար կարգեն , վկայելու և գրաւելու 31
հակ իրենց մետաքսը , որ ոչ էր ոչ Թուրքի
ոչ Հրէի և ոչ այլոյ . վկայեն բանիս Բե-
նեդիկտոս վաճառական ո . Յակովբայ Ասորւոյ
և իտալացիք ոմանք :

Վ երջին գործ Մարկոսի՝ որդւոյն ընկերու-
թեամբ յիշուի ի 1611 սեպտ . 7 : Խառապաղացի
Դասնէ Զուղայեցւոյ ո . Աւետիք՝ իրեն գործա-

կալ դրեր էր Տօնադրոյ կոչուած ասորի սան-
մէրը, և սա առեր էր անոր պարտական
Էջին Հայէն՝ 443 թղ գուկատ՝ կամ ռէալ, որ
էր գին բերած Խաշնդեղին. հիմայ զՄար-
կոս կարգէ գործավար, և սա ընդունի ի
Տօնատոյէ այդ գումարը, ի բաց հանելով 34
դուկատ եղած ծախքն, և առ Էմին տրուած
50 դուկատը. և որովհետեւ գործակալութեան
թղթոյն մէջ մոռացուեր է Դաւթի որդի
գրելն զԱւետիք, Մ. Մարկոսի որդին Յա-
կովը խոստանայ վկայել՝ որ այնպէս է։ Այս
վերջին բանս կարծես գուշակել տայ՝ որ Մար-
կոս յօգներ է, այնուհետեւ իր որդին պի-
տի գործէ. և յիրաւի յաջորդ տարին (1612)
վախճաներ է Մ. Մուրատ, ի Ս. Մար. Խո-
րոտիկ թաղի (կարծեմ). եթէ նոր կտակ
մ' այլ գրած է թէ ոչ չեմ գտած, և ոչ այլ
մահուան օրն և թաղումն ։ Նոյնպէս և ոչ շատ
յիշատակ իր որդւոյն Յակոբայ. մէկն է յամի
1623 (յուլ. 10), վկայելն որ Քերիմ ո. Տօնա-
պետէ բնակէր ի Հայոց տան, 6 կամ 7 տա-
րի առաջ Թուրքաց գերի ըլլալով փախեր ել
կեր էր։ — Յամին 1624 (օգոս. 9) վկայ և
թարգման կ'ըլլայ Մարկոսի որդի Պետրոսի
մի՛ ուրիշ Մարկոս Մուրատի խնդրոյ մէջ. այս
ետքինս Հրէից ռաբրիին իսահակ որդին բան-
տել տուեր էր, իրբեւ գող իր գոհարաց։

՚եղն տարին յիշուի եւս իրր Փերեղակ կտաւ և ավաճառ ոսկի—առիւծ նշանաւ ի Ս. Մարտիրոս հրապարակի։ — Յակովը յիշուած է և յամի 1639։ Թերեւս նոյն ինքն է և Պարագոսի ո. Յակովը՝ որ յամի 1650 շատ ազգայնոց հետ աղերս մի տուած են դքսին։ Շատ հաւանական է որ Դիւանաց մէջ պիտի գառւին դեռ ուրիշ յիշատակ այս հայր և որդի Մուրատեանց։

ԺԲ. Մարիս ո. Յաղնաննոս Շահնշահ, Աերաստացի։ — Վերնոց նման և սա շատ անգամ յիշուած պիտի ըլլայ։ ինձ հանդիպած յիշատակն իրրեւ 25 տարիներու միջոց են (1584-608)։ Յիշուի իր եղբայրն այլ Ղազար անուամբ։ Զօրերնուն անունէն (Շահնշահ) գուշակուի որ ազնուական տոհմէ են, և ո՛ գիտէ թէ յարքայական զարմէ Աենեքերիմեանց Արծրունեաց համարուած չըլլան։ Դիւանաց մէջ խտալացիք պէսպէս գրած են այդ անունը, Sainsa, Saise, Ciancia, Iansa, Chianchia, Chianssa, Jansa. Առաջին յիշատակ գտածս է 1584 տարւոյ (յունիս 30)։ որով կ'իմացուի որ նո հինգ տակառ դանակ և ածելի և ասոնց նմաններ լեցուցած՝ դրեր է Balbiana կոչուած նաւու վրայ, դրկելու յարեւելս։ բայց դիտմամբ փոխանակ իր անուան՝ զանոնք

գրեր է յանուն Եանի Զանդացւոյ . հիմայ հարկ կ' ըլլայ որ իրեն ըլլալուն վկայեն երդ-մամբ առաջի նօտարի , Յակովը Մէրտինցին , Այսն Ասեցի ո . Թուրազայ (Turaz, գուցէ Թու-րոս) , և Վասիլ Գարանտ պրուսացի . յետինս թուի թէ ծանօթ չըլլալով ի վենետիկ՝ ծա-նօթ Վասիլ որդի վաճառականն Արեֆանոս Արանու՝ վկայէ զինքը ճանշնալ :

Երկրորդ յիշատակաւ (ըստ Կարգի ժա-մանակի) կ' իմանամք , որ Մարկոս կանամբի է , կինն էր Ադրիանա կամ Անդրիանա , դուստր Ֆրանչ . Tiepolo , ազնուական ցեղէ . որոց որդին Յակոբ Ղազար մկրտուի ի 15 մարտի , 1592 . կնքահայր կ' ըլլայ ծանօթ Գէորգ ո . Յովհաննու (290 . 389) . ասոր բնակու-թեան տեղն է ի Ս . Պուկաս թաղի , իսկ Շահն-շահի ի Ս . Յոհ . Բրագորա , Calle del For-ո (փռան բակֆողոց) կոչուած կողմը : Եր-կրորդ որդին Գալուստ (Ventura) Ֆրանչէսկո կնքուած է յամին 1598 , սեպտ . 13 , կնքա-հայր եղած է Մկրտիչն Պարսկահայ . — Եր-րորդ , աղջիկ մի Մարեմիկ Մահմալինա , մկրտ-ուած ի 29 յուլ . 1602 , որոյ կնքահայր ե-ղած է Ֆր . Պարպինի սանսէր Թուրքաց . — չորրորդ , աղջիկ մ'այլ՝ Վեներանոս Յովհաննա , մկրտուած յ' 2 մարտի , 1604 , ի տան , և նոյն օր մեռած , առանց կնքահօր . — հինգե-

բորդ, աղջիկ մ' այլ, Յուլյա Անդրէտնա, որոյ
կնքահայր եղեր է (1 մայիս, 1605) Մարկոս
Մուրատ՝ բնակողն ի Ս. Մար. Խորոտիկ և
ոչ ո. Յակոբայ. և + 27 մարտի 1608, ծաղկի
հիւանդութեամբ: Այս երկու աղջկանց խառն
անուամբ վեցերորդ մի՛ Յուլյա Անդրէտնա,
մկրտ. ի 26 մայիսի, 1608, որոյ կնքահայրն
է սանսէր Յովհ. Անտոն Գէորգ (Zorzi), որ
թուի իտալացի (1).

Նօտարական գրուածոց մէջ յիշուի Մ.
Շահնշահ ի 23 օգոստ. 1593, իբրեւ վկայ և
ճանչցող Բարաղի (Baser) որդի Նախճա-
ւանցի Պօղոսի, որ 110 դուկատ փոխ տուեր
էր առ Տիրան Զառշայեցի, և հիմայ զայս յետ
առնըլու համար՝ գործավար կարգէ զՄարկոս
Մուրատ սանսէր. վկայք են և Գէորգ տըն-
պահն Հայոց և Մելքոն ո. Յովհաննու վա-
ճառականն:

1. Ասոնցմէ առաջ (1588, մարտ 20) ուրիշ թաղի
մէջ (Ս. Մար. Խորոտիկ) նշանակուած է մկրտութիւն
գոտեր Հայ Մարկոսի մի, որոյ ուրիշ անուն և մակա-
նուն չեն գրուած. բայց կնոջ անունն ըլլալով նոյն, աղջր-
կանն այլ վերիններուն նման Յուլիա կոչուիլն (Ruosa
Iulia), հաւանական կ' ընեն թէ հայրն ըլլայ նոյն Շահն-
շահ Մարկոսն, այն ատեն այս տեղ բնակած: Այս աղ-
ջիկն պսակուեր է Պօղոսի որդի Յովհաննու աղդայնոյ
հետ, յամի 1605-6:

1595, հոկտ. 24. Շահնշահ իրեն յատուկ գործակալ կամ սպասաւոր մի ունեցեր է Պողոս Պալյա ո. Յովկ. , իրեն միայն բնակութիւն, կերակուր և զգեստ տալով. հիմայ նօտարի առջեւ խոստանայ որ նոյնպէս պահէ և պահեն զնա իր ժառանգներն այլ. իսկ եթէ ասոնք ուզեն տունէն դուրս հանել զնա, պարտական ըլլան ապրուստը հոգալու: Վկայ պարսկահայն Մկրտիչ և ասորին կամ Առւրիան Տոնատոյ:

1597, ապրիլ 17. Վաճառականք ոմանք խտալացիք կ'ընդունին ի Մ. Շահնշահէ 664 դուկատ, զօրութեամբ փոխանակագրի, զոր իր աներն Ֆր. Դիերոլոյ ստորագրած էր ի Զմիւռնիա, ընդունելով զգումարն ի Լիոն Կիրակոսէ, և գրաւ դնելով (ի 16 օգոս. 1596) 20 բեռ բամբակ և կապոց մի կապերտի, զորս (Ponte անուն) նաւով զըրկէր ի Վենետիկ, և նաւն համնելէն 15 օր վերջը՝ պէտք էր վճարել: Այս նօտարական գրուածի մէջ յիշուի, որ այն ատեն Շահնշահ բնակէր ի Ա. Մարինէ թաղի, մօտ ի Ա. Մար. Խորոտիկն, և թէ ի հրապարակի Ա. Մարկոսի ունէր վաճառասեղան կամ խանութ. անկէ տարի մ' առաջ այլ (1596, սեպտ. 9), վկայուած է այս տեղ բնակիլն, ի տունս կոռնելիոյ տոհմի, (in domibus de Chà Cornuelio), այն

օր՝ որ նա երկու Յունաց դաշտանց վկայ ե-
ղեր էր:

1598 (մարտ 6). յիշուի Մարկոս իբրեւ
թարգման Շիրվանցի Հէմտի Մէհէմիտ
պարսկի, որով կ'իմացուի պարսկերէն լեզու
գիտնալն:

1599. յուլիս. — Վկայ կ'ըլլայ Ա. Շահն-
շահ առաջի նօտարի, որ Խաչառուք (Caza-
dour) որդի Ամդեցի Գարանայի, վճարեց իր
համազգի Պալք որդի Աւքէրին՝ ոսկի դրամով
90 լիրա, որ էր մնացորդ անոր վարձուց, և
այլ առնելիք կամ պահանջ չունի սա:

1602. հոկտ. — Յակոբեան Մուրատեանց
վրայ գրածնուս մէջ (տ. 407) նշանակուած
է այն օր Ա. Շահնշահի վկայութիւն մ'այլ,
Զուղայեցւոց խնդրոյ մէջ. — Մինչեւ ի 1612
թուական հանդիպած եմ Շահնշահ Մար-
կոսի գործոց յիշատակաց. այս ետքի տարին
նօտարի գրել տուած է իր Ա. Մարկոսի հրա-
պարակին քով խանութիւն մէջ կտաւեղի-
նաց թիւը, որոց բաժանորդն իր փեսայն
Մէլքոն ո. Թօխաղցի Փէրունէ, քանի մ'ա-
միս առաջ էր ի Հռովմ: Գուցէ յիշուած
ըլլայ անկէ վերջ այլ, ինչպէս կըրնայ կար-
ծուիլ իր անդրանկան՝ Յակովրայ՝ յիշուած
ատեն, յամի 1623, ո. Մարկոսի Շահնշահի
կոշուիլն, առանց զ.մ գրուելու, որ նշանակէ

հօրն մեռած ըլլալը , իսկ առանց ասոր գուշակուի որ հայրն ողջ է : Այս յիշատակս է Յակովբայ վկայութիւնն Վարդան Մանգին եպիսկոպոսի համար (տ . 330) . իսկ յամի 1626 և 1630 յիշուի Յակովբ Շահնշ . ո . † զ . մ Մարկոսի իրրեւ կտաւավաճառ (Tellarioi) :

Իսկ եղբայրն Մարկոսի Ղազար՝ թուի առաջին անգամ յիշուած սոսկ Ղազար անուամբ , յամի 1585 , ի կտակի Մարտիրոսի որդույ կարապետի Ուսմայեցոյ , բնակողի ի Ս . Մար . Խորոտիկն , որ 30 դուկատի արժողութեամբ ինչք տուեր է առ սա (Ղազար) որ երթայ ծախէ ի թուրքաստան . 100 լիրայ այլ տուեր է առ Մարկոս Մուրատ Սերաստացի (Շահնշահն) . ուսկից գուշակուի թէ Ղազար ասոր եղբայրն էր : Դարձեալ , իրենց բնակած թաղին մէջ ի Ս . Յովհ . Բրագորա , ուր նշանակուած են ծնունդք զաւակաց Մարկոսի և ոմանց մահն , նոյն մեռելագրոց մէջ նշանակուած է և Ղազարայ Հայոյ մահն , 8 դեկտ . 1627 տմի , 75 տարուան . որոյ կինն այլ Զապել (Isabella) ամիս մի առաջ վախճաներ է (22 նոյեմ .) չրգողութեամբ , 88 տարուան :

ԺԳ . Մէրէն Պարսէի կամ Պարսկահայ , ո . Զատարա , — Քանի մ՞ անգամ յիշուեցաւ

սա, և յատկապէս (յեր. 362) Հայոց տընպահ եղած ատեն՝ անոնց քահանայից և մատրան վրայ տուած ծանօթութեամբք. յորում յայտնապէս ըսած է, թէ ինքն՝ Պարսիկ է, և անոնց լիզուն և սովորութիւնը չի գիտեր: Կըրնայ ի պարսիկ կրօնքէ դարձեալ ըլլալ ի քրիստոնէութիւն, բայց հօր անունն այլ քրիստոնէական ըլլալով՝ կըրնայ և Պարսկակայ ըլլալ, հին Զուղայի աւերածէն առաջ ի Պարսկաստան ծնեալ և բնակեալ: Ինչ այլ ըլլայ՝ իր գործողութիւնքն ի վենետիկ, և բնակութիւնն ու պահպանութիւն տանն Հայոց, և անոնց երբեմն կնքահայր ըլլալն, զինքն այլ իրենց ընտանութեան և պատմութեան վերաբերեն, թէ և արիւնակից և ինամի այլ չըլլայ: Իր մահուան թուականն և իր կնոջ և զաւակաց յիշատակք՝ երեւցընեն թէ շատ տարի առաջ եկեր է ի վենետիկ, և երկու անգամ ամուսնացեր, թէ և մեզի ծանօթանայ ի դիւանս՝ միայն ի միջոցի 25 տարիներու (1584–608):

Առաջին յիշատակն է յամին 1584 (հոկ. 8), կնքահայր ըլլալն որդւոյ Հերոնիմ Հայոց և կնոյն Գիարայ, ուրիշ Յովհաննէս անուամբ կնքահօր հետ. (թէ սա՝ թէ Հերոնիմ մկրտագրոց մէջ երբեմն առանձինն Արտենօ գըրուած են, երբեմն Արմենի, որ կըրնար մակ-

անուն կարծուիլ): Շատ տարի վերջը (1598), կնքահայր եղած է իր գործակից Մ. Մարկոս Շահնշահի Գալուստ որդւոյն: Քաղաքական գործոց մէջ այլ առաջին անգամ վաճառական կոչմամբ յիշուի ի ակիզրն 1585 տարւոյ (1 մարտի), երբ վկայէ, որ Յարութեան որդի Դամինիոս Արտաս վաճառակից էր Ախոնի Թարգալյ, ինչպէս և յետոյ պիտի յիշուի: - Քանի մի տարի վերջ (1588, մարտ 21) Մէրչն Պարսիկ, (Mirinus Persianus զ.մ Asange) գործավար կարգէ զՄկրտիչ՝ իր տուած 30 դժւկատ փոխը պահանջելու Յակոբ Iacolato կոչուած անձէ: Բարերդցի Ֆերուն (Feruch) ո. Սուեդիանոս յամի 1595 (Հոկ. 23). Իրեն գործակալ կ'ընտրէ զՄկրտիչ, որ ի մաքսատան եղած իր չորս բեռ Բամբակը հանէ և ծախէ: Այս բանիս վկայ կ'ըլլայ Գորգիկոչ ո. Մորկոնէ, անշուշտ Անկիւրացին:

Իսկ իր սանսէրութեան և վաճառականութեան գործոց՝ ընկեր ունեցեր է Մկրտիչ՝ շատ անգամ Հայոց գործոց մէջ յիշուած իրը Ասորի՝ Քրիստոնոր Տանառոյ մէկ մի, որուն Ասորի՞ թէ Հայ-ասորի, թէ իտալացի ըլլալը՝ չեմ կըրնար վճռել. որովհետեւ Surian մականուամբ բնիկ Վենետք այլ կան, և սա միշտ կ'անուանի Cristoforo զ.մ Donado Su-

րիան. Ալոր, ասոր հետ ընկերակցութեանց գործոց և շահուց հաշիւները քննելով և հաւասարելով, նօտարի առջեւ կու կնքեն իրենց առնելիք տալիքն և ընկերութիւնը, յամի 1596, օգոս. 28. թէպէտ եօթն տարի վերջ այլ (1603, ապրիլ 28) նոյնպէս նօտարի առաջեւ Մկրտիչ անդորրագիր կու տայ Տոնատոյի, որ ընդունեցաւ իրմէ 100 դուկատ պահանջը. Երկուքն այլ այս տեղ հասարակ սանսէր կոչուին: — Նոյնպէս յետ քանի մի տարիիներու (1608, մարտ 26) ուրիշ երկու այ վաճառականաց հետ, մին վերոյիշեալ Պազարն Շահնշահ (417), միւսն Պօղոս կեռտացի ո. Յովհաննու, վերջացընէ իր ընկերակցութիւնը, ընդունելով անոնցմէ իր մնացեալ պահանջը՝ 200 դուկատ. այս մուրհակս նօտարի առջեւ գրուած և ստորագրուածէ, բայց ի Տան Հայոց, որոյ պահապանն էր այն ատեն, 13 տարիէ ի վեր:

Յիշած եմք արդէն (տ. 200) որ յետ Գէորգայ ո. Յովհաննու սա եղած է Հայոց տընպահ. բայց երկուաին միջոց քանի մի տարի անցեր էր, և այն միջոցին՝ եթէ կար ուրիշ տնպահ և թէ ոչ, շատ խառնակութիւն եղած էր ի Տանն, և օտարազգիք մտեր էին բնակելու, հակառակ կտակի տունը պարգեւողին (Մարկոսի Ծիանի): Հիմայ (1595, օգոս-

28) Խնամակալքն այդ տան՝ մեծ պաշտօնեայք ներքին քաղաքին (Procuratori di Citra), հրատարակեցին նոր տնպահ ընտրել, և խնդրողաց մէջ յարմարագոյն դատելով քուէիւք ընտրեցին զՄկրտիչ, պատուիրելով որ բնակի ի տանն և օտարազգի շընդունի. (Sii obbligato habitar in la detta casa, et dar alloggiamento alli Armeni soli, et non ad altri, che sono et aggiongeranno in questa città). և եթէ օտար անձ ընդունի, զրկուի հանուի Տնպահն իր պաշտօնէն, (dando alloggiamento ad altri, resti privo di esso carico). Մկրտիչ հաւատարիմ գտուած է իր պաշտաման մէջ մինչեւ ի մահն. և իր այն ետքի տարին տուած տեղեկութենէն, Մարգարեան Յակոբ երիցու առթիւ (տ. 362-3) կ'երեւի իր խոհականութիւնն. և այս գրեթէ իր կենաց վերջին և կարեւոր յիշատակն է (1608, մայ. 14). Անկէ ճիշտ տարի մ' առաջ (1607, մայ. 10) յիշուի իր վերջին քաղաքական գործը (ըստ իմ ծանօթութեան), իր հին ընկերակից Տոնատոյի և Զողոյեցի Ամոբադի խնդրոյ մէջ, Նորէս թարգմանին հետ իրաւարար ըլլալն, որպէս զի ատենական դատաստանի շերթան. որով կ'իմացուի եւս իր իրաւախոհ յարգելի անձն ըլլալն:

Մկրտչի մեզի ծանօթ ընտանեկան յիշատակաց մէկն է իր կնոջ իշտղելլոյ (Զապել կամ Եղիսաբեթ) մահն, յամի 1588, (յանուար 13), երիտասարդ հասակաւ, 28 տարուան, երեք ամիս հիւանդութեամբ ջերմի: Որոյ դուստր կամ ո՛ր տանէ ըլլալլ' շեմ գտած. մեռեր է Ս. Անտոնինոս ըսուած թաղին մէջ, ուր այն ատեն բնակի եղեր Մկըրտիչ, և թաղուեր է ի Ս. Գեմինիանոս եկեղեցւոջ: Հաւանօրէն աա առաջին կինն է. իսկ երկրորդն անուամբ այլ անժանօթ, նոյնպէս հօն թաղուեր է, ուր և իրենց մէկ դուստրն, և ուր ինքն Մկրտիչ այլ ուզեր է թաղուիլ, ըստ կտակին՝ որ յ' 31 յանուարի, 1599. երբ ծանր հարրուղխով նեղուած՝ գնացեր է ի տուն իր իզապելլայ կնոջ հօրաքեռ Զեշիլիա այրի տիկնոջ, Ս. Հրեշտակ կոչուած թաղին մեջ (Contrà de S. Anzolo), և կանչելով գնօտարն (Ովրատ Տասկա, Horatio Tasca) գրել տուեր է կտակը. յորում կ'իմացընէ վերի ըսուածներէն զատ, որ կրօնաւոր որդի մի ունի Հռեմիէ անուն (¹), Fra Remigio, ի կարգէ Շնորհաց Ս. Աստուա-

1. Սա առաջին կամ հնագոյն է յարժանաւոր եկեղեցականս, կրօնաւորս և հաւատաւորս Հայոց, որը յի Յնդանակին, մանաւանդ յժմ գարու ընծայեցան վենետիկոյ և իտալիոյ:

ծածնի (dell'ordine di S. Maria di Gratia)¹. Այս ատեն Հռեմիգ ի Հռովմ է եղեր, ի Ս. Հերոնիմոս կոչուած վանս. ասոր կտակէ Հայրն 50 դուկատ. իսկ միւս բոլոր ստացուածները թողու իր Կառաջինէ դատեր, որ վերոյիշեալ Զեշիլիայի խնամոց յանձնուած է, և թէ ամուսնանայ՝ թէ կուսակրօն ըլլայ, ինքն է իր ժառանգն։ Զնոյն Զեշիլիա և զաւագերէցն Ս. Հրեշտակ եկեղեցւոյ (Մարկ-Անտոն) կարգէ կտակակատար, և կ' իմացընէ՝ որ Հայոց տան մէջ են իր քանի մի կտոր կարասիքն. և դարձեալ, ունի գետնի երես մի 300 դուկատի, զոր վարձեր է (Յերրերի Ալեքսանդրի) 6 ° շահով, և ի գրաւ դրած անոր մօրը երկու տուներն (ի Ս. Անտոնին). պատուիրէ որ տեղւոյն շահն այլ՝ զլուխն այլ առնուն, և անկէ հանեն որդւոյն համար սահմանած 50 դուկատը, մնացածն այլ՝ աղջըկանը. իսկ եթէ յետինս մեռնի նախ քան զամուսնանալ կամ ի կուսանոց երթալ, 100 դուկատ առնու Զեշիլիա, մնացեալն առնու

1. Այս աեղս Վենետիկոյ ճիւտեկկա կոչուած և լայն ջրանցքով զատուած մասին քով՝ նոր ատեն Հըրէ բարձրացած գետին մ'է, ուր բարեպաշտք ոմանք յանուն Տիրամօր եկեղեցի և ավա անսպատ կամ Հզնարան մի շինելով, յետոյ վանք և նոր կրօնք մի ձեւացաւ, թէ կուսանաց և թէ արանց։

Հաեմիգ. բայց եթէ ասոր վանաց միաբանք՝ ուզեն քննել և աւելի բան մի պահանջել, ամէն բանէ զրկուի Հռեմիգ, և ինչքն տըր-ւին ուրիշ բարերարութեան տեղւոյ մի կտակ-կատարքն այլ՝ իրենց ծախուց և կատարինէի դարմանոյ համար՝ պէտք եղածն առնուն . և թէ իրենցմէ մէկն մեռնի յառաջ քան կա-տարինէի վիճակին որոշումն, ուրիշ մի ըն-տրուի : Բարերարութեան տեղեաց ողորմու-թիւն տալն այլ՝ թող իրենք կտակկատարքն սահմանեն, կ'ըսէ :

Վերի այլեւայլ յիշատակներէն իմացուե-ցաւ, որ Մկրտիչ բժշկուեր է այդ հիւան-դութենէ, և տասն տարի այլ ապրեր և գոր-ծեր է, մինչեւ յառաջին օր գեկտ . ամսոյ 1608ին, յորում վախճաներ է ի Տան Հայոց, 15 օր ջերմով հիւանդացեալ, իբրեւ 60 տա-րուան, և թաղուեր է ի Ա . Յուլիան . Հաւա-նելի է թէ նոր կտակ մ' այլ գրել տուած ըլլայ . բայց ոչ այդ և ոչ երկու զաւակաց բաղդն կամ վախճանն յայտնուած է մեզ . Աւելի այլ հաւանելի է, թէ գեռ շատ ուրիշ յիշատակներ անծանօթ մնան ի դիւանս՝ այսպիսի գործունեայ վաճառականի, սան-սէրի և տնպահի Հայոց :


Բաւական համարելով այսշափս Հայ-Վե-

նետաց թ Յեղանակի սանսէրից համար, յիշենք միայն յանուանէ քանի մի Փերեշին այլ, այսպէս անուանելով զանոնք՝ որ Ս. Մարկոսի Հրապարակին մէջ (յատուկ արտունութեամբ տէրութեան), շարժուն խանութ դընէին կամ սեղանատախտ (Banca). ասոր համար ի Թուրքահայոց Գ. Յեղանակին Պանչովին, և վաճառքնին սփռելով կամ շարելով սեղանին վրայ՝ ծախէին։ Ինչուան ի վերջ Հասարակապետութեան և ի վերջ ԺԲ դարուն եղած են Հայ վերեզիկք. զորս Վենետիկ կոչեն Վաճառական ի վերայ Հրապարակի Ս. Մարկոսի. Mercatores super Plateam S.i Marci. — Mercanti sopra la Piazza di S. Marco. կամ Venditores mercium super Plateam S. Marci.-Vende-merci sopra la Piazza di S. Marco. Այսպիսիք են, արդէն մեզի ծանօթք՝ Մարկոսն Շահնշահ, յիշուած ի 1597. — Յակոբն ո. Մարկոսի. — ուրիշ Մարկոս մի և Vitalis? կոչուած, նոյնպէս ի 1597. — Ղազար ո. Յովհաննոս, Առառի գրուած, 1600. — Բէնեթ Սուրբիան բայց Հայ և ո. Յակովբայ կոչուած, 1603. — Ական ո. Յովհաննոյ, 1603. — Գիորգի Առաքէլ, 1608։ Յիշենք և զԱնձելոյ (¹) ո. Սերովբէի Տրա-

1. Այդ իառացի անուամբ՝ որ նշանակէ Հրեշտակ, յիշուած է և աւելի հին Հայ մի, Anzolo Armenio,

պօլսեցի Ասորի, որ 1589ին խնդրած է սահմանը ըլլալ, և շատ հեղ Հայոց գործոց վկայեղած է. ինչպէս, յամի 1594, Տէր Յակովբայ, և յամին 1602, Կիրակոսի և Գոււպաթնաւապետի, և այլն:

† յամի 1572 ի առն Հայոց, 65 առբուան: — Նոյն աեղ և աւելի առաջ (1583) յիշուէ և Ազոյիս Հայ մի:



ԺԶ.

ՅՈՒՆԱՏԱԿ ԵԶ ԴԱՐՈՒ ՀԱՅ-ՎԵՆԵՑԱՍ

Մինչեւ հիմայ Հայ-Վենետոսց համար գը-
րուածէն յայտնի եղաւ՝ որ ասոնց յարընչու-
թեան զլխաւոր և նախնական պատճառն ե-
ղած և տեւած է ամբողջ 600 տարի (ԺԲ-
ԺԸ դարք) վաճառականութիւնն. և ասոր
պատճառաւ կան եկածք և ծնածք ի Վենե-
տիկ, նա և այնպիսիք՝ որ ոչ վաճառականու-
թեամբ՝ այլ ուրիշ գործով մի նշանաւոր ե-
ղած են հօն, ինչպէս որ տեսանք այս Բե-
ղանակիս յիշատակաց ԺԱ-Բ գլխոց մէջ. ո-
րոց վրայ աւելցուցինք յետագայից մէջ առակ
վաճառականութեան դիտմամբ եկող և գոր-
ծող քանի մի. անձինք, կամ անոնց յատուկ
գործոց և բնակութեան գիտելիքը (զլ. ԺԴ.
ԺԵ): Ասոնք մէկ նշոյլ կամ ճաշակ մի կըր-
նան ըսուիլ այն բազմութեան վաճառակա-
նաց՝ որ ի Մեծ և ի Փռքը Հայոց եկած են
ի Վենետիկ այս Յեղանակիս երկրորդ (ԺԶ)
դարուն, և աւելի ասոր այլ կիսէն ետեւ.
որք հետզհետէ աւելցեր են Գ Յեղանակի
առաջին (ԺԵ) դարուն մէջ. այնպէս որ եթէ

ՓԶ դարու մէջ հարիւրաւոր յիշուին՝ յա-
ջորդին մէջ կըրնայ հազարաւոր ըսուփլ։ Այս
վերջինները թողլով, առաջնոց այլ ամենուն
անուանքն և աննշան գործ մի յիշել, եթէ
կարելի այլ էր, այլ ոչ կարեւոր. սակայն և
իբր ոչ անօգուտ հետաքննութեան բան՝ ան-
պատշաճ չեմ հսմարիր յիշել քիչ շատ ա-
նոնցմէ, (որոց ոմանք արդէն որ և է կերպով
յիշուած են), ըստ կարի՝ ժամանակագրութեան
և յիշատակաց մերձաւորութեան կարգ մի
բանելով։

Յառաջ քան զանձինս՝ յիշեցընեմք համա-
ռութիւ վաճառականաց հայրենիքը կամ ուս-
կից գալլ, և բերքերնին։ Նախընթաց (Ա)՝
Յեղանակին մէջ սակաւաթիւ ի Վենետիկ ե-
կող Հայք՝ գրեթէ ամենքն ի Սիսուանայ են
կամ Կիլիկեցի. Խրկրորդիս մէջ հազիւ այն
կողմէն եկողք, այլ շատն յարեւմտեան Փաքր
Ասիոյ և յԱսորւոց երկրէ, սպակաւք ի բուն
և Մեծ Հայոց, ի բաց առեալ զջուղայեցիս,
զոր արդէն տեսանք, որոց զուգակից են և
Նախճաւանէ եկողք և Ղափանցիք։ Ի Փոքր
Ասիոյ եկողաց բազմաթիւ երեւին Անիւրացիւ,
յայտ է որ իրենց երկրի համբաւաւոր և ըն-
տիր Ցէսէն բերելով. իրենց մերձաւոր տե-
ղիք՝ Սառնող, Սիլքիհնոտը, և ոչ շատ հեռի
Պրուսս այլ ունին իրենց ներկայացուցիչ. ո-

ըսց մերձաւոր համարելի է և ամենուն տիրողն
կ . Պօլիս : Երկրորդ բազմաթիւ և հարուստ
վաճառականութեան տեղիք են յԱսորիս , Հա-
յուք , Մերտին , որոց մերձաւորք այլ յիշուին
Ուռհա , Տրէտրլիս , Հըսնելյիք , և առանց յա-
տուկ տեղւոյ յիշուած Քաղդեացիւ և Ասորիք .
աւելի հեռուէն Պարսկահայր : Իսկ մեր հին
վաճառականութեան և Հայ-Վենետաց գոր-
ծակցութեան կենդրոնէն՝ դեռ Սէս , Այսու ,
Արտանա , Գարբան . ասոր հիւսիսային կողմէն՝
մեծագոյն քաղաքն Կեսարիա . արեւելեան կամ
Եփրատացւոց կողմէն՝ Հասմիլայ , Կարկառ ,
Արջնի , և միւս մեծ քաղաքն՝ Աֆր (Տիար-
պէքիր) : Իսկ ի Մեծ Հայոց տեղիք վաճա-
ռաբերք կամ վաճառահանք , Կարին , Եղընիս ,
Բաղեշ , Բաբերդ . որոց հաւասար և աւելի նշա-
նաւորն Վան՝ այս Յեղանակիս մէջ չերեւիր ի
հրապարակի Ա . Մարկոսի , եթէ աչքէս չէ
վրիպած : – Նկատմամբ բերոց կամ նիւթոց
վաճառականութեան՝ յիշած եմք Ա Յեղանա-
կին մէջ (եր . 51-4) . այս Բ Յեղանակիս մէջ
այլ՝ մասամբ նոյն են բերուածքն , և ամենէն
աւելի Մերտու և Ցիու . սա յարեւմտեան Փոքր
Ասիոյ , միւսն յարեւելեան Հայոց և ի Պար-
սից . իսկ ի միջնաշխարհէն Հայոց՝ իր հռչա-
կեալ Խոշնդրեղն : Ի Վենետկոյ հանած բերոց

**ԱԵԾ գլխաւորքն են Աղակեդիններ, և Ռուսներ, և
Կորելու գործիք:**

Յայտնի յիշատակք վաճառականաց՝ դարուս (ԺԶ) երկրորդ քառորդէն կու սկսին. անկէ առաջ յամի 1522 (սեպտ. 27), Վենետիոյ վաճառականութեան պաշտօնէից վճիռ մի պատուիրելով Ասորւոց կողմէն եկողներուն՝ որ իրենց վաճառոց չափն ու տեսակը ցուցընեն իրենց տեղում գտուած Վենետիոյ տէրութեան գունցին կամ երեսփոխանին, տեղեաց մէջ առաջին գրէ յազա, որ մեր սըրտառուչ Այասը հնչեցընէ, յետ նախընթաց դարուն և ապագայիցն լոռութեան։ Ստուգիւ Այան էր՝ թէ ոչ. — անունն անգամ կ' արժէ մեզ։ — Վաճառոց յայտարարութիւնն ի հարկէ անոնց համեմատ գին և նեհ (tariffe) սահմանելու համար էր. այս բանս շատ անգամ եղած է Վենետիոյ տէրութեան կողմանէ՝ իրենց պաշտօնէից և գունցից ձեռք. այս ետքիններէս Պետրոս Մոլին գունցն ի Հայէպ, յամի 1534, քննութեամբ երեք ճանաչողաց՝ սահմանեց նեհ մի. զոր քանի մի տարի վերջ (1537, մարտ 5) տէրութեան պաշտօնեայք քննելով՝ արքունի վճռով հաստատեցին։ Դարձեալ, քանի մի տարի ետեւ (1541, սեպտ. 1) Ե Գիտունքն՝ ըստ խնդրոյ Թուրքաց, Պարսից և Ասորւոց (որք մեծ

մասամբ Հայք էին), հաւանեցան որ 21շ, տուրքէ Մետաքսից ազատ ըլլան, իսկ նաւողչէքէ և ուրիշ տուրքերէ՝ այն անգամ միայն ազատ ըլլան։ Դարձեալ, յամին 1549 (մարտ. 19) վճռեց տէրութիւնն՝ որ ի թուրքիոյ եկող վաճառականք, եթէ բերածնին Վենետիկէն դուրս պիտի հանեն՝ բան չի վճարեն, իսկ եթէ այս տեղ պիտի ծախեն՝ վճարեն։ միայն թէ վըկայիւք պէտք է ցուցընեն՝ թէ վաճառքն իւրենց է և ոչ օտարի։ — Ասոնց նման յամի 1567, 1574 և շատ ուրիշ անգամ այլ, արեւելցի վաճառականաց դիւրութիւն տրից և մաքսից շնորհուած է ի հասարակապետութենէ Վենետիկոյ։

Գալով յատուկ դիպուածոց և անձանց, այս կարգաւորութեանց առաջին տարիներում (1536), Նիկոլոս Դոլչ (Dolce) անուն մէկն՝ Վենետիկէն լաթեղէնի վաճառքով ի Տրիպոլիս գնացեր է։ և այն տեղի Խօնա, Ղազէ (Gazel, թուփ Ղազար) Հայոյ հետ առուտուր ըրեր է, որ երկար՝ աւելի քան 15 տարիներու խնդրոց, դատի և իրեն բանտուելու առիթ եղեր է։ Հայէն մետաքս առեր, փոխանակ տուեր է Չուխայ և անոր նման նիւթ մի՛ որ Cariace կամ Carisca գրուած է։ բայց գեռ պարտական մնայ 1500 կանգուն այլ տալու առջինէն, 300 կտոր երկրորդէն։ Ոյն ատեն

Հանդիպի պատերազմն Օսմանեանց, որք կողմա-
պտեն ասոր վաճառքն՝ յԱղեքսանդրիա, իրը
6000 դուկատ գնող. իսկ ինքն յետ հաշտու-
թեանն, մետաքսն առած կու գայ ի Վենե-
տիկ, կու բանայ սնտուկները, և մետաքսը իր
կարծածէն աւելի ցած տեսակ կու գտնէ. ա-
նոր համար Չուխայն կու խաւրէ, բայց մէ-
կալէն՝ փոխանակ 300 կտորի՝ 160 միայն կու
խաւրէ. Թացեալ 140ը բըռնելով իրը փո-
խարէն անարդ մետաքսին: Ղազէլ կու տհա-
ճի. և եթէ առաջ 500 դուկատ համարէր առ-
նելիքը, հիմայ կու պահանջէ 3361, ծեգգին
ոսկւով. դիմելով ի կ. Պօլիս առ Ռիւզէմ
փաշայ՝ խնամի սուլդանին. և թէպէտ պայլն
և դեսպանն Վենետաց՝ կու ջանան պաշտ-
պանել իրենց հայրենակիցը, բայց փաշայն
կու սպառնայ՝ որ մինչեւ չհատուցանեն՝ չե-
րեւնան՝ ոչ իրեն և ոչ ուրիշ մեծամեծաց:
Անձարակներն կու ստիպուին հատուցանել,
և ի Վենետիկ գրաւել տալ Դոլչէի ինչքը,
և զնա ի բանտ ձգել: Բայց անկէ առաջ Ղա-
զէլ Տրիպոլսի դատաւորին ձեռօք և Ռիւ-
զէմի հրամանաւ՝ Դոլչէի 8000 դուկատ ար-
ժէքի ինչքը գրաւեր էր: Վենետիկոյ տէրու-
թիւնն այլ (1543, սեպտ. 29) գրեր էր առ
պայլն՝ որ ջանայ հաճել զՂազէլ՝ այդ գու-
մարէն վար իշնելու, Դրան հետ այլ զգու-

շութեամբ խօսի: Դոլչէ ի բանտէն աղերս
կու տայ Դրքսին, որ արձակուի և երթայ
ի կ. Պօլիս, օգնութեամբ պայլին՝ իրաւա-
խոհ ըլլալու Ղազելի հետ. իրեն երաշխա-
ւոր դնէ իր եղբայրն և ուրիշ մի, որք յանձն
կ'առնուն գրաւ տալ 3000 ծեգին, 461 դու-
կատ այլ ուրիշ պարտուցը համար: Եթէ գնա-
ցեր է և թէ ոչ, դեռ տարիներով վերջ այլ
պարտական մնացեր է նա իր տէրութեան,
3461 դուկատից. և չկարենալով վճարել որո-
շուած ժամանակին, կու խնդրէ երկարել ժա-
մադրութիւնը. տէրութիւնն այլ (1547, մայիս
21) կու շնորհէ իրեն իրեք ամիս, պարտքին
մէկ քառորդը վճարելու, միւս քառորդներն
այլ տարուէ տարի: Երկու տարի վերջը
(1549, մայիս 10) տէրութիւնն նորէն հրա-
մայէ և գիտնոց քննել, որով կ'իմացուի
որ Դոլչէ դեռ չէր վճարած՝ իր պարտքը,
և գանգատէր՝ որ Ղազէլ զինքը խարեր էր,
Դամասկոսի մաքուապետք այլ զինքը պար-
տաւորեր էին: Դարձեալ, երկու տարի վերջը
(1551, յունիս 20), ըստ խնդրոյ Դոլչէի՝ տէ-
րութիւնն շատ դատաւորներ կարգէ Դոլչէի
և Ղազելի առուտուրը քննելու, բայց միշտ
պարտաւորելով զառաջինը՝ հատուցանելու իր
պարտքը կամ առած փոխն ի տէրութիւնէ:
Յետ այս 15 տարիներու, գուցէ և աւելի՝

գործոց և դատից, խնդիրն ի՞նչպէս վերջացեր
է, զայն շեմ գտած ի դիւանս, նոյնպէս և
ուրիշ գրուածներ՝ որք անշուշտ այն տարի-
ներու մէջ այն գատին այլեւայլ պարագա-
ներն արձանագրած են. ուսկից թերեւս աւե-
լի ճանչցուէր Ղաղելի կամ Ղաղարի ով-
րլլալն. զի թուի՛ թէ ոչ միայն մեծատուն
վաճառական էր, այլ և ծանօթ արքունեաց.
յայտնի չէ թէ արդեօք ի Վենետիկ այլ ե-
կած է նա երբեմն:

Իսկ նոյն ատեններ յայտնապէս ի Վենետիկ
եկող Հայոց առջիններուն անուանքը, թերեւս
թըղթեղէն դիւաններէ աւելի՛ յայտնեն քա-
րեղէնքն, Ա. Մարկոսի հրաշալի տաճարին սիւ-
ներն՝ կիսաքանդ գծերով .ի՞նչպէս այս. « Թվին
» 1523. (1) Նովէմբրին (Ի՞ն?) Եալոյէ Յան-
» էր ց?... զսրայ ... որ եկի Վէնէտիկ » . ան-
տարակոյս չէ կարդացուածն, բայց թուի թէ
գրողն Եաւտի անուամբ Անկիւրացի մի է: -
Մօտ թուականաւ փորագրած են, Մարտոր թվ.
Ռ. (1551). - ուրիշ մի. թվ. ՌԳ. (1554),
թերեւս ներքեւը գրողն Եայող? Պողոսար (Պաղ-
տասար). — « Յովաննիսի օրդի Յակոբ. թվ.
» ՌԼ. » (1559). նոյն կամ ժամանակակից
Տէր Յովհաննու որդի բացբերան Մէրտինցի

4. Որոշ չերեւիր երրորդ թիւն, բայց կի նմանի,
1543:

Յակովայ (տ. 308): — Գուցէ աւելի հին ըլլայ՝ ոչ սեանց վրայ՝ այլ եկեղեցւոյն հըռշակաւոր գանձատան ներքին պատի վրայ դրուածն. «Ես կատանդս ծառայ Աստուծոյ» որ զիս յիշէ»: — Ասոր մօտ և նոյնպէս հին համարուի, + Յոհանէսի ա-թնէ:

Քարերէն անցնելով ի թուղթս, առաջին յիշատակ ազգայնոյ, յամի (1553) թէ և օտար անուամբ՝ բայց միշտ հայ վկայուած և ի Հայոց տան բնակող՝ Ալոյիս ոմն է, որդի Մարտոս, կամ Միրանայ (Morany) և հայր Յակովը. յետինս ոչ միայն չափահաս՝ այլ և պատուաւոր վաճառական մի գուշակուի, վասն զի նօտարն լատինագիր՝ Prudens vir կոչէ (խոհական կամ զգօն այր). և կ'իմացընէ, որ Յակոբ՝ քաղքէն հեռանալ ուզելով իր հայրը գործակալ կարգէ (25 օգոստ.), որոյ պատշաճէին իր ամեն առած և ծախածինքն և առնելիք—տալիքն, և ինքն է պատասխանատու: — Զորս տարի վերջը Զատարանուամբ Հայ մի, որոյ ոչ հայրն յիշուի և ոչ հայրենիքն, իրեն գործավար և երեսփախան կարգէ զսոյն Ալոյիս (Alouysius), ո՞ր և է իրեն վերաբերեալ խնդրոց համար: Տարի մի վերջը վախճանած է Ալոյիս ի Տան Հայոց (1553, օգոստ. 16), ութ օր ջերմի հիւանդութեամբ, որ ծերոց հասարակ ըլլա-

լով գուշակուի իր ծերութիւնն այլ, զի տարիքն նշանակուած չէ ի մեռելագիրս. քանզայն աւելի հետաքրքրական է անունն, մկըրտակա՞ն՝ թէ հայերէն անունէ մի ծռմոկած յիտալացի: Նշանաւոր է և Զուատայ անունն, (յիշեցընելով Դարու Զուիթ երէցը, սպիտակ ու սեւ մազով). ուրիշ յիշատակ չէ յայտնըւած ասոնց:

Նոյն տարիներ և նոյն տեղ՝ ի Տան Հայոց, որոյ և պահապան՝ Սիմոն ո. Յակովովյան՝ արդէն ծանօթ է մեզ (եր. 336), և իբրև ամենուն ծանօթ նշանաւոր անձ ցուցընէզնա՝ տպագրողն Աբգար, պարզապէս « ի » ժամանակս Սիմոնի » ըսելով, իր տպագրական գործոյն համար: Յիշեցինք և իր հայրանուն որդին Յակով, ի կարգի սանսէրից (տ. 395): Այդ յաջորդական անուանքն (Յակովը և Սիմոն) կարծիք մի բերեն, թէ արդեօք Սիմոնի հայրն Յակոր՝ չէր մեղի առաջին հայ գրատիպ ճանչցուած Յակորն՝ յամի 1512 (եր. 208): Եթէ կարծեաց սանդուղն հաստատութիւն ունենար, Յակորէ Յակոր աստիճանագրար վեր ելնելով՝ կու հասնէինք ի Յակորն յիշուած ի Տան Հայոց յամի 1434 (տ. 180), հանդերձ որդւովն, որոյ անունն չէ յիշուած: — Սիմոն՝ հարկ է որ շատ ազգային գործոց մէջ մտած ըլլայ, բայց

անոնց յիշատակները չեմ գտած։ միայն դիւ-
ւանաց մէջ՝ Սիկոլին նօտարի գրուածի մի
հանդիպած եմ (1567, մայիս 17), որ յայտնէ
թէ Սիմոն գործակալ էր Երմինա կամ Ռե-
նինա (Թագուհի) անուամբ կանէացի (Կրետէ
կղզւոյ) բանտարկեալ կնոջ Սարավալլոցի Յա-
կոբայ։ որ շնորհիւ դըքսին՝ բանտէն անդոր-
րագիր կու տայ Սիմոնի, որ իր ստաց-
ւածքն ազատեր էր (Ռագոդա Հերոնիմ ա-
նուանեալ Սարավալլեցի) մէկէ մի։ Այս
կամ ուրիշ անդորրագիր մի յանուն Ռեճինայ
գրուած առ Սիմոն՝ յամի 1569. գտուի յիշեալ
նօտարին գործոց մէջ։ բայց գիրքն՝ խոնաւու-
թեամբ կէս փտտած և աւրուած՝ չի կար-
դացուիր։ — Սիմոն՝ Հայոց Տնպահ դրուած
կ'երեւի յամի 1555ին, քանի մի իտալա-
ցիներէ ետեւ։ և յիշուի ի Հայ-տան յաջորդ
տարւոյն սկզբում (կամ 1557, յան. 26),
իր սենեկին պատուհանից նորոգութեան առ-
թիւ։ Յիշեցինք (եր. 311) Սիմոնի բողոքելն
(1573) առ Հոգաբարձուս՝ ընդդէմ Աղեքսան-
դրի և Յակովբայ անառակութեանց, որք և
կու սպառնային տնպահին որդին սպաննել։
Յիշեցինք նա և իր թարգման ըլլալը Զաքա-
րիայ եպիսկոպոսի կտակին, յամի 1575 (եր.
334) և սկուտ (դրամ) մի ժառանգելն անկէ։
Երկու տարի վերջը է Սիմոն (1577) փե-

բրուարի սկզբան, թերեւս մեծ ժանապահութեն
բռնուած : Գիշ որ վերջը (մարտի 2) Հոգա-
բարձուք զԳէորգ ո . Յովհաննու անորյալիորդ
կարգելով, յիշեն՝ որ շառ գտնդաս եղած է
Սիմոնի վարչութեան դէմ (¹) : — Նոյն ժանա-
պահութ մեռածներուն կարգին նշանակուած
է և Յովհէ Հայ մի, ով և ուսաի ըլլուն
անյայտ :

Այս յիշեալ Հայերէն զատ՝ 1560էն առաջ
ծանօթ են ի գիրս նօտարաց, Ֆրանչիսկոս Հայ
մի՝ ո . Պետրոսի Մարտիրոսի, որ իր համա-
նուն Ֆրանչիսկոս մի իրեն գործակալ կարգէ
(1558, հոկտ . 1): — Գրէտոր Մարտոր ո . † Յով-
սեփայ, բնակեալ ի Տան Հայոց, գործակալ
կարգէ զխաղաբար (Christophorus) ո . Ապ-
տուլլահի, իր պահանջները ժողովելու՝ պար-
տականներէն : Հետեւեալ տասնամեկին մէջ
(1560-70) նշանակուած է Դամիէլ անուամբ
Հայ մի (1568), որ թուի անդորրագիր տուած
կամ առած . նօտարական գրոց ցանկի մէջ
գրուած է միայն D(ominus) David Arme-
nus. Quietatio . իսկ խնդրոյն տեղեկու-

1. Esendo alli giorni pasati mancato di que-
sta vitta Simon già custode de la Casa deli
Armenj.. et per li molti reclami che Sue Signorie
Ecc.^{me} a avuto del mal governo fatto da lui
S. Simon, ecc.

թեան գրուածն՝ փտտած և թափած է: — Նոյն տարին (1568, մայիս 15) մեր արդէն յիշած (եր. 373) Բերիացի Շաւալաթեան Հալէպի գրամանոցի վարպետին որդին Աղեժանուրքն, պատրաստուած երթալ ի կ. Պօլիս կիպրացի նաւով, իրեն գործավար կարգէ Լորենցոյ Կոնտարին (Contarino) փաստաբանը, դատ վարելու Մէրտիչ Ավետուլա կոչուած իտալացւոյ դէմ. նոյնպէս և զՅակովէ Մէրտինցի որդի Իբրահիմայ, անոր երկու հակմետագրու պահանջելու նոյն Աւետուլայէն: Երկար ատեն բնակած է Աղեքսանդր ի Վենետիկ, և այս նաւարկութենէն երեք տարի ետքը (1571, մարտ 29) նորէն վկայ կ'ըլլայ կարկառեցի Բարունիան ո. Սիմոն սանսէրի (տ. 294. 313) հետ, որ Յովհաննէս Ամրեցի ո. Տէօվլէթքեարի՝ անդորրագիր տուաւ կոնտուզի (տ. 370) որդւոյ † Ամիրի (զ. Աmiri de Azami) Պարսկահայոյ: Այդ Յովհաննէս նոյն օր նոյնպէս անդորրագիր տուած է և Փանոսի ո. Գեորգայ, ասոր հետ թէ ի Հալէպ թէ ի Վենետիկ ըրած առեւտըրին համար. ինչպէս տարի մ' առաջ այլ տուած էր ջուղայեցի Գայիրի (տ. 370) 285 դուկատ պահանջիցն համար, որոյ վկայ կ'ըլլան յիշեալքն Յակովը Մէրտինցի և Սիմոն սանսէր: Աղեքսանդր՝ չորս տարի վերջ այլ (1574, յունիս

12) յիշուի իբրեւ վկայ և թարգման կարողացի ու Յովհաննիսի ջուղայեցւոյ (եր. 374): Տարի մի վերջ այլ (1575, մարտ 18) 15 դուկատ փոխ կու տայ Պասսայի ջուղայեցւոյ՝ իր որդւոյն խնդրոյն ատեն (եր. 374), երաշխաւոր դնելով զկարապետեանն Յովհաննէս, և վկայ՝ զԳիշորդ ու Թէոդորի, Նասիալ ջուղայեցի և Հըսնքէյֆցի յակորիկ տէր թամարը:— 1569, յուլիս 23. Աղյուսակու և Թէոդոր Անկիւրացի վաճառականք՝ իրենց հայրենակից Յովհեֆը գործավար կարգեն, պահանջելու ի մաքսապետաց և յայլոց՝ իրենց բերած 26 տախտ կամ հակ Ցփսեաց, և Մօցայա կամ Mocagliari (թուի պօղասի) կոչուած տեսակ մի կտաւեղէնքը և ուրիշ դրամական առնելիքը. Վկայ դնելով զԳիշորդ ու Յովհաննու ծանօթ սանսէրը: Նոյն օր տէրութիւնն վճռերէր, որ այդ տեսակ նիւթոց Cottimo և Bailaggio ըսուած տրոց համար՝ ստէպ վէճ և խնդիր կ'ըլլար, այսուհետեւ երկու տուրքն այլ պահանջուին, բայց ամբողջ տտակն տէրութեան սնտուկին յանձնուի: Գուշակուի որ այս վճռին շարժմամբ՝ նոյն օր առաջ կամ վերջ Անկիւրացիք իրենց ընելիքն ըրեր են. բայց չորս ամիս վերջը (նոյեմբ. 25) նոյն բանի վրայ նորէն խնդիր ըլլալով, և Գիտունք տնպատշաճ համարին այդ վճիռը.

իրր զի արդէն 1541ին վերցուեր էին այդ տուրքերն, և երբ խնդրէին վաճառաքերք՝ կու շնորհուէր իրենց. — Քիչ օր վերջը Յովիլը Gentile? կոչուած և Սիմոնի ո. Յարունին, որ Թուրքաց և Պարսից հետ ի Պարսկաստանէ մետաքս բերեր էին ի Կէլիպօլի, և անկէց ցամագով եկան ի Վենետիկ, մինչ այլազգիք նաւով գալով՝ մաքոէ ազատ եղան, խնդրեն որ իրենց այլ շնորհուի ազատութիւն, վասն զի ի կ. Պօլսէ շեն եկած. (ըսել է թէ այդ քաղքէն բերողք՝ պարտաւոր էին մաքսի և բաժի): Լոյն տարին (1569) ասոնցմէ առաջ ուրիշ անկիւրացի մի՝ որուն անունն և հօրն այլ խանգարած են նօտարք, գըելով Սերին և Գարեն? (Serinus Ermenius filius S. Carani), նոյնպէս մետաքս բերեր են, կու յանձնէ (ապրիլ 28) Անկու Արիկոնի իտալացւոյ, որ պահանջէ յՈկտաւիոյ Պարոնոյ՝ իրենցմէ գնած մետաքսին գինը և յԱնգոնայէ եկած փոխանակագրին գումարը, (184 դուկատ). վկայ կ'ըլլան ծանօթքն Գէորգ ո. Թէոդորի և Սիմոնի ո. Յակոբ սանսէրն: — Լոյն տարի՝ Անկիւրացւոց յարեւմտից՝ ի Թուրքիոյ, և Զուղայեցւոց (տ. 358) յարեւելից՝ ի Պարսից մետաքս բերելն: — Ասոնցմէ մէկն էր կամ ուրիշ եր-

կըրցի Յովնալեան այն կամ Ո-խալեան՝ զոր
յիշեցինք թէոդորեան Գէորգայ գործոց մէջ
(եր. 294), ուր ուրիշ անծանօթ վկայ մ' այլ
յերեւան ելաւ, Յովնան ո. Սիմոնի։ — Իսկ
կարկառեցի Յարութեան ո. Սիմոնն՝ այլ և
այլ անգամ յիշուեցաւ (եր. 439)։

Ասոնց ժամանակակից անկիւրացի մ' այլ
յիշուի, Աղբեսանդր ո. Անդրեէ, որ ի կ. Պօլ-
սոյ բեռ մի փոկ (Cordovan) բարձեր Սկու-
տա (Scutæ) անունեալ նաւուն վրայ և բերեր
էր ի Վենետիկ, ուր իր համանուն իտալա-
ցի Աղեքսանդրի Ռանի հետ վէճ ունենա-
լով, երկուքն այլ հաւանին (1571, յուլ. 5)
իրաւարարներ դնել և անոնց վճռածն ընդ-
ունիլ։ Նոյնն յիշուի երկու տարի վերջը
(1573, յուլ. 28), իրեր գործակալ կամ
գործակից Աբդւլաստի ո. Աբդւլբէխմայ Մէր-
տինցւոյ, որ (Ֆինարտի) նաւապետէն փոխ
առեր էր 93 դուկատ, և խոստանար հատու-
ցանել ի Տրիպոլիս. ապա թէ ոչ՝ նաւապե-
տըն (Մոշենիկոյ) պիտի առնուր իր ապրանքը,
մնացեալ պարտքն այլ պիտի հատուցանէր
Աղեքսանդր։

Առանց հայրենեաց տեղւոյ յիշուեցան այս
առեն վաճառակիցք, Յակով ո. Առաքելի,
Արտէլ ո. Մեստերի ? (Mesder) և Թան-
էլ։ Ասոնցմէ Յակովըն Առաքելեան քսան

տարի վերջ այլ յիշուած է (1594, մայիս 4), իբրեւ վկայ Մարգարեան Տէր Յակովբայ ընդունած ընչից՝ ի հաշիւ կաթողիկոսին Հայոց (Եր. 345): — Էմիրճան? (Emiryassin գրուած)

ո. Ամբուէնշահի Եղբնկացւոյ՝ զՆիկոլ Մարենտի իտալացի իրեն գործակալ դրած է նոյն տարին (1574, յուլ. 31) իրմէ ընդունած 189 դուկատի հաւասարը՝ մաքսի պաշտօնարանէն պահանջելու: — Քանի մ' ամիս առաջ (կամ հետեւեալ տարին, 25 փերբ.) այս Եղբնկացին՝ թօխադցի կուիխան? անուամբ Հոռմի յանձնարարութեամբ՝ առած էր ասոր պահանջը, 34 դուկատ, ի Տոնատոյ Խաչատրոյ կամ Քրիստոփորէ, երաշխաւոր կարգելով զպարսիկն կամ պարսկահայ Ղազար:

ո. Յովհաննու:

Այս ժամանակ (1574) ի Վենետիկ և ի Վենետիկոյ դուրս կարեւոր դէպք մի հանդիպած է Հայոց ոմանց, որք թէ՛ վաճառականութեան և թէ՛ ի Հոռմ Ներողութեան տարին ուխտի երթալու պատճառաւ, վենետիկեան նաւով մի կու գային. երբ Տոսկանայի Ջրերու հասան, այն տեղացի բերդանաւ մի արգիլեց վենետիկեան նաւը, և Հայոց ինչըլ կողոպտեց իբրեւ թուրքի հպատակաց. ասոնք ի Հոռմ բնակող Աշխատանքը անուամբ ազգակցի բերնով, դիմեցին առ դուքսն Վենետի-

կոյ. դուքսն քաջալերեց զանոնք որ երթան
ի Ֆիրենցէ և կ' առնուն ստացուածքնին . Հայք
եկան ի Ֆիրենցէ . բայց դուքսն մերժեց զա-
նոնք , ըսելով՝ որ ի Ս . Պապէն պատուէր
ունի թուրքի հպատակաց ինչը գրաւելու .
Աղեքսանդր դառնալով ի Հռովմ' նորէն զրեց
առ դուքսն Վենետիկոյ (1575, յանուար 15) ,
եզածը պատմելով , և շեմ հաւատար՝ ըսե-
լով , որ Ս . Պապն հաւանի խեղճ քրիստոնէից
ինչքն կողոպտելու . (Ma jo credo che S.
Santità non volgia che la roba deli po-
veri christiani si perdano a questo modo;
per le parole che mi disse V.a Serenità).
և կու խնդրէր որ բարեխօս ըլլայ առ Պապն :
Նոյն օր Վենետաց գեսպանն այլ (Պօղ .
Դիերոլոյ) ի Հռովմէ գրէ առ տէրութիւնն , որ
Հայք խնդրեր էին իրմէ որ խօսի ընդ Սըր-
բաղանին , բայց ինքն չուզեց առանց հրա-
մանի դըքսին , և սպասէ ասոր պատուէրին :
Խորամանկ կամ խորագէտ դուքսն՝ ոչ իր
պատուակցին ուզելով դպչիլ և ոչ անոր պէս
Հայոց աղերսը մերժել , գրեց (22 յան .)
գեսպանին , որ անձամբ միշնորդութիւն չընէ ,
այլ քաջալերէ զՀայս , վստահացընելով իր
տէրութեան փափագին՝ որ Թուրքաց հպա-
տակը չվնասուին : Քանի մ' օր վերջը (29
յան .) գեսպանն գրով իմացուց , որ Հայք

իրենց բարեխօս ըրեր են առ Պապն զՄետիշի կարդինալը։ Վստահ եմք որ բարեխօսութիւնն յաջողած ըլլայ զբարերարութիւնը, և Ա. Պապն՝ Հմմանուէլ Ֆիլիպպերտի (Դքսին Տուկանայ) խստասրտութիւնը կակլած ըլլայ։ Եւ գուցէ այս սրբազն հաճութեան զօրութեամբ է, որ յաջորդ տարին Գարամանցի Հայ վաճառականք՝ Միրժան (Mirzhan), Խօնանալ կամ Գամալ (Chamali) և Պետրոս քահանայ, 17 թեռ մետաքս և քանի մի սնտուկ Խաշնդեղ բերեր են ի Ֆիրենցէ, և վենետիկան բերդանաւով փոխադրեր են ի Վենետիկ։ Հօս Հինգ Գիտունք քննելով Հայոց հաւաստագրերը, որոց մէկն այլ Հալէպի վենետիկեան գունցին քահանայն (G. Batista Audet) գրեր էր, վստահանալով՝ թողեր են որ Հայք վերցընեն իրենց ինչքը. բայց անոնց հետ եկող Հրէից վկայականները բաւական չհամարելով՝ իբրեւ աւանդ պահեր են։

Այս վերջի թուականներուս՝ յիշուի կ. պօլսեցի մի, հիմայ այլ ծանօթ մականուամբ, Առլանիշ-լ, որ երբ յամի 1574 ելեր է ի կ. պօլսոյ երթալ ի Լեհաստան, իր պարտականէն առնուլ պահանջը (1000 դահեկան), և ցամաքով դառնալ վենետիկ, իր մէկ ծանօթի կամ սպասաւորի (garzone) ձեռօք՝ կուխաւուէ ի Վենետիկ 18 հակ Յիսի։ Այս

բանիս խնդիր ըլլալով՝ յետ երեք տարւոյ, (1577, նոյեմբ 30) Խոչառար Թոգուրցէ կամ որդի Թագւորի (Cristoforo de Tacor), կու վկայէ նոյնպէս, թէ Անդրէաս Ատամաթի (Stamathi) ընդունեցաւ զանոնք։ Այս բանիս վկայ կ'ըլլան նօտարի առջեւ՝ Թորոս ո. Կարապետի, Յովհաննէս Սուցի ո. Աւրգսի? (Santato), և Աստուածատուար ո. Այստընի։ Շատ տարիներ վերջ այլ (1580) կու յիշուի այս Սսեցին, իբրեւ վկայ, նոյնպէս և ի 1597ին։

Ասոր նման անգամ մի առաջին թուականին մօտ և յետոյ քսան տարի վերջ նորօրինակ առեւտըրի մէջ յիշուած անձ մի է Միւայէլ ո. Զատարչայ, որ յամի 1579 Յովհ. ո. Խաչատրոյ Աննակի (տ. 396) որդւոյն կնքահայր եղած։ և քանի մի տարի վերջ (1584) յիշուած յԱնգոնա, Մէրտինցի Յակոբայ գործոց մէջ (տ. 313)։ Ու 1588ին (յուլ. 29) ուրիշներու հետ կու վկայէ Պատինիոսի ո. Միւայէլ որպիսութեան համար, որ պիտի յիշուի ի կարգին։ Իսկ նորատեսիլ առեւտուրն եղած է յամի 1590 (հոկտ. 15). Աղաբային՝ որ թուի իբրահիմ ո. Ճիոմայ Երուսաղեմացի (Ասորի? թէ Արաբ), 80 դուկատի կու ծախէ Միքայէլի՝ շէկ մազով կամ մորթով (de pello rosso) և իբր եօթն ու կէս տարուան՝ տաճիկ ուղառու կէս մի, կէս մ' այլ հասարակ

1580. Եղընկացի մի՛ Ծագուար ո. Յովհաննու յերեւան գոյ այս թուականիս, որոյ արդէն յիշած եմք (եր. 398) առեւտուրն ընդ Յովհ. ո. Խաչատրոյ և լնդ Նուրումի կարնեցւոյ: Այն գործակցութենէն քանի մ' օր

Վերջը (18 մարտի), ինքն Շատուր իրեն ընդ-Հանուր գործակալ կարգէ զԱբդյանէն, (զոր նօտարն համանիշ համարի Քրիստոփոր անու-ան (Abdelmisi, sive Christoforus) ո. Հոռ-+տակ, վկայ ունելով զանկիւրացի Պալք ո. Յո-+խաչայ և զՅովտէն ո. Գրէտորէ, որ և թարգման : — Յիշեցինք արդէն (տ. 298) այս ժամանակիս և սոյն գործողութեանց վկայ զՄուղրէւշան ո. Գրադչանէ, որոյ անունն ազնուական ցեղ մի գուշակել տայ, և Յովհաննէս ո. † Համազա-+պայ (Ovanes q.թ Amasach) (տ. 399). Հոռտո-+անուամբ այլ յիշուի մէկ մի յաջորդ տարին (1581, մայիս 27) ո. Ալոյիսի ի Հալէպայ, որ այն տեղէն զրով գործակալ կարգեր է իրեն՝ զիտալացին Bertaboni, և սա հիմայ զգործակալութիւնը կու յանձնէ ուրիշ իտա-+լացւոյ մի (Rossini Orazio):

1583. Յովհաննէս ո. Սարդու (Joannes San-+ctis) Սաեցին՝ կրետացի Գէորգայ յանձնա-+րարութեամբ ութ վառիլ սուր կու բեռցընէ Balbiana կոչուած նաւուն վրայ, որ պիտի երթար ի Կիսլոս և յԱսորիս. նաւահան-+զըստէն ելնելու ատեն՝ այն տեղի պաշտօ-+նեայք կու քննեն, և բեռնազրերը անվասեր գտնելով՝ կ' արգելուն ապրանքը. Սարգիս զինքն արդարացընել կու ջանայ (օգոս. 2), և

Կ'ըսէ, թէ ուրիշի գրել տուած էր. դա-
տաւորք այլ կէս աչք գոցելով՝ միայն պար-
տաւորեն զնա՛ որ 15 դուկատ տուժէ, և
իբր ողորմութիւն տայ երեք կուսաստա-
նաց :

Այս ժամանակիս հանդիպած է և Ահմէտ
Թուրքին մկրտուիլ և Թոմաս անուանուիլն
(տ. 313), և յետոյ փախչելն ու կտաւեղինաց
տակ պահուըտիլն ի նաւուն, և բռնուելով
բանտուիլն, մէրտինցի Յակովբայ տան մէջ
բնակած ըլլալով և անոր պարտական . յի-
շուած է Յակովբայ տեղեկութիւն տալն այլ
և վճիռն դատաւորաց (1584, հոկտ. 6), որ
մինչեւ ի յայտնութիւն այս գործոց՝ արգելուի
ուրացեալ համարեալն, և իր ի դրամասե-
ղանի գտուած ստակէն վճարուի Յակովբայ
պահանջն, 21 դուկատ :

Դարձեալ, նոյն տարին (օգոս. 4) վճռած
է ծերակոյտն արձըկել ի թիոց (նաւաբան-
տէ) զՄուբառ Հայ, զոր շատ տարի առաջ
Թուրքք բռներ և ձգեր էին ի նաւաբանտ.
վենետիկեցիք բռնելով զնաւը՝ զՄուրատ ի-
րենց նաւաբանտին մէջ ձգեր էին ի թիա-
վարութիւն : Մուրատ աղերս տուած է աէ-
րութեան (իբրեւ յամի 1578), բայց չէ ա-
զատուած. չորս տարի վերջ (1582, նոյեմ.
6) նորէն աղերս կու տայ . ծերակոյտն նոյն

օր յանձնէ նաւարանի զինուց պաշտօնէից՝
քննել խնդիրը. պաշտօնեալք ուշկեկ (1583,
յունիս 7) պատասխանեն, թէ արժան է
արձեկել զնա, որովհետեւ իսլամութեան նշան
չունի, և ուրիշ թիարգել Հայոց այլ ազա-
տութիւն տրուած էր: Բայց դարձեալ, որ
և է պատճառաւ՝ Մուրատ մնայ յարգելանի,
մինչեւ ի 4 օգոստ. 1584. այն օր ծերա-
կոյտն վճռէ արձեկել զիսեղճն, յետ երկա-
րամեայ անպարտ տառապանաց:

Նոյն տարին (1584) և նոյն օրերուն հան-
դիպած է և Սունողյի Ֆրանքոյի կամ Ֆրան-
շիսկոյի՝ քիչ շատ նման խնդիր մի. աս քանի
մի Պոսնիացւոց և ուրիշներու հետ՝ Վենե-
տիկէն կու նաւէ դէպ ի Եարենտա քաղաք
Պոսնիոյ. երբ կու համնին ի Լեզինա (քաղաք
և կղզի Դալմատիոյ), Ֆրանզոյ 117 ծեզին
ոսկի կու փոխէ ի դալէր կամ ի դահեկան
Թուրքաց. նաւապետն կասկածելով թէ նա
կամ ապրանքն փախստական ըլլայ, բոլոր
դրամները կու գրաւէ, նոյնպէս և Թուրքաց
զէնքերը. Ստանոզցիին ուրիշ ճար չի մնար
այն ատեն, բայց լալ, մինչեւ որ դառնան
ի Վենետիկ, և բողոքէ: Դատաւորք յանձնեն
(Մարիոնի) նօտարի՝ որ քննէ վկայից ձեռք.
և սա (սեպտ. 4) կու կանչէ հետը եղողները.
յորոց պոսնիացի մի (Գէորգ ո. Փիլիպ.) կ'ը-

մէ, թէ տարի մ' առաջ Ֆրանգոյի հետ ասկից նաւեցինք ի Նարենտա . որ տեղացի ըլլալը չեմ գիտեր, բայց երբ Լեզինա հասանք՝ փոխեց ստակը, զոր նաւապետն գրաւեց իրրեւ գողցուած . Ֆրանգոյ կու լար ու կ' աղաշէր որ տայ դրամները, իմս է ըսելով : Ասոր նման անկիւրացի Մուսդաֆա թուրք մի վկայէ, որ Ֆրանգոյ Անկիւրիոյ մօտ քաղքէ մ' էր, և անցեալ տարի օգոստոսի կիսուն մէկ տեղ նաւեցին . երբ մօտեցան ի Նարենտա՝ վենետիկեան խալէ մի կողոպտեց անոր դրամները, որ՝ գիտեմ թէ իրենն էին, վասն զի ծախած ընչից զինն էր : Ֆրանգոյի պաշտպան կ' ըլլայ և թուղթ մի Սիւլէյման պէկի՝ Մոռէայի կողմերու նաւապետի կամ ծովապետի, որ կու յիշեցընէ եւս անոր կ . Պօլսի պայլէն թուղթ բերելը : Յետ այսքան վկայութեանց՝ ծերակոյտն կու վճռէ (6 հոկտեմբ .) որ պաշտօնեայք Դրամանոցի ետ դարձընեն ու տան առ Ֆրանգոյ 117 դալէրը, առանց ուրիշ բան պահանջելու իրմէ՝ բայց ընդունելուն անդորրագիրը . վասն զի, կ' ըսեն, այսպէս ըրինք և թուրքի մ' այլ (3 յուլիսի) նոյնպիսի դիպուածի առթիւ :

Եթէ չէ այս Ֆրանգոյ՝ բայց իր ժամանակակից է ի Վենետիկ բնակող Ֆրանչետոյ մի, գուցէ ո . Սէֆէրէ կոչուածն, գործակից

Ամրրու . Նովելլի աեղացւոյ . որ ըստ գաշնա-
դրութեան այս Հայոցն էեւ , կու ստիպէր
զսա (1586 յունիս 11) նօտարի ձեռքով , որ
գնած ապրանքը տանի ի Պատուա ի տօնա-
վաճառն , որ քաղքին հրաշաղործ Ա . Անտոնի
տօնի օրերուն (13 յունիսի) կ'ըլլայ . ուր և
խանութ մի վարձեր էր . և վախէր թէ Ֆրանչ .
շուզելով երթալ՝ թէ կրպակի վարձքը կոր-
սընցընէ և թէ շահ . Պաշտօնական տնձ մի
գտնելով զՖրանգոյ ի հրապարակի Ա . Մար-
կոսի՝ կու տայ իրեն այս ստիպող պատուիրա-
գիրը : — Ֆրանչիստոյի երթալն կամ չեր-
թալն՝ մեղի կարեւոր չէ , որչափ իր ուրիշ
յիշատակները , որ անյայտ են ինձ : Նոյն
Ֆրանչ . անուամբ այլեւայլ Հայք յիշուած
են ի Վենետիկ . մին է նախայիշեալ Մոր-
տչոս ո . Պիտրոս (տ . 438) : Մեռելագրաց մէջ
այլ յիշուի Ֆրանչ . Հայ մի † յամի 1598 ,
մարտ 15 , 48 տարուան . թերեւս ո . Պողոսի ,
զոր յետոյ պիտի յիշեմք ընդ Պէկի (1588) .
յետագայ դարու մէջ այլ յիշուին Հայ Ֆրանչ :
— Անունը թողլով և Ֆրանգոյի հայրե-
նեաց դառնալով , յետագայ Յեղանակի սկըզ-
բան (1605) Սաանոզցի սարկաւագ մի Մե-
լիքս անուն , եկեր է խնդրել ի Ե Գիտ-
նոց (մարտ 23) , որ իր ի Վենետիկ † եղ-
թօր ինչքը՝ զոր գրաւեր էր Աստուածադար

անուամբ մէկն, տան իրեն. և գրաւողն խռո-
տանայ տալ:

Քանի մ' անգամ վերջի զրածներուս մէջ
յիշուեցան Ադանա մականուամբ երկու վա-
ճառականք (տ. 402. 413), անշուշտ իրենց Ահ-
սուաննեան հայրենի քաղքէն, և որպէս երե-
ւի երկու եղբարց որդիք, Սուեդանս՝ Վասլի,
Դոմինիոս՝ Յարութեան. յետնոյս անունն (Դոմ.
Թարգմանուած թուի ի Կիրակոսէ. յիշուի
ասոր եղբայրն այլ Գէտոր: Գուշակուի որ
ասոնք չատ յիշատակ պիտի ունենան ի դի-
ւանս, և յառաջ քան զ1580 թուական. բայց
իմ գտածներուս առաջինն է 1584ին (ի 5
մարտի). երբ ըստ խնդրոյ Ահմոնի որդւոյ
թուրազայ (թորոսի) Սսեցւոյ՝ Գէորգ Առատե-
լիան ո. կ. Պօլսեցի Անդրէի, և Ղաղտը ո.
Յովհ. Ախտանցի, երդմամբ վկայեցին նօտարի,
որ հինգ տարի առաջ՝ երբ Ալպանիոյ Լես?
կոչուած տեղում էին, լսեցին որ մեսսե-
նացի խալէ մի բռնեց զԴոմինիկոս, և այն-
քան չարաշար ծեծեցին՝ որ կիսամահ ակա-
մայ ըսաւ որ ինքն թուրք է. զնոյն վկայեց
և Գէորգ Մոտոնցի, որ նոյն խալէի մէջ ոտ-
նակապ բանտուած էր: Ասոնց վկայութեան
վկայ եղան Յակովը Աէրտինցին և Գէորգ
ո. Յովհ. տնպահն: Այս ատեն Դոմինիկ
թուի թէ չէր ի Վենետիկ. վասն զի ամիս

մի վերջը (ապրիլ 4) երբ Սսեցի Սիմոնի Հետ Ստեփանոս զԳէորգ Առաքէլեան գործակալ կարգեց՝ նա և Դոմինիկոսի կողմէն, կ'ըսէ նօտարի առջեւ (սա զերկուքն այլ իրարու եղբայր գրէ), և վկայէ, որ Սիմոնի վաճառակիցք էին: Երկու ամիս վերջը (յունիս 30) երբ խնդիր կ'ըլլայ Մարկ. Շահնշահի (եր. 412) հինգ տակառ դանակեղինաց, և Վասիլ ո. Պրուսացի Գարանայի վկայէր զայն, Ստեփան այլ վկայեց Վասլի հաւատարմութեան: Քանի մի ամիս այլ վերջը՝ նօտարի առջեւ վկայուի (13 հոկտ.) որ այն ատեն Ստեփան ի Հռովմ էր, և հիմայ Յովհաննէս ոմն ո. Սուեֆանոսի ի խնդրոյ Սըսեցի Սիմոնի վկայէր, որ սա դրամ կամ փոխ տուած չէր Ստեփանոսի. այս բանիս վկայ եղան Պօղոս ո. Յովհաննոս Կեսարացի վաճառական՝ որ բնակէր ի Ա. Մովսէս թաղի, և Մարտիրոս Ունայեցէ ո. Գարբիէլի, որ բնակէր ի Ա. Մարիամ Խորոտիկ, ուր և Յովհաննէսն այն: — Յաջորդ տարւոյն սկիզբները Ստեփանոսի տեղ Դոմինիկոս կ'երեւայ ի Վենետիկ, և կու խնդրէ (4 մարտի, 1585) որ յիշեալ Մարտիրոսն և ծանօթ Մկրտիչ Պարսկահայն, Գէորգն ո. Յովհ. և Կորապէտ ո. Կիրակոսի (միշտ Դոմինիկոս գրուած) վկայեն երդմամբ, որ ինքն վաճառակից էր

Սիմոնի Ասեցւոյ, որուն ապրանքն տարեր
էր ի Հռովմ, և նա հօն մեռեր էր. ասոնց
վկայ եղան Գաբրիէլոց Անիւրացի ո. Գէորգայ,
Փոլառ ո. Բաբողչ, և Սերովնէ ո. Գէորգայ:
Նոյն օր նոյն նօտարի գրութեամբ՝ Դոմինի-
կոս իրեն փոխանորդ կարգէ զԱտեփան՝ որ
ի Հռովմ, որպէս զի † Սիմոնի ինչերէն և
դրամէն իրեն մասը գրաւէ: (Այս տեղ նօ-
տարն զԱտեփան ո. Վասլի գրէ, զԴոմինիկ
ո. Յարութեան (Saluatoris, զի իտալացիք
այսպէս կոչէին Յարութիւն անուամբ Հայը):

Ետքի թուականէս երեք շաբաթ վերջը
վերոյիշեալ Մարտիրոսի Ուռհայեցւոյ որդւոյ
Կարապետի՝ հիւանդութիւն հանդիպի, և յան-
կողնի կանչելով զնօտար (22 մարտի), գրել
կու տայ կտակը, կտտարիչ կարգելով զԴո-
մինիկ, իսկ ժառանգ՝ իր Թորու եղբայրը.
Կ' իմացընէ, որ 30 դուկատի վաճառք տուած
էր Ղազարայ ո. Յովհան. որ տանի ծախսէ ի
Թուրքիա. 100 լիրայ ալ Սեբաստացի Մար-
կոսէն առնելիք ունէր. նա և երեք սնտուկ
ապրանք այլ կար քովը՝ Ատեփանոս Ատա-
նայէն տըրւած, որոց բանալիքն այլ անոր քով
էին (ի Հռովմ). իր ստակներէն պէտք էր
վճարել զվարձ բնակած տանը՝ որ ի Ս. Մար-
կորոտիկ. 20 դուկատ այլ տալ Ս. Յովհան –
Պողոս կոչուած մեծ հիւանդանոցին: Այս

կտակը բանալու բազդն մեզի ընկաւ, յետ
300 տարիներու կնքած մնալու ի դիւանս,
որ յայտնէր թէ Մարտիրոս առողջացեր է
այն հիւանդութենէն, որոյ և ինքնին վկայէ
քիչ օր վերջը (9 ապրիլի), երբ նոյն կտա-
կագիր (Մարին Լիոյ) նօտարին առջեւ գործ-
ավար կարգէ զԴոմին . Ատանա՝ պահանջելու
ի Ղազարայ իր 30 դուկատի պահանջը: —
Տարի մի վերջը (1586, մարտ 24), ինքն
Դոմինիկոս այլ իր Գրէտոր եղբայրը գործա-
վար կարգէ պահանջելու իր ապրանքն ի Ռա-
կուզա՝ այն տեղացի Պասգուալէն . այս բանիս
վկայ և թարգման կ'ըլլայ վերոյիշեալ Գէ-
որդն Առաքէլեան ո. Անդրէի: — Այսուհե-
տեւ ոչ Ռւոհայեցւոյն և ոչ Դոմինիկոսի գործք
յիշուին . միայն սա տարի մի ետեւ (1587,
ապրիլ 29) վերջին անգամ յայտնուի , երբ
իր համշիրակն և գործակից Ստեփան Ատա-
նա՝ իսպառ ծածկուի . վասն զի նոյն օր ծանր
հիւանդ ըլլալով կանչել կու տայ վերոյի-
շեալ ծանօթ նօտարը (Մարիոյ Լիոյ) և գրել
կտակը, կատարիչ կարգելով զԴոմինիկ, ժա-
ռանգ՝ իր կինը Առնէր (Arnier), որոյ անունն
յայտնէ Հայ ըլլալն, այլ ոչ ուր ըլլալը, և
իր Յակով որդին: Ասոնցմէ զատ ուրիշ բան
չեմ սահմաներ, կ'ըսէ, երբ նօտարն հարցը-
նէ՝ թէ բարերարութեան տեղեաց բան կ'ուզէ

Թողուլ: Քիչ օր վերջը (2 մայիսի) կու վախճանի, շաբաթ մի scoranzia հիւանդութեամբ, իբր 60 տարուան. նոյն օր Դոմինիկոս բանալ կու տայ կտակը:

Ստեփանի և Ալսեցի Սիմոնի խնդրոյն մէջ վկայ եղող Պօղոսն կեսարացի ո. Յովհաննու, որոյ բնակութեան թաղն (Ս. Մովսէս) և տունն այլ այն տեղ (Corte Contarini) յիշուի, ուրիշ անգամ այլ (1588, յուլ. 29) թէ իրրեւ վկայ և թէ թարգման, այս ժամանակի գլխաւոր վաճառականաց մէկն կ'երեւի. զի Մկրտչի Պարսկի և Յակովբայ Շահնշահի հետ ընկերակից եղած էր, և անոնց հետ վերջացուց ընկերութիւնը յամին 1608: Դարձեալ, նոյնն վկայ եղած էր (1599, յան. 27) Թուվմաս պատրիարքի թողած ընչից խընդրոյն մէջ (եր. 335): Յակովբայ Մէրտինցոյ գործոց մէջ այլ յիշուած են այլեւայլ վաճառականք այս տարիներուա (1586-8). ինչպէս, Յովհաննէս ո. Ճանիբէն, Գեորգ ո. Ալաննէ, Գաբրիէլ ո. Կիբակոսի, Յարութիւն Մէջնան: Յետինս յամի 1587 (մարտ 10) նօտարի առջեւ վկայած է, որ ի Դուրաձձոյ (Ոտոմելիոյ քաղաք) մօտ ծովու վրայ գտուած ատեն, քանի մի յոյն փախան նաւէն, Առաքէլեան Գէորգայ և Ստեփանոսի մի վաճառքը գողցած հետերնին տանելով: — Նոյն օրեր (14 մայիս)

Երկու Հայք այլ յիշուին՝ որդիք Մելքիսեդիք, մին Օգդին? կոչուած, որ իրեն գործակալ կարգէ զմիւսը՝ Զիառ, իր պահանջները ժողովելու. Միքայէլ Գիոսցի յոյն մի՝ ասոնց թարգման եղեր է Հայերէն լեզուին, ըստ նօտարին, որ հաւանօրէն թուրքարէն էր:

Ասոնցմէ և քան զշատ առջիններն և վերջիններն՝ նշանաւոր է մեզի համար Փիքչառէ Ղափանցի, որ 1586-7ին ոչ միայն ի Վենետիկ՝ այլ և Եւրոպիոյ ուրիշ կողմեր պտըտեր է, զորոնք իր ռամկական լեզուով նշանակէ. և որքան այլ ցամաք է գրածն, գոնէ տեսած տեղեաց շատութեանն համար՝ կ'արժէր որ ընդօրինակեմք, թէ ոչ բոլորը՝ (ինչպէս ըրածեմք զնոյն ուրիշ գրոց մէջ) գոնէ Վենետիկոյ վերաբերեալը. «Ես մեղաւոր Փիրզատա Ղի.» զիլպաշէն (Պարսկաստան), երկիր Ղա.» պանէն, իւրոտէն ձորէն (Որոտնայ ձոր), » կեղոս (գեղս) Գետաթաղէն, Պաստամէցէց » ապքէն (ցեղէ), Զաքէրի թոռն Միրզին, » (ո՞րն հայրն է ո՞րն պապն), Հռոսմախին » (մայրն Հռիփսիմէ) տաղայ, իսայիոսն » փարուն?, Պահալվէն աղբէր: Ին տարին » որ Հայոց Թուլ. էր Ռ.Լ.Ե (1586-7), ես » իմ տանէն ելայ, գլոխս առայ ասկական? » (աստանդական?) մուլորեցի, օտար աշ- » խարհ եկայ: Առջի քաղաքն Վան. էնկից

» Կինեցի Հիզու քաղաքն . Էնկից կինեցի
 » Ղարահէմիդ . ևն . էն . կին . Խղնայմիտ . էն .
 » կին . Աստանբուլ քաղաք , որ Խոնդքարին
 » թախտն այ » . ևն : Դանուբեան գաւառաց
 վրայօք կ'երթայ ի Լեհաստան . 400 տուն
 Հայ գրէ ի Կամենից , 12 ազգային դատաւոր :
 Լեհաստանէ կ'անցնի ի Տանձկա , Փրակա ,
 ուսկից մտնէ յիտալիա , « Դէյիլանայ եր -
 » կիրն , Վէնէտիկ քաղաք՝ ԺԲ մեծ պարոնի
 » ձեռն այ . որ Ս . Մարկոս Աւետարանինին
 » մարմին այ . ծովի մէջ այ . ԶՌ (6000) կար -
 » մոճ կայ մէջն ! ԶՌ (6000) պարքայ կայ
 » իւր մէջն , խիստ (մեծ կամ զարմանալի)
 » քաղաք այ : Ենկից կինեցի Եանուայայ
 » (Ճենովա կամ Անդոնա) . էնկ . կին . Հոռո -
 » մայ քաղաք , » և այլն :

Ուրիշ տեսակ հետաքրքրական գիպուածք
 են և հետեւեալքն . տարի մի վերջը , 1588 ,
 Ստանոցի Ֆրանգոյ յիշելնուս՝ յիշեցինք և
 զֆրանչիտոյ ո . + Պօղոսի . սա և Պէհ ո . Մու -
 կոսի , երկուքն այլ վաճառականք և բնակողք
 ի Տան Հայոց , որք կու վկայեն նօտարի առջեւ
 (22 մարտի) , որ Պարսկահայն Արքոյեւ ո .
 Դոմինիկոսի (Կիրակոս) ամուրի էր , և չեն
 կարծեր որ ուրիշի խօսք տուած ըլլայ կար -
 գուելու . Թուի թէ հիմայ կ'ուզէր պսակուիլ
 և հարսնացուին կողմանէ խնդիր կ'ըլլար :

Ասոնց վկայ կ' ըլլայ Մէտայէլ ո. Յովհաննու : — Քանի մ' ամիս վերջը (յուլ. 29) դարձեալ ասոր համար կու վկայեն երդմամբ Մէտայէլ ո. Զաքարայ և Ղազար ո. Յովհաննու վաճառականք, թէ ամուրի էր նա, 26 տարուան, հասակաւ կարճկեկ, շագանակագոյն քիչ մօրուգք, և ձախ դաստակին վրայ երկու սպիռնի կրակի այրածի : Պօղոս բնակէր ի Ս. Յովհան-Պօղոս թաղի, և թարգման եղեր է իր ընկեր Ղազարայ : — Այսպիսի ընտանեկան օրինաց պարտքն առած էր վերոյիշեալ վկայից վկայ Մէկայէլն ո. Յովհաննու, բնակող ի Կայուֆա փողոցի, ինչպէս կ' իմացընէնօտարի առջեւ (1589, սեպտ. 9), որ ութ տարի առաջ պսակուեր էր Ֆր. Բեռնարդի դստեր՝ Յովհաննայի հետ, և սա բերեր էր 150 դուկատ օժիտ և ինչք . և խոստանայ (Մէկ.) հատուցանելու զայն՝ կնոջը կամ անոր ժառանգաց :

Հակառակ տեսարան մի կ' ընծայէ ի ժամանակիս՝ Աիվրիիսարցի Աբրահամու ո. Գարագոլ վաճառականն (Carabassi de Suvarrassari), որ իր նախընթաց մեզ անծանօթ գործոց համար՝ դատի ենթարկուեր է, և (1588, մայիս 18) դատավար կարգեր է զթեսէոս Կելլա (Ghella) պատուաւոր Պօղոսի մի որդի . վկայ կ' ըլլան կիպրացի, կրե-

տացի և մետելինեցի Յոյնք։ Դատն զինքը ձգէ ի (Լիռնա անուանեալ բանտ), բայց չի դադրիր իրեն պաշտպան ընտրելու (1589 մարտ 7) երկու իտալացիներ (Վիչեն Կալուրի և Նիկ Ամբրոզինի)։ բանտապահ մ' այլ վկայ կ' ըլլայ։ Դեռ բանտի մէջ է հետեւեալ տարին այլ (1590), գոնէ ի սկզբան վասն զի փերրուարի հնգին խնդրելով ի տէրութենէ իրեն հաշիւները և գործերը քննել, կու յանձնէ Անդրէի ո. Առաքէլեան Գէորգայ (տ. 425), Բարատորոլի Կիպրացի յոյնին հետ, (որ երկու տարի առաջ վերսիշեալ երից վկայից մէկն էր), մասնաւորապէս Ս. Մարիամ անուանեալ նաւուն մէջ ըրած ծախքերը։ Գէորգ իրեն տեղ գործավար կարգէ զԱնդրէաս Նիկոնի թարգմանը, բայց քիչ օր վերջը (21 փերբ.) յետ կ' առնու այս յանձնարարութիւնը նօտարի առջեւ։ այս բանիս այլ վկայ կ' ըլլան Դէմետր ո. Թէոդորի թեսաղոնիկեցի հայ վաճառական և Ծարուր կամ Աստուածաբանը ո. Սիմեոնի Պարսկահայ. յետոյ (28 փերբ.) դարձեալ կու հրաժարի Գէորգ, նոյն վկայից ներկայութեամբ։ Գարապաշ այլ յետս կոչէ անոր հետ ըրած դաշինքը։ Իսկ իր գործն ի՞նչ վերջ կ' ունենայ, և ի՞նչպէս կ' ազատի, զայս չեմ գտած։ Այսպէս այլ անծանօթ մեայ ինձ նոյն ատեն

Հայոց ոմանց ուրիշ խնդրոյ մի վախճանն .
ասանք էին 'Խաչառու՛ (Aciadur) և Զադա
(Xada) մի , որը + Ֆրանչ . Բրոտիչ կոչուած
Պրաձձացի (Աղրիականի ծովեզերքի կզզի
մի կամ Դալմատիոյ քաղաք) մէկէ մի պա-
հանջ ունէին , իրենց՝ նաւու մէջ ապրանաց
համար , և շատոնց դիմած էին առ ատեանն
Քառասնից , և թէպէտ ասոնք յանձներ էին
քննել , բայց որովհետեւ ուրիշ պահանջողներ
այլ կային , խնդիրն խառնակ Թլալով անորոշ
մնացեր էր . Հայք նորէն բողոքեցին , Քառա-
սունքն այլ նոր անձանց յանձնեցին քննել ,
և զՀայերը նեղացընողը (Զիրինէոյ) պատժել
(1588 , սեպտ . 12) : Քննող դատաւորքն ութ
անձինք էին , և երեք անգամ քուէ ձգելով
հաւասար հակառակք ելան 4 և 4 . անոր
համար Քառասունքն սահմանեցին (1589 , յուլ .
5) որ այնու հետեւ զոյտ թուով դատովք
չընտրուին , այլ 11 հոգի ըլլան կամ գոնէ
ինն , և շուտով վճարեն գործը : Խնդիրն կ'ե-
րեւի թէ ԺԶ դարու հոչակաւոր Ուստու կո-
չուած յելուզակաց չարագործութեան պատ-
ճառն էր . ասոնք Դալմատացոց SCOCO բառիւ
այսպէս կոչուին , որ նշանակէ յելուզակ , ծովու
ասպատակ . և 1532 թուականէն մինչեւ ի
1616 անդադար ծովու վրայ նաւեր կողոպտեր
և շատ մարդ սպաններ են , և հազիւ այնքան

տարիներէ վերջը կըրցեր են Վենետիք և այլք՝ նուաճել և դադրեցընել զանոնք։ Ոյս յիշեալ դիպուածիս ատեն՝ ոչ միայն վնաս հասուցած են Հայոց, այլ թուի թէ և ոմանց մահ։ որոյ համար Ժ մեծ պաշտօնէից ատեանն հարցուց (1589, յան. 18) Պրաձճայի կոմիին և Ուսքոքաց դէմ դրուած ծովապետին։ ասոնք պատասխանած են յ' 3 և 10 փերր։ և երեւի թէ երեք Ուսքոք այլ բռներ են։ Պաշտօնեալք նորէն կու յանձնեն (1589, մարտ 10) քննել Հայոց խնդիրը, որ շատ երկայն քշեր է։ վասն զի երկու տարի վերջ այլ (1591, սեպտ. 16 և 23) դարձեալ զնոյն յանձնեն այլեւայլ դատաւորաց։ և վերջնական վճիռն անյայտ մնայ ինձ։ անտարակոյս թուի որ զրկելոց խնդիրն կատարուեր է, բայց շատ ուշ։

Նոյն ժամանակին ուրիշ Հայոյ խնդիր մ' այլ երկար քշած է, և նոյնպէս պարագաներն և վերջն անծանօթ։ Պետրոս, որ 1587ին կամ աւելի առաջ խնդրեր է ի տէրութենէ կամ ի պաշտօնէից Վենետիկոյ՝ † Գալուստեան Բովնաննու (ըստ Իտալացւոց Zuanne de Bonaventura) ժառանգութեան դատը քննել և տալ. տէրութիւնն այլ նոյն տարի (օգոստ. 29) յանձներ է վաճառականութեան Ե Գիտնոց՝ հոգալ. որք արդէն քանի մ' օր առաջ (22 օգոստ.) վկայեր էին, թէ արժան է գո-

հացընել զՊետրոս, և զուրիշներն այլ՝ տարբեր կարեւոր բանի մի համար, որ հաւանօրէն էր Հալէպի գունցին նոր տուրքեր պահանջելն ի վաճառականաց Հայոց : Տէրութեան վճռական գրուածէն (1588) կ'իմացուի, որ առաջ ամէն մէկ բեռ վաճառքի 2¹լ, դուկատ կ'առնուր գունցն . տարի մ'առաջ սկսաւ 10 դուկատ այլ պահանջել իւրաքանչիւր բեռան . Հայք բողոքեցին . տէրութիւնն յ՛Շ յուլիսի, 1588, պատուիրեց ԺԲԻց կոչուած ժողովին, որ այդ բանը հաստատեր էր (յ՛Շ փերր.), խափանել այդ նորութիւնը : Բայց երեւի թէ գունցն Հալպայ չառաւ այսպիսի պատուէր կամ. չուզեց լսել . Հայք նորէն բողոքեցին . տէրութիւնն այլ ուժով գրեց պատուիրեց, որ ինչպէս 1588ին պատուիրած էր՝ վերցուի այդ նոր բաժառութիւնն, և մենայն կարելի քաղաքավարութեամբ վարուին այդ վաճառականաց հետ՝ յօգուտ վաճառականութեան, և յետ դարձընեն տան անոնց ինչ որ սովորականէն աւելի առած են . իսկ եթէ իրենց ուրիշ շտհու համար է Հայոց գանգատն, անմիջապէս շուտով գրեն (պաշտօնեայք) և իմացընեն . բայց մինչեւ որ պատասխան առնուն՝ զգուշութեամբ վարուին Հայոց հետ . որպէս զի չըլլայ թէ ճամբանին փոխեն, թողուն զՎենետիկ և ուրիշ տեղ

տանին վաճառքնին (¹): Բայց քանի մի տարի
վերջ՝ նորէն Հայոց գանգատ լսուի մաքսի
ծանրութեան համար. Ե Գիտունկը պատուիրեն
(յուլ. 1591) քննել, և եթէ հասարակաց հա-
մար է դրուած մաքսն, այնպէս մնայ, իսկ
եթէ միայն Հայոց՝ վերցուի: Այս պատուէրս
գրած է տէրութիւն առ գունցն ի 10 յուլ.
1591.

1590. Այս թուականիւ քանի մի Հայ
վաճառականք նոր կամ նորէն յերեւան գան.
— Անկիւրացի մի՛ Յոշէկ ո. Դոնատոյ (Do-
nato) ըստ իտալացւոց, զոր համարիմ Տի-
րատուր, գործակալ կարգէ զԳարակէօղ ո. Լե-
ւոնի. Թերեւս իր հայրենակիցը, որ պահան-
ջէ ի Ստեփանոսէ հացագործէ 7¹/2 դուկատ՝
զին կտոր մի ճերմակ Ցփսի, զոր քիչ օր
առաջ առեր էր Օսման անուամբ թուրքէ: Այս

1. ... Non sia fatta altra novità in questo
proposito; et che sia usata verso li detti mer-
canti ogni conveniente cortesia et buon trattamento
per beneficio del commercio; facendo re-
stituire intieramente quel denaro che fosse stato
esborsato per tal conto... Volendo che frattanto
usiate ogni buon trattamento ad essi mercanti,
come confidiamo che farete; perche possino con-
tinuar li loro viaggi, et non habbino a tentar
altra strada co' le loro mercantie.

ատեն ուրիշ Գարակէօղք այլ կային ի Վենետիկ . մին՝ ո . Գեորգայ Անկիւրացի . որ Դու. Ատանայի և Սիմոնի վաճառակցութեան վկայից վկայ եղեր էր (1585) . միւս մէկ մ' այլ . Արպիեզ գրուած է . սա քանի մի տարի վերջ (1593) վկայ եղած է Տէր Յակովայ՝ զՏընպահն Գէորդ իրեն գործավար դնելուն , և վախճանած է յամի 1607 ի Տան Հայոց , 40 տարուան : — Գարանիթ ո . Մարկով , զորյիշեցինք ի գործս Մկրտչի սանսէրի և տընպահի (եր . 419) : — Դարձեալ Caracosa գրուած Հայ մի ո . Յակովայ , բնակող ի Ա . Մարիամ Խորոսիկ , որ նոյն թաղին՝ † թարգողիմ . Zatter թողած այրի կնոջ Մարեմայ հետ պսակուեր է (1593 , մայիս 16) :

— Զարա ո . Սանոսի , որ Յակոբեան Մարկոսի զՅակովեան Մարկ . Մուրատ գործակալ կարգելուն՝ վկայ և թարգման եղած է (27 սեպտ . 1590) : —

— Պօղոս Նստինտանոց ո . Բարսղի , քանի մ' անգամ յիշուած :

Խաչառուր Ամդեցի (Cazadur de Carahamit) ո . Գարանայ . սա շատ անգամ յիշուած Տրիպոլսեցի Դոնատոյի ո . Քրիստափորը գործակալ կարգէ (1595 , օգոս . 30) իր վաճառքներն ընդունելու ի նաւուց , ի մաքսատանց ,

Ան : Փանի մի տարի վերջ (1599, յուլ.) վճարելով զմնացորդ վարձուց իր սպասաւոր Պալէի ո. Սէֆէրայ՝ 90 լիր. ոսկի դրամով, նօտարի առջեւ կ' առնու անկէ անդորրագիր. որոյ վկայ և թարգման կ' ըլլայ Շահնշահն Մարկոս : — Ասոր ժամանակակից են Սահեփան Բաբէրդցին ո. Ֆէրուհի, զոր յիշեցինք՝ Մկրտիչ Պարակի գործոց մէջ (1595, հոկտ. 23) : — Ամբողջան Եղընկացէ, որ Թօխադցի կուկիսան ? Հոռմի մի յանձնարարութեամբ՝ կ' առնու (1595, փերր. 26) ի վերոյիշեալ Պոնատոյէ՝ անոր պահանջը, 34 դուկատ : Հաւանօրէն սա է 20 տարի առաջ յիշուած (1574, յուլ. 31) Եղընկացի Մէրտէնշահի ո. Emiryassin գրուածն (եր. 443) : — Այս տարիներուս պատահած են և դէպք Աւետիքի Բերիացւոյ և Պապայ ո. Յովհաննու, զոր յիշած եմք Զուղայեցւոց վրայօք գրելով (տ. 379, ևն) : Քաղաքական և դատողական դէպք մ' այլ պատահած է այս տարիներում, Անդրէսու ո. Յակոբայ Հայու. սա 1594 տարւոյն վերջերը և յաջորդին սկիզբը՝ յաճախելով բարեկամաբար առ Հասան Թուրք՝ (գերի Էմիր Մէհմէտ չէլէպիի, ի Նոր Ս. Յով. Թաղի, ի տան զոր Պաւլա Պրէանի՝ Թուրքաց կու վարձէ եղեր), քիչ քիչ այդ թուրքին 300 լիպ. Պողպատը գողունի կու վերցընէ, նոյն-

պէս անոր կարմիր վերարկուն այլ, և յարեւելք երթալու խալէի մի վրայ 78 կապոց կտաւեղինաց 49ին մէջը կու դնէ՝ ծածկելով, գործակցութեամբ Մարկոս Մուրատ ռանսէրի և նաւուն գլխաւորաց և բեռները քննողաց. նաև դեռ քաղքէն շրամնուած, տուն վարձող խաթունն կ' իմացընէ եղածը: Անդրէաս, Մ. Մարկոս և վերոյիշեալք կոչուին ի դատ, յանցաւորաց կարգին կայնելով ի դատարանի Աvogadori di Comune կոչուած դատաւորաց. յետ երկար քննութեանց (որոց գրուածը չեմ գտած) 1597ին դեկտեմբ. Յին, ամեն մէկուն վրայ քուէ ձգելով՝ կու վճռեն զամենքն այլ արձըկել, բաց յԱնդրէասայ: որ դատապարտուի տարի մի բանտարկուելու, ուսկից եթէ փախչի և բռնուի, տամն տարի Վենետիկոյ սահմաններէն դուրս պիտի վռընտուի. և եթէ նորէն ներս մտնէ և բռնուի, դարձեալ տարի մի խիստ բանտ, բռնողին այլ վարձք անոր ստացուածքէն, եթէ ունի, թէ ոչ՝ ի տէրութենէ:

Սոյն թուականիս (1597, օգոստ. 9), նօտարի առջեւ Պօղոս Պետրոս անուամբ մէկ մի Սերուիոյ Սոֆիա քաղաքի Ճիագոտենա բերդէն (Giagodena castel de Soffia della Servia), իր տիրոջ Գրէտորէ ո. Թէոդորէ Սերաստացւոյ անդորրագիր կու տայ, որ իր եօթնա-

մեայ ծառայութեան վարձուց մասորդ 180
դուկատն ընդունեցաւ և այլ պահանջ չունի։
Տիրոջ անունն՝ մանաւանդ Հօրն անունն՝ կար-
ծեցընէ, թէ սա մեզ ծանօթ Թէոդորի ո.
Գէորգն ըլլայ. և յիրաւի նօտարն այլ նախ
այսպէս գրած է, բայց յետոյ աւրած և ի
լուսանցան Գրիգոր գրած է, հայրենիքն այլ
Sapas, որ է անշուշտ Աերաստիա, որ ինչպէս
յայտնի է ռամկօրէն Արվազ կ'ըսուի։

ԺԶ դարու վերջընթեր տարին յերեւան
գայ Գէորգ ո. Առաջայ, Երիտասարդ վաճա-
ռական մի, 25ամեայ բարձրկեկ հասակաւ,
շագանակագոյն դեռաբոյս մօրուզք, և աջոյն
միջին մատին վրայ խնձորի նշան մ' ունենա-
լով, երկաթի նշան մ' այլ ձախ բազկին վրայ .
այսպէս վկայեն Անձելոյ Ասորի սանսէրն,
Գրէտոր ո. Սովէտանոսի, Ախնան ո. Յովհաննոս
և Անդրէտոս ո. Յովհաննոս. և թէ քրիստոնեայ
է, և շատ տեղ պտըտեր է վաճառականու-
թեամբ։ Վկայութեան կամ քննութեան պատ-
ճառն չէ նշանակուած։ — Ասոր նման վկա-
յութիւն մի տուած են քանի մի Ջուղայեցիք,
Շահարասայ հրամանաւ՝ իրենց հայրենեաց
ողբալի աւերման տարին, (1605, մարտ 21),
Մուրասուր ո. Կոսսամայ (Cossam), Սովհար ո.
Յակովայ, Մուրասուր ո. Մորէտարայ, և Յակով
ո. Մելգոնի կամ Մանկի? (Meuchio գրուած),

Հայրենեօք՝ Պարսից Անկիրոն? (Anghiron, Ենտերուն?) քաղքէն, իրենց հայրենակից Ձուղայեցի Ստեփանի ո. իբրամյ Համար, որ 40ամեայ, բարեկազմ, միջահասակ, կապոյտաշուի, չիկամօրուս, բարի քրիստոնեայ է. չորս տարի առաջ ելեր է իր երկրէն, և հիմայ կարծեն որ ի Սիկիլիա բանտուած է. ինչերն իրենն են և ոչ թուրքի կամ ուրիշ մարդու։ Այս վկայից հաւատարմութեան վկայ կ'ըլլայ ծանօթ Դոնատոյի որդին։ Բանտարգելութեան պատճառն յայտ չէ, բայց տարօրինակ բան պէտք չէ համարիլ՝ այն ատենի Սիկիլիոյ սպանիական տէրութեան համար։

Այս տարիներու Ձուղայեցւոց իրենց հայրենեաց դեռ շինութեան ատեն՝ վերջին յիշատակներն արդէն նշանակած եմք, իրենց վրայ յատուկ գրելով (եր. 368–81)։

ԺԶ դարուն և Հայ-Ալենետաց Բ Յեղանակի վերջին տարին, (1600) Պորտոգալցի Հռոտրիկոսի վաճառակից Եղընկացի մի յայտնուի, իսահան անուամբ, որդի Ասլանայ, որ ի Հալէպ անոր փոխ տուեր է 300 դուկատ. հիմայ հօս ի Վենետիկ անոր եղբօրմէ (Պետրոսէ Ալմետայ) կ'ընդունի իսահան իր ստակը՝ շահովը մէկտեղ, ունկար (մահառ) ոսկւով, և կու տայ անդորրագիր։

Այս ետքի յիշեալ Հայոյս՝ անուամբ մեր։

ձաւոր և տեղեզք ոչ շատ հեռի՝ աղջային
մ' այլ, Աճիւն (Agicant) գուցէ Ախճան,
Արդնցի, որդի Տիարի, իրեն գործավար
կարգեր է (1602, սեպտ. 6), թուրք մի,
Նասրէտտին չէլէպի, որ պահանջէ ի Խորբայ
Հայազգւոյ՝ իրեն տուած 12 փերթ չուխայից
երկուքն այլ. զի ինքն 12 կտոր տուեր էր
ասոր՝ որ տայ Էֆրամ անուամբ ուրիշ հայ-
ազգւոյ. Խորբ 10 կտոր միայն տուեր է.

Բաւական համարուի այսշափ համառօ-
տածս՝ ի ԺԶ դարու ի Վենետիկ գործով
յիշուած Հայոց համար, որոց հետ նա և
անոնց, որոց ուրիշ յիշատակ մի չէր յայտ-
նուած, բայց եթէ վկայ ըլլալ առջիններուն
անձանց, գործոց և դատից, և երբեմն գոր-
ծակից։ Յիշենք մէկ քանի մ' այլ, որոց ոչ
այլ ինչ յիշատակ կայ, բայց մահուան, որ
ծածկէ անոնց քիչ շատ գործածը և կրածը.
միանգամայն և յայտնէ՝ որ անպակաս եղեր
են ի Վենետիկ՝ աղջայինք մեր, և յառաջ
քան զնախայիշեալ գործով յայտնիս։ Այս
ետքիններէս (անյայտից) քանի մի՛ արդէն
պատճառաւ ինչ յիշուած են. թէ զանոնք թէ
զայլս շարեմք իրենց մահուան թուականին
կարգաւ, ի կիսոյ ցվերջ դարուն, դուրս թող-
լով երախայ հասակաւ վախճանեալները։

1553 Գրիգոր. 23 օգոստ . ի Տան Հայոց .
ամսօրեայ հիւանդութեամբ :

1555-6 Ոիմոն . 19 փեբր . ի Տան Հայոց .
տարի մի Երսա (այրած) հիւանդութեամբ :

1558 Ալոյիս կամ Ալվիզէ (տես 426) , ի
Հայոց տան , ութ օր ջերմով :

1564 Գրիգոր . 29 յուլիս . սա թուի թէ
խոց կամ ուռեցք մի կտրել տուեր է , և իս-
կոյն մեռեր է (¹) , ի Տան Հայոց :

1565 Գրիգոր ո . Ականտարի :

1570 Սարգիս . 30ամեայ , նոյնպէս ի Տան
Հայոց , 3 ամիս հիւթոց իջուածոյ հիւան-
դութեամբ :

1573 Անձելոյ . փեբր . 55ամեայ , 3 ամիս
հին հիւանդութեամբ , կ'ըսուի :

1574 Յովհաննէս . 34 ամեայ . 14 օգոս . այլ-
եւայլ ցաւերով . բնակող ի Նոր Ս . Յովհան (²) :

1574 Յարութիւն (Salvador) . 8 ապրիլ .
45ամեայ , հալումաշ հիւանդութեամբ , բնա-
կող ի Նոր Ս . Յովհան :

1. Il quale era chiloso; se fece tagiar, talche morto. Այսպէս գրէ †առիւր Ս . Յուլիանու :

2. Մեռելագիւր եկեղեցւոյն այսպէս գրէ . Zuane Armeno, d'anni 34 in circa; amalado da *pelechie*, mal di *mazuchos*, et febre pestilenzial; za zorni 25, visitato dalo Excellent M.sr Zuan Battista Venturino. Nele case de Due Lion Lic.to.

- 1576 Յակովը . 14 հոկտեմբեր :
- 1578 Յովհաննէս սանսէր թուրքաց , 90
տարուան . յուլ . 14 :
- 1587 Ստեփան , 2 մայիս . 60ամեայ , ի Ա .
Մարիամ Խորոտիկ . 8օրեայ՝ հիմայ անծանօթ
անուն՝ scoranza հիւանդութեամբ :
- 1589 Բենեդիկտոս ո . Յակովայ :
- 1591 Մարկ-Անտոն ո . Հայ Անտոնի , 11
տարեկան . (9 օգոստ . flusso) հիւթոց հոս
մամբ . ի Ա . Մարտինոս . ուր † է և հայրն
քիչ օր վերջը նոյն հիւանդութեամբ . (տ .
262) :
- 1591 Գէորգ . 28 մայիս . 17 տարեկան ,
հիմայ անծանօթ անուն՝ acipsia հիւանդու
թեամբ :
- 1598 Յովհան . 14 մարտի . բնակող ի Ա .
Մար . Խորոտիկ . 70ամեայ . 20 օր ջերմով
հիւանդացեալ և ծերութեամբ :
- 1598 Ֆրանչիսկոս Աէֆէր , բնակող ի Ա .
Մկրտիչ Պրագորայ . 48ամեայ . 25 օր խըց-
ւած (opilatio) հիւանդութեամբ :
- 1598 Գարրիէլ ո . Կարապետի , 80ամեայ .
27 յունիսի , յետ 15 օր հիւանդութեան , ե-
րեկուն ատեն հրապարակի մէջ ընկեր † է :
- 1599 Յովհան ո . Մարկոսի 13 օգոստոսի .
13 տարեկան . թուի լուսնոտութեամբ . բը-

Նակող (¹) ի Նոր Ա. Բովհան : — Ի կանանց՝
նշանակուած է † 1576ին Եղիստելի դուռար
Բովհաննու սանսէրին թուրքաց :

Այսքան հանգուցելոց և ասոնցմէ առաջ
յիշեցելոց՝ չկայ և ոչ մէկուն որոշակի թաղ.
ման տեղը, այլ յայտ է թէ շատերն իրենց
թաղին եկեղեցեաց մէջ կամ քովերը. միայն
Ոկանդարի որդի Գրիգոր թաղուած է ի Ա.
Գէորգ կղզին, որոյ գերեզմանն այլ ճերմակ
քարէ մաշած երկայնաձեւ գրերով արձանա.
գրեալ տեսեր են վանացս ծերունի Հարք և
ընդօրինակեր են. անոր հետ այն ատեն դեռ
մնացեալ (և հիմայ ոչ) հինգ ուրիշ ԺԵ դարու
տապանագիրեր այլ : Գրիգորին կարճ տող
մի է, և հայրենեաց անունն տարակուսական.
ԷրքասՄԻւցի? Խսկանդար յ որդին Գիլգոր:
Թվ. ՌժԴ:


Հրապարակին մէջ (հաւանօրէն Ա. Մար-
կոսի) մեռնող Գաբրիելի և հօրն անունն
գրուած է Cabriel Armeno Garabirt. այս
յեշեցընէ անկէ եօթն կամ ութ տարի վերջը
խնդիր մի Gabriel Carabetto անուամբ մէկի.
որ շըսուիր Հայ, այլ հաւանական կ' երեւի,
որովհետեւ խնդիրն այլ էր իր վենետկեցի

1. Zuane figlio di M.sr Marco Armeno, de anni
18: il quale cascava da quel brutto mal: già
giorni venti.

շըլլալով՝ ուզելն այնպէս ըլլալ, այսինքն քաղաքացի, ինչպէս կ'ըսեն քննող պաշտօնեայք տէրութեան՝ առ դուքսն, յ'9 փերբ. 1601-2. յիշեցընելով որ այսպիսի խնդիրը շատ կարեւոր համարելով՝ յամի 1552 տէրութեան մեծագոյն ժողովով (Maggior Consiglio) վճռուած էր, որ այս շնորհքս տրուի անոնց որ 25 տարի բնակած ըլլան ի Վենետիկ. իսկ Գարբիէլս այս 36 տարի է որ շարունակ բնակէր ի Վենետիկ (loco et foco), ներկի վաճառականաց Cardiganisi կոչուած տանց մէջ, որոց և գործակից էր, և տէրութեան ամեն տուրքերը հատուցեր էր. ուրեմն արժան է որ խնդիրն կատարուի: Հաւանիմ որ այնպէս եղած է, թէ և վճռոյն չեմ հանդիպած:

Ինչպէս յիշած եմ ի սկզբան, Վենետիկոյ եկեղեցեաց ժագիրք Ժ. դարու կիսէն քիչ առաջ կու սկսին. մեր նշանակեալ մեռեալքն այլ դարուն կիսէն վերջ. իսկ ծնունդք Հայ զաւակաց՝ թէ յերկուց Հայոց և թէ ի հօրէ միայն, դարուն վերջի 30 տարիներու մէջ նշանակած են (ըստ իմ գիտութեան) ի Մկըրտագիրս, յորոց քաղած եմ աւելի քան զ'40, և որոց կէսն արդէն յիշած Հայ Անտոնի որդիքն և թոռունքն (տ. 475. 330) և Թէոդո-

րեան Գէորգայ զաւակքն են . իսկ Պսակք (իմ գտածս) տասնիւ չափ, բայց անոնցմէ դուրս շատ ամուսնաւոր Հայք յիշուին . յորմէ գուշակուի՝ որ շատ աւելի եղած են ծնունդք քան իմ նշանակածս : Գրոցս 163 և 175 Էջերուն յիշածէս յայտնի կ' երեւի՝ որ Հայ-Վենետաց Գ յեղանակին մէջ ծնունդք 10 կամ 15ապատիկ աւելի եղած են , ըստ այնմ և մահունք , և առաւել եւս . զի մահ ոչ միայն զտեղացի ծնունդս՝ այլ և օտար աստեղաց տակ ծնած հիւրերը՝ հաւասարապէս հնձէ և ծածկէ ի խորս , առանց խտրելու թէ չոր է հողն թէ աղի : Իսկ մենք , որ նոյն վիճակին սահմանուած եմք նորագոյն յեղանակի մէջ , ինչպէս Առաջնոյն հանգուցելոց համար մաղթեցինք (եր . 164) , Երկրորդիս այլ զնոյն մաղթեմք , նա և բազմութեան Երրորդին՝ եթէ ըստ ոճոյ գրոցս յիշուին և եթէ ոչ :



ԺԵ.

ՑԱԽԵԼՈՒԱԾ.

Ա. ԳՈՅԻ ՄԻ ՈՒՂՂՈՒԹԻՒՆՔ. — Բ. ԿՐՄՈՒՆՔ
ԿԵՆՍԱԳՐՈՒԹԵԱՆՑ. — Գ. ՏՈՒՆ ՀԱՅՈՑ. — Դ.
ԱԶԳԱՑՈՉՄՔ ՀԱՅՈՑ Ի ՎԵՆԵՏԻԿ. — Ե. ԱԿՆԱՐԿ ՄԻ
Ի ՀԱՅ-ՎԵՆԵՏԾ Գ ՅԵՂՋԱԿԻ :

Հայ-Վենետաց Բ Յեղանակի գործոց յիշա-
տակներէն բոլորովին չհեռացած կամ թողած,
հարկ է մեզ ուղղել մէկ երկու վրիպակներ
գրուածիս, աւելցընել քանի մի մոռցուած
յիշատակ հետաքրքրաշարժ անձանց, և քանի
մի բան այլ Հայոց Տան, Տնպահից և բնա-
կողաց տոհմից և սերընդոց վրայօք։

Ա. Վրիպակաց մէկն է (թողլով ուրիշ
մանր մունր) յերես 56 Բեկոլոտտի Ֆիրեն-
ցացի վաճառականին և վաճառագրին միւս
մականունը Պալդչիոյ գրուիլն, որ պէտք է
գրուիլ և կարդալ Պալտուչչի (Balducci), և
ըստ ոմանց հայադարձութեամբ, եթէ ծիծա-
ղելի չէ, բաղդակի։

Երես 160. Urbe Veteri քաղաքն, որոյ
Հայոց հոգէտան՝ Մարիամ տնպահն Հայոց
վենետկոյ՝ միւս իտալական Հայոց հոգէտանց
հետ կտակէր դուկատ մի, ոչ է՛ հիմայ ծանօթ

և Հռովմայ նաւահանգիստ համարեալ Զիվեդա վեցգիտա (Civita vecchia) քաղաքն . այլ Օրվիետոյ կոչուածն (Orvieto) Ումբրիա հին գաւառի , որոյ ուղղական հին անունն Արես vetus հին քաղաք նշանակէ , կոչուէր և Հերենում . Նշանաւոր և յարգի է այս Մարեմայ կտակին յիշատակն . վասն զի ինչուան հիմայ ծանօթ էր միայն մէկ իտալացի եկեղեցական թեմից վրայ գրողի վկայութիւնն , թէ յամի 1288 տեղւոյն եպիսկոպոսն հիմնադրեր կամ օծեր է հօն Հայոց Ս . Հռէ եկեղեցին : Դեռ անցեալ տարի նոր հետաքնին եկեղեցականք Հռովմայ՝ հարցընէին մեզի , թէ արդեօք մեր ազգային գրուածոց մէջ կայ այս բանիս յիշատակ . և մենք այն ատեն մոռցանք այս Մարեմայ տնպահի կտակը , (շփոթած ըլլալով զՕրվիետոյ ընդ Զիվիդավեցգիայ) . որ կ' իմացընէ մեզ , թէ հոգէտունն այն և եկեղեցին՝ 56 տարիներէ ի վեր Հայոց բնակարան և պաշտօնատեղի է եղեր :

Բ . Ի Վենետիկ բնակող Հայոց մէջ (յ՛Բ Յեղանակիս) մէկ կերպով նշանաւոր և հետաքննելի անձանց կարգէն տեսնուեցան , Անտոն Հայն (թերեւս աւելի քան զամեն այլս) , Գէորգն թէողորեան և մոտող Մէրտինցին Բակովբ . ասոնց մէկմէկ յիշատակ այլ մոռ-

ցուած էր նշանակելոց մէջ, և են ասոնք,
և բաւական նշանաւորք : — Առաջնոյն (Ան-
տոնի) վրայօք երկար գրածէս՝ իր ճարտա-
րութեան հետ երեւցաւ՝ անոր ոչ արժանաւոր
բաղդն կամ ունեւորութիւնն . նոր դուրս
ելած յիշատակարանն ցուցընէ՝ որ երբեմն
ազգային սպասաւոր մ' այլ ունի եղեր . որ
է Աքրանտ ո . Պատիկ, Բերիացի Աքիրեան
տան վաճառական մի (della casa Abib de
Aleppo): Սա յամի 1568, (մայիս 12, De
Grandi Paulo) նօտարի առջեւ խոստանայ
հաւատարմարար ծառայել տարի մի . Անտոն
այլ (զոր այս տեղ նօտարն գրէ M.sr Antonio Surian Armeno de M. Iseppo di Medici) խոստանայ դարմանել զԱքրահամ ա-
պրուստով, և տարեկան վարձք այլ տալ 20
դուկատ : Սա իրբեւ գրաւ յանձնէ Անտոնի
130 դուկատ, և նա խոստանայ ի վերջ տարւոյ
ծառայութեանն՝ դարձընել իրեն 20 դուկատ
վարձուց հետ : Այս դաշնադրութեան վկայ
կ' ըլլան՝ ծանօթ բերիացին Աղեքսանդր ո .
Շաւալաթայ և անծանօթ Մէրտինցի մի՝ Յա-
կոբ ո . Տաւունայ :

Գէորգայ ո . Թէոդորի նորայայտ յիշա-
տակն՝ առաջին գրածներէս աւելի հին են .
1565 տարւոյ . (13 օգոստոսի) . յորում իս-
լայէս մեծ խալէի մի տէր (Ese Ras turcha

patronus unius gallioni) գործավար կարգէ ղԳէորգ, որ պահանջէ և առնու ի Գասպարայ ո. Անդրնի 155 դուկատ, ըստ մուրհակի՝ զոր դրեր էր (ազրիլի 24ին) Աբրահամ Տրինդա (Triucha) Հրեայն, փոխանորդն դաւնցի Վենետաց ի Վալլոնա Դալմատիոյ. դարձեալ, եօթն ծեզզին ոսկի այլ՝ զոր ռայիսն ծախսեր էր վասն այլեւայլ պիտոյից Գասպարայ: Աա Պալոմբարացի կոչուի (Palombara). իսկ այս անուամբ երկու տեղ կայ, մին ի սահմանս Հռովմայ, միւսն ի հարաւային իտալիա (յԱբրուցի). որն այլ ըլլոյ իր հայրենիքն՝ յայտնուի որ Գասպար իտալացի է, և այս ատենս Ս. Մարկոսի բանտից մէջ էր. վկայ այս բաներուս կ' ըլլայ նաւուն գրագիրն Թովմաս Պերացի, (աւ Պերա), թարգման՝ Միքայէլ Մամբրէ հրեայն: Երկու ամիս վերջը (15 հոկտ.) Գէորգ՝ որ այն ատեն բնակէր ի Ս. Յուլիանոս, գուցէ և ի Տան Հայոց, սայն տան մէջ բնակող Յարուշեան ո. Ախոնը (թուի կարկառեցին) իրեն տեղ այս խնդրոյս համար գործավար դրեր է նօտարի առջեւ. վկայքն իտալացիք են:

Մէրտինցի Յակովայ նոր յիշատակն այլ համեմատ է իր գործանէութեան. յամի 1575 (սեպտ. 22) նօտարի առջեւ Ուեկանաթեցի (Անգոնայ գաւառի քաղաք) Մատթէոս ա-

Նուամբ մէկէ մի՝ 40 դուկատի (ոսկի սկուտով վճարելով) գնէ թուրք գերի մի, ԱԷՀԿմէտ անուամբ, չափաւոր հանակաւ, որ ճակտին վրայ կտրուածի նշան մի կրէր, աջ արմունկէն վար այլ, stachada որ թեւէն անցերէ⁽¹⁾:

Գ. Տուն Հայոց ի Վենետիկ. Casa degli Armeni. Վեց և կէս դարէ ի վեր այսպէս լսուած և դեռ շէն Հայազգեաց բնակարանին վրայօք՝ արդէն բաւական խօսած եմք (եր. 143-8. 200. և այլն). սակայն չուզելով այս Հայ-Վենետաց Բեղանակի քանի մի յիշատակներ այլ առջի յիշածներէս հեռուն թողով, աւելցնեմք, ներելի համարելով և քանի մի առ հարկի կրկնութիւն բանից։ Եւ նախ տեսնեմք յետագայ Յեղանակին մէջ՝ Հայք ինչ (ռամկաբար) ոճով գրած և իտալերէն այլ թարգմանած են Մարկոս Եփանեայ կտակեալ տուրքը, զոր և յիշած էինք յեր ես 145։

Այս նոր գրուածս՝ կտակին ստորագրութեան ամսաթուին շարադրուած կամ թուագրած է, յետ իբր 430 կամ ըստ գրողացն՝ 449 տարիներու. որովհետեւ փոխանակ 1253

1. Se attrova haver nel brazzo destro dal comedo in zoso, una stachada che passa esso brazzo, et ha un taglio sopra la fronte dalla parte sinistra, et una picchiata nella cossa sinistra.

գրելու կտակին տարին՝ երկու վերջին թիւ-
մբը իրարու տեղ դնելով՝ 1235 գրեր են.
բայց ամսոյն օրն նոյն է, յունիսի 5 = մայիս
25 ըստ հին տումարի, Ժիշ դարու. յորում
այսպէս գրեն Հայք, Երբ իրենց Տառնը նորու-
գելով՝ մտածէին եկեղեցի մ' այլ շինել։ Ատո-
րագրութիւն անուանց՝ չկայ. որով չէ յսցա՞
եթէ քահանա՞յ է գրողն՝ թէ աշխարհիկ։

1684. մայիս 25. — ի թուին Փրկչին
ՌՄԼԵ, և ի թուին Հայոց ՈՉԴ, մայիսի 25.
« ի Վէնէցիա : Կամաւ Հօր ամենակալին
» և Որդւոյ իւրոյ Միածնին, հանգ(ուց)եալ
» էր առ Քրիստոս՝ պայծառագոյն և Ճէն-
» թլում (gentilhomo) Վէնէցիոյ քաղաքիս,
» այր մի աստուածասէր և հաւատարիմ մե-
» րոյս Հայոց ազգի, Մարքո անուանեալ, որդի
» Բէթոօի, ի տանէն Ցիանի : Կտակ էր
» արարեալ այսպէս. թէ, Այն իմ տունն՝
» ուր Հայք կան բնակեալք՝ թողի իւրեանց,
» ինձ յիշատակ յաւիտենական, որ լիցի
» Ապիտալ ու Աքֆնչ (Hospitale կամ Ospizio),
» որ կոչի Աղբարաց քոռն Հայոց Լուսաւոր-
» շեան ազգի : Դարձեալ, մինչ պիտոյ իցէ
» աւերուածոյ շինուածոյն տանն այն, պար-
» տին իմ գօմսարքն (Comisarj, Խոստա-
» կատարք) և Բուրկաթօռներն (Procura-
» tori) իմ ինթրաթի (եկամուտի) ըստըկէն

» շինել զպակասութիւն աւերման տանն այն .
 » որ է այս սուրբ եկեղեցւոյս տեղն : Յայս
 » միկ տան կայր շինուածք՝ ընդ ամէնն՝ փոք
 » րիկ մատուռ մի և քանի մի խուց : Դար
 » ձեալ . այս ճէնթուլումիս կտակին կայ գը-
 » րեալ , ի Բուրկուրաթիա տի Զիթրան , (Pro-
 » curatia de Citra) , ի մէջ նոցա տէֆթէրի .
 » ունիմք մեք և այլ գրեանք : — Զոր Տէր
 » մեր Յիսուս Քրիստոս ի փոխարէնն տրոց
 » սորա՝ տացէ իւր և իւր ծնողաց հոգւոյն
 » հանգիստ և արքայութիւն յաւիտենից . և
 » արժանի արասցէ երանաւէտ կոչման և
 » երկնից արքայութեան . յաւիտեանս յա-
 » ւիտենից . ամէն : — Ո՛վ սիրելիք Քրիս-
 » տոսի , պարտիմք ամենեքեանս միարերան
 » և ուղիղ սրտիւ ասել . Աստուած ողորմի իւր
 » հոգւոյն և իւր ծնողաց և իւրեանց զա-
 » ւակացն . ամէն : Հայր մեր :

Կտակողին օրերէն մինչեւ գրեթէ ի կէս
 մեր այս դարուս՝ քիչ շատ Հայ բնակողք
 եղած են այդ իրենց շնորհուած տան մէջ .
 յետին բնակողն եղաւ Տէր Սահակ Վ . Մա-
 ղագեան , † ի 1843 . Ա և Բ Յեղանակի մէջ
 բնակողաց ոմանք յիշուած են գրոցս մէջ .
 որոց առաջին ծանօթքն են , կտակողէն և ոչ
 ամբողջ դար մի ետեւ՝ միւս կտակող տան-
 տեսուչն կամ տանտիկին Մարիամ (տ . 157) և

իրեն յիշածներն , հոգեւորականք և աշխարհականք . յորմէ յայտ է , թէ՝ իրենցմէ առաջ և վերջ այլ կային նոյնպէս բնակողք . առջին ներն բոլորովին անծանօթ են , վերջիններէն՝ տեսանք զրեթէ Մարիամէ դար մի վերջը Պր . Յակոբը և իւր որդին (տ . 180) , և ասոնցմէ վերջ զոմանս ի նոյն ժե դարու , առելի շատերն ի ժամանակ դարու . այլ աւելի եղած են Գյեղանակին մէջ , և սակաւք այս մեր դարուս :

Տունն թողաւած էր Հայոց . բայց հարկ էր որ Հայ գտուած չգտուած ատեն՝ տիրութիւն ընող մ' այլ ըլլար . և այս կտակին մէջ յիշուած է՝ Procuratori de Citra . այսինքն Հոգովոր Այս կողմէ , որ է քաղաքին այն կողմն ուր Ս . Մարկոս տաճարն և հրապարակն է , Ռիալտոյի մեծ կամուրջով բաժնուած միւս մասէն : Այս ետքի կողմիս Հոգովորք՝ կոչուէին Այն կամ Անդրագոյն կողման (Procuratori de Ultra) . շատ հեղ քաղաքն և քաղքէն դուրս տեղիք նշանակեն Այսն և Այնն : Թէ տան նորոգութեան , թէ նոր բնակիչ ընդունելու , թէ անոնց պիտոյից կամ գործոց՝ և շփոթութեանց հոգն , այս պաշտօնէից յանձնած էր Մարկոս Եփանի . և այնպէս ըրած են հաւատարիմ և մեծ պաշտօնեայքն մինչեւ ի վախճան հասարակապետութեան Վենետիկոյ : Եւ որովհետեւ տան նորոգութեան համար այլ

թողուած էր գումար մի , անոր չահէն կ'ըլ-
լային նորոգութիւնք և շինութիւնք . որոց
հաշուէզիրքն և մուրհակք (մասամբ) դեռ
գտուին իրենց դիւանաց մէջ . հնագոյնքն՝ վե-
րոյիշեալ Գէորգի ժամանակին հասնին (ըստ
իմ գտածիս) : Նախ 1443 , մարտ ամսոյ մէջ
նշանակուին՝ տախտակի և այլ նիւթոց չափք
և դինք . Ospidal, Spedal, Hôpital de Ar-
meni կոչելով զտունը . և մինչեւ ԺԵ դարուն
վերջը՝ 25 անգամ եղած ծախքերն մի առ
մի նշանակուած են , որք՝ հետաքննողաց կըր-
նան լոյս կամ զրօսանք տալ , այն ժամանակի
նիւթոց և աշխատութեան աժնութեան , կամ
դրամոց թանկութեան , եթէ համեմատին
հիմկու դրամոց հետ : Օրինակի համար . 1451
(հոկտ . 10) քսան տեսակ բաւական քանա-
կաւ նիւթք՝ իրրեւ 42 լիրայ արժեր են . վար-
պետն՝ որ թէ՛ հիւան է եղեր թէ որմնադիր ,
22 օրուան բանողչէք առեր է 35 լիրայ և
8 փող (սոլտի) . իր մարդն 32 օրուան համար՝
15 լիրայ , 18 փող : Վենետիկոյ լիրայն այժմու
կէս ֆրանգն արժէ ըստ նիւթոյն . և հիմայ
այդպիսի բանւորաց տասնապատիկ աւելի
վճարուի : – ԺԶ դարու մէջ այլ 30 անգամի
չափ հաշիւք նշանակուած են :

Այս նորոգութեանց և ծախուց մեծագոյնն
եղած է 1494-7 տարիներու միջոց , երբ շատ

Հայք գալով ի Վենետիկ՝ ուզեր են տունը
նսրոգել աալ նոր շէնքերով, և օտարազգի
բնակիչները դուրս հանել (ինչպէս յիշած եմք
յերես 200). այս առթիւ նշանակած (ծանօթ)
ծախքն են իբր 45 դուկատ, որ է ըստ նիւ-
թականին իբր 550 ֆր. և նշանակէ շատ մեծ
ծախք, այնքան՝ որ Հոգցողք բաւական եկա-
մուտ չունենալով Միանեայ թողած գլխէն,
պարտաւորեցին զՀայս՝ որ մաս մ' այլ իրենք
վճարեն քիչ քիչ, որովհետեւ իրենք ըստ հա-
ճոյից այլ շինել տուին, և գրեթէ նորէն
շինեցաւ տունն, ինչպէս զրեն Հոգցողք. (pro
expensarum factarum in ipsa domo de
nova fabricata). և երբ Հայք մտան ի տունն,
ի 14 յուլիսի, 1497, տուին դուկատ մի, մնա-
ցեալն այլ թողլով յետոյ իրենց յաջորդնե-
րով վճարել:

Թէ այս ատեն թէ առաջ և թէ յետոյ՝
հարկ էր որ Հոգցողք իրենց մարդկանցմէ-
տնպահ կամ տնտես մ' այլ գնէին հօն. և
այս թուականի մօտ յերեւան գան այդպիսիք,
սովորաբար Gastaldi կոչուելով, (տ. 199).
Ասոնց ծանօթ հնագոյնն է (Ա) Էրիզոյ Անորու
(Erizzo) 1476–81 թուականի յիշուած. քանի
մի տարի վերջ այլ 1483–93 թուի իր եղ-
բայրն, (Բ) Alvise Erizzo. թերեւս ասոնցմէ
առաջ ըլլայ Նիոլու Նիոլուան մէկն՝ որ յիշուի

1479ին։ Այս ատեններ (թէ ոչ աւելի առաջ) սկսած է Հայոց տան մօտ կամուրջն՝ իրենց անուամբ կոչուիլ (լատ. Pons Armeniorum տ. 199)։ Ասոնցմէ վերջը (թէ և առաջ այդ երբեմն յիշուած) տնպահ կոչուած է (Պ) Աճառի Գասպար (Amadi Gasparo), 1493-7, մինչեւ ի մուտս Հայոց ի նորաշէն տունն. յետ որոյ երեւի թէ իրենք հոգացեր են իրենց տան պէտքը, բայց ոչ շատ տարի։ ՃԶ դարուն սկիզբէն մինչեւ տասն տարի (1502-12) յիշուի առաջին Հայ իրր Տնպահ (Պ) Արքանդրն ծանօթ (տ. 309). վերջի տարին (1512) յիշուի Հայոց տան մէջ բնակող իտալացի մի (Հերոնիմ Gedezari), որու կու վճարեն ըրած ծախքերը (57 լիր.) բայց չի կոչուիր տնպահ։ գուցէ առ ժամանակ մի գործակալ եղած է, մինչեւ յաջորդ տարին (1513) երեւնայ նորէն իտալացի մի (Ե) Պիտրոս Entio. թէ և սա եւս չի կոչուիր Տնպահ, բայց տանը ծածքը կամ երդիքը նորոգել տուեր է, որոյ համար հոգողք վճարեր են աւելի քան 6 դուկատ։ Հետեւեալ տարին (1514) յիշուի (Զ). Պրիմոս (Primus) անուամբ Հապցողաց մունետիկն (Præco), որ բնակի եղեր ի Տանն, և որոյ ծախքերն (17 լիր.) վճարուի 1517ին։ — Այս թուականիս որոշակի տնպահ կոչմամբ (Gastaldionus) յիշուի (Ե) Յովհան Everutio?

Կամ Gueritio, որ թուի թէ 10 տարի մի պահպանութիւն ըրած է։ Իրմէ վերջ որոշակի յիշուի (Բ.) Հերում Ջիլը (Civran գրադիրն, Segretario), զոր Հոգցողքն յամի 1529, նոյեմբերի 4, կ'ընտրեն իՊահպան (Custode) Հայոց տան, որպէս զի ատեն ատեն հօն եկող Հայերն ընդունի. (per alozare gli Armeni che di tempo in tempovenirano in questa terra). Սա 13 տարի մի այս պաշտօնը կատարեր է. բայց կամ ոչ հաճոյ Հայոց, կամ ասոնք աւելի շատ գալով ի Վենետիկ, ուզեր են իրենց տրնէն հանել զնա. և Հոգցողք յամի 1541 (յուլ. 11). իրենց մունետկի կամ նուիրակի բերնով կու պատռիրեն, ութ օր ատեն տալով, որ տունը թողու Հայոց և ելնէ դուրս. ութ օր վերջը նորէն ութ օր այլ շնորհեն, և եթէ ուշանայ՝ բռնի պիտի հանեն։ Բայց որ և է պատճառաւ նա դեռ հօն մնայ երկայն ամիսներ. մինչեւ յաջորդ տարւոյ (1542, մարտի 8ին) նորէն իբրեւ վերջին հրաման խաւրեն, որ ինչուան այս ամսոյս վերջը պէտք է ելնէ. և նա շնորհակալ ըլլալով՝ խոստանայ. սակայն դեռ քանի մ՞ամիս այլ մնայ. և առջի հրամանէն ամրողի տարի մի վերջը՝ 1542ի յուլ. 5ին վերջին անգամ խիստ պատռէր զրկուի, որ եթէ ութ օրէն այլ չելնէ. իր կահ կարա

սիր տունէն դուրս փաղոցի վրայ թափել
պիտի տան. (aliter nui faremo butar la
roorra sopra la strada: et questo per ult-
imo et perentorio termine): — թէ ուշ
թէ շուտ՝ ելած է Զիվրան Հայոց տունէն,
ուր երեւի որ հանգիստ գտած էր, բայց զրկե-
լով զՀայս: — Իրմէ անմիջապէս վերջը թէ
աւելի ուշ՝ տնպահ դրուած է, (Թ) Բարդողիմ.
Regia, որ յիշուի յամի 1544, (ոգոստ). աա-
կայն նոյն տարւոյ. վերջերը (10 նոյ.) (Փ)
Պերկամացի Ֆրանչեսկո Անդրոն և եղբարքն
տնպահ կ'ըլլան. բայց թուի ոչ լաւ ըն-
տրութեամբ և քննութեամբ. վասն զի տարիէ
մի քիչ վերջը (1646, փերր. 13) Հոգցողք
անվաւեր համարին զայն, որովհետեւ հակա-
ռակ էր օրինաց՝ եղբարց կամ ժառանգաց
տալ այդպիսի պաշտօն. և դարձեալ, այդ
Պերկամացիք տուանց հարցընելու իրենց՝ ընդ-
ուներ էին քանի մի Հայ. ռւատի կու հրա-
մայեն անոնց որ ելնեն. և նոյն օր անոնց
տեղ կ'ընտրուի (ՓԱ) Սանտո Գառնի, (Santo
da Campo) անուամբ մէկն, որ և հայերէն
զիտէր. թուի թէ և Զիվրանն այլ, վասն զի
շատ հեղ սա թարգման կոշտած է (interpret-
prete): Գովութեամբ զրեն Հոգցողք Սան-
դոյի համար. (É homo che ha la lingua
armena et bono interprete, et etiam per-

sona morigerata, comoda et utile ad essi Armeni). բայց և խստիւ պատուիրեն, որ առանց իրենց գիտութեան մարդ չընդումի. ինքն այլ բնակի այն սենեկին մէջ՝ զոր Հայք տան իրեն. և յիշէ, որ ինքն տնպահ է և ոչ տանտէր:

Յետ Սանգոյի յիշուած տնպահն է մեղի շատ ծանօթ Հայ մի, (ԺԲ) Սիմոն ո. Յանձնայ (տ. 200, են), 1555-6էն մինչեւ ի մահն, 1577: Նոյն տարին յաջորդած է նոյն պէս ծանօթն (ԺԴ) Գէորգ ո. Յանձնանո՞ւ մինչեւ ի 1594-5. իրեն այլ յաջորդեր է (ԺԴ) միւս եւս ծանօթն Մկրտչի պարսկանայ, † 1608: Ասոնց հետ յիշած եմք Գէորգայ տնպահութեան սկիզբներում՝ Հայոց նոր սահմանադրութիւնը, որ վաճառականք ելնեն իրենց տունէն և միայն աղքատքն և պանդուխտք բնակին. արդէն Սիմոնի ատեն՝ Աղժաբարոց ոռան կոչուած է տեղին (de Mendicanti, որ վուրացկան նշանակէ): — Մկրտչի անմիջական յաջորդ չէ գրուած: այլ ինչպէս վկայեն Հոգցողք՝ յետ շատ ժամանակի (Յ տարի) քուէիւք կ'ընտրեն իտալացի մի (19 սեպտեմբ. 1611) (ԺԵ) Ֆրանչ. Ոչմծաբարոց, կենաք շափ. պատուիրելով՝ որ երբեմն երբեմն իմացընէ իրենց՝ տան մէջ մտնազ ելլողը: Ասոր ժամանակ և բերնով խնդրեն բնակիչ Հայքն,

որ տանը վրայ արեւանոց (կիւնէլլի, altana) մի շինուի, ուր կարենան իրենց լուսցած դգեստները ցամքեցընել։ Որիծարտոյ է է ի սկիզբն 1620 տարսոյ . և շուտով (19 փեր.) իրեն յաջորդեր է ընտրութեամբ՝ դարձեալ իտալացի մի (ՓԶ) Մկրտչուն Ֆրանչուի . *Battirame.* Առ 30 տարի կատարէ այս պաշտօնը, բայց ոչ և կեանքն ի պաշտօնին . վասն զի ոչ միայն տիրուբար այլ և բռնաբար ու շահասիրութեամբ՝ Հայազգիները քշելով տանը ձեղուան մէջ, օտարներու կու տայ լաւ սենեակները և մթերանոցները . Այս բանիս համար բողոքեն Հայք (20 ապրիլ, 1650), բերան դնելով՝ մեր այն ժամանակի եկեղեցական և քաղաքական պատմութեան մէջ շատ անուանի (այլ ոչ բաւական ծանօթ) վարդապետը՝ Թաղմաս, երբեմն կ. պօլսի պատրիարք (¹), իր Մելքոն սարկաւագը և քահանայ մի (Տէր Յովհաննէս ի Պարսից ²).

1. Շատ երկար և հետաքրքրական գրուածներ կան այս տարօրինակ, յանդուազն, խորամանկ և թշուառաման անձին վրայօք Վենետիկոյ դիւանաց մէջ, 1648-57 տարիներու միջոց, (պէտք է գտուին և ի դիւանս Հռովմայ). որ կըքնան ընծայել մեր պատմութեան նոր պատկեր մի, բայց և այլանդակ. և Հայ-Վենետիկաց Գի Յեղանակի ամենէն նշանաւոր գիտուածոց մէկն է:

2. Առ այլ ըստ իտալացւոց՝ Գոմինիկոսի որդի կոչուի . իսկ հայրենիքն ի Հայս Arnavas? գրուած է.

իսկ թարգման դնեն ազնուական իտալացի մի (Կամիլլոս Մելգոն), որոց հետ կային երեք այլ աշխարհիկ բնակողք։ Հոգցողք պատռիւրեն իրենց արբանեկին (fante) քննել. և նա հարցընելով վերոյգրեալ եկեղեցականաց՝ լսէ նոյն գանգատները. նա և՝ թէ Մկրտիչ զիրենք արհամարհելով՝ Մամելոնա կ' անուանէր, և իրենց թողուած տան վերի մասին մէջ այլ՝ հաւեր կու պահէր։ Հոգցողք կանչեն զՄկրտիչ (20 մայիս), և քննելով միաբան քուէիւք՝ վճռեն, որ ելնէ Հայոց տունէն, 15 օր ժամանակ տալով, արբանեկին այլ պատռիրեն՝ որ կատարել տայ վճիռը. — Երեք ամիս վերջը (օգոս. 20, գուցէ յաջորդ տարին) նոյն պէս քննութեամբ և քուէիւք կ' լնտրեն Հայ մի (Ժէ) Պետրոս Ուկան սէնսարը (զոր Իտալացիք գրեն Pietro Toscan, փօխանակ գրելու R. d'Oscan), որ երկար տանէ ի վեր բնակէր ի Վենետիկ. պատռիրելով, որ հիմայ բնակի ի Տան Հայոց և հոգայ աղքատներն և պանդուխտները։ Բայց ասոր սէնսարութեան և շահուն յարմար չի գար այս նոր բնակութիւնը. իր տեղէն չելլար։ Իմացան Հոգցողքն, հարցուցին, և նա հրա-

գեղեցիկ անուն, միթէ Առնո՞ս լեռան անուամբ՝ որ է սահմանա վանայ, որ և կընար զբարիլ Առնասու։

ժարեցաւ ի տնպահութենէ (7 սեպտ. 1652): Նոյն օր հրատարակեցին՝ որ ով կ'ուզէ այդ գործը՝ իմացընէ իրենց. քանի մի անձինք ներկայացան. որոց մէջ յարմարագոյն համար ւեցաւ և քուէիւք ընտրուեցաւ (ԺԲ) Անդրեաս Տզուալէ վենետ։ Սա յաջորդ տարին (1653) այլեւայլ անգամ հրաման առաւ Հայոց տան նորոգութեանց համար ծախսել 90 դուկատ, նոյնպէս և եկեղեցւոյն սպասուց համար դարաններ շինել. և որչափ ստակի այլ պէտք ըլլար՝ պիտի տրուէր Մ. Ֆիտնեայ կտակին հասոյթէն, որ է 465 դուկատ։ Քան տարիէ աւելի կատարած է սա Հայոց տան հոգը, և † է յամի 1673 (ի յունիսի)։ Իրեն տեղ՝ նոյն կերպով հրատարակելով փափագողաց մէջ յարմար դատուած և ընտրուած է (11 փերր. 1674) (ԺԲ) Ֆիորավանդէ Բորդա (Fioravante Porta) անուամբ մէկն, որ առջինին պէս Հոգցողաց արրանեակ է եղեր. պատուիրուի իրեն՝ որ Հայոց տան մէջ բնակութեան խցիկ մի և ամբարանոց մի առնու իրեն համար, կերակուրն այլ անոնց հասարակաց խոհանոցին մէջ եփէ, և օտարազգի շընդունի, ևն։ Ասոր ատեն այլ Հայոց տան և եկեղեցւոյն շինութեանց համար 100 դուկատ ծախսուց պէտք եղեր է։ Սա վախճաներ է իր պաշտաման մէջ՝ յամի 1676 (նոյեմբ.)։

Հետեւեալ դեկտ. ամսոյ 11ին սովորական կոչ
կ'ընեն. փափագողաց մէկն կ'ըլլոյ վախճա-
նելոյն որդին՝ Մկրտիչ, մէկն այլ, (եթէ իր
թոռն չէ) Յհ. Մկրտիչ. Ֆրանչ. Battirame,
առջի ընտրութենէն և վուշնտուելէն (1620)
57 տարի վերջը. բայց հիմայ (14 փերք. 1677)
կ'ընտրուի դարձեալ Հոգողաց արքանեակ մի
(ի) Բենեդիկտ Կարարա (Benetto Carara): —
Ասոր ատեն եղաւ մեծ յեղափոխութիւն մի,
Հայ-վենետաց բազմանալով նա և ընտանեօք
և հարցստութեամբ ի քաղաքիս. որք միաբա-
նութեամբ ձեռք զարկին շինութեան նոր (Ա.
Խաչ) եկեղեցւոյ, և նորաձեւութեան Տանն
Հայոց: Ասոր համար հարկեղաւ Բենեդի (1682)
ելնել տունէն, և տարեկան վարձք ընդունիլ
(30 դուկատ). և երբ շինութիւնն սկսաւ շարու-
նակիլ (1685) և լմընցաւ (1688), ի սկիզբն
յաջորդ տարւոյ (8 յանուար, 1889) մեծահան-
դէս փառօք օծուեցաւ. այնուհետեւ ոչ Բենե-
դի և ոչ այլ օտար կամ բնիկ տնպահի անուն
լսուի և ոչ այլ պէտք կար:

Հայք նոյն տարին համագումար ժողոված՝
նոր Աահմանադրութիւն մի գրեցին նոր կար-
գաւորութեամբ, և ընտրութեամբ տարեկան
պաշտօնէից և վերակացուաց, թէ եկեղեցւոյն
և թէ տանն առանձինն. ուր՝ սահմանեցին,
որ նորեկ ազգայինք՝ միայն ամիս մի բնակելու

իրաւունք ունենան . և այս օրինաք վարուեցան . դար մի , մինչեւ ի բարձումն Հասարակապետութեան Վենետիկոյ (և քիչ մո՞ւ այլ առաջ), երբ շատ անհատք և ընտանիք թողին գքաղաքու և գնացին ի Լիվոռնոյ կամ ուրիշ տեղ . և շատ ցանցառ եղաւ բնակութիւն Հայոց ի տան՝ մինչեւ ի կէս ԺԹ դարուս : — Քաղքին ուրիշ կողմեր բնակող Հայք այլ մարեցան , պակասեցան և տունքն գլխաւորք . Շէհրիմանեան մեծատուն կոմսք՝ ամուրի † . Սեղբոսեանք , Աքելեանք , Ապտուլլահեանք , Աթաճանք , և քանի մի մեացօրդքն իտալացեալք և դեռ իրենց ծնողաց մականունը ծոմոկելով կրող ծերք և պառակ՝ մի ըստ միոյէ † , մինչեւ ետքի 1880—90 տարիներուս միջոց : Իրեւնշխարք՝ հազիւ մնան քանի մի աղքատ իտալացեալ կանայք՝ ամենեւին անծանօթք հայութեան , բայց եթէ պապուց և մամուց աւանդութեամբ : Միայն մէկ այր մի կայ երկու քոյրերով , և . Պօլսի Ալեքսանեան տոհմէ , որ եկած է ի Վենետիկ յամի 1732 , և երեք չորս ազգ սերընդեամբ՝ պատուաւոր փաստաբաններ և բժիշկներ ընծայած է Վենետիկոյ , մինչեւ մեր օրերուս , Ալեքսան անունը յիտալերէն Alessandri փոխած . և է ազնուաբարոյ պատկերահան և վարժապետ նկարչութեան յԱկադեմիայն քաղաքիս , Անծելու , —

Դամինիսու—Առեփան անուամբ (ծն. յամի 1854)։
(ասոր տռհմին վրայագը առանձին տեղեկութիւն
մի հրատարակեր եմք տառն տարի առաջ՝
իտալերէն, իրեն ընտանեաց հաճութեամբ⁽¹⁾։
սորա կինն լեհացի է, և արու զաւակ չունի։

Վենետիկէ դուրս գտուին դեռ վենետա-
բնակ Հայոց սերունդք՝ յայլ քաղաքու իտա-
լիոյ և յԱւարիա, ինչպէս Սեղրոսեան, Հէր-
մէթեան, Միրմանեան, Արելեան։

Դ. Երբ խօսքերնուա կարգն և յիշատակք՝
ատիպեցին մեր Բեղանակէն առ ժամ մի
անցնիլ յ'Գն, գուցէ պահանջեն ընթերցողք,
որ գոնէ այնքան Վենետակայ ազգայնոց ընտա-
նեաց անուններն այլ լսէին։ Երեք դարուց
մէջ՝ ի կիսոյ ԺԶին ցկէս ԺԹիս, հարիւրէն
աւելի Հայ ընտանիք ճանչցուած են ի Վե-
նետիկ։ բայց միաժամանակ ո՞րքան եղած է
անոնց մեծագոյն թիւն, չէ յայտ։ Ի կէս Ժի-
դարու (1650) յիշուին 80 արք՝ իրրեւ բնա-
կողք ի քաղաքին, յայտ է թէ մասամբ կա-

4. Ընտանեաց հայրն Համի Եղիս † է յիստէ քա-
ղաքաւանի Պատուայ, ուր կտաւեղինաց մեծ գործարան
մի հաստատեր էր, օգնութեամբ տէրութեան Վենետ-
կոյ. յետ † Միկթար Արքահօր՝ իր մէկ առանամեայ
որդին (Մատթէոս) ընծայած է մեր վանաց (1730),
բայց ուսմանց ընդունակ չըլլալով՝ գարձեր է առ ըն-
անիսն, և պատանեակ † է (1757)։

Նամբիք. դար մի վերջը (1750) յիշուին 70 արք. 1763ին՝ 80 արք. իսկ իրրեւ ընտանիք յիշուած են 1710ին՝ 27. նոյն ատեն 35 հոգի այլ անհաստատ բնակողք՝ բայց ծանօթ մարդիկ, թող զանծանօթս։ Յամի 1771 յիշէ մեր Միսիթար Աքբահօր յաջորդն՝ ընտանիք իրրեւ 20, ոգիք երկու սեռէ՝ աւելի քան զ100։ Այս մեր դարուս մինչեւ ի կէսն այլ՝ թէ դեռ հայ անուամբ և թէ իտալացեալ Հայոց իրրեւ (ճանչցուած) ընտանիք՝ լսուէին 10 կամ 12, սերունդք 50։ — Յետագայ Յուցակիս մէջ նշանակուին իրրեւ 50 մի՝ այն 100էն աւելի անուանեալ Հայ ընտանեաց, անոնք՝ որոց երկուքէն աւելի սերունդ կամ ճիւղ ճանչցուած է, և զայն նշանակեն 3 կամ 4 կամ աւելի թիւք սիւնակին։ Միւս սիւնակին տառքն նշանակեն այն դարերը (ԺԶ-Թ) որոց ատեն ձեւացեր են ընտանիքն և յառաջացեր են սերունդք։ Ինչպէս տեսնուի՝ շատն ժլ դարուն վերաբերին։ Ընտանեաց անուանքն այլ՝ իրենց ի վենետիկ տոկմին նախահօր անունն է, կամ հօրն՝ որ չէ եկած ի վենետիկ, կամ թէ եկած՝ բայց զաւակն այլ հետը բերած է և ոչ այս տեղ ծնած։ Այս նախահարց մեծագոյն մասին կանայք՝ վենետուհիք են, ինչպէս և իրենց որդւոց։ իսկ որոց որ ամուսինք այլ Հայ ճանչցուած են, զայն նշանակեմք՝ քովը դնե-

լով — Հ. ծանօթ իտալուհի կանամքեաց — ի. որոց որ նշան չկայ՝ չգիտեմք, այլ շատն անտարակոյս — ի է։ Աստղանիշ անուանք նշանակեն, որ դեռ կոյ կամ քիչ տարի առաջ կային այդ ցեղից սերունդք ի վենետիկ կամ ի Լիվոնիա և այլուր, թէ և իտալացեալք. հաւանօրէն կան և այլ այդպիսիք՝ որք անծանօթք են. և ծանուցելոց շատն այլ մեր քսան և աւելի տարի առաջ հետաքննութեամբ յայտնուեցան։ Որ ցեղից որ հայրենիքն այլ յայտնի են՝ զայն այլ նշանակեմք. որ անուանց քով (.) գրուած է՝ նշանակէ քիչ շատ աւելի ծանօթ և երկարատեւ վաճառական տուն ըլլալը։ Այս տեղ անցողաբար ծանուցանելով, որ մեզ ծանօթ 2500 Հայ անուանց մէջ աւելի ծանօթագոյն 500 առնըլով, գրեթէ կէսն Զուղայեցիք կամ Սիսականք են (Սիւնեաց աշխարհ, Գարապաղ). ասոնց այլ կէսն յատկապէս Հին և Նոր Զուղայեցի գրուած են. 50 մի Ղափանցի կոչուին, 70 այլ Սիւնեաց նահանգի 25 այլեւայլ գեղերու անուամբ։ Խսկ միւս (250) կիսոյն 60 մի՝ յայլեւայլ քաղաքաց Մեծ Հայոց են, 50 ի Փոքր Հայոց, ի Պոնտոսէ և Կիւիկիոյ, 40 մի ի Փոքր Ասիոյ, 40 մի յԱսորւոց, գուցէ նոյնչափ ի Կ. Պօլսոյ և յԵւրոպիայ կողմանց, 25 մի ի Վլաց և ի Պարսից. ի Մեծ

Հայոց եկողք աւելի Երեւանու կողմէն են,
ի Փռքը Հայոց՝ Կեսարացիք, ի Փ. Ասիոյ՝ Ան-
կիւրացիք, յԱսորւոց կողմանէ՝ Ամդեցիք. այս
ետքիններէս աւելի՝ Կ. Պօլսեցիք։ Յիշեցը-
նեմք դարձեալ, որ այս թիւերս համեմատա-
կան համարելու է և քիչ քան թէ շատ. նոյն
պէս յիշեցընեմք ի սկզբան (յերես 175) ըսած-
նիս՝ Հայ-Վենետ սերընդոց և խնամութեանց
համար։



Աւտորական	Հայոց բառեր	Գործառք	Ավտորական
* Գեղագ — Միլիան. — լ.	Զուզում Մէլլումին	•	8
* Դրազզուն — ի.	Ղափան Կհասութեան	•	2
Երկանենց, (Lauri).	Քաղաքէացի	•	3
Թէոդորեան — լ.	•	•	3
Խաչատրուք — ի.	կ. Պօլիս	•	4
—	•	•	5
Մարտուկ — ի.	•	•	5
Հայրապետ (Arabiet).	Զուզում Անդիլլիլիս	•	5
Հերութուլի զամբ (Fighter) — լ.	Զուզում Անդիլլիս	•	7
Մահանդան.	•	•	6
Մարկոս — Յայիշան.	•	•	5
Մարտինոս (Martilengo) — հ.	Զուզում Անդիլլիս	•	5
Մ. Մարտունի.	•	•	5
Միհանեան.	•	•	5
Միխայիլ (Michieli)	կ. Պօլիս	•	4
Մուրանո-Բարոնեան.	•	•	5
Օմելուլիսան.	•	•	2

ԱԼՖԱՐԱԿԱՆ ՀԱՐՑ	Հ - Յ Ի Բ Ա Խ +	Պ - Ր	ՄԵՐԱԿԱՐ
Վասանիկ — ի.	.	.	5
Վարասանելի (Casanova) — չ.	.	.	4
* Վահումանելի, (Saum).	.	.	4
Վէրիմանելի.	.	.	5
Վական — (Honorio) — ի.	.	.	5
— Յովիչանել.	.	.	5
Վարդպետակ — Վարդպետակ (Valle).	.	.	5
* Վոլոգդան, (Chiolachi) — ի.	.	.	5
— (Վաշանովով).	.	.	5
Վազգաճառի — ի.	.	.	5
Վեղընականի — չ.	.	.	5
Վէֆէլը (Վրանիլի)	.	.	5
Վարդպետ (Հայկ).	.	.	5
Վէլիմանել (Հայկ).	.	.	4
Տէքնաճ, (Tevan).	.	.	2
Քորդալիկ — չ.	.	.	5

Վաճառական տանց համար յիշելի է (ուրիշ տեղ այլ յիշածնիս), որ ԺԵ դարուն կիսում (1653) Ե Գիտունք կամ Հոգցողք վաճառականութեան՝ վկայէին տէրութեան, թէ արդէն բաւական Հայ վաճառատունք (րին ձ'սուսօնա) հաստատուած էին ի Վենետիկ. դար մի վերջը (1732-58) 12 տունք վաճառականաց թողին հեռացան ի Վենետիկոյ. բայց գեռ անկէ աւելի կային մինչեւ ի բարձումն Հասարակապետութեան։ Իարձեալ, զատ ի յիշեալ ընտանեաց և թերեւս աւելի թուով՝ սոսկական կամ ամուրի անտուն հարուստ վաճառականք եղած են. ինչպէս, Գուանտանոր Նահապետ, Սինան Պետրոս, Ազամիք Զանդ Անետիկ Քրդահայ, և այլ ոչ սակաւք։

Յիշեցինք տեղ մի (172-3) նաւատէր կամ նաւավար Հայերն ի Վենետիկ. առջիններն՝ նշանակեն նաև և անոնց վաճառաբեր և վաճառահան ըլլալը. այսպիսիք էին վերոյիշեալ Զանդն, (որոյ նաւն կոչուէր Spirito Santo, Հոգի Սուրբ), Շահումեանք և 'Նուրիք, որոց նաւք՝ Ս. Խաչ և Տիրամայր Շնորհաց, (Madonna della Grazia), Ասլան (Lioni) Պողոս, նաւն՝ Ս. Յովանէ Փուլսէփ. Պետրոս Սինան, նաւն՝ Galera S. Giorgio, (խալէ Ս. Գէորգ). Առաքէլ Գերաքեան, նաւն՝ Տիրամայր Խաղաղարար (Madonna della Pace). Միքայէլ Նեկրի,

Յովհ. Բեռնարդին, նաւապետ. ևն: Յովհ. Ալբերտինի, զոր՝ յիշող ժամանակագիրն իտալացեալ Հայ կոչէ (G. Albertini, Armeno italicizzato). յամի 1743 (մայիս 5) երբ տէրութիւնն ուզեց քաղջին մօտ ծովափանց վրայ ալեաց դէմ երկար ամբորտակներ կանգնել, հրաւէր կարդաց նաւատեարց՝ որ Նապոլիէն աւազահող (pozzolona) բերեն. ոչ ոք յանձնառու եղաւ, բայց միայն այս իտալահայն, մանաւանդ թէ Հայ-Վենետին: Արդեօք այդ ծովու բնածին ասպատակը՝ միշտ մեռնող կամ Նահանջ-բեկութ (ըստ Ս. հօր մերոյ Սահակայ Պարթեւի), յիշե՞ն իրենց դէմ պարըսպաց յատակ բերող Հայու մի երթեւեկն՝ նոյն ալեաց վրայ, ի միջոցի երկուց աննման հրաշագեզ քաղաքաց իտալիոյ, Նէապոլսի և Վենետիոյ:

Ե. Առաջին Հայ վաճառականաց նպատակն՝ յատուկ իրենց և իրենց բնիկ Հայրենեաց և ընտանեաց շահն էր. վերջնոց՝ (մանաւանդ յԳ Յեղանակի՝ որուն կանխաժամ ակնարկ մի կ'ընեմ), իրենց ընտանեաց ի նոր Հայրենիս, ի Վենետիկ. որոյ՝ ուրիշ կերպով այլ, արուեստներով և աշխատութեամբ՝ այլեւայլ տեսակ շահ, օգուտ և վայելք հայթհայթեցին: Ոմանք պէսպէս ձեռագործներով,

ինչպէս նախայիշեալ Ալեքսանեանն Եղիս և
անդրանիկ որդին Անդրոն, Յովհ. Ճիկը օղբու-
(յետոյ Figher իտալացեալ), և Առան Բար-
սեղ Հնդկակտաւի գործուածովք. Մելքոն Դա-
մին և Թովհան Մարտիրոս՝ Սեկ (յղկած կաշի)
շինելով. Թէոդորոս Մանուսի Շաքարի զըտարան
հաստատեց. զրեթէ ամենքն այլ ԺԼ դարու
կիսում. դար մի առաջ այլ (1670) յիշուի
պարզ ձեռնարուեստ Մարէսո ո. Պօղոսի՝ քարա-
քանդակ (Tagliapietra). Կէս դար այլ առաջ (1617) աւելի պարզ արուեստաւոր կօշկար մի.
Յովհ. Առիք, որոյ մականունն Ասորի լսուի,
բայց վկայուի Հայ և վաճառական կամ վա-
ճառող ըլլալ ի հրապարակի Ս. Մարկոսի,
և իր Եսէնիս որդին տուած յաշակերտու-
թիւն վենետ կօշկարի:

Շատք եւս ի Հայ-Վենետաց՝ աւելի քան
զձեռագործ մտագործ ճարտարութեամբ յա-
ջողուած և հոշակուած են: Ոմանք բժշկու-
թեամբ. ինչպէս շատ հեղ յիշուած Ալեքսա-
նեան Եղիայի որդին՝ Անժելյ, († 1796) և
թոռն՝ Դամինիսո Աղբաւանդը (1806 † 1870)
ծանօթ մեզ. — Յակով Հերմենեան, Մարէս-
Հայրապետեան, որ և վիրաբոյժ, և Պօղոս Մա-
նուել Շենքիան և Յովհաննէս Սեղբասեան, երի-
տասարդ վախճանած դարուս կիսէն առաջ
(1843): Ասոնց ուսումնարանն՝ Պատուայի

հաշակաւոր համալսարանն եղած է, և առ
ժամանակ մի բնակեր կամ հանդիպեր են
ի վենետիկ, ինչպէս և Կ. Պոլսեցի Շա-
շեանք, հայր և որդի (Մանսէլ և Պոլս)։ —
ասոնցմէ քիչ առաջ երեւի Սահով Զամյան։ և
շատ առաջ՝ Թովմա Թովմանուն։ Ասոնց հետե-
տղ ազգային թժիշկը՝ ուսանողք և պակեացք
ի Պատուա՝ եղան և կան նա և ի ներկայիս։

Գեղարօւեստից մէջ վարժեալ և հաշակեալ
Հայ-Վենետ մի չի յիշուիր Գ. Յեղանակիս
մէջ։ ի ներկայիս յիշած եմք մէկ մի, դարձեալ
յԱկեքսանեան զարմէն (տ. 495)։ — Այս Կ.
պոլսեցի զարմա՝ բաց ի այս երկու տեսակ
ձեռագործ և մտագործ ճարտարաց, ընծայած
է և ուրիշ մտաւոր՝ միանգամայն և բանաւոր
ճարտարներ, երկու Փաստաբան եղբարք (Ճ-
νօսէ) Խոռունք ազգապետ Եղիային։ Անորուն
Պետրոս Եղիս (1771 † 1845) և Պետրոս Եղիս
1772 † 1850). յետնոյս որդին Անորուն (1808 †
1858) նոյնպէս փաստաբան էր, և սա է հայր
քիչ առաջ ոյիշեալ լինճելոյ պատկերահա-
նին։ — Ասոնց ժամանակակից և հնագոյն
եւս փաստաբանք և օրէնսգէտք եղած են,
Մէրտէն Լէոնէ (Աւլան) (1750). Մէրտէն Շեհէ-
նան, անցեալ դարու վերջի կիսում. Մանուկ
Ալբերտ, ի սկզբան այս մեր դարուս։ — Ետքի-
նիս ժամանակակից (յառաջին կէս դարուս)

կըրնամք ուրիշ տեսակ մտաւոր ճարտար անուանել զՀամարող (Computista և Ragioniere) նոր տէրութեան այլեւայլ պաշտօնարանաց մէջ. Մանուկիան ցեղէն թէոդոր մի, Աբելիան ցեղէն Յհ. Մէտէն մի (ո. Թովմայի), և ասոր որդին Լուիջի (Luigi), որ հիմայթէ փաստաբան է և թէ ուսուցիչ իրաւագիտութեան ի լսարանի Բոլոնիայ քաղաքի, և մանր գրուածներ այլ հրատարակած է:

Ինչպէս գեղարուեստից՝ նոյնպէս և գեղեցիկ դպրութեանց՝ հոչակաւոր կամ յիշեցեալ Հայ-Վենետիկ շկան, բաց ի Շէհիմանեան ցեղէն մէկ քահանայէ, Տէր Զատարէտ (1708 † 1784), որ Ժ. դարու Վենետիկոյ գրագիտաց կարգը դասուած է: Գրուածքն աւելի երգիծաբանական և երգաբանական կըրնան ըսուիլ, որ և թարգմանութիւններ այլ ունի ի փռանկերէնէ: Թէ ասոր և թէ այս համառօտ ակնարկութեանս մէջ ամեն նշանաւոր Հայ-Վենետաց լիագոյն ծանօթութիւնն՝ վերաբերի Գ. Յեղանակին, եթէ երբեք ի լոյս ելնէ. բայց Զաքարիա իր տեսակին մէջ եղական անձ մի ըլլալով և միակ՝ մատենագիր կամ հեղինակ կոչման արժանաւոր ի համացեղսն, քանի մի տող այլ նուիրեմք իրեն ի ծանօթութեան (¹):

1. Սա ո. էր Աստուածատրոյ; ոյ . Մարգարայ, ոյ . մեծ

Իրրեւ մատենադիր յիշուած է մեր գարուս կիսում և Մորտո (Fortunato) Շէհրիման։ Այս աղնուական աօհմին ուրիշ կերպ և մեծ գրաւորական օգուտ արժանի է համարել՝ Ժէ դարու վերջին քառորդի մէջ ի Վենետիկ հաստատել տուած Սահրաբեն տպագրատունն, ուր Թաղէոս Երէց տպագրեց համբաւել մեծ ձաշոցը, յամի 1686։ — Քաղաքական տեւ սութեանց քննադատ դրող մ' եղած է՝ Վե-

Սահրաբայ՝ որ ի Սպահան ։ Հօրմէն շատ բան ժամանած չէ, այլ թէ ոչ աղքատորէն՝ շափաւորապէս ապրու և ։ Ի Գահանայական վիճակէն կը ընայ զուշակուիլ, որ նիւթական հարըստութեան փոյթ չունէր, այլ մասաւարական։ Թէ բանասաեղծ եղեր է, թէ փիլիսոփայ սուր մաօք՝ իր ժամանակին Վենետիկոյ անկման (թէ ըստ ուժոյ և թէ ըստ բարյականի) ընթացքը և գործող անձինքը գիտելով, և ուրիշ կերպ չկարենալով, երդիքանոք ուզեր է նշաւակել և այն կերպով խրառել։ Բայց զգուշութեամբ և իր անունը ծածկելով, յամի 1764 հրատարակեր է չորս փոքր հատոր, կեղծ ձանագորհորութիւնն մի Ենրիկո Վանոնդան (Wanton) է Թուրուորութիւնն կողից և Շնուկինց։ յորում այնքան հարտարութեամբ կու ծաղրէ կարծեցեալ գիտաները, քաղաքագէտաները, բժիշկները, ևն, որ քննաբանք գերագոյն դասած են զայն՝ քան զամենայն խոալացի փիլիսոփայական վիպասանութիւնս, և նախօրինակ Սուիֆթի կիւլիվէրի Հանապարհորդութեան։ Յատուկ գրուած մ' այլ ունի Բժիշկ և Բժիշկանիւնն անուանեալ, քերդուած մի Երազ Արէորէողունի ևն, ևն։

Նետկոյ տէրութեան տկարութեան վրայօք՝
ընդդիմաբանութեամբ, Գրէեռը Աղբուլնց (†
1789), որ Լեհաց թագաւորի լիազօր երես-
փոխան (Plenipotenziario) է եղեր ի Վենե-
տիկ, և մարկիսութեան պատուով ազնուա-
ցեալ։ Այս պատիւս ունէին և Սեղրոսեանք.
իսկ կոմսութեան և ասպետութեան՝ ՇէՀրի-
մանեանք, Մանուկեանք, Զանդ Աւետիկն,
ևն։ — Քաղաքագիտութեան, քաղաքային
վարչութեանց կամ պաշտամանց մէջ՝ ի յե-
տին յեղանակիս՝ շատք գործեր են, ինչպէս
կըրնան գուշակել տալ վերը յիշած համա-
րողքն։ Մինչեւ ի կէս մեր գարուա՝ Վենետիկոյ
ներքին վարչութեան (municipalité) այլեւ-
այլ ատենից և բարերարութեան տեղեաց՝

Մասամբ մի Վենետահայ Գրագիտաց և Հեղինակաց
կըրնանք դասակցել և զժանօթ Տէր Յուցու Յունիք՝
Հունչ մականուանեալն, որ շատ տարիներ ընակած է
ի Վենետիկ, ուր և † յամի 1691 (24 նոյեմբ.) 56 տա-
րուան։ շատ գրքեր հրատարակած է կրօնական և քե-
րականական, ի լատին, յիտալ և ի հայ լեզու, հեղինա-
կորէն և թարգմանօրէն։ զոմանս տպագրեր է ի Հռովմ
և ի Մարսիլիս։ այլ շատն ի Վենետիկ ի միջոցի տասն
տարիներու (1680—90), ի տպագրաբանի Պարպոնի։
որոց մէջ նորանշան է՝ փոքրիկ քերականութիւն մի
թուրք լեզուի՝ իտալական գրով և բացատրութեամբ։
Սահրատեանց տպագրատան մէջ այլ՝ զիսոկումն քրի-
տոնէութեան (1687)։

Հայազգի պաշտօնեալք կային, ոմանք ի Շէ-
հրիմանեանց և ի Սեղբռսեանց . ետքիններէս
Յակովը և իր որդին Յավիաննէս՝ մարկիսք՝ ա-
ռաջին դռնցք եղան Օսմանեան տէրութեան
ի Վենետիկ, դարուս կիսուն մօտ : Խոկ տռ-
ջիններէն՝ Մկրտչ Շեհրէման կոմն († 1851),
որ բանասիրական ճեմարանաց մէջ վայելուշ
ճառերօվ հաճոյ էր ունկնդրաց, յետ երկար
տարի քաղքիս բարերարութեան տեղեաց
ամենէն մեծին հոգցողներէն մէկն ըլլալու,
իրեն և իր մեծահարուստ ցեղին մացեալ
զանձուն՝ ժառանդ ըրաւ զնոյն տեղին . որ
կոչուի Իստիտո Մանին, յանուն Լոդովիկ
Մանին՝ Վենետիկոյ վերջին և զրկեալ դըքսին .
որ իր ստացուածոց մեծ մասը կտակեց՝ որբ
և աղքատ տղայոց և աղջկանց կրթարան մի
կանգնելու . որուն՝ յետոյ ուրիշ շատ անձինք՝
մասն ինչ իրենց ընչից թողուցին : Բայց քան
զամենն աւելի և քան զդուքսն իսկ՝ վերջին
Շէհրիմանն՝ ամուրի ըլլալով թողուց իր ստա-
ցուածքը, աւելի քան միլիոն մի ֆրանգաց
և քանի մի տուներ և խանութներ : Երախ-
տագիտութեան պարտքն՝ կանգնեց իրեն ար-
ձան և արձանագիր՝ Մանինի քով : Աա՝
կերպով մի իրմով մահացեալ վենետկեան
Հասարակապետութիւնն՝ անմահացընել ուզեց
իր կտակով . Շէհրիմանն՝ իրմով հաստատեց

և պայծառացուց զայն։ Կարելի՞ է արդեօք
այս Հայ-Վենետով՝ բուն Վենետաց վերջին
փարազին՝ փառազն պայագատ անուանել։

Վերջի յիշատակնիս քաղաքագիտաց վրա-
յօք ըլլալով՝ միանգամայն և Շէհրիմանեանց,
շմոռնանք այս ցեղէս նշանաւոր մէկն այլ
յիշել, եկեղեցական բարձր աստիճանով պա-
տուած, Տէր Բարսեղ մի, ո. Գասպարայ, որ-
դոյ մեծ Սոհրատայ. թէ և ծնեալ և †
(1766) ի Վենետիկ, այլ Հռովմայ քահա-
նայապետական տէրութեան մէջ 40 տարի
Ումբրիոյ և Պերունիոյ այլեւայլ քաղաքաց
քաղաքապետ եղեր է։ Վերոյիշեալ գրագէտ
Մուրատն այլ Աւստրիոյ տիրապետութեան
ատեն՝ Տրեվիս և Ուդինէ գաւառաց այլեւ-
այլ քաղաքաց պաշտօնակալ նուիրակ (Com-
missaire) եղած է երկար տարիներ։ Նոյն
Աւստրիոյ կայսերութեան բանակաց մէջ զօ-
րավար եղած է Շէհրիման մի եւս, Պողոս
Անդոն (ծ. 1720, † 1790)։

Բայց Հայ Վենետաց քան զայլ ամենայն
արուեստու և գործու՝ մեծագոյն և լաւագոյն
եղեր է կրօնականն կամ եկեղեցական. և
շատ անձինք՝ արք և կանայք նուիրուած են
այսպիսի սուրբ կոշման։ Ի պատմական կար-
գի գրոցս՝ յիշուեցան ի ԺԶ դարէ այլ՝ Հ.
Հումբէն ո. Մկրտչի Պարսկահայոյ (եր. 422)։

անկէ ոչ հեռի ժամանակաւ Եղբայր Յովան
Միջուն Անտոննեան կրօնաւորն (ա. 348). Ասկէ
հնագոյն՝ Տիրամօր եկեղեցւոյ մի աւտգերէց
յիշուի ՓԶ դարուն վերջերը, Գուադու¹ Անկէ-
ւոցէ, Անցորուս, որ շըսուիր Հայ, այլ
անունն կարծել տայ: Ասոր պէս կան քանի
մի երիցունք, որոց մականուն թէ Հայկական
է թէ վենետեան, որով անստոյգ մնայ
ազգութիւնն. իսկ ծէսն՝ յայտ է որ լատի-
նական էր, ինչպէս նախայիշելոցն և յետոյ
յիշելեաց: Այսպիսիք են, գերագոյնն աստի-
ճանաւ քան զտոհմակիցսն (Տէր Բարսեղ և
Տ. Զաքարիա)² Տէր Սուետոն Դոմինիոս Շէ-
կրիման (1729 † 1806), որ նախ Դոմինի-
կեան կրօնաւոր ըլլալով, հաւանութեամբ հա-
սարակապետութեան Վենետիկոյ՝ ընտրեցաւ
առաջ եպիսկոպոս Կաորլէ (Caorle) փոքրիկ
վիճակի, յետոյ Գիոնձիայ (Chioggia), ուր
բարի համբաւ թողած է: — Մանուկեան
ազնուական տոհմն այլ ընծայած է եկեղե-
ցւոյ՝ երեք պատուաւոր և արժանաւոր հա-
րազատ եղբարք, մին կրօնաւոր (Olivetano,
բենեդիկտեան) Հ. Պետրոս (1727—1775).
միւսն՝ Տէր Դոմինիոս (1715 † 1779) աւագ-
երէց Ս. Յուլիանոս եկեղեցւոյ, որոյ իրա-
ւանց ներքեւ է Հայոց Ս. Խաչի եկեղեցին.
— երրորդն՝ աւելի հոչակաւոր և արդիւ-

նաւոր, Տէր Յովեկէ (1720 † 1806) Կանոնիկոս
Տրեւիս քաղաքի մայր եկեղեցւոյն, որոյ և ե-
պիսկոպոսական աթոռոյ տեղապահ եղած է,
երկար տարիներ հոգաբարձութեամբ: — Ամ-
դեցի Ասլանեան Բարսղի երկու որդիք ըն-
ծայուած են յարեղայութիւն ի մեր վանս
Ս. Ղազարու. առաջինն՝ յետոյ սոսկ երէց
եղած է, Տէր Անդրն Լիոնի մականուանեալ.
երկրորդն՝ Հ. Գրէժորէ Լիոնեան՝ ի քարո-
զութեան † է ի կողմանս Ունկարիոյ (1804)
44ամեայ: — Աթաճանեան պատուաւոր տու-
նէն եղած է Տէր Պօղոս (1702 † 1759). —
Եաւրի տոհմէ տէր Յովհան (ծ. 1724 † 1799?)
հայածէս քահանայ. — յԱկան տոհմէ յիշուի
կղերիկոս մի, Անդրն, ի կէս Ժ. Դարու: —
Անկէ դար մի առաջ (1658) արդէն քահանա-
յացեալ էր Տէր Մէտրի ո. Յակովրայ, ոյ.
Սահակոյ: Իսկ նորագոյններէ, Տէր Յովեկէ
Մարիոնեան, կամ Ջուտուրեան (Valle ըստ իտա-
լացւոց) խոհական, ճարտասան, եռանդուն
աւագերէց Լորենձիս աւանի Պատաւիոնի,
(1754 † 1835), որոյ համբաւն կենդանի է
հօն մինչեւ հիմայ, և մեծ գովասանօք և
փառազարդ արձանագրեալ է յաւանդատան
եկեղեցւոյն. հրատարակած է և մանր գը-
րուածներ. մին է թարգմանութիւն կանոնի
Հարսանեաց մաշտոցիս Հայոց: Ատէպ տես-

նուած է սա Ալիքթարեան Հարց հետ . և
մէկ թղթին մէջ իտալերէն գրէ (1807) . Ես
հոգւով և սրտով բոլորովին Հայ և Հայոց
ևմ (¹) : — Ուելի եւս նորագոյն է մեծապատիւ
և մեծարդիւն Տէր Պետ . Սէֆէր , կանոնիկոս
Ս . Մարկոս կաթողիկէի , և վերատեսուչ պա-
տրիարքական կղերանոցին , ուր և հանգեաւ
յամին 1842 :

Յիշեալներէս տեսնուեցաւ՝ որ ոմանք նա
և կրօնաւոր էին , և ասոնց նման ուրիշներ
այլ եղած են , անուամբ և անձամբ ծածկուած
և ոչ յայտնուած ի վանորայս . որպէս , մէկ
Եղբայր մի Գոմինիկեան , ազգական և ժա-
ռանգ Պօղոսի Ալանեան (1786) : — Գուցէ
քան զառսա աւելի ծածկուածք ի մարդկանէ
և ծանօթք են իրենց նուիրընկալ Աստուծոյ՝
Հայ — վենետ կուսանս , յայլեւայլ կուսա-
ստանս , և շատք խստակրօնք (²) . որպիսի էր
յ' Ժէ դարու Զապէլ (տոհմն անյայտ) , որոյ՝

1. Sappiano tutti li Religiosi Armeni, che io
sono di cuore e di animo tutto Armeno e degli
Armeni.

2. Ասոնց կարգէն դուրս են արեւելեան սովորու-
թեամբ կուսակրօնքն առանձնացեացք ի տունս . որպի-
սիք էին ի Վենետիկ , Զենէլս Բարպարուն , † 1775 .
Բաղուած ի վասն մեր . ուր և Որո՞լո Ծովիպուն , †
1852 , և Զենէլս Ճիւր , † 1858 , և :

ազնուական կամ հարուստ տիկին մի՛ յամի .
 1666 կտակէ 40 ունկար ոսկի, անոր ընդ
 Փրիստոսի հարսնութեան (ուխտի) հանդիսին
 համար. (նոյն տիկինն ուրիշ Հայու մի եւս
 կտակած է 7 դուկատ): Բաջորդ դարուն (ԺՈ)
 ծանօթ են, (շատք առանց ընտանիկան մակ-
 անուանց, զոր կու թողուին՝ իբրեւ հրաժա-
 րեալք և մոռացեալք յաշխարհէ). Լարտ, դ.
 Գարագաշեան Յարութեան, առ Սալեզեանս,
 ուխտած յամի 1750. — Նոյն թուականին
 յիշուի կնդղաւոր կուսանաց կարգէ՝ Ռոդա,
 դուստր Մատթէի կարապետեան. — ուրիշ
 խստակրօն կուսաստանի մէջ՝ Թափուհի, դ. Նի-
 կողոսի, 1761. — Հեղինէ, քոյր վերոյիշեալ
 Տէր Յովսեփայ աւագերիցու, և Տրեվիս. —
 Մար. Երանուհի (Benedetta) յԱկան տոհմէ,
 կնդղաւոր, ուխտեալ ի 1784, † 1791. —
 Մարիանէ դ. Շէհրիմանեան Պօղոսի զօրավա-
 րի, կանոնիկոսուհի ի Գորիցիա. — ուրիշ Շէ-
 հրիման մ' այլ թաղած է (գուցէ իրեն ցեղէն)
 Դոմինիկեան հաւատաւոր մի, Կատարինէ 80
 ամեայ † յամի 1798. — Մեր (ԺԹ) դարուս
 մէջ յիշուած են Աբելիան քորք, Մար. Թէրեզա
 և Ճերոբուդու, կնդղաւորք (յԱմենասրբոց
 վանս, Ogni Santi). — Անեա՝ Աւեքսանեան
 առ Սալեզեանս, որոյ քոյրն այլ թափուհի,
 կնդղաւոր: — Ասոնցմէ առաջ նոյն ցեղէ և

աւելի խստակրօն կնգղաւոր ի Ա. Մար. Շնորհաց (alla Grazia) կղղւոյ, Եղիսաբէթ դ. Թովմայի Աբելեան (ծ. 1780), ուխտեալ ի 1804, ուր պատարագ մտառւցեր է մեր ուխտի աբբահայրն Ստեփ. Ագոնց : Միաբանիցս մէկն այլ գրած է յօրագրին . Սա « զամիսո բազում » պատերազմեալ ընդ աշխարհի , և յազդա- « հարեալ պղտոր հրապուրանաց նորուն , ե- « մուտ յայն երկնարնակ արգելան , (և եղեւ) » անուանեալ Մաքչամ Մաէդաղ » :

Ընդ սմին՝ ընկալցի Աստուած զամենեցուն սոցա Վենետահայոց ճգնութիւնս , վաստակս և արդիւնս , զկուսանացն և միանձանց , երի- ցանց և երիցապետաց : լինել յիշատակ բնիկ ազգույնոցն . և խնդրողի և յայտնողի յիշա- տակացս՝ ողորմութիւն և ներողութիւն նորին Աստուծոյ , և ներողամտութիւն՝ յորոց հաճոյ թուիցին այսոքիկ կամ ոչ :



ՑԱՆԿ

ԱՆՉԱՆՑ ԵՒ ՏԵՂԵԱԾ

— — —

- Արգար գրատիպ 209 · 336 · 436
Արդլմսեն ո · Հոռքոսի 398 · 448
Արդլքէրիմ ո · Արդլասատի 442
Արելեան տոհմ 493 · 500
Արիբեան բերիացի վաճառականք 479
Արբահամ Գ կաթող · 479
— ո · Յովե · Կզընկացի 341
— ո · Գաւթի 479
— Տրինդա հրեայ 480
Ագ և Գարա—գօյունլու Թուրք 184
Ագոնց Ստ · Արբայ Մխիթարեանց · 346
Ագսէրայ ՔՂ · 64 · 176
Աղամեան տոհմ · 500
Աղբիանա կ · Մարկ · Շահնշայ 413
Աղատ տոհմ Հ · ի Վենետ · 500
Աղարիա կաթղ · Սոյ 335
Աթահան Յակով 173
— տոհմ 493 · 500
Աթանաս եպիսկոպոս Արբահամեան 343

- Աւազ** թթ. Բիեմանգի 375
Ավեստանարի Վիճակ. գեղազան 370-2
 — **Ավետանեան** առհա 495. 500. 505
Ավիք Բաղաջի 112
Ավիկուանա. . . Լիվուանայ
Ավիսիս . . . Բ Լեռնի 98. 104
Ավիւս գետ 7
Ավուի Մէււէմէս 409
Ավոյիս Հայ 426. 472
 — " Մուբասայ 435
Ավպանիս 410
Ավսինոյ (Հին Վենետիկ) 22
Ավսիւան Բաղիշեցի 363
 — **Արզնցի . . . Տիւրի** 471
Ական առհա Հ . 500
Ակնէս դ . Զապլունի 90
Ահմէս Պալլի 294
 — **Թուվմաս թուրի** 313. 449
 — **Պէկպազարցի** 294. 403
Աղամալ Պետրոս 320
Աղամիրի Զանտ Աւելիս 502
Աղեքսանդր ո. Անդրեի 375. 442
 — **Անկիւրացի** 440
 — **Հայ ի Հոռվմ** 443
 — **Իսկէնտէր** 320
 — " **Շաւալաթի** 294. 373. 375. 400.
 438. 479
 — **յանցաւոր** 344
 — **տնպահ** 309. 334. 427
 — **Զուղայեցի** 375
 — **Վրաց իշխան** 332
Աղեքսանդրեակ (Իսկէնտէրուն) 25

- Աղկբսանդրիա** 134 · 432
Աղթամոր 203
Աղտուկան առնմ 500
Ահիսան Աղուկեցի 27
Ամազի Գասպար անպահ 200 · 487
Ամառի կոմս Տիրոսի 90 · 127
Ամիր (Գարահամիս), Ամէկեցի 429
Ամիրխեր Դիրջանեցի 194
Ամիրձան Եղընկացի 443 · 467
Ամուրաս Զուշ · 421
Այսա 33 · 50 · 67 · 75-6 · 91 · 110 · 124 · 128 · 429-
 30 · և այլն
Այիշէ Խաթուն 409
Այմէտին Եռւսուֆ
Այվաս Կիւմիւշեան 365
Անանիա Շիրակացի 19
Անգղիա 86 · 114
Անգոնա 149 · 300 · 313 · 441
Անդրէսս ու Յակովայ 467
 — — Յովէ · 469
 — — Ասամաթի 446
Անկիրոն Քշ · 470
Անկիւրիացիք 428 · 441
Անհելոյ Հ · 472
 — — Ակբսանեան 493 ·
 — — միւս 505
 — — Ասորի 26
 — — ու Ակրովէի 345 · 407 · 425-6
Առնդ - Անհելոյ լ բերդ Պուլիոյ 410
Աննա Ակբսանեան 518
Անտէրուն Աքրահամ 176
Անտիոք 13 · 134

- Անտոն Ական դպրություն** 513
 — Հայն, Սուրբիան 234 · 64 · 530 · 479
 — Ակեքսանեան 504
 — Զաքարեան 395
 — (Տէր) Լիոնի (Ասլան) 513
 — de Baséo 171
 — Ճեկէր օղու 505
 — Պետրոս Ակեքսանեան 505—6
 — Ս. Պատուացի 452
 Ս. Անտոնեան կրօնաւորք 348 · 352
Ապարամ Խոռոչայ 66
Ապարայիմ (Իսպահիմ) 446
Ապիք Յովիան 505
Ապուլիա ու Պուլիա
Ապտուլահեանք 495
Ապրային « · Ճիռմայ 446
Ապրոյ Հէլեպի 178
Առաքէլ Բոպիկ եպիսկոպոս 342
 — Գէրաք 502
 — « · Մէստէրի 400 · 442
Առնաւաս տեղի ի Հայս 491
Առներ կ. Ստեփ. Առանայ 456
Ասլան Պօղոս 502
Ասլանեան տոհմք 500
Ասլանվիւլ Կ. պօլսեցի 445
Ասորիք 13 · 28 · 216 · 429—30
Աստուածածին Շնորհաց վ. և կրօնք 422
Աստուածատուր ոմն ի սկիզբն Ժիշ դարու 452
 — « · Այտընի 446
 — « · Սիմէոնի 352 · 461
Ատանա քղ 69 · 316 · 429 (455—5)
 — Դամինիկոս « · Ցարութեան 315—9 · 402 · 419.

- Առանու Գրիգոր** 453 · 456
 — **Սահման** «. **Վասլի** 413 · 453-5
Առտիդաս 9
Արաբացիք 13
Արագոնա 124
Արարատ—եան երկիր 3
Արշնի 47;
Արմենիա Վէնետուհիք 390
 — **Թաղ Հռաւեննայ** 13
Արմենոյ բերդ «. **Նեկրոպոնդ**
 — **ծովապես** 391
Արշակունիք 17
Արտափ դեսպան 14-5
Արտաշէս Ա 178
Աւագ Շարգման 63-4 · 155
Աւետիք Եղբ · Օգոստինոս 155
 — **երեց** «. **Խաչակրաք** 22
 — **եպիսկոպոս** 344
 — **Զանդ** 509
 — «. **Խուտապաշի** 378 · 414
 — **Հալեպիցի** 380 · 467
Աւիշեննա բժիշկ 219
Աւիկի բերդ 66
Աքքեա քզ · 25 · 29 · 32 · 38 · 81
Բարատորոլի յոյն 461
Բարերդ 429
Բալասան Պետրոս 173
Բալերմոյ «. **Պալերմոյ**
Բաղեշ բաղեշեցիք 341 · 359 · 363 · 429
Բաղտասար գործակալ 406
Բասեն 66
Բասսա Ջուղ · 294 · 374 · 440

- Բարոկ առևմ 500
 Բարոկէլիքոսիս գույք 45
 Բարզողիմո Հ. կին 158
 Բարիդ. ա. Պարիդ
 Բարունակ առևմ 500
 Բարսեղ Ասլան 505
 — ա. Գառպարայ 514
 — Շեհիման 514
 Բեկոլովչի 56. 477
 Բենեդ ո. Յակոբայ (Սուրբուն) 345. 401. 425. 473
 — Զաքարիա դեսպան Ճենով. 85
 — Տարա անդան 494
 Բեռնարդինի Յովհաննս 459
 Բերխա. ա. Հալէոլ
 Բերսիան առևմ 500
 Բերսիվալ Ճենով. 75
 Բիծալոյ Պետր. 418
 Բոլոնիա քղ. 149. 160. 180
 Բոհեմիա 124
 Բուլիա տ. Պուլիա
 Բուօսյիտ Խան տ. Պուսայիդ
 Բրակա, Պրակա քղ. (Praga) 358. 459
 Բրեմարինոյ առևմ. պայլ. 37. 41
 Բրովարոյ քղ. Լրիմ. 65
 Բրինիս (Brinis) Նուար 408
 Բրուսիչ Պրաձկացի 462
 Գաբրիէլ Բաղիշեցի 314
 — ո. Կիրակոսի 457
 — (Տէր) ո. Անդրէի 410
 — ո. Կարապետի 473-4
 Գաղուին 354. 370
 Գալաքէկ Ջուզ. 410

- Գալիք (աղախիկը) կամ ստրուկք 439
 Գալուստ ու Մարկ Շահնշահ 419
 Գաևիրե քղ. 137
 Գամբիոյ Յովի Խոտար 69
 Գանալի առնմ Վենետ. Պայլ 37
 Գանձտկ (Կէնճէ) քղ. 357
 Գանցիտն Հ. առնմ 500
 Գասպար 381
 — Անկիւրացի աւագերեց 512
 — Տերվիշեան 357
 — ու Անտոնի 480
 Գասպարեան առնմ 500
 Գարագաշ ու Մուրասի 252
 Գարագաշեան առնմ 500. 315
 — Յարութիւն 515
 Գարս Եօլուդ Օսման 185
 Գարսէօզ Անկիւր. ու Գէորգայ 454. 466
 — Լեւոնի 463
 — Մարկոսի 419. 466
 — Յակովայ 466
 — Մուրասայ 466
 Գարտամիտ ու Ամիգ
 Գարտամանք 123. 130. 189. 429
 Գարս Միխայէլ Բուրք 405
 Գարսան անկիւրացի 441
 Գարտաղաշ Սիվրիհիսարցի 428
 Գարողոյ Պայլ, առնմ. 38. 44. 111. 460
 Գենուացիք (Ճենովա) 25. 31. 61. 71-3. 81-3. 90
 132. 377
 Գետաթաղ գղ. 458
 Գէրաբ-Միրման առնմ 501
 Գէորգ ու Աղաճանի 314. 457

- ԳԵՐԱԴ
— Առաքելեան ու Անդրէի 401 · 453 · 461
 — ու Անտոնի Զուղ 378 · 407
 — Բոսն Հայ Անտոնի 275–6
 — ու Առաքելի 425
 — Բոսն ԳԵՐԱԴԱՅ ԿԵՍԱՐԱՑՈՅ 503
 — ու ԹԻՇՈՂՈՐԻ 291 · 303 · 240 · 373 · 596 · 479
 — Գոբիլիոյ 200
 — Պը, Գորդ 480
 — Դամակացի 214
 — Կ պօլսեցի 381
 — Կարաւանապետ 289–90
 — Կրհուացի 448
 — ու Ցակովրայ 226
 — ու Ցովհանու 290 · 306 · 389 · 399 · 454 · 490
 — Մոտոնցի 453
 — ու Արճակայ 469
 — ԱԷրտար 357 · 378
 — Վաճառական յամի 1502 · 154
 — Տնուաչը 332
 — ի Հռովմ 378
 — ու Փանոսի 270 · 400 · 439
 — † մանուկ 473
 — † յամի 1553 · 472
 — ու Ականտարի 472
 — յամի 1564 · 472
 — Ա կողի 152 · 162 · 348 ·
 Գիարա Կ Հերոնիմ Հայոյ 418
 Գիուձիս կողի Աննետկոյ 514
 Գիրէը ու Աւետիքի 399
 Գնշուք (Չինկեանէ) 382
 Գոնդարինի տաճմ. 81 · 244
 Գոռնարոյ կատարինէ թագուհի 191

- Գորգ Պր.** և . **Գէորգ**
Գորիցիա (Gorizia) 515
Գործու 266–7 · 270 · 405
Գութէլ–թիմուր 129
Գութալէտախն շէյխ 64
Գուխտոն (կի) թէր · 127–8 · 157
Գուիրինի (Quirini) առևմ. 37 · 41
Գուլիելմ թարգման Հայ եղբայր 158
Գուղնազար Նահապետ 502
Գուպաթ Զուղ · 374
 — ռայիս նաւու 407
Գոքիւիոյ և . Գէորգ
Գրիգոր ԺԳ պապ 215
 — Ատանա և . Ատանա
 — Պասմաճեան պատրիարք 544
 — Աղաուենց 509
 — եպիսկոպոս 344
 — քահանայ (ԺԵ գար) 197
 — փոխարքայ Հռաւեննայ 12
 — ո . Թէոդորի 468
 — ո . Մարտիրոսի 378 · 407
 — Մուրատ ո . Յովսեփայ 438
 — † յամի 1553 · — միւս † 1564 · — 472
 — ո . Ըսկանդարի 472–4
 — ո . Սաեփանոսի 469
Հ · **Գրիգորիս Լեւոնեան (Ասլան)** 515
Դալմատիա 461
Դամակոս 216 · 228–9
Դանա քդ · 87
Դանիէլ ո . Տերմիջի 379
 — Զուղ · 407
Դաւիթ Ե · ԿԲՂկ · 345 · 354

- Դաւիթ պատրիարք Երուսաղ. 215
 — Եպիսկոպոս Կիսյոսի 205–6
 — “ Գուլամիրի 406
 — “ ուն յամի 1568 • 438
 Դաւեւ 66 • 185 • 205
 Դեմետր ո. Թէոդորի 461
 Դեսրինա Խոթուն 185
 Դերջան(այ պատերազմ) 190 • 194
 Դիեբոլոյ տոհմ 34 • 281 • 413 • 444
 Դուչէ Նիկոլ (Dolce) 491–3
 Դոմինիկ. տ. Առանա
 Դոմինիկոս (մարդասպան) 316
 — Ակրատնեան 508
 — (Տէր) Մանուկեան 512
 Դոմինիկեան կրօնաւորք ի Վենետ. 408
 Դոմինիչիլլա 375
 Դոնատոյ Հայ 202
 — Սուրբան Քրիստովոր կամ Խաչառուր 378 •
 411 • 419 • 443 • և այլն
 Դուին քդ. 8 • 13
 Դուլինոյ քդ. 202
 Դուրացցոյ քդ. 457
 Դրամք 29 • 53 • 118 • 270 • 485
 — Հայոց 56–60
 Դրապուն տոհմ 504
 Դրեվիզան տոհմ 118 • 268
 Եավտի Անկիւրացի 434
 Եաւրի տոհմ 513
 Եգէա 53 տ. Այսա
 Եգիպտոս (Սուլդանք) 89 • 109 • 117 • 125 • 133 • 136
 Եղեկիել Եղբայր Հ. 158
 Եղնկացիք 194–5 • 429

- Եղիա Հայ (ԺԶ դար)** 172
 — (Հաճի) Ակելեանեան 496 · 503
 — « Դոմինիկ Ասորի 345
 — Սարկաւագ 356
- Եղիսաբեթ Աքելեան** 515
- Եղիսաբեթ · դ · Յովհաննու** 474
- Եռինէ Յովհաննա Թագուհի** 107 · 112
- Երանուհի Ական** 515
- Երիշանենց տոնմ** 504
- Երուսաղեմ** 89 · 158 · 204
- Եւգենիոս ո · Ապիքայ** 505
- Զապել Թագուհի** 32
 — ի Տան Հայոց 158
 — կուսան 514
 — դ · Գևորգայ Կեսարացւոյ 292 · 298
 — կ · Մկրտչի Պարսկի 422
 — կ · Ղազարայ Շահնշահի 417
- Զապլուն դ · Թ Լեւոնի** 90 · 113 · 127
- Զատա ընկեր Խաչատրոյ** 461
 — « Անոնկի 403 · 466
- Զաքարիա եպիսկոպոս Ուստանայ** 337
 — (Տէր) Շէհիման 507
 — կ · պօլսեցի 381
 — (Ո ·) մարմինն և եկեղ · Վենես · 15
- Զիատ ո · Մելքիսեդեկի** 458
- Զմիւռնիա** 415
- Զուտա** 435
- Էմին ո · Էֆենտի** 332
 — Հ · 411
 — Պետրոս 363-4
 — Գեորգ 564
- Էմիրզէ Հ · 474**

- Եմիրճան** 400 · 445
Երգիռում (կարին) 8 · 64 · 429
Ենցիոյ Պետրոս տնպահ 487
Երիցցոյ տոհմ, պայլ 22 · 72
 — **տնպահք Հայոց** 486
Երևինա ու Ռէչինա կանէացի
Երտում ու Ստեփանոսի 470
Եֆէնտի ու Եմինի 352
Թագուհի (կուսան) դ · **Նեկու** 515
 — **Ալեքսանեան** 315
Թաղէոս Առաքեալ 329
 — **Կաթող.** 330—3
 — **եպիսկոպոս կաֆայ** 114.
 — **երէց Համազասպեան** 508
Թաթարք, Մողուք 147
 — **Ղրիմու** 64—6 · 89 · 98
Թաթարոյ Միքայէլ, Մարկոս, 53 · 71—5 · 89
Թայիպի Սիւլէյման 64
Թանկրի ու Յակոբայ 400 · 442
Թարգմանք Հայագէտք և իտալ. 215 · 220
Թերէզա Մար. Աբելեան (կուսան) 515
Թէնէքէսիդ Զուղ. 392
Թէոդորոս Անկիրացի 440
 — **կեսարացի** 294—2
 — **Մանուկ** 505 · 507
 — **(Ս.) եկեղ. Վենետ.** 42
Թէոդորեան տոհմ 501
Թովմաս պատրիարք կ. պօլսի 335 · 491
 — **միւս** 303
 — **Մարտինոս** 505
 — **եպիսկոպոս իտալիոյ** 160—1
Թովման 506

- Թովկմաս** քահանայ Հըսնբեկսի 346 · 575
 — Թուլրը քրիստոնեայ 313
 — Պերացի 480
- Թորոս** ո · Բ Լեռնի 87
 — գուքս Գուևդստապլի 76
 — Քարտուզար 32
 — Ուռհայեցի 453
 — Սսեցի (Թուրազ) ո · Սիմոնի 419 · 453-4
 — « · Կարապետի Ուռհ · 446
- Թուրազ** Սիմոն ա · Թորոս
- Թուրքը** Սէլչուկեանք 147
- Ժոֆրուա** 34
- Խղաղել** թագուհի Կիպրոսի 100
 — կ · Մկրտչի Պարսկի 422
- Խղնիմիտ** (Նիկոմիդիա) 459
- Խսա** ռայխս 480
- Խսահակ** փոխարքայ Հ · 42
 — Հրեայ 444
- Խսանան** ո · Ալանայ 470
- Խսկէնաէր** Զուզ · 373
- Խսմայէլ** շահ Պարս · 393
- Խւզէիզ** դան Պլիմ · 66
- Լամբրուն** 104
- Լաւրա** կ · Յակոբայ ո · Սիմոնի 395
 — (կոյս) Գարագաշ 515
- Լեզինա** քշ · Դալմատիոյ 450
- Լեհահայք** · Լեհաստան 445 · 459
- Լես** ՌԱլպանիտ 453
- Լեռն** Ա 20 · 25
 — Բ 21 · 31 · 81
 — Գ 90-2
- Լեռն Դ** 45 · 105 · 112-127

- Լեռն Ե 132-9
 — Հայկազն կայսր 18
 — Վահառական յամի 1302. — 134
 — Ժ Պապ. 383
 Լիոն կիրակոս 418
 Լիվոնոյ 232. 409. 498
 Լիւղինեանք 128-131. 190
 Լիւսիպպոս անդրիակործ 17
 Լորենցիս աւան 512
 Լուդվիկ Արելեան 807
 Լութֆի Տէրվիշեան 357
 Խալէ (Galea) . . . Նաւք
 Խայիր, Խայրի, Գայրի ԶԴ. 370. 439
 Խաչատուր Կթղ. Սայ 179
 — . . Գարանայի 466
 — . . Ապտուլանի 438
 — Զատէ . . Սիմոնի 447
 — Դաւրիժեցի 222-7
 — Եթովպացի Հ. 227-33
 — Թովմայեան քրիստոնեայ 396
 — Թագուրցի 446
 — Հռոմկայեցի 378
 — . . Յովհ. Տէրզեցոյ 210
 — Քաղդէացի 500
 Խաչակիր 21. 26
 Խաչատուրեան առևմ 801
 Խաչիկ . . Սէֆէրի 379
 Խարիսպեան . . Ղազարու 357
 Խնդրակատար Աստուածածին Բաղիշ. 341
 Խուտտապաշի Դաւիթ ԶԴ. 410-11
 Խտըր Հ. 471
 Խտըրպալի 355. 408

- Խօճամալ կամ խամալ 445
 Մանեի յոյն թեսազոնիկեցի 409
 Մանեխնի di Scola (կտակ) 151
 Մատուր ո. Յովհն. Եղբակացի 398. 447
 Մարուկ տում 501
 Մենոյ կատարինոյ 188
 — տում. դուքս 52
 Միանի Մարկ. Աերաստ. 4. 22. 143-8. 384. 481
 Մուեգա ո. Ճիւտեգա
 Կաղալանց 85
 Կածարոյ Սահփան 300
 Կամենից քղ. 459
 Կամիլոս Մելգոն թարգման 492
 Կայուֆա թաղ Վենետ. 382 397
 Կանէա քղ. Կրետեայ 437
 Կաորլէ (Caorle) տեղի 511
 Կաստիլիա 436
 Կատարինէ գ. Յակ. Մէրտին. 314
 — գ. Մկր. Պարսկի 425
 — կ. Մարկոսի Մուրասայ 408
 — ո. Գոռնարոյ
 — (կուսան) 515
 Կարապետ Բաղիշեցի 210
 — ո. Բարսղի 343. 378
 — ո. Կիրակոսի 454
 — Եպիսկոպոս Կեսարիոյ 543
 — Եպիսկոպոս Մելքեան 344
 — Ամդեցի սարկաւագ 359
 — ո. Յովմայի 344
 — ո. Նասիպի 93
 Կարկառ քղ. Ի Հայո 399. 429
 Կարնոյ քղ. 8. ո. Երզիոռում

- կաւոյ կարգասոց ճռ յԱյս 73
 կաֆուցիք 136 · 173-4
 կեռն գդ · Սիմեոն 500
 կելլա Թեսէսս 460
 կեռաբիտ 429
 կեփալոնիտ 14
 կիր. — Գուշան
 կիլիկիտ 21 · 26 · 178 · 189
 կիպրոս 57 · 85 · 100 · 113 և ոյլն. 204-6, յահակ
 կիրակոս ԶԴ · 375
 — Արքիչիսաբյի 406
 — — Լիոն
 Ս. — Անապա — 195
 կիւրիստուս 95
 կղեմէս Պապ Ե · Զ · 128
 — Ը · 250 · 280
 կոնտարինի, Contarini, առնմ 386 · 459 ·
 կոնտուզ ո · Ամիրի 370 · 439
 կոպիտառ 95
 կոռիկոս 73 · 86 · 130 · 190
 կոստանդ Հ · 484
 կոստանդիանոս 17
 կոստանդին Բ թգր · 128 · 132
 — թագաւորանյը 32
 Կ. Պոլիս 17 · 87 · 182-3
 կով կովի (Լանկոյ) 178
 կորնթոս 253
 կորոն 99 · 104
 կուիրինոյ առնմ, գեսպան 37 · 91
 կուկիստն Յոյն Թօխադյի 443
 կուկլակ 104
 կրատենիկոյ գոռնմ 99

- Կրտսենիկոյ Բարդողիմ.** Դուքս 125.
Կրետէ 476-8
Կրիմանի տռնմ. 38 · 45 · 108 · 297
Կրիմալոյ Լուգեդզոյ Ճենով. 73
Հալէպ-օլիք. գունց Վենետ. 429 · 464
 — **Սուլտանը** 130 · 216
Հայախաղակը 7
Հայաստան. Հայք 3, և այլն
Հայք յիսալիս 14 · 193, և այլն
 — **ի Հռովմ** 193, եւս տես **Հռովմ**
 — **ի Վենետիկ** 24 · 143 · 173 · 329, և այլն
 — — **Բնակարանը** 322 · 584 · 587
 — — **Ըստանիք** 476 · 496 · 592
 — — **Տուն** 23 · 143-8 · 192 · 157 · 584-6 ·
 390 · 481-94
 — — **Տնպահը** 300 · 287
 — — **Եկեղեցի Ա. Խաչ** 148-55 · 180 · 199 ·
 385-7 · 390 · 512
 — — **Եկեղեցականը** 510-3
 — — **Եղբարք** 151 · 156 · 159
 — — **Կուսանք** 515-5
 — — **Սահմանադրութիւն** 383-5 · 494
 — — **Կամուրջ** 143 · 199
 — — **Գերեզմանը** 152
 — — **Թարգմանը** 215-21
 — — **Գրադէաք** 507-9
 — — **Սանսէրք** 392
 — — **Փերեղիկը** 389
 — — **Եպիսկոպոս Իսալիոյ** 160
 — — **Բժիշկք** 505-6
 — — **Ղաւաստիք** 273-7
 — — **Յանցաւորք** 154

- Հայք ի Վենետիկ Աղդահամար 175-6
 — — Վաճառական տունք 499-505
 — — Տպագրութիւն 207-15
 — — Օրէնսդէմ 306-7
 Հայրապետ Տ. Եղիազարի 348
 Հայրապետեան տոհմ 504
 Հանովէրի կոմի 114
 Հաստի Զէլէպի 409
 Հեթում Ա. 32-4. 80
 — Բ 82-90. 104
 — ա. Դ Լեւոնի 127
 — Աւագ Պարոն 77
 — Պատմիչ 73. 93. 99. 101. 105. 113-4
 — Ջամբուլայ 111
 — Նորոյ աեր 100-2. 105
 — Սենեկալ 105. 111
 — (յանցաւոր) ի Վենետ. 154
 — d'Oria Գենուացի 72
 Հեղինէ վատահամբաւ 504
 — կուսան 515
 Հենեաք 7
 Հերմէթեան տոհմ 494. 504
 Հերոնիմոս Հ. 418
 Հըսնքէյֆ. 429
 Հիզու քղ. 458
 Հոգետունք Հայոց յիտալ. 148. 180. 193. 478
 Հուգոյ (Եղբայր) պատգամաւոր 114
 Հոաւեննայ Հ. Փոխարքացի 12-3
 Հոեմիդ ո. Մկր. Պարսկի 422. 511
 Հոռմլլայ 86. 429
 Հոռվմ (Հայք ի) 193. 210. 328. 416. 444
 Հոռքոս ո. Ալոյիսոյ 448

- ՀԱՌՈՅՔԻԿՈՍ** Պորտուգալացի 470
ՂԱՂԱՐ Անմարմին Եպիսկոպոս 343
 — — Յովհաննու Սիսիանցի 360 · 578 · 407 · 443 ·
 453 · 460
 — Շահնշահ 402 · 412 · 417
 — Պարսկահայ 306 · 405
 — — Յովհե Ասորի 425
Ս · — Կղզի 23.
ՂԱՂԵԼ 431 · 4
ՂԱՓՄԱՆՑԻՔ 428
ՂՐԻՄԵՑԻՔ 64 · 6 · 181
ՃԱՆԻՔԵԼ 314
ՃԵՆՈՎԱ ա. Գենուա
ՃԵՐԱՐԱՆԴԱ Աքելեան (Կուսան) 513
ՃԻԱԿՈՄԵՆՆԱ բերդ Սերվիոյ 468
ՃԻԱՆԻ ո. Նիկոլի 406
ՃԻՎԻ պայլ և տոհմ 37 · 40
ՃԻԿԵՐՈՎՈՒ տոհմ 501
ՃԻՇԱՆԺԱՀ 194
ՃԻՐԱՐՄԻ սանսէր 410
ՃԻՒԱՆ Լիւզինեան 136
ՃԻՒՍԴԻՆԻԱՆԻ տոհմ 37 · 40 · 226
ՃԻՒՏԵԼԱ մասն Վենետիկոյ 244 · 321 · 425
ՄԱՎԱՆՈՒ Անկիւրացի 406
ՄԱԼԻՔԻԿԵՐՈՅ տոհմ պայլ 34 · 45 · 71 · 111
ՄԱՆՈՒԴ գաւառ Եթովպ. 324
ՄԱՄՐԻ Կիպրացի հրեայ թարգման 220 · 285 · 480
ՄԱՄԽԱԿԱ ա. Մոխ
ՄԱՆԻԽՆ, վերջին գութս Վենետ. 510
ՄԱՆՈՒԵԼ Պր. դեսպան 54 · 135 · 154
 — Զուղայեցի 410
ՄԱՆՈՒԿ Ալբերտ 306

- Մահուկեան առևմ** 504 · 507 · 511
- Մասա բժիշկ** 219
- Մառլադրի հեղինակ** 63 · 104
- Մատթէոս ու Գէորգոս Հացակործի** 397
— Կարապետեան 515
- Մատրիս** 139
- Մարդար ոմ յամի** 1584 · — 434
— (Տէր), Հայր Տէր Յակովայ Խուիրակի 356
- Մարդարիս կ. Ցոլիւ Կաֆացոյ** 174
— Թագուհի 139
- Մարդեղինի Յակոբ Խօսար** 156
- Մարենտի գործակալ Հայոց** 18
- Մարթա կ. Անտոնի ո. Բաբովի** 172
- Մարիանէ Շեհրիմ. (Կանոնիկոսուհի)** 515
- Մարին Լէոյ Խօսար** 455
- Մարինյ ա. Սաֆուլյ**
- Մարիոնի Խօսար** 450
- Մարկար լեռ** 526
- Ա. Մարկոս Աւետարանիչ** 16 · 68-72
— եկեղեցի Վենետ. 196 · 229 · 170 · 196 ·
164 · 434
— Հրապարակ 318
— Երիվարքն պղնձիք 196
— եկեղ. Այասոյ 43 · 68-74-2
— եկեղ. Առանց 141 · 327 · 329
- Մարկոս Թարգման** 217
— ո. Գէորգոյ Բաղիչ · 366
— Անտոն ո. Հայ Անտոնի 413
— Հայրապետեան 504
— ո. Յակովայ սանսէր 335, 402-12
— միւս 294 · 297 · 377-8 · 403 · 411
— Յովհան առևմ 504

- Մարկոս** ու Յովեաննու Շահնշ. 389. 407. 412-7. 425
454
- ո. Պետրոսի 444.
 - Պօղոս աշխարհապիր 9. 99
 - ո. Պօղոսի 505
 - a Vilatis 425
- Մարկոսեան տոհմ** ո. Զուգուրեան
- Մարիամ** թագուհի Հ. 132-6
- Տնպահ Հայոց 157-64. 477. 485
- Ա**. — Խորոսիկ Եկեղ. 513 ո. Վենետիկ
- Մարտիրա** ԶՂ. 372
- Մարտիրա** — ացիք 74-8
- Մարտիր** տոհմ 501
- Մարտիրոս** Եպս. Եզընկայ 194
- ո. Լորենցոյ 224
 - Ուռնայեցի ո. Գաբր. 454-5
 - ո. Կարապետի 417
 - ո. Պետրոսի 438. 452
 - տուն վարձող 323
 - ո. Վէլինանի 388
- Մարտիրոսեան տոհմ** 501
- Մելգոն** ո. Յովհ. 306. 414
- Դաւիթ 504
 - ո. Փիրումի 416
- Մելիտոն սարկաւագ Ստանողի** 452. 491
- Մելքիսեդ** Կթղկ. 356. 345. 351
- Եպս. 336
 - ո. Cedrin 457
- Մեսանե** 232. 313
- Մեսարէ** աւան Վենետ. 304. 307
- Մետիլինէ** 178
- Մերէնտի** Նիկոլ 400

- ՄԵԼԻՔՅԱՆ** «. Մուլտաֆ 382
ՄԵՊԼՄ գլ. 307
ՄԵՐԱԷՆՅԱՆ եղբնկացի 400 . 445
ՄԵՐՈՒԻՆ—ԱՑԼԻՆ 308 . 429
ՄԻՆԱՍ Փէրվազեան արքեպիսկոպոս 343
ՄԻՆԱՍԻԿԱՆ առնմ 504
ՄԻՍԱՎԵԱ 375
ՄԻՐԱԳ կամ Միրագ 189
ՄԻՐՋԱ «. Աղաւանի 387
 — արքայորդի Պարսից 374
ՄԻՐԻՀԱՆ Բաղիշ . 314
 — Զուզ . 372
 — Պարսմանցի 445
ՄԻՐԻԽ Պարսիկ 419
ՄԻՐՄԱՆՆԵԱՆՔ 496
ՄԻՐԱՅԵԼ «. Աղաւանի
 — «. Դոմինիկոսի 446 . 459
 — Եղբայր 158
 — «. Եղիայ 402
 — «. Զաքարիայ 397 . 446 . 460
 — «. Յովհաննու 459
 — Քահանայ 158
 — Յոյն Քիոսացի հայագէտ 438
ՄԻՐԱՅԵԼԻԿԱՆ առնմ 504
ՄԻՐԻԵԼԻ առնմ 71
ՄԻՒԹԱՐԵԱՆՔ 24 . 343 . 389
ՄԿՐԹԻ Աքելեան 307
 — «. Մարտիրոսի կրօնաւոր 347
 — Լէոնի 506
 — «. Յուլիոսի 406
 — Շենքիման կոմս 510
 — — միւս 506

- Մարտէ** Պարսիկ 200 · 288—314 · 417—25
 — Կրօնաւոր Անտոնեան 512
 — (Տէր) ո · Յակոբայ 515
- Մաթոն** կամ Մոտոն 401
- Մոլին** Պետրոս գունց Հալպայ 430
- Մոնղելիէ** · Մոնղուզք 444
- Մոնղիւոն** 404
- Մոշենիկոյ** դուքս, առնմ 90
- Մորողին** առնմ, պայլ 37 · 42 · 75 · 102
 — Թրանչ · դուքս 179
- Մուլպարէքշան** ո · Գատըքշանի 398 · 448
- Մուսդաֆա** անկիւրացի 451
- Մուրան** կղզի Վենետ · 308 · 373
- Մուրատ** Անկիւրացի 204
 — Բարանակ, առնմ 504
 — Զուղ · 375
 — ո · Կոսսամայ 469
 — ո · Մարդարայ 469
 — ո · Տէօվլէթի 406
 — Բանտարգել 449—50
 — Շէրիման 507
- Մուրէվէլի** ո · Յակոբայ 374
- Մոխս** 27 · 30—1 · 94
- Յակով** ո · Առաքելի 345 · 400 · 442
 — ո · Ալոյիսի 435
 — Ասորի 345, 401 ·
 — Գալուստեան 320—1
 — Պարոն ի ԺԵ Դարու 180 · 484
 — Թարգման 415
 — ո · Խըբահմի (Մէրտինցի) 439
 — ի Հոռվմ 354 · 398
 — Ղազար ո · Մարկ · Շահնշան 415

Ց-Կոմք Հերմեն 503

- կառակատար 158
- Հ. Gentile 441
- Տէր Մարդությ 344. 347. 350
- Մէրժինել 308-15. 433. 480
- ո. Մարկ. Մուրասոյ 402-12
- ո. Մարկ. Մ. Շահնշահ 412-7.
- ո. Մելգոնի 469
- ո. Ցովհաննիսի 434
- ո. Ասհակոյ 522
- (Տէր) Հոլով 509
- ո. Արմանի Տնպահի, պահսէր 395. 436-7
- Արդբոսեան 510
- ո. Ստեփ. Ասանայ 456
- ապագըռղ հին 208
- Jacolato 419
- † 1576. — 438. 473
- ի Հայոց տան յամի 1577. — 438
- ո. Տաւութի 479

Յակովիսեան տոհմ 301

- Յարութիւն բասենցի եպիսկոպոս 343
- Նէոկեսարիոյ եպիսկոպոս 343
 - Միրիճան 457
 - † ի 1574. — 472

Յովասափ Փափազեան 365**Յովհան** (Տէր) Եաւրի 513**Յովհաննէս** Իթ պապ 114-6

- Ալբերտինի Հ. 303
- Բեռնարդինի Հ. 505
- Եպիսկոպոս 343
- Անտոնեան կրօնաւոր 403
- Բիինձ Անտիոքոյ 134

Յովհաննէս ու Գալուստի 465

- Եղինկացի ու Ղազար 407
- ու Թէովորի կեսարացի 300
- Հ. ի Վկնեա. ի ԺԴ գարու 174
- ու Խաչարոյ, սանսէր 393. 446. 448
- Խնդրող սանսէրութեան 395
- ու Կարսազեափ 374. 440
- Կաֆացի 174
- Ճիկէր 504
- Ճանիբէկի 398. 457
- Համադասպայ 399. 448
- Մարկոսի (մանուկ +) 475
- Մելքոնի 410
- (Տէր) ու Զաքարիայ 346. 381
- Նիկողօսի 406
- ոսկերիչ ի Հռովմ 398
- սանսէր Թուրքաց 395. 399. 475
- Սարգսի Սսեցի 446-8
- Sancti 399
- Սեղբոսեան 510
- Յակոբայ 505
- Ստեփանոսի 454
- Սուլիան սանսէր 404
- Սիմոնի 389. 442
- Պապայ ԶԵ. 379
- (Տէր) Տէրպնցի 210. 316
- Տէովլէթի 370
- Տէովլէթքեարի 400. 439
- Քաղդէացի 338. 404
- Քանանայ պարսկանայ 491
- սպասաւոր Զաքը. եպիսկոպոսի 337
- † ի 1574. — 472

- Յովհաննէս** † 1598. — 475
Յովհան եպիսկոպոս Սեբաստիոն. 343
Յովոաֆաս Պարզաբոյ 189
Յովոէփ ռ. Հայ Անտոնի 189. 265—74
 — **աղքատ Հ.** 198
 — **Անկիւրացի** 440
 — “. Գրիգորի (Երկրամատը)” 307. 388. 448
 — “. Դոնաույ 465
 — **Հռոմեացիցի** 364
Տէր — **Մանուկեան աւագերէց** 513
 — “. Յովհաննու (Երկրամատը)” 309
Տէր — **Զուգուրեան աւագերէց** 513
 — “. Բասսայ 375
 — **արքեպիսկոպոս Ջմիւլիոյ** 343
 — **Jaconi** 447
Նաբոլի 252
Նասիպ, **Նասուալ Ջղ.** 374
Նասրէտափին չէլէպի 471
Նատալին առնմ 502
Նարենտա քղ. **Պոսնիոյ** 454
Նաւարրա 124
Նաւք (պէսպէս) 48. 55. 236. 242. 247. 256
Նաւասեարք, **Նաւասափ Հ.** 172—4. 504
Նեկրի Միքայէլ Հ. 502
Նեկրոպոնտ 102. 107. 176—8
Ներոն 17
Ներսէս Պատրիկ 11—3
 — **արքեպիսկոպոս Բաղիշ**. 341
Նիկոլ սարկաւագապետ Տարսոնի 140
Նիկոլա Նիկոլեան 486
Նիկողոս ռ. Գէորգայ 401
Նովելլի Ամբոս. 454

- Նորատունկեան տոհմ 302
 Նորէս թարգման 421
 Նուրի տոհմ 502
 Նուրում ո. Փիրումի 398. 447
 Նօտարք վենետիք ի Սիսուան 68
 Շահ Աբաս 355-5
 Շահ Իսմայէլ 203-5. 258
 Շահնշահ Սեբաստ. 412
 Շահոլի Զդ. 210
 Շահ Սէֆիք 202
 Շահումեան տոհմ 502
 Շաշեան բժիշկը 506
 Շաւալաթ Հալեպցի 373-4. 400
 — Զդ. 294. 373
 Շէրիմանեանք 390. 495. 502
 Շիրին Սեբաստացի 361
 Ոթոն Պրունզվիք 135
 Ոսկան Պետրոս 200
 — տոհմ 302
 Որոտնայ Ճոր 458
 Որսոլա Ծովիդեան 514
 Ուղինէ Քդ. 514
 Ուզուն Հասան 141. 185
 Ուզուդ Խօճա Զդ. 410
 Ուխաթան կամ Յովեաթան 442
 Ուկոլինոյ դեսպան 91
 Ուզուրլու Գալուստ 300
 Ումբրիա գաւառ Խոտալ. 478. 511
 Ունիթորք 156
 Ուզուդք 463
 Ուրբանոս Ե 132
 Չալալրան դաշտ 205

- Զեմլիա գ. Գէորգոյ Թէոդոր. 396
 — Խնամի Մկր. Պարսկի 422-3
 — Բուզայեան 514
 — Ճիկեր 514
Զէլսի Յովհ. 306
Զիվիդա Նովա ա. Պրավադա
Զիվիդա Վեդիկիա 478
Զիվրան Հերոնիմ, անպահ 688
Զուգուբեան տոհմ 502
Զոլադեան տոհմ 502
Պաղէոյ ա. Անտոն
Պալի 322. 414
 — «. Աէքէրի 467
 — «. Յակովայ 448
Պալոմբարա 480
Պաֆիլի Մարկոս 74
Պալտուչի ա. Բեկոլոգի
Պաղտասար 434
Պայլք Վենետիկոյ ի Հայս 25. 35. 67
Պանդրատ (Բանդրատ) պայլ 84
Պապանան տոհմ 502
Պասսուար վաճառական 65
Պասսա ա. Բասսա
Պատոէր տոհմ 28. 36. 40. 281
Պաստամեանը 458
Պատուա 12. 306. 451
Պարիզ (Paris) 139
Պարպարիկոյ տոհմ 38. 44. 191
 — գիւղ 307
Պարպարոյ տոհմ 278
Պարպինի Ֆր. սահսէր 413
Պարսիկ, Պարսկաստան 372

- Պարսկահայք ու Հայք 429
 Պաւլա Պրէանի (Վենետ) 467
 Պավլագոնացիք 7
 Պեղարոյ (Pesaro) քղ. 205
 Պեմունդ ու Ճիւանի 151 · 155
 — Եղբայր Կի թագաւորի 128
 Պեմպոյ Կարդինալ պատմիչ 200-4
 Պետրոս Ա. թագաւոր Կիպրոսի 150
 — Եղիս Աւեքսանեան 506
 — Եպիսկոպոս Եթովպացի Հ. 324
 Հ. — Մանուկեան 512
 — Խաւապետ Հ. 175
 — Քահնանայ գարամանցի 445
 — ու Յուլիոսի 405
 — Նախճաւանցի 290
 — Ոսկան 492
 — Տէր—Սէֆէր 514
 — տուն Վարձող 325
 — Ժառանդ Յովհ. Գալըստեան 465
 — Պետրոս Պօղոս 468
 — Սինան 302
 Պերուժիա 160
 Պէկ ու Մարկոսի 439
 Պէրտի պէկ զան 63 · 129
 Պիանդիվալէ գեօղ. 295
 Պիաչենցա 77
 Պիզա 61 · 74
 Պիլարկու թաթար 98
 Պիլեմոն 7
 Պոլոնիա ու Բոլոնիա
 Պոնտումիէր Թոովմաս 95
 Պոսնիա 401 · 450

- Պորտի գունց Պիզացւոց 74
 Պորտոգալացիք 470
 Պորտոգրուարոյ (Portogruaro) 507
 Պուլիա (Puglia) 410
 Պուռայիդ դան 66
 Պուտախս սրկւդ Թովեադիք 547
 Պրիմոս տնօպահ 487
 Պրալիա (Praglia) 306
 Պրակատին պայլ, տոհմ 58 · 45 · 64 · 117
 Պրացցա ի Դալմատիա 462
 Պրեմպանա դեօլ Պերկամոյ 295
 Պրունզուիք 455
 Պրուսա 428
 Պողոս ու Բաբողի 377 · 414 · 466
 — Աթահան 513
 — Կեսարացի 402 · 405 · 420, 457
 — Շաշեան 506
 — Մանուէլ Շէրիման 504
 — Անտոն Շէրիմ. 514
 — ու Յովհաննու 454
 — Առանեան 514
 — Պալի 414
 — Վաճառական 407 · 460
 — Պետրոս 468
 Ջանեցիք 516
 Ջուզա Հին և Նոր. Ջուզայեցիք 358-368 · 380
 Իակուզա 278-80 · 456
 Իամազան քղթագետ Սուլդաթայ 64
 Իասան, տեղի 337
 Իեկանաթի քղ.
 Իեմինա 457
 Իեմունդ դեսպան Գ. Լեոնի 413

- ՈՒԽԹԱ գ. Բ ԼԵԿՈՆԻ 88**
 — **ԱՆԴՐԱՑԻ**
ՈՒԽՄԻՆԻ քզ. 149
ՈՒԽՏԱԳԵմ փաշայ (ի կես ԺԶ դարու) 452
ՈՒՌՋԱ (Կուսան) դ. ՄԱՍԹ. Կարասկետեան 515
ՈՒՌՃԵՐ անդղ. Նաւապետ 409
ՈՒՌՈՄԱՆԻՒԱ 74
ՈՒՌՈՄԵՐ Հ. աղքատ 198
ՈՒՌՈՄՈՒՄ Հ. Նաւապետ 173
ՈՒՌՈՒԲԻՆԱ դ. ԱԽԹՈՆԻ ՏԻՆՊԱՇԻ 298. 596.
 — **Թռոնեայ ԳԵՇՐԳԱՅ ԿԵՍԱՐ. 295. 505**
ՈՒՌՈՒԲԻՆԵԱՆՔ 20. 109. 136. 192, ևն.
ՈՒՌՈՒԾՃԻՆԻ 70
ՈՒՌՈՎԻՆԻ վաճառականք 61.
ՍԱԼՏԱՆՈՅ դղ. ՆՈՎԱԼԵՒ 296—299
ՍԱՆԻԱԿ Եպիսկոպոս 543
 — **Չամչեան 506**
 — **(ՀԱՅՐ) 346. 352**
 — **ՏԵՐ—Մաղպետն 485**
ՍԱՆԻՐԱՄ ՇԵՇՐԻՄԱՆ 507—8. 511
ՍԱՆԴԱ ՍԵւերինա կարդինալ 554—6
ՍԱՆԴՈՅ Գամբոյ անպահ 489
ՍԱՆՈՎՈՏՈՅ առմ 37. 41. 76. 112
 — **ԱՆԴՐԵԱՍ 41**
 — **ՃԻԽԱԳԻՆԵԱՆ 64**
 — **ՄԱՐԻՆՈՅ 115. 204**
 — **ՑՈՎԱԿԻՄ 102**
 — **ՏՈՐՃԵԱՅ 113**
ՍԱՆՍԵՐ 285
ՍԱՆՏԻ պատմիչ 145
ՍԱՎԻԿԻՆՅԱ ԿՊՊԻ (Sapienza) 391
ՍԱՌԱԿԻՆՈՍՔ 125—6

- Սորովուէ կամ Սորովույ** առանք 457
- Սորդիս Սոսաք եղիսկոպոս** 345
 — սորկաւագ անկիւրացի 559
 — † յամի 4470 · 472
- Սորուխան** առ Յակովյայ 505
- Սոփար** առ Աէֆէր
- Սոզոբիս** առ Սկոռիս
- Սեբաստիանոս Նիւնի** 22
- Սելեւկիս** 190
- Սեղբոսեան առամ** 495-6 · 502 · 503 ·
- Սերենաիզ Կողի** 222
- Սերին անկիւրացի** 441
- Սերովը** առ Գէորգայ 453
- Սէլիմ սուլտան** 205
- Սէֆէր** առ Պալի 416
 — Տէր Պետրոս կանոնիկոս 512 ·
 — Բաղիշեցի 363
 — Եղնկացի 341
 — Յովհ. առ Յակովյայ 409 · 469
 — Ֆրանչիսկոս 502
 — առամ 504
- Սիենա** 74 · 160
- Սիկ բերդ** 190
- Սիկելիա** 149 · 470
- Սիմոն եպիսկոպոս Գաղատիոյ** 343
 — Վլաց իշխան 352
 — Տնպահ. առ Յակովյայ 200 · 287 · 311 · 336-7 ·
 436-8 · 490
 — առ Թորոսի 413 · 453-5
 — առ Խաչատրոյ 363
 — Յակոբ առ Գէորգայ Կեսար. 292-3
 — Կարկառեցի առ Յարութեան 294 · 313 · 399-
 439 · 480

- Սիմոն** † յամի 1586. 472
 — կ. պօլսեցի. 381
 — " Յովսեփայ 366. 428
 — վաճառական յամի 1502. 134
- Տէ Սիմոնի հեղինակ** 70
- Սինան** " Յովհաննու 469
 — " Պետրոս
- Սինիոլոյ պայլ** 37–40. 92
- Սիս** 27. 30 140. 429.և այլն
- Սիսուան** 428
- Սուցիք** 316
- Սիվրիհսար** 423
- Սիւլեյման պէկ Մոռէայ** 454
 — Թայիպ 64
- Սկոպիս** քդ. Պոսնիոյ 279. 401
- Սմբատ** թգր. " Բ Լեւոնի 54. 88–9
- Սոնեա** քդ. Ալպանիոյ 410
- Սոնտուզ Զուզ**. 371
- Սորանցոյ պայլ.** տոհմ 45. 283
- Սուլդանշահ** " Աբգարու Թօխսադ. 214
- Սուլդաթ,** Սուրդաթ 64. 129
- Սուրեան** Հ. տոհմ 502
- Սպինոլա Գալտոյ** 72. 108
- Ստանոզ–ցիք** 428. 452
- Ստեփանոս Ե. Կաթող.** 324–30
 — Ատանա տ. Ատանա
 — Դոմինիկ. եպիսկոպոս Շէհրիմ. 512
 — Բաբերդցի " Ֆէրուչի 419. 467
 — " Երտամայ 470
 — Վաճառական 210
 — Փիրատս 342
 — † ի 1587. 473

- Վալլոնա քղ. Դալմատ. 480
 Վահագն 40
 Վաղարշապատ 326
 Վահանք պէսպէս 34-8
 — Ակունք, գոհարք 406
 — Աղ 54. 122
 — Ապակեղեն 55. 450
 — Ասր, Բուրդ 54. 121-2
 — Արծաթ 29. 58. 110. 118. 123
 — Արջառք և Գրասովք 54
 — Բամբակ 54-5. 121. 415
 — Գինի 54. 121
 — Դիպակը 54. 128
 — ԶԵԿ 55
 — Խաչնդեղ 411. 429
 — Խար 54
 — Կապերտք 415
 — Կատեղենք 54. 59
 — Կարելիք (Դանակ, Սուր) 412. 453. 448
 — Համեմունք 55
 — Մանաֆ 579
 — Մեռաղք 54. 59
 — Մետաքս 58. 110. 407. 510. 429-31. 441
 — Մորթ. Մուշտակ. փոկ 54. 110. 122
 — Նաւք 55
 — Շաքար 59
 — Ոսկի 29. 59
 — Ուլունք 450
 — Չամիչ. Խաղող 54
 — Չուխայ 405. 431-2
 — Պաղեղ 54
 — Պղպեղ 51. 54

Վաճառք Պողպատ 468

- Պօղասի 440
- Սազոն 405
- Սնկուս (Zendoli)
- Ցորեան 54 · 122
- Ցփսի . Սաեւ այծենի 31-5 · 39 · 62 · 121-2
128 · 407 · 428-9 · 440 · 443 · 465
- Փայտ 54-56 · 122
- Փոկ . Cordovan 442

Վաճառանոցք 67-9

Վաճառապան 62 · 67

Վան 458

Վասիլ ո . Գարաճայ 413 · 454

- գերեվաճառ 334

Վարդան Մանդին եպիսկոպոս 540

- Եպիսկոպոս Յովանեան 542

Վարդանանք 40

Վեղարաւորք (Capucins) 331

Վենեժ . Վենէժ · 155 · 193 · 208 · ո . Անենիկ

Վենենիկ 5-8 · 11 · (ստէպ .)

- Նկարագրեալ ի Հայոց 195 · 225 · 227-55 ·
459
- Կամուրջք 23
- Կողիք 23
- Եկեղեցիք և թաղք հայաբնակք
- — Ա . Անտոնինոս 422
- — Ա . Առաքեալք 174
- — Ա . Գեմինիանոս 12 · 422
- — Դղեակն (Castello) ո . Ա . Պե-
տրոս
- — — Ա . Երմակորս 69
- — — Ա . Եւստաթ 69

Վենետիկ Եկեղեցիք Ա. Եւգինէ 48

- — Ա. Զաքարիա 459
- — Ա. Թուգորոս 42
- — Ա. Լիոն (Լիւն) 389
- — Ա. Ղուկաս 413
- — Ա. Հրեշտակ (S. Angelo) 422-3
- — Ա. Մատթեոս 404
- — Ա. Մարգարիտ 389
- — Ա. Մարինէ 388-413
- — Ա. Մարիամ Խորոսիկ (Formosa) 382-399-413 և այլն
- — Ա. Մարիամ Շնորհաց 422
- — Ա. Մարտիրոս 172
- — Ա. Մարտին 389-473
- — Ա. Մկրտիչ Պրադորով 389-407-413-417
- — Ա. Մովսէս 388-434
- — Ա. Յովհան Նոր 387-474
- — Ա. Յովհան-Պօղոս 408-455
- — Ա. — Ուխալով 151
- — Ա. Յովհանոս 143-189-337-378-384-424
- — Ա. Պետրոս 388
- — Ա. Սեւերոս

Վ ենեպ 20-27 (ստէպ)

- ի Սիսուան 50-67-96
- — Եկեղեցիք 27-45
- նաւք, նաւատորմիլ 47-9

Վենտրամին տոհմ 579

Վ էլիսան տոհմ 502

Վիլա (Մարդեզ) 179

Վ իլատիկա գղ. 296 544

- ՎԱՀԺ** (Վենետիկ) և . ՎԱՀԺ 153
ՎՐԱՑ Իշխանք 353-5
Տահա (Tana) ՔՊ
Տանձկա 459
Տանտոլոյ Անդրէսս դուբս 123
 — Ենթիկ 20-8
 — Պելեդ 38
 — Պետրոս 31 · 107
 — Պատմիչն և այլք 123
Տասսինի (Tassini) Յովսէփ 404
Տասկա (Tasca) Խօսար 422
Տարենտոն 158 · և . Փիլիպպոս
Տարտոն 27 · 104 · 110
Տարտել պատմիչ 151
Տարտի 106
Տեղետոյ (Teoleto) Դոմինիկ 404
Տերման ջուղ · 371
Տերոն առնմ Հ · 502
Տերվիչ ո . Պայէզիտի 404
Տիգանա ջուղ · 501
Տիրան ջուղ · 377 · 414
Տերիթ 17
Տիւրոս 22
Տոլեռոն Նիկոլ Խօսար 378
Տոլֆին պայլ, առնմ 37 · 44-2 · 60 · 94 · 105 · 114 · 116
Տոնատոյ և . Դոնադոյ
Տոռնակուինչի (Tornaquinci) 379 · 407-9
Տուկանա 443
Տպագրողք Հ · 207-15
Տպագրատուն Սահրատեան 508
Տրապիզոն 57 · 66 · 176
Տրդատ 17

554

- Տրեվիս (Trevis) քշ. 304 · 544
Տրիպոլիս Ասորւոց 429 · 432
Տրոյա 7
Տօնապետ 444
Փանոս ո. Գէորգայ 439
Փերեղիկը Հայք 415 · 425-6
Փիլիպոս Եղիան Տարենտայ 107 · 130 · 132
Փիրզատէ Ղափանցի 458
Փիրզաս 342
Փլորենտիս տ. Ֆիրենցէ
Փնդուկը 69
Փողառ ո. Բարսղի 435
Փռանկաստան տ. Ֆռանդաստան
Փռիւգացիք (ազգ, գտակ) 7
Փրանկիսկեանկ 83
Ս. Փրկիչ վ. ի Հայս 349
— եկեղ. յԱյստ 74
Քաղըրըլէնկ Պետր. 74-8
Քալամաչի (Թարգմանկը) 63 · 74-8
Քաղկէացիք 429
Քեաֆֆի բերդ Կ. պօլսի 464
Քէրիմ ո. Տօնապետի 444
Քիմիա արուեստ 49
Քոռվալիկ տոհմ 502
Օգոստինոս տ. Եղ. Աւետիք
Օհան (Հաճի) ո. Յարութեան 355
Օյխ Թագաւոր 44 · 88 · 97 · 104-7
— Պայէ 108-12
— կոռիկոսեցի 108
Օպելերիոյ գուքս Վենետ. 45
Օրվիետոյ քշ. 477-8
Յատալահ Թարգման 217-20

- Ֆարակոյ տեղի յԵկպվիւ 324**
Ֆերբարա 149
Ֆիլիազի պատմիչ 148
Ֆիլիպպերս դուքս Տուկանայ 445
Ֆիկոլին նօտար 436-7
Ֆիորենցա Գոռնարոյ 321
Ֆիրենցէ (Փլորենտիխ) 149. 232. 444
Ֆիորավանդի Բորդա տնպահ 493
Ֆուկարինի գեսպան 99
Ֆորեսդի Հերոնիմ 374
Ֆռանգ—աստան 134. 208. 224
Ֆրանգոյ Ստանողի 450-1
Ֆրանչեսկա Կին Հ. 159
Ֆրանչիսկոս Հ. † ի 1598
 - Անտոն տնպահ 489
 - Թոռն Հայ Անտոնի 276-7
 - ո. Պետրոսի Մարտիրոսի 458
 - ո. Պօղոսի 452. 459
 - Սէֆէր 405. 431. 473
 - Կրտիչ, Battirame տնպահ 491. 49
 - Ոկծծարտոյ, տնպահ 490**Ֆրիոլ Քիւդ 306**
-

Ա Խ Ա Ղ Ե Լ Ի Ք

b/r. 8.

54. 5 Armiago	Arminiago
93. 6 Կոպիստառ	Կիւբիստառ
99. 13 Խոստանալով	Խոստանալով
104. Ճն յետնոյս	յետինս
175. 18 Հիմայ թէ քաղցիս	հիմայ քաղցիս
195. 12 Փափագէր	Փափագէր
209. 4. una breve	uno breve
216. 23 500 (Փրանդ)	600
306. 20 Մերլոյ	Մէոլոյ
518. 15 Բանի	Բանի
353. 11 Եր. 210	Եր. 244
354. 17-8 Գրուած չէին	Ելն
465. 16 Ցփսի	Ցփսի
473. 14 acipsia	Cacipsia
479. 23 Հին են	հին է
495. 5 Գէորգի	Յակոբայ
161. 9-8 Տապանպքարն Թովմայի եպիսկոպոսի՝ հիմայ գտնուի յագարակն կարդինալէ կոչուած, որոյ տէրն է կոմսն Oddi Baglione.	





This book should be returned to
the Library on or before the last date
stamped below.

A fine of five cents a day is incurred
by retaining it beyond the specified
time.

Please return promptly.

~~ANCELLED~~
JUN 14 '57 !!

